18611

ԱՆԱՆԴՐԻՈՆ

891.99
Ա-44

ՀԱՅԿԱԿԱՆ
ՍՍՌ
ՊԵՏՀՐԱՏ

19 NOV 2010 21 JUN 2005

891.99
Ա-44

Գ. ԱՂԱՅԱՆ

ՅԵՐԿԵՐ

ՅԵՐԵՔ ՀԱՏՈՐՈՎ

ԿԱԶՄԵՑԻՆ
Ա. ԻՆՃԻԿՅԱՆ
Ա. ԱՍԱՏՐՅԱՆ

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ՅԵՐԵՎԱՆ 1940

Գ. ԱՂԱՅԱՆ

ՅԵՐԿԵՐ

Գ. ՀԱՏՈՐ

ՄԵՍՐՈՒԱՐՆԵՐ
ՀՐԱՊԱՐԱԿԱԽՈՍԱԿԱՆ
ՅԵՎ
ԳՐԱԿԱՆ-ՔՆՆԱԴԱՏԱԿԱՆ
ՀՈԴՎԱԾՆԵՐ

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ՅԵՐԵՎԱՆ 1940

06.02.2013

18611

Ա.-731

Г. Агаян

СОЧИНЕНИЯ

т. III

Армгиз. Ереван, 1940



Ղ. ԱՂԱՅԱՆ

5242
47

ԿԱԶՄՈՂՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ

Ղ. Աղայանի յերկերի ժողովածվի այս՝ յերրորդ հատորում զետեղված են հեղինակի մեմուարները («Իմ կյանքի գլխավոր դեպքերը», «Մի յերես մեր նորագույն պատմությունից»), հրապարակախոսական ու գրական-քննադատական, ինչպես և հայոց լեզվի պատմության ու գրական լեզվի զարգացման հարցերին նվիրված հոդվածների ընտիր մասը:

Աղայանի հիշյալ մեմուարային գործերը, իսկ հրապարակախոսական գործերից՝ «Ժամանակակից ատենախոսություները»՝ նախ տպագրված են յեղել «Մուրճ» ամսագրում և ապա արտատպված ու հրատարակված առանձին գրքերով, վորոնք և հիմք են ընդունվել սույն հատորը կազմելիս, այն է՝

1. «Իմ կյանքի գլխավոր դեպքերը» 1893 թ.
2. «Մի յերես մեր նորագույն պատմությունից» 1891 թ.
3. «Ժամանակակից ատենախոսություն» 1898 թ.

Հեղինակի հրապարակախոսական և գրական-քննադատական հոդվածները վերցրել ենք պարբերական մամուլի այն որգաններից («Մուրճ», «Աղբյուր», «Մշակ», «Հորիզոն», «Սուրհանդակ» և այլն), ուր տպագրված են յեղել դրանք հեղինակի կենդանության ժամանակ: Յուրաքանչյուր հոդվածի տակ նշանակել ենք տարեթիվը և այն պարբերականը («Մուրճ» և այլն), ուր առաջին անգամ տպագրվել է տվյալ հոդվածը:

Այս հատորում զետեղված նյութերից յերկուսն առաջին անգամ են տպագրվում և վերցված են Աղայանի՝ Պետ. Գր. Թանգարանում պահվող արխիվից՝ Աղայանի սեփական ձեռագիր-քննագրից: Դրանք են՝

1. «Հազար ու մի առակավոր բանք. ազգային և ռուսք. Գաբրիել Յեպիսկոպոսի Այվազյան. Պոլիս, 1875»:

Այս հոդվածի ձեռագրի վրա կան Յերվանդ Շահազիզի հետևյալ մակագրությունները. ա) «Այս համառոտ քննադատա-

կան հոդվածը հանգուցյալ Ղազարոսը ներկրել է ինձ «ի հիշատակ», Նոր-Նախիջեվանում յուր աճսորի որերում»:

բ) «Աղայանը պատմում եր, վոր յուր ժամանակ գրաքննական պայմանների շնորհիվ անհնարին և յեղել տպագրել այս բնութագատականը»:

2. «Տարրական նշմարտություններ»:

Այս գործի ձեռագիր-բնագիրը նույնպես պահվում է Աղայանի արխիվում (ՊԴԹ-ում): Դա մի ձեռագիր տետր է, վոր Աղայանն իր մահվանից առաջ (հայտնի չէ, թե յերբ) հանձնել է Հովհ. Թումանյանին: Իր «Ազգային պաշտպանության խընդիրը և Աղայանը» հոդվածում (1916 թ.) Հովհ. Թումանյանը գրում է հետևյալը.

«Ամբողջ տետրակը մի հոդվածի սևագրություն է, վերնագիրը՝ «Տարրական նշմարտություններ»: Ինչպես յերևում է՝ հույս չունենալով թե մեր թերթերում կարող է հոդվածն անց կացնել, մտադիր է յեղել առանձին բրոշյուրով հրատարակելու» («Հորիզոն» 1916 № 135):

Այս յերկու ձեռագրերը արտատպելիս խառակուսի փակագծերի մեջ ենք առել այն բառերը, նախադասությունները կամ ամբողջական պարբերությունները, վորոնք ջնջված են բնագրում: Նույնպիսի փակագծերի մեջ են առնված նրանց տակը յենթադրաբար նշված գրության տարեթվերը:

Բացի մեմուարային գործերից («Իմ կյանքի գլխավոր դեպքերը» և այլն), հատորում զետեղված մյուս բոլոր նյութերը դասավորված են ժամանակագրական կարգով:

«Իմ կյանքի գլխավոր դեպքերը» տպագրության համար պատրաստել է Ա. Ինճիկյանը, իսկ մնացած բոլոր՝ թե մեմուարային և թե հրապարակախոսական ու գրական-բնութագատական հոդվածները ընտրել և տպագրության համար պատրաստել է Աս. Ասատրյանը:

22 հունիսի 1940 թ.
Յերևան.

ԿԱԶՄՈՂՆԵՐ

ՊԵՏՈՒԹԱՐՆԵՐ

ՄԱՍ ԱՌԱՋԻՆ

ՆԱԽԱԲԱՆ

Նոր անցած 1892 թվականի հոկտեմբերին ռուսապրի պ. Յուբի Վեսելովսկին մի նամակով դիմել եր ինձ, վոր գրեմ իմ համառոտ կենսագրությունը և ուղարկեմ նրան: Այսպիսի առաջարկություններ արել են և ուրիշները, բայց չես ժամանակ չզտա չուտով կատարելու իմ հարգելիների առաջարկությունը: Մարդիկ սովորաբար հետաձգում են իրանց կյանքի և կտակի գրելը, յենթադրելով՝ վոր դեռ ապրելու չեն, ուրեմն և ժամանակ կունենան այդ բանն անելու, մոռանալով ավետարանի ասածը, թե՝ «Ոչ գիտես յորում ժամու գող գայ»: Կես դար ապրելուց հետո՝ ավելին ձգելով արարչի կամքին՝ չես վճռեցի ահա գրել իմ կյանքի գլխավոր դեպքերը, այն դեպքերը, վորոնք վորևե կերպով աղդեցություն են ունեցել իմ մտավոր և բարոյական զարգացման վրա: Յել այս արի չես այն համոզմամբ, վոր կյանքից ստացած փորձառությունն ևս մի հարստություն է՝ հետնորդներին կտակելու արժանի:

I

Ես ծնվել եմ Խաչեն գյուղում, որ գտնվում է Թիֆլիսից դեպի հարավ վաթսուն վերստ հեռավորության վրա՝ հին Բողնովորոսը, իսկ այժմյան Բոլնիսում: Գյուղի «Խաչեն» անվանվելու պատճառն այն է, որ նրա այժմյան բնակիչները անցյալ դարի վերջերում գաղթել են Ղարաբաղի Խաչեն մահալից և այստեղ տվել Խաչենեցիք: Գյուղացիք մինչև այսօր էլ պահպանել են իրանց բնիկ մըհալի թե բարբառը և թե սովորությունները: Պատմ գաղթել է Խաչենի Սեյդի-չեն գյուղից, ուր նա հայտնի է եղել իբրև Աղանց Վերդի: Ես դեպք ունեցա այցելել այդ գյուղը և տեսա աչքովս Աղանց աղբյուրը, Աղանց ձորն ու բաղը և Աղանց ճըղպրեն (ընկուզենին): Այդ ծառը ես որ տեսա՝ մի ահագին կոճղ եր, բոլորովին չոր, բայց գյուղացիք այդ վաղեմի հիշատակը չեյին ուզում վոչնչացնել: Մեր ցեղից միայն մի պառավ կին կար Մխոնց Արությունի տանը:

Հայրս Աղանց Ստեփանն եր, իսկ մայրս՝ Հռիփսիմեն (Հուռի), Տեր-Աշղրխասյաններից տանից:

Այդ ժամանակ ծննդյան մատյաններ պահելու սովորություն չկար. մեկի ծննդյան տարին հիշում եյին նույն տարին պատահած մի վորևե նշանավոր դեպքով: Իմ ծննդյան տարին նշանավոր դեպքը եղել է այն, որ Մեծ-Մասիսը շարժվել է և Ակռռին տակումն արել, իսկ այդ պատահել է 1840 թվականին: Մայրս ասում եր, թե քեզ մկրտել ենք մեծ պատմությամբ, Ղարսի հարության տոնին, քո ծնվելուց ութ որ հետո: Այս բանին չես կարևորություն չտալով՝ չեմ հետաքրքրվել ստուգելու, թե այդ տարին Քրիստոսի բարեկամը վո՛ր ամսի քանիսին է հարություն առել:

Իմ մանկությունն ու պատանեկությունը չես մանրամասն

նկարագրել եմ «Արություն և Մանվել» վեպիս մեջ: Այդ վեպի Արությունը չես ինքս եմ: Դրանում բաց եմ թողել միայն մի սովորականից դուրս պատահած դեպք, վոր սակայն կենսագրական տեսակետից մեծ նշանակություն ունի: Այդ դեպքը իմ մանկական սիրահարությունն է, վոր մեծամեծ աղետների պատճառ դարձավ և սկիզբն դրավ այն հալածանքին, վորին ենթարկեց ինձ հայրս: Ես չգիտեի դեռևս, վոր մեզանում նույն իսկ ամուսնական սերը մի դատապարտելի հանցանք է, և պա չես կարող եյին լինել միայն Ադամն ու Եվան անմեղության դրախտում իրանց մանկական հասակում, նախքան բարվո և չարի գիտության ծառի պտղից ճաշակելը: Ինչպես խրտմանկ ոճը՝ նայելով նրանց անմեղության վրա՝ կարող եր զանազան կասկածներ տանել և աչխատել նրանց սրտի մեջ ևս ձգել այդ կասկածը, ճիշտ այնպես վարվեցան ինձ հետ էլ իմ անմեղ սիրուն ականատես ընդողները:

Բանն ահա ինչպես եր: Շամչուղլա գյուղի քահանայի մոտ կարդալիս ես դասընկեր չունեյի, իսկ խաղընկերներս իմ հասակակից աղջիկք եյին: Սրանց մեջ ամենից վոքրը յոթը տարեկան մի աղջիկ եր, անունը Մայիկո: Սա իր ծնողաց միևնույն ճար զավակն եր, այս պատճառով էլ նրան միշտ զուգած ու զարդարած եյին պահում, վորով ամենից սիրուն եր թվում իմ աչքումը և ամենից շատ դուր գալիս: Ինչպես յերեխան սիրում է իր զուգած ափնիկը, անդադար չոկում է նրա զուգը, դիվում, համբուրում, ես էլ ճիշտ այդպես եյի վերաբերվում Մայիկոյին: Աղջիկա մայրը հակառակ չեր իմ այսպես վերաբերվելուն, ընդհակառակը նա ավելի ևս խրախուսում եր ինձ, արծարծում եր իմ սերը, դանազան անուշեղեն ուտեցնելով: Աղջիկն էլ մորից առացած մրզեղենն առանց ինձ չեր ուտում: Այսպես ահա իմ սերն որեցոր ավելի աճեց և ավելի տաքացավ: Սիրտս այնպես կպավ Մայիկոյին, վոր էլ չեյի կարողանում նրանից բաժանվել, միշտ ուզում եյի նրա հետ նստել, նրա համար յերգել: Նրա անունով դրում եյի սիրո յերգեր, իհարկե նախադեղարվեստական, բայց սքանչելի յերկուսիս համար էլ. քաշում եյի և իմ ու նրա պատկերները կողք կողքի, ինչպես հարս ու փեսա, իհարկե նախապատմական ճաշակով,

ռավ, մի տեսակ ցավ: Մի առավոտ մայրս իմ ձեռքով մի բա-
ժին կերակուր ուղարկեց մի հիվանդ ոտարականի համար:
Հիվանդը շատ ղժացվեց և լաց եղավ: Պատմեց, թե ինքն էլ
ունի ինձ պես յերեխեք, վոր յեթե մեռնելու լինի, նրանք վորբ
պիտի մնան, և սկսեց ինձ որհնել· «Դու շատ ընորհալի տղա
ես,— ասաց,— և ժամանակով շատ լավ և շատ յերևելի մարդ
կդառնաս»: Ցես չկարողացա լացս պահել: Ցերը դուրս դնա-
յի, մինչև կեսոր մայրս չկարողացավ իմանալ, թե ինչու յեմ
լաց լինում. հենց վոր ուզում եյի պատմել, հեկեկանքը խեղ-
դում եր ինձ, չեյի կարողանում ուղիղ խոսք արտաբերել:—
Լա՛վ, լա՛վ, հանդարտվիր,— ասաց մայրս,— հետո կպատ-
մես... Իսկ հետո պատմեցի, վոր այն գարիր մարդը շատ
հիվանդ է, պահոց չունի, հաց ուտող չունի, պետք է հոգ
տանել նրա վրա: Մայրս գժտա կին եր, խնդիրս անտես չա-
րավ, բայց այնուամենայնիվ այն մարդը մեռավ և իմ հիշո-
ղության մեջ թողեց մի անջնջելի հետք:

Իմ նվագելուս հետ նվագում եր և անունքս: Շատ կերա-
կուրներից այնպես եյի գժվում, վոր նայել յերեսներին չեյի
կարող, պինի չեյի կարող բերանս առնել, շատ մրգերի նույն
իսկ ծառիցը գժվում եյի, վերջըշին տեսնելիս գլուխս ցավում
եր, սրտից պետք է շատ հետս փախչեյի, վոր ձայնն
ականջս չընկներ, և շտապում եյի բոլոր մարմնով: Այսուամենայ-
նիվ Մայիկան մտիցս չեր ընկնում: Նորանոր յերգեր եյի հորի-
նում, վորոնց մեջ կարոտս եյի հայտնում ինչպես Ֆյարամն
իր կորած Սալուն: Գիշերները տեսնում եյի յերազումս, ուրա-
խությունից պարծենում եյի իսկույն, բայց տեսնելով վոր յե-
րազ է, սկսում եյի լաց լինել: Լացիս իսկական պատճառը
չեյի հայտնում, ասում եյի՝ գլուխս է ցավում: Բայց մեկ որ
հայտնեցի մորս: Մայրս կարծելով վոր աղջկա մայրն ինձ
կախարդել է, հորս խնդրում է, վոր գիր անող մոլլաներին
գիմե և ինձ փրկել տա այս ցավից:— Գիր-միր հարկավոր չէ,
— պատասխանել եր հայրս,— յես ինքս շատ լավ գիր կանեմ:
Յեվ ճչմարիտ, մի գիշեր եվ, յերբ ըստ սովորության սկսեցի
լաց լինել և սուս չկացա, հայրս վեր կացավ, մի փափուկ ճի-
պոտ վեր առավ, վոր իր լավ գիրն անի ինձ վրա, յես իսկույն
վեր թռա տեղիցս, և չարչանց ու վոտաբոբիկ փախա մինչև
գեղի ներքի թաղը՝ քեռանցս տունը, ուր ինձ պատսպարեցին,

բայց մեր յերևակայության համար շատ զմայլեցուցիչ: Դասերս
այլևս չեյի սերտում և բերան առնում առաջվան ժրաջանու-
թյամբ· այժմ նրանք շատ շոր եյին թվում և շատ տաղտկալի,
ինչպես վոր եյին իրոք և:

Տերտերս նկատեց այդ, սկսեց հանդիմանել, ուզեց ինձ
հասկացնել, վոր իմ արածը լավ բան չե, և կարող է շատ
վատ հետևանքներ ունենալ: Ցես լսում եյի և պլիսի եյի ընկ-
նում, թե ինչ է ուզում ասել, բայց այս հանդիմանքն ավելի
յեր սառտկացնում իմ սերը դեպի Մայիկոն:

Մինչև այդ ժամանակ յես, վոր մի հրաշք եյի զգալացող
աչքումը իմ բնատուր շնորհքուն, այդ հանդիմանքի պատճառով
դարձա մի հրեշ: Ջնայած տասը տարեկան հասակիս, յես մեծ
մեծ եյի խենթության չափ, մինչդեռ այդ հասակում բոլոր իմ
ծանոթ յերեխեքը շատ սառատա եյին և խորամանկ: Խենթու-
թյունս այն աստիճանի հասավ, վոր յես սկսեցի իմ լսած հե-
քյաթներից հերոսներին պես ջունուն դառնալ և սար ու ձոր
թողացնել իմ սիրուհու անունով: Ցես այդ ժամանակ մի փոք-
րիկ Դոն-Քիշոթ եյի, նրա պես խենթ, բայց նրա պես էլ ան-
վնաս և յերևակայող... Ամառը, յերբ Մայիկոն սարումն եր
լինում, յես վոչ մի բանից չվախենալով՝ վեր եյի կենում, կես
գիշերին և թաքուն վախչում նրա մոտ: Սովորական ճանփով
չեյի գնում, վոր տեսնող էլինի, այլ խոր ձորերով և խիտ
անտառներով, վորոնք լիքն եյին ամեն տեսակ գաղաններով...
Ցերբ բանը այս չափազանցության հասավ, իմաց տվին հորս,
նա էլ ապսպրեց, վոր ինձ տանեն մեր տուն, ուր ինքը գիտեր,
թե ինչպես կվերաբեր ինձ:

Ճարըս ինչ, պետք է գնայի, և գնացի: Հայրս յերեսիս
չնայեց բնավ: Մայրս ինձ պաշտպանելու համար մի քանի ան-
գամ ծեծվեց: Իմ մանկական սերն իմ մեջ դարձավ մի տեսակ
հոգեկան ցավ և սկսեց մաշել ինձ: Մայիկոյիս կարոտը քա-
շելով՝ սկսեցի որեցոր նվագել: Վորքան նվագում եր մարմինս,
այնքան գյուրագրգիռ և գյուրագրգաց եյի դառնում և այնքան
քնքշանում: Կոպիտ գործ ու խոսք տանել չեյի կարողանում,
ուրիշների թշվառ վիճակը, նրանց աղքատությունը, մերկու-
թյունը, սկարուժյանը այնքան ունեցողների վրա չեյին ազ-
դում, ինչքան ինձ վրա, վոր միայն ականատես եյի: Այս
գյուրագրգռությունն իմ մեջ մի տեսակ սկարուժյուն դա-

լմանալով բանի հանդամանքը: Մայրս ինձ այդտեղից փախցնել տվավ քաղաք— Թիֆլիս— քրոջս մոտ, ուր և մնացի մինչև մոտ Ներսիսյան դպրոց 1853 թվականին: Այդտեղ ինձ ընդունեցին նախապատրաստական դասարանը, բայց ինչ վոր ավանդվում եր այդտեղ, չես արդեն դիտեի, այնքան վողորմելի մի բան եր այդ ուսումնարանը, թեև Շանչյանն եր տեսուչը: Իմ այստեղի դպրոցական կյանքը չես նկարագրել եմ «Արութիւն և Մանվելի» յերկրորդ հրատարակության, յերկրորդ գրքի առաջին գլխում:

Այս ժամանակ չես այնքան հասունացա և դիտակցության չեկա, վոր իմ մանկական սիրահարության խենթություն լինելը ղղալի չեղավ ինձ համար, և ինձ մեղավոր ճանաչելով՝ ասում եյի ադոթքիս մեջ՝ «Տէ՛ր, մի՛ յիշեր զմեղս մանկութեան իմոյ...» Այդ սիրո տեղ իմ մեջ զարթնեց մի նոր սեր, սեր առ ուսումն և սա ել նույնքան աղետավի դարձավ ինձ համար, ինչքան և առաջինը: Տոգորվելով նորանոր դաղափարներով, ազատվելով շատ նախապաշարմունքից, սկսեցի անխնա հարձակվել այդ նախապաշարմունքների դեմ, վորով դարձյալ զայրացրի հորս և նա վոչ միայն չսղնեց ինձ, վոր չես չարունակեմ ուսումս, այլ կրկին անդամ դուրս արավ ինձ տանից իբրև աստուծո ծրից դուրս յեկած անառակ վորդու: Այս մասը նույնպես նկարագրած եմ հիշյալ վեպիս մեջ և ըստ ամենայնի վերջացրած: Այստեղ ինչ վոր ասելու յեմ, դրա չարունակությունը կլինի՝ առանց նրա վիպական ձևն ունենալու:

II

Նույնատեսակ կենդանիք իրանց միջից հալածում են արտաքուստ իրանց նման չեղող ձագերին: Այս մի այնպիսի հատկություն է, վորով անբանները մաքառում են իրանց տեսակի կերպարանափոխության դեմ և թեպետ չեն կարողանում տեսակափոխության առաջն առնել, բայց այդ գործն այնքան դանդաղացնում են, վոր նա կատարվում է անհուն դարերի ընթացքում: Անբանների այս հատկությունը դանվում է և բա-

նականների այն դասակարգի մեջ, վորոնք անվանվում են հետադեմ, խավարամիտ և պահպանողական: Յեթե բանականների մեջ չլիներ այս հատկությունը, լուսավորությունը առաջ կերթար անընդհատ և հսկայական քայլերով, բայց այսպիսի բան չկա բնության մեջ, ամեն կենտրոնախույս ղորություն ունի և իր կենտրոնաձիլը: Այս հանդամանքը մի չարիք չէ, այլ բարիք, պետք է դիտենալ միայն, թե ինչպիսի զենքով պետք է պատերազմել տգիտության և խավարի դեմ և միանգամ ընդմիշտ համոզվելու յես, վոր այդ պատերազմը վերջ չունի, և վոր այս դարում դործ դրած զենքը մյուս դարում կարելի չե դործածել իբրև հնացած և անպետք: Ինքնուրույն լինել՝ կնշանակե մի կաղապարով ճուլված հասարակության տարբերվել: Այդպիսին կլինի մյուսների համար մի հրեշ. նրան մի տեղ կխաչեն, մի այլ տեղ կքանտարկեն. նրան կհամարեն խենթ, վտանգավոր և այլն: Այդպիսին արդարև մի խենթ է, մի ցավագար, դիտակից վոչինչ չկա նրանում, ամեն ինչ կատարում է բնազդմամբ, մի ներքին անդիմադրելի դրդումից, մի աներևույթ զորության թելադրությամբ:

Յերբ վոր հայրս դուրս արավ ինձ յերկրորդ անդամ, ինձ համարելով անառակ վորդի, չես ընդհակառակը ինձ համարեցի Յեսավից հալածված մի Հակոբ, յեղբայրներից վաճառված մի Հովսեփ, Յեղիպտոսից փախած մի Մովսես: Մեծ եր հափսոսս, վոր ունեցի դեպի իմ արարիչս, շատ մեծ:

Յես ընկա յերկրիս ոլկյանոսը ինչպես մի հեքյաթիական աշխարհի մեջ, ինչպես մի առասպելական, այլ վոչ իրական կյանքի մեջ: Այդ կյանքի հետ չես բնավ ծանոթություն չունեյի, դրսի կեղևն եյի տեսել միայն և շատ հավանել, բայց չդիտեյի, վոր նա մի զարգարուն դերեզման է, չդիտեյի, վոր նրանում զարհուրելի գազաններ և սիլքատներ կան: Շարունակ յոթը տարի պատվեցի յես այդ ղղվարանումը, վոր աշխարհք է անվանվում և կյանք, բայց պատվեցի ինչպես կախարդված, ինչպես հիպնոտացրած, վոր չդիտե ինքը, թե ուր է դնում և ինչ է անում, բայց վոր կարծես դնում է մի արդեն նախատեսված ճանապարհով: Ինչպես հնդիկական հավատով մարդուս հոգին մի նախատեսմանությամբ անցնում է զանազան առարկաների և կենդանիների միջով, վոր նրանցում զովի, մաքրվի և ապա թե միանա Բրահմայի հետ, ճիշտ այսպես եմ դնում այսոր և

Н-734
5242
47

յես իմ կյանքը. սա ևս անցել և ևս պիտի անցնի պանդան կենդանինների միջով–ոճերի, դորտերի, եչերի, կապիկների, պայլերի, վոչխարների և այլ կենդանինների, վոր ավելի մաքրվի և միանա իմ պաշտած անխմանալի Զորության հետ, այն Զորության, վորի հավատը միշտ ունեցել եմ և պզացել իմ մեջ իբրև լինճանից անբաժան մի սիրտ և մի հոգի:

Ցոթը տարուց հետո յես ընկա մի տպարանական ճուլարան իբրև աշակերտ, վոր այդ արհեստը սովորեմ: Այս բանը յես արի վոչ թե դիտակցաբար, վոչ թե արհեստի նշանակությունն ըմբռնելով՝ այլ անգիտությամբ: Կյանքի մեջ—թե դուրսը տար ու ճոր ընկած, և թե քաղաքի մեջ, ամբողջ յոթը տարվա ընթացքում ավելի քան յոթին անդամ յոթը տեղ մտնելուց և դուրս գալուց հետո հիմա եմ տատ ճուլարան նույն անգիտակցությամբ և նույն աներևույթ Զորության ղրկմամբ, վոր լինճ ման եր ածում իբրև մի կույրի, այնքան միայն խնամք տանելով՝ վոր յես խորխորատների մեջ չընկնեմ: Նամար եր այդ ժամանակ մեր աշխարհը, շատ եր խավար. լուսավոր մարդուն պետք եր լապտերով փնտրել: Վոչ դերը, վոչ դրականություն, այլ սորկություն, ճորտություն, դերություն, բռնություն—մի դժոխք իր բոլոր դիվական և ճիվաղական հրեշներով:

Հայտնի յե, վոր տատ ճուլելը, յերբ այժմյան արագաշարժ և դյուրաշարժ մեքենաները չկային և ամեն լինչ ձեռքով եր չինվում, մի տաժանելի աշխատություն եր պահանջում, բայց այդ տաժանելի աշխատության մեջ չունչ քաշեցի յես այնպես ազատ և քաղցր, ինչպես Անդերսենի անճոռնի բաղիկը, յերբ հավի ու կատվի ձեռից ազատվելուց հետո ընկնում և ջրի մեջ և լողում իր ուզածի չափ, կամ ինչպես Ադամը, յերբ դժոխքից ազատվում և և նստում Բրնատոսի կողքին Զիթենյաց սարի վրա: Սրանից պետք և դուշակել, թե վորքան տաժանելի պիտի լինին յեղած, ուրեմն անցած յոթը տարվան քաշած ոտերս:

III

Ճուլարանն լինճ համար դրախտի փոխարկվեը յեղավ նրա տերը, վոր եր պ. Համբարձում Ենֆիաճյանցը: Սա մեկ որ՝ դիպվածաբար՝ տեսավ իմ մի քանի վոտանավորներս, վորոնց

վրա նոր ճուլած տառեր եյին ածել իբրև անպետք թղթերի վրա, դուրս քաշեց այդ թղթերը և սկսեց կարդալ: Գրածներս յերկիծաբանություններ եյին նույնիսկ ճուլարանում կատարվող ծիծաղելի անցքերի վրա, վորոնց մեջ ամենից թունդը խոհարարի մասին գրածս եր: Նրա մեջ ցույց եյի տվել, թե լինչպես նա մեղ՝ աշակերտներիս անմարս բաներով և կերակրում և այն ել շատ նվազ, չնայած, վոր ահագին ծախք և ցույց տալիս: Հենց նույն որը դուրս արավ խոհարարին և ավելի լավը բերավ: Այդ որվանից սկսեց լինճ վրա առանձին և լուրջ ուշադրություն դարձնել՝ լինճ մի նոր դյուտ համարելով: Ամեն կիրակի և տոն որերին հրավիրում եր տուն ճաշի, դրքեր եր տալիս կարդալու, իր դրած նամակները, վոր այդ ժամանակ շատ եր դրում Մխիթարյանների վրա ճուլարանի և տպարանի մասին, լինճ եր արտագրել տալիս: Ջնջեց լինճ հետ արած պայմանը, վորով տարեկան պիտի ոտանայի հինուն մանեթ և վարձ նշանակեց ըստ աշխատության, վորով տարեկան քսոտնց վոխանակ հինուն մանեթի վեցհարյուր մանեթ և ավելի ևս: Յերբ տպարանը բացվեց և յես սկսեցի չարել առանց վարպետի, նա լինճ տվավ աշակերտներ, վորոնք լինճ համար եյին չարում, իսկ ռոճիկին լինքն եր տալիս: Աշակերտներ ունենալով՝ յես ժամանակ եյի վատահում ընթերցանությամբ պարապելու:

Այս ժամանակ ահա, յերբ իմ քարի համբավը հատավ դյուղ, հայրս յեկավ լինճ մոտ, հաշտվեց լինճ հետ և արտասուքն աչքերին բացականչեց.

— Փա՛ռք իմ ստեղծողին, վոր քեզ ջուր ու կրակ դնելուց հետո վերջապես որինավոր մարդ չինեց: Ապրես, վորդիս, ապրես, հիմա կարող եմ ասել, վոր իմ հարազատ ծնունդն ես, իմ սիրելի զավակս: Ցես ել քիչ դառն որեր չեմ քաշել, յես ել պժություն. շատ եմ արել, բայց դու չարին անց կացրիր, այնպես վոր յես չեյի կարող ուրիշ կերպ վարվել, ուրեմն ներելի յե և իմ վարմունքս դեպի քեզ:

— Իհարկե ներելի յե,— ասացի,— հայր: Ամեն բանի մեջ ստոուծո մատը կա, յեթե դու այնպես չվարվեյիր, յես ել այսպես չեյի դառնալ կամովին:

Ահա այս վոխհոխությանս և իմ հոր ասելով «որինավոր մարդ» դառնալուս համար յես պարտական եմ պ. Համբարձում

Ենֆիաճյանցին, մինչև այդ ժամանակ առաջին անգամ լինճ պատահած միակ լավ մարդուն: Դրա շնորհիվ յես ընկա և ուրիշ լավ մարդկանց շրջանի մեջ, դա լինճ ծանոթացրեց իր խակ պաշտած մարդուն–Հախվերդյանին: Յես, եյի «Կռունկ»–ի շաբոդը, վորով զարճա նրա խմբագրի՝ պ. Աղաբեկյանի սիրելի Ղազրիկը: Գրաչար եյի, այո՛, բայց որինավոր գրաչար եյի. հեղինակները լինճ եյին հանձնում իրանց գրքերի սրբագրությունը: «Կռունկ»–ի սրբագրողը պ. Պռոշյանցն եր, բայց դա հիվանդանում եր ստեպ և այն ժամանակ յես ու Համբարձումն աղան եյինք սրբագրում միասին նույնիսկ Աղաբեկյանի գրբաճները, վոր նոր եր սկսել արևելյան բարբառով գրել:

Այս շրջանի մասին յես գրել եմ իմ «Մի յերես նորագույն պատմությունից» բրոշյուրիս մեջ 16—20 յերեսներում;

Շատ կսխալվի մեկը, յեթե այդ նոր վերածնված շրջանը մեր այսորվա շրջաններին նմանեցնե բարոյական կողմից: Այն ժամանակ նյութական չահի համար վոչ վոք չեր մտածում, այն ժամանակ անճ և պանճ գոհաբերվում եյին հավատարակես առանց վորևե հետին մտքի: Տպարան հիմնելը պ. Ենֆիաճյանցի և ընկերության վրա ահագին ծախք նստեց: Պոլսից վարպետներ հրավիրեցին ահագին ռոճկով, թեև գրշանոց մարդիկ դուրս յեկան: Մեկ որ յես դուրս վռնդեցի գրանց տպարանից իբրև անպետք և հիմար չաուշտաններ: Համբարձում աղան կանչեց լինճ և մեղմ հանդիմանությամբ ասաց.— Ինչպես դուրս ես արել, այնպես էլ դնա հրավիրիր, վոր դան, յես նրբանց մոտ գնացողը չեմ, քանի վոր այնքան հիմար են, վոր միանակ քեզ դուրս անելու, իրանք են դուրս գնում. ոմն ե լսել, վոր վարպետն աշակերտից վռնդվի: Յես կատարեցի բաբերարիս հրամանը Պռոշյանցի մինչնորդությամբ, նա վարպետներիս հաշտեցրեց լինճ հետ, վորոնք կրկին տպարան յեկան և չարունակեցին իրանց կեղծ վարպետությունը: Այս վարպետների մինչնորդը յեղել եր Մատթեոս կաթողիկոսը, այս պատճառով էլ յերեք տարի դուրս տեղը ռոճիկ ստացան:

«Կռունկ»–ը առաջին իսկ տարին մեծ թվով բաժանորդ ուներ: Նա մտցրեց մեր մեջ բուն ազգային ուղղություն և թեև տվավ թիֆլիսի նորածին յերիտասարդությանը: Ազնվություն և չիտակություն եր փայլում յերիտասարդության մեջ, անկեղծ ազգասիրություն կար: Սակայն վոչ վոք մեր գրական գործի

վրա այնքան մեծ գոհաղություն չի արել այդ ժամանակ, ինչքան պ. Համբարձում Ենֆիաճյանցը, վորի աունն իսկ այդ ժամանակ չարունակ մի ժողովարան եր և մի ճաչարան: Նրա նախասիճը չատ լայն եր, իսկ իր ժամանակակիցների հասկացողությունը չատ սահմանափակ: Նա ուզում եր մի մեծ ընկերություն կազմել, աշխարհականների մի ուխտ, վոր պիտի ուներ Մխիթարյանների պես հարուստ և դեղեցիկ տպարան և ճուլարան և մի հարուստ «թանգարան վերածնության», այսինքն՝ մեծ մատենադարան, պիտի ուներ իր սեփական ամառաղիրն ու լրագիրը, բայց անհնարին եր այն ժամանակ այս ծրագիրն իրագործել, քանի վոր հասուն մարդկանց թիվը չատ սահմանափակ եր. հունճ չատ կար, բայց մշակ սակավ. հավատացյալների թիվն աճում եր, բայց հովիվներ չըկային: Մեր գրական գործիչները բոլորն էլ դեռևս նորուս և թերուս մարդիկ եյին. լեզուն նույնպես նոր եր սկսում կազմակերպվել, նոր եր ձեռնարկվում հասարակական թատերագրության, նոր եյին բարեկարգվում ուսումնարանները: Այս նոր և թարմ հոսանքի միակ պատճառը ամբողջ պետության մեջ նոր սկսվող բեֆորմներն եյին, վորոնք մեզ համար անակնկալ եյին, նրանցից չահվելու վոչ մի նախապատրաստություն չունեյինք. ծերունի Ներսես հեռատեսությունը մինչև այդ մոտիվությունը չեր հասել, մեր մտավոր և բարոյական վերածնությունն սկսվեց Մատթեոսի որով:

IV

Մարդ նախապաշարվում է մի բանով, նախ քան լսելը, վոր նույն բանը մի ստություն է և մոլորություն: Իսկ յերբ վերահասու չի լինում, վոր հավատացել է մի սուտ բանի և նույնը իր համար մի ցավ չինել, դրանով նույն ցավից խլպատ չի ազատվում: Բայց այս էլ բան է, վոր խմանում է, թե իր ունեցածը մի ցավ է և դիտե էլ, թե ինչից է ստացել այդ ցավը: Սրանով նա մտքով, այսինքն՝ դատողությամբ միայն ազատվում է նույն նախապաշարմունքից, իսկ հոգեպես՝ վոչ: Հոգին այնպիսի կապերիններ ունի, վոր չատ անգամ վոչ մի դատողություն նրան ազատարել չի կարողանում: Այս հան-

ժամանքն արժանի չե խօրին ուշադրութեան, վորովհետև դաստիարակութեան տեսակետից մեծ նշանակութիւն ունի:

Ցեթե Մակբեթը չհավատար վհուկ պատւիների դուշակութեանը և չնախապաշարվեր, եվ այն չեր անիլ, ինչ վոր արաւ: Այս միևնույնը կարելի չե ասել և Ոհաննա Դարքի մասին. նա եվ եր նախապաշարված: Աոջինն իր նախապաշարմունքով չարութիւն գործեց, յերկրորդն իր հայրենիքն ազատեց: Ուրեմն նախապաշարմունքն ևս մեծամեծ գործեր և կատարել տալիս՝ թե չար և թե բարի: Չարի կամ բարու ձեռքին կույր գործիք դառնալու համար եվ բազաւիկ բնավորութիւններ են հարկավոր: Ցեթե չասենք նախապաշարմունք, այլ՝ հավատ, այնուհետև ամեն վոք կհավատա, վոր հնրաւի, հավատը սարեր չարժելու չափ ուժ ունի: Մի՞թե քիչ կան բարոյական սարեր, վորոնք վուլ են դալիս հավատի առջև:

Մարդս յերեխայական հասակում թուլ պատողութիւն ունի կամ քնաւ չունի, բայց ունի անպատման և անկասկած հավատալու տրամադրութիւն, ուրեմն և չուտ նախապաշարվելու: Հիմա խնդիր է, թե պե՞տք է արդյոք նախապաշարել յերեխային դիտութեան համար սուտ հավատալիքներո՞վ, թե՞ վոչ: Ցես այդքան կասեմ միայն, վոր պետք է մի կողմ դնել սուտն ու ճշմարիտը և վերցնել բարին և չարը, վնասակարը և ոգուտակարը: Վոչ մի վնասակար և չար բանով չպետք է նախապաշարել յերեխային, իսկ բարի և ոգուտակար բաններով նախապաշարելը չատ արդյունավետ է: Ցերը յերեխայի համար դուշակութիւն են անում, թե նա վորպիսի մարդ պետք է դուրս դա, նա հավատում և նախապաշարվում է: Հիմա վո՞րն է լավ, չա՞ր դուշակութիւնը, թե՞ բարի: Կասկած չկա, վոր բարին նրան կանի դեպի բարին, իսկ չարը՝ դեպի չարը: Ցեթե յերեխան հավատում է և՛ որհնութեան, և՛ անեծքի, ուրեմն պետք է որհնութիւն տալ և անեծքից դդուշանալ: Ցեթե նա հավատում է չար և բարի վոգիների, պետք է վոչնչացնել և սատել չարը և բարին գործութիւնը պաշտպանել: Ցերեխան սատուծուն պետք է հավատա, թե նա յե անսահման բարի հայր: Թող հավատա, վոր նա յե աղբյուր ամենայն բարյաց, վոր նա իր հովանավորութիւնը տարածում է մեզ վրա ամենայն տեղ: Մեծ է այս հավատի զորութիւնը, չատ մեծ: Ցեվ ինչո՞ւ յերեխան իր

սրտումը չկրե այդ ամենամեծ և անսահման բարի զորութիւնը, այդ ամենաքաղցր հոր ամենասուրբ անունը: Հայրեր կան, վոր չատ չար են և անպիտան: Յերեխաներին պետք է հասկացնել, վոր հայր սատուծուն իրանց հայրերին չեմանեցնեն:

Ցերբ մի յերեխայի հավատացնում են, վոր նա ունի սատուածասուր առանձին ընորհք, յերեխան նախապաշարվում է և այն համոզմունքն է կազմում, վոր սատված չատերի միջից նրան է ընտրել: Այդպիսի յերեխան, յեթե իրավ ունի այդ ընորհքը, չատ առաջ կերթա. նա կլինի չափից դուրս աստվածասեր, չե՞ վոր սատուծո ընտրյալն է, նրա սիրելին, դոնվում է նրա առանձին խնամքի և հովանավորութեան տակ: Այսպիսին ինչ նեղութեան, ինչ տանջանքի մեջ էլ լինի, միչտ կհուսա, վոր այսոր և թե վաղը նրան այդ նեղութիւնից կհանե իր ամենաբարի հայրը, և յեթե չհանի էլ, նրա կամքի դեմ չի տրտնջալ, կյերևակայե, վոր չուտով կարժանանա նրա տեսութեանը, վոր ավելի էլ մեծ յերջանկութիւն է: Ցես յենթադրում եմ, վոր այս հավատն ունեցողը կարող չե չարիք գործել, քանի վոր իր լռեալը իր անսահման բարի հայրն է: Նա կարող չե քարանալ մեկ տեղ և անչարժ մնալ: Պետք է ճգտի, պետք է ղիմի դեպի այն բարձրութիւնը, դեպի վորը ճգտելու նրան համոզել են զանազան դուշակութիւններով:

Փոքր ժամանակս յես մեծանալով ամեն տեսակ նախապաշարմունքների մեջ, անխոհեմ հավատում եյի ամեն լսածիս: Աստվածածնին ներկայացնում եյին իբրև բարեխոսող սատուածո առջև: Աստմ եյին, վոր նա չատ անդամ, յերբ աչխարհի վրա մի նեղութիւն է գալիս, աղաչում, աղերսում է սատուածուն և իր արտասուքով նրա դութը շարժում, վոր նա վերացնի աչխարհից իր տված պատիժը, ների մարդկանց հանցանքը: Սրա համար յես այն յեզրակացութեան եյի գալիս, վոր սատվածածինը մի չատ գթառատ մայր է, իսկ սատված՝ մի անդութ մողրով: Ի՞նչ կլիներ մեր ճարը, յեթե սատվածածինը բարեխոս չլիներ մեզ համար: Այս պատճառով ահա յես վախենում եյի սատուածուց, բայց չեյի սիրում նրան, իմ պաչտելին մայր սատվածածինն եր: Ցես հիմա տեսով սատում եմ այդ բարեխոսութեան հավատը և ամենայն տեսակ միջնորդութիւն: Անսահման բարի հոր և նրա վորդոց մեջ վոչ մի միջնորդութեան հարկ չկա. նա մեզ սիրում է առանց միջնորդի, և մենք էլ պետք է

աչքերնիք նրան ամենայն սրտով և հոգվով, առանց յերկյուղի: Այս է իմ ներկա հավատը և կցանկանայի, վոր ամենքն էլ այսպես հավատան և այսպես հավատացնեն իրանց զավակներին և աշակերտներին, վորովհետև այսպես պետք է լինի ճշմարիտ Քրիստոսի հավատը, այսպես է ուսուցել մեր կրոնի հեղինակն ու հիմնադիրը, վորդեգրելով մեզ հորն յերկնավորի:

Շնորհակալ եմ աստվածանից, վոր ինձ չատ շուտ մոռեցրեց իրան և ազատելով ինձ ամեն տեսակ բարեխոսներից ու չարախոսներից, ուղղակի յուր հովանավորության տակ առավ, յուրում կամ և մնամ ցմահ և յետ մահու... Ցես իմ բոլոր դատյությամբս այս հավատի արդյունքն եմ, չեմ ունցել մի այլ իրանամակալ և հովանավոր՝ բացի աստվածանից: Ցես կցանկայի, վոր ամեն վոք՝ իր յերջանկութեյան համար՝ այս հանդամանքի վրա լուրջ ուշադրութեյուն դարձներ: Թող այս հավատը ամեն անհատի մեջ դառնա մի անջնջելի նախապաշարմունք, հզեական ցավի պես մի բան, առավել լավ. դա կծառայե անհատի յերջանկութեյանը: Ցերկու հակառակորդից հաղթողը նա կլինի, ով վոր ավելի կղզա, վոր աստուծո աներևութի ոդնութեյունն իր հետ ե. այդ հավատից զուրկը կզրկվի և հոգեկան ուժից, այն ուժից, վոր հավատի հետ աճում և զորանում ե և անհավատութեյան հետ թուլանում և հանգչում:

Ցերջանիկ կարող ե լինել այն ազգը միայն, վոր դիտե թե վոչ մի չարիք աստվածանից նրան չի հասնում և յերբեք էլ չի հասնիլ վոչ մի դեպքում: Իսկ յեթե ներկայացնե իրան, թե աստված իր դլխին բարկացել ե և պետք ե հրով ու սրով ջնջել տա աչխարհի յերեսից մի քուրդի կամ թուրքի ձեռով, այդ հավատը նրան խակապես էլ կջնջի: Ուրեմն անհատի և ազգի բախտը նրա հավատալիքների վորպիսութեյունից և կախված: Պետք ե արմատախիլ անել վնասակար հավատալիքները և նախապատրաստել բարին և ոդտակարը: Այսպես պետք ե անել, վորովհետև յերկուսից էլ միանդամից կտրվել կարելի չե: Ինչպես կարելի չե դրկել մեկին հոգեկան զգացումներից, նույնպես կարելի չե ազատել և նախապաշարմունքից: Լավ կլինի ուրեմն, վոր այդ նախապաշարմունքը դոնե նրա ոդտին և բախտին ծառայե:

Մանկութեյան առաջին տարիներում մեր գյուղի մեջ յես մի բացառիկ ծնունդ եյի, իբրև կարդից դուրս չնորհալի յերեխա: Նեղ եր և մութ իմ չրջանը, բայց ինչ վոր կա՛ր այդ չրջանում դեղարվեստական համարված՝ յես յոթը տարեկան հասակումս արդեն բոլորն էլ ամփոփել եյի իմ մեջ, և այդ ի հարկե՝ իմ զարմանալի սուր հիշողութեյան և ըմբռնման չնորհիվ: Իմ բոլոր դասերս նախ քան դաս առնելս բերան դիտեյի՝ կույր աչքի պես, վոր կարդալ չիմանալով՝ ամեն ինչ բերան է անում, լսելով միայն: Ցերբ վոր կարդալ սովորեցի, էլ հարկավոր չեր, վոր ամեն ինչ դաս առնեյի: Ժամասացութեյունը բոլոր յերկար քարոզներով և վոխերով, նույն իսկ ժամումն եյի բերան արել՝ լսելով միայն: Շատ ծիծաղելի յեր իմ դիր սովորելը: Դրքերի անունները դիտեյի առանց նրանց ճանաչելու, վոխերն ասում եյի առանց բառերը ճանաչելու: Տառերի և բառերի վրա չեյի կարողանում կանգ առնել, չեյի կարողանում ուչքս կենտրոնացնել նրանց վրա, վոստոստում եյի ճնճղուկի պես: Սրա համար իմ ուսուցչուհին մի բարբարոսական դաստիարութեյուն հնարեց, դաս տալն սկսեց վոչ սկզբից դեպի վերջը՝ ինչպես անդիլ եյի արել, այլ վերջից դեպի սկիզբը, սկսած նույն իսկ բառերից, որինակ՝ «Համբարձի զաչս իմ ի լերինս, ուստի եկեսցէ ինձ օգնութիւն»-ը պիտի սովորեյի՝ «օգնութիւն ինձ եկեսցէ ուստի ի լերինս իմ զաչս համբարձի»... Այս հանդամանքն ինձ մի քիչ նեղը լծեց, բայց չուտով ազատվեցի և սկսեցի ամեն տեսակ դիրք կարդալ առանց բովանդակութեյունն ըմբռնելու: Կարդացածը հասկանալու ազաթ չկար, հետաքրքրականը վարժ կարդալն եր և յես իմ վարժ կարդալովս զարմացնում եյի ամենքին: Խաղերն էլ առաջ անդիր եյի սովորում, բայց յերբ պիր սովորեցի, սկսեցի դրել անթիվ խաղեր: Դրանց բովանդակութեյունը քիչ թե չատ հասկանում եյի, և չատ չուտով սկսեցի ինձանից էլ հորինել: Այս բանի համար յես մեծ դյուրութեյուն ունեյի: Թաղտառական աչքընները իրանց աչակերտներով մեր տանն եյին լինում, մեր ոդայումը, և չատ անգամ որերով մնում: Ահա այդ ժամանակ աչքընները դաս եյին տալիս իրանց աչակերտներին զանազան խաղեր, մեծերին սովորեցնում եյին և հորինելու ձևը, հորինել եյին տալիս զուռով և ծեծում էլ եյին

ասրսասխելի կերպով: Ցես չատ չուտ պլխի ընկա, թե ինչպես են հորինում և սկսեցի հորինել այն, ինչ վոր չեյին կարողանում իրանց աչակերտները: Հարկավոր չեր, վոր ասլածը լիներ իմաստալից և պեղեցիկ, միայն թե լիներ ձևավոր, դռնավոր և չափական: Ծագերը հորինում եյինք Թուրքերենն և վոչ հայերեն: Հայերեն յերգելու դիտակցությունը դեռ չեր մտել մեր աչքերի մեջ:

Ս.հա այս հանդամանքի չնորհիվ, յես դեռ ևս ուժ տարեկան հաղիվ կլինեյի, վոր պյուղացյոց աչքում ընկա ընտրյալների կարգը: Ծերերն ինձ սիրում եյին, տուփրումն իրանց կողքին նստեցնում, յերգել տալիս, հիանում և որհնում ինձ, մայրերը յերանի եյին տալիս մորս, հայրերը՝ հորըս: Պատավ կանայք զարմանալի յերազներ եյին տեսնում ինձ համար և դալիս եյին պատմում մորս, իսկ վալլհքը հրաշալի դուշակություններ եյին անում: Գյուղի մեծերի մեջ դրազետներ չկային, իսկ մանուկների մեջ միակ դրազետը յես եյի: Ջահանա անդամ չունեյինք, կարդ պատահած ժամանակ ուրիչ դյուղերից եյինք քահանա բերում, վորոնք Մաշտոցն անդամ կարդալ չեյին սովորել, այնքան բթամիտ եյին: Այսպիսի մթության և խավարի մեջ լուսատըտիկն անդամ ճրագ կթվա: Զարմանալի չե ուրեմն, վոր յես մի հրաշք թվայի պյուղացյոց աչքումը:

Ցերը վոր մի մանուկի ամենքը գովում և սիրում են, նրբան համարում են կարդե դուրս մի բան և զարմանում, անկարելի յե, վոր նա ինքն էլ չսիրահարվի իր վրա և չզարդացնե իր մեջ այն ընդունակությունը, վորի համար վոր սիրվում է ինքը: Այստեղ արդեն զարթնում է նրա մեջ ինքնագարդացման և ինքնակրթության վոգին: Կարող է պատահել, վոր նա մոռանամի և դոռոզանա, իր ընդունակությունից վեր բաներ յերևակայե, բայց քանի վոր յերևակայողն ինքն է, ճգտումն իր ներսումն է, պետք չե նրան վոչ խենթ և վոչ մեծամիտ համարել, նա կարող է և իրականացնել այն, ինչ վոր յերևակայում է:

Ցես չատ չուտ սիրահարվեցի ինքս ինձ վրա: Իմ այս ըզգացմունքս չեյի թաքցնում և պարզմտությամբ խոստովանում եյի չատերին, թե՝ դիտե՞ք, յես ուրիչ բան եմ, այսպես մի նայեք վրաս, յես չատ յերևելի մարդ պետք է դառնամ: Բայց այս պարզմտության համար ասրսասխելի ծաղրի յենթարկվե-

լով՝ ղգացում ծածկեցի իմ մեջ առանց իմ վրա ունեցած կարծիքս վոխելու: Ցես քիչ-քիչ այն յեղրակացության յեկա, թե մարդ ինքն իրան այնպես չպիտի ներկայացնե ինչպես վոր ինքըն է կարծում թե կա իրոք, այլ այնպես, ինչպես նրան ընդունում են: Թող ուրիշները նկատեն, վոր դու քո ունեցած դիրքից ավելի բարձր ես, բայց դու մի դուրս դար քո դերից: Այս կանոնը յես չեմ պահում միշտ: Ցերը տեսնում եմ իմ արժանավորությունս վոտքի տակ ձգելիս, արհամարհելիս՝ բողոքում եմ չարաչար և ասում. «Դուք ամենքդ իմ մի յեղունկը չարժեք, և այնքան ստոր եք ինձանից, վոր միայն վոտքերս եք տեսնում»: «Արության և Մանվել» վեպը իմ ինքնասիրության արդյունքն է: Ինձ հարկավոր եր ժամանակակից մի հերոս. ծանոթներիս մեջ ինձանից լավը չգտա: Քան թե սխալ յերևակայել և խելքիս դուռ տալ, ավելի լավ համարեցի՝ ոտուպատառում լինելու համար, բուն իրողությունը, իմ իսկապես տեսածն ու լսածը վիպական ձևի տակ ձգել:

Ինձ վրա սիրահարվելու յես ունեյի և մի այլ պատճառ: Գոռոզությունը և ինքնահավանությունը իմ ցեղի՝ թե մորական և թե հորական՝ բնորոշ հատկություն եր: Ցես չեյի կարող ազատ լինել այդ ժառանգական մեծամտությունից: Ցերեվի այդ ցեղը պատճառ է ունեցել այդպիսի հատկություն ստանալու: Ցե՞րբ է սիրահարվում մեկն իր վրա. անշուշտ յերբ մի վորևե լավ կողմ է ունենում, վորով նա գերազանցում է մյուսներին, յեթե՝ որինակ՝ չատ գեղեցիկ է, նշանավոր արտիստ է, յերևելի ըմբիշ է, թավալգի վորդի յե, և այլն:

Ցես չատ ուժեղ եյի և որինավոր ըմբիշ: Ցեթե քանի ուժի ընկներ, գրաչար ժամանակս յես այնքան ուժեղ եյի, վոր «Գուռնկ»-ի բոլոր աչխատակիցները միասին հավաքված կարող չեյին կուռս վոլորել՝ այնքան թույլ եյին և վատուժ: Հիմա եյ վոր միտս եմ բերում Գուրյանցի, Ցերիցյանցի, Խոչարյանցի, Տեր-Աղեքսանդրյանի, Գարեգինի և ուրիշների գալուկ ու սիրթնած յերեսները, ծիծաղս գալիս է: Զուր չեր անցել Ֆիզիկական կրթության համար իմ ուսումնառության ընդհատվելը, իմ սար ու ձոր թափառելը, վորսորդների և այլ անտառականների հետ ընկերանալս, պոլկի զուքանչու մոտ ընկնելս Աղբուլաղում, այնտեղ կրած չարքաչություններս, աղ կրճելս և հարյուրավոր տակառներով միս աղելս Շամխի դեմ պատե-

քաղմող դինվորների համար, այնտեղի անտառային կյանքս և այլն: Վազելում, ցատկելում, մագլցելում և մենամարտելում մինչ հաղթող էի հանդիսանում և վոչ հաղթվող: Զարմանալի կթվա շատերին, թե այդ աստիճան վայրենացած մեկը ի՞նչպես և վիզը ճկում ճուլոզի և դրաշարի ծանր լուծի տակ, անտանի աղատ արծիվը ի՞նչպես և կամովին վանդակի մեջ ճգում իրան: Թող ավելի մեծ հոգեբանները մեկնաբանեն այդ յերևույթը, իսկ յես այսքան կասեմ միայն, վոր այդ վայրենության մեջ ևս յես այնպես էի, ինչպես մի կորուստ վինարող, ինչպես հեքյաթներում իր կորցրած սիրուհուն վինտրելու համար պանդան արկածների յենթարկվող մի հերոս: Իմ սիրուհին իմ կորցրած ուսումն եր, և յերբ ընկա ճուլարան, այս և, ասացի, այն ճանապարհը, վորով յես պիտի գնամ իմ վինտրածս դանելու, ուրիշ ճանապարհ չունեյի: Ուժ ունեյի հաղթելու ամեն դժվարության, ամեն չարքաշության: Յեթե ուժ չունենայի, շուտ կըփախչեյի ճուլարանից եղ, տալարանից եղ, ինչպես վախան իմ քանի չափ ընկերները, վորը ճուլարանից և վորը տալարանից: Այդ փախչողներից մեկն եղ հայր Բեղնազարյանցն եր, վորի մասին հետո խոսք կլինի ուսյն պատմության մեջ:

Մանկության ժամանակ նվազ էյի, բայց այն հասակում, յերբ, ինչպես ասում են, պատանին թաթ և տալիս լինքն իրան, փոխվում են ձայնն ու դուխը, ծլում են բեխերը, այդ ժամանակ ահա յես եղ թաթ տվի իմ մանկությունը, մի տարվա մեջ կես արշինի չափ բարձրացա, արյունս սկսեց յեռալ և յես իմ մեջ զգացի մի անզուսպ ֆիզիքական ուժ: Այդ ժամանակ յես ստացա հորս նմանությունը ֆիզիքապես, ինչպես մի խնձոր կես արած, իսկ իմ հայրս մի քաջառողջ, վայելչակազմ, և չատ ուժեղ մարդ եր: Մայրս ուժի կողմից մեր դյուղի մեջ մի բացառություն եր, վորովհետև իր աննման դեղեցկության հետ ուներ և կարդե դուրս ուժ՝ համարյա հավասար հորս ուժին: Հայրս փոքր ինչ թխամորթ եր, իսկ մայրս ալիտակ եր ինչպես բամբակ: Մի դյուժին զավակ բերավ մայրս՝ չորս աղա և ութ աղջիկ, վորոնցից չորսն իրան եյին նման, իսկ ութը՝ հորս: Այժմ վողջ ենք չորս յեղբարքս միայն և չորս եղ քույրս: Յեղբարքս բաժանվելով ամեն ինչ բաժանեցինք մեր մեջ: Բաժանեցինք և մեր քույրերին ըստ հասակի: Իմ բաժին քույրս Հերիքըն է, վոր ծանոթ է Աղբուլաղ ամարանոց դնացողներին: Ին-

Ղ. ԱՂԱՅԱՆԻ ՀԱՅՐԸ

քը չի հայտնվում չատերին իր ալա յեղբոր պատիվը պահելու համար, վորովհետև աղքատ է: Լեղճը չդիտե, վոր աղա յեղբայրը խալխի նոքարն է և թեպետ Աղայանց է, բայց աղա չէ և չի լինիլ յերբեք: Հերիքը չատ խելոք և չատ ժրաջան տանտիկինն է: Հինգ աղջիկ և մարդու տվել իր ձեռքի աշխատանքով և հալ ու հուն ծախելով ամարանոց դնացողների վրա:— Իմ բարեկամներից և ծանոթներից քեզ մի՛ թաքցնիր,— ասում եմ իրան,— յերբ վոր հարցնեն, ասա յես Ղազարոսի քույրն եմ, այն ժամանակ քեզ ավելի կպատվեն:— Ե՛, ասում եմ, բա ասում չեմ,— պատասխանում է քույր:— Յերբ վոր տեսնում եմ լավ մարդիկ են, ասում եմ, բայց վոր տեսնում եմ չատ ևն քրքրվում, ճաքճաք գալիս, նրանց ի՞նչ լայել կանեմ բան ասելու...

Հերիքը Շամչուղա դյուղումն է մարդու դնացած: Նա իմ Մայիկոյի դրկիցն է: Մայիկոս հիմա հարսներ ու թոռներ ունի: Մի չատ հարցնում է քրոջս իմ աւադղության մասին, բայց յերբ գնում եմ այնտեղ, վախչում և ինձանից, ինչպես նշանածը փեսայից: Կարծես եղի նույն յերեխան է, ինչ վոր քառասուներեք տարի առաջ:

Ցպարանում յեղած ժամանակս յես բան չատ եյի դրում, բայց չեյի տալել տալիս և չեյի էլ ցույց տալիս իմ բարեկամ հեղինակներին, բայց ուղարկում եյի դյուղ, վոր այնտեղ կարդան և լուսավորվին: Արդեն վորձով այն յեղրակացության եյի յեկել և ասում եյի ինձ, թե քանի վոր դրաշարական քոմփոս ունիս ձեռիդ, դրիչդ մի ցույց տար: Բայց մեկ անդամ չեղվեցի այս կանոնիցս: Այդ ժամանակ «Մեղու»-ն ևս մեր ապարանումն եր տալվում, վորի դրաշարը իմ ոչբելի ընկեր Մքաջյելն եր: Մեկ որ այնպես պատահեց, վոր վոչ Պատկանյանը և վոչ Մանդինյանը, վորոնք խմբագրում եյին «Մեղու»-ն, նյութ չունեյին լրագրին տալու, ընկերս մնացել եր պարապ, խակ լրագիրը պետք է մյուս որը դուրս դար: Ձեռաց մի վոտանավոր թխեցի, տվի ընկերոջս, վոր տանի Պատկանյանին: Նա փոխել եր վերնագիրը և հրամայել չարելու: Յերբ վոր տվվեց, ցույց տվի ս. Աղաբեգյանին. նա հավանեց և ասաց. «Աչխատիր, չհուսահատվիս. դու ապագա ունիս, միայն այտեղ չը-մնաս, գնա՛ Ռուսաստան: Լսել եմ, արդեն մատղրության ունիս դնալու. գնա՛, մի՛ վախենար, ձեռքիդ արվեստ ունիս, քաղ-

յած չես մնալ: Ես դնալով մենք կդրկվինք քեզ պես չնորհքով դրաշարից, բայց հոդ չէ, գո բախտավորությունը չպիտի դո-հենք մեր ոտքին: Ժամանակին դու կարող ես ավելի մեծ ո-ւղուտներ տալ, յես հույս ունիմ քեզանից: Այդ դրածիդ նշանակություն մի՛ տար, աչխատիր ուսումդ կատարելագործել, յես քեզ դրանով չեմ չափում, այլ գո ընդունակությամբդ, վորի չափն ու դինը գուցե դու ինքդ չդիտես»:

Շատ զգայուն սիրտ ուներ այդ ազնիվ մարդը, այդ պատվական հայը: Այս խոսքերն ինձ ասում եր նա հուզված սըրտով, անկեղծ սիրով, լուրջ հայացքով: Ամածի մեջ վոչ մի խայթանկություն կար, այլ և մի տեսակ հրաման, վորին ինձ համար անկարելի յեր ընդդիմանալ:

Հիշյալ վոտանավորը տպվեց 1862 թվականի մայիս ամսի չեփեամ քանիսին և վոր համարում: Ցես մոռացել եմ դրան ձըզվել իմ բանաստեղծություններիս ժողովածվի մեջ:

Այդ ժամանակ մեր դրողներից ինձ ամենամոտիկը պ. Պռոշյանցն եր, վորովհետև նա յեր սրբագրում «Կռունկ»-ը, նա յեր արևելյան բարբառի դարձնում Մամուրյանի անդղիական նամականիքը և նրա մյուս հոդվածները: Մի ժամանակ կենում եյինք և մեկ տան՝ ապարանի հաչվով, և ծախսարան էլ յես եյի: Շատ անդամ յես և Պռոշյանցը բա՛ս եյինք մանում իրար հետ, վոր տեսնենք մեղանից ով չուտ կդրե այդ ինչ բանի վրա մի վոտանավոր: Նա չուտ եր դրում և քանակությամբ էլ նրանից ավելի յեր դուրս գալիս, բայց հատկության մասին վիճում եյինք, նա իրանն եր գովում, յես իմը:

Մեկ անդամ յես ապարանում չեղած ժամանակս, չեփեամ ինչու համար, Աղեքսանդր Յերիցյանը խփել եր Պռոշյանցի կուրծքին, վոր այդ ժամանակ բավական թուլլ եր: Յերբ գնացի ապարան, ապացը պատմեցին ինձ այս անցքը, և յես իսկույն բռնեցի Յերիցյանին հենց ապարանումը և ուզեցա ծեծեմ, բայց նա չատ խորամանկ եր, և-իրրև չինովնիկի պատ, ինձ ապատնաց, թե կերթա հորը կլսի և ինձ բանել կտա պոլիցիաում: Պոլիցիան էլ մեր հանդեպն եր, ուր ամեն որ ուղղի եյին տալիս բանվածներին: Ընկերս յետ քաշեց ինձ և նա փափաղ չարունակելով իր սպառնալիքը: Մի բան, վոր Պռոշյանցն ինքը կարող չե հիշել, այդ այն է, վոր մեկ անդամ նա սաստիկ չերմ ստացավ: Սաստիկ տաքության մեջ սկսեց դելը տալ:— Մեռնում

եմ,— ասաց,— թուղթ տվեք՝ կտակս գրեմ: Ոռոշյանցին նըստեցրինք տեղումը, քամակին բարձեր դրինք, վոր չիտակ մնա, թուղթ և գրիչ տվինք, և նա սկսեց գրել: Գրում եր լինչպես էջքարտական գրիչ, հինգ րոպեյումը թերթը լըցնում եր: Մեկընդմեջ ուշքի յեր գալիս և կրկին ցնորում: Ուշքի յեկած ժամանակ ասում եր՝ կանչեցեք Տեր Գրիգորին (Տեր Հակոբյանց), իսկ յերբ ուշքը կորցնում եր, աչքումը տեր Գրիգորն եր յերեվում իրրև արդեն յեկած և համբուրում եր ձեռքը՝ պահպանելով դատարկ ոտարածուԹյունը: Ցես ահա այս բանն եյի ունեցել ի նկատի Ոռոշյանցի կենսագրուԹյան մեջ, ուր ասել եմ պարզ այսպես. «Տեսել եմ նրան (Ոռոշյանցին) սաստիկ ջերմի մեջ գրելիս այնպիսի արագուԹյամբ, վոր մի քանի րոպեյի մեջ ամբողջ թերթեր եր լցնում, բայց ի հարկե անկապ և անմիտ բաներ»: Լրագրերն այնպես բացատրեցին իմ այս գրածը, վոր իբր թե յես ասել եմ՝ «Ոռոշյանցը թեև շատ արագ է գրում, բայց գրածներն անմիտ բաներ են լինում»: Ինքը Ոռոշյանցն էլ յեկավ վրաս կռիվ, թե դու ինչո՞ւ յես այնպես գրել, վոր նըրանք ծուռ հասկանան:— Հոգիս,— ասացի,— յես ի՞նչ մեղավոր եմ, վոր նրանք ուղիղ հայերենը չուղենան ուղիղ հասկանալ:

Պետք է ասեմ, վոր յես Ոռոշյանցին հիշում եմ դեռ ևս Ներսիսյան դպրոցում, յերբ նա վերջին դասարանն եր, և անկարելի յե չհիշել, վորովհետև մեր վարժապետները բոլոր աչքերովներիս մատով եյին ցույց տալիս նրան, վոր դպրոցի ծաղիկն եր և ամենից հառաջադեմը: Ինչպես յես մեր դյուղումը իմ հասը չունեյի, այնպես էլ Ոռոշյանցը Ներսիսյան դպրոցում չուներ իր հասը, բայց այդ դպրոցի ընորհքը չեր, այլ իր տաղանդի, իր ստացած մանկական հարուստ պաշարի, իր մայրենի լեզվի: Դպրոցի ուղղուԹյունը յերևում եր ավելի Մուրադյանի մեջ, վորի իդեալը մի կողմից Հակոբ վարժապետն եր, մյուս կողմից Շանյանը, մինչդեռ Ոռոշյանցը նույն ուսուցիչներին հարգելով հանդերձ, իր մտքի ուղատ թռիչքով շատ յետեր թողել իրանից: Ոռոշյանցը այսոր չի պատկանում անձնապահպանողական կուսակցուԹյանը, բայց յեթե ըվերկելու լինինք, մեծամասնուԹյունը նրանց կարգը կձգե, և ինքն էլ այդ կհամարի յերկուց չարեաց փոքրագույնը: Ոռոշյանցի յետ մնալու պատճառը նրա վատառողջուԹյունն եր, նրա կուրծքի թուլուԹյունը. յեթե դա առողջ կազմվածք ունենար, կերթար իր ուսումը կատարելագործելու և մենք այսոր կունենայինք շատ նըշանավոր մատենագիր: ՏկարուԹյունը նրան կաչկանդեց, նա մնաց մի կետի վրա կանգնած. այսոր էլ նույնն է, ինչ վոր եր յերեսուն տարի առաջ. այդպես է նայում և ուրիշների վրա: Այսուամենայնիվ Ոռոշյանցը մեծ ծառայուԹյուն է մատուցել ազգային գրականուԹյանը և կրթուԹյանը, և ազգը պարտական է նրան պահպանելու, պարտական է ապահովելու նրա ծերուԹյան որերը կենսաթոշակով:

VI

Նախընթաց յերկու գլխները ժիջանկյալ եյին, դրանք կազմող եյին և չլինել, բայց յես ոգտակար համարելով՝ դուրս չեձգեցի: Ցեթե մեկի կենսագրուԹյունը կրթական վոչինչ չի պարունակում իր մեջ, չարժե գրել: Դառնանք ուրեմն մեր պատմուԹյանը:

Մտել եմ ճուլարան, այնտեղից տպարան. գիտեմ յերկու արհեստն էլ, ստանում եմ լավ ուճիկ, պատիվ, սեր, որը մեկ մինչնորդ է գալիս մոտս և մեծ ոժիտով սիրուն աղջիկ առաջարկում, առասպելական խոստումներ անում— բախտ, յերջանկուԹյուն, անկախ դիրք, փառավոր ապագա:

— Բայց, պարոն, իմ ինչի՞ն եք թամահ անում, վոր այդքան բաներ եք խոստանում,— ասացի մեկ անգամ:— Ցես մի դյուղացի, մի հասարակ արհեստավոր, անտուն անտեղ...

— Ով գիտե,— պատասխանեց մինչնորդը,— հալբաթ ղըսմաթի բան է, բախտ է, ճակատ դիր է: Քեզ շատ են հավանում. լավ բոյ ու բուսաթ ունի, ասում են, ջանով է, ճակատում. լավ բոյ ու բուսաթ ունի, ասում են, ջանով է, ճակատը բաց, աստղով տղա յե. ամենքը քո գովաբանքն են անում: Սկանդար ողլանը մի խոսք է չինել քեզ վրա, քո գովքն է արել. ասում է՝ դիվի սուտ են, Աղայանցի հասը վուչով չկա: Ինչո՞ւ ես ուրեմն զարմանում:

Այս գայթակղական հանգամանքներից կինվաճվելը իմ ուսման սերը, յեթե այդ սիրտ վրա ավելացած և ամած չլիներ իմ մեջ և հայրենիքի սերը: Դրա նույնն ունեյի յես, բայց մի բան ևս հանգամանք պետք եր, վոր վաուվեր և բորբոքվեր:

Սբ. Հայրիկը մի յերկնային չանթով վառեց իմ մեջ այդ նյութը: Մեկ անգամ այդ սերը վառվելուց հետո՝ ել ոչ մի աղջկա սիրով նրան հանգցնել կարելի չեր, մանավանդ վոր այդ սերը չհար ել մեր աշխարհքումը: Ինչ սեր կարող եյին տալ մեջնորդները: Մեղանում աղջկանը ոչ թե սիրում և ուզում եյին, այլ չատ շատ՝ հավանում և ուզում, կամ նրա բերածին քամահ անում և ուզում: Այլ բան կլիներ, յեթե ճշմարիտ սիրահարություն լիներ. այն ժամանակ դեռ, չդիտեմ, կարելի կլիներ արդյոք այդպիսի սիրո ճանկերից ազատվել հոգուստ ուսումնասիրության և հայրենասիրության:

Հայրիկի քարոզը յես առաջին անգամ լսեցի Մեյդանի ս. Գևորդ յեկեղեցումը: Կանոնած եյի առջևի կարգումը: Դեռ չեյի տեսել Հայրիկի պատկերը: Յերբ վոր բարձրացավ բեմի վրա և հայացքը ձգեց ժողովրդի վրա, դեռ ևս վոչինչ չհասեցած՝ սոսկ այդ հայացքը ինձ վրա մի չլսված ազատություն դրծեց: Մեծն Ներսես, Սահակ Պարթև և սուրբն Մեսրոպ վայրկենապես պատկերացան յերևակայության մեջ իբր կենդանացած և առջևս կանոնած: Սիրտս լցվեց, բուկս խեղդվեց, քիչ մնաց բղավեմ— վա՛յ, ոգնեցե՛ք, մեռա՛... Բայց ամենայն ուժովս զսպեցի ինձ և տեղս ու տեղս չոքեցի, գլուխս դրի պետնին յերկու ձեռքիս մեջ և խեղդված հեկեկանքով հորդ արտասուք թափեցի: Նա սկսեց խոսել, բայց յես շեյի լսանում վոչինչ, իմ հոգին իր բոլոր ղգացումներով թռել եր Հայաստան:

Ահա այս ժամանակից իմ առաջվան ցավերի վրա ավելացավ և այս ցավը և ինձ համար անբուժելի դարձավ: Աստվածասիրություն, հայրենասիրություն և ուսումնասիրություն յերրորդության պես միացյալ ուժով տիրեցին իմ ամբողջ բնությանը, այլևս ուրիշ ղգացումների տեղի չտվին: Աչխարհային վառք, պատիվ, վայելչություն բոլորովին վոչնչացան ինձ համար:

Այս դեպքից մի տարի անցած՝ Գարեգին Սրվանձտյանը կրկին յեկավ Թիֆլիս Հայրիկի պատվերով՝ ապառիկներ ժողովելու համար: Նրա հետ եր և Միքայել Ալեքսանյանը՝ այժմյան հռչակավոր Ռուբինյանը: Այդ Միքայելին յես չհավանեցի, և ասացի Գարեգինին.— Սրան ինչո՞ւ յես բերել, ձեր դպրոցի անունը կոտրելո՞ւ համար:

— Ուղիղ և ճանաչողություն,— ասաց,— Հայրիկը նույնպես հավան չե սրան և դիտավորյամբ հեռացրեց: Վերադարձին սիրուն արձակե:

Գարեգինը՝ իբրև նախածանոթ, մի քանի որ մնաց իմ սենյակումս իբրև հյուր: Ինչ ոգևոյին ամրոցներ ասես, վոր չեյինեցինք այդ մի քանի որվա մեջ: Նա ինձ առաջարկում եր, վոր հետը յերթամ Վարագ, յես չհամաձայնեցի և իրան համոզեցի, վոր Վարագ դնալուց առաջ ինձ հարկավոր է յերթալ ուսումս և արհեստս կատարելագործել, այժմյան ունեցածովս ոգտակար լինել չեմ կարող, և աղնիվ խոսք տվի իրան, վոր վերադարձիս անպատճառ յերթամ Վարագ:

Բայց ինչպես պիտի իրագործեյի յես իմ այս ցանկությունը: Բարերար դտնել կարելի չեր, իմ նպատակին յես պիտի հասնեյի իմ սեփական աշխատանքով: Բարերաներ հիմա ել հազվագյուտ են, իսկ այն ժամանակ բնավ չկային և յեթե լինեյին ել, ով կգիտեր՝ դպրոցներում փառավոր վկայականով ուսումն ավարտած ուսանողներին թողած՝ բարերար հանդիսանալ իմ դրաչարի: Բայց պ. Ենգիբարյանցը կարծում եր վոր կարելի յե և ինձ խորհուրդ չեր տալիս առանց ոժանդակության յերթալ մի ոտար աշխարհ: Նա աշխատեց Ռ. Նադիրյանցին համոզել, վոր ինձ հետը տանե մինչև Մոսկվա և նյութապես ել ոգնե, վորքան կարող է: Նադիրյանցը համաձայնել եր, Համբարձում ապան ել ինձ ուրախացրեց այդ նոր լուրով, բայց Նադիրյանցը փոխեց իր միտքը, առարկելով, վոր նոր մարդ ավելացավ և կառքումն ինձ համար տեղ չի լինիլ:

— Յեկ այլ ևս մի դնար,—ասաց պ. Ենգիբարյանցը:—Հանիր դլխիդ այդ ցնորքը: Յես կխնդրեմ պ. Աղաբեգյանին, վոր քեզ դասեր տա ֆրանսերենից, ռուսերենի վարժապետ ել կգտնեմ, լավ վարպետներ բերել կտամ տպարանի համար և այստեղ կտանաս քո ուզածդ:

Այս բանը յես ասացի պ. Աղաբեգյանին:— Վոչվոքի մի՛ լսիր,— պատասխանեց նա,— ինչ վոր այնտեղ կսովորես միայն տեսնելով ու լսելով՝ այստեղ ամենալավ վարժապետներից անգամ չես կարող սովորել: Գնա՛, մի՛ վախենար, հույդ առուծո վրա դիր և վոչ հարուստների, դրանցից քեզ ոգուտ չըկա: Գնա՛, տերը քեզ հետ կլինի միշտ:

Յերբ վոր վճռվեց իմ գնալը, իմ ընկեր Միքայելը, վոր մինչև այդ ժամանակ լուռ եր —և լուիկ բնավորություն ել ու-

նեը հենց— հանկարծ ղևուխը բարձրացրեց և ասաց.

— Ուրեմն վճռել ես գնա՞լ անպատճառ:

— Այո՛:

— Ուրեմն գնանք չէլերս կապենք:

— Ի՞նչ, ուրեմն դու էլ ես ուզում գալ:

Միքայելը «հը՛մ» արավ և ղրաչարական քամփոսը դրավ տառարկղի վրա: Յես արդեն ապատ էլի բանելուց, գնալու պատրաստություն էլի տեսնում, իսկ Միքայելը քանում էր: Տպարանից գնացինք մեր բնակարանը, չերկար խորհրդածեցինք և վճռեցինք միասին գնալ: Հինգ տարի միասին ընկերություն էլինք արել և ամենասերտ սիրով և մտերմությամբ չաղկապվել իրար հետ: Պարոն Ենֆիաճյանցը, կարծելով վոր յես եմ գըժ-վացրել Միքայելին, վարակելով նրան իմ խենթությունովս, կանչեց նրան և շատ խրատեց, վոր յես կենա այդ մտքից, բայց չկարողացավ համոզել և մենք առավոտ կանչեցինք և վոստոսի կառքով ճանապարհ ընկանք դեպի Հյուսիսային Ռուսաստան:

VII

Փոստով գնացինք մինչև Վլադիկավկազ միայն. նույն տեղից չարունակեցինք մեր ճանապարհը ապրանքակիրը սայլերով: Անծանոթ և մեզ չերկիրը, անտառը և կլիման, անմարս և կենդանությունը, անհյուրընկալ են մարդիկ, բայց մենք գնում ենք կամաց կամաց կրնայի քայլերով, տեղ վոտքով և տեղ սայլի վրա նստելով, զանազան արկածներով չենթարկվելով: Այդ արկածներից մեկը գրելու արժանի չեմ իր հեքիաթական բնավորությամբ:

Մեր քարվանը մինչև չերեսուն պատրոկաններից (սայլերից) եր բաղկացած, ամեն մեկում մի ձի միայն լծած: Ճանապարհն այնպես հարթ եր, վոր քառասուն վոտի բեռան համար մի ձին էլ շատ եր: Քարվանատերը մի հսկա չեր՝ Պոլիֆեմի պես մարդակեր, բայց մեզ վերցնողը ամենից խեղճն եր: Հսկայի չիպերը յեկել եր, թե ինչո՞ւ իրան չենք վարձել: Սակարկել էլինք մինչև Ստավրոպոլ: Այդ Պոլիֆեմն ահա մեզ շատ եր նեղացնում և չիպերեցնում արհամարհելով, արմյաչկա անվանում և մեր կողքից անցնելիս, թե ինձ և թե ընկերոջս հրնդում ու ծիծաղում,

իբր թե հանաք և անում: Մեր պատրոկիապանը բարկանում եր վրան, հանդիմանում, բայց նա ավելի չեր կատաղում նրա չըդրուչ: Մեկ անգամ էլ, չերբ պիտի մոտավս անցներ, յես պատրաստվեցա, և հենց ուզեց հրնդել, յես այնպիսի մի զարկ տըվի վոտքովս, վոր նա բերանքթիվայր վռնդեց դեռնի վրա: Նա չեր կացավ և ուզեց բռնել ինձ, բայց յես սպառնացի, ասելով. «Զմոռանաս, յեթե վոչ՝ խանչալս փորդ կկոխեմ: Ուզում ես ուժդ փորձել, յես պատրաստ եմ. առաջներիս դվորոմդը կոխ կենանք, տեսնենք ո՛վ ո՛ւմ կհաղթի»:—Լավ,—ասաց ռուսը,— յես քեզ կսովորեցնեմ, թե ինչ կնշանակի վայր դնել: Բոլոր ընկերները սկսեցին ծաղրել իրանց հսկային, և վախկոտ անվանելով՝ ավելի չըղոտեցին իմ դեմ, մինչև հասանք դվորը (քարվանի կայարան), ուր իջնում և կերակրվում եր քարվանը: Այստեղ մեջ խառնվեց դարձին դվորի տերը և ասաց ինձ.

— Հաղթվողը պետք է մի վեդրա ոդի առնի. յեթե դու հաղթես, սրա փոխարեն յես կտամ մի վեդրա, իսկ յեթե հաղթվես, ինքդ պիտի առնես:— Յես պատրաստ եմ, ասացի, թող դուրս գա:

Յես չգիտեի, թե ռուսներն ինչպես են կռչում: Վրաստանի սովորությամբ յերկու ձեռքով խաչմերուկ բռնեցի ազիքից և աչ ծունկս հանկարծ դեմքին խփելով՝ ուժս վրայով մեր հսկային կլափսուլ արի այնպես, վոր առաջ գագաթը դիպավ դեմքին, հետս մեջքի վրա փռվեց դեմքին ահագին թրմփոցով: Սարսափելի չեր հարվածը, բայց վեր կացավ տեղից և բռնվեցինք, թե այդ սառոնաությունն և ե՞չ կռչել. պետք է կռչել իրանց որենքով:

— Վոչ,— ասացի,— կռչելու մեջ որենք չկա, այլ միայն ուժ և ճարպարություն: Յես կռչում եմ մեր որենքով, դու էլ կռիր ձեր որենքով. ում որենքը վոր ուժով կլինի, նա կհաղթի:

— Վոչ, վոչ,— բղավեցին ամենքը միաբերան,— պետք է ռուսական ձևով կռչել, յեթե վոչ՝ դու պետք է առնես ոդին:— Շատ լավ,— ասացի,— կռչենք ձեր ձևով, բայց հետու կացեք ամենքդ էլ, վոչ վոք չմոտենա:

Ռուսական ձևով պետք եր իրար դռռնկից բռնել և վայր ձգել միայն ուժի ոգնությամբ: Ինձ համար այդ անհնարին եր, հակառակորդս արջի ուժ ուներ: Բռնեցինք, քաշքշեցինք իրար և հակառակորդիս համար աննկատելի կերպով՝ մոտեցա հան-

կարծ։ Լրջ նրա քաշվելով՝ վառքատանգկացրի նրա յերկու վոտքի միջով և այնպես կեռ տվի, վոր բոլոր հասակիվը ղըրըլկաց դեռևին։ Այս բանն այնպես արագ կատարվեց, վոր վոչ վոք չնկատեց, թե յես ինչ արի։

Հակառակորդս վեր կացավ և հիմա էլ սկսեց կռվել։ Նա ինձ խփեց, յես իրան, ղոլոր իրար խառնվեցան և բոլորն էլ թափվեցան վրաս վոր ղռղռեն։ Այդ միջոցին Միքայելս՝ չդիտեմ վորտեղից՝ ճանկ ղցեց մի ահագին մահակ և՝ ուր քիե կաս՝ մեկ սրան և մեկ նրան...

Այս կռիվն ոպանությամբ կվերջանար, յեթե մեջ չդային անտարբեր մարդիկ և մեզ չազատեյին այդ բարբարոսների ձեռքից։ Մենք արդեն մոտեցել եյինք Ստավրոպոլին, մյուս որ կեսորին պիտի հասնեյինք, բայց այլևս հնարավոր չեր վոր դրանց հետ գնայինք։ Նույն դյուղումը մանավոր կառք վարձեցինք և իսկույն ճանապարհ ընկանք։ Մեզ բերող պավոզկիպանը իր վարձն ուղեց, բայց վոչ մի կոպեկ չտվինք. ինչ վոր նրան պիտի տայինք, տվինք նորավարձ կառապանին, վոր մեզ կարճ ճանապարհով թողրեց մինչև Ստավրոպոլ։

Ռոստով վոր հասանք, մեզ մոտ մնաց միայն 12 մանեթ...

Ձես իմ վաստակած փողերս հորս եյի տալիս, հույս ունենալով՝ վոր յերբ կարիք ունենամ, նա էլ ինձ կտա, բայց նա վոչինչ չտվեց, վոր յես հնար չունենամ քաղաքից հեռանալ, այլ ստիպվիմ մնալ։

— Դու նորից ուզում ես պժվել,—ասաց հայրս,—ինչ ուներս Ռուսաստան, այդ կորած աշխարհումը. ինչո՞ւ յես կռվում, վորի՛ համար։ տեղդ չի լա՞վ, թե ոռճիկդ և քիչ, լսիր ինձ, այդպես քան մի անիր։

Մայրս էլ, վոր միշտ ինձ եր պաշտպանում, այս բանումը համաձայն եր հորս ասածին։ Այդ եր լինում ալիսղորմ և աղաչում, վոր չերթամ։

Ձես սկսեցի նրանց համոզել մեծամեծ խոստումներով, թե յես կերթամ ուսումս կկատարելագործեմ, մեծ մարդ կդառնամ, այնուհետև դյուղում քաշած նեղությունները կդադարվինք, եվ յոսավուլների յերես չենք տեսնիլ, եվ մովրովը մեզ չի ծեծիլ, և այլ այս տեսակ բաներ, բայց նրանք չեյին համոզվում, իրանց առջև չունեյին մի այլ որինակ, չդիտեյին վոր այդպես բան կարող է լինել. ինձ վրա նայում եյին զարմալ իբրև անվորձ յերեխայի վրա, կարող ծնողական խնամքի և հսկողության, չեյին հավատում, վոր իմ ունեցած ուսումս քիչ է, կարծում եյին, թե յես եմ չլինում բոլոր ոպած գրքերը, հղինակը դրաչարից չեյին դանազանում։

Միևնույն կերպով վարվեցան և իմ ընկերոջ ծնողքը։— Մենք կաչխատենք, դրանք կգան կոտանեն,— ասաց Միքայելը,— ուրեմն մնալով վոչինչ չենք կարող աշխատել, միայն ղուր ժամանակ կկորցնենք, լավն այն է, վոր ինչ ունենք—չունենք ծախենք և ինչ վոր կղոյանա, նրանով ճանապարհ ընկնինք։ Ծախեցինք ունեցածները և հազիվ 120 մանեթ դոյացավ, վորից մի քանի մանր ծախքեր արինք ճանփի վերաբերյալ, մնաց 75 մանեթ. դրանով էլ ճանապարհ ընկանք։

Ռոստովից 12 մանեթով ճանապարհ ընկնել դեպի Մոսկվա, կարելի չեր։ Մտածեցինք տեսակ-տեսակ հնարներ և վերջը մի հնարի վրա կանդ առանք։ Վճռեցինք գնալ Թեոդոսիա՝ Ղալիպյան տպարանը, այնտեղ ճանփի ծախք աշխատել և տպա ճանապա ընկնել դեպի Մոսկվա։ Գնացինք նավը և տոմսակ առինք մինչև Թպղան, ուր մեր բոլոր փողից մեզ մոտ մնաց մյուս մեկ մանեթ, քառասուն կոպեկ։ Ձնայած այս բանին, յես իմ կողմից չատ անհոգ եյի. իմ անհոգությունն ազդում եր և Միքայելի վրա։ Ձես այդ ժամանակ դեռ չեյի կարդացել Սերվանտեսի յերդիծաբանությունը, և լավ է, վոր չեյի կարդացել։ Ձերը վոր կարդայի, մյուս յեկավ մեր ճանապարհորդությունը. յես և Միքայելն էլ նույնն եյինք, ինչ վոր Դոն Քիշոտն ու Սանչո Թիկնապահը։

Թպղանումը մի առավոտ չատ վաղ վեր կացանք և գնացինք ծովափ լողանալու։ Հունիսի վերջերումն եր։ Հասանք ծովափ թե չե Միքայելը բացականչեց.— Նայի՛ր, նայի՛ր, Ղազարոս, ձկները ծովից դուրս են յեկել, վոր արածեն։

Հիրավի՛, ջուրը նոր յետ եր քաշվել հանկարծ և ափի քարաղաթերում թողել անհամար ձկներ, վորոնք թպրտում եյին դեռ ևս կենդանի.— Ա՛յ հրաշք, ա՛յ ճանփի ծախք,— ասացինք և սկսեցինք հավաքել և մի ահագին կույտ կազմել։ Ձես գնացի կույտի մոտ, իսկ Միքայելը գնաց, վոր բազարից մի մշակ գտնե և տանի, վոր ձկներ տանենք ծախենք։

Մշակին 30 կոպեկ տվինք, իսկ բոլոր ձկները ծախեցինք 20 կոպեկով... Այս մեզ համար մի լավ դաս յեղավ, վոր էլ մյուս

անգամ ձկնորսություն չանենք, բայց այնքան խնդացինք, որ առնվազն եղի մի 10 կոպեկ կարժենար, որ ասել է մեր վնասը չեա ստացանք:

Այդ ժամանակ Թայղանումը բնակում էր մի ավելի մեծ ձուկը, կատարյալ լևիաթան, որին կարող էինք ավելի թանգ ծախել... հ. Այվազյանի վրա: Դա էր աղա Հարությունն Ալիսյանը: Որպեսզի չասեն «աղան տանը չէ», չես մի թուղթ դրեցի, որի մեջ մեր նպատակը հայտնելով՝ խնդրեցի, որ մեզ ճանապարհ ծախք տա մինչև Թեոդոսիա և գրե հայր Այվազյանին, որ այդ փողը մեր վարձից դուրս դա:

Թուղթս ներս դնաց, չես մնացի կանդնած պատշգամբի վրա: Մի քառորդ ժամից աղան դուրս չեկավ և ուղղակի սկսեց հանդիմանել ինձ, թե ինչո՞ւ չեմ յուր հանդիսաը խանգարել այսպիսի մի հիմար թղթով:

— Ի դուր եք բարկանում,— ասացի,— աղա՛, չատ ի դուր. չես ձեզանից վողորմություն չեմ ուզում, այլ աշխատություն եմ առաջարկում. դուք տպարան ունիք, իսկ մենք դրաչար ենք. մենք խնդրում ենք, որ մեզ ուղարկեք ձեր տպարանումն աշխատելու: Շա՛տ-չատ դուք կարող եք ասել, որ ձեր տպարանումը տեղ չկա, գործ չկա. իսկ չես հաստատ դիտեմ, որ կա և դրաչարների էլ կարոտություն կա: Հայր Այվազյանը ձեզանից չատ չնորհակալ կլինի, որ մեզ ուղարկեք: Մեր նպատակն այստեղ գալ չեր, ինչպես դրել եմ այդ թղթումը, այլ գնալ Մոսկվա, բայց բանն այսպես պատահեց, մեր ճանապարհածախքը հատավ...

Ալիսյանը, որ մի գաժան կերպարանքով ծերունի էր և հենց այդ դեմքը բավական էր, որ մարդ սարսափեր նրանից, բայց իմ համարձակ պատասխանը լսելով՝ հանգած հրդեհի պես թչթչաց, խեղճացավ և աթոռի վրա նստելով՝ մի րոպե մտածեց ինքն իրան և մի այսպիսի բան առաջարկեց, թե լավ չի՞ լինիլ արդյոք, որ հենց ուղղակի Մոսկվա գնանք. և սկսեց հաշվել թե վո՛ր ճանապարհով ավելի եժան կնստի: Ցես վախեցա, թե մի գուցե Նադիրյանցի պես սա էլ չես առնի խոսքը, և Մոսկվա ուղարկելու պատրվակով և վոչ Թեոդոսիա ուղարկի, այլև ոգուտ քաղելով իր մեզմանալուց, ասացի.

— Աղա, Թեոդոսիա գնալն ավելի ձեռնտու չի, վորովհետև դրա համար հարկավոր է մեզ միայն տասը մանեթ. առաջ ուղարկեցեք մեզ Թեոդոսիա, ուր կարող ենք ճանապարհածախքը վաստակել. չեթե դուք կամենաք, այնտեղից էլ կարող եք ոգնել մեզ:

— Շատ լա՛վ,— ասաց,— այդպես անենք:

«Այդպես անենք», վորպես թե ինքն էլ է մեր ոգտի վրա մտածում: Վերջապես ցանկալի տասը մանեթը բերավ և մենք դնացինք Թեոդոսիա:

VIII

1862 թվականի ամառն է: Հայր Այվազյանի ամենափառավորյալ ժամանակն է: Հին ուսումնարանում բազմաթիվ դիշերոթիկ աշակերտներ կան դալուկ դեմքերով, իսկ նոր ուսումնարանի հոյակապ շենքն արդեն ավարտված է. մնում է ներսի մասը ու կարգը. հիմք է ձգված և մի յեկեղեցու: Տպարանը չատ հարուստ է, բայց ելի չատ ծախք է պահանջվում վեննեցյանի հետ մրցելու համար: Միակ մարդը, որ դրանց մտքով էր ստեպ, բռնվեց հենց մեր այնտեղ յեղած ժամանակ, ել դրանց քեֆին քեֆ չեր հասնիլ: Տեսնելու յեր, թե ինչքա՞ն ուրախացան, լո՛նչ խնջույք սարքեցին, յերբ Ալիսյանից հեռագիր ստացվեց, թե՝ «բռնվեցավ մեր թշնամին»:

Մենք, իջանք մի սրճարանում: Առանձին սենյակ չվարձեցինք, որ ծախք չատ չունենանք. հենց այնտեղ, վորտեղ հաճախորդները դիշերը մինչև լույս խաղում ու խմում եյին և աղմուկ բարձրացնում թե յերդելով և թե կռվելով, մենք հենց այդտեղ ել պատվում եյինք դիշերները մի-մի նստարանի վրա և քնում եյինք այնպես անուշ քնով, որ բնավ չենք լսում, որ մեզ մոտ աղմուկ բարձրացնողներ կան: Ով որ առավոտյան ժամը հնդից մինչև յերեկոյան ժամը լինելը վոտքի վրա կանդնած կաչխատի, կեսորին մի ժամ մխայն կընստի ճաշելու համար, նա ել մեզ պես անուշ կքնի: Ցես չեմ կարծում, որ Այվազյանը կամ Ալիսյանը իրանց վաստավոր ննջարանում մեզ պես անուշ ու հանգիստ քուն ունենային:

Գաղաք հասանք թե չե՝ չես գնացի հ. Այվազյանի մոտ: Ներս մտա, ձեռքը համբուրեցի և նստեցի մոտը, չսպասելով, որ ինձ հրավիրե նստելու: Սկսեցի պատմել, թե ուր ենք գը-

նում, լինչու համար և լինչպես յեկանք այստեղ: Հենց այս մթնոլորտին ներս մտավ Հ. Տեր-Աբրահամյանցը, վոր տպարանի դլխավոր դրաչարն եր: Ներս մտնելիս նա դուռը կամացուկ յետ դըրավ, վոր վայրը ցավ չդդա. հենց այնտեղ էլ կանդնեց, և այնպես խոր դլուխ տվավ, վոր քիչ մնաց դլուխը հատակին դիպչի. հետո մի քանի քայլ առաջ յեկավ, դահլիճի մեջտեղը կանդնեց, մեկ էլ այդտեղ յերկուատակվեց մեջտեղից, մեխվեց տեղն ու տեղը, վոտքերը դինվորի պես իրար կպցրած և յերկու ձեռքը սրտին դրեց ի նշան հայկական խոնարհության:

Վարդապետը նրան մի քանի պատվեր տվավ, և հրամայեց, վոր մեզ էլ դործ տա տպարանում: Այս տեսարանին ներկա լինելով՝ յես սկսեցի մտածել, թե՝ անքաղաքավարություն չարի՞ արդյոք, վոր առանց հրավիրելու նստեցի մուռը: Իհարկե անքաղաքավարություն եր և մինչև անդամ հանդգնություն: Այս անքաղաքավարությունը և հանդգնությունը յես սովորել եյի մեր Պռոչյանցից. նրա համար մեծ ու փոքր չկար և այսոր էլ չկա. ամենքի հետ վարվում եր ինչպես իր հավասարի հետ: Բայց Տեր-Աբրահամյանցի վարմունքն էլ Պռոչյանցի վարմունքի սառրին ծայրն եր. յերեք հանդգնություն և վերին ծայրը, ըզդվելի յե սառրինը: Այդ ժամանակ յես լինձ յերազել անդամ չեյի կարող, վոր Յերուսաղեմի դերապահ պատրիարքը իր հրավերքին լինձ իր կողքին կնստեցնի, իսկ լինձանից վար մեծամեծ յեպիսկոպոսներին և կոնսուլներին: Ճշմարիտ է, մեկ անդամ յես արժանացել եյի դեներալ Հախվերդյանցի կողքին նստելու, բայց այդ պետք է վերագրել նրա ծայրահեղ մարդասիրությանը և այն բանին, վոր հարկավոր համարեց լինձ պես մի վայրենուն պատսպարել իր պաշտպանության տակ, վոր չխրանեմ: Այվազյան վարդապետն անմատչելի յեր իր ստորադրյալների համար Թեոդոսիայումը. նա իր վառքի վերին ծայրումն եր և ձգտում եր ավելի ևս բարձրանալու: Այսպես չեր նա Թիֆլիսումը իր յեպիսկոպոս և առաջնորդ ժամանակ. շատ եր խեղճացել և դառել դյուրընկալ: Նա կուչ եր յեկել Մանկունու պես մի դյաղա-

յի ձեռքի մեջ: Թեոդոսիայումը նա թեև վարդապետ, բայց առաջնորդ եր և առաջնորդ անսահման և անկախ միտրոպոլիտական իշխանության, դանվելով միտրոպոլիտի անմիջական պաշտպանության տակ: Առաջնորդ, բնկատոր, խմբապետը յերեք պարբերական թերթերի, դրաքննիչն էլ ինքը, Ալիսպյանի հարստության իր ձեռքին, բարձրագույն հովանավորության և բարձր կապեր և հարաբերության: Այս դիրքի մեջ նա այնքան դոռոզացավ, վոր չուզեց խոնարհիլ իր հովվապետին— Մատթեոս Կաթողիկոսին, վորի դեմ մինչև անդամ մի չրջաբերական բողոք հրատարակեց իր թեմի մեջ, բայց սրբալուսյա կաթողիկոսը կարողացավ նրա յեղջյուրները ջախջախել և նախկին Այվազյանին չինել մի խրտվիլակ:

Թեոդոսիայումը մենք մնացինք ամբողջ ամառը և բոլ լոզացանք Սև ծովումը: Յես լող դիտեյի, իսկ Միքայելը չդիտեր. նա կանդնում եր ալիին մոտիկ, իսկ ալիքները մեկ ընկնում եյին վոտքի տակը, մեկ էլ բարձրանում դլխովն անցնում: Մեկ անդամ վոտահացավ յեռևիցս լողալ դեպի խորը, մեկ էլ տեսնեմ Միքայելը չի յերևում: Հանկարծ դլուխն յերևաց, մեկ էլ ծածկվեց ալիքի տակ: Շուտ հասա և բռնել տվի ինձանից: Միքայելը վախեցավ, բայց յես ավելի ևս: Այս դեպքից հետո վերջ տվինք մեր լողանալուն: Մեկ անդամ էլ արճարանում մեկ կալանավորեցին և բանտարկեցին յերկու ժամի չափ: Զդիտեյինք ինչ եր պատճառը, բայց չուտով իմացանք: Նկարիչ Այվազովսկու տունը դողեր եյին մտել և նրա տան կառավարչին մահացու վերք տալով՝ հափշտակել եյին թանկագին բաներ: Գողերը չերքեզի հագուստով եյին յեղել, մենք էլ այդպիսի հագուստ ունեյինք: Բռնվածներին տանում եյին ցույց տալիս վիրավորվածին, վոր ճանաչվի, բայց մենք չտեսանք նրան: Ցերը վոր մեզ տարան ցույց տալու, նկարիչ Այվազովսկին մեզ ջոկվել տվավ մյուսներից և ազատել տվավ: Այդտեղ առաջին անդամ տեսա յես հանճարավոր Այվազովսկուն: Շատ դուր յեկավ լինձ նա իր վայելչակազմ հասակով և համակրելի դեմքով: Զդիտեմ լինչո՞ւ ազատել տվավ մեզ. արդյոք պիտե՞ր, վոր մենք իր յեղբոր դրաչարներն ենք, թե՞ իրրև նկարիչ՝ մեր դեմքերից նշմարեց, վոր մենք դողի պատկեր չունինք:

Ինչևիցե, բայց սրա համար նա լինձ ավելի դուր յեկավ: Յերկու Այվազովսկիները ջոկ-ջոկ աստղի տակ եյին ծնված: Այվազովսկին վառքը մեկի յեռևիցն եր վազում, մյուսի՝ առջևից: Նկարիչը չեր կարող վառքի ճանկերից ազատվել, վորքան էլ վախեր նրանից, իսկ նրա յեղբայրն իզուր եր չարչարում վառքի յեռևից հասնելու:

Ամառն անցնում եր. պետք եր չտապել դեպի Մոսկվա, վոր ցուրտը վրա չհասնի, թեև ռուսական ցրտի մասին մենք վոչ պաղպաղար չունեյինք: Մեր վաստակածից մենք յետ դցե-

ցինք միայն հիսուն մանեթ, վոր մի չնչին դումար եր։ յեթե դրանից դուրս դայլն Խալիլյանի տված 10 մանեթը, վորի մասին արդեն դրել եր Այվազյանին և յես եկի ասել, այդ դումարն ավելի ևս կնվազեր։ Սրա համար յես դնացի ամառանոց Այվազյանցի մոտ և խնդրեցի, վոր դրե տպարանի կառավարչին, վոր նույն 10 մանեթը չհանե մեզ տալիք վճարից։— Մենք,— ասացի,— Մոսկվայումը կվճարենք, ում վոր կամենաք, կամ կուղարկենք ձեզ։

Վարդապետը չեր ուզում համաձայնվել, վորով շատ ստորացավ իմ աչքումը և յես նրան հանդիմանեցի շատ խիստ խոսքերով։— Մի նայեք,— ասացի,— վոր յես մի դրաչար եմ. իբրև մարդ, դուցե ձեղանից ստոր չլինիմ. դոնե յեթե յես ձեր տեղը լինեյի, ամենայն հայրական խնամք ցույց կտայի մեզ պես յերիտասարդներին, վորոնք թափառաշրջիկ բախտախնդիրներ և ձրիակերներ չեն, այլ նպատակ ունին ծառայելու ազգին, կատարելագործելով իրանց ուսումն ու արհեստը։ Կարծում եք թե դուք ձեր դպրոցից ավելի սիեռքական մարդիկ դուրս կբերեք, վորոնց վրա կարժեր ահագին ծախքեր անել, իսկ մեզպեսներին անուշադիր թողնել։

Այս խոսքերիս համար յես նրան թվացի իբրև մի հանդուգն սրիկա, բայց զլխիցը ոտդ անելու համար.— լավ, ասաց.— յես կդրեմ Գյոզչայան Հարությյուն քահանային, վոր ձեզանից առանա ազնտեղ։ Մի թուղթ դրեց տպարանի կառավարչին, վոր 10 մանեթը չհանե։ Զուր չեր ուրեմն իմ կասկածս, վոր ունեցա Խալիլյանի առատաձեռնության մասին իր ծախքով մեզ Մոսկվա ուղարկելու համար։ Դուցե շատերին ասասպել թվա այս բանը, թեպետ վոչվոքի իմ ճշմարտախոսության մասին կասկածելու տեղիք չեմ տված, սեփք և այստեղ վերջացնեմ այդ 10 մանեթի պատմությունը։ Այդ դումարը հատավ Գյոզչայան քահանային, բայց մեզ հայտնի չե, թե նա ուղարկե՞ց ըստ պատկանելության թե վոչ։ Այս անցքից մոտ 14 տարի անցած՝ Ալեքսանդրապոլ յեղած ժամանակս, Սուքիաս վարդապետը (այժմ յեպիսկոպոս) ինձ հարցրեց, թե իրա՞վ ե վոր դուք Այվազյանին 10 մանեթ եք պարտ։— Այո՛,— ասացի,— յեղել եմ պարտ և վճարել եմ, բայց դուք վո՞րտեղից գիտեք այդ բանը։ Նա պատասխանեց, թե՝ հավաքված եյինք կաթողիկոսի (Գեորգ) մոտ շատ հոգիք. կաթողիկոսը կարդացել եր քո բրոշյուրը Այվազյանի դեմ և նը-

բան չկրցացնելու համար կատակով ասաց.— ինչո՞ւ չեք պատախանում Աղայանցին և նրան մեկ լավ հրահանգում: Ա-վազյանը վոչ տարավ, վոչ բերավ, և կաթողիկոսին մի անկապ պատասխան տվավ, թե՝ յես Աղայանցին դեռ թուղթ սխալից 10 մանեթ պարտք եմ տվել, ցայսոր չի վճարել, կա-ժե՞, վոր յես նրան պատասխան տամ...

— Շատ կարելի յե,— ասացի,— վոր տերտերը հասցրած չլինի նրան. ամբ դուռարը վճարվել և Միքայելի ձեռքով, բայց նրանից հետո առնվազն յես տասն անգամ պատահած կլինիմ Ա-վազյանին և նա վոչ մի անգամ չի ասել ինձ, թե իմ 10 մանեթին ինչո՞ւ չեք տալիս: Հետո կաթողիկոսն ի՞նչ ասեց:— Մեկ կուշտ ծիծաղեց. մենք ամենքս էլ ծիծաղեցինք... Սկր 10 մանեթն ի՞նչ ե, վոր 14 տարում չմոռացվի, արդեն դամնոսան անց ե կացել, ասաց Սուքիասը, քահ քահ խնդալով...

IX

Ա-վազյանից հետացա յես մի տեսակ սրտամարհանքով և անբավականությամբ: Ա-յստեղ լրանք հաղարներով էլին կուտ տալիս անհաշիվ, իսկ մեզ տված 10 մանեթի համար խնայողություն էլին ցույց տալիս: Իբրև տնտես, շատ խելոք եր Ա-վազյանը: Ա-րծաթասեր չեր, վոչ պահել չգիտեր, իր մասին խնայող եր և անհոգ, բայց ուտողներն ուտում էլին և ահագին դումարներ էլին վատնվում անհաշիվ, անխնա և անհետեւողությամբ: Մեծ դիտնական եր, բայց վոչ դրական, այլ բացասական մտքով առած այդ բառը: Լավ և վոր մարդ բոլորովին ազատ լինի և պարզամիտ, քան թե ամբարված բացասական դիտողություններով: Ա-յսպիսի մարդը մի ժողովրդի դլուխ անցնելով՝ նրան կատանե դեպի նախապատմական խավար դարերը: Սրանք են, վոր կատկացնում են մարդիկներին և վոչ նրանք, վորոնք ասում են՝ մարդը կապկից է առաջ յեկել:

— Ա-յս մարդը շատ դիտողություն ունի, շատ լեզուներ դիտե, բայց խելք չունի. ի՞նչ կասես, տղա՛ս,— ասաց ինձ մեկ անգամ Գեորգ կաթողիկոսը:

— Վեհափառ տեր,— ասացի,— յեթե չդիտողությունը դիտողություն չհամարվի, դա և վոչ դիտություն ունի: Կաթողիկոսը հավանություն տվավ ասածիս, բայց հավատացած եմ վոր չհասկացավ թե ինչ ասացի յես... Հիրավի, հ. Ա-վետյանը զուրկ եր ժամանակակից դիտությունից և մանավանդ կենցաղագիտությունից: Ամբողջ աշխին թողած, նա մեկ հատ մարդու պոչից եր բռնել: Վորքա՜ն անհեռատեսություն և անճաշակություն: «Առաջնորդ» բառը շատ շատերին և սխալեցնում: Ճշմարիտ առաջնորդը նա յե, վոր ժողովրդի առաջը չի կտրիլ, նրան չի կանդնեցնիլ իր քիմքի ուղած տեղում, այլ կերթա նրա հետ ձեռք ձեռքի տված, համախոհ և համամիտ հառաջադեմ մտքի տեր յեղող մարդկանց հետ: Բայց սրա համար հարկավոր է, վոր ինքն էլ իր գործողություններում նրանից գաղափարակից լինի, վորովհետև տատանվից կարելի չե թուղ գործել:

Սեպտեմբերի սկզբներին ճանապարհ ընկանք Մրիմից խաղող տանող տայլերի հետ և գանդաղ նահանգներով անցնելով՝ և տեղ տեղ այլ բնակիչը տայլեր տեղափոխվելով, միակերպ տպավարակ տարածություններ կտրելով՝ դիմեցինք դեպի Մոսկվա: Ա-յդ տարածությունը այնքան միակերպ եր, շատ տեղ տայլն և անապատ, վոր մարդ չուտ կարող եր ճանապարհը կորցնել և մոլորվիլ: Մեկ տեղ մի հոգի յեր միայն մեր տայլապանը, բայց ուներ յոթը տայլ մի մի ձի լծած և կապած իրար յետեվից ուղտերի նման: Գիշեր եր և քունը տարել եր տայլապանի: Ցերկինքը պայծառ եր և աստղալից: Նայեցա մեծ արջ աստեղատանը և տեսա, վոր մենք գնում ենք նրա հակառակ, այսինքն վոչ դեպի հյուսիս, այլ դեպի հարավ: Զարթեցրի տայլապանին և ասացի.— Մեկ նայիր, ճանապարհդ չե՞ս կորցրել արդյոք. դու գնում ես դեպի հարավ, յետ յետ ես գնում:— Ռուաջը չուտ գլխի ընկավ, վոր իրավ մոլորվել ե: Շեղվել եր մեծ ճանապարհից, վորի ամբերին տեղ-տեղ քարակույտեր կային իբրև ուղեցույցներ: Տայլապանը վայրենու պես ապշած մնաց, թե յես ինչպես իմացա, վոր կորցրել ենք ճանապարհը:

Նոյեմբերի կեսին մենք հասանք Մոսկվա և իջանք մի գործում: Ա-յո՛, հասանք վերջապես, բայց վա՛յ այնպես հասնելուն, ինչպես մենք հասանք: Մերկացանք բոլորովին և՛ փողից, և՛ հագուստից, և՛ հացից:

Պետք է ասեմ, վոր իմ սիրելի Միքայելը բնավորությամբ բոլորովին իմ հակապատկերն եր: Մենք մի մաղնիսի յերկու

հակառակ բևեռներն էլինք: Գուցե, եվ ի՞նչ գուցե, հենց այդ-
ը պատճառը մեր որինակը չհեռնված առաջապետական բարեկա-
մության: Ցես դյուրագրգիռ էլի, իսկ նա պաղարյուն. յես
չաչալ էլի, իսկ նա՝ խնայող. յես անխոհեմ էլի և հանդուգն,
իսկ նա՝ խոհեմ և համեստ. յես անհոգ էլի, իսկ նա հոգացող:
Հառակով լրար հավասար էլինք— թե տարիքով և թե բոյով:
Այս լավ հանգամանք եր, վորովհետև միևնույն հազուստը յեր-
կուսիս համար եվ միակերպ հարմար եր գալիս, նույն իսկ մեր
գլխարկները ու կոշիկները: Այս հանգամանքից մենք շատ ան-
գամ ելինք ոգուտ քաղում: Իմ ընտանության թուլ կողմերն
յես չեյի հավանում, իսկ նա բանի տեղ չեր դնում և տանում
եր յեղբայրական սիրով: Նա նիհար եր և սակավամարդ, բայց
եր յերկար և ամուր կազմվածքի, վոր ար-
ժեր իմ խիտ և յերկայն մորուքին: Ցես ուսում ունեյի վորքան
և իցե և վատ ուսումնասիրություն, դիտեյի ռուսերեն լավա-
կան խոսել և քիչ շատ կարդալ, իսկ նա չուներ ուսման սեր,
ավելի արվեստն եր սիրում, արվեստին նվիրված: Նա չեր
կարդում. ասում եր՝ միևնույն է, դու կարդում ես, հետո ինձ
կպատմես կարդացածդ: Ցես նրա հերոսն էյի, իսկ նա իմ պա-
հապան և պաշտպան հրեշտակս: Ցես լուեալները ունեյի և հա-
վիշտակված եյի նրանցով, հետևում եյի նրանց որինակին, մա-
նավանդ Բենիամին Ֆրանկլինին, վոր ամենից մոտ եր իմ սըր-
տին. դրանցով վոգևորում եյի ընկերոջս, վոր նեղության համ-
բերի և չհուսահատվի: Հիմա ժամանակն եր, վոր այսպիսի հե-
քյաթներով սիրտ տայի ընկերոջս. և սկսեցի պատմել մեծ
մարդկանց կյանքից զանազան աղեռներ...

— Այդ բոլորը շատ լավ, բայց հաց չունինք, հա՛ց, այսոր
ի՞նչ սիտի ուտենք,— ասաց Միքայելը, վոր շատ հերևակա-
յեմ:

— Ի՞նչ անենք թե հաց չունինք,— ասացի յես:— Ցերևա-
կայիր, վոր շատ հաց ունինք, և քեզ բոլորովին կուշտ կղղաս:

— Շատ լավ, մենք կերևակայենք, բայց սայլատանը էլ
յերևակայում, իր հինգ մանեթն ուզում է, վո՞րտեղից սիտի
տանք:

— Հոգիս, դու հավատ ունեցիր և հույս, ասեյածս կատ,
ցույց տալով մեզ ճանապարհը, թե ինչպես պետք է դռնել հինգ
մանեթի կրկնապատիկը:

Կոշիկներ չունեյինք և վոչ սաք հազուստ, իսկ Մոսկվայու-

մեն սրդեն ձյուն կար և ռուսական «մարտ»: Իմ կոշիկներս
վոչ յերես ունեյին և վոչ տակ, իսկ Միքայելինն յերես ունե-
յին, բայց տակ չունեյին: Հազա ընկերիս կոշիկները, բան ու-
զեցի և մեր սայլատանի արմյակ վերցրկուն, և այս տարագի
մեջ շատ նման եյի սայլատեցի խաչապղի, վորպիսիք մեզ
շատ պատահեցին Ռուսաստանում Թափառողներից իրանց սե-
փական սայլերով:

Գնացի ուղղակի Լազարյան հեմարանի ռեկտորը, վոր այդ
ժամանակ կապալով ուներ վերցրած Մամոնտովը, վոր հետո
բոլորովին դնեց: Տեկտորում գերմանացի ֆակտորը ընդունեց
լինճ, վոր տեսնե իմ վարպետության աստիճանը. մի բան տվավ
հայերեն. չարեցի, չարածս տվեց և չդիտեմ ուր ուղարկեց կար-
գացնելու. յես բերին հավանություն ստացած:— Շատ լավ,—
ասաց ֆակտորը,— կարող եք գալ և դրծ սկսել: Ասացի վոր
տող ենք պարտ մեզ բերողին և ծախսելու եվ վոչինչ չունինք,
մեզ մի 10 մանեթ ե հարկավոր կանխիկ: Ֆակտորը մերժեց, ա-
սելով՝ վոր կանխիկ փող վճարել կարող չեն:

— Ցեթե չեք հավատում,— ասացի,— ահա իմ անցագիրս,
կարող եք գրավ պահել ձեզ մոտ:

— Վոչ, չենք ընդունիլ,— ասաց անգութ գերմանացին
սառնությամբ և յերեսը շրջեց հեռացավ:

Գրաչարներից լմացա Ս. Նազարյանցի հասցեն, և ուղղա-
կի գնացի նրա սեփական տունը: Ճանապարհին մտքումս մի լավ
ճառ պատրաստեցի և իմ ճառն լինճ վրա այն տպավորության
արավ, վոր Նազարյանցը մեր վորսկությունն սառնպատես լսա-
նալուց հետո, սիտի դրկե լինճ, հակառակ համբուրե, ինչպես
յերբեմն Ի. Աբովյանցը Դորպատում մի պանդուխտ հայի: Նա-
զարյանցը սիտի ասե, թե ուրեմն իմ ցանած սերմերս արդեն
ձեզ պես դեղեցիկ ծաղիկներ են բուսցրել իմ սիրելի հայրենի-
քիս մեջ. ուրախ եմ, անչափ ուրախ, և լինճ մխիթարված եմ ըղ-
դում: Թող այսուհետև ինչքան կուզեն հարճակվին լինճ վրա,
յես այլևս չեմ վրդովվիլ:

Տան դուռը բաց եր, բայց յես անքաղաքավարության հա-
մարեցի ուղղակի ներս դնալ, դանդը քաշեցի: Վոչ վոք դուրս
չեկավ: Կրկնեցի մի քանի անգամ, մեկ էլ տեսնեմ մեկը բղա-
վելով ցած և իջնում և ասում.— Տեսնում ես դուռը բաց է,
ներս արի, էլ ինչո՞ւ յես լինճ անհանգիստ անում:— Ցեկույը
Նազարյանցն լինքն եր: Հենց վոր դեմս յեյավ և հարցրեց, թե

դու ո՞վ ես և ի՞նչ ես ուզում, չես սկսեցի իմ սրտին պատասխանած ճառը. «Ցերկու հայ յերևոյթ կայ կեղծ ենք»... Նազարյանցն ինձ խնդությն ընդհատեց և ասաց բարկանալով՝

— Հա՛յ, հա՛յ, հա՛յ... պահվա տարաք այդ հայերդ. չես ի՞նչ անեմ, վոր հայ եք, կուզեք չհուդ յեղիք, ինձ համար հայը, թուրքը, մլճոնկին բոլորն էլ մեկ են: Այս ասաց Նազարյանցը աչքերը խոնած, մեջքի վերի մասը պիտով մոտեցին քեզած, յերկու ձեռքը թոզի տալով դուրս անելու նշանով, և յերեսը շրջեց ու հեռացավ:

— Պարոն Նազարյանց, բայց դուք չհասկացաք, թե չես ո՞վ եմ, ի՞նչ եմ, և ի՞նչ եմ ուզում,— կոչեցի չես նրա յետևվից, բայց նա էլ չես չշրջեց յերեսը: Նա անհետացավ, իսկ չես մնացի միառժամանակ տեղումս մեխված: Այսպիսի հուսահատության կյանքումս պատահած չեյի չես: «Ցերևի սա «Հյուսիսափայլ»-ի խմբագիրը չեր,— ասացի չես,— այլ մի ուրիշ Նազարյանց, բայց ավա՛ղ, իսկ և իսկ «Հյուսիսափայլ»-ի խմբագիրն եր, ուրիշ ո՞վ կհամարձակեր սրբազան կոմոդոլիտուրգիյունը անասնական եղելոմի հասցնել: Ցերեք քեզ համար հայն ու մլճոնկին մլճնուշն և, առավել չավ, վատք և պատիվ քո բարձր մարդասիրական ղեկցումներին, ուրեմն ընդունելի յեր կուսին էլ, սերբը յերկուսին էլ: Բայց վո՛չ, դու մարդատյաց ես և վոչ մարդասեր, դու ինքնասեր ես, բայց նույն իսկ ինքնասիրությունդ բանականի չե, այլ անբանի»...

Այս կերպ դատելով և դատապարտելով Նազարյանցին, կըլուկին դնացի տպարան և այնտեղ իմանալով Եմինի հասցեն, ճանապարհ ընկա դեպի նրա բնակարանը, վոր բավական հեռու յեր: Գլուխս այնպես եր տաքացել և սիրտս այնպես հուզվել, վոր չեյի դղում վոտաբաց քայլելը ձյունի և սառույցի վրա յոլի:

Ցես արդեն Թեոդոսիայից մի նամակ եյի դրել Եմինին և հարցրել, թե արդյոք տեղ կլինի ճեմարանի տպարանում, և հառաքանել եյի մեր նպատակը, բայց պատասխան չստանալով՝ ճանապարհ եյինք ընկել: Հիմա վոր դնացի մոտը, ասացի, վոր չես այն նամակի դրողն եմ, ձեզանից պատասխան չստանալով՝ հիմա յեկել ենք, ու հուսով ենք, վոր դուք ինչ վոր կարող եք անել՝ կանեք: Ասացի ել, վոր չես արդեն տպարանումն եյի, այնտեղ մեզ համար տեղ կա, բայց կանխիկ վող չեն տալիս.

— դուք վոր դրեք, հուսով եմ, վոր չեն մերժիլ:— Նա պատասխանեց.

— Ցես ձեր նամակին պատասխանեցի, վոր տեղ չկա, չըպաք, վորովհետև այդպես ասացին ինձ տպարանումը. բայց վոր հիմա կա և ձեզ ընդունում են, ավելի լավ: Փող կատու կանխիկ թե վոչ՝ այդ իմ գործը չե, բայց կուզեք չես կդրեմ, վոր յերեք կարելի չե տալ՝ տան:

Հենց այսպիսի մի թուղթ ել դրեց Եմինը. տարա տվի ֆակտորին, և նա կարդալուց հետո պատասխանեց ինձ ատնուքյամբ.«Ցերեք կարելի լիներ, չես առաջ ել կտայի. յերեք կարելի չե տալ, ինչո՞ւ ինքը չեր տալիս, յերևի կարելի չե, վոր չի տվել»...

Ցես մնացի չվարած: Այդ միջոցին մի ջահել ռուս դերաշայր մոտեցավ ինձ, քաշեց մի կողմ և ասաց կամացուկ.— Մի՛ սրտնեղիր և վոչ վոքի ել մի դիմիր: Համբավաբերի դերաշայրը գործը թողել դնացել է. Մսերյանցին չատ է պետք մի հայագետ դերաշայր. ինչ ուզենաս, հիմա նրանք կտան. ուրեմն կարող ես ուղղակի դնալ Մսերյանցներին, իսկ նրանք կենում են հենց մեր փողոցումը, ճեմարանի դեմ, յեկեղեցու բակումը, ձախ կողմին: Ուրեմն ցտեսություն,— ասաց և ձեռքս այնպես ամուր սեղմեց, վոր իր քնքուշ սրտի բոլոր ղգացումները մի ելեքտրական հոսանքով թափեց իմ սրտի մեջ: Ցես նկատեցի, վոր նա չատ հուզված եր և իր հուզմունքը ծածկեց ինձանից՝ չուտ հեռանալով: Այս ապտե՝ Ցաշան եր, վոր հետո դարձավ իմ և Միքայելի անբաժան և սիրելի ընկերը:

Մութն արդեն վրա յեր հասնում: Մսերյանցի բնակարանը թեպետ չատ մոտիկ եր, բայց անժամանակ լինելով՝ այցելություն վաղվան թողի, և չտապեցի, վոր այդ բարի լուրը շուտով հաղորդեմ Միքայելիս:

Այդ որը յերկուսս ել քաղցած եյինք: Միքայելս ասաց, վոր ինքը հաց և կերել սայլապանների հետ. չես ել ասացի, վոր Նազարյանցի մոտ նախաճաշիկ արի, իսկ Եմինի մոտ՝ ճաշ. և լռեցինք, առանց մեկմեկու հավատալու: Մեր մեջ մի տեսակ սրտակցություն կար, և միմյանց դեմքի նայելով՝ հասկանում եյինք լուռ միտք: Ուրախանալով՝ վոր մյուս որը և՛ վող կուշենանք, և՛ դործ, մոռացանք մեր քաղցածությունը և անուշ քնով քնեցինք խոհանոցի փոնի դլխին...

Իսկապես տանն որ եր՝ ինչ վոր մենք քաղցած եյինք, այն-

քան նվազ էր մեր անունդը: Խարկովից հեռանալիս Միքայելը մի պարկ լցրել էր սև հացով ու բողկով: Ցես ծխծաղեցի վրան.
— այդ ի՞նչ է,— ասացի,— վոր առել ես, ով պիտի ուտի այդ անպիտան հացը:

Միքայելը «հը՛մ» արավ և վոչինչ պատասխան չտվավ:

Վերջը բանն այնպես պատահեց, վոր այդ սև հացն ու բողկը չէր չաքարն ու մեղրահացի տեղ բռնեցին, այնպես ախորժակով էինք ուտում, ուրիշ վոչինչ չունենալով: Անցյալ որը վերջին կտորտանքն էինք կերել, իսկ այսոր և վոչ մի կաթ: Ցեթե չլիներ Միքայելի պես սակավասեր լինեյի, մենք այս որը չէինք ընկնիլ: «Ցեկ այսոր մի մարդավարի ճաշ ուտենք», ասում էր չատ անգամ, և նա թիսեռ դիտեր, վոր մարդավարի ճաշը մեզ վրա թանկ կնստի, հետո չմարդավարի ճաշ էլ չենք ունենալ, բայց խաթրըս չէր կտրում: Նա չէր ծխում, իսկ յես ծխում էյի, և յերբ տեսնում էր, վոր յես խնայողություն անելու համար եժանագին պապիրոս եմ առել և ծխում եմ պղպեղով, նա առանց լինձ հարցնելու՝ լավ պապիրոս էր առնում լինձ համար: Իրան համար խնայող էր, իսկ լինձ համար չռայլ:

Մյուս առավոտը մի թուղթ դրեցի մատիսարոս Մաերյանցի վրա՝ մեկ այն նպատակով, վոր յեթե տանը չլինին, թուղթը թողնեմ այնտեղ, մեկ էլ վոր՝ ցույց տամ նույն իսկ դրած, վոր յես մի անդրաշեխ դրաչար չեմ, այլ ավելի լավ դրող, քան թե չատ դրվղի տարածներ, մանավանդ վոր արդեն տպված բանատեղծություն ունեյի, թեև «Մեղվի» մեջ:

Մաերյաններըը տանը չէյին և յես ուրախ յեղա, վոր թուղթը կկարդան և ըստ այնմ կընդունեն լինձ: Ծառան ասաց, թե վոր ժամին կարող եմ գնալ պատասխանն իմանալու: Նույն ժամին գնացի և հայր ու վորդի սիրով ընդունեցին լինձ. նստեցրին իրանց մոտ, և միմյանց ասածը հաստատելով՝ հավատացրին լինձ, վոր յեթե դրաչարի կարոտ էլ չլինեյին, մեզ գարձյալ կպնեյին իրրև արհեստասեր և ուսումնասեր հայ յերիտասարդների: Այդ մարդկանց ասածը դուցե և ուղիղ էր, բայց յես չէյի կարող հավատալ: Նաղարյանցը և Եմինը իմ հավատը կրկրրին: Մեկ որվա մեջ յես չրջահայաց և կենցաղագետ դարձար. մեկ որվա մեջ յես պղպեղ, թե ուրեմն այսուհետև ինչ տեսակ մարդկանց հետ պետք է գործ ունենամ:

Ստացա վերկարար տաս մանեթը և մի շնչում վազեցի ընկերոջս մոտ, վոր նրան ազատեմ պերուզյունից, վոր թափեմ իմ կենդանի դրավս սայլապանների ձեռից:

X

Մենք տեղափոխվեցինք սպարանի բանվորների բնակարանը: Լուսավորալ անվանված քաղաքները այնպիսի խավար ու մութ անկյուններ ունին, վոր Ախալի վոչ մի խավար քաղաք չունի: Այն բնակարաններըը, վորոնց մեջ կենում էյին Մոսկվայի բանվորները, չատ և չատ ատոր էյին մեր ամենահետին պղտղի ախորժից և հավաքուչից: Այն անունդը, վոր նրանք էյին ատում, տատնապատիկ վատ եր, քան թե մեզ չների լակն ու վատը: Մեր բնակարանը մի սենյակ եր, վորի մեջ կային յերեք լայն թառեր, մեկը մյուսից բարձր: Թառտուտնի չափ բանվորներ և աշակերտներ պիչելում էյին այդ թառերի վրա իրանց սովորական կուտն ուտելուց հետո: Վերի թառը առաստաղից ցած եր մնայն յերեք քառորդ արշին. այնտեղ պառկողները պետք է տանդուղքով բարձրանային և ներս խցկվելին ոձի պես սողալով: Ցես և ընկերս տեղավորվեցինք այդ սողունի բնում ուրիչ չատերի հետ: Ի՞նչ անելինք, ուրիչ ճար չունեյինք: «Մի՞թե սրանք էյ մեզ պես մարդիկ չեն,—ասում էյինք մենք,— ինչպես սրանք, մենք էլ սրանց հետ»: Ճաշն ու ընթրիքը նախաճաշով արժեր յերեք մանեթ ամիսը ամեն մի հոգու համար: Այս պնդրը կարելի յեր կեղրակացնել արդեն, թե այդ ինչ որնումդ պետք լինի: Այսպես վոր չլինի, ի՞նչպես պետք է ապրե ամսական յերկու, յերեք, և չորս մանեթ ռոճիկ առնողը: Նուսները կարողանում են այսպիսի սննդով ապրել: Մի ահագին չուղունե կաթսայի մեջ լցնում են խոպի ճարպ, կտրած, մի կոտր տավարի միս: Ուտելիս միսը հանում են, մանր կարատում, ածում մի մեծ փայտե չանի մեջ, խաշուն էլ վրան ածում, չանը լցնում դնում սեղանի մեջտեղը և չորս կողմը չարվելով՝ ընկնում են դրա չանին, կծոտելով սև հացը: Շատ անդամ հասարակ կվաս են խրպչատում և այլ անմարս բաներ, բայց պուտնները մարսում էնև պարծենում էլ են դրանով, ասելով՝ «ինչ վոր առողջություն է տալիս ուսին, նույնը մահ և տալիս պերմանացուն»:

Լսել էյի, վոր յուրա յերկրի մարդիկն առհասարակ չատ են ուտում, կլիման այդպես է պահանջում: Այդ չատակերության որինակը յես աչքով տեսա սայլապանների մեջ: Դվորնեբում նրանց կերակրում էյին ամեն մի հոգուց յերեսուն կոպեկ առնե-

լով՝ բայց այն պայմանով, որ տեղից դուրս գնացողը կրկին նահելու իրավունք չունենա: Նախ և առաջ տալիս են կվաս մի-այն, բայց ահագին չան լիքը: Դրանից հետո բերում են բորշ, դրանից հետո մի ամբողջ վոչխար խորոված: Ինչ որ դրվում է սեղանի վրա վոչնչի մնացորդ չի թողնվում: Այդ ապակածից հետո բերում են կաչա, նույնպես ահագին չանի մեջ: Սրանից հետո մեղր և սպիտակ հաց: Մեկ անգամ ուտողները յոթ հոգի էլին: Դրանք իմ նկատմունքով, որքան կարող էլի աչքով չափել կերակուրի քանակությունը, այնքան կերան, որքան կարող չէլին ուտել մեր յերկրում յերեսուն մշակ: Յես և Միքայելը մնացել էլինք զարմացած և չատ անգամ ասում էինք՝ «սրանք ոչավ են, մեզ էլ կուտեն»: Շատակերությունը ռուսին չաղացնում է չափից դուրս. ով փոր չաղ չէ, կնչանակե ուտելիքը քիչ է, որ ասել է ագքաա է. և այս պատճառով չաղությունը հայհոյանք ցույց է տալիս ունևորություն. չաղ մուժիկն անպատճառ և հարուստ է, իսկ նիհարը՝ աղքատ:

Քաղաքի բանվորներին և՛ սակավ են ուտեցնում և՛ վատ: Յես չատ էլի ցանկանում, որ իմ ղեկալի մեջ մատ-մատ արած մսից մի կտոր ընկնի, բայց այդ այնպես եր հալոդվում, ինչպես դեպից ձուկ հանելը: Բախտի բան եր, մեկ անգամ հալոդում եր, մյուս ապամ վոչ: Հայն ուտելու բան չէր, այնքան վատ եր. խոզի յուղով կաշն ավելի վատ: Ախոր յերե կերակուրը վատ եր, մեր աված ղինն էլ մի բան չէր. ինչ կարող էլիր պահանջել: Այս կյանքը յես քաչեցի մեկ ամիս միայն: Շուտով ճամպի ծախք վատահեցինք, և յես Միքայելին թողնելով Մոսկվայում, ինքս ճանապարհ ընկա դեպի Պետերբուրգ: Այդ գծով արդեն յերկաթուղի կար և վեց մանեթ արժեր յերրորդ կարգով գնալը: Հասա Պետերբուրգ և ընդունվեցի դիտությանց ճեմարանի տպարանումը իբրև պրաչար արևելյան լեզուների:

Կյանքումս առաջին անգամ այստեղ տեսա կատարյալ հոյակապ մի ապարան, ուր և պատրաստում էլին բազմաթիվ չորե-չարժ արապատիպ մեքենաներ և տպագրում զանազան դիտական գրվածքներ մինչև հետն յերեք լեզվով: Վորքան ոտար և անծանոթ եր մի լեզու, այնքան թանկ եր նրա չարելը: Ընդունակ գրաչարների համար դժվար չեր անծանոթ լեզվի գրերը միայն սովորել. դրա համար տպած ճեռնարկներ կային իրանց տառարկղիկների պատկերներով: Մտնեչուս պես ինձ հանճնեցին մի վրացերեն ճեռագիր, և նչանակեցին յերեսուն կոպեկ տուրա-

վարձ հազարի վրա, վոր եր ռուսերենի կրկնապատիկը: Այս պնով լավ գրաչարը կարող եր ամսական մինչև հարյուր և հարյուր հիսուն մանեթ վաստակել:

Յես լինձ ապահովացրի: Մնում եր Միքայելիս հոգսը քաշել և Մոսկվայի դժոխքից ազատել: Նրա ցանկությունն եր ճուլարան մանել և այդ արվեստն ուրնավոր կերպով կատարելագործել: Պետերբուրգում այդ ժամանակ ամենալավ ճուլարանը գերմանացի Լեմանինն եր, որին և դիմեցի յես: Սա չեր հոժարում ընդունել, առարկելով՝ թե այդ բոլորը, ինչ որ ուզում եք որ ձեր յեղբայրը սովորի, դրանցից չատերը մենք պաղտնի յենք պահում: Բացի սրանից՝ մեր գործարանում գործը բաժանված է չատ մասերի, և մեկին վարժեցնել բոլոր մասերի վրա էլ՝ մեղ ձեռնտու չէ:

— Դիտեք ի՞նչ կա,— ասացի.— մենք չորս հազար վերստ տարածություն անցնելով, և այն էլ համարյա վոտքով, չենք յեկել այստեղ ձեր հացը կտրելու, այլ վոր այդ գործքը տանենք ձեզանից չատ և չատ հեռու մի մուճ աշխարհ: Իմ յեղբայրս այդ գործից խամ չէ և այնքան էլ ընդունակ է, որ ինչ գործի վրա էլ կանդնեցնեք, նա չի վչացնիլ: Ներան պետք է բոլոր մասերը դիտենալ, սկսած հասարակ ճուլված քից մինչև մայրերի հղկումն ու հարդարումը: Մենք չէլինք կարծում, վոր լուսավորյալ և քրիստոնյա Յեվրոպան լուսաթաքույց կլինի և վորևե բան կծածկի խավար Ասիայի համար: Հիմա ի՞նչ պետք անենք մենք այսպիսի հուսահատությունից հետո. դուցե հարկավոր է, վոր մեծ մարդիկ միջնորդեն մեզ համար, բայց տարաբախտաբար մենք պանդուխտ ենք, վոչ վոքի չենք ճանաչում, կամ ով բանի տեղ կդնի մեզ պես հասարակ արհեստավորներին: Յեթե յեղել եք յերբևիցե մեր վիճակում, կարող եք յերևակայել, թե վորքան թշվառ պետի լինինք մենք:

Այս խոսքերն ասելիս աչքերիցս արտասուք էլին թափվում... Լեմանը հուզվեց: Բանից յերևաց, վոր նա էլ է մեր վիճակում յեղել մի ժամանակ:— Լա՛վ, լավ,— ասաց,— մի հուսահատվիք, դրեցեք յեղբորդ, Թող գա: Այս ասելով վեր կացավ տեղից և լինձ գրկվելի հրավիրեց վերև իր տանը:

Յերբ վոր մտանք իր սեղանատունը, ուր ճոխ նախաճաշիկ եր պատրաստված, կանչեց յերեխաներին, վոր ծանոթացնե մի հեռավոր յերկրացու հետ: Զգիտեմ ինչ ասեց գերմաներեն, յերեխեքը մի առանձին ուրախություն ղգացին և քաղցր ժպի-

տուլ հրեշտակները սես թրթռալով՝ յեկան ձեռքս բռնեցին և կարծես ալդեն վաղածանոթ՝ մի առանձին վայելչանք ցույց տվին: Կյանքիս մեջ չեմ կարող մոռանալ այն տպավորությունը, վոր յես առացա այս յերկնային հրեշտակներից: Այստեղ յերեվակայեցի մեր ընտանեկան խավար ու բարբարոս պատկերը, նրա վայրենի վիճակը, և այն տարբերությունը դառ, ինչ վոր կա դրախտի և դժոխքի մեջ:

Պարոն Լեմանը այսորվանից դարձավ իմ ամենամեծահոգի բարեկամս: Սիրով ընդունեց Մխիթարին, շատ հավանեց: Ցես ասել եյի, վոր կարող ե ոռճիկ չտալ, բայց նա ոռճիկ ել տվավ, տեսնելով, վոր իմ վաստակածը յերկուսիս բավականություն չի տալ: Մխիթարն այստեղ ավարտեց իր արհեստի կատարելագործությունը և ստացավ վաստավոր վկայական:

XI

1863 թվականի սկզբներում նկարիչ Հ. Պատկանյանը Պետերբուրգում բավական ապահով դիրք եր ստացել: Նրա ձեռքին եր Ամիդիի ծխախոտի գործարանը և մադազինը և ծխախոտի մատակարարն եր (поставщик) նորին կայսերական մեծության:

Նրա մոտ եր բնակում և Ռափայելը, վոր այդ ժամանակ վոչ մի գործ չեր: Հովհաննեսն ուղենալով կալուգայից մայրաքաղաք տեղափոխել իր հորը, և յեղբորն ել մի պարապմունք տալ, մի մամուլ եր ձեռք բերել հայերեն տառերով: Սրանց մի հայագետ դրաշար եր պետք, ինձ հրավիրեցին:— Քան թե ուռուսի տպարանն եք կնում,— ասաց Հովհաննեսը,— լավ չի՞ հայի տպարանումը իլնք. մեր պետմա մեր Լուսավորչի հավատն հաստատ իլնք...

Վորովհետև նոր եյի յեկել Հայաստանից, պարոնն աշխատում եր իր դիտցած դավառաբեղվով խոսել հետս, այլ և կրոնական զաղափարով, վոր վրաս խոր ազդեցություն անե և դրավե: Բայց յերբ յես սկսեցի խոսել մաքուր դրական լեզվով, նա զգաց, վոր անտեղի յեր իր վարխեցությունը: Ցես ընդունեցի դրանց առաջարկությունը:

Մեծ պատի վերջին չարաթներն եր: Պետք տալվեր Մեծին Պետրոսի պատմությունը և դատի տոներին նվիրաբերվեր մի

չատ բարձրաստիճան անձի, նրա վաղորմածությունը հայցելու համար: Դրանից կախումն ուներ իրանց հորը մայրաքաղաք բերելու հրաման ստանալը: Ժամանակը կարճ եր. պետք և աշխատեյի դիչերը-ցերեկ: Տառերը քիչ եյին և կոտրատված, պետք եր ջոկվկել. մամուլը ձեռքի յեր, ուչ եր հասցնում տպագրությունը: Որվա մեջ յերկու ժամ հաղիվ եյի քնում. մի դիչեր ել աբյունով լցվեցին, ել վոչինչ չտեսա և վայր ընկա թուլացած: Ռափայելը յեկավ, տեսավ իմ վիճակը և բացականչեց.

— Ախո՛ս, գործն ուշացավ:

Այս խոսքը զնդակի պես դիպավ սրտիս, բայց վոչ մի պատասխան չտվի: Մտքումս միայն ասացի, թե վորքա՛ն վչչացած և այս մարդը, վոր իմ աչքերի համար վոչ մի ցավ չի ըզդում: Այդ րոպեյից նա այնքան վատացավ իմ աչքում, վոր ել վոչ մի բանով չեր կարող լավանալ:

Սառը չրով թաց արած քաթան դրի աչքերիս և պառկեցի տեղումս՝ քունս կչտացնելու համար: Մյուս որը բավական լավ եյի և գործն ել հասցրի իր ժամանակին:

Այս աշխատությունը մի բառացի թարգմանություն եր ռուսերենից, մանուկների համար չինած մի պատմության. բայց այս հանդամանքը ծածկեց թարգմանիչը և հակատին տպագրեց «աշխատասիրություն»:

Ուրիչ դաղանիքն խմանալը չատ անպամ վորձանք և բերում իմացողի դլխին: Մարդասպանը հարկադրված և սպանել և նրանց, վորոնք կարող եյին մերկացնել նրա յեղեռնագործությունը: Խորհուրդ եմ տալիս այն մարդկանց, վորոնք վորևիցե չարագործության պատահմամբ ականատես են յեղել, զգույշ կենալ. չասեն թե ազատ կմնան իրանց գաղտնապահության համար: Գաղտնապահությունն անհնարին է. դու կասես քո մտերմին, նա ել՝ իր, և այսպիսով ամբողջ աշխարհք կտարածվի: Ինձ վատաբանել և հալածել են այնպիսի մարդիկ, վորոնց մազի չափ մի վնաս չեմ տված: Այս առաջ և յեկել նրանից, վոր տաբաախտություն եմ ունեցել անչխատկապաբար, անմեղությամբ և պատահմամբ միայն նրանց գաղրնի արարքները տեսնելու: Զաղրագործն ամենամեծ թշնամին իր գաղրագործության վկան է, և լինելով գաղրագործ, վոչինչ չարժե նրա համար մի գաղրություն ևս դործել, բարոյապես կամ ֆիզիքապես սպանելով իր մութ գործերի վկային: Քանի քանի անմեղներ ու արդարներ

ջոհ են դնացել այսպիսի յեղեռնագործութիւնների: Մեկ անգամ Ռափայելը տեսավ իմ ձեռքում հինչալ պատմութեան բնագիրը կարդալիս: Այս դեպքից հետո իմ առաջը թեքվեց նրա աչքումը: Բայց յես բանի տեղ չդրի այս հանդամանքը: Նա լինի չեր պահիլ, բայց արդեն սկսել եր «Հյուսիս» շաբաթաթերթը, ճարահատյալ պիտի պահեր, և պահում եր սիրաշահելով, վրաքան վոր կարող եր սիրաշահել օրվա մեջ 24 դույն ցույց ավող մի մարդ: Շուտով յեկավ հայրը, և յերբ վոր նրան ծանոթացա, Ռափայելը դարձավ իմ աչքումս մի անմեղ, միամիտ և բարի հրեշտակ այս մարդու համեմատութեամբ: Սրանց մոտ մնացի մի տարու չափ, առանց տարին լրացնելու և լավ ծանոթացա ամենի եվ կյանքի բնորոշ գծերին, բայց յես չեմ ուզում գրել, վորովհետև իմ նպատակս չե ուրիշների կենսագրութիւնն անել, մանավանդ վոր դրանց կենսագրութիւնները զուրկ են բարոյական կողմերից: Ցես չհետացա դրանցից, այլ վախտ, դործը յերեսի վրա ձգելով, վորից հետո այլևս վոչ մի հարաբերութիւն չուզեցա ունենալ դրանց հետ: Սրա պատճառը ի միջի այլոց և այս եր. յես մի հայտարարութիւն գրեցի և ավի տերտերին, վոր տեսնե և թույլ տա տպելու «Հյուսիս»-ում: Նա կարդաց, և՝ չատ լավ է,— ասաց,— տար չարի, բայց թերթը չկընես, պետք է մի բան էլ յես գրեմ: Իմ հայտարարութեան բովանդակութիւնն այս եր, թե՝ «այս լինչ յերիտասարդներս, վոր Թիֆլիսից հետացանք այս լինչ նպատակով, այժմ Պետերբուրգումն ենք և չուտով կհասնենք մեր նպատակին, ուսաև առաջարկում ենք մեր ծառայութիւնը մեր աղքային տպարաններին— Եջմիածնի, Ղարաբաղի և Ներսիսյան դպրոցների տպարաններին»: Սրանով յես ուզեցա նաև ուրախացնել իմ հեռավոր ծանոթներին և բարեկամներին: Այս հայտարարութիւնը չարեցի, սրբագրեցի և տպասեցի, վոր տերտերն էլ իր գրածը բերի: Նա բերավ ավավ լինի և սուս ու փուս դուրս դրեց: Ցես կարդացի, և լ'ինչ եմ տեսնում. մի առա՛ջ և չատ խայտառակ. յերեք տսրվի իմ հոդվածից հետո, բոլոր կարդացողներն այն յեղրակացութեանը պիտի դան, վոր վերը գրված հայտարարութիւնը գլխովին սուտ է: Ցես չչարեցի այդ հիմար բանը, այլ մեկին իմս գրի, և հրամայեցի տպել: Տերտերը յեկավ տեսավ իր վտանավորը դեն եմ ձգել, չատ կարմրեց. չըպիտեմ ամոթի՞ց, թե բարկութիւնից. յերևի յերկուսն էլ միասին կլինեին. բայց վոչինչ չհոսեց: Այդ բանը յես պատմեցի Մելքայելիս և նա այնպես վրդովվեց, վոր չնայած իր պաշտպանութեանը, ասաց կտրական. «Եվ մի գնար այդ տպարանը, յես չեմ ուզում. դու ավելի իմ խաթրու յես գերի դառել դրանց, բայց յես հիմա արդեն ապահով եմ. Լեմանը ռոճիկս վելացրեց. այժմ քանըհինդ մանեթ է չինել ամսականս»:

Պետք է խոստովանիմ ասկայն, վոր յես Պատկանյանցի տանը չատ և չատ բան սովորեցի: Այդտեղ միայն հասկացա, վոր Ջոկ բան է ուտումը, տպաղանդը, և Ջոկ՝ բարոյական զարգացումը. և թե՝ մեկը մյուսին կատարելագործում է՝ լավին գեպի լավն է տանում, վատին դեպի վատը: Ցեթե, որինակ, մի պիրք պարունակում է իր մեջ լավ և վատ տիպեր, լավը հակումով ընթերցողը տատում է վատերին և սիրում լավերին. իսկ վատ հակումն ունեցողը՝ դրա հակառակ՝ ծիծաղում և լավի վրա և աշխատում է նմանվել վատերին: Ներկայումս էլ յես այդպես եմ համոզված: Ցեթե մեկը չունի ազնիվ բնավորութիւն կամ ժառանգական և կամ ինքնուրույն, մտավոր զարգացումը նրան չի ազնվացնիլ, այլ ավելի էս կանաղնվացնե: Սրա հակառակ ազնիվ բնավորութիւն ունեցողը վորքան չատ զարգանա մտավորապես, այնքան չատ կազնվանա և կհասնի մինչև այլասիրութեան աստիճանին, վոր ծայրն է բարոյական զարգացման: Բարոյական հատկութիւնները նուիրքան ժառանգական են, ինչքան և ֆիզիքականն ու մտավորը: Զար ծառը բարի պտուղ տալ կարող չէ: Ուսումնասիրեցեք մեկի ծնողաց անհատական հատկութիւնները, նրանցով կարող եք և նրանց ծնունդների մասին մտավոր գաղափար կազմել:

XII

Պատկանյաններից վոր հեռացա, յես կրկին գիմեցի ակադեմիայի տպարանը, բայց այս անգամ լինչ չընդունեցին: «Մեկ անգամ այտեղից դուրս յեկողը կրկին այտեղ մտնելու իրավունք չունի», ասացին: Հերավի այս կարգը պահվում եր այստեղ: Ռոճիկներից էլ մի հայտնի տոկոս պահվում եր խնայդական արկղում, վորից կենսաթոշակ եյին տալիս հետո՝ ծերացած և անկարող աշխատավորներին:

Գնացի Լեմանի մոտ, նա լինչ մի նամակ տվավ մի տպարատնատիրոջ վրա և նա լինչ ընդունեց մեծ սիրով: Գործս լավ եր

գնում, բայց ուսումս կազմիկազ. քիչ ժամանակ ունեմ ինքնակրթությանս համար, դասարիկ ռամաններ եմ կարդում և այն էլ պատահաբար և անխորհ: Այս միջոցին մի կիրակի որ Միքայել գնաց ժամ և այնտեղից մի լուր բերավ, թե Նազարյանցն ուզում է շարունակել «Հյուսիսաստղ»-ի տպագրությունը, որ քանի ամիս էր դադարած եր, բայց դրաշար չունի: «Հյուսիս»-ից լսելով՝ որ մենք այստեղ ենք, գրել և Մարտիրոս Սիմոնյանցին, որ մեզանից մեկնումեկին ուղարկե: Նա խոսեց ինձ հետ.— Ես չեմ կարող,— ասացի,— բայց կհամոզեմ Ղազարոսին, որ գրքա:

— Հիմա ի՞նչ կասես,— ասաց Միքայելը,— ես խորհուրդ եմ տալիս, որ գնաս. հոգ չե, որ ես մենակ կմնամ:

— Շատ լավ, բայց ես ի՞նչպես գնամ այն մարդու մոտ, որ ինձ հետ խոսել անգամ չուզեց:

— Դու են վախան ուրիշ մարդ եյեր, իսկ հիմա ուրիշ: Ի՞նչ տեղից պիտի գիտենա, որ դու նույն մարդն ես, և եթե իմանա, ինքը պիտի ամաչի և վոչ դու: Պայմանն էլ շատ ձեռնտու ես: Հազարին 20 կոպեկ, և յերկու էլ աշակերտ պիտի տան: Դու նրանց շուտ կսովորեցնես, նրանք կշարեն, իսկ դու քո ուսումը կշարունակես:

Արդարև իմ ինքնակրթության համար այս շատ ձեռնտու պայման եր: Վճռեցինք գնալ, և ես իսկույն ճանապարհ ընկա գիշեր Մոսկվա: Գնացի Նազարյանցի մոտ իբրև նոր և նրան անծանոթ մի մարդ: Ցեվ հիրավի, ես այլևս այն չեյի, ինչ որ առաջ: Հիմա հագնված եմ վայելուչ ձևով և մինչև անգամ ավելի ճոխ, քան թե պետք եր, ուրեմն այլևս չեյի խրտնեցնիլ այն մարդկանցը, որոնց խելքն աչքումն է և վոչ գլխումը:

Լավ հագուստն նշանակություն չունի մարդիկը մի առած ունին, թե «Հագուստի համեմատ կընդունեն, իսկ խելքի համեմատ ճանապարհ կդնեն»: Իհարկե այդպես է, բայց որ շատ անգամ եյ միայն հագուստին նայելով՝ ուղղակի ճանապարհ են ձգում, առանց խելքի մասին մի գաղափար կազմելու, սրա դեմ ի՞նչ ունիք ասելու: Ցեթե ես մեկ լավ հագնված մարդ լինեյի, կարելի՞ բան է, որ Նազարյանցն այնպես վարվեր ինձ հետ, ինչպես վարվեց: Ո՞վ է բացատրության վրա ուշադրություն դարձնում, մանավանդ մեծ քաղաքներում, ուր հազար տեսակ թափառաշրջիկ բախտախնդիրներ կան:

Այս անգամ Նազարյանցն ինձ շատ պատվով ընդունեց, մոտը նստեցրեց, յերկար խոսեց, բողոքեց հայերի դեմ, որ լրան չեն հասկանում, չեն գնահատում: Խոսակցի վրա այն տպավորությունն եր գործում, որ այդ մարդը մեկ հատ է, լրացնով հավնատակված, ընդդիմախոսել կարելի չեր, և հենց շատերին էլ, որոնք ուզեցել են մի բան էլ իրանք ասել, մի կարծիք հայտնել, Նազարյանցը այսպիսի նկատողություն է արել.— «Լսեցեք, յեղբայր սիրելի, լսեցեք, լսելն անգամ շատ է ձեզ համար»...— Սրա պատճառն այն եր, որ իր ժամանակ հայերիս մեջ չկար նրա նման աշխատասեր մի մատենագիր: Այդ մարդը հմուտ դրավ դրական լեզվի նոր ուղղության և նոր դրական դպրոց սաեղծեց, որով սարսափելի հարված տվավ ընդարմացած և թմրած ուղեղներին: Նազարյանցի այս մեծ գործը դեռևս ըստ արժանվույն դնահատված չե հայ հասարակության և նորագույն գրագետների կողմից, որոնք շատ թեթև աչքով են նայում նրա աշխատության և ուղղության վրա: Նազարյանցի և Սրովյանցի նմանը դեռ ևս չի ծնվել մեր մեջ: Առաքյալներ շատ ունինք, բայց հիմնադիրներ՝ և վոչ մեկը:

Մոսկվայում մնացի յես 63 թվականի վերջերից մինչև 64-ի վերջերը և այդ փոքր ժամանակամիջոցը կարելի յե համարել իմ մտավոր զարգացման վոսկեդարը: Ինձ հանձնած աշակերտներին շատ շուտ ռուսերեցի հայերեն կարդալ և գրել, թեև ռուսներ եյին: Սրանց վարձը ապրանքն եր տալիս, բայց շատ եյին ինձ համար: Ցես ժամանակ ունեցա իմ ինքնակրթությունս մի սիստեմի տակ ձգել, պարապել վորոշ ծրագրով, դիտությունների տարերք ուսանելով: Այս միջոցին մի զարմանալի ուղնություն էլ, կարծես յերկնից, հրաշքի նման ինքն իրան դուրս եկավ և ուղղակի իջավ գլխիս վրա, հեքյաթների «գովաբեկավ» ասված թռչունի նման, որ ամբողջ գլխին իջնում է, նրան են թագավոր չինում: Մոսկվայի համալսարանից մի խումբ ռուս ուսանողներ ձրի դասատվություն եյին անում գանազան դրծարանություններում յեղած աշակերտներին և վարպետներին: Ուսանողներն իրանք վարձ եյին ստանում ուրիշ տեղից: Սակայն ամեն դրծարանատեր այդ բանն իրան ձեռնտու չեր համարում և թույլ չեր տալիս: Բայց մեր տպարանի տերը, որ Սամոնտովն եր, ինքն ուսյալ մի յերիտասարդ եր, հայտնի հարուստ վորդի, ամենայն ուրախությամբ թույլ տվավ: Դասատրքերն ևս ուսանողներն եյին բերում և ձրի բաժանում: Մեզ մոտ դա-

լես եյին չորս հոգի, ամեն մեկն առանձին առարկայի համար: Սկզբում սովորողներս մինչև քսան հոգի եյինք, որոնց մեջ ամենից հասակավորը յես եյի: Բայց հետզհետե կամեցողների թիվը նվազեց և յես մնացի մեն մենակ:

Ուսանողները ինձ վրա առանձին ուշադրություն եյին դարձնում, և զարմացած եյին մնացել, որ քսանըչորս տարեկան մի յերիտասարդ, որ նոր և սկսում սովորել, այդչափ դյուրաթեք, ճկուն ու դյուրըմբռնող միտք ունի: Նրանք ծանոթ չեյին իմ անցյալի հետ և յես էլ չեյի պատմում, ուզում եյի, որ ամեն ինչ այդուբենից սովորում, թե դասը և թե ղաս տալու յեղանակը, որ ինձ համար նույնպես նոր եր: Այս ուսանողները հմուտ եյին ժամանակակից մանկավարժական դրակառուցվածքին, որ նոր եր զարգանում, հետևում եյին նորագույն մեթոդներին, ունեյին և դասատվության ընդհանուր: Յերբ որ մենակ մնացի, այլևս ոչարան չեկան, այլ ուղղակի իմ սենյակը: Իրանք աղքատ եյին և իրանց ստացած նպաստն վոխարենն եր, որ դաս եյին տալիս ձրի: Բայց ղրանցից մեկը ամենից աղքատ եր, ստացած ոչնությունն իրան չեր բավականացնում, վարձով դաս դռնելու էլ ընդհանուր չուներ: Բայի մաթեմատիկայից ուրիշ առարկա չեր սիրում և մինչև անգամ սովորածն էլ մոռացել եր. միակողմանի յեր բոլորովին: Լեհացի յեր և աղքատ: Այդքանը բավական եր, որ մենք սկզբ սիրով կապվեյինք միմյանց հետ: Յես առաջարկեցի, որ իմ սենյակումս բնակվի և ինձ հետ ճաշի: Մերժել չեր կարող, այնքան սրտանց եր իմ առաջարկությունը:

Այս ձևով իմ ուսումնառության սկզբ միայն մեկ տարի, որից հետո յես Մոսկվայից հեռացա, կամ ավելի ուղիղն ասեմ, փախա Պետերբուրգ: Սրա պատճառը հետևյալ հանգամանքներն եյին:

Զանազան տպարաններից հատաքաղեմ դրաշարներից և ուսանողներից մի ընկերական խումբ եյինք կազմել: Հավաքվում եյինք մեկտեղ և զանազան նախագծեր կազմում, վիճում, դատում մեր խելքից շատ վեր բաների վրա: Այս վոչինչ. սա մինչև անգամ ոգտակար եր մեզ համար և զարգացուցիչ, բայց մեր ժողովներից հետո լսենթուրյուն շատ եյինք անում: Մի քայլը մտաս չեր, որ ինձ զսպեր, գժության մեջ չեյի ուզում վոչ մեկից յետ մնալ, այլ յեթե կարելի յե դերազանցել բոլորին: Ուր որ դնում եյինք համբովին, մեր առաջին գործն եր լինում անկարգություն անել: Տակն ու վրա եյինք անում չատ պանդոկներ և կանանոցներ մի վորևե առիթով, իսկ առիթներ այդպես տեղը միշտ լինում եյին և այն էլ շատ առատ: Ոյտար մեկը վիրավորում եր մեզանից մեկին, այդ արդեն բավական եր, վոր վրա թափվեյինք և աթոռ ու սեղան կոտրտեյինք և ջարդեյինք մեր հակառակորդների քիթ ու պռունկը: Այդ ժամանակ այժմյան խստությունը չկար և մեծ նշանակություն չեյին տալիս վոչ մեր ժողովներին և վոչ նույնիսկ մեր անկարգություններին: Յեթե յերբեմն տանում եյին և վոստիկանատուն, այնտեղ մի թեթև նկատողություն եյին անում և արձակում: Բայց յես ղրում եյի, վոր լավ բան չե մեր արածը, մանավանդ վոր մտադրվել եյինք ծեծել մի քանի ղերմանացի ֆակտորների, վորոնք շատ բարբարոսաբար եյին վարվում ռուս դրաշարների հետ և նախապատվություն, մեծ ռոճիկ և ոգտակար պրծիերը հանձնում եյին իրանց ազգակիցներին: Ռուսաստանի բոլոր դրծարաններում ռուս տարրը սաստիկ ճնշված եր ղերմանացոց ձեռքում, և միայն ռուսներն եյին, վոր կարողանում եյին տանել այդ անտեսական ճնշումը, իրանց վրեժը արագի մեջ թափելով:

Մոսկվայից հեռանալու համար ունեյի և մի ավելի կարեվոր առիթ: Այդտեղ ծանոթացա մի աղջկա հետ: Այդ պատահեց իմ նոր բարեկամ Յաշայենց տանը: Աղջիկը դրանց մոտավոր ազգականն եր, շատ դեղեցիկ, քնքուշ, լավ ուսում առած և շատ կարգացած և զարգացած: Ինքը մեն մենակ, վոչ հայր, վոչ մայր, բայց ապահովված եր նյութապես: Այդ աղջիկը սիրահարվեց ինձ վրա. սպասում եր, վոր այսոր թե վաղը յես կհայտնեմ իրան իմ վոխադարձ սերը: Խեղճը չեր իմանում, վոր այդ խոսքն իմ բերանից դուրս գալուն պես՝ հոգիս էլ հետը պետք է դուրս դա: Սիրահարված եյի և յես, մինչև անգամ հիացած և հափշտակված, բայց իղեալական սիրով, պաշտելու չափ: Շատ անգամ ամբողջ դիշերներ եյինք լուսացնում: Ժամանակի ընթացքը մեզ համար դղալի չեր. մեր խոսակցության նյութն անհատնելի յեր: Նա պատմում եր իր կարգացած վեպերի բովանդակությունը, և այդ տեղից սկսում եյինք մարդկային հոգու զանազան հատկություններն մասին ճառել, դրա տալով մեր յերևակայությանը, վոր անսահման կերպով թռչում եր առանց մեր կամքի: Հոդեկցություն, նախազգացմունք, համակրություն և գլուխ ամենայնի՝ սեր՝ իր բոլոր առոիճաններով և

տեսակներով մեր բացատրությանն էլին յենթարկվում, և բացատրում էլինք միակերպ և միանման, լրացնելով իրար պակաս թողածը: Խոսում էլինք և բանաստեղծությունների մասին, թե վորի մեջ ավելի հանճար, ավելի տաղանդ կա, կամ ինչ տարբերություն կա հանճարի և տաղանդի մեջ: Յերկուսս էլ Լերմոնտովին բարձր էլինք դասում Պուշկինից: Մեկ որ նա այսպիսի մի բան ասաց. «Լերմոնտովը չպատավ մի հոդի, վոր կարողանար բավականություն տալ նրա բարձրասլաց սերուն. յեթե յես նրա ժամանակ յեղած լինեյի և նրան ծանոթ, նա անպատճառ իմ մեջ կգտներ իր վորոնածը»: Այս ասաց նա վոչ թե ինձ բան հասկացնելու կամ դրավելու դիտավորությամբ, այլ անմեղ հավատով ու պարզամտությամբ:

Մեկ դիշեր էլ շատ վոգևորվեց Վարվարա Պետրովնան (այսպես եր անունը): Նախ կարդաց իր դրած բանաստեղծությունները, վորոնց մեջ նկարագրում եր իր տածած սերը դեպի մի յերիտասարդ, նկարագրելով նրա ներքին և արտաքին դեղեցկությունները. բայց նա փախչում է իրանից, վորովհետև նրան դեպի իրան է քաշում իր տառապյալ հայրենիքը, և այստեղ բացականչում է. «Չեր իմանում խեղճը, վոր հենց դրա համար էլ սիրում եյի իրան, բայց փտխադում եյի, վոր ինքն էլ ինձ սիրեր»:

Յես մնայի լուռ, չիմացա ինչ պատասխան տամ: Նա ուզեց նյութը փոխել. մոտս նստեց դիվանի վրա և սկսեց Պուշկինի «Կովկասի գերին» ամբողջապես բերան ասել: Յերբվոր վերջացրեց, կուռը դցեց վզովս և ճակատիցս համբուրեց, կարծես կարոտելով՝ վոր մեկն էլ իրան համբուրեր նուչնքան վառ սիրով:

Մենք շատ էլինք խոսել սիրո մասին, շատ էլինք արծարծել Տուրգենևի «Накануне» վեպի բովանդակությունը և կոմպանիկը կերպով հասկացրել էլի, վոր յես ոտար աղջիկ, մանավանդ ուստ աղջիկ, վորքան էլ վոր սիրելիս լինիմ, ինձ կին չեմ առնիլ. ասել էլի, թե ինչ պատճառով: Այժմ յես բացվեցի Յերմ համբույրի աղդեցության տակ և ասացի.— Վարվարա Պետրովնա, դիտե՞ք յես վորքա՛ն չնորհակալ եմ ձեզանից: Կյանքումս դուք առաջին աղջիկն եք, վոր ձեր անկեղծ սիրովը ահագին աղդեցություն եք գործել իմ բարոյական և մտավոր զարգացման վրա: Դուք ձեր զարգացումը անձրևի պես տեղացրել եք իմ հոգու մեջ: Ձեր սիրով կենդանություն եմ ստացել, ձեր սիրով մեղմել, քնքշացրել եմ իմ շատ կոպիտ բնավորությունս: Մի-

ով բանիվ՝ դուք, առանց ձեր դիտության, գարձել եք իմ վոգևորող մուսան: Յես հուսով եմ, վոր մեր այս հարաբերությունը այսպես էլ կշարունակվի, առանց այլ կերպարանք առնելու. յես կլինիմ ձեր սիրելի յեղբայրը, իսկ դուք իմ ամենասիրելի քույրս...

— Այո՛...— բացականչեց Վարինկան և թաչկինակն աչքերին դնելով՝ սկսեց հեկեկալ: Յես համբուրեցի նրա ձեռները և սկսեցի ճառել իդեալական սիրո վեհությունն ու վսեմությունը, իսկ ռեալական սիրո վոչնչությունը:— Ռեալական սերը հանդցնում է,— ասացի,— հոգևկան սիրո կրակը, բաժանում, անջատում է հոգեկցությունը, դադարեցնում է յերևակայության թռիչքը, ցածրացնում է ճշմարիտ սիրո բարձրությունը, չնորհաղուրկ և անում, մերկացնում. հոգևկան հավիտականությունից հետո հիասթափություն է առաջ բերում: Յես չեմ կարող իմ պաշտած առարկան զրկել իր յերկնային վորությունից, քանի վոր այդ վորությունն ինձ վրա յե տարածում. յես այդ կհամարեմ մի սրբապղծություն...

Այհա այս բանից յես մտածեցի անպատճառ հեռանալ, վախենալով՝ վոր մի դուցե կրակի հետ խաղալով՝ ընկնեյի մեջը՝ ճրագի չորս կողմով թրթռուղ թիթեռնիկի նման:

Իմ սիրո այս վերջին արկածը պատմեցի յես իմ ուսանող վարժապետին՝ Սոկուլսկուն, վոր շատ եր ցանկանում ծանոթանալ այդ տարորինակ աղջկա հետ: Նա ասաց.— Լսիր, հոգյակըս, թող այդ աղջիկը իմ խակաման կինս լինի, իսկ քո իդեալական սիրուհին:

— Վո՛չ,— պատասխանեցի,— իմ իդեալական սիրուհին պետք է իմ աչքումն անարատ լինի, ինչպես հրեշտակ, մի ամենափոքր բիծը նրան սատանա կդնի իմ աչքումս:

Պետերբուրգ դնալիս յես «մեռած բարևի» չդնացի. մի նամակ դրեցի տվի Սոկուլսկուն և Լյուբոչ Ֆիլիպովիչին, վոր Վարինկան տվել եր ինձ կարդալու, և ասացի՝ տար իրան տուր և ծանոթացիր:

Վերջը Սոկուլսկին ամուսնացավ Վարինկայի հետ, բայց տարի չքաշեց, ծնունդի վրա մեռավ խեղճը:

Յերբոր մտքիս մեջ ծագում է մի բան անելու, ել չեմ կարողանում համբերել, սպասել, աշխարհքը մթնում է դլխիս, ել վոչ մի բան աչքիս չի յերևում, վոչ մի բանի ձեռքս չի կպչում: Մտադրվել եմ դնալ Պետերբուրգ, բայց գործը կարող եր

կիսատ մնալ, իսկ այդ անաղնվությունն կլիներ իմ կողմից, եթե մի իրավացի տեղիք չունենայի: Այդ տեղիքը ավավ ինքը Նաղարյանցը: Շարելու նյութը ուշացնում եր: Աչխատակից չուներ. ամեն ինչ ինքն եր գրում, ինքն եր թարգմանում, շատ անդամ վոչինչ բաներ և դանազան կեղծ անուններով: Մի հոդված միայն, վոր կրում է «Ազգային թշվառությունն» վերնագիրը, Նալբանդյանցն գրածն եր, թեև Նաղարյանցն իսկական անունն է տպագրված: Բոլոր շարելիքը ձգում եր ամսի վերջերին և շտապեցնում, վոր ամսի վերջին դուրս գա: Ձես հասցնում եմ գրածքայլ, բայց այդ որերում զրկվում եմ դասերից, վորոնք ինձ համար ավելի թանգ արժեին, քան թե «Հյուսիսափայլին» ամսավերջին դուրս գալը: Մեկ որ եմ, յերբ այդպես բերել թափել եր հոդվածները, և շտապեցնում եր, յես այլ ևս ուշացություն չդարձրի, դասերս բաց չթողնեի: Նաղարյանցը գալիս է տպարան, տեսնում է, վոր յես չկամ, հարցնում է թե ուր եմ: Նրան ասում են, վոր յես գաս եմ առնում մի խումբ ուսանողներից: Սա բարկանում է աստիճ և ասում.— «Այդ ասիացի ամամիը ահագին կենդանի յե գտել, նոր ուզում է ուսո՞մ առնել. դնացեք չուտ, կանչեցեք»: Ձեկան ինձ ասացին նրա բարկությունը: Ձես իսկույն դնացի վոչ թե նրա հրամանը կատարելու, այլ իր հայհոյանքի փոխարենը յետ գարձնելու ցանկությամբ, վոր տեսնեն, թե յես Նաղարյանցին թողել չեմ տալ ինձ անպատվել անպատիժ կերպով: Դնացի և կանչեցի տասարիզին առջև՝ բերը ձեռքս: Նա գուրս յեկավ գրասենյակից և սկսեց իր հանդիմանությունը կոպիտ խոսքերով. յես պատասխանեցի նրանից ավելի կոպիտ կերպով: Նա աչքերը խփեց, ինչպես սովորություն ուներ, և սկսեց ձեռքերը շարժել ինչպես մի դերասան բեմի վրա, վոր ասածն ավելի ազդու գուրս գա, բայց այս անգամ նրա մի ձեռքը դիպավ իմ ձեռքի բերի ծայրին, վոր անդիտությամբ մեկնեցի դեպի նրան՝ ուղենալով պատասխանել ձեռով տալ: Նաղարյանցը վերավորվելով թե իմ խոսքերից և թե իմ խթանից, յերեսը շրջեց ու հայհոյելով հեռացավ, իր հետ տանելով և իմ հանդյանքը, վոր անխնա իր յետևից թափեցի գլխին:

Նաղարյանցը հայերիս ասում եր կոպիտ ասիացի, բայց չեր զգում, վոր ասիական կոպտությունը իր մեջ գերանաչափ եր: Մեկ անգամ Եմինի ու Նաղարյանցի մեջ յես գարձա մի հավերժատակության առարկա. այդտեղ տեսա այդ յերկու մեծ մարդկանց փոխադարձ հսկայական առելությունը: Եմինը մի գիրք եր չարել տալիս ռուսերեն՝ հայոց հեթանոսական կրոնի մասին: Այդ գրքում տեղ-տեղ հայերեններ կային, և ինձ խնդրեց, վոր յես չարեմ: Այս բանը, վոր մի չնչին բան եր, Նաղարյանցին կատաղեցրեց.— «Ձես իմ գրաչարիս թույլ չեմ տալ,— ասաց,— վոր նրա համար բան չարի»: Ձեկավ արդելեց ինձ և ասաց.— Ձեղքայր սիրելի, նա մարդ չե, այլ խո՛զ է, խո՛զ. քո տեսած խոզերից չե, դա վատթար տեսակից է»... Ուսս գրաչարները Եմինին հայտնեցին Նաղարյանցի արարմունքը: Նա էլ յեկավ ինձ մոտ և ասաց.— «Դուք գրան ինչո՞ւ յեք լսում, դա խելագար է, դուրկ մարդավարությունից. դա վորտեղ եր գեռ, վոր յես ձեզ համար ազատեղ հոդացի, վոր տեղ տանի»...

Մոքսում ասացի՝ շատ հոդացիր, չա՛տ... յերկուսիդ էլ յեթեք նահլաթ, ամեն մեկիդ հինդ: Հայոց ազգի աչքը լուսա, վոր ձեզ պես գիտնականներ ունի. իսկ թե մեկը Մովսես Խորենացին եր, մյուսը Դավիթ Անհաղթը:

Եմինին մխիթարելի յես, վոր կչարեմ, վորպեսզի «Յելախտահատույց» լինիմ:

Նաղարյանցի հետ ունեցած կռվից հետո յես այլևս չեյի կարող նրա հետ վորևե հարաբերություն ունենալ: Այդ տարին յես չարեցի Շահազիզի «Լևոնի վիշտը» և մյուն այդ մարդուն սիրեցի յես Մոսկվայի հայերից:

Մեր կռիվը շատ հարմար ժամանակ պատահեց «Հյուսիսափայլ»-ի համար: Այդ ժամանակ Միքայելը մոտս եր: Զուլարանումը հիվանդացել եր, նոր յեկել եր ինձ մոտ, վոր փոքր ինչ կազդուրվի:— Դու գնա՛,— ասաց,— յես մի կերպ յոլա կգտանեմ, կչարեմ «Հյուսիսափայլ»-ը քո պատրաստած աչակերտների հետ:

XIII

1864 թվականի վերջերում, յես կրկին Պետերբուրգումն եյի, լավ պատրաստված ինքնակրթությունս ազատ կերպով շարունակելու համար: Գրաչարությունից ազատվելու միտքը, վոր առաջ ինձ համար մի ցնորք եր համարվում, քանի գնում եր՝ մոտենում եր իրականության: Այժմ յես թափ եյի ավել մտավորապես, ինչպես մի ժամանակ Փիզիքապես: Այժմ իմ

մեջ ղրում եյի մի մտավոր անղուսպ ուժ: «Մի՞թե յես պակաս կգրեմ, քան թե Ռափայել Պատկանյանը, քան թե Նաղաբյանցը», մտածում եյի յես և յերևակայում եյի, վոր նրանցից ել լավ կգրեմ: Առաջ այսպիսի միտք չեր կարող պատվել ղլխուս մըս: Ներքին ղրդռմա ել վոր չլիներ, արտաքինը բավական եր, վոր յես ձգտեյի լինճանից թոթափվել բանվորի սորիկական չըղթան: Մենակ մեր խմբագիրների տմարդի վարմունքը բավական եր, վոր մի ազատասեր սրտի մեջ կրակ վառեր, առաջ մղեր և այդ կախարդական չրջանից դուրս մղեր: «Ի՞նչ հայեր են այստեղի հայերը, ասում եյի յես. լինչպես կան ռսի նեմեցներ, ռսի ջհուդներ, նույնպես կան և ռսի հայեր. դրանց բոլորին միմյանցից զանազանել չես կարող բարոյական կողմից: Մեկ հայ վոր չաշխատի իրանով իր ազգի անունը բարձրացնել, նրա պատիվը պահել, պաշտպանել, նա ի՞նչ հայ է»: Այս ղղացումն լինճ մինչև դոնքիշոտության եր հասցնում. չատ բան անում եյի միայն նրա համար, վոր լինճանով իմ ազգի պատիվը չըստորացնեմ, չասիլ տամ, թե Աղայանցը սովորական անպիտան հայերից մեկն է, այլ յերե հնար է, չուկեմ ուտարների այդ ծուռ գաղափարը բնիկ հայերի մասին: Այս ղղացումն ու հավատը լինճ ազատում եր շատ գայթակղական և անբարոյական դեպքերից: Ուտարների չրջանի մեջ, ընկերներիս և ծանոթներիս մեջ, ազատ կանանց և որիորդների մեջ յես հայտնի եյի, իբրև բարոյապես անբիծ և աղնիվ մարդ: Շատ ուրախ եյի, վոր գնահատվում է իմ ներքին արժանավորությունը դոնե ուտարների կողմից: Շատ չատերից եմ ստացել նույն իսկ կանանցից և որիորդներից իրանց լուսանկարը՝ քամակին դրած՝ «Նվիրում եմ Ղ. Աղայանցին յեղակի չիտակ մարդուն» (единственному честному человеку): Այսպես՝ նախ քան լինճ «չնորհալի» և «ազնվամտավոր» տիտղոսները տալը, ավել են «աղնիվ և չիտակ մարդու» տիտղոս, վորով քիչ չեն խրախուսել և մխիթարել լինճ և ավելի ևս զարկ տվել իմ բարոյական զարգացմանը և չիտակությունը չինել լինճ համար արյուն և մարմին:

Մի պակասություն, վոր այդ ժամանակ յես ունեյի, այդ այն եր, վոր յես իմ հարաբերությունը իսպառ կտրեյի տեղական հայերից. յեկեղեցի ել չեյի գնում, վոր նրանց յերեսը չտեսնեմ: Մեկ յերկուսի հետ մոտ ծանոթանալով՝ և մի քանիսին ել միայն հեռվից դիտելով՝ բոլորի մասին կազմել եյի մի այսպիսի ծայրահեղ և մոլար գաղափար: Մոսկվայում իմ հարաբերությունը ռուս և լեհացի ուսանողների հետ եր. հայ ուսանողներին ճանաչում եյի միայն հեռվից. տեսնելով նրանց թղթամոլությունը և բուլվարներում քարշ գալը անանուն աղջկերանց հետ, յես տածում եյի դեպի դրանց խորին արհամարհանք: Զուր տեղ վատնում եյին իրանց հայրերի և բարերարների փողերը, առանց հոգ տանելու իրանց բարոյական և մտավոր զարգացման վրա: Այսպես չեյին Պետերբուրգի ուսանողները, բայց դրանց հետ դեռևս ծանոթ չեյի: Իմ ծանոթությունս այդ ժամանակ լեհացոց հետ եր: Ապրելով Սոկուլսկու հետ՝ իմ ուսանող վարժապետի, վոր ծայրահեղ ազգասեր եր, այնպիսի սըրտաճմլիկ պատմություններ եյի լսել նրա ազգի վերջին պատմությունից, վոր լաց եյի յեղել հետը միասին: Յես ինքս ել իմ աչքովս քիչ աղեկտուր բաներ չտեսա: Այս հանգամանքն ահա լինճ մոտեցրեց լեհացիներին:

Պետերբուրգ վոր հասա, իմ սենյակս մի լեհացու բնակարանում վարձեցի ամեն ծախքով: Ընկեր ղրաչարներս նույնպես լեհացիք եյին: Իմ և սրանց մեջ այնքան սեր և մտերմություն կար, վոր հասնում եր մինչև հոպեկցության: Մեկ անգամ սրբանց մեկի ամուսնու հետ ծանոթացա դուրսը, առանց նախածանոթ լինելու: Սա մի շատ զարմանալի դեպք եր, թեև շատ բնական: Մի չահել տիկին յերկու անգամ ճանապին պատահելով՝ այնպիսի հայացք եր ձգում վրաս, լինչպես մոտավոր ապրականուհի: Սա լինճ ճանաչում է, ասացի մտքումս, բայց ո՞վ կարող է լինել, յերևի Գանակևիչի կինն է. մարդն լինճ նկարագրած կլինի, սա ել ճանաչում է լինճ: Յերրորդ անգամ վոր դեմառ դեմ յեկանք, մտքումս ասացի. յեկ փորձեմ, տեսնեմ նա՞ յե: Յես ղլխարկս վերցրի և ուղղակի հարցրի.— Դուք տիկին Գանակևիչը չե՞ք արդյոք:— Այո՛, իսկ դուք պարոն Աղայանցն եք, իմ ամուսնու ընկերը:— Այո՛:— Յես ձեզ ճանաչեցի,— ասացի,— վորովհետև Պետերբուրգում չկա մի այլ վոք ձեր տարազով և դեմքով, դուք աչքի յեք ընկնում հաղարների մեջ, բայց ինքներդ ի՞նչպես ճանաչեցիք լինճ:

— Ձեր հայացքն լինճ թելադրեց յենթադրելու, վոր դուք իմ սրտակից բարեկամի սրտակիցն եք, և յես, լինչպես տեսնում եք, չսխալվեցի:

— Մենք ամենքս, նույն իսկ յերեխեքս, ձեզ սիրում ենք առանց ձեզ տեսնելու, բայց շատ նեղացած ենք ձեզանից, վոր

մնչ չեք այցելում. ամուսինս դանդաղավոր է ձեզանից. ասում է՝ չաս անգամ եմ խնդրել, չի գալիս: Ինչո՞ւ չեք գալիս: Ձես կխնդրեմ, վոր կիրակի որը անպատճառ գաք մեզ մոտ ճաշի: Ձես կպատրաստեմ հայկական կերակուրներ...

Ամբողջ կյանքումս չեմ կարող մոռանալ այդ ճաշը, ուր յաց ու խնդում իրար խառնված տևեց վեց ժամ: Ի՛նչ ճառեր, ի՛նչ կենացներ: Ձես իմ ճառի մեջ ասացի՝— Լացը կյանքի նշան է. նորածին յերեխան յերբ լաց է լինում խնդություն, ամենքըն էլ ուրախանում են, տեսնում են, վոր կենդանի յե: Մենք հայերս պետք չենք արժանացել այդ բախտին...

Տաններիս հոգի եյինք. ամենքն էլ լեհացի եյին, միայն յես եյի ռուսը: Բայց այդտեղ ռուսը չեյի դղում ինձ, այնքան սրտանց եր ատացած համբույրներս: Կարելի բան չե, վոր այսպիսի սիրո և աննախապաշար պատվի արժանանայի յես վորևե հայկական շրջանում: Հայերը չեյին սիրում մեմյանց, փոխադարձատելությամբ եյին վարակված, մինչդեռ լեհացիք... բայց թողնենք այս. ինչ համեմատություն, և վորտեղից վո՞րտեղ:

Պետերբուրգ վոր գնացի, դիմեցի Լեմանին, ասացի՝ յեղբայրս չուտով կատողջանա և կգա, բայց յես տեղ չունիմ: Իսկույն մի նամակ տվավ և ուղարկեց մի դեղարվեստական տպարան: Տպարանատերը (Գոլովինը) ինձ մի առանձին սիրով ընդունեց. պատկերասեր մարդ եր. նա, ինչպես յես դղացի՝ սիրահարվեց իմ պատկերի վրա, համարելով կլասիկական տիպ, ցույց տավ նաև իր կնոջը, վոր նույնպես հափշտակվեց ինձանով: (Հիմա այդ պատկերի տպվերագիծն է միայն մնացել վրաս): Այդտեղ ինձ չինեցին ղվախոր ղրաչար, այլ սիրեցին այնպիսի ղրաչար, վոր իր ձեռքի տակ ունենում է տասկ չարոշներ, իսկ յերեսներն ինքն է չինում ճաշակավոր: Այս տիպխիներին ասում են մետրանպաժ, և անհամեմատ ավելի վարձ է ստանում, քան տասկ չարոշը: Այստեղ յես լավ եյի վարձատրվում, բայց դործը շատ աշխատանք եր պահանջում, իսկ յես ժամանակ չեյի ունենում ինքնակրթությունս չարունակելու: Կրկին անդամ գնացի Ակադեմիայի տպարանը, դիմեցի ղվախոր կառավարչին:— Թեպետ,— ասացի,— յես յեղել եմ այստեղ և դուրս յեկել, վորի համար ինձ այլևս չեն ընդունում, բայց խնդրում եմ, վոր ինձ բացառություն հատարեք, վորովհետև յես իսկապես ղրաչար չեմ, այլ ուսանող.

պատրաստվում եմ քննության տալու, բայց վոչ մի նյութական հնար չունենալով, դրաչարությամբ եմ պահում ինքս ինձ: Ձես խնդրում եմ, վոր ինձ ընդունեք իբրև ազատ դրաչար, ընդհանուր կանոնից դուրս, և թույլ տաք մինչև անդամ, վոր յես միայն մինչև կեսոր պարապեմ, իսկ կեսորից հետո պրպտվեմ իմ դասերովս: Այս մարդը թեպետ դարձյալ պերմանացի յեր, բայց այս անդամ դերմանացու անպիտություն ցույց չտվավ և ինձ ընդունեց կրկին անդամ իմ ուզած պայմանով:

Քիչ աշխատելով՝ քիչ եվ վարձ եյի ստանում: Ծախքս չափավորելու համար, դուրս յեկա սենյակիցս և այնուհետև անկյուններ եյի վարձում ամենեքեն քնակարանում: Վորքա՜ն վիպական նյութերի տպավորություններ եմ ստացել յես այդ հաչախավոր անկյուններից:

Մեկ ձմեռ այդպիսի մի անկյունում մրսեցի և հիվանդացա: Կարծելով վոր տիֆ կլինի կամ տիֆ կդառնա և ինձ կտանի դեպի հավիտենականություն, դլուխս տաքցած ժամանակ յերևակայությունս եվ տաքցավ, սկսեցի մի չատ յերկար վոտանավորով դլխովս անցածը նկարագրել, վոր հիշատակ մնա: Հիվանդությունս ստստկացավ, ինձ տարան հիվանդանոց: Այստեղ յերկու չաբաթ մնալով՝ առողջացա: Արձակելիս ինձանից վոշ ուզեցին. ասացի՝ չունիմ, և ինձ ազատ թողին, վերցրին միայն իմ անցագրի հասցեն: Գրել եյին մեր պատասպետին և նա եվ մեր տանից պահանջել եր 15 մանեթ, թե ձեր տյան Պետերբուրգում հիվանդանոցումն ե յեղել, նրա վարձը պետք է տաք: Ինձ ծնողքս կարծել եյին, թե յես հիվանդանոցում մեռել եմ, ընկել եյին սուգի մեջ:

Հիվանդանոցից վոր գնացի անկյունս, եվ վոտանավորս չկտա: Հրեուհի տանտիկինս՝ անպետք բան համարելով՝ ձգել եր հնոցը:— Ձես չվիտեյի, վոր դուք դրող եք և այն եվ բանաստեղծ— սրդտարացրեց իրան պարզմտությամբ և ա՛խ, ա՛խ անելով,— ձեզ կվարձատրեյին անշուշտ նրա համար, և դուք եվ կվճարեյիք մեր ճաշի և անկյունի վարձը, ախո՛ս, ախո՛ս...

Հիրավի այդ ժամանակ նյութական նեղ վիճակի մեջ եյի, բայց Միքայելս անհայտաղ ոգնության հասավ: Ձես վորձեցի նորից դրել նախկին պռեմաս՝ չատ բան եր միտս, թե ինչպես եյի դրել, իսկ նյութն արդեն ծանոթ եր: Մինչև յերեկո դրեցի, իսկ յերեկոյին գնացի ինձ վաղածանոթ մի հայ ուսանողի

մոտ, որը հիվանդ էր թոքախտով և պառկած: Սա էր Հովսեփ Անանյանը, մի շատ ընդունակ երիտասարդ, համալսարանի մաթեմատիկական բաժնում: Զուրկ լինելով նյութական ոգնությունից, նեղություն շատ քաշեց և վերջը թոքախտ ստանալով՝ այստեղ էլ մեռավ:

Հովսեփը պառկած էր, իսկ հես մոտը նստած խոսում էր: Այս մի ջոգին նեղս հեկավ կէց սենյակից մի երիտասարդ, դլխին մեր թարաքյամանների մոթալ փափախներից մեկը ծածկած, նախշուն և վառվռուն աչքերով: Հովսեփը ծանոթացրեց, ասելով նիազ ձայնով.— Ռուբեն Զալալյանց և Ղազարոս Աղայանց:

Ռուբենը ձեռքս բռնեց և մոտս նստեց լուռ ու մունջ. հես նրան ուսանողի տեղ չդրի: Հովսեփին արդելված էր խոսելը. հես չարունակեցի իմ խոսակցությունը, որը մի տեսակ բողոք էր հայերի դեմ Նազարյանցի մեթոդով:

Վերջը Ռուբենն սկսեց խոսել, որից հետևաց, որ մոթալ փափախի մեջ պատսպարված և մի հրաշալի դլուխ:

Դուք շատ սխալվում եք,— ասաց,— այստեղ կան և շատ լավ հայեր, որոնք ձեզանից ավելի հեն տատում ձեր տատի մարդկանցը: Վորպեսզի ապացուցանեմ ձեզ, որ դուք սխալվել եք, հենց այս երեկոյես հես ձեզ կտանեմ լավ մարդկանց մի շրջան:

— Շնորհակալ եմ,— ասացի,— եթե կան, կհանդիպեմ մեկ անգամ:

— Վո՛չ, հենց այս երեկոյին. հես այս րոպեիս կհաղնվեմ և միասին սահնակ կնստենք կերթանք:

Ռուբենը դնաց հաղնվելու, իսկ Հովսեփը հայտնեց ինձ, թե այս երեկոյին ղրական ժողով ունին ուսանողները պ. Ցեղյանցի տանը. այնտեղ և ուղում տանել քեզ: Գնա՛, վատահ չեղիր, մի վախենար. Ռուբենին հավատա՛, շատ աղնիվ տղա չե և մոտ լեռանդ հայրենասեր...

Ռուբենն ինձ տարավ պ. Ցեղյանցի տունը, ուր հետզհետե հավաքվեցին շատ ուսանողներ: Դրանցից վոմանք իմ պատանեկության ընկերներն էյին և շատ ուրախացան ինձ տեսնելով: Ռուբենն ինձ ծանոթացրեց ամենքի հետ էլ և ամենքն էլ սիրալիր ընդունելության ցույց տվին: Պարոն Ցեղյանցը, յերևի Ռուբենից տեղեկություն քաղելուց հետո, ինձ վրա առանձին ուշադրություն դարձրեց: Մեկուսացրեց մի այլ սենյակ, խոսեցրեց, և յերևի մի վորևիցե պաշտպար կաղմեց իմ մասին, ղոնե կենկատեր, թե չես ինչպես եմ խոսում հայերեն, վոր այդ ժամանակ նշանակություն ուներ: Կարդաց և կարդացրեց Ալիշանի վոտանավորներից, իբր թե նրա համար, վոր տեսնեմ թե ի՛նչ հրաշալի բանաստեղծություն է: Այս մարդու վարմունքը ինձ հետ պարզ չեր:

Թեյ բաժանելին չամպայնի բակալների նման բաժակներով. սկսվեց ընթերցանությունը: Այդ յերեկոյին կարդացին յերեք հոդի: Նախ կարդաց Յեվանդուլյանցը իր աշակերտական հիշողությունները, որը հետո տպվեց «Մեղվի» մեջ: Նրանից հետո կարդաց Ա. Բաբայանցը մի թարդմանություն Հեյնեյի բանաստեղծություններից: Սա այն ժամանակ համալսարանի լեզվաբանական բաժնումն եր: Բաբայանից հետո կարդաց Ա. Արծրունին:

Ընթերցմունքն ընդհատվում եր ընդմիջումներով: Ընդմիջումներում անց ու դարձ եյինք անում ընդարձակ սենյակներում. մոտ եյին բերում մրգեղեն, լավ տանձ ու խնձոր: Անդրեաս Արծրունին ածում եր դաշնամուրի վրա:

Ամեն մի հոդված կարդալուց հետո քննադատում եյին նույն դրվածը մանավանդ լեզվի կողմից, որ դլխավոր նպատակն եր ժողովների: Այդ կարծիքներն արձանագրվում եյին: Արձանագրությունը կարդացվում եր հենց նույն յերեկոյին ժողովի վերջանալուց հետո:

Պ. Ցեղյանցը ինձ մեկուսացրել եր մի ուրիշ սենյակում, յերբ զանդը տվին և նիստի հրավիրեցին անդամներին:

— Գնանք,— ասաց պ. Ցեղյանցը,— արձանագրությունը պետի կարդան, լսենք, տեսնենք ինչ են դրել:

Ռուբենը կարդաց արձանագրությունը կարդացած հոդվածների մասին: Վերջում էլ կարդաց մի այսպիսի բան. «Այս յերեկոյին անդամների մեծաձայն հավանությամբ պ. Ղազարոս Աղայանցը ընդունվեց ուսանողական ժողովի անդամ»:

Արձանագրության այս կտորը ընդունվեց բուռն ծափահարությամբ: Պ. Ցեղյանցը ձեռքս սեղմեց, շնորհավորեց և ասաց. «Հուսով եմ, որ յեկող ժողովին դուք էլ մի բան կբերնք կարդալու»...

XIV

Ուսանողական ժողովի անդամ ընդունվելս այնքան անակնկալ եր ինձ համար և հանկարծական, որ չկրե լսեցի արձանագրությունը, քիչ մնաց ուշաթափվելի խնդությո և վայր կընկնեի, չեթե չբռնեի սեղանի մեջքից:

Շատ հետո չես հանդիմանեցի Ռուբենին, որ չատ անըզգույշ վարվեց:— Մենք ամենքս էլ նկատեցինք,— ասաց Ռուբենը, որ դու չատ ղղացվեցար, բայց չէիմնք կարող իմանալ դրա չափը:

Ժողովից հետո չես և Ռուբենը միասին դնացինք տուն: Ամբողջ ճանապարհին չես լուռ եյի, ել այս աշխարհում չեյի և չեյի իմանում, ինչ եր խոսում Ռուբենը: Հենց որ հասա հըրաչակավոր անկյունիս սենյակը, ուր դիշերը չես մենակ եյի լինում, որտեղհետև տանտիրոջս արհեստանոցն եր և մոչ ննջարանը, չես բերանքսխմայր ընկա մահճակալիս վրա և մի կուչ լաց ելա: Այսպես թեթևացնելով լցված սիրտս, վեր թռա տեղիցս և բացականչեցի.

— Ցնս պետք է գրեմ, այո՛, պետք է գրեմ... այս ի՞նչ բան է, որ գրել եմ: Վերջը գրած վոտանավորս և կատ-կատոր արե: Ցնս հիմա ել այն չեմ, ինչ որ քեզ դեռևիս. հանուք մասխարության և, ի՞նչ է՝ լինել ուսանողական ժողովի անդամ...

Ցեվ սկսեցի գրել իմ «Աբուքյուն և Մանվել»-ս, որի մեջ ուղեցի դուրս բերել ինձ, չմոռանալով և իմ Միքայելին, որին չկինեցի Մանվել: Զգրեցի «Հարություն», այլ «Աբուքյուն» իբր արևուքյուն, այրուքյուն, քաջուքյուն, այդ հատկուքյուններըը դանելով հերոսիս մեջ:

Այս վեպը գրելիս՝ չարունակ հուզված վիճակի մեջ եյի: Գործող անձինքներիս լացի հետ լաց եյի լինում, ծիծաղի հետ ծիծաղում, բարկացողի հետ բարկանում բնական կերպով: Այս պղացմունքով չեթե բեմի վրա մի դերի մեջ լինեյի, ումի որ ուղում եյի սպանել, վոխանակ սպանել ձևացնելու, ուղղակի կըսպանեյի: Նկատում եյի սակայն, որ անկյունիս տերերը՝ մարդ ու կնիկ ապշած եյին մնացել իմ տարօրինակ վարմունքի վրա և չերևի կարծում եյին, թե ուր վոր է, չես պիտի դժվեմ և հիվանդանոց տանելու դառնամ: Սակայն չես այնքան հափշտակված եյի իմ գործովս, որ դրանց վրա ուշադրություն դարձնել չեյի կարող. աղատ եյի ամեն տեսակ կաշկանդող կապանքներից: Այս վիճակում մնացի չարունակ յոթին որ, և հենց այդքան որում ել վերջացրի գրելիքս: Գրիչս չեր կարողանում հասցնել թղթին ղղացմունքներիս բուռն ու արագ հոսանքը: «Ցերանի քառասուն ձեռք ունենայի այս բոպեիս», ասում եյի չես: Վիպագրողների և բանաստեղծների մեջ այս չերևույթը արժանի չե խորին ուսումնասիրության հոգեբանների կողմից: Սա խելացնորություն է արդյոք, ինչպես շատերը կարծում են, թե՞ ներշնչություն կամ վոգևորություն,— այդ չի դիսավորը, այլ ինչ հանգամանքից և առաջ գալիս և ինչո՞ւ միշտ ել չի կրկնըվում: Այս վիճակի մեջ չես միայն մեկ անգամ եմ յեղել, բայց վոգևորվելով շատ անգամ եմ վոգևորվել: Այս բանը չես այսպես եմ բացատրում: Ցերբ ապաշորություններըը չափից դուրս շատանում են, նրանք արտաբղխում են չափից դուրս ցորեղ հոսանքով: Այս որինակը նկատում ենք հոգու և բնության մյուս չերևույթների մեջ ել: Մի տեղից աղբյուր է բղխում հանկարծ, հեղեղ է լինում, զանազան չերկրային վիճակներ են լինում: Դրանց բոլորի ուժը կախված է այն առատությունից, որ ունին նրանց ամբարները՝ փակված ավազանները, պահպանող ամբարտակները: Ծնունդը, ինչպես և բղխումը, պետք է դուրս գա մի փորևե կեղևից, իր ուժով բանալով այդ կեղևը, ինչպես ձագուկը ձուն կամ արգանդը: Մեկ որվա կարոան այն ուժը չունի, ինչ վոր տասն որվանը, իսկ տասը տարվանն ավելի առատավոր է: Մի որական չերեխայի մահը այն կսկիծը չի պատճառում, ինչ վոր մի տարեկանինը, իսկ քսան տարեկանինը՝ ավելի ևս: Այդպես են բոլոր հոգեկան զղացումներըը: Ժամանակի ընթացքում դրանց հավաքվիլը ահագին ուժի չե հասնում և արտահայտվելիս քարոզչանդ անում իր բնի չորս կողմը: Կարող է պատահել, որ այսպիսի ծնունդը առաջինը և վերջինը լինի, ինչպես Աբովյանցի «Վերք Հայաստանի»-ն:

Ցերբ գրածս պատրաստ եր և արտագրելու ել կարոտություն չունեի, չես հոգով հանգստացեյա, բայց շատ հոգնած եյի և չարդված, ինչպես մի հիվանդագարձ, կամ ինչպես իր անդրանիկ ծնունդից նոր ազատված մի մայր: Վեր առա ծնունդս և տարա տվի Ռուբենին, որ նա մկրտի: Սիրտ բանը ցրիվ ծնելը չէ, այլ ծնածն է: Թզուկը կարող չե հսկա ծնել, իսկ հսկան յերբեմն թզուկ է ծնում:

— Ահա մի բան եմ գրել,— ասացի,— առաջ դուք կարդացեք, յեթե կտեսնեք, որ արժանավոր բան չէ, դուրս չերեմ ժո-

ղովի մեջ և չխայտառակվիմ։— Կարդացեք,— ասաց,— յես կլսեմ։ Յես կարդացի մի դլուխ։ Ռուբենը հափշտակվեց, և վորքան առաջ դնացինք, այնքան սաստկացավ նրա հափշտակությունը, և վերջումը բացականչեց.

— Դու մի այնպիսի բան ես դրել, վորի դինը ինքդ դեռ չես կարող իմանալ։ Յես չափից դուրս ուրախ եմ. դա մի կարգե դուրս բան է, մեր դրականության մեջ նմանը չկա։

Իհարկե ուրախ կլիներ Ռուբենը, վորովհետև յես իր սրած դյուտն եյի, բայց յես էլ պակաս ուրախ չեյի իմ գտնվելուս համար։ Ռուբենի հավանությունը ինձ սիրտ ու վստահություն տվավ, վոր ավելի լավ կարդամ։

Առաջվա ժողովը շատ բազմամարդ եր։ Լսել եյին, վոր մի նոր բան պիտի կարդացվի, յեկել եյին և կողմնակի լինելիգեն մարդիկ հատկապես ինձ տեսնելու և լսելու։ Սկսեցի կարդալ և նմանը չտեսնված ընդունելություն դտավ։ Մի դլուխ ծափահարում եյին և զանազան բացականչություններ անում։ Գլխավորն այն եր, վոր այդ բոլորն անկեղծ եր, բղխում եր աղնիվ սրտերից։ Այդպես կարող են լինել միայն ուսանողները իրանց իդեալական աշխարհում յեղած ժամանակ։ Վերջում ամենքն էլ ձեռքս սեղմեցին և շնորհակալություն հայտնեցին։

Պարոն Յեղյանը շնորհավորելով ինձ, հայտնեց և այսպիսի բան.

— Պարոն Սանասարյանցին դուք շատ դուր յեկաք և նա ասաց ինձ, վոր կհոդա ձեր ուսման ծախքը, վոր դուք բոլորովին նվիրվեք ուսման, պատրաստվեք քննության տալու և մըտնեք համալսարան։

— Յես չեմ կարող,— ասացի,— այդ պայմանը հանձն առնել, միդուցե չկարողանամ կատարել և ձեղ մոտ սևերես մնամ։ Յես մի բան կխնդրեմ ձեղանից. առաջարկեցեք, վոր յեկեղեցուս ինձ յերգելու պաշտոն տան, և մի թեթև ռոճիկ դրա համար, ինչպես այդ անում են շատ ուսանողների, վորոնք յերգել էլ չգիտեն, իսկ յես լավ գիտեմ։

— Շատ լավ,— ասաց.— յես այդ մասին կխոսեմ Սուլթան շահին (գեներալ), նա ավելի մոտ է Լազարյանին. բայց դուք մեկ ծանոթացրեք ձեզ, դնացեք մեկ անդամ յերգեցեք։

Այս անցքից հետո ինձ և Մարտիրոս Սիմոնյանցին ընտրեցին «լեզու մչակող». մենք պիտի սրբագրեյինք մյուսների դըրածներն ու թարգմանածները։

Մյուս շաբաթ որը յես առաջին անդամ դնացի հայոց յեկեղեցին։ Յեկեղեցի չդնալուս պատճառներից մեկն էլ ահա ինչ եր. Մոսկվա նոր յեկած ժամանակս մի որ դնացի ժամ։ Իրրև հաջողակ ձայն ունեցող և չարական դաս առած մարդ, ուղղակի դնացի հոդևորականների դասը և առաջարկեցի ավազ քահանային, վոր թույլ տա ինձ չափիկ հաղնել և յերգել, վոր հայ յեկեղեցու սովորությամբ վոչվոքի չի մերժվում։ Բայց հայ քահանան կոպտությամբ հրնդեց ինձ, ասելով.— Ի՞նչ հարկավոր է, դու ո՞վ ես, դնա՛, դնա՛... Յես հեռացա, բայց ժամն էլ չկանդնեցի և այնուհետև էլ ժամ չդնացի, ասելով ամեն մեկին՝ «այստեղի ժամն էլ չէ ժամ յեղել, հայն էլ վո՞րտեղից հայ կլինի...»

Պետերբուրգի յեկեղեցում Մոսկվայի հակառակ ընդունելություն դտա։ Յերևի բախտս անիվը շուռ եր յեկել և ամեն ինչ պատրաստ եր դեպի աչ։ Այստեղի ավազ քահանան տեր Գրիգորյանն եր։ Սա նույնպես ներկա յեր նախընթաց դրական ժողովին։ Ամենքը գովում եյին իմ դրվածքը, իսկ սա՝ իմ հասակը, մոտը և ասում եր.— «Մեր Տիդրան Հայկազնին կնմանի», կարծես Տիդրանին տեսած լիներ։ Սա մի պարթև հասակով մարդ եր և շատ բարի, դրեղ էլ ձայն ուներ։ Ինձ սիրով ընդունեց, չափիկ հագցրեց։ Յերևելի ձայնավոր Սուքիասյանցին խնդրեց, վոր նույն որը ղպրության յես անեմ, ինքը մխայն ձայն պահի, դիրքն էլ յես կարդամ։ Նույն որը ժողովուրդ չկար, բայց մեկը կար իր ամուսնու հետ, վոր ամբողջ ժողովուրդ արժեր իմ նպատակի հաջողության համար։ Դա եր ինքը Լազարյանը, իր տոհմի վերջին ծերունի չառալիղը։

Ժամերդության հետևյալ յեր. կարոտել եյի, շատ ժամանակ եր ժամ չեյի տեսել, բոլորի վրեժը այսոր լուծեցի, վհատած առա։ Գիրքը կարդացի աքանչելի առոդանությամբ։ Յերբ վերջացրի, ինձ տարան ավագ քահանայի մոտ, վոր պատարագը վերջացավ, դնդապետ յերեցփոխը մոտեցավ ինձ և շատ քաղաքավարությամբ, ժպիտը բերնին՝ ասաց,— Վեհապետը կամենում է տեսնել ձեզ. հրամայեցեք վերև դնանք։

Վեր բարձրացանք վոտաբոր սանդուխքներով և հասանք մինչև ընդունարան։ Այստեղ դիմավորեց ինձ բարեսիրտ ծերունին, վորին խոր դլուխ տվի, մի հինդ րոպե խոսեց հետս, ասելով, վոր ինձ շատ հավանել է, և խնդրում է, վոր չաբաթ վերակի ժամումը յերգեմ։— Դուք ռոճիկ կստանաք,— ասաց,— և բնակարան, իսկ այս առեք ձեղ առ ժամանակ։— Այս ասե-

լով ուշավ լինճ մի նամակի ծրար: Ցես առա, պլուխս վեր բերի, և դուրս յեկա լուռ ու մունջ: Ի՞նչ խոսեյի, լինճ բան չհարցրեց, վոր պատասխան առմ:— Յերևի,—ասացի մաքուռա,— դեներալ Սուլթան չահը, պ. Յեղյանցի առաջարկությամբ, լինչ վոր ասելու յե, ասել եր: Յեվ այդպես ել եր, լինչպես առաջ դեպի հետո:

Յերբոր հեռացա, ծրարը բաց արի, մինչին քանըհինդ մանեթ դառ: Կյանքիս մեջ առաջին անդամն եյի ծրարով փող առանում, այն ել ընճա:

Ասած ե՝ «Աղան վոր ձեթ առ, վիշդ դեմ արա», իսկ քանըհինդ մանեթը ձեթ չեր և լինճ շատ հարկավոր եր: Նույն որը լինճ սենյակ ավինի, և յես իմ հրեական անկյունից տեղափոխեցա հայկական յեկեղեցու դավիթը:

Մյուս որը Մ. Սիմոնյանցը, վոր Ներսիսյան դպրոցում իմ դասընկերն ե յեղել և դրացի, ըներավ մի ձեռք հագուստ, լինճ համար շատ թանկագին, ասելով, վոր պ. Մովսես Բուդաղյանցն ե ուղարկել քեզ ընճա: Ցես չեյի ուզում վերցնել, բայց Մարիոան լինճ հանդիմանեց ընկերաբար, թե այն մարդը իրրև վոզորմություն չի ուղարկել, նոր հագուստ ե առել քեզ համար, նա քեզ շատ սիրեց, լինքն ել ե բանաստեղծ, յերեխ չընդունես, նրան վիրավորած կլինես:— Շատ յավ,— ասացի,— կընդունեմ, բայց վերևս չի պատիվ, վոր դամ նրան շնորհակալություն անեմ, յես կամաչեմ:

— Այդ հարկավոր չե,— ասաց,— յես քո փոխանակ շնորհակալություն կանեմ:

Այսպես՝ ահա ամառակա նշանակեցին յերեսուն մանեթ. քիչ հետո չինեցին քառասուն, մինչդեռ իմ պաշտոնակից յերկու ուսանողներից մեկին առանում եր 10 մանեթ, մյուսը՝ 15: Հոդևոր կոչում ունեցողները լավ ռոճիկ ունեյին:

Յեկեղեցուն ընդունվելուս լուրը հաղորդեցի պ. Յեղյանին, պատմելով, վոր լինճ շատ հավանեց վեհապը:

— Այո՛,— պատասխանեց Յեղյանցը,— յես դիտեյի, վոր նրանք շատ կհավանեն... ձեր փառավոր մորուքին...

Պարոն Յեղյանցի նկատողությունը շատ ուղիղ եր, թեև յերկիծական: Նրանք գնահատեցին իմ արտաքին հանդամանքները և վոչ ներքին: Արտաքին բարեհաջող հանդամանքներով արվել դյուրին և մեծամեծների չրջանը մտնել, քան թե ներքին: Ցես ունեյի այդ բարեհաջող հանդամանքը, բայց բնածին բարոյական հակումներս չնորհիվ պայթակղեցուցիչ վոդուն գլուխ չտվի: Բնավարքիայի թեմի ժամանակավոր կառավարիչ Յեղիազար յեպիսկոպոսը յերբոր յեկավ Պետերբուրգ, այնպես սիրահարվեց իմ արտաքինով, վոր իսկույն մի ուրախ ձգեց ուսիս:

— Ձեմ ուզում,— ասացի,— սրբազան հայր, յես հոգևոր կոչում չունեմ:— Շատ մի՛ խոսիր,— ասաց,— չոքիր առաջիս. լինճ խնդրում են, վոր յես այս քոռ ու քաչալներին տերտեր չինեմ. ասածուն հաճելի յեն միայն քեղպեհները:

Ձընդդիմացա, ընդունեցի ուրարը: Այս բանը շատ դյուր յեկավ վեհապնին: —Մենք քեզ քահանա չենք չինիլ,— ասաց,— այլ վարդապետ և հետո ել յեպիսկոպոս...

Իմ պաշտոնակից Մ. Տեր-Գրիգորյանը (կոմբի թարգմանիչը), վորի հանդգնությունը մինչև ծայրահեղության եր հասնում, խսկույն միջամտեց և ասաց.

— Հետո ել կաթողիկոս, վեհապն տեր...

Վեհապնը յեկեղեցու պաշտոնյաներիս առնչ-առնչ ճաշի յեր հրավիրում, ուր դրսի հայերից ներկա յեր լինում միայն դենեբալ Սուլթանչահը: Այս ներքաստանական ճաշերին յես այնպես եյի լինում, լինչպես ասեղների վրա նստած, լինճ կոմպլեմենտներ եյին անում և յես շատ ամաչում եյի պատասխանել, դանակ ու պատառաքաղը ստեպ-ստեպ ձեռքիցս թռչկոտում եյին այս ու այն կողմ: Շատ ուշ ընտելացա այդ բանին: Ախր ո՛ւր Մոսկվայի ամառական յերեք մանեթանոց ճաշը և ուր պալատական լակեյների ձեռքով ընդունածը:

Այդ ճաշերն լինճ դուր չեյին գալիս, վորովհետև այդ մի պատիվ չեր, այլ վոզորմություն, բայց չեյի կարող մերժել: Դուրս գալիս սովորաբար առանում եյինք և ընծաներ մի-մի ծրարով: Իմ առացածը միշտ ավելի յեր լինում, քան Տեր-Գրիգորյանինը. նրա ծրարից դուրս եր գալիս առաուավելն 10 մանեթ, իսկ իմից յերեսուն, բայց միասին եյինք ուտում, թատրոն դնում և այլն:

Վորովհետև այս բոլորը յեղավ «Աբուլթյան և Մանվել» վեպիս չնորհիվ, հարկավոր եմ համարում մի յերկու խոսք ել այդ վեպի ուղղության մասին դրել:

Վոմանք այն միտքը արտահայտեցին ընթերցող հասարակության մեջ, վոր իբր թե իմ աշխատությունը մի հետևություն և անմահ Աբովյանցի վեպի: Այդպես չե: Նրա 1) «Վերք Հայաստանի» մի վոզբ ե, վոզբ հայրենիքի թշվառության վրա, վոզբ

հայրենասերի, բվիսած մի ղպայան սրտից, զարդացած ուղեղից: «Արութիւն և Մանվելը» բերում է մի բոլորովին նոր ուղղութիւն, բոլորովին ինքնուրոյն: Սա մի պատերազմ է հայնում հին դաղափարների, հին դասախարակութեան դեմ, վորոնց վրա չի վողբում, այլ հարձակվում և անխնա և նրանց տեղը տարածում նորը և լավագույնը: 2) Լեզվի կողմից էլ այս վեպը նույն նորութիւնն է բերում, վոր հեղինակին խոսեցնում է մաքուր դրական լեզվով, միայն զործող անձերին և թույլ տալիս, վոր մոտավորապես իրանց խոսելու վոճով ու բարբառով հանդես դան, ինչպես այդ թույլ են տալիս առաջ դրողները: 3) «Վերք Հայաստանի»-ի մեջ սուրբն և անսուրբը, ռեալիզմը և իդեալիզմը խճողված են իրար հետ, մինչդեռ «Արութիւն և Մանվել»-ը իրականի նկարչական պատկերն է դնում ընթերցողի առջև: 4) Գեղարվեստական տեսակետից «Վերք Հայաստանի»-ն սրտի խորքից բղխած մի բնական ժայթքումն է, հեղինակը միտք չի ունեցել իր չենքի պեղեցկութեան վրա ուշ դարձնելու: Իսկ «Արութիւն և Մանվել»-ի մեջ ամեն մի դլուխը մի նկարչական ամբողջութիւն է. բոլոր դլուխներն ի միասին կազմում են պատկերների մի կարդ: 5) Հերոսն այստեղ զարդացման ճանապարհի վրա չի դրված, սրա համար այս վեպը կարող է չարունակվել հեղինակի զարդացման հետ և դառնալ մի կենսագրութիւն՝ ժամանակակից անցքերի հետ կապված: Իմ «Մի յերես նորադույն պատմութիւնից» հոդվածը, վոր տպվեց «Դրական Հանդես»-ի մեջ, վորից արտասպվելով ձրի բաժանվեց իմ դրքի բաժանորդներին, պետք է մտներ «Արութիւն և Մանվել»-ի մեջ, բայց ինչ-ինչ պատճառներով այդ չհաջողվեց և յես տպվելուցս դանազան վերլուծութիւններով տալել առանձին: «Արութիւն և Մանվել»-ը վեպ անվանել անդամ կարելի չէ, բայց վոր մեզանում տալում է, դրա պատճառն այն է, վոր մենք վիպական դրվածների ամեն ձևի համար ջոկ բառ չունենք: Իմ առաջին նկարչական ամբողջութիւնդ դրած վեպը «Ցերկու քույր»-ն է: «Արութիւն և Մանվել»-ն այդ ամբողջութիւնը չունի, և կարող չէ ունենալ, վորովհետև դա մի պատկեր չէ, այլ թանգարան պատկերների: Դրա նախադիծն այնպես է կազմած, վոր ժամանակով այս աշխատութեան բովանդակութիւնն էլ պետք է մտներ նրա մեջ: Շատ անգամ մի բան ուղեցել եմ տեսնել կամ անել, ասելով. «սրան նույ Արութիւնիս մեջ մի դլուխ էլ կավելանա»: Փորձը ցույց

տվավ սակայն, վոր այս նախադիծն անիրադործելի յե պեղարվեստական տեսակետից: Հայտնի անցքերի մեջ դործող անձը անհայտ մնալ կարող չե, մինչև հեղինակը չհեղվի քնարկանից ու իրականից և չսահեցնե տիպերի և անցքերի մի խառնուրդ. իսկ յես չուղեցա անել, աղդային սուրբ պատմութեան ոդնելու նպատակով:

Կրիտիկան տեսակետից՝ իմ վեպն ունեցավ իր սքանչելի աղդեցութիւնը նոր սերնդի վրա, թեև ամենից չատ չահվողները հավի նման կտուցները դետին քսեցին, իբր վոչինչ չկերած: Այդ վեպով ժողովուրդը ծանոթացավ նոր սերնդի հառաջադեմ մտքերի հետ, իսկ նոր սերունդը ժողովրդի մտավոր ու բարոյական կողմերի հետ: Սրանից ավելին թող դատե կրիտիկոսը, վոր անչուշտ ի նկատի կունենա և մեր վիպագրութեան զարդացման պատմութիւնը սկսած Թադիադյանից, ցույց տալով, թե ո՛վ ի՛նչ նորութիւն է ներս բերում, վո՛րն է հետևողութիւն և վորը՝ ինքնուրոյն:

XV

1864 թվականի վերջին և 1865 թվականի սկզբի ամիսները Պետերբուրգի մտավոր կյանքի վերածնութեան ամենաթունդ ժամանակն էր:

Ինչպես գարնանամուտը ավելի քնքույշ ծաղիկներ և բուսոնում, իսկ ամառնամուտը սար ու ձոր լցնում է ամեն տեսակ՝ լավ ու վատ, կոչտ ու քնքույշ, հոտավետ ու անհոտ բույսերով, այնպիսի մի ամառն էր ներկայանում Պետերբուրգի այդ ժամանակվա մտավոր կյանքը: Հնութիւնն ու նորութիւնը պատերազմ էին հայտնել իրար դեմ, սրանք էլ՝ դարձյալ բաժանված դանազան ճյուղերի՝ անխնա հարձակվում էին միմյանց վրա, ամեն ինչ քննադատում, ամեն խոսքար վարադույր յետ քաշում: Արևմտյան Եվրոպայի լուսավոր մտքերի առջև դըրված թումբը քանդվելով՝ այդ քաղաքը հեղեղվեց նորանոր դաղափարներով: Դա յեր առաջնակարդ թարդմանական դրականութիւնը, վոր յուրաքանչյուր օր ուսանյակ հատորներով եր դուրս դալիս: Մարդ չէիլվում եր, չգիտեր վորը կարդա և վորը թողնի, քանի վոր մեկը մյուսից դարդացուցիչ եր, մեկը մյուսից գրավիչ: Դուրս յեկավ Բոքլը և ահագին հեղափոխութիւն

ձգեց, վոչ միայն իր դրքույքը, այլև իր անձնուքը: Այդ մարդը համալսարանի յերես չեր տեսել, ուրեմն կարելի յե յեղել յերես-վելի հանդիսանալ և առանց համալսարանի: Այդ համոզմունքը հաստատեց Սմայլսի «Ինքնօգնութիւնը»: Սա հաղարավոր կեն-սագրական վառաերով ցույց տվեց, թե մարդս ի՛նքը կարող է միայն զարդացնել իրան, թե՝ ուրիշի ողնութիւնը պակասեց-նում է ինքնօգնութեան ուժը: Այս ոլինակները ծայրահեղ եյին և միակողմանի, բայց շատ դայթակղական եյին:

Ինքնակրթութեան ախտով յես արդեն վարակված եյի բնա-կանից, հարկավոր չեր, վոր այդ բանը սովորցներ ինձ Բոքլը կամ Սմայլսը, բայց դրանցով յես ավելի վոգի առա, չկորցնե-լով իմ ինքնուրոյնութիւնը: Մեր կյանքի տեսակետից յես համաձայն չեյի Սմայլսին: Յեվ ահա ինչո՛ւ: Վոչինչ չի դար-դանում առանց անունդի. ինչպես բույսն իր անունդն է պահան-ջում, նույնպես պահանջում է և միտքը: Յես ի՛նչպես ինքնա-կրթվեմ հայկական չոր անապատում, ի՞նչ անունդով: Անունդ չեղած տեղը պարպացումն ինքն իրան կվինի: Անդլիայի մտավոր առատ և ճոխ անունդը կարող է Բոքլներ հառաջացնել, իսկ հայկականը...

Մեղանում մի առած կա. ասում են՝ «կճուճը թող ելավ, խոսիը դառավ»: Թող ելած կճուճը կարող է և կոտրվել կամ չը-դանել իր խոսիը: Յեթե թող անես մի մաղնիա, նա, վորտեղ յերկաթի փշրանքներ կան, իրանից կկպցնե կամ ինքը կկպչի ի-րանից զորեղ յերկաթին: Բայց կարող է պատահել, վոր փշը-րանքներ չգտնի. բանական չե ուրեմն, վոր մարդ մեղվի նման պանազան ծաղիկներից հյութ ժողովելու և քաղցր մեղր վինելու հատկութիւն ունենա, հարկավոր են և ծաղիկները: Բնու-նը կենդանուն չի ստեղծում նախքան նրա անունդը, ընդհակա-ռակը՝ անունդն ինքն իրանից արտադրում է կենդանի:

Ասած է՝ «Զորին Հաչ դնալով՝ հաչի չի դառնալ»: Պաչա-պանելով անունդի անհրաժեշտութիւնը, կարելի չե ուրանալ և անհատի աննդատութեան գործարաններից առողջութիւնը, նրա աճելու ընդունակութիւնը և բեղմնավորութիւնը: Այդպես վոր չլիներ՝ անունդի առատ տեղում հանճարները բանջարի պես կը-բուսնեյին, կրթվելու համար Յեվրոպա դնացողները բոլորն էլ կվերադառնային մի մի կանա ու կոնա դառած, ընդհակառակը չատերն սատանքան են խանդարում և այնպես վերադառնում, չատերն էլ իրանց ուղեղը. դնում են ուչով և վերադառնում

ապուչ. հեղինակի դիտութիւնը բերելու տեղը, նրա սոսկ ա-նունն են բերում:

Չեմ կարող ուրանալ և թաքցնել մեղքս: Յես վարակվեցա իմ չրջանի ընդհանուր ախտով, վորով և ընկա ես, Յեղյանցի աչքից: Ինձ դուր չեյին գալիս նրա կրոնական գաղափարները, նրա կղերական ձգտումները: Ինձ առաջարկում եր, վոր յես թարգմանեմ Ներսես Շնորհալու «Ընդհանրական»-ը: Յես չհա-մաձայնեցի, առարկելով՝ վոր մեր ժողովուրդն այդ տեսակ դրքերի կարոտութիւն չունի, նրա մեջ պետք է տարածել բո-նական դիտութիւնների տարերքը, վոր նա բացատրել կարո-ղանա բնութեան յերևույթները և ազատվի իր դարավոր նախա-պաշարումներից: Սրանից ես. Յեղյանցը յեզրակացրեց, վոր իբր թե յես յենթարկվել եմ զանազան իզմերի և իստերի կարգն եմ ընկել: Պր. Յեղյանցը նկատեց նաև, վոր համալսարան մըտ-նելուս վտիտը թուլացել է իմ մեջ, և այս ավելի ևս դուր չեկավ նրան: Համալսարանի արևելյան բաժինը մտնելու յես մեծ դյուրութիւն ունեյի, հանգամանքներն էլ չատ հաջող եյին: Մի քանի անդամ մասնավոր կերպով դնացի դասեր լսեցի, բայց դասի ժամանակ քունս տանում եր վոչ թե նրա համար, վոր դասի նյութն ինձ համար բարձր եր, այլ ընդհակառակը չատ սուղ: Համալսարանի մյուս մասերը հեչտութեամբ կարող չե-յի մտնել. պրոֆեսորներն ինձ անծանոթ եյին, սեր էլ չունեյի դեպի վորևե մասնագիտութիւն: Այս պատճառով ահա իմ հա-մալսարանս դարձավ Պետերբուրգի հասարակաց դրադարանը, վորի մշտական ընթերցողը դարձա: Այդ ժամանակ սունկի պես բանում եյին և չատ եժանագին և մինչև անդամ ձրի դրադարան-ներ, վորոնցից նույնպես ոդուտ եյի քաղում, ուզած դրքերս գնելով տանը: Այժմ չկան այլևս այդ դրադարանները:

Այդպես ահա իմ ինքնակրթութեան համար մենակ իմ ըն-դունակութեանը չեմ պարտական, այլև Պետերբուրգի մտավոր վերածնութեան չրջանին, այն բորբոքող և յեռանդոտ կյանքին, վորի մեջ չեյի կարող չեփվել: Շատերն ակնատեսներից ինձ հանդիմանում եյին, յերբ տեսնում եյին կարպալիս բարձր բո-վանդակութիւն ունեցող մի դիրք, և ասում եյին ընկերաբար՝ «Այդ ի՞նչ քո խելքի բան է, վոր դրա վրա ժամանակ ես կորց-նում»: Բայց սխալվում եյին իրանց ընդունակութեան չափով. իրանք վոր չեյին հասկանում, յենթադրում եյին, վոր յես էլ չպիտի հասկանամ: «Յես հո պիտեմ, վոր հասկանում եմ», ա-

սում եյի ես, «բայց չէիմանչի, վոր այս հասարակ բանը հասկանալու համար պրանք չեն զարդացրել իրանց ինքնուսնութեյան ուժը, դուրկ են բազմակողմանի հետաքրքրութեյունից. զարդացած չեն դրանց զդացումները, և այս բոլորը միայն նրա համար, վոր նեղազ և կյանքից առացած դրանց պաշարը, տղքատ և իրանց վարձատուութեյունը, միակողմանի և մեքենայական և դրանց մըտավոր զարդացումը, ամուլ և դրանց ուղեղը»:

Ցես իմ միտքը չեյի բռնադատում, չեյի հոգնեցնում, այլ միայն բավականութեյուն եյի տալիս նրա ձգտումներին, բավականութեյուն եյի տալիս իմ հետաքրքրութեյանը, այն պատճառով ել ամենադժվար թվացող դիրքը յես կարդում եյի այնպես, ինչպես չառերը մի դրավիչ ռոման:

Տիեզերքն ինձ հետաքրքրում եր, ի՞նչպես չկարդայի սիեզերագիտութեյան վերաբերյալ դրքեր: Մարդկային կյանքն ինձ հետաքրքրում եր, ի՞նչպես չկարդայի նրա կյանքին վերաբերյալ դրքեր և այլն: Ցեվ քանի վոր այդ բոլորը դրվում և պարզից սկսելով և աստիճան առ աստիճան բարձրանալով դեպի բարդը, ի՞նչ դժվարութեյուն կա այդ բանը հասկանալու համար, յեթե առ այդ ունես բնական պահանջ, մի տեսակ քաղց և ծարավ և անդուսպ հետաքրքրութեյուն: Դժվարը նոր բան ասելն է, նոր դյուտ անելն է, իսկ արած պրծածը չհասկանալու համար բավական բըթամտութեյուն ունենալու յե: Փորագրութեյան և ճնշման տակ ձգելու համար ամեն վայտ պետք չի դալիս: Ցես չեմ ասում, վոր ամեն վոք կարող է ամեն ինչ անել, բայց ով վոր իր մեջ կարողութեյուն է զդում, թող սկսե գործել, աշխատել, և կըտեսնե, թե ինչպես սկզբում դժվար և անմատչելի թվացող գործը— իր ձեռքին դառնում է մի խաղալիք: Ցես մեկ անգամ մի հասարակ վարդապետի ուսերեն եյի սովորեցնում: (Ինչո՞ւ թաքցնենք, այդ վարդապետը այժմ Սուքիաս յեպիսկոպոսն է): Սկզբումը դա դժվարանում եր: Գործն սկսել եյի մի հատ րոմանից, վոր հետաքրքրե իրան:— Մի վախենաք,— ասացի, — միայն սրա ասողներորդ մասը սլիտ սովորեք:— Հապա մնացյո՞ծը,— հարցրեց:— Մնացածն արդեն կգիտենաք, վորովհետև ամեն մի հեղինակ գործ է անում հայտնի չափով բառեր և դարձվածներ: Գիրքը պլիտ է գլուխ նորանոր բառեր ու դարձվածներ չի պարունակում: Սրա բոլոր հարստութեյունը ասողներորդ մասումն արդեն վերջացած կլինի:

Ցեվ այդպես ել յեղավ: Մինչև դրքի կեսը վոր հասանք,

հայր սուրբն սկսեց ամեն ինչ թարգմանել առանց իմ ողնութեյան:

Մտքի զարդացման համար ֆիզիկական պարապմունքը անհրաժեշտ պայման պետք է համարել: Մեզանում վոչ միայն այս չկա, այլ վոր ամենից վատն է՝ ուսանող ասված յերիտասարդները իրանց ուսումն ավարտած են համարում այն հասակում, յերբ նոր պիտի սկսեյին ուսում առնել: Գոնե չարունակեյին իրանց ինքնակրթութեյունը մի նոր բան սովորելով, կամ սովորածը լավ յուրացնելու համար: Վերջապես ինքնազարդացումը պետք է չարունակել անընդհատ, ինչպես դիտութեյունն ինքը զարդանում է անընդհատ: Մի կետի վրա կանդ առնել՝ կնշանակե լճանալ, նեխել, կամ ընդարմանալ և քարանալ: Սահայն մարդիկ կան, վոր պարծենում են չարունակ միևնույն դուռնան վչխելով: Նոր սերնդին խորհուրդ կտայի դրանց որինակով չվարակվել. այլ սովորել, չարունակ սովորել և սովրեցնել միևնույն ժամանակ, չափից չատ, քչից՝ քիչ:

XVI

Պետերբուրգի մտավոր կյանքի վերածնութեյունը, ինչպես ասացի, նման եր մի հեղեղի: Դրա առաջը սկսեցին առնել 65 թվականի վերջերից և սկսվեց մի հետաշարժ ուղղութեյուն: Այդ ժամանակ ծանոթացա յես Միքայել Նալբանդյանցին, վոր աշխատութեյուն ստացավ գնեներալ Սուլթանշահի յերաչխավորութեյամբ: Այս մարդուն առաջին անգամ յես տեսել եյի Թիֆլիզ, ուր յեկել եր Եվմիածին գնալու համար: Այդ ժամանակ մենք հափշտակվեցանք նրա ճարտար հայախոսութեյան վրա: Գրական լեզվով մենք դեռ ևս թոթովում եյինք. այդպես չեր Նալբանդյանցը, նրա լեզուն արդեն կազմակերպվել եր և խոսում եր այնպես, ինչպես վոր դրվում եր: Իսկ հիմա նրան խոսել արդելել եյին բժիշկները. թոքախտը մաշել եր նրան և առաջվա Նալբանդյանի սոսկալի ստվերագիծն եր մնացել: Բայց վորքա՜ն զարդացել եր մտավորապես և վորքա՜ն յետ թողել իրանից Ս. Նազարյանցին: Համակիր չեր այլևս վոչ նրա լեզվին և վոչ նրա ուղղութեյանը, համարելով հետամնաց և պահպանողական: Նալբանդյանցը աչխարհից կտրվելով՝ չեր կտրվել ժամանակակից դրականութեյունից, չարունակ կարդացել եր միացնութեյան մեջ

և շատ եր մտածել: Նրա գրածների մի մասը Մ. Տեր-Գրիգոր-յանցի ձեռքն ընկավ, բայց Թե ո՞ւմ մոտ մնաց հետո՝ չեմ գի-տացա: Գրվածներից նշանավոր եր «Արկածք Ադամա» պոեման, գրված ընտիր գրաբառով: Այդ բանաստեղծությունը դվնե ի գը-լուխ քերան եր արել Մ. Բուդաղյանցը և ասում եր շատ տեղ: Դա մի շատ հրաշալի բանաստեղծություն եր, նկարագրում է բնականի կռիվը անբնականի դեմ, Ադամը վիճում է հրեշտա-կի հետ, որ Թույլ չի տալիս նրան սիրելու Ցեվային: Հրաշա-լի չեր մանավանդ սիրահարված Ադամի և Ցեվայի զեղեցկու-թյան նկարագիրը: Նալբանդյանցի տաղանդը, մտածող գրող-ցումը, լեզվի հարստությունը անհամեմատ գործ եր Ռ. Պատ-կանյանից, իսկ բնավորությամբ չիփ-չիտակ եր Նալբանդ-յանցը, ինչպես ուզիղ վեր բարձրացող մի բարդի, մինչդեռ Պատկանյանցը մի տատասկ եր վռված գետնի երեսին, որի մոտով անցնել չեր կարելի անպատիժ:

Պետերբուրգում այդ միջոցին դլուխ բարձրացրեց Միքայել Մխանսարյանցը, թարգմանել տալով Կոմբը և Լաբուլեյի դա-սախոսությունը: Կոմբի կեսը թարգմանեց Մ. Տեր-Գրիգորյան-ցը, իսկ մյուս կեսը Ցեղիա Բաստամյանցը Մոսկվայում (հետո վահան վարդապետ): Սրա թարգմանածը մի փոքր անհարթ եր, սրբագրեցինք յես ու Տեր-Գրիգորյանցը, բայց սա բոլորն իր անվան սեփականեց և գրկեց խեղճին, առարկելով, որ նրա թարգմանածը պետք չեկավ: Իսկ Լաբուլեն համարյա բոլորն էլ յես թարգմանեցի, բայց վորովհետև իրան եր հանձնված թարգմանությունը, խնդրեց որ յես բաժին չպահանջեմ: Մի-անասարյանցը ժողովում եր և ազգային յերգերը, որ հետո տա-պագրեց Բնար Հայկական վերնագրով: Սրա ձեռնարկության համար տասեր եյին հարկավոր: Յես հանձն առա ձուլել տալ Լեմանին և ձուլել տվի: Յերբ ամեն ինչ պատրաստ եր արդեն Յակիշատի տպարանում, յես չարեցի մի յերես բան և տպել սը-կվի, որ ցույց տամ Մխանսարյանցին և ուրախացնեմ: Յեվ ի-րավ շատ ուրախացավ և սկսեց ոդային ամրոցներ կազմել, Թե ինչ և ինչ և մտադիր տպագրելու: Բավական հարստություն ու-ներ, բայց ասում եր՝ «մեծ գործերիս այն ժամանակ կձեռնար-կեմ, յերբ բախտ ունենամ արժանանալու վիճակախաղի յերկու հարյուր հազարին»... Հասարակության մեջ սա այնպիսի մի դիրք եր բռնել, որ ուզում եր սովերով ծածկել Սանսսարյան-ցին և Ցեղյանցին, որոնք դեռ մի նշանավոր ազգային գործ

չեյին կատարել: Յես չդիտեյի, որ մի ներքին լուռ նախանձ կա սրանց մեջ: Ուզենալով ուրախացնել և Սանսսարյանցին և Ցեղյանցին, նրանց ևս ցույց տվի տառերի որինակը, պատմելով գործի հանգամանքը և գովելով Մխանսարյանցին: Նրանք նայե-ցին և դատն, որ տառերը շատ անպետք են և անճոռնի, որ նրանցով կարելի չե որինավոր բան տպել: Յես շատ վիրավոր-ված զդացի ինձ, բայց ձայն չհանեցի: Վիրավորանքս չծածկե-ցի Մխանսարյանցից, և նա ինձ մխիթարեց, ասելով՝ նրանք քեզ չեն վիրավորել, այլ ինձ. զրանք չեն ուզում, որ յես մի բան ապած լինեմ, բայց յես պիտի անեմ զրանց ջգրու-մըս ասացի. «Մխայն լավ բան արեք, Թեկուզ մխմյանց ջգրու-լինի»:

Ուսանողության սերն ու հարգանքը Սանսսարյանցն եր վա-յելում և վոչ Մխանսարյանցը, վորովհետև նա յեր պետք գալիս մի զրամական ոգնության պահանջ յեղած ժամանակ, բացի այն մշտական տուրքից, որ վճարում եր ամեն ամիս չքավոր ու-սանողաց ոգտին: Այդ մարդը շատ առատաձեռն եր և տված-ը տալիս եր առանց զդացնել տալու ստացողին, որ նրան մի բան տված: Տալիս եր իբրև Թե պարտ լիներ ուզողին: Յեվ հարըս-տահարվում եր անխնա: Նրա համար չկային վոչ բախտախըն-դիրներ, վոչ խաչագողներ, դիմողին չեր մերժում. իր վարդը-մածությունը տարածում եր և ոտարների վրա: Յեթե իմ քնա-վորության մեջ չհավելու տրամադրություն լիներ, յես կարող եյի այդ պնդիվ հայրենասերի հաչվով ասրել: «Աչխատանք և վարձատրություն, և վոչ ձրիակերություն», այս է յեղել իմ նշանաբանը: Իմ այդ իբր ապահովված միջոցին յես վերջին չը-քավորության մեջ ընկա: Պատճառը վոչ վոքի հայտնի չեր: Շատ անպամ որերով քաղցած եյի մնում, ավելորդ հպարտ-տլս ծախում եյի: Միքայելս ձուլարանում իր արվեստն ա-վարտեց, բայց շատ մաշվեց խեղճը, բոլոր մխսը հալվեց և մը-նաց չոր կմախքը: Դրա վրա ավելացավ և մեր ընկեր Յաչան: Դա ևս յեկավ Պետերբուրգ և հիվանդացավ թոքախտով: Յեկե-ղեցու զավթում Թույլ չեյին տալիս ընկերներիս մոտս պահել, հարկադրված առանձին սենյակ եյի վարձել նրանց համար, ըս-տացածս չեր բավականանում յերեքիս և յերեքյանքս էլ մնում եյինք քաղցած: Ճար չկար, պետք և դիմելի արտաքին ոգնու-թյան: Այս բանը հայտնեցի Ա. Բարայանցին, որ Ռուբեն Ջա-լալյանցի ղնալուց հետո իմ մտերիմ բարեկամն եր: Սա հավա-

քեց մանավոր ժամանակություն կարող ուսանողներից, բայց քեչ եր, դիմեցի պ. Սահակյանցին, և նա ասաց. «Այդ մարդին բնավ հոգ մի անեք, ես ինքս կուզարկեմ նրան հայրենիք իմ քրոջ վորդու հետ (Լևոնն) և ուղարկեց:

Իմ այդ նեղության ժամանակ Պետերբուրգ եր Ալեքսանդեր Յերիցյանը: Դա Թիֆլիզումը դրավաճառի խանութ եր բացել Տեր-Միքայելյանի հետ, յեկել եր գործեր դնելու, ուրեմն հարուստ եր: Սրտությունն և Մանվելի ձեռագիրը տարա մոտը, և ասացի՝ «գործեր եք ուղում, այս բանն էլ առեք և ուղեցեք, թանգ չեմ դնահատիլ, հիսուն մանեթով կտամ»: Ալեքսանդրը պատասխանեց. չատ եժան ես դնահատում, դա ավելի թանգ արժե, բայց յես սիրտ նայեմ իրրև վաճառական, մի արդյոք այդ գործը վոր ուզադրեմ, կվաճառվի՞ և կկարողանա՞մ ուզադրության ծախքը հանել: Դու գիտես, վոր մեզանում կարդացողների թիվը շատ նվազ է: Իմ կարծիքով պետք է դանել մի բարեբար, վոր իր հաշվով ուղե:— Ցես չեմ կարող բարեբար գտնել, ասացի,— բայց ուրախությամբ կվաճառեմ նույն իսկ 25 մանեթով: Կուզայ և ձրի, բայց վոչ շատ է պետք:

Զդնեց անիրավը. դոնե ասեր՝ «վոչի կարոտություն ունես, առ քեզ 25 մանեթ պարտք»:

Միքայելի դնալուց հետո էլ չմեխացավ իմ նեղությունը: Ցաշան մնաց և տպարություն շատ քաշեց խնդիրը: Միքայելն ու յես անտեսապես և բարոյապես անբաժան ընկեր եյինք, իսկ Ցաշային ոգնում եյինք իրրև աղնիվ ընկերոջ, նա ինքը վոչինչ ծանացած չեր մեզանից յերբեք: Բայց յես ի՞նչպես ասեյի մեկին, թե այնպիսի մի ընկեր ունեմ և ոգնում եմ նրան: Այդ կընկնե

— Ցեթե այդ յերիտասարդներին տանեք այնտեղ,— ասել էր պ. Սանասարյանցը,— յես եւ իմ կողմից, ինչ հարկավոր լինի թե՛ ճանապարհի եւ թե՛ ապարանի համար կհոգամ: Մայրեր ունեմ մոտս, այն եւ կտամ:

Այստեղ ուշադրության արժանի յե պ. Սանասարյանցի հետաքրքրությունը, վորով իր տալիք ոգնությունը կապում է մեր այնտեղ լինելու հետ, շատ լավ իմանալով վոր ամեն ոգնություն ապարդյուն կանցնի յեթե այնտեղ չլինեն գործին հմուտ մարդիկ:

Սրա վրա վերհանեցի մոտը, պատվիրեց, վոր յերթամ Թիֆլիս, ապատեմ մինչև իր վերադարձը, խոստանալով, վոր այնտեղից ինձ կտանե Ելմիածին լավ առձիկով:— Դե, ապրե՛ս, տղա,— ասավ եւ աչքը մեկնեց, յես համբուրեցի եւ դուրս յեկա լուռ ու մունջ:

XVII

Պետերբուրգից դուրս յեկա 1867 թվականի վերջերին: Յերկաթուղին Պետերբուրգից մինչև Մոսկվա եւ այդտեղից մինչև Կոզլով եր: Այդտեղից պետք է փոստով գնայինք: Ընկերս մի սֆիցեր եր, Լյունդեկվիստ ազգանունով, վոր բավական կարգացած և զարգացած մարդ եր: Ճանապարհորդում եյինք սանկացով, արթուն մնալու համար՝ ընկերս պատմում եր իր կարգացած հեղինակներից զանազան բոմանները: Զարմանալի հիշողություն ուներ. Շեքսպիրի դրամաները բերան պիտեր: Մեզ հետ կային եւ կաթարդացիք, վորոնք նույնպես Պետերբուրգից եյին գալիս, այնտեղի կայսերական թիկնապահ գնդի ճիավորներից եյին: Նովոչերքասկից վոր դուրս յեկանք, ճանապարհին մեր առջև գնացող կաթարդացիք կանգնացրին իրանց սանկան և սկսեցին իրանց լեզվով հարայ-հրոց բարձրացնել և դղակները գնդակի պես վեր վեր նետել: Մոտեցանք և հարցրինք պատճառը:— Հաբա չե՞ք տեսնում,— ասացին,— նայեցեք, հրե՛ն հրիզոնի ծայրում մեր Ելբրուսը:

Տեսնելով հայրենի լեռան գագաթը, ուրախությունից չգիտեյին թե ինչ անեն: Ցերկար ժամանակ լեռներից դուրս մնալով՝ շատ եյին կարոտել խեղճերը: «Ուրեմն մենակ յես չեմ կարոտ քաշել— ասացի յես մտքումս,— սրանք եւ են իմ որում»: Այստեղ պատվերացան իմ յերևակայության մեջ հայրենիքիս ծաղկատար լեռները, վորոնց տեսությանը շուտով պիտի արժանանայի և վախտը առնելի՝ առատ-առատ ծծելով նրանց կենսատու ողը:

Շատ մարդիկ կան, վորոնք իրանց վրա չեն զորձել, թե ինչ է քաղցը, ծարավը, վտակը, կարոտը, սերը և ուրիշ շատ զգացումներ: Ուրիշի զավակի մահվան վրա ավելի նրանք են լաց լինում, վորոնք վորձով գիտեն, թե ինչ է ծնողական կսկիծը. միան են բերում իրանց զավակը և լալիս աղի արտասուքով: Ընկերս ծիծաղեց չերքեզների վոգևորության վրա, իսկ յես նրանց հետ վեր-վեր կթռչեյի, յեթե չամաչեյի...

Ուղեկիցս առ ժամանակ մնաց Ստավրոպոլ, իսկ յես չերքեզների հետ գնացի մինչև Վլադիկավկազ, և այստեղ ել մնացի մինչև յոթն որ, վորովհետև ճանապարհս կապված եր «заваля»-ների պատճառով: Այստեղ ճանապարհս ծախսը հատավ, մնաց հինգ մանեթ միայն: Ել ոպատել կարելի չեր. մտածեցի ուղտով գնալ: Գնացի ուղտապահների մոտ, սակարկեցի մինչև Թիֆլիս յերեք մանեթ: Նստեցի մի ուղտի վրա իմ յեվրոպական չորեքոտնի և քաղաքի միջով լանդու-լանդու անելով անցա մինչև մյուս ծայրը: Ամենքն ել ապշած նայում եյին և հարցնում միմյանց, թե ո՞վ է արդյոք այս պիժը: Այդտեղ իմ ուղտապահներն իրան ուրիշ քարավանի մոտ, վորոնց բեռները դեռ պատրաստ չեյին: Յես մնացի դրանց մոտ կանգնած մոլորվածի պես: Մեկ մանեթ կանխիկ եյի վճարել. «Ցեթե այսօր գնալու չեյիք,— ասացի,— ինչո՞ւ բեկ առաք ինձանից»...

Այս միջոցին, չգիտեմ, աստված ուղարկեց, թե իրանք յերկան, մոտեցան ինձ յերեք հոգի Ղզլարցի վաճառականներ, և միտքս իմանալով՝ ասացին, ուղտով անցնել անհնարին է, դուք բոլորովին կատչեք: Մենք ել պետք է գնանք Թիֆլիս, սպասեցեք միասին յերթանք. ի՞նչ ունեք չտասելու: Յես համաձայնեցա, իսկ նրանք աշխատեցին համոզել ինձ և իրրև մի խենթի խելքի բերել: Տեսա վոր ինձ անխելքի տեղ են դնում, պատճառը հայտնեցի, խոստովանելով, վոր սպասել չեմ կարող, վորովհետև ճանապարհս ծախքը հատել է: Ղզլարցիք խնդացին:

— Գնանք, գնանք,— ասացին,— մեզ մոտ: Մենք կարող ենք ձեզ մինչև Թիֆլիս տանել, իսկ այնտեղ դուք կվճարեք ձեր բաժին ծախքը:

— Ցեթե այդքան բարի կլինեք,— ասացի,— ձես ուրախությամբ կվճարեմ Թեկուզ պարտքիս կրկնապատիկը:

Կանխիկ վճարած մանեթս այլևս չպահանջեցի ուղտապահներից:— Ջանս, ինչո՞ւ չառնես,— ասացին ուղայքը:— Վո՛չ,— ասացի,— ձես արդեն նստեցի ուղտի վրա, այն էլ կյանքիս մեջ առաջին անգամ, այդ ինձ համար ավելի արժե քան թե մի մանեթ:

Թիֆլիսում պարտքս վճարելու հույսս մեծ էր: Վեպս ապել էր արդեն Միքայելը, ուրեմն դրամագուխ մոտ առանալիք կունենայի:

Հառանք Թիֆլիս և իջանք Զուբալովի քարվանսարայումը: Մյուս որը գնացի դրամագուխի խառնուքը, վոր ծախված դրքերիս վոչն առանամ և բերեմ վճարեմ պարտքո, վոր 12 մանեթ էր: Բանից դուրս յեկավ, վոր իմ անդրանիկ մատենը ձնունդն ևս իմ պատանեկության որն է ընկել: Այստեղ միսս ընկավ Պետերբուրգի դրաքննիչ Ծերունի Բերոյանցի մարդարեությունը: Ցերը վոր վեպս տարա նրա մոտ, վոր դրաքննե, նա իր ձեռագիր հարուստ բառարանի թերթերը փռել էր դահլիճի մեջ, և չգիտեմ ինչ էր ջոկկում:

— Այդ ինչ ես դրել,— ասաց:

— Վոչինչ,— ասացի,— աղջկայի կյանքից մի վեպ է:

— Աղջկա՜ն կյանքից...—ասաց ծերունին ցաված սրտով:— Ուրեմն աղջկայի թշվառություն կլինի անշուշտ: Այ՛, թշվառ է մեր աղջի կյանքը, չատ թշվառ: Տեսնում ես ահա այս թերթերը. հիսուն տարվա աշխատություններ են. հիսուն տարի չարունակ աշխատել եմ ձես սրանց վրա, բայց դնահատող չկա, վոչ ապրող կա, վոչ առնող, այնքան ամուլացած է մեր աղջի մեջ ուսումնասիրությունը, ըրասիրությունը, չնայած, վոր մի-լիոնատեր հայեր ունենք: Այս աշխատության դին չդնողները ինչ դին պիտի դնեն քո վեպին: Ի՛նչ, ի՛նչ ստորագրեմ:

Ցեվ ստորագրեց առանց կարդալու:

Ընկերս ապագրում է դրքերը՝ թղթի վողը հավաքելով բաժանորդագրությամբ, չարում է ինքը, իսկ ապագրության վարձը վճարելու համար դանում է մի աղգասեր մարդ, վոր եր յերևանցի Աղաջան Թաղիանոսյանցը, նրանից վոխ է առնում մոտ մի հարյուր մանեթ և հաղարի չափ դրքեր հանձնում իրան, թե՝ վաճառեցեք, ձեր վողը վերցրեք, իսկ մնացած դրքերը և ավելացած վողը հանձնեցեք հեղինակին: Այս հանձնարարությունն ա-

նելուց հետո ինքը գնում է հայրենիք: Մեր ազգասեր վաճառականը Ավետարանի քանքարաթաքույցի նման դրքերը վաճում է իր սենյակում, իսկ ինքը գնում է Ցերևան: Գնացի մոտը: Մի ուրիշ մարդ եր կար մոտը՝ և ինչպես յերևաց՝ իր ընկերն եր: Սովորական բարևներից հետո ասացի.— Շնորհակալ եմ, վոր ապարանից հանել եք դրքերս, բայց չատ դժգոհ եմ, վոր վաճառներին չեք հանձնել: Գիրքը ապված է կարդալու համար և վոչ բանառարկելու: Գոնե հիմա լինի, այդպես արեք, հանձնեցեք դրամագուխներին:

— Մենք վոչինչ չենք կարող անել,— պատասխանեցին,— մենք ձեր գործակատարը չենք, մեր վողը կբերեք, ձեր դրքերը կտանեք:

— Շատ լավ եք ասում,— ասացի,— և իրավունք էլ ունեք, բայց վոր վող չունեմ, վո՞րտեղից բերեմ, կամ ի՞նչ չահ ունիք դրքերը պահելով:

— Ցեթե դրքերն ապառելու վող չունիք, ուրեմն ձեռք վերցրեք դրքերից, այնուհետև մենք կվաճառենք և մեր վողը կտանանք, միայն դուք մեզ մի ստորագրություն պիտի տաք, վոր դրքերը մեզ եք տվել, տառնալով լիովին բավականությունն:

— Ցեթե այդպիսի մի թուղթ տամ, մի՞թե դուք կառնեք, չեք ղրկ, վոր այդ մի անբրավություն է, զրկողություն է, մի անպիտություն է, ծայրահեղ հարստահարություն է, դա մի թալանություն է, ախր ի՞նչպես կարելի է հարյուր մանեթի տեղ՝ հազար մանեթի դիրք տալ:

— Ինչու լեք մեզ անպատվում, պարոն,—բարկացան հայոց դրականության կառավի թշնամիները,— կամքի բան չէ՞, մեր վողերը բերեք, ձեր դրքերը տարեք: Ուզում եք վոր ծախվի, մեզ մի թուղթ տվեք, վոր դուք ձեռք եք վերցնում: Այդ էլ չեք ուզո՞ւմ, դրքերը կմնան մի անկյունում թափված:

— Շատ լավ,— ասացի,— տվեք ինձ թուղթ և դրիչ, ձես կատմ ձեր ուզած թուղթը, նրա հետ և իմ խորին դղացմունքը, վոր կարելի է տածել միայն դեպի Շեյլոկի նման մարդիկը:

Այս ասածիցս բան չհասկացան. Շեյլոկի մասին գաղափար չունեյին: Թուղթ և դրիչ տվին և ձես իրանց ուզած ստորագրությունը տվի և դուրս յեկա: Հետո սրանք դրքերս տարել եյին Ցերևան և այնտեղ ցրվել հասը 10—20 կոպեկով, վորով հասարակ վաճառել եյին, վոր ազգասիրություն են անում ժողովրդի

մեջ եժան գնով դրքեր տարածելով: Ձեռ ինքս փորձով գնեցի իմ դրքերից մի քանի որինակ՝ բարեկամներիս ընծայելու համար:

Աչքառուսմս վատ մարդիկ վոր չլինեն, եվ ի՞նչ դին կարող են ունենալ լավերը: Այս բանը դեռ շատ վաղուց վերացող հըստակավոր բանաստեղծ Շոթա Ռուսթավելին վոտանավորով և ասել, թե՝ «դեղեցկությունն յերբ եժանանա, եվ մեկ էլը եվ չի արժենա»...:

Պարտքս չվճարած, մյուք չունեյի ծանոթներիս յերևալ, բայց հիմա հարկադրվեցա գնալ ուղղակի պ. Ենֆիաճյանցի մոտ և խոստովանել ղվխա անցքը: Նախկին բարերարս շատ ուրախացավ ինձ տեսնելով և իսկույն տվավ վոխանակ 12 մանեթի՝ յերեսուն մանեթ, պատվիրելով՝ վոր յերթ նեղություն ունենամ, չծածկեմ իրանից:

Պարտքս վճարելուց հետո հյուրասիրվեցա պ. Մովսես Վարդանյանցի տանը: Մովսեսը, վոր իմ նախկին աշակերտս կեցս եր ձուլարանում, հիմա դվխավոր դրաչար եր պ. Ենֆիաճյանցի տղարանում և միշտ նամակակցություն ուներ հետս, ձրի ուղարկում եր ինձ և «Մեղու»-ն: Ձուլարանումը մի ռուս վարպետ ունեյինք մենք, վոր այն ժամանակ մեկն. եր ամբողջ Թիֆլիսում: Սա բոլոր աշակերտներին ուստա յեր ասում, իսկ Մովսեսին՝ պոլտորա ուստա, այսինքն՝ մեկ ու կես ուստա կամ ուստա ու կես: Պետերբուրգից Մովսեսին ուղարկած լուսանկարի վրա մի վոտանավոր եյի գրել, վոր նրան անվանել եմ «ուստա և կես»: Շատերը բերան են արել այդ վոտանավորը, բայց չգիտեն ուստա և կես ասելուս պատճառը:

XVIII

Մոտ յոթը տարի յեր, ինչ վոր չեյի տեսել ծննդացս: Հիմա դնացի աղքատ դրպանով, բայց հարուստ տարազով և դրությամբ: Այնպես ճոխ հագուստ, վոր նրան տեսնող դյուղացին յերբեք չեր կարող յերևակայել, վոր նրա դրպանները կարող են դատարկ լինել:

Լսել եմ, վոր մի արևելյան բանաստեղծ ասել է՝ «Ձերկնքի պես դուք եք յերևակայում, այլ ունի այն բոպեյի քաղցրությունը, յերբ մի մայր դրկում է յոթը տարով տարագրված վորդուն»:

Տունը հասա թե չե, թեև առաջուց եյի իմաց տվել դալս և նախապատրաստել, չափից դուրս հուզվեցան ամենքը: Հայրս, վոր նույնիսկ իր զավակներին չհամբուրելու մի նախապաշարմունք ուներ, վորովհետև Հուդան համբուրելով եր մատնել Քրիստոսին, այս նախապաշարմունքը ծնողական ծովացած կարոտի առջև չարդ ու փշուր յեղավ: Ինձ առավ իր հսկայական բազուկների մեջ և սկսեց հեկեկալ յերեխայի նման և համբույրներ հեղեղ թափել: Մորս հերթ չեր տալիս: Ինձ մայրս ժպիտը բերանին և արտասուքն աչքերին՝ կանչում եր.— Ա՛յ մարդ, յերեխես կսպանես, թող մեկ յերեսին մոխիկ տամ: «Վա՛յ, յես քո մատաղ լինեմ, յե՛ս, անուշ բալաս, անջատ մին յեկա՛ր»... Հայրս բաց թողեց թե չե՝ յես «ազի չան» դոչելով՝ ընկա մորս դիրկը և յերեսս թաղեցի յերկու հսկայական ծծերի արանքում: Ամբողջ դյուղը հավաքվեց, վորը ժպտում և վորը լաց եր լինում ուրախությունից:

Մի զարմանալի դյուղ է մեր դյուղը: Իր բնակիչների սրբագործով մոր պես դրկած է պահում, չթողնելով վոչ վոքի պանդխտության յերթալ: Ցես առաջին և վերջին պանդխտությունս յեղավ: Նույն իսկ թիֆլիսումը չի կարողանում մնալ մեր դյուղացին, չունինք վոչ մի վաճառական և վոչ արհեստավոր քաղաքիս մեջ: Նրանք նվիրված են իրանց դյուղի բերրի և արդյունավետ հողին ու ջրին. դուրս յերթալու կարոտություն չունին: Ինքը դյուղը Դուդարքի ակն ու մարգարիտն է: Այդտեղ է յեղել հին Դուդարքի բնակության մայրաքաղաքը: Ամեն անդամ, յերբ գնում եմ մեր դյուղը, սրտիցս չի տալիս քաղաք գալ և չեյի գալ, յեթե առիպողական պահանջ չունենայի: Ամեն մարդ կսիրե իր ծննդավայրը, բայց այլ է սիրել, և այլ՝ հավանել, հիանալ և զմայլել: Մեր դյուղն զմայլելի յե և հիանալի իր գեղեցիկ դիրքով և տեսարաններով: Նախքան Ռուսաստան դնալս, յես այդ գեղեցկությունը չեյի դդացել, վորովհետև չունեյի գեղեցկի ճաշակը, մանավանդ բնության վերաբերյալ:

Ինչպես հին հեքիաթներում հարսանիքն անում են յոթն որ և յոթը գիշեր, այնպիսի մի հարսանիք դարձավ մեր տունը մեր յոթը գիշեր, բոլոր յոթն որ և յոթը գիշեր: Կեր ու խումին եվ հաշիվ չկար:

Այնպես եյի սովորել ձրի հաց չուտելուն, վոր հիմա շատ թվալի յեր ինձ, վոր կարող եմ կուշտ վորով հաց ուտել առանց մի բան վճարելու, և մինչև անդամ ուրիշներին եվ հյուրասիրել

ամենայն առատությամբ: Գյուղում սովորություն չկար վորոշված ժամերում ճաշել կամ ընթրել: Մեր սուփրեն առավոտվանից ղցած եր մինչև կես գիշեր, մեկը նստում և մյուսը վեր եր կենում չարունակ: Ով ասես գալիս եր աչքալուսս, մինչև հեռավոր գյուղերից անգամ, և վոչ միայն հայեր, այլ և վրացիք և Թուրքեր: Հայրս հայտնի չեր իբրև շատ հացով մարդ և շատ հյուրասեր, նրա եկող-գնացողներին մխիլ չկար: Մայրս չափավորություն եր սիրում, վորովհետև նա չեր կերակուր և թխորդ: Հայրս մեջ ուտում եր, ղրաղ մանգալիս: Ամենի հետ ուտում և խմում եր հյուրերին որինակ տալու համար: Այսպիսի մարդ մեկ էլ Ալեքսանդրապոլ տեսա: Դա բժշկապետ Աշխենը Բարսեղյանցի հայրն եր:

Իմ բացակայության ժամանակ բավական կոտրվել եյին թե հայրս և թե մայրս: Հայրս մեջքից կռացել եր և գալատան եր առել ձեռքը, կորցրել եր իր առաջվան ուրախությունն ու աչքերի խուլժը: Բայց չերբ տեսավ ինձ, չերբ լսացավ, վոր առաջին մեծ ատպարեզ և բացվում հառաջ գնալու, չերբ տեսավ, վոր չես էլ այն չեմ, ինչ վոր ապարանում եյի, հիմա կաթոդիկոսներն են հրավիրում դործի և բարձր պաշտոնի—մեջքը շտկեց, գալատանը դեն ձգեց, վերանորոգվեց վաթսունյոթը տարեկան հասակում և առաջվա պես սկսեց իր Գյորդլին յերգել.

Թող վոչ վոք չզարմանա, աչքովս տեսած բանն եմ ասում: Այստեղ պետք է մի հանդամանք ևս ավելացնել, վոր ի նկատի ունենան բարի գավակ լինելու փափագ ունեցողները, մանավանդ նրանք, վորոնք ռամիկ դասակարգից լինելով դառնալով մի առանձին արհամարանքով են նայում իրանց ընտանիքների վրա: Ձես իմ հորս պատվում եյի չափից դուրս. այս հանդամանքն անուշադիր չեյի Թողնում, դործով եյի ցույց տալիս առանց զանցառության: Նրա համար նոր հագուստ եյի առնում և զարդարում: Հայրս ասում եր.— Վորդի, ինչո՞ւ յես նեղությունքաշում, ինչո՞ւ յես դուր ծախքի տակ ընկնում, այս բոլորը տերտերը պիտի տանի: —Ինչի՞ս է պետք,— ասում եյի.— հետո ով ուզում է Թող տանի, բայց հիմա յես իմ պարտականությունս պետք է կատարեմ. յերեխի ու ծերի սիրտը պետք է չհաճած պահել, մանավանդ հագուստի կողմից:

— Ապրես, վորդի, զորանաս, վոր քո հորն այդպես պատիվ ես տալիս: Թող ուրիշներն որինակ առնեն քեզանից, ասածդ էլ քո անունը բարձրացնի, ինչպես դու բարձրացնում ես իմ անունը... Ստեպստեպ բաղնիք եյի տանում և ինքս իմ ձեռքովն եյի լվանում վոտներն և դլուխը և լողացնում խչխչալի: Ձես այս անում եյի ստիպված ներքին դրդումից, բայց նկատում եյի նաև, վոր տեսողների վրա խոր տպավորություն է դործում և յուվ որինակ դառնում: «Առավել լավ,— ասում եյի մտքումս, սա մի ցուցամոլություն չե, այլ մի սրբազան պարտականություն,— վոր պետք չե Թաքցնել նորադույն վչջացած սերընդից, այլ պետք է նրա աչքը կոխել»:

Ալեքսանդրապոլ յեղած ժամանակս տեսնում եր ժողովուրդը, Թե ինչպես եմ վերաբերվում յես դեպի իմ հայրը և ինչպես մի ուրիշը դեպի իր հայրը, և այս դառել եր խոսակցության առարկա: Այդ ուրիշը Լաղարյան ճեմարանում ավարտած մի կոկարդավոր վարժապետ եր պետական ուսումնարաններում:

Սրա համար պատմում եյին, Թե յերբ վոր հայրը մոտն է դալիս, ամեն կերպ աշխատում է ցույց տալ, վոր նա իր հայրը չե, այլ իրանց դյուղացի մի ռամիկ, կամ լեզեն խոստովանում եր, չեր ասում իմ հայրն է, այլ ասում եր «Համարյա Թե»: Ձես համարում եյի այս մի զրպարտություն և չափազանցություն: Մեկ որ ինքս ականատես յեղա այս բանին: Գնացել եյի մոտը, հայրը հետս մի անկյունում նստած եր իրրև մի ոտարական. չծանոթացրեց ինձ, բայց յես մոտեցա նրան, ձեռք տվի և դառնալով վարժապետին՝ կիսահարց առաջարկեցի. «կարծեմ,— ասացի,— սա քո հայրը պետք է լինի»: Վարժապետը նմնըմացրեց և ասաց կըմկըմացնելով՝ — Չը՛մմմ... ինչպես ասեմ... համարյա Թե»: Սրա վրա յես դարձա իրան և հանդիմանեցի ոտերն.— Հիմար,— ասացի,— ինչպես «համարյա Թե», իմ՞նչ մեղք կլինի, վոր սա քո հայրը լինի. դու կարծում ես, վոր սրանից չա՞տ լավ մարդ ես. սա դոնե մի բնական մարդ է, իսկ դու մի չինովնի արարած»...

Ահա այսպիսի վորդիք էլ կան, վորոնցից վաթխարները նույնպես կան: Այսպիսիների ծնողքը վերակենդանանալ կարող չեն, նույն իսկ ունեցած կենդանությունն էլ կկորցնեն:

Հայրս մեկ անգամ ասաց.— Ձես ինձ շատ մեղավոր եմ ըզդում, վոր քո ուսման համար վոչ մի կոպեկ ծախք չեմ արել:

— Իսկ յես կարծում եմ,— պատասխանեցի,— վոր քեզանից ահագին դրամական ողնություն եմ ասացել:

— Այդ յե՞րբ, վո՞րտեղից, ի՞նչպես:

— Ինձանից, քո հոգուց, քո մարմնից: Ձե՛ վոր յես քո ծնունդն եմ: Ցեթե իմ հայրս դու չլինեյիր, քո բոյ ու բուսածքով, քո առողջ կաղմվածքով, քո բնական ձիրքերով և շնորհքով, այլ լինեյի մի անշնորհք մարդ, մի ապուշ և թուլ արարած, ի՞նչ ես կարծում, յես այնուհետև մի՞թե կարող կլինեյի քանի նման մի բան դառնալ, թեկուզ միլիոններ ծախսեյիր վրաս: Վո՛չ, հայր, դու շատ բան ես տվել ինձ, ինչ վոր դու տվել ես, մանեթներից շատ և շատ թանդ է...

— Սպրես, վորդի, վոր այդքանը հասկանում ես,—պատասխանեց հայրս, տեսնելով վոր յես ժառանգական հատկություններին մեծ նշանակություն եմ տալիս:

Ուշադրության արժանի յե, հիրավի, վոր ժառանգական հատկությունների մասին մեր բոլոր դյուղացիք ամենայն տեղ պարզ գաղափար ունին, թեև դրանից չհավելու դիտակցությունը նվազ է և համարյա թե չունին:

XIX

Գյուղումը յերկար մնալով՝ յես մեր տանը մի ոդուտ տալ չեյի կարող, բացի վնասից: Պետք է շուտ վերադառնայի քաղաք: Մտադրությունս հայտնեցի հորս:

— Գնա, վորդի,— ասաց հայրս,— բայց մենակ մի մնար, դռնե դուռը մի ընկնիր, աղջիկ ուղիր, քեզ համար տուն ու տեղ դիր: Եթե աղջիկս քանի վոզջ եր (Ասանան՝ Սյուբյունի քույրը) քաղաքումը մեզ համար տուն ունեյինք, հիմա գնում ենք թափվում ենք վեր դալիս: Մի՛ վախենար, ապրելուդ հոգսը շատ մի քաշիր, ատավածը վոզորմած է, քո տարեկան հացն ու դինին այստեղից կուղարկեմ, մնացածն էլ դու կարող ես հոդալ:

Հայրս իմ սրտից եր ջուր խմում: Ցես արդեն այդպիսի մտադրություն ունեյի. Պետերբուրգի ազատ կյանքը թիֆլիսում վարել կարող չեյի: Դժվարն այն եր, վոր դեռ ես պաշտոն չունեյի, ընկերներից չեյինք պահանջում: Մեր Մովսեսի (Վարդանյանց) մոտ եյի բնակվում. նա եր պահում ինձ իր բոլոր ծախքով, իմ միայն հորս ուղարկած հացն ու դինին եր, բայց ավելի ծախքի մեջ եր ձգում մեզ: Զրի դինի ունենալով՝ շուտ-շուտ հրավերներ եյինք սարքում: Ուզում եյի դրաչարությունն անել, բայց Մովսեսը չեր թողնում. նա իմ պատիվս ինձանից ավելի յեր ուզում պահել:— Դրաչարությունն վոր սկսես,— ասում եր,— եվ վոչ մի որինավոր պաշտոն չեն տալ:— Վնաս չունի,— ասացի,— թող չտան, յես պարապ կենալ կարող չեմ: Մտա տպարան և միևնույն ժամանակ խնդիր տվի Ներսիսյան դպրոցի հոգաբարձությանը, վոր ինձ ուսուցչության պաշտոն տան: Մարտիրոս Սիմեոնյանցն արդեն վարժապետ եր այդտեղ, խնդիրս եվ նրա թելադրությամբ դրեցի: Պ. Ենգիլաճյանցն ուզում եր ինձ մտցնել «Մեղու»-ի խմբագրատունը, իբրև ոգնական Սիմեոնյանցի, բայց հաջողություն չունեցավ: Խմբագիրը չընդունեց: Գրեցի Պետերբուրգ իմ անհաջողությունների մասին և այն եվ հիշեցի, թե ինչպես յերևում է, վեհափառն իր խոստումը կատարելու մտադրություն չունի: Պետերբուրգից բազմաթիվ նամակներ դրվեցին թե Թիֆլիս և թե Եջմիածին, վորով շատերի ուշադրությունը դարձրին ինձ վրա:

Միևնույն ժամանակ աղջիկ ուղելու միտքս չեմ հեռացնում ինձանից, և արդեն զանազան տեղերից մինչնորդներ են դալիս մոտս մեծ-մեծ խոստումներով:

— Ցես մինչնորդով աղջիկ չեմ կարող ուղել,— ասացի,— իմ մինչնորդը յես ինքս պիտի լինեմ: Ցեվ այդպես եվ յեղավ:

Մեկ իրիկնապահի ս. Սարգսի դառիվերը բարձրանալիս դեմս յելան մի պատավ կին և մի սիրուն աղջիկ: Փողոցի անհարթության պատճառով բանն այնպես պատահեց, վոր յես ու աղջիկը դեմ առ դեմ յեկանք, և յես նրանից հափշտակվելով՝ քարի պես արձանացա: Աղջիկը նույնպես արձանացավ մի րոպեյի չափ և չառաջունելով՝ շուտ թեքվեց և արագացնելով քայլերը հասավ մոր յետևից, վոր գնում եր ղլուխը քաչ դցած և ոչ դիտե ինչ մտածմունքի մեջ ընկած: Ցես մնացի նրանց յետևից նայելիս: Մայր ու աղջիկ յետ մտիկ տվին և ինձ նկատելով՝ խնդուն չըրջեցին յերեսները: Ցես մի քիչ ամաչեցի և չարունակեցի ճանապարհս: Մեր հանդիպած տեղից մոտիկ ինձ ծանոթ խանութպան կար դուրսը կանգնած, և հեռվից նկատել եր մեր հանդիպումը: Սրան հարցրի, թե ովքեր եյին այն կին ու աղջիկը: Նա ասաց՝ — այստեղից հեռու չե նրանց տունը և այս ինչ կինն է. հետո ավելացրեց.— հը՛, կո՞ւլի բան ունիս մտքումդ, թե վուր աչքումդ դուր եկավ, գնա ու գնա, չիս փոշմնի, են գաղար ինձ վոր ավելնա: Ֆու սրանն եմ ասում, ես թահրն ախճիկ միր քաղքումը մե հատ չիս գթնի...

Ցես ժպտեցի և արագացրի քայլերս: Գնացի իմ քեռակնոջ մոտ մոտ, որը հենց նույն թաղումն էր կենում: Սա մի շատ բարեպաշտ և հին հավատի պառավ էր: Մեծ պասին չամչով էր չայ խմում և խստիվ պահպանում բոլոր պատրավական կամավոր ծոմերն ու պասերը: Միևնույն ժամանակ մի շատ ժրաջան և աշխատասեր տանտիկին էր: Ամբոխ մոր բուն հայկական այս սիրուն անհայտացան մեր միջից և այդ տնարարների տեղը բռնեցին տնքանդները: Ամեն անգամ, երբ սրա մոտ էլի գնում, լինճ ստիպում էր, թե աղջիկ ուղի: Այս անգամ էլ միևնույնը կրկնեց:— Հիմա պիտի ուզեմ,— ասացի,— թե որը լինճ կոգնեք այս բանումը:— Պատմեցի թե ում եմ տեսել ու հավանել:— Աղջիկ շատ եմ տեսել,— ասացի,— բայց վոչով սեր չի նել:— Աղջիկ շատ եմ տեսել, ասացի, թե որը լինճ դղեկ սրտիս մեջ, իմ սիրտը կպավ եղ աղջիկանը, եվ չի դջվիլ:

Պառավը ճանաչեց թե ով էր և ասաց՝

— Հա՛, ապրի աչքդ, շատ լավ աղջիկ է, հալալ ծծկեր, նամուսով, ղայրաթով, տանու աղջիկ է, լավ մոր պահած. շատ էլ շնորհքով է, ամեն բան ձեռիցը դալիս է, կար, ձև, քարդահ, ի՛նչ չիքվնեք, ի՛նչ ճակոն աղջուխներ, ենքան էլ լավ բնություն ունի, որը որ թաղավորը նրա արևովն են խնդում:

Ուսման մասին խոսք չէր կարող լինել, այդ ժամանակ հայ դպրոցները չկային աղջկանց համար:

— Բայց դիտե՞ս ինչ կա,— ավելացրեց դեղեն,— նրանք վոզ չունեն, լսել եմ քեզ հաղարներ են առաջարկում: Մեկն էլ ինձ մոտ եկավ անցյալ որը,— յերեք հարյուր թուման կտանք, — ասում է:— Չե՛,— ասացի,— աղջիկը նրա մոր հասակին ունի, նա չի ուզիլ:— Մեծ վոզով լավ աղջիկ չեն տալ քեզ, նա լավ դիտենաս:

— Ինձ վոզ չի հարկավոր,— ասացի,— ղու դնա եղ աղջիկն ինձ համար ուզիր: Ամենի լավ որ փոզ չունին: Անփոզ ինձ նման տղին չեն կարող տալ. ուրեմն պետք է որ համաձայնին:

Յերբ մութն ընկավ, դեղեն գնաց խնամախոս: Քիչ անցած՝ վերադարձավ աղջկա մոր հետ, որը մի տարած-տրորած խեղճ կնիկ էր: Սա յեկել եր, որը իր ապագա փեսացուին տեսնի: Ծանոթացավ և սկսեց կողմնակի բաների վրա խոսել, վորպես թե ինձ համար չէր յեկել: Բայց յես միջահասակի նրա խոսակցությունը և սկսեցի բուն դործից խոսել:— Դեղի,— ասացի,— քո աղջկան յես հավանեցի, թե որը դու էլ, քո աղջիկն էլ ինձ կըհավանեք, մեր բանը վերջացնենք:

— Բեզ աստված և հավանել, վորդի, լավ տղա յես յերևում աչքումս, լինչ թաքցնեմ: Ցես քեզ տեսել եմ յերեխա ժամանակդ, հիմա, աստված պահի, մեծ մարդ ես դառել: Իմ աղջիկը էլ պակաս աղջիկ չէ, եղ թող սրանք ասեն, լինճ խոսք չի հանձել, վոչով իրա թանկին թքում չի ասել, թե որը զոմաթ կլինի, կտեսնես: Բայց պետք է դիտենաս, որը մենք պատրաստում չունենք, հասկանո՞ւմ ես, փողը չկա մեջտեղը: Շատերն են տալացուք, լուսահոդի մարդուն չատերն են պարտ, բայց ետը-եղուց են դցում, վոչինչ չեն տալիս:

— Այդ վնաս չունի,— ասացի,— դուք լավ է, դոնե մի տուն ունիք, քրեհ չեք տալիս, իսկ յես ամենևին վոչինչ չունեմ: Լավ հագուստիս մոխիկ մի տար, չիքս դարտակ է. եղուց-ելորը չասես, որը յես քեզ թանկնք տվի, խարեցի: Հենց ես եմ որը կամ, վոչինչ չունեմ:

— Ես ի՞նչ եմ ասում, քա՛,— բացականչեց պառավը,— հանաք ես անո՞ւմ, թե դրուստ ես խոսում: Վոր քու բանը եդպես է, վորդի, եվ ինչու յես իմ աղջկա մեղքի տակն ընկնում, նրա աչքը քեզ վրա դցում:

— Ի՞նչ վնաս ունի, յես նրա մեղքի տակը կընկնեմ, նա եվ իմ, եսպես յոլա կդնանք:

— Չե, ախպեր, յես ղարուլ չեմ, ղու ուրիշ հանգի յես խոսում, երեսդ չատ է բաց. յես աղջիկ չունիմ դեն դցելու: Քո ասրեան եվ տուր մեկ հարցնեմ իմ բարեկամներին, տեսնեմ նրանք ինչ են ասում:

Անունս դրեցի տվի իրան և ասացի՝— վաճառականներ լինճ չեն ճանաչիվ, միայն վարժապետներ կճանաչեն, յեթե բարեկամ վարժապետ ունիք, տարեք նրան ցույց տվիք:

Տոմսակս ցույց եր տվել իր մոտիկ աղդական մի վարժապետի, նա եվ խորհուրդ եր տվել, վոր առանց խոսելու աղջիկը տա լինճ: Ասել եր՝— ուղիղ և ասել, նա հիմա պաշտոն չունի, բայց չուտով կունենա: Նրա սեռ ուսում առածներին տասը հազար են տալիս, բայց նա ուրիշ բնության տեր է, փողով աղջիկ չի ուզիլ և վոչ եվ հարուստների յետևից կընկնի:

Ցերեք որվա մեջ ամեն բան պատրաստ եր: Ցես ու Մովսեսը մի ժամացույց և մի մատանի առանք և գնացինք նշանդրեք: Նույն յերեկոյին յես այլևս չեյի ուղում հեռանալ նշանածիցս,

բայց ինձ ղոռով դուրս արին: Մյուս յերեկոյին գնացի, դուռը վրաս փակեցին, ինձ Թողեցին ցրտումը: Ես Թաք կացա դռան· քառորդ ժամ անցած՝ ղոքանչս դուռը բաց արավ և գնաց խոհանոց, այդ միջոցին յես ինձ ներս ղցեցի և ընկա նշանածիս վոտքերը և խնդրեցի նրա պաշտպանությունը: Ղոքանչս այդ աղջիկն ուներ միայն, յերկու տղա էլ ուներ, բայց յերկուսն էլ կորած էյին՝ մեկը Ռուսաստանում և մյուսը հենց քաղաքի մեջ: Յերբ վեր ներս յեկավ ղոքանչս և ինձ տեսավ, սաստիկ բարկացավ.— ա՛ռ,— ասաց,— քո նշանը, դուրս կորիր իմ տանից, յես քեզ նման յերես բաց վեսա չեմ ուղիլ...

— Ինչո՞ւ յեմ նշանս առնում,— ասացի,— հազիր նշանածըս կառնեմ ու հայդա, կիախչենք քեզանից...

Այստեղ նշանածս պաշտպանեց ինձ, ասելով.— դեդա, յես յերեխա հո չեմ, ուրեմն հավատ չունե՞ս դու ինձ վրա: Դու ավելի լավ կանես, վոր ընթրիքի պատրաստությունը տեսնես, կարելի յե քաղցած ե (անունս չի տալիս):

— Ո՛... չատ քաղցած եմ, չատ, եսոր Թիլքա չեմ դրել բերանումս,— բացականչեցի յես:

— Ա՛յ սատանա՛,— նկատեց ղոքանչս և գնաց խոհանոց:

Նշանածիս ձայնն ու խոսելը առաջին անգամ լսեցի: Մայրը վոր դուրս գնաց, սա այլևս չխոսեց հետս: Մ՛իտս ընկավ, վոր խոսելն էլ մի առանձին ընծա արժե:— Ես դիտեմ,— ասացի,— վոր քեզ մի ընծա պիտի տամ, վոր խոսես ինձ հետ, բայց ի՞նչ ընծա կարող եմ տալ, վոր Թանգ լինի ինձանից, ահա յես վոտով-գլխով, հոգով-մարմնով քեզ ընծա,— և սկսեցի համբույրները ցողալ հրեշտակային քնքշությամբ:

— Դու վոխանակ այդքան չարություն անելու,—խոսեց նըշանածս,— ավելի լավ կանես, վոր ինձ դիր սովրեցնես, Թող այդ լինի քո ընծան: Դու լմն ես ու լմը, քեզ ով կխելի ինձանից, դու պետք ե քեզանից դուրս մի բան տես ինձ: Ինձ դիր սովրեցրու, վոր քո դրածները կարդամ: Ես դիտեմ վրացերեն դրել-կարդալ, բայց հայերեն մեկ այբբեն դիտեմ միայն:

— Շատ ուրախ եմ, հոգիս, չափից դուրս ուրախ, վոր այդպես սեր ունես կարդալու: Ես մեկ չաբաթում քեզ կսովորեցնեմ որինավոր դրել և կարդալ, միայն մեկ պայմանով, վոր ինձ դուրս չանես մայրդ:

— Ցերթե խելոք կկենաս, մայրս բան չի ասիլ:

— Աղնիվ խոսք եմ տալիս քեզ· բայց չեմ կարող չփայփայել, չդուրդուրել քեզ, այդ մի՛ հանցանք չե:

Մյուս որը տեղավորվեցի ղոքանչիս մոտ: Սկսեցի դիչերները աշխատել տպարանիքը, վոր հարսանիքի համար փող պատրաստեմ: Նշանածս ել իր աշխատությունը կրկնապատկեց, միևնույն ժամանակ պատրաստում եր տված դասերս: Անտարբեր չեր և ղոքանչս, սա ել իր հանդուգյալ ամուսնու Թողած ապառիկները յեսևից ընկավ: Մի որ մի ահագին կապոց Թղթեր ձգեց առաջս, վոր նրանցում փող գտնեմ: Բոլորն ել մուրհակներ եյին, բայց վորի ժամանակն եր անցած, վորի պարտականն եր մեռած կամ անանկացած· միայն մեկը գտնվեց հուսալի, վորի մեջ յերկու հարյուր մանեթի դումար կար: Այդ Թուղթը տվի իրան· տարավ և բերավ բոլորն ել տվավ ինձ, վոր հարսանիքի պատրաստում տեսնեմ: Շարաթ չքաշեց, ամեն ինչ պատրաստեցի, մնաց վոր պսակի հրամանն ստանամ: Այդ ժամանակ կոնսիստորիայի նախանդամը Սուքիաս վարդապետն եր: Յերբ քահանային Թուղթը տարա, Սուքիասն ինձանից 10 մանեթ ուղեց հրաման տալու համար:

— Ես միայն յերեք մանեթ կտամ,— ասացի,— այդքան փող չունեմ:

— Ցեթե չունես,— ասաց,— ինչո՞ւ յես ամուսնանում:

— Ուրեմն՝ վորովհետև չունեմ և այսուամենայնիվ ամուսնանում եմ, դրա համար պետք ե ձեզ տուգանք վճարեմ, և այնուհետև կարող կլինեմ պահելու ամուսինս առանց փողի՛ ել: Դուք չդիտեք, հայր սուրբ, Թե ո՛ւմ հետ եք խոսում. յես չեմ յեկել ձեզ խորհուրդ հարցնելու, Թե ամուսնանամ արդյոք Թե վոչ, դուք ի՞նչ իրավունք ունիք ինձ ասելու, Թե ինչո՞ւ յեք ամուսնանում, ո՞վ ե տվել ձեզ իմ ցանկության վրա ինչխանությունն:

— Դուք չատ հանդուգն եք յերևում, պարոն,— ասաց Սուքիասը, յեղակի ձևով խոսելը վոխելով հոգնակիի:

Ես ձայն չհանեցի և դուրս յեկա բարկացած:

Ցետևյալ վաղեց բարեկարգիչ Հ. Ֆ. Արարատյանը, վոր ինձ լավ եր ճանաչում մանկությունիցս սկսած, կանչեցրեց ինձ ու ասաց.— դու միամիտ գնա բանդ տես, յես Հրամանը ձուղարկեմ քո ծխական քահանային, և յես ինքս ել կգամ, Թեև ինձ չես հրավիրել: Դու բեր յերեք մանեթ տուր, ավելի տալ հարկավոր չե:

— Տեր հայր,— ասացի,— ես ավելի եւ կասկած, բայց ավելին այդպես անքաղաքավարությամբ չեն առնել, վիրավորելով չեն պահանջվել, այլ հայրական սիրով հորդորելով: Դա վոր ինձ հետ այդպես է վարվում, ինչպե՞ս կվարվի խեղճ հայերի հետ:

Ապագրեցի հայրս լեհավ հետը բերելով բոլ դինի և սկսվեց Մարքուսի թաղումը չտեսնված մի նոր հարսանիք: Նորությունը նրանումն եր, վոր առանց զուռնայի չեր, դրա տեղը բռնել եյին ազգային լերդերն և տաղերը: Հավաքված եր ժամանակակից ազգային ինտելիգենցիան, վորը հրավերով և վորն եղ առանց հրավերի անկեղծ բարեկամությունից թելադրված: Մահճեղբայրս իմ սիրելի Մովսեսն եր: Կյանքիս մեջ այնպիսի առիթներում աստիճանով ինձանից բարձր մարդկանց դիմած չեմ նրանց հովանավորությունը բարեկամական կապով ապահովելու համար: Հարսանիքս դուրս լեհավ իմ ապագածից չատ վստավոր: Ցեվ այդպես ահա լես ամուսնացա 1868 թվի Նոեմբերի 22-ին որիորդ Եփեմիա (Նուշը և Փեփել) Մովսեսյան Տեր-Հարությունյանցի հետ:

Այս անցքից հետո իմ խնդիրս հաջողվեց Ներսիսյան դպրոցում, բայց Եջմիածնից եղ լեհավ մի իրաման, վորով պահանջում եյին, վոր լես անհապաղ լերթամ, քանի վոր խոսք եմ արվել վերահաստին և նրանից յերեք հարյուր մանեթ ճանապարհածախք ստացել:

Սրբազան Մակար առաջնորդը կանչեց ինձ և ասաց.

— Վարժապետ ամեն վոք կարող է լինել, բայց լինչու համար վոր դուք կանչված եք Եջմիածին, այդ բանին հարմար և ընդունակ՝ բացի ձեղանից վոչ վոք չկա: Ցերթ վոր դուք կվերջացնեք այդ գործը, կպայծառացնեք Եջմիածնի տպարանը, ձեր տեղը բռնող աշակերտներ կհասցնեք, այնուհետև դուք կվերադառնաք, այն ժամանակ իմ պարտականությունս լինի, վոր լես ձեզ վոչ միայն վարժապետություն տամ, այլև ձեռնադրեմ և ուղղակի ավագ քահանայություն տամ քաղաքի ամենաարդյունաբեր մի յեկեղեցում:

— Շնորհակալ եմ,— ասացի,— սրբազան հայր, վոր այդքան բարի տրամադրություն ունեք դեպի ինձ, բայց ներեցեք վոր մի թեթև նկատողություն անեմ Եջմիածնից ստացած հրամանի առիթով: Այդ թուղթը մի քաղաքավարի հրավեր չե, այլ հրաման: Դրանից յերևում է, վոր յեթե գնալու չլինեմ, ինձա-

նից պետք է յես պահանջվի իմ ստացած յերեք հարյուր մանեթը, թեպետ այդ չե ասված ներկա հրամանում: Վեհափառը դեռ Պետերբուրգ չեր յեկել, վոր արդեն վորոշել եյին այդ դումարը տալու ինձ: Ցես կամովին մնացի նրա դալստյանը:

— Ինչիլ պետք է, վորպէ, թող երանց վրա առնեն այն, ինչ ուրիշներն են արել: Ցես այդ մասին ավելի չատ բան գիտեմ դուցե: Բայց քո ռոճիկը վորոշել են արդեն տարեկան վեց հարյուր մանեթ, բնակարան, ուտելիք և վառելիք, և այստեղից եղ ճանապարհածախք հետուն մանեթ: Քո ընկերն եղ ահա յերեք ամիս է, վոր այնտեղ է և քո գնալուն է սպասում: Պետերբուրգից նույնպես ձեր գնալուն են սպասում, վոչինչ չեն ուղարկում այնտեղից և չեն ուղարկիլ մինչև դուք չդնաք. տեսնում եք, ուրեմն յես եղ պիտեմ մի քանի բան:

Ցես համաձայնություն տվի և խոստացա մի չաբաթվա վրա ճանապարհ ընկնել: Ցես կատարեցի իմ խոստումս, կատարեցի այն բոլորը՝ տասնապատիկ առավելությամբ՝ ինչ պայման վոր դրավ Մ. սրբազանը ինձ ձեռնադրելու համար. բայց նա, վոր առասպելական հիշողություն ուներ, մոռացավ իր խոստումը և չկատարեց իր պայմանը ընորհիվ միջանկյալ չաբախոս աղվեսների:

(Վերջ առաջին մասի)

ՄԱՍՆ ՑԵՐԿՐՈՐԴ

Ն Ա Խ Ա Բ Ա Ն

Այս գործի առաջին մասը պարունակում է իր մեջ գլխավորապես իմ անհատական գործունեությունը, իսկ սույն յերկրորդ մասի մեջ դրա վրա պետք է ավելանա և իմ հասարակական գործունեությունը: Առաջին մասում յես միայն կրթում եմ ինձ, իսկ յերկրորդում՝ կրթում եմ ուրիշներին, թե իբրև ուսուցիչ և թե իբրև դրող: Պատշաճավոր տեղերում կմտնեն և առաջին մասում հիշածները:

Ցերեկ մեկը մի վորևե ուսար յերկրում յեղել է, նա խոսակցության մեջ՝ տեղի թե անտեղի՝ հիշում է առել-առել նույն տեղը, ասելով՝ որինակ՝ «Ցերը վոր յես Պետերբուրգ եյի... Պետերբուրգում յեղած ժամանակս... Մեկ որ Պետերբուրգումը... Այդ բանը Պետերբուրգումը»...

Շատերի մեջ այս հատկությունը մինչև ծաղրականի յե հասնում, իսկ կատակերգություններում այսպիսի տիպերը բավական զվարճացնում են հասարակությանը: Պետք է դիտենալ սակայն, վոր ամեն անհատ չէ այս հատկությունն ունի, մեկայն մեկը գործ է անում պատշաճավոր տեղում, մյուսը՝ անպատշաճ: Այս հանգամանքի չնորհիվ է, վոր մենք մեր մեկ անգամ տեսածը չենք մոռանում: Ջեն մոռացվում միայն կըրկնվող հիշողությունները: Ասում ենք՝ «Միտս է, յերբ յես դեռ յերեխա եյի»... Ցերե այդ ժամանակից արդեն անցել է կես դարից ավելի, ինչո՞ւ յե միտը: Նրա համար վոր տարին առանցներում ամիս նա այդ բանը կրկնում է— «Միտս է, յերբ յես դեռ յերեխա եյի»...

Ցերե հիշողությունները չեն մոռացվում միայն նրա համար, վոր կրկնվում են չարունակ, ապա ուրեմն մոռացվում են չկրկնվողները: Այս մոռացված հիշողություններն ևս կարող են վերակենդանանալ մեր մտքի մեջ, միայն դրա համար հարկավոր է, վոր միտքը առարյա հոգսերից ազատվի և վոգևորվի անցյալի հիշատակներով: Այս ել հոգեկան մի առանձին վիճակ է, վորի մեջ շատ քիչ է ընկնում մարդ: Սովորական յերևույթը կրկնվել է, վոր թե բերանացի յե լինում, թե մտքով և թե նույն իսկ յերազի մեջ: Առտաքին տպավորությունները մեր դադաթի մեջ ծուխանալով չարունակ չարժման մեջ են, չարունակ տակ ու վեր են լինում: Բարձր վոգևորությունը այդ ծուխն վոթորիկ բարձրացնելն է:

Ցերբ մարդուս մտքի զարգանալը իր գադաթնակետին է հասնում և այդտեղից թեքվում է դեպի ցած, դեպի իր մուտքը՝ արևի նման, նա որեցոր կորցնում է իր հիշողությունները: Լավ է ուրեմն, վոր մարդ այդ վիճակին չհասած՝ դրի առնե իր հիշողությունները, դոնե իր գլխի անցքերը, իր տատցած տպավորությունները, իր տեսած գլխավոր դեպքերը: Վորքան լավ կլիներ, վոր մենք չինովի և անճաշակ թվացած վեպերի տեղ այնպիսի դրվածքներ ունենայինք: Թող լինի չինովի եվ, բան չենք ասիլ, յեթե նա մի դեղարվեստական չենք լինի. բայց իրական կյանքի մասին ուղիղ գաղափար կազմելու համար հարկավոր են ատուդապատում դրվածքներ:

Իմ այս գործը գրականության մեջ առաջին փորձն է և իբրև առաջին՝ շատ հեռու յե դեռ նա կատարյալ լինելուց: Այս կատարության պատճառը այնքան իմ անձից անկատարությունը չէ, վորքան այն չրջանի, վորի մեջ պետք է լուսս ընծայի յես մի այսպիսի բան: Գրեցի այնպես և այնքան, ինչպես և ինչքան վոր կարելի յեր գրել այդ չրջանի համար: Ցեթե տեսնեմ, վոր մեր ընթերցող հասարակությունը լավագույնը գնահատել դիտե, և յես ել վողջ-առողջ կլինեմ, այն ժամանակ յես այն միևնույն բանը կգրեմ ուղածիս պես, կամ սրա պակասը կլրացնեմ ջոկ-ջոկ արկածներով, «Իմ կյանքի արկածներից» վերնագրով:

I

Մակար սրբազանին խոսք տալուց հետո՝ յես պատրաստվեցի ելմիածին գնալու: Գրեցի հորս, վոր վոքը յեղբորս ուղարկի, վոր հետս տանեմ ուսուցի տամ:

— Ինձ ել տար հետդ,— ասաց Մովսեսը,— յես այլևս չեմ

ուղում էի ներկա չըլլանում մնալ, ուզում եմ քեզ հետ լինել:

— Շատ ուրախ կլինեմ,— ասացի:— Միքայելն այնտեղ է, նա կլինի ճուլարանի վարպետ, դու տպարանի, իսկ ես կլինեմ իրրև կառավարիչ կամ տպարանապետ: Հենց այդ մտքով էլ ինձ հրավիրում են: Աչխատավորների ընտրությունն և վարձատրությունն ինձանից պիտի լինի կախված, քանի որ ես պիտի լինեմ գործի հատուկության պատասխանատուն մի վանքի և մի ազգի առջև:

1868 թվականի ծննդյան պատը բռնելուց հետո ես ու Մովսեսը մեկ որ, ճաշելուց հետո ճանապարհ ընկանք դեպի ս. Ըջմիածին: Այլևս չսպասեցի յեղբորս դալատյանը: Յերեկոյան հասանք Կոզա, ուր և պիչերեցինք: Նոր ուղին դեռ չլինված չէր, խճուղի դեռ չկար: Ճանապարհն այնպես ցեխ էր, որ մեր կառքի առջևից յերկու ջուխտ դոմեչ լծել ավին, և հաղիվ կարողացան Կումսի փոսից դուրս բերել Կոզա:

Նոր արդեն հասել էինք, մեկ էլ տեսանք հայրս ներս յեկավ յեղբորս հետ: Այդ ծերունի մարդը նույն որը 66 վերստ ճանապարհ եր կտրել, ցեխ ճանապարհ և այն էլ վոտքով... Հենց որ մենք դուրս ենք յեկել, նա ներս է մտել քաղաք, և խնդուն մեր յեռևիցն ընկել, որ հասնի, յենթադրելով, որ նույն դիչերը չենք կարող Կոզայից հեռանալ, վոչ էլ կառքը կարող է ցեխ ճանապարհով այնպես արագ գնալ, որ վոտքով մեզ չհասնեն:

— Ամի՛,— ասացի,— դու շատ անդութ ես վարվել դեպի քեզ...

— Այո՛,— պատասխանեց,— բայց երեխա համար, որ չդրկվի ուսումից:

Հայրս մեր դյուղում միակ մարդն եր, որ գիտեր ուսման հարգը, արհեստի նշանակությունը: Յերեխա ժամանակը ծնվել եր Գորի քաղաքում և այդտեղ էլ անցուցել իր պատանեկությունը: Աչակերտ է յեղել պղնձագործի մոտ, և շատ բան եր պատմում իր մանկության որերից, իր աչակերտական կյանքից: Շատ լավ մարդ եր վարպետս,— ասում եր հաճյոս,— բայց մանավանդ վարպետիս կինը, որ մի շատ խելոք տանտիկին եր: Ներա խրատներից չեմ մոռանում այս խոսքը, որ շուտ շուտ ասում եր— Սահեմա՛ն, աչխատիր, որ լափչիքդ ու քոչերդ որերեխ չդատնան, յեթե վոչ՝ որերեխ էլ չես դանիլ որ հաղնես:

— Ցերևի այս եր պատճառը որ հայրս վոչ ինքն եր հաղնում

որերեխ և վոչ իր վորդոցը հագցնում:— Որերեխ վոր ասիրեք,— ասում եր,— էլ լափչիք հագնելու ճղռում չէք ունենալ:

Մեր կառքը դեռ յետ չեր դարձել: Ներան մի մանեթ տվի, որ հորս տանե մինչև քաղաք:

Որը կարճ և ցուրտ, դիչերը խավար, ճանապարհը տեղ ցեխ և տեղ՝ սառած: Մենք յոթին որ ճանապարհ դնացինք և ծնընդյան թաթախման յերեկոյին հասանք Ցերևան:

Ճանապարհին վոչ մի լավ տպավորություն չդդացի, բացի դղվանքից, մանավանդ Դիլիջանի ստրը բարձրանալիս հին՝ ճոթամիջի ճանապարհով: Այդ մասե կամուրջներից անցնելով և Գեղամա լճերի բուք ու բորանից լավ ծածկվելուց հետո, յերբ մոտեցանք Ցերևանին, իմ բոլոր նեղություններս մոռացա, յերբ հանկարծ դեմս յելավ Մասիսը կեսից վեր ձյունով ծածկված: Ցես վոտքով եյի դնում և կառքն առջևը: Մասիսը տեսնելուն պես՝ ես վեր-վեր չքռա կաթարղացող նման, այլ տեղնուտեղ մեխվեցա, լինչպես մի ահեղ արքության առջև, վորին մոտենալ կարելի չե կոչիկները չհանած: Սարը խոսեց ինձ հետ, բայց ինչ վոր ասաց, այդ կմնա իմ և նրա մեջը: Այդ մի պատգամ եր և խորհրդավոր պատգամ, սուրբ և աստվածային, վոր կարելի չե լույս աչխարհ հանել նախքան ժամանակը:

Ցերևան վոր հասանք, իջևանի պահողը մի լավ հայ եր. սա իր տանից ուղարկեց մեզ ճոխ ընթրիք— իչխանաճուկն, յեփած և խորոված, ճու, և շատ լավ փլավ արչտով յեփած: Ջեր մոռացել և յերեք չիչ իրանց թումբ գինուց ուղարկել: Այդ գինու բնությունը չգիտեմ, մի քանի բաժակ վոր խմեցի, գլուխս տաքացավ և կառքը լծել տվի, վոր այն դիչեր հասնենք Եչմիածին և առավոտուն ջրտրհնեքի հանդիսին ներկա լինենք:

Մեր կառապանն, լինչպես յերևաց, խամ եր, Դալմի բաղերից մի քիչ անցած՝ ճանապարհը կորցրեց: Ձյունը լցրել եր դար ու վոս և չինել մի հարթ մակերևույթ, վորի վրա մարդկային հետք և նչան չեր յերևում: Շատ այս ու այն կողմ պտրտելուց հետո պատահեցանք մի պահնակի, ուր թուրք ձիավորներ կային իրրև ուղեպահներ: Կանչեցինք, մի ձիավոր յեկավ ընկավ առաջներս, բայց բավական հեռացրեց մեզ վոլորվոլոր ճանապով:

Մի կողմից կասկածելով՝ թե մի դուցե թուրք ձիավորը մեզ տանում է կողոպտելու հարմար մի տեղ, ուր թաքցրած ընկերներ ունի, մյուս կողմից էլ տեսնելով Մովսեսի և Սար-

դըսի (յեղբորս) դողդողալն ու սրթսրթալը ցրտից ու յերկյուղից, կառապանին հրամայեցի, վոր յետ դառնա յեկած տեղով և մեզ կրկին Յերևան հասցնե: Այդպես ել արավ, և մենք կես գիշերից անց՝ կրկին իջանք Յերևանի իջևանումը:

Մյուս առավոտը մեզանից նորից վարձ պահանջեցին եջմիածին տանելու համար:— Վոչ թե վարձ, այլ սև քար կտամ յես,— ասացի,— յեվ ձեզ ցույց կտամ, թե ինչ կինշանակե ցըրտումը կոտորել մեզ:

Այդ որը մնացինք Յերևան և յես գանգատվեցի ուր հարկն եր վոչ թե նրա համար, վոր կրկին վարձ չտամ, այլ վոր ուշք դարձնեն այս հանգամանքի վրա և ուրիշներին ել մեր որը չըդցեն:

Այս դեպքը կարծես նրա համար պատահեց, վոր նույն տրն առիթ ունենամ ծանոթանալու մեր դրականության մեջ ապագայում յերևելի անուն հանած Մելիք-Հակոբյանի հետ, այն է՝ Րաֆֆու: Սա բազարումը պատահում ե Մովսեսին, վորի հետ մոտիկ ծանոթություն ուներ, և իմ գալն իմանալով՝ խնկույն շտապում ե ինձ մոտ, հետս ծանոթանալու համար: Յեկավ ծանոթացավ, սովորական հաճոյախոսություններ անելով իբրև նոր հեղինակի:— Ցես կարդացի,— ասաց,— ձեր «Արություն և Մանվելը» և ինձ վրա շատ խոր տպավորություն դործեց, այդպիսի գրվածք չկա մեր մեջ:

— Շնորհակալ եմ,— ասացի,— յես ել ձեր «Վըլվըլիկը» կարդացի, վոր Պետրոսի (Քամթանյանց) ձեռով ուղարկել էլինք ինձ տեսնելու: Նրանից կարելի յե մի բան չլինել, յեթե աշխատեք:

— Այո՛, յես այդ ձեռագիրն ուղարկել եյի պ. Նազարյանցին, նա յետ ե ուղարկել մի քանի նկատողություններով, կաշխատեմ ոգուտ քաղել թե նորա և թե ձեր խորհուրդներից: Հուսով եմ, վոր այսուհետև իրար հանդիպելու միտք կունենանք, իսկ այսոր կխնդրեմ վոր միասին ճաշենք իմ ազգականիս տանը, ուր կծանոթանանք չատ հետաքրքրական մարդկանց հետ:

Ցես ընդունեցի պ. Հակոբի հրավերը և Մովսեսի հետ գընացինք ճաշի: Ճշմարիտ վոր չատ հետաքրքրական մարդիկ կային, այսինքն նշանավոր խաչագողներ և յերևելի ավազակներ: Այդտեղ եյին ի միջի այլոց, Ցեղնակենց Խաչատուրը և Սալմասցոնց Մկրտիչը: Ամենքն ել, առանց ծածկելու պատմում եյին իրանց կատարած քաջագործությունները, չեյին ծածկում նաև, թե ինչպես եյին կողոպտել նույն իսկ Մելիք-Հակոբյանի ապրանքը Թավրիզից բերելիս և նրան անանկացրել: Ցերբ վոր սրանք դաղարեցնում եյին իրանց պատմությունը, Մելիք Հակոբյանը խոսում եր ժամանակակից դրականության վրա: Նա քիչ բան եր ասում և չատ բան հարցնում, վոր իմ կարծիքս լմանա և մի նոր բան սովորի: Ցես նրան վոչինչ չեյի հարցնում, նրա կարծիքն ինձ համար արժեք չեր կարող ունենալ, այն ել բավական եր, վոր նա իմ ասածը լուվին ըմբռներ: Ցեթե յերբեմն վստահանում եր իր գաղափարը հայտնել, յես խնդրում եյի տալիս նրա ուղիղ կամ սխալ լինելը և յերկուսի համար ել գոհ եր մնում. մի տեսակ հարգանք և պատկառանք եր տածում դեպի ինձ:

— Ցես Նալբանդյանցի ուղղության եմ համակրում,— ասաց.— իմ կարծիքով միակ ուղիղ ճանապարհը նրա քարոզածն ե:

— Այդ չատ լավ եք նկատել,— ասացի,— բայց մեծ նպատակի հասնելու համար միակ ճանապարհ չկա, այլ շատ. թշնամու դեմ պատերազմը մի ուղիղ գծով չեն մղում և վոչ մի գործողությամբ, այլ զանազան կողմերից և զանազան գործողություններով: Ամենայն ճանապարհ ուղիղ ե, յեթե տանում ե դեպի միևնույն գլխավոր նպատակը: Վոչ մի ճանապարհ անտեսանելու չե: Անվարժ զրքով թշնամուն հաղթել կարող չես: Ինչ կուզես տուր մի ուզեսի, նա մյուս որը կկորցնի իր ստացածը: Ուրեմն յեթե բանը յետ ու առաջ մասին ե, Նալբանդյանցի բարձրացրածը մի ձեռք ե միայն, ոլը միայնակ ծափ չի տալ: Ամենայն ազգ իր այբբենն ունի, և հիմա մեզ համար ամենից չատ մի լավ այբբենարան ե հարկավոր, վոր ժողովուրդը հեշտ կերպով կրել-կարդալ սովորի և մեր ասածն ու գրածը ըմբռնե: Ինքը Նալբանդյանցը այդ համոզման եր յեկել իր վերջին որերում. նա ասում եր. «Մեր ազգին հարկավոր ե գիտական գարգացում, «Հյուսիսափայլ»-ը այդ դերը կատարել կարող չե, հարկավոր են նոր ու թարմ ուժեր, ժամանակակից սոցիալական գիտություններին քաջ հմուտ»:

Մելիք Հակոբյանն իմ ասածին հավանություն տվավ և ասաց.

— Շատ ուղիղ ե ձեր նկատողությունը: Ճշմարիտ վոր ամենից առաջ պետք ե լուսավորել ժողովրդին, պետք և ազատել

Նրան չատ նախապաշարմունքներից, և յիս, յերեք դեպքը բերի, ամենայն ուրախութեամբ հանձն կառնեմ վարժապետ լինել:

Կրթվելն ու կրթելը՝ վարակվելու և վարակելու նման մի բան է: Ինչ դաղափարներով վոր յես վարակված եյի, նույնով եվ պետք և վարակեյի ինձ հետ չփվողներին, մանավանդ նրանց, վորոնք վարակվելու որամադրութիւն ունեյին. Մելիք-Հակոբյանը չատ դյուրաթեք եր վարակման, լավական եր մի փոքրիկ հատիկ, վոր նրանից նա մի բան առնեյներ: Այսորվանից յես ու նա ծանոթութիւն կապեցինք իրար հետ, առանց վորևե սերտ բարեկամութեան: Յես յերբեք չեյի կարող յերեվակայել, վոր նա յերբևիցե Բաֆֆի կդառնա: Տարիքով նա ինձանից մեծ եր առնվազն յոթը տարով, ուրեմն իմ տեսած ժամանակ նա պետք և լիներ մոտ 35 տարեկան, իսկ այդ հասակում նա չուներ վոչ դիտական զարգացում և վոչ դրական կրթութիւն: Բայց ուներ վատ յերևակայութիւն և կյանքից լուսացած չատ պաշար: Այդ հում նյութը նա կարող եր պետք ածել, յեթե ընկներ մի լավ դործարանի մեջ, և ընկավ «Մշակ»-ի խմբագրատունը, ուր մշակեց իր պաշարը: Բաֆֆու մասին առայժմ այսքան, իսկ հետո վրկին կհանդիպենք դործիս ընթացքում, իբրև արդեն Բաֆֆու հետ և վոչ վաճառական Մելիք-Հակոբյանի:

II

Մյուս առավոտ մենք հասանք Եչմիածին, ուր սիրով դիմեցի Միքայելիս, վորին չափից դուրս կարոտել եյի: Սա իմ հուչակ՝ իրրև իր հերոսի՝ բարձրացրել եր մխիթարութեան մեջ, նրա համար եվ ինձ չատ սիրով ու պատվով ընդունեցին, մանավանդ Մանկունին, վոր վեհափառի հոդեվարականն եր, բայց չատ յերես տված. ամեն կերպ աշխատում եր սիրաշահած պահել ինձ, ժամերով մոտիցս չեր հեռանում և ամեն պահանջ չուտափուլթ կատարել եր տալիս:

«Արարատ»-ն արդեն սկսված եր և տպագրվում եր հին և կոտրված տառերով և խմբագրվում եր Աբել յեպիսկոպոսի ձեռքով, վոր վոխանակ ազատամիտ լինելու՝ չատ ազատվարք եր իր ծերության հասակում:

Տպարանի, տպագրողի և տպագրվածի մեջ մի վայրենի ներդաչնակութիւն կար, յերեքն եվ իրար նման եյին:

Միաբանության մեջ վոչ մի ուսումնական մարդ չկար, յեղածները վիճականներն եյին ուղարկված: Դրանց մեջ աչքի յեր ընկնում միայն Արիստակես վարդապետը, բայց նրան հեռացրած եյին պահում միաբանութիւնից, և հենց ինքն եվ չեր մոտենում մի միաբանության, վոր իր ուղածը չեր: Նա մի ծրագիր եր կազմում, ի հարկե դեռ ծածուկ, ինչպես պետք և լինի կազմված միաբանությունը, վոր կարողանա ոգուտ տալ յեկեղեցուն և ազգին:

Յեղած միաբանությունը յեթե անուսում եր, բայց այն լավ կողմն եվ ուներ, վոր դտնվում եր նահապետական պարզության մեջ, պարզ սրտի և մտքի տեր եյին, չեյին ամբարել իրանց դլուխները հակապիտական դաղափարներով: Ջուներին ներքին ուսումն, չուներին և արտաքին, վորով յեթե զինված լիներ յին առանց ներքինի, վոչ մի բարի սերմ չեր կարելի բուսցնել դրանց մեջ, մինչդեռ այժմ պատա լինելով՝ ընդունակ եյին ամեն բարի խորհուրդ լսելու, ամեն առողջ միտք ընդունելու: Թող քո քարոզածդ լիներ նորագույն մարդաբանական վարդապետություն, նրանք սիրով ընդունում եյին, առանց ասելու, թե այդ հակառակ է Հայաստանյայց յեկեղեցվո ուղիղ վարդապետությանը, ինչպես այդ անում են մեզանում չատ աչխարհական յեղվիտներ, վորոնց պարագլուխն է Մ. Ա., վոր իր չատասավածաբանությունն ուզում է աստվածաբանության տեղ ծախել, վորով և մոլորեցնում է այժմյան միաբանությունը:

Եչմիածնի միաբանությունն իր այդ քրիստոնեական պարզությամբը լինճ չատ դուր յեկավ: Խոսակցության ժամանակ լսի հայտնած ամեն նոր միտք սիրով ընդունում եյին և ծեփականում, վոր լուսավորվին: Այսպես եյին նույն իսկ մեծ յեպիսկոպոսները: Յեթե դրանց մեջ լիներ մի Այվազովսկի, մի Որմանյան, լինճ չեյին պահիլ Եչմիածնում և վոչ մեկ որ:

Այս նկատողությունս հայտնեցի Արիստակես վարդապետին, վոր յերբեմն գալիս եր վանք:

— Շատ ուղիղ եք նկատել,— ասաց,— նույն նկատողությունը արել եմ և յես: Բայց ինչքան լավ կլիներ, վոր այդ ուղղությամբ դրանք միտք ինչ զարգացած լիներին: Այժմ դրանք դտնվում են մի տեսակ խնամակալության և բռնության տակ, մինչդեռ յեթե միտք ինչ զարգացած լիներին՝ բուն հայկական

հոգվով մի ընտանիք կկազմեին: Այժմ դրանց մեջ վոխադարձ սեր, վոխադարձ ազնվություն չկա, բաժան-բաժան անհատներ են, չեն կազմում մի ամբողջություն: Ոչնչին վոչ մտավոր և վոչ ֆիզիքական սնունդ, ինքնալավացման վոչ մի հնար չի տված դրանց: Աշխատելու չե, վոր միաբանության այդ դիտակցությանը հասնե, բայց այս բանին հակառակ են վերևից. նրանք աշխատում են միաբանության անդամներին միմյանցից հեռու պահել, իրար մեջ ատելություն են ձգում և նախանձ, չատերին լրտես ու մատնիչ են չինում, զանազան խոստումներով: Պետք է չատ զգույշ կենաք, դրանց պարզության վրա չպետք է հույս դնել, հիմարին հավատալ կարելի չե:

Այս մարդը չատ չուտ եր հասկացել ինքնապարզացման անհրաժեշտությունը և սեփական աշխատանքով այդ բանին դյուրություն տալը և զարդացրել եր ինքն իրան վոչ միայն մտավորապես, այլ առավել ևս բարոյապես՝ ամենախիստ կերպով վարվելով դեպի ինքը, կտրվելով ամենայն տեսակ թուլություններից և ծուլությունից: Վոչ մի րոպե պարապ չեր անցկացնում, վոչ մի դատարկ բան բերանից չեր հանում, հատունացրել եր իր ճանաչողությունը և կշռադատությունը, խոսքն և խոսքի դիմեր պատասխանել առաջարկված հարցին, իրրև յերկար ժամանակ նրա վրա մտածած արդեն:

Եջմիածին հասնելուս մյուս որը վեհափառն ընդունեց ինձ, որհնեց և պատվիրեց, վոր գրեմ Պետերբուրգ՝ այնտեղից ստանալիք կարևոր պարագաների մասին:

Վեհափառն ինձ կանչում եր ստեպ-ստեպ: Մանկունին միշտ ներկա յեր լինում մեր խոսակցությանը և մերթ իմ խոսքըն եր միջահատում և մերթ վեհափառը: Վեհափառը աչքերը խոժոռացնում եր նրա վրա, նա մի քիչ յետ եր քաշվում, բայց յելի յեղնիկի ցնծությամբ վոստոստելով և կոտրտվելով մեջ եր խառնվում: Վեհափառի համբերությունը վոր հատնում եր, սաստիկ բարկանում եր և հանդիմանում եր սաճկերեն:

Գրեցի Պետերբուրգ պ. Ցեղյանցին, վոր պ. Սանասարյանցի մտերիմն եր և չուտով էլ ստացանք մեր ուղած պարագաները, վորով հեշտացավ Մխքայելիս գործը: Հին մայրերով ձուլած տառերը այլևս պետք չեկան, արագաձույլ մեքենայի վրա նոր մայրերով թափեց նոր տառեր: Հարկավոր եյին ելի մի քանի մանր-մունր բաներ, վոր կարելի յեր Թիֆլիսից դնել: Սրա համար ինձ ուղարկեցին Թիֆլիս:

Մոտ յերեք ամիս եր անցել, ինչ վոր նոր պատկվածս հետացել եյի ամուսնուցս: Հայերեն այնքան սովորեցրել եյի, վոր կարողանում եր իմ նամակները կարդալ և պատասխանել, վորով ավելի ևս սիրելի դարձավ ինձ համար, թեպետ առանց այդ ել նվիրված եյի հոգվույս բոլոր ուժովը: Իմ պետքս չեր, թե յես ել նույնքան սիրվում եյի թե վոչ, բայց ո՞վ կհամարձակվեր սիրո քնքշության կողմից հավասարվել ինձ: Եջմիածին դնալիս, թեկուզ տարի քաշեր՝ հոդս չեր, բայց յերբ այստեղից յերեսս շրջեցի դեպի Թիֆլիս, թեև եյի ուզում, վոր թռչեմ: Ուղեթուղթս արքունական եր, մինչև ել ավելացրած՝ «գնում է հատապողական գործով»: Առավոտը վաղ դուրս յեկա Ցերևանից և մյուս առավոտ արդեն հոգվույս հատորի դրկումն եյի: Ինձ հետ, թարսի պես, դրել եյին մի պոլսեցի, վոր Թիֆլիս հասցնեմ: Սա չեր դիմանում արագընթաց կառքին և բղավում եր՝ «վա՛յ, մեռա, վա՛յ, հոգիս ելավ, ջանըմ ինչո՞ւ կպպանես ղիս»: Վերջը ձգում եյի կառքի մեջտեղը, չորս կողմը խոտով պնդացնում, ինչպես խեցեղենով լիք պարկ, վոր չկոտրվի.— Դե՛, ել ձայն չհանես, յեթե վոչ ճանապարհին վայր կձգեմ և գայլերը կուտեն քեզ:— Խեղճը յերկյուղից ուստ եր կենում, բայց նվում եր ծովաշարժից բռնված նավորդի նման: Թիֆլիս վոր հասանք յերկու շաբաթ պահվեց խեղճը, բայց թե ո՞վ եր, ինչ եր, հետաքրքիր չեղա իմանալու. յերևի Մանկունու ազգականներից եր, ուրիշ ո՞վ կլիներ այնքան անհետաքրքրական, այնքան անճոռնի մի հրեշ: Այսուամենայնիվ իմ արածս անպատիժ չմնաց, այս ղգալի չեր յեղջերվի նման սիրով հարբածիս:

«Արարատ»-ն սկսված եր մայիսին, տարին լրանալու համար մնացել եր մի քանի որ: Նոր տառերն արդեն պատրաստ եյին, բայց յես ուզում եյի, վոր նրանով սկսվի յերկրորդ տարին և մի վոքր մարդավարի խմբագրությամբ: Մեկ որ Մանկունին մի թուղթ բերավ Սինոդից և խունջիկ-մունջիկ դալով՝ ասաց.— Իշտե՛, մարդս քեզի խմբագիր ըրած է, «Արարատ»-ի յերկրորդ տարին դուք պիտի սկսիք:

Թուղթն առա կարդացի և «չատ լավ, ասացի, թեպետ ավելի լավ կլիներ, վոր խմբագիրը միաբանությունից մեկը լիներ, յես կլինեյի նրա ոգնականը»:

— Վո՛չ, պետք չե, դուք կլինիք խմբագիր, իսկ յես ամեն կերպ կոգնեմ ձեզ:

— Բայց այս մի անպատվություն չե՞ միաբանությանը:

— Վոչ, վորովհետև խմբագրի անունը չի գրվիր, ո՞վ գիտի իմանա, վոր խմբագիրը միաբանությունից չե: Վերջապես մարդս այսպես կբարեհաճի, քո մասին անոր շատ բան ըսած ե Սանասարյանցը:

Մանկունին վեհափառի մասին խոսելիս՝ ասում եր մարդս, վոր իրանց լեզվում ներելի չեր, բայց չես ու Բաստամյանցը, վոր հետո չեկավ, այդ բառը լսելիս չեյինք կարողանում մեր ծիծաղը բռնել:

Նոր «Արարատ»–ը սկսեցի չես անպատրաստից, և ինձ համար անակնկալ կերպով: Առաջին իսկ համարում մի առաջնորդող գրեցի «Աշխատություն» վերնագրով, վորի մեջ ցույց տվի, թե վորպիսի ուղղություն պիտի ունենա «Արարատը», թե ընդհանուր տիեզերքը չարժման մեջ ե, ուրեմն մենք ևս պիտի չարժինք, պիտի աշխատինք, թե՝ աշխատությունը մարդուս համար անեծք չե, ինչպես կարծում են, այլ որհնություն: Բոլոր ասածներս վերաբերում եյին վոչ այնքան ազգին, վորքան նույնիսկ միաբանությանը, վոր չերեսի քրտինքով հաց ուտելու սովոր չեր, չեր աշխատում, չեր սովորում, չեր ինքնակրթվում: Միևնույն համարում սկսեցի և յոթ «Ուրհրդածություններս դաստիարակության վրա»: «Արարատ»–ը վոչ միայն արտաքուստ, այլև ի ներքուստ դարձավ մի նորություն և շատ հետաքրքրական: Պետերբուրգից բարեկամներս չնորհակալություն գրեցին, Թիֆլիսի բարեկամներս դովաբանեցին «Մեղու»–յում և չես ավելի խրախուսվեցի:

Չերկրորդ համարում դուրս չեկավ իմ խորհրդածությունս նոր ուսումնարանի մասին: Այն ժամանակ դեռ ճեմարան բառը չկար: Սրբազարության ջերմին ուղարկում եյի վեհափառին և նա վրան գրում եր՝ տպեսցի: Այդ խորհրդածությունը վոր ուղարկեցի, ինձ կանչեց մոտը, և սկսեց որհնել և դովել, և վերջումն ավելացրեց.

— Իմ մասին ասում են, վոր իբր թե չես շատ եմ սիրում դովասանք: Այստեղ դուք ինձ գոված չեք, բայց ինչ վոր լավ ե, լավ ե, լինի դովասանք թե վոչ: Ապրի՛ս տղաս, դու չատ ուսումնականներու դլխու վրա լիմոն կքամես...

Վեհափառն աշխատում եր, վոր ինձ հետ արարատյան բարբառով խոսի, բայց դուրս եր գալիս մի խառնուրդ. խառնում եր և յեղակի և հոդնակի դեմքով խոսելը: Ինչ վոր ե, բայց այս անգամ չես մի թիզ բարձրացա վեհափառի աչքում, թեկուզ սրտանց լիներ ասածը, թեկուզ նպատակավոր, և սկսեցի ավելի ևս ազատ դրել:

Ուորհրդածություններս դրելու համար ձեռքիս տակ չունեյի վոչ դրավոր աղբյուր, վոչ ոժանդակող գիրք: Այս մասին դրեցի Պետերբուրգ Ա. Բաբայանցին, Ն. Սալամբեկյանցին, վոր այդ նյութի վերաբերյալ կարևոր դրքեր հասցնեին, բայց նրանք պատասխանեցին, թե՝ «դու այն ասա, ինչ վոր արդեն դիտես, այդ ել շատ ե. թե մենք ել կաչխատակցենք «Արարատ»–ին և քո պակաս թողածը կլրացնենք դաստիարակության մասին»: Սրանք իրանց խոստումը կատարեցին, բայց վոչ իմ խնդիրս, վախենալով, ինչպես հետո իմացա, թե մի դուրս չես կսկսեմ թարգմանություն անել և հոդվածներս գրկել իրանց սրտաբուխ թարմուրյունից, մոռանալով, վոր ամեն աճելություն անունդ կպահանջե:

Ուորհրդածություններիս մեջ այն միտքն եյի ուզում տարածել, ինչ վոր պահանջում եր նորադույն մանկավարժությունը, թե մարդուս բարոյական, մտավոր և ֆիզիքական կողմերի զարդացման մեջ սեռք ե ներդաշնակություն լինի, կամ՝ վոր նույն ե՝ հոդու, մտքի և մարմնի մեջ: Այդպես ել գրեցի չես: Նախ մարմնի մասին, այսինքն ֆիզիքական կրթության, վորի համար արհեստն անհրաժեշտ համարեցի, հետո մտքի. մասին: կարդը վոր հասավ հոդուն, չես չատ նեղն ընկա: Ինչպես գրեյի, վոր վոչ հոդեբանության հակառակ լինի և վոչ աստվածաբանության: Ինձ ոգնության կանչեցի մեր Դավիթ Անհաղթին իր «Սահմանք իմաստասիրության» գործով, վորպեսզի լինչ տեղ վոր ասածս հակառակ լինի միջնադարյան պաղպաղարներին, իսկույն մի վկայություն բերեմ հինգերորդ դարու փիլիսոփայից, վոր մեղանում և՛ սուրբ ե համարվում և՛ աստվածաբան: Ուշադրության արժանի չե, իրավի, վոր մեր հինգերորդ դարու հայրերը չատ բաներ ունին ասած, վորոնք դլխովին հակառակ են վերջին դարերի սրբացած դաղափարներին: Մեր Ցեղիչյի ասելովը, թե «Բոլոր մարմնոյս հոդի է կենդանություն, իսկ հոդւոյ և մարմնոյ միտք են կառավար», մի ահագին քար ե գցում այն ինքնակոչ աստվածաբանների դլխին, վորոնք մտքի թեյադրությունը չարի թեյադրություն են համարել, և իմաստությունը՝ հիմարություն:

Ցերբ հոդու մասին գրած հոդվածս ուղարկեցի վեհափառին, վոր վրան դրե տպեսցի, նա այդ հոդվածը չատ խրթին

եր դառել և հանձնել եր Տեր–Հովսեփյանցին և Թաշիանոսյանցին, վոր քննեն: Սրանք յեռ եյին դարձրել հոդվածս, ասելով՝ «Վեհափառ տեր, սա աստվածաբանության և վերաբերում, իսկ մենք այդ դիտությունը չունենք, ավելք յեպիսկոպոսներին քննելու»: Վեհափառը կանչում է Սարգիս յեպիսկոպոս Հասան–Ջալալյանին և ասում է, վոր մի ժողով կազմի իր նախագահությամբ և այդ հոդվածը քննադատե: Ժողովը կազմվեց, ուր բացի նախագահից, ներկա եյին Աբել յեպիսկոպոս Մխիթարյան, Գրիգոր յեպիսկոպոս Մուշեղյան, Գրիգոր յեպիսկոպոս Սաղինյան և ելի ուրիշ յեպիսկոպոսաններ և վարդապետներ, վորոնցից չատերը յեկել եյին միայն այդ հանդիսին ներկա լինելու: Ինձ կանչեցին, վոր կարդամ իմ հոդվածը և պաշտպանեմ: Պաշտպանվելուս իրավունքը վեհափառն եր տվել: Վարպետ մարդ եր, նա ուզում եր և՛ հոդվածս պաշտպանված և ազատված լինի, և՛ ինքը չլինի Թուրլ աված, վոր բան է, յեթե դրա տակիցը մի բան դուրս գա, ինքը մեղապարտ չլինի:

Սարգիս յեպիսկոպոսը, իբրև համերկրացի, ինձ սիրում եր վորդու պես, մանավանդ վոր իր աշակերտի աշակերտն եյի: Մյուսները նույնպես չատ հարգում եյին, վոչ վոք արհամարհություն չուներ վրաս հարձակվելու, մանավանդ վոր աստվածաբանություն ասածդ նրանք ել միայն ինձ չափ եյին հասկանում, դուցե դեռ մի քիչ ել պակաս: Բայց նրանք միևնույն ժամանակ և բարի եյին, չատերը մինչև անգամ ինձ պաշտպանում եյին: Այնուամենայնիվ ելի չատ տեղեր ջնջել ավին, ասելով միայն, թե՝ յերկրդիմի յե դուրս գալիս ասածդ և չատերը կարող են գայթակղվել: Ցես ել ջնջում եյի խաթրի համար՝ չարաչար պաշտպանելուց հետո, վորով հոդվածս բավական կըցկըտուր դուրս յեկավ: Այս ժողովում յես մի բան սովորեցի. Սարգիս արքաղանը չուտ չուտ «Հովհաննես–Հակոբի» անունն եր տալիս. հետո իմացա, վոր այդ Հովհաննես–Հակոբը ժան–ժակ Ռուսոն է յեղել, վորից երբ թե յես չատ մոքեր եմ սեվեկտնել:

Այս թշվառ հոդվածը իմ կրոնական գաղափարները ձգել ավավ կասկածի տակ: Այլպազոմակին կարդացել եր և Պետրոս յեպիսկոպոսին ասել, թե «Արարատ»–ում անաստված բաներ են տպվում, իսկ վեհափառը դրա վրա ուշադրություն չի դարձնում: Հիրավի «Արարատ»–ն իմ ձեռքում կրոնական դրոշմ չեր կրում իր վրա, բարոյախրատական եր և զարգացուցիչ:

Այս ժամանակ յեթե մի լավ բան կար ընկճածնում, այդ աղաբանն եր և ձուլարանը, վոր Միքայելիս չնորհիվ չատ պայծառացավ, և մեկ ել վերանորոգված «Արարատ»–ը, վորի մեջ վերջումը տպեցի և «Բացատրություն բնության յերևույթների»: Ով ել գալիս եր ուխտ կամ այցելության, ինձանից եր միայն գոհ մնում և չնորհակալություն անում: Նույն իսկ նահանգապետ կարմալինը, վոր մի լուսամիտ և պարզացած մարդ եր, ձեռքս բռնեց և չնորհակալություն արավ: Յերբ իմացավ ռոճիկիս քանակությունը, «չատ քիչ է» ասաց, և վեհափառին առաջարկեց, վոր ավելցնե իմ ռոճիկը: Շուտով ավելցրին յերկու հարյուր մանեթ ել, բայց Մանկունին սկսեց քիչ–քիչ վոտքն առաջ դնել, սկսեց նախանձել: Նա չատ եր աշխատում, բայց նրա արածը չեր յերևում, պատիվն ինձ եյին տալիս: Նա յեր իմ ու վեհափառի մեջտեղ յեղող մարդը, իմ պահանջներս նա յեր տեղ հասցնում և անհապաղ կատարել տալիս, բայց այդ չեր յերևում, վոչ վոք դրա համար նրան չնորհակալություն չեր անում: Սրա համար ահա նա մտածեց, վոր ինձ դուրս անել տա և իմ պաշտոնն ինքը կատարե: Իսկ այդ չատ հեշտ եր: Գիտեր, վոր յես վոչ մի բանում դիմում չեմ անիլ և չատ կնեղանամ ու դուրս կգամ, իսկ այդպիսի առիթներ չատ կային:

1870 թվականի ամառը վեհափառը գնաց Թիֆլիս և Մանկունին համարյա թե նրա տեղը բռնեց: Սա առիթում եր ինձ, վոր թե իր և թե իր դավառական դործակատարների հոդվածները տպեմ «Արարատ»–ում: Ցես չեյի չարել տալիս այդ հիմար հոդվածները և ձգում եյի խոհանոց: Պետք է ասեմ, վոր այդ կոդմանե չափից դուրս խիստ եյի: Ցես չատցեյի և բաստամյանցի տված մի հոդվածը, վորից նա ևս վիրավորվեց, բայց հետո ինքն ել համոզվեց, վոր կարելի չեր տպել այդ հոդվածը, վորով փիլիսոփայական ուժին եր տված վերջնական հաղթությունը կյանքի կռվի մեջ: Նրան հակառակ՝ յես առաջարկեցի իմ ինքնուրույն տեսությունը, վորից հետո իր չոռած աչքերը ավելի լայն բաց արավ: Իմ այդ տեսությունը հիմնված եր հավատի, բարձր մարդասիրական զգացմունքի, աշխարհության, զուտ բանականի վսեմ հատկություններից՝ ազատ կենդանական հատկություններից, միով բանիվ վոգեկան և այլ փիլիսոփայական յերևույթների վրա: Այս տեսությունն իմ սեփականն եր և իմ գլուխը, թեկուզ ուրիշներն ել դրած լինեն միևնույնը: Պետերբուրգից յես թղթակցում եյի իմ մի բարեկամ ուսանողի հետ

(Նիկոլայ Զիմին)։ Մենք չատ սիրում և հարգում էինք միմյանց, առանց համակարծիք լինելու։ «Վոր համակարծիք չենք միմյանց,— դրեցի մեկ անգամ,— դրա պատճառն այն է, վոր մենք ամեն մեկս բանի վրա նայում ենք մեր աղջային տեսակետից»։ Ինչպես կարելի չէ, վոր Անգլիայից, Գերմանիայից դուրս գա մի Գարիբալդի, մի Վիլհելմ Թել։ Մենք ղզվում ենք ինկվիզիցիայի սոսկ արարքներից և միևնույն ժամանակ հիանում և աքանչանում այրվողների հոգու վեհությունից։ Ցես այս հույսն ունեմ, վոր աշխարհքից կանհետանան բոլոր անիրավ հարձակմունքները և յերկրի վրա կտիրե ընդհանուր յեղբայրությունը, փոխադարձ սեր և հարգանք, այդ ժամանակ միայն մարդը կլինի մարդ, իսկ այժմ նա մի կիսագազան է։ Հավատացած եմ, սակայն, վոր <u>մարդն այս աստիճանին</u> հասնել կարող չե առանց կռվի։ Այս կռվի մեջ նա կհանդիսանա հաղթող, ում ձգտումը վոր կլինի հասնել մարդու այդ բարձր կատարելությանը, իսկ կջախջախվի նա, ով վոր հակառակ կհանդիսանա դրան, թեկուզ ըստ յերևույթին նա չատ գործեղ թվա։ Այս հանդամանքը բացատրվում է նույնպես բնական օրենքով։ Կյանքը ազգի ամեն մի անհատը կլանող է, անհատի էլ ամեն մի հյուլեն կլանող է։ Այդպիսի ազգը կաղ է տալիս ինքն իրան, կուլ է գնում ինքն իր մեջ, նա գառնում է մի բերրի հող, վորի վրա աճում և զարգանում են նոր և թարմ ազգեր։ Մենն լինճ չի սարսափեցնում, բարձր ծառերը վայր են ընկնում սրմատահան, իսկ թուխները մնում են անվնաս։ Թող իմ այս մտմտուքը լիներ մի ցնորք, բայց յես կցանկանայի, վոր ամեն մի անհատ այդպիսի ցնորքներ ունենար։

Այս հիշողությունը մեջ բերի Բաստամյանցի հոգվածի առիթով։ Ցես կարծում եմ պակաս, վոր նրա անձի, նրա յերևելու վրա կարժեր ավելի չատ խոսել, քան նրա հոգվածի։ Նրա ժամանակակիցները, նրան մտիկ ճանաչողները չատ սպեբախտ են, չդրելով նրա մասին, ինչ վոր գիտեն։ Այդ հանդիմանությունից ինքս լինճ ազատելու համար, յես ահա կատեմ, ինչ վոր գիտեմ նրա մասին, վոչ լռվի, այլ իրրև ակնատես։

Առաջին անգամ Բաստամյանցին յես տեսա Պետերբուրգ, 1866 թվականին։ Ցեկեղեցու տան յերրորդ հարկում յես բա-

վական ընդարձակ սենյակ ունեյի և չատերն են հյուրասիրվելիք այդտեղ լինճ մոտ։ Բաստամյանցը Մոսկվայի համալսարանի բրամաբանական բաժնի ուսանող եր, բայց ոչպես լռղ· վոչ մի տարի քննություն չեր տալիս և համալսարանն էլ քիչ եր այցելում, ավելի տանն եր պարապում և սովորում արդեն վճռած դասախոսությունները։ Պարապում եր և կողմնակի բաներով, որինակ վերջերում նա մի սլիտակեղենի կարանոց եր բաց արել, ուր բանվորներն աղջկերք եյին։ Սրա վրա բամբասում եյին նրան ուսանողները, բայց ղուբ։ Նրա արածը վատ միտք չուներ։ Նա ուզում եր աշխատության միջոցով զերծ եղել սեռին բարոյական անկումից ազատել։ Բարձր եր գաղափարը, իր նյութական կարողությունից վեր, բայց այդ մարդը անում եր, ինչքան վոր կարող եր։ Նա գրագրություն ուներ քիչ թե չատ գարգացած, բայց արդեն իրանք իրանց ծախած աղջկերանց հետ, հորդորում եր, վոր դուրս գան այդ սոսր վիճակից և մի աշխատություն ձեռք բերեն։ Այդպիսիների մեկի հետ յես անձամբ ծանոթացա։ Չափից դուրս զեղեցիկ եր և բավական զարգացած։ Այս աղջիկը Պետերբուրգումն եր և գտնվում եր այնպիսի մի տեղ, ուր գրականության մեջ մարդիկ դնալու սովորություն չունեին, թեև իրականի մեջ չատ են հաճախում։ Այդ աղջիկն ահա Մ. Տեր-Գրիգորյանցին ցույց եր տվել Բաստամյանցի գրած նամակները Մոսկվայից, վորով առաջարկում և հեռանալ ինքնասպանությունից և մի գործով պարապել։ Այդ նամակներից մեկի մեջ ասում է՝— Ցեթե դու այդ քաջությունն ունենաս, յես խոստանում եմ մինչև անգամ ամուսնանալ քեզ հետ։ Աղջիկը չեր համաձայնել, առարկելով, վոր կարող է նրա անկեղծ սերը և մտերմությունը, նրա բարեկամեցողությունն իր չարը գործ դնել։

— Ի՞նչ կասես սրան,— հարցրեց ինձ Մ. Տեր-Գրիգորյանցը։

— Այն կասեմ,— ասացի,— վոր այս աղջիկը իր ընկած վիճակի մեջ չատ և չատ բարձր է քեղանից, վոր ամեն այդպիսի վեհ զգացմունքների վրա ծիծաղում ես։

— Ախ, յես մոռացա, վոր դու էլ Բաստամյանցից բեթար հիմար ես,— սրախոսեց Միքայելը։

Բաստամյանցն այդ ժամանակ ընդհանուր մարդասիրական զգացմունքներով եր տոգորված, նեղ ազգասիրական վոգի չուներ։ Նա ինքնակրթության և արհեստների պաշտպան եր։ Ամեն

ինչ սովորում էր ինքն իրան, հենց դրա համար համալսարան չէր հաճախում, և բոլոր կուրսերի քննությունն էլ մի անգամից ավեց, վորով զարմացրեց շատերին և դրավեց պ. Սանասարյանցի ուշադրությունը: Նա դեռ ուսանող ժամանակ «Մեղու»-յի առաջին տարիներում տպեց Բենիամին Ֆրանկլինի կյանքը: Նա չէր կարող յերևակայել, վոր այդ մարդու կենսագրությամբը ինձ մեծ խրախույս ավեց: Վերջերումն ասում եմ յես իրան այս բանը: Նա շատ հոդվածներ էր գրում, բայց տպել էր տալիս կեղծ առորագրություններով և դրանով էլ պարծենում էր:— Այս ինչ հոդվածը յես եմ գրել,— ասում էր, — բայց անունս չեմ գրել...

— Ամենի լավ է,— ասացի,— դնելը, քան չդնելով պարծենալը, յերեք չես գրել նրա համար, վոր վոչվոք չիմանա, թե դու յես գրել, եվ ո՞ւր ես ամենքին ասում, վոր դու յես գրել: Այսպիսի պարծենկոտություն ուներ: Վերջերումս ասում էր, թե մի հարյուր տարի պիտի անցնի, վոր կրկին մի Բաստամյանց յերևա, բայց այն էլ՝ դժվար թե...

Հերթովի վոր այս մարդը նշանավոր մարդ էր, ինչ անենք, վոր իր վրա մեծ համարում ուներ. ո՞վ չե այդպես, առանց նրա արժեքն ունենալու էլ:

Մաքրասեր էր վերին աստիճանի, իր կերակուրն ինքն էր յեփում, իր հագուստեղենը ինքն էր կարում: Ով ե տեսել այսպիսի տարորինակ քնավորությամբ մարդ մեր ուսանողների մեջ: Ասում էր չափից դուրս շատ, և խոսելիս էլ ըղգացնել էր տալիս, վոր ասածը շատ ուղիղ պետք է համարի լսողը և զարմանա: Իսկ յերբ խոսում էր ռուսերեն, ուզում էր զարմացնել իր ուղիղ խոսելովն և բառերի ուղիղ արտասանելովը: Իր այսպիսի ձևերով մարդկանց չէր քաշում դեպի իրան, այլ յետ էր մղում:

Նա յեկավ ԵՂմիածին պ. Սանասարյանցի հանձնարարությամբ: Նրան ավին առանձին սենյակ և կերակուր: Ինքն ասում էր, վոր յեկել է հայոց յեկեղեցական և քաղաքական իրավաբանությունն ուսումնասիրելու համար ԵՂմիածնի մատենադարանից ոգտվել: Նրա համար բաց էր մատենադարանը և կարող էր իր ուզած գրքերը տանել իր սենյակը և քաղվածներ անել: Ճեվ պարապում էր անխոնջ կերպով, քաղվածներով լցրել էր բազմաթիվ տետրակներ: Նա գրել էր և Թիֆլիս քաղաքի ընդարձակ պատմությունը, վոր յերեք տպվեր, մի ահագին հատոր գուրս կգար: Ուր մնացին այդ աշխատությունները— հայտնի չե ինձ:

Մի տարուց հետո պարապեց ԵՂմիածնումը: Ապրականություն ուներ յերևանցի Մելիք—Աղամալյանների տան հետ, ուր դեռնում էր շատ անգամ:

Մի տարուց հետո Բաստամյանցը գնաց Թիֆլիս, ուր ուզեց ամուսնանալ, բայց այդ ամուսնությունը վոչ միայն չհաջողվեց, այլ և վարդապետացրեց նրան մի քանի պարերի սիրահարների նման: Նա էլ գնաց Գայանեի վանքումն անցկացնելու իր սև որերը: Նրա այդ նոր ձեռնարկությունը հաշտեցրեց նրան իր նախկին բարեբարի՝ Սանասարյանցի հետ: Բանից դուրս յեկավ, վոր պ. Սանասարյանցին վարդապետանալու խոսք է յեղել տված: Աստամնաղանցության համար Սանասարյանցը դադարեցրել էր իր ոժանդակությունը, բայց յերբ կատարեց իր խոստումը, պ. Սանասարյանցն էլ ուղարկեց նրան Ցեվրոպա և նրա ամեն ձեռնարկություններում ձեռնտվություն ցույց տվավ: Դրա հետևանքն էլ այն յեղավ, վոր նա մանավոր տպարան բաց արավ իր վանքումը, սկսեց հրատարակել «Դպրոց» ամսագիրը և պատրաստեց Գոչ Մխիթարի դատաստանագիրքը մեծագյան ուսումնասիրությամբ, վորով անմահացրեց իր անունը:

ԵՂմիածնումը նրա գինը չիմացան. նրան թողած՝ ճեմարանի կառավարության համար բերին այնպիսի մարդիկ, վորոնք արժանի չեյին Բաստամյանցի կոչիկը վերցնելու: Այս բանը նրան հարվածեց և նա մեռավ, առանց այդ հանգամանքն էս ձգելու իր անտիպ հիշատակարանի մեջ, ուր նկարագրած ունի իր ժամանակակից միաբանակիցների վորպիսությունը, նրանց քնավորությունը:

III

Արիստակես վարդապետն իմ մեջ այն միտքը ծնեցրեց, թե հարկավոր է մոտ լինել միաբանությանը և նրան՝ թմրությունից հանելով՝ ինքնագործունեության վոգի տալ: Վեհարանն իրան կղզիացրած էր պահում և միաբանության վրա իշխում էր մի տեսակ բռնապետական քաղաքականությամբ: Արծաթասիրությունը, սիմոնականությունը վիշապի կերպարանք էր առա-

ցել, և կուլ եր տալիս դրսից ու ներսից յեկած մուռքերը: Մանկունին բավական ազատ եր պահում իր այդ ախտից, բայց հետզհետե դուրս մղեց ուտողներին և ինքը բռնեց ամենքի տեղը: Ձեռք առնելով վեհափառի ուժը, այսինքն նրա բարեհաճությունը, նրանով տիրեց ամենքին: Կորցրեց իր համեստությունը և ինքն իրան մի Բիսմարկ յերևակայեց, մոռանալով ամն, ինչ վոր յերբեք չի եղ լմացել— թե իր տիրապետությունը բարոյական և մտավոր ուժի հետևանք չե, վարչական ընդունակության գործ չե, այլ այնպիսի մի բան, վոր կարող ե անել չահի ամենասինլքոր մանկլավիկն անգամ: Ցես հակառակ եյի նրա այս ընթացքին և պաշտպանում եյի մխաքանության ոգուտը, վորով և դարձա նրա աչքում հակավեհարանական: Մեր այսպիսի հարաբերությունը, վեհափառի բացակայության ժամանակ, այն աստիճան լարվեց, վոր մեկ որ եղ Մանկունին ուղղակի մի այսպիսի հարց դրավ— կամ յե՛ս, կա՛մ Աղայանց[1]):

Այս հարցին պետք ե պատասխան տար տպարանական ժողովը, վորի նախագահն եր Գրիգոր յեպիսկոպոս Մուշեղյանցը, մի պարթև, քաջ և վերին աստիճանի անաչառ և աղնիվ մարդ:

Պրոկուրորը այդ ժամանակ Ծերունի Վասակյանն եր: Սա իմանալով իմ և Մանկունու լարված հարաբերությունը, ասաց.— Սիրելի Ղազարոս, դու այդ Մանկունուն մի դիպչիր: Ցեթե ուզում ես այդտեղ մնալ և վանքին մի ուրուտ տալ, դրա հետ հաշտ ապրիր: Ներսեսի պես մեծ մարդը, մեծ կաթողիկոսը, մի լակոտի ձեռքում խաղալիք եր, և նրա խոսքով ինձ դետին ձգեց: Հանցանքս այն եր, վոր այդ լակոտին լակոտ եյի անվանում: Դու Մանկունու իսկական անունը մի տալ:

Ցերբ բանը հասավ տպարանական ժողովի վճռին, ինձ եղ, Մանկունուն եղ կանչեցին այնտեղ: Այդտեղ հայտնեցի Մանկունու վոտնձգությունները, ասացի, վոր յես սրան առաջ քաշեցի, ամեն բանի հետ ծանոթացրի, վոր ժամանակին պետք դա. բայց սա այդ ժամանակն արդին հասած և համարում, ուզում ե իմ տեղը բռնել, ուզում ե ինձ իր ստորադրյալը համարել, իր հրամանակատարը, իսկ յես այդ անել չեմ կարող,

[1]) Այն ժամանակ Մանկունին ուզում եր «Արարատ»-ը Գոլսի Ղալաթիայի ոջախի օրգան դնել, իսկ յես հակառակում եյի և չեյի տպում լինելով հայրիկյան:

քանի վոր ինքս եմ գործի պատասխանատուն: Ցերբ վոր յես չեմ լինել, այնուհետև ինչ ուզում են՝ թող անեն, իսկ քանի վոր կամ, կրավորական դեր չեմ կարող կատարել:

Մանկունին լուռ եր, վոչինչ չեր խոսում, յերես տված քըմահոլ յերեխայի նման այնպես եր ուռել, վոր քիչ եր մնում լաց լինի: Ցուր այդ դիրքով ղրացնել. եր տալիս, վոր ժողովն ոգուտ ե քաղում նրա անպաշտպան վիճակից, նրա պաշտպանի բացակայությունից, հիշեցնում եր մորից հեռու ղրկվող յերեխայի, վոր ճարահատյալ կանչում ե՝ վա՛յ, նանի՛... Մաքսիմս ասում եյի՝ «Հիմի այդպես չես, բայց աստուծով այդ որը կընկնես ժամանակով, և կզգաս, թե ում չնորհիվ եյիր ղըրթվրթում և սիրամարդի պես պոչդ խաղացնում»:

Ժողովը միաձայն ինձ պաշտպանեց, բացի Սուրենյան սարկավագից: Դա արդեն նվիրվել եր Մանկունու խնամակալությանը, դառել եր նրա զաղտնատուն: Բայց այնպես եր ուզում պահել Մանկունու կողմը, վոր ինձ եղ չկինի վիրավորած, բայց ինչ կուզի լինի ինձ ավելի մոտիկ եր համարում իրան, քան թե Մանկունուն: Բայց ղրանով չեր կարող չահել իմ սիրտը, քանի վոր յես արդեն շատ բան դիտեյի իր հաղորդածներից:

Վերջումը խոսեց Գրիգոր յեպիսկոպոսը շատ վրդովված և հուզված, կարծես մի առիթի յեր սպասում, վոր իր բոլոր մաղձը թափե Մանկունու դլխին: Ցածրից սկսեց և հետզհետե բարձրացրեց ձայնը, վերջումը մատը թափ տալով Մանկունու վրա՝ ասաց.— Ե՛, տիրացու, վոտքդ շատ ես առաջ դրել, աղի մկան պես ամեն բղուղի մեջ ես ընկնում, ամեն բանի մեջ խառնվում: Ցեթե դու յես տպարանի տերը, նրա վրա հսկողը, ել այս ի՞նչ ժողով ե, ինչո՞ւ յե սրա անունը տպարանական: Մի՞թե մենք քո ծառաներն ենք: Ի՞նչպես թե՝ «կա՛մ յես, կա՛մ Աղայանցը»: Դու ո՞վ ես, ինչացո՞ւ յես: Ցեթե դու մի բանի պետք եյիր, ել ո՞ւր եյինք այդ մարդուն հրավիրում: Ցեվ ապրի՛, ղրանա. դա մեր սպասածից, մեր ակնկալությունից ել շատ ավելի բարձրացրեց թե մեր տպարանը, և թե ամսագիրը: Այս բանը մենք մեր յերազումն ել չեյինք տեսել: Հետո դառնալով ինձ, ասաց.

— Պարոն Աղայանց, դուք ձեզ համար միամիտ և անհոդ յեղիք, վոչ վոք իրավունք չունի ձեզ վրա, բացի վեհափառից:

Մանկունին դուրս դնաց սևացած՝ ինչպես յերեսին մուր քսած, իսկ յես դառնալով Մուշեղյանին՝ ասացի.

— Սրբազան հայր, ես մի ազատ մարդ եմ, ուր լինի՝ կապրեմ, բայց դուք կախումն ունեք մի այնպիսի իշխանությունից, որի կամքը Մանկունու ձեռքումն է: Աստված տա, որ ես սխալված լինեմ, բայց այդ կնշանակի, որ ես կույր լինեմ յեղած և վոչինչ չլինեմ տեսած, լինճ պաշտպանելով՝ դուք ձեզ հալածանքի տակ եք ձգում:

— Ղազարոս,— ասաց սրբազանը,— յես այդ բանը գիտեմ, բայց կարող չեմ սևին սև չասել և սպիտակին սպիտակ: Ցես իմ ասելիքը կասեմ, իմ անելիքը կանեմ, Թող ուրիշներն էլ իրանցը անեն, իհարկե փչից խաղող չի քաղվիլ, այլ փուչ:

Մոտեցա սրբազանին և չատ հուզված համբուրեցի սուրբ աջը, չըշնչելով՝— իմ ու քո բանը վերջացած է...

Ցեվ իրավ վերջացած եր: Հենց նույն յերեկոյին դանճապետ Ներսես վարդապետ Խուդավերդյանը, որ իմ ամենամոտիկ բարեկամս եր և սիրելին, յեկավ մոտս և ասաց ուղղակի.

— Ղազարոս, ով իմանա չիմանա, դու պետք ե լավ իմանաս, Թե ինչ ե Մանկունին: Ազգն ընտրել ե մեկին, նա էլ մի ուրիշին. հիմա մենք այդ ուրիշի ձեռքի տակին ենք: Այսպես ե հանդամանքը, ի՞նչ կարող ես անել: Ցես գիտեմ, որ դու այստեղ մնալու մեծ վստահություն չունես, բոլոր ուսումնարանների դռները բաց են քեզ համար, ուր որ գնաս և՛ ավելի ռոճիկ կստանաս, և՛ ավելի պատիվ: Գնա՛, յեղբայր, ի՞նչ ես ուզում մեզանից, քո խաթրու մենք էլ սիրտ կբակի մեջ ընկնենք, ի սեր աստուծո, հեռացիր մեզանից, էլ չենք ուզում, հո՛, հո՛...

— Հասկանում եմ,— ասացի,— Մանկունին քեզ ուղարկել ե ինձ հորդորելու, որ յես հրաժարվիմ. ուղիղն ասա, այդպե՞ս ե Թե վոչ:

— Այդպես ե, ախպեր, մեղքս ի՞նչ Թագցնեմ: Ցեվ պետք ե հրաժարվես: Վնասդ ի՞նչ ե: Կուզե՞ս, քո ամբողջ տարվա ռոճիկը կտանք, դնալուդ ճանապարհածախքը նույնպես, Թեկուզ՝ մեկին յերկու:

— Ի՞նչ ասեմ: Ցեթե փոխանակ վրդ տալու՝ մարդ պահելու համար տալիս եք, որ հեռացնեք, էլ յես ի՞նչ ասեմ. յերևի այսպես ե ձեր վեհարանի ադաթը: Ցես մեծ չեմ քան Թաղիադյանը: Նա այստեղ տեսավ Թքամանը Թանաքամանի դառած, իսկ յես տեսնում եմ միևնույն Թքամանը Թաղավոր դառած: Իհարկե չարժե այլևս այստեղ կենալ: Բայց յես վոչինչ չեմ ուզում ձեզանից. ինչ վոր լինճ հասնելու յե, միայն այն ավելք: Ինչ վոր ավելի յեք ուզում տալ, նրանով մածունը առեք, Մանկունու դլխին ածեցեք, որ սևացած յերեսը սպիտակի:

— Այս րոպեիս կերթամ և ինչ վոր քեզ հասնելու յի կբերեմ,— ասաց Ներսեսը և դուրս դնաց ուրախ-ուրախ, որ Մանկունուն մի ուրախ լուր տանի:

Ներսեսի բարեկամությունը դեպի լինճ անկեղծ եր: Մեր բարեկամությունը չարունակվեց յերկար ժամանակ:

Ցերբ վոր յես համաձայնեցի հեռանալ, և Ներսեսն էլ դնաց իմ հավիվս տեսնելու, ընկերներս՝ Միքայելն ու Մովսեսը բարկացան վրաս, Թե ինչո՞ւ համաձայնեցիր: —Ցեթե այդպես ե,— ասացին,— մենք էլ կհրաժարվենք:

— Չե՛,— ասացի,— յեթե լինճ սիրում եք, հանդարտ կացեք: Այս տունը Մանկունունը չե, այլ ազգինը: Մենք պարտական ենք ծառայելու, վորքան վոր կծառայվի, քանի վոր մեզ դուրս չեն արել: Ցերբ վոր դուրս կանեն, ի՞նչ ճար ունենք, պետք ե հեռանանք: Մանկունին չատ ատաանա յե, բայց այնպիսի սատանա, վորին վրացիք ասում են վիրեշմակի: Դա մի աբանության կապը քանդում ե՝ իրարից բաժանելով, մեկին սեր ցույց տալով և մյուսին ատելություն, մեկին մեծամեծ խոստումներ անելով, մյուսին՝ ապտռնալիք, մեկին լրտես ե չինում մյուսի վրա, այդ լրտեսի վրա էլ մի ուրիշ լրտես ե նշանակում, իսկ ինքը լրտեսում ե ամենին էլ: Ազգին խաբելու համար չատ նուրբ հնարներ ունին, այնպիսի հնարներ, վոր վոչ մի խաչագողի մտքով չի անց կացել: Գիտեն Թե ազգն ինչ ե սիրում և ինչ ատում: Ձևացնում են ազգի ատածին ատելով ատեցող և դրանով ազգի աչքում քավում իրանց լեռնացած հանցանքները, մարսում ամեն տեսակ հարստահարություն և հափշտակություն: Այնուամենայնիվ ձեր այստեղ մնալն ինճ պետք ե: Ցես պատրաստված եմ միայն մեր ազգին ծառայելու համար, իսկ այդ աստպարեզում ծառայել կարելի չե առանց դրանց հետ հաշտ լինելու: Ի՞նչպես կարող ես վարժապետ լինել մի ազգային դպրոցում առանց դրանց Թույլտվության: Դրանք այսոր վռակել են Ռուչյանցի առջև հայոց ուսումնարանների դռները, նույնը կարող են և ինճ անել: Կամա ակամա յես սիրտ լռեմ և մարսեմ Մանկունու այս արարմունքը: Դրա-

ռած: Իհարկե չարժե այլևս այստեղ կենալ: Բայց յես վոչինչ չեմ ուզում ձեզանից. ինչ վոր լինճ հասնելու յե, միայն այն ավելք: Ինչ վոր ավելի յեք ուզում տալ, նրանով մածունը առեք, Մանկունու դլխին ածեցեք, որ սևացած յերեսը սպիտակի:

— Այս րոպեիս կերթամ և ինչ վոր քեզ հասնելու յի կբերեմ,— ասաց Ներսեսը և դուրս դնաց ուրախ-ուրախ, որ Մանկունուն մի ուրախ լուր տանի:

Ներսեսի բարեկամությունը դեպի լինճ անկեղծ եր: Մեր բարեկամությունը չարունակվեց յերկար ժամանակ:

Ցերբ վոր յես համաձայնեցի հեռանալ, և Ներսեսն էլ դնաց իմ հավիվս տեսնելու, ընկերներս՝ Միքայելն ու Մովսեսը բարկացան վրաս, Թե ինչո՞ւ համաձայնեցիր: —Ցեթե այդպես ե,— ասացին,— մենք էլ կհրաժարվենք:

— Չե՛,— ասացի,— յեթե լինճ սիրում եք, հանդարտ կացեք: Այս տունը Մանկունունը չե, այլ ազգինը: Մենք պարտական ենք ծառայելու, վորքան վոր կծառայվի, քանի վոր մեզ դուրս չեն արել: Ցերբ վոր դուրս կանեն, ի՞նչ ճար ունենք, պետք ե հեռանանք: Մանկունին չատ ատաանա յե, բայց այնպիսի սատանա, վորին վրացիք ասում են վիրեշմակի: Դա մի աբանության կապը քանդում ե՝ իրարից բաժանելով, մեկին սեր ցույց տալով և մյուսին ատելություն, մեկին մեծամեծ խոստումներ անելով, մյուսին՝ ապտռնալիք, մեկին լրտես ե չինում մյուսի վրա, այդ լրտեսի վրա էլ մի ուրիշ լրտես ե նշանակում, իսկ ինքը լրտեսում ե ամենին էլ: Ազգին խաբելու համար չատ նուրբ հնարներ ունին, այնպիսի հնարներ, վոր վոչ մի խաչագողի մտքով չի անց կացել: Գիտեն Թե ազգն ինչ ե սիրում և ինչ ատում: Ձևացնում են ազգի ատածին ատելով ատեցող և դրանով ազգի աչքում քավում իրանց լեռնացած հանցանքները, մարսում ամեն տեսակ հարստահարություն և հափշտակություն: Այնուամենայնիվ ձեր այստեղ մնալն ինճ պետք ե: Ցես պատրաստված եմ միայն մեր ազգին ծառայելու համար, իսկ այդ աստպարեզում ծառայել կարելի չե առանց դրանց հետ հաշտ լինելու: Ի՞նչպես կարող ես վարժապետ լինել մի ազգային դպրոցում առանց դրանց Թույլտվության: Դրանք այսոր վռակել են Ռուչյանցի առջև հայոց ուսումնարանների դռները, նույնը կարող են և ինճ անել: Կամա ակամա յես սիրտ լռեմ և մարսեմ Մանկունու այս արարմունքը: Դրա-

ասից չես չէմ դիմչվիլ դրանց, բայց յեթե դա ինձ չհամաաա և սկսե հալածել նաև դուրսը, դուք այստեղ լինելով՝ կանձամ-հարեք դրան: Իմ գնալուց հետո դա հարկադրված կլինի ձեզ և՛ ավելի պատիվ տալ և ավելի ոռճիկ: Առավել լավ, Թող իմ Ջերու բարձրացնի իմ բարեկամներին:

Տղերքը համոզվեցան և հանդարտվեցան:

— Մանկունին այնպես է կարծում,— ասացին,— վոր դու մեզ չաա ես պաշտպանում, մինչդեռ քո խաուրթյունը դեպի մեզ անդիմադրելի հատցնում: Դու դնա և միամիտ կաց, քո բացակայության ժամանակ մեր քեֆին քեֆ չէ հասնել: Ինչքան ուզենանք՝ այնքան կշինենք, Մանկունին ինչ դիտե, Թե վորքան պետք եր չինել:

Հիրավի ինչպես յես եյի աչխատում, նույնը պահանջում եյի և իմ ընկերներից, Թեև առանց իմ ասելու եյ իրանց գործը կատարում եյին ամենայն բարեխղճությամբ: Միքայելն ու Մովսեսը իմ խաուրթյունը պատժելու մի հնար եյին մտածել: Մորուքս չաա յերկար եր, իսկ ելմխածինը չոք: Մեկ որ գալաք կանչեցի և մորուքս տակիցը խուղել տվի: Սրանք հավաքեցին կարած մորուքս և կոխեցին մեկ տեղ: Ցերբոր նեղացած եյին լինում վրաս և բարկացած՝ հանում եյին մորուքս և իրար ձեռքից հաւիչտակելով՝ դիպդում...

Սխաո եր, վոր յես հետաց ելմխածնից: Հետանալուցս մի ամիս առաջ գնացել եյի Թիֆլիս, վոր Մոսկվայից պ. Հովհաննեսյանցի ընծա ուղարկած արագատիպ մամուլը տեսնեմ և ուղարկեմ ելմխածին: Գնացի տեսա և վհհատուն, վոր այդ ժամանակ Թիֆլիսումն եր, ասացի, վոր վոտքով բանեցնելու մի հնաձև փոքրիկ մամուլ է, մանր մունր բաներ տպելու համար, և այն եյ, կարծեմ, մի յերեսը միայն կարող է տպել, իսկ մյուսը՝ վոչ: Շատ լավ կլինի, վոր այդ մեքենան այստեղ վաճառենք և մեր դործին հարմար ուրիշ արագատիպ բերել տանք: Վհհատուռը մտածելու ժամանակ ուզեց և մի քանի որից հետո պատասխանեց:

— Մեքենան տղան կուզե, պետք է ուղարկել:

Տղան Մանկունին եր, վորը տղայամտություն եր ունեցել կարծելու, վոր իբր Թե մեքենան այնքան լավ եր, վոր Թիֆլիսի տպարանատերերը ինձ կաշառել են, վոր իրանց տամ այդ հրաշալիքը և գրկեմ ելմխածնի տպարանը: (Այդ մամուլը հիմա էլ ելմխածին է, ցանկացողը կարող է տեսնել, Թե քանի դրոշ կարժե):

Մամուլն ուղարկեցի: Ապսպրեցի հետս, վոր դա ամուսնուս տանե ամարանոց— մեր Լոք սարը, իսկ յես հետս մի մանչնիկ վերցրի և գնացի ելմխածին: Մանկունին այնքան մանկամիտ եր, վոր կարծում եր, Թե մեկ մարդ կարող է լինել մի քանի վարպետ և միևնույն ժամանակ նաև խմբագիր: Մաշինիստին վոր տեսավ, շատ բարկությունը յեկավ, Թե ինչո՞ւ ավելորդ ծախք եմ արել (վորպեսի՛ խնայողություն), ինչո՞ւ այդ բանը յես ինքս չսիրտ կատարեմ, հապա և ո՞ւր ենք տարեկան ութ հարյուր մանեթ չինել ոռճիկը: Սակայն յես առանց վհհատուռի հրամանի ու կամքին չեյի տարել մաշինիտին:

Մաշինիստը սպրքից մեքենան, և այնպես դուրս յեկավ, ինչպես յես տվել եյի սրտին: Մանկունին ասիտում եր, վոր մաշինիստը անչնորհք և անպետք մեքենային մի նոր չնորհք տա, յեթե վոչ,— ասում եր,— ջո վարձդ չեմ տալ: Կարծում եր վոր յես դիտությամբ մեքենայի վարկը վայր եմ դցում, վոր իմ ասածն արդարացնեմ: Հենց այստեղից էլ սկսվեց մեր կռիվը: Յես Թույլ չեյի տալ անպատվելու իմ տարած մարդուն, իմ նախկին վարպետին և պատվական բարեկամին, վորի մասին կարժե այստեղ մի քանի խոսք ասել:

Այդ մարդն իտալացի եր, Բյուֆոնի ապրանուով, վորին ավելի լավ կճանաչեն Թիֆլիսի նախկին դերասանները: Դա յերկրորդական դերասան եր իտալական խմբում, միևնույն ժամանակ շատ լավ տպագրիչ եր: Դեռ ենիֆանյանցի տպարանում յեղած ժամանակս դա իր ազատ ժամերին գալիս եր նույն տպարանում աչխատում և ինձ շատ բան եր սովրեցնում: Տանում եր և Թատրոն, կուլիսների յետևում կանդնացնում:

Առաջին անգամ յես Թատրոն տեսել եյի դեռ Վորոնցովի ժամանակ: Մեկ անգամ, առանց սամսակի, դրսով դլուխս ներս դցեցի Թատրոնի վերնահարկը, վոր տեսնեմ՝ սա ինչ բան է: Ինչպես Ամերիկայի վայրենիները առաջին անգամ քաղաքակրթի մարդիկ տեսնելով՝ ապշել եյին, նույնպես ապշեցա յես: Իհարկե վոչինչ չհասկացա, բայց այն տպավորությունը դուրս տարա, վոր մի քանի չարաթ չարունակ յերդում եյի անընդհատ, ձայնիս յերևելները և բառերը նմանեցնելով լսածիս, բոլորովին այնպես՝ ինչպես յերդում են մանուկները՝ նմանո-

դուքյամբ սուտ բաներ հնարելով: Սկզբումը որկեստրի ածելը ինձ թվում էր մի աններդաշնակ խառնուրդ, վորպես թե՝ մեկը տաքին էր վչում, մյուսը հովին, մեկը գոռում էր, մյուսը ծվում, բայց քիչ-քիչ ականջս ընտելացավ և ես զգացի մի հիանալի ներդաշնակություն և սքանչացա վերին աստիճանի: Վերջերում թե Պետերբուրգ և թե Մոսկվա շատ եյի գնում թատրոն. սիրում եյի մանավանդ բալետները, հեքիաթական տեսարանները ինձ շատ եյին դրավում: Տանում եյի հետս և Միքայելին, բայց նրա քունը տանում էր ամենալավ տեսարանների ժամանակ անգամ...

Ռուսաստանից վոր յեկա, Բյուֆոնին արդեն ծերացել էր և անգործ մնալով՝ հանձն էր առել Ֆրանկմասոնների դործակատարությունը: Զափռաղանց հայրենասեր էր: Ցեղել էր և Գարիբալդիի խմբում իբրև կամավոր. ալ վոտքը վիրավորված էր ղնդակով: Զափից դուրս վոգևորվել և ուրախանալ դիտեր, իսկ յերբ վոր բարկանում էր՝ բերանից փրփուր էր թափում, կարծես կատաղում էր: Հանաք անել այսպիսի մարդու հետ կարող չեր Մանկունին.— վարճը տվին լիովին և յես հեռանալս՝ դրան եյ հետս վերցրի:

Ուզենալով նախկին վարպետիս մի հյուրասիրություն ցույց տալ, յես ձիեր վարձեցի և Աբարանի ճանփով, փամբակի վրայով տարա Լոռի՝ Լոք սարի դագաթը, վոր մեր դյուղի սահմանոցն էր, ուր յեկել էր արդեն և ամուսինս: Սարերի և հովիտների ծաղկափթիթ ժամանակն էր և մեր իտալացին չատ տեղ այնպես հափշտակվում էր, վոր ուզում էր ձիուցը թքոտել ընկնել ձորերը:— Մեր Իտալիան լավ է,— ասում էր,—բայց այսպիսի հրաշալիքներ յես այնտեղ չեմ տեսած: Այս ինչ յերկիր է, այս ինչ բուրմունք է, այս ինչ անմահական ջրեր են:

Ցերեկ հասանք մեր տունը, հայրս մի սուփրա բաց արավ ամեն բարիքով լիքը, մեր բարեկամներն էլ՝ ինձ պատվելու համար՝ վորն այս ինչ բերավ, վորն այն ինչ, Բյուֆոնիս կարծես, թե մի հեքիաթական աշխարհ է ընկել և այնպես վոգևորվեց, վոր մի քանի բաժակ դինի խմելուց հետո՝ լաց յեղավ...

Ցերկու որ պահեցի սարումը և յերբորդ որը ձիավոր դրի հետը և ճանապարհ ձգեցի դեպի Թիֆլիս, ուր հասել էր յերկրորդ որը և իր հայրենակիցներին պատմել, վոր այս կյանքումը տեսել է դրախտը և հիմա այնտեղից է գալիս...

կաթժեր, վոր ընկմիածնում բոլոր տեսածներս դրեյի, բայց դժուտ դրանում չեմ տեսնում. մեծ մարդիկ չկային, իսկ թըղունների մասին դրելիս անտես չպետք է առնել և մոծակներին: Ամառը մոծակներից ազատվելու համար՝ դործ են ածում մուրչադդամի, վոր կնշանակե մոծակի տուն, բայց պետք է ասել մոծակարգել, վոր նուրբ չիքելայից են կարում և մահճակալի վրա քառակուսի տոպրակի նման կախելով՝ ազատվում են մոծակի հարձակումներից քնած ժամանակ: Անկարելի յե, վոր խամ մարդ ամառն այնտեղ մնալով ջերմախտ չստանա, մանավանդ իրան անզգուշ պահողը: Ցես զգուշացողներից էինելով՝ մեկ անգամ սաստիկ ջերմեցի: Կես գիշերին, յերկար ժամանակ դելը տալուց և Մանկունու հետ կռվելուց և հայհոյելուս հետո՝ մի քիչ հանդարտվեցա, բայց այդ ժամանակ էլ դավուն ու գոռոնան ինձ հանդիստ չտվին:— Այս ինչ անպիտան մարդիկ են, ասում եյի մտքումս,—գիշերվա ժամը յերեքին այս ինչ հարցանիք է, վոր սարքել են: Ձայնը գալիս էր բավական հեռվից, բայց թափանցում էր մինչև ուղեղս և ականջներս մեջ գոռոնալի բոլոր յեղանակներն էլ ածվում էր: Շատ վոր քնհանգստացա, դուրս յեկա սենյակիցս, բայց էլ վոչ գոռոնա և վոչ դավուլ, այլ միայն մի մարդ տեսա, վոր տաշահատակի վրա անց ու դարձ էր անում արագ արագ և մեծ-մեծ կոշիկներով դրոփյուն բարձրացնում:— Ա՛յս է յեղել,— ասացի,— դավուլը, բայց ո՞ւր մնաց գոռոնան: Ներս գնացի և տեղումս պատկեցի թե չե՝ գոռոնաչիք սկսեցին իրանց սահարին առանց դավուլի: Դրսի մարդը ներս էր գնացել այդ ժամանակ: Վերջապես բանից դուրս յեկավ, վոր մոծակներն են յեղել գոռոնաչիքը, վորոնք չկարողանալով ներս թափանցել, ահագին բանակ եյին կազմել հարձակվելու իրանց սվիններով և նիզակներով:

Մոծակներն այնքան յերկյուղալի չեյին, վորքան մորմեղը, կարիճները և ոձերը: Ամեն բոպե վտանդի մեջ եյինք, թե ահա յեթե մեկը չվինի, մյուսը կկծի: Ղաղարապատի խարխուլ սենյակներում իրանց հողե կտուրներով ամեն ինչ կարելի յեր սպասել: Մարությանի սենյակի առաստաղից մի ահագին ոձ վայր ընկավ և խեղճին լեղապատառ արավ: Այս Մարությանը խրիմցի յեր, Այվազովսկու աշակերտներից. վեհարանի մի փիլիսոփան եր: Սա վոչ միայն կոնդակներ և նամակներ եր գրում, այլ և քարոզներ վեհարանի յեպիսկոպոսների համար,

վոր անվիր անեն և մեկտեղ դնացած ժամանակ ատենաբանեն առանց հասկանալու իրանց ասածը: Սա բավական խոշոր մարդ եր և խոշորների հետ եր ընկերություն անում: Գալանեցի վանքի այդ ժամանակի վանահայրը մի շատ հարբեցող մարդ եր, միշտ նրա մոտ եր գնում: Մեկ որ եվ դնացել եր, վոր հետը հարբի, հայր սուրբին մեռած եր դտել և դուռը դրսից կողպած և կնքած: Սրտատվելով չեկավ մտաս, և սկսեց պանդուռվել, վոր դուռը կողպել են վրան:

— Ի՞նչ վնաս ունի,— ասացի,— լհարկե պետք և կողպեն, քանի վոր մեռել ե...

— Ձեզ լսանում, յեղբայր, չունը, չունն եվ հետ են կողպել...

— Այդ եվ վնաս չունի,— ասացի,— նրա դիակի վրա մի սուդ անող սկոտք ե թե վոչ...

— Ցեվ իրավ վոր սուդ և անում, այնպես աղեկսուր կազկանձում և-և պատուհանները ճանկռտում, յելք չունի խեղճը: Գնամ վնհափառին հայտնեմ... այս ինչ բարբարոսություն ե...

Շուտով Մարությանցին ընկերացավ մի նոր մարդ ևս: Դա եր Հովյանցը: Սրան եվ բերել եյին վորպես հաչվառիչ, բայց խնդապես սրան հաչիվ խրճրճող: Այս յերկուսը միասին շատ ընտանիք խմում եյին և յերգում.

Գինի, դինի, կուտաս հոգի,
Բյուր անդամ կխմեմ դինի,
Կը դլվարթանամ:
Կը նետեմ ողին, կը դվարճանամ,
Գինի, դինի, կուտաս հոգի...

Այս մարդկանցն ահա պահեցին, իսկ ինձ դուրս արին: Հովյանցն ինձ ասում եր.— Հրամանքնիդ փոլիթիք չեք: Ատոնց սխալներու, դեղծումներու, մոլություններու առաջքն առնելու չե, այլ խրախուսելու յե, վոր շատ խայտառակություններ անեն, վորպեսզի խայտառակվին, ինչո՞ւ առնել ատոնց խայտառակվելուն առաջքը: Հարն եմ անիծեր: Ցես կմտնեմ իրենց աչքը, Թող իրենք կուրանան, ինչո՞ւս պետքն ե:

Այս մարդը հանաք չեր անում, իսկ և իսկ այդպես եվ անում եր: Նա վեհարանի տզեղ կողմերը վերին աստիճանի խայտառակության հասցնել տվավ իմ հեռանալուց հետո: Թե

այդ ինչ բաներ եյին,— ժամանակակիցներին հայտնի յե և ավելորդ ե ասելը: Վերջը ինքը և Սանդալջյանը, փախան արտասահման և այնտեղից սկսեցին իրանց պրավոր խայտառակությունը: Շատերն առաստել կարծեցին և չհավատացին այդ ծայրահեղ խայտառակություններին: Այդ ժամանակին և վերաբերում ալ. Ջ. նշանավոր հոդվածը, վորի մեջ վոչ մի չափազանցություն չկա: Այդ պատմական հոդվածի հրատարակողը պետք ե «Մեղու»-ն չլիներ և այն եվ Սոդոմ Գոմոր անունով, քանի վոր «Մեղու»-յի խմբագիրը իր նմանների վրա քար ղլցելու իրավունք չուներ, այսինքն՝ իբրև կղերական, նա իրավունք չուներ կղերականների վրա հարձակվելու:

Անկարելի յե մոռանալ և եջմիածնի ոճերը: Մեկ որ, դարտունը նոր բացված ժամանակ, յերբ ոճերը դուրս են գալիս իրանց բներից, բայց դեռևս բոլորովին ազատված չլինելով ճմեռային թմրությունից՝ չեն կարողանում փախչել կամ շարժվել տեղերից, մի խումբ աշակերտներ վերցրի հետս յերկար ճոպերով և գնացինք ոճեր կոտորելու:— Մեկ ժամվա մեջ մինչև յերեք հարյուր ոճ սպանեցինք, այնքան շատ եյին և միմյանց վրա կուտված գանազան փոսերում: Այդ կիսակենդան սողուններին տեսնելու յե սմառվա Թունդ ժամանակին, թե ինչ զազաններ են.— Թռչում են նետի պես դլուխները մի կանգուն բարձրացրած: Եջմիածնում ոճեր կոտորելու սովորություն չունին, մինչդեռ շատ հեշտությամբ կարելի յե ջնջել դրանց հետքերը վանքի շրջակայքից:

IV

1870 թվականն և: Այս թվականի սեպտեմբերին ե սկըսվում իմ դործունեյությունս ուսուցչական ասպարեզում:

Սարից վոր իջանք դյուղ, յես գնացի քահանա, հուսալով վոր Մահար սրբազանը կկատարի իր տված խոստումը: Գնացի մոտը, բայց ընդունելության մեջ մի տեսակ սառնություն և ղդուշություն դուս:

Ցերը վոր պատմեցի եջմիածնի բոլոր անցքերը և վերջումը հիշեցրի իր խոստումը,— այդ մասին կխորհենք,— ասաց:

Ինձանից հետո Մանկունին գրեղացավ, Մուշեղյանին հեռացնել տվեց իր տպարանից, ընկերներիս սիրաշահեց: Մի տա-

բուց հետո Մ[illegible]քայելին քահանա ձեռնադրել տվեց և ուղարկեց իրանց գյուղը: Նա այլևս չէր կարող մնալ Ն[illegible]մխածնում տակավորության պատճառով: Մովսեսը (Վարդանյան) մնաց իրրև տեղապահ, այդտեղ էլ ամուսնացավ: Տպարանից մեծ աշխատանք չունեցավ Մովսեսը, բայց հարմարություն ունեցավ վերջին պատերազմի ժամանակ մի քանի ոգտավետ կապալներ վերցնել, որից այնքան վաստակ ունեցավ, որ կարողացավ իր սեփական տպարանը բանալ Թիֆլիսում:

Ինձ առաջարկեցին գնալ Ախալցխա ուսուցչության, և ես էլ հանձն առա:

Այդ ժամանակ մենք չունեյինք ավանդելի առարկաների համար դասագրքեր, չունեյինք մի վորևե որինակելի և կարգին դպրոց, ամեն ինչ նոր եր սկսվում բոլոնել այս ու այնտեղ: Դասատվության համար ինձ տվին չորս առարկա՝ աշխարհագրություն, թվաբանություն, ազգային և ընդհանուր պատմություն: Գիտության առարկաները էլ սրանք եյին, մնացածը լեզուներ եյին՝ հայերեն, ռուսերեն և ֆրանսերեն, այլ և կրոն, յերկեցողություն և վայելչագրություն: Ուսուցչական ժողովներ չեյին լինում, վոչ էլ ուսման ծրագիր ունեյին: Տեսուչը Վարդան Աբովյանցն եր, մի չատ ազնիվ և պատվական հայ, բայց իր պաշտոնին չատ անհարմար:

Չորս առարկան չատ չատ եր դործը նոր սկսող ուսուցչի համար, բայց յես ստիպված եյի վերցնել, վորովհետև ուրիշ հանձն առնող չկար: Ցես պետք է սովորածս նորից սովորեյի, այն ևս վոչ թե ինձ համար, այլ ուրիշներին նույնը հաղորդելու համար դյուրին յեղանակով: Այս նախապատրաստությունը ինձանից չատ ժամանակ եր խլում, այլևս ազատ ժամանակ չեյի ունենում, վոր տեսնեմ ինչ եմ անում և ինչպես են դասավանդում մյուս պաշտոնակիցներս:

Ցերբ վոր իմ նախորոշած չափումն անցա առարկաներս, սկսեցի կրկնել, և այլևս դաս պատրաստելու կարևորություն չունեյի, այնուհետև ազատ ժամերս նվիրեցի մյուսների դասերի այցելությանը ավելի նրա համար, վոր ինձ համեմատեմ նրանց հետ, վորովհետև վախենում եյի, թե մի գուցե՝ իրրև խամ ուսուցիչ՝ թույլ լինեմ գտնված և յետ մնացած վորձառու վարժապետներից:

Ցեվ ի՞նչ տեսա, տեր իմ աստված... Հիմա էլ վոր միտս ե գալիս՝ միտս սարսում, մազերս փշաքաղվում են: Այցելությու-

նքս սկսեցի նախակրթարանից: Այդ դասարանը բուն ուսումնարանի չենքից անջատված եր, ինչպես անջատված և լինում դպրոցը լավ չենքերից: Ցեվ հենց գոմի էլ նման եր արտաքուստ, իսկ ներքուստ նման եր խոզանոցի, յերբ բազմաթիվ մեծ և փոքր խոզուկները իրար գլխով ընկնելով՝ վորը բրթբրթում է, վորը խռխռում, վորը մրթմրթում է և վորն էլ ճղավում, ճըչում: Անկարդ, անկանոն, ամեն մեկի ձեռին մի առանձին դիրք կամ տեսրակ, իսկ վարժապետը մի կատարյալ վայրենի, իսկ և իսկ խոզարած, մի յերկայն ճիպոտ ձեռին մեկի գլխին եր իջեցնում, մյուսի ձեռներին: Ինքը սարկավագ եր, տերտերի հագուստով, յերկայն հասակով ու մորուքով և մի յերկայն գլանաձև տուխարորի դդակ էլ գլխին, վոր դասի ժամանակ ևս չեր վերցնում, վախենալով, վոր դասարկ դաշաթը քամով չլցվի:

Այս պատկերն ուներ ուսումնարանի կրթության արմատը, նրա որորոցը կամ բունը, վորտեղ պիտի թևավորվելին, վոր վարողանային թռչել դասարանից դասարան և վոչ թե խեղդվելին նույն ինկ բնի մեջ, նույն իսկ որորոցումը: Այդտեղ պետք եր սիրազորով մոր հատկություն և նրա նման աննկատու կաթով լիքը ստինք ունեցող մեկ դաստիարակ կամ դոնե այդ դաղափարին մերձավոր մի բան, այլ վոչ յերբեք մի հրեշ:

Այս արմատից սկսած դեպի վեր բարձրանալով՝ յես հանդիպեցա նորանոր հրեշների: Ֆրանսերենի ուսուցիչը չարունակ հարբած եր լինում և գլուխը կոլոգրած նույն իսկ դասատան մեջ: Ինչ ոչիններ և կատակներ ասես, վոր աշակերտները չեյին խաղում նրա գլխին: Ցերբ վոր ներս եյի մտնում յես, խևկույն թողում եյին վարժապետին խաղացողները և չուտով իրանց տեղերում նստում սուս ու փուս, վոր յես չտեսնեմ, բայց յերեխան ինչպես կարող է խաբել իրանից մեծին յեթե նա խելքը գլխին մի մարդ է: Մանկավարժի բնազդում, հոտառություն ունեցող ուսուցիչը կարող է նկատել և իր առջև չերևցող բաները, իսկ յերևացածի ամենանորին խորչերը թափանցել: Բոլոր վարժապետների էլ դասավանդության մեջ չկար վոչ հնություն և վոչ նորություն, այլ մի այլանդակություն: Ո՞վ է լսած կամ տեսած, որինակ այսպես բան. իմ ներկայության ժամանակ, ռուսաց լեզվի ուսուցիչը դասն սկսեց բառահարցությամբ, թե ռուսաց այս ինչ բառը ինչպես պետք է ասել հայերեն: Աշակերտը մի քանի բառ ասաց յենթադրությամբ, իսկ վարժապետը սպահանջեց, վոր նա իմանար: Բայց վո՞րտեղից իմ-

մանաք խեղճը, բոլոր իմացածն էլ մոռացավ և մնաց ապուշ կարած: Բոլորն էլ մնացել են սառած. վոչով իրավունք չունի ասելու, վոր լինքը պիտի: Այս վարժապետը միևնույն ժամանակ և տեռուչ է, աշակերտները նրա իրավունքից վախենում են և պատկառում: Աշակերտը լսեց, վարժապետը նուդնգես, և այս տևեց մի ամբողջ ժամ, ամբողջ դասը: Ջանքը ավին և խեղճ աշակերտները այդ մտավոր բանտարկությունից դուրս թռան, վոր մի փոքր ազատ ոդ շնչեն:

Դպրոցի բարոյական կողմը ուրիշ տուգես պետք է նեբսպաշնակ լինի մտավորին: Մտավոր կրթություն չեղած տեղը ի՞նչ բարոյական կրթություն կարող է լինել: Անկարգություն, կեղտոտություն, սուտխոսություն, սուտհպարտություն, ամեղցվիղ դրվածքներ զանազան խորչերում և բոլորն էլ ըստ ոյամ...

Այս բոլորը տեսնելուց հետո յես զարմացած եյի մնացել, վոր այսպիսի մի չրջանում իմ դասերի ժամանակ աշակերտներիս մեջ չեյի նշմարում վորևե անուշադրության նշան, վորևե չարություն, վոչ մեկ անգամ չեր պատահում, վոր բարկանամ մեկի վրա, մինչդեռ մյուս դասարաններում վարժապետների տուր ու դրմփոցի ձայնը մինչև իմ դասարանն եր հասնում և իմ աշակերտների դեմքի վրա՝ նշմարում եյի խուլ բողոքի արտահայտություն, կարծես ասում եյին.— լսո՞ւմ եք, վարժապետ, պաշտպանեցեք մեզ, ազատեցեք մեզ այդ բարբարոսներից, մեր հույսը ձեզ վրա յե, տեսեք մենք այնքան հարգում ենք ձեզ, վորքան պատվում, ուրեմն մենք վատ աշակերտներ չենք, այլ մեր վարժապետներն են վատ... Յես կարմրում և սպրծնում եյի այդպիսի բողոքներում, իմ ներքին հուզմունքն անցնում եր աշակերտներիս, վորոնց մեջ կային բավական չափահաս պատանիք և ընդունակ: Ամենայն որ զղում եյի, վոր ինձանից մի բան անցնում եր նրանց, նրանց վարակիչը, նրանց աճելն ու զարգանալը չուշադրի և զղալի յեր ինձ համար և յես զրանով մխիթարված եյի: Ուրախ եյի չատ, վոր պատմության և թվաբանության դասերն իմ ձեռքս եյին, մեկով ներչնչում եյի նրանց մեջ իդեալական ձգտումներ, իսկ մյուսով զարգացնում նրանց մեջ արամաբանորեն մտածել: Իմ և աշակերտներիս մեջ յեղած հոգեկցությունն ամուր եր, բնական, սրտանց և անկեղծ: Միևչդեռ մյուս վարժապետները իրանց դասարաններից դուրս եյին գալիս պատժած և պատժված, մազերը խառնված, ունքերը կիտած, յես իմ աշակերտներիս հետ

դուրս եյինք գալիս մեր հոգու ամենալավ տրամադրությամբը: Դասամիջոցին անգամ չեյին ուզում զբվել ինձանից, ուզում եյին, վոր իրանց հետ զբոսնեմ և զրույց անեմ, իհարկե մեծերը միայն: Տգետ և անկիրթ ծնողաց զավակները մի տսովածային պատիժ են իրանց ծնողաց համար: Ծնողները ամեն կարող են հնձել, ինչ վոր ցանել են, դանդատվելու իրավունք չունեն: Այս միևնույնը կարելի յե ասել և վարժապետների համար: Նրանք էլ ինչ վոր ցանեն՝ այն կհնձեն: Աշակերտի անկարգությունը, անուշադրությունը, բթամտությունը և այլ չատ թերությունների հարյուրից 99-ը վարժապետի ավանդն է:

Յես մի հոգված ունիմ գրած պատժի մասին և տպված է «Դպրոց» ամսագրում: Նրա մեջ պարզ և պարզ ասած եմ, վոր աշակերտի հանցանքը մեծ մասամբ վարժապետինն է. յեթե պետք է պատժել աշակերտին, ապա նախ պետք է պատժել վարժապետին, իսկ սրան էլ պատժելուց առաջ պետք է պատժել տեսչին կամ հոգաբարձվին, վոր հանցավից վարժապետներ և ավել անմեղ մանուկներին:

Ախալցխայում յես դպացի, վոր կոչված եմ խարազանով սրբել, մաքրել մեր կրթության տաճարները բարոյական ավազակներից: Այս ձգտումը իմ մեջ մինչև ֆանատիկոսության հասավ:

Այդ ժամանակ Ախալցխայի հաջորդը Պարոյան Սուքիաս վարդապետն եր: Սա ուղենալով ռուսերենից պատեր առնել ինձանից, առաջնորդարանում անդամ ավավ ինձ և ինդանակից առավ իրան իբրև վարձատրության իմ աշխատության համար: Ինքն արդեն քանի հայկարան լինելով հետ եր ինձ համար համեմատական մեթոդով նրա ուչալրությունը գարձնել ղևսավորական յերկու լեզվի մեջ յեղած քերականական տարբերության վրա, վոր ինչքան չատ և մեր աշխարհիկ լեզվի վերաբերմամբ, այնքան քիչ և զրաբառի հետ համեմատած: Արդյունքը հիանալի դուրս յեկավ: Վերջերումս ասում եր, վոր մի քանի թարգմանել և ինձ և նվիրել ի նշան յերախտագիտության: Այդ յերախտագիտության հավատացիքը ցայսօր զուրս չեկավ, բայց յես հավատում եմ, վոր կարող և ի զուրս գալ:

Շատ մտերիմ լինելով Սուքիասին և հարցվելով նրանից, յես պատմում եյի դպրոցի թերությունները և հորդորում, վոր նրա բարեկարգությանը հոգ տանե: Նա ինձ հուսադրում եր, բայց խլուր: Վարժապետները գտված եյին այնպիսի ազա-

ների հետ, որ դուրս վռնդել չէ՞ որ չեր կարող: Իսկ աղաների հոդը չեր, որ ուռումնարանն անկարդ է, իրանք այնտեղ գաւակ չունեին: Կային հոգաբարձուները, որոնց վորդիքը նույն դպրոցումն եյին ուսանում, սրանք չատ եյին ցանկանում դպրոցի բարեկարգությունը, բայց առևտրական և այլ կապեր ունենալով աղաների հետ, չեյին կարող ձայն հանել: Աղայության մասին չես գաղափար չունեյի, այդ գաղափարը չես առաջին անգամ Ախալցխայումն ստացար քանի մի անգամ հյուրասիրվելով աղաների տանը և տեսնելով նրանց տան նահապետին: Այդտեղ միայն չես տեսար ասիական աղայի տիպը: Ցերևակայեցեք ձեզ մի ծայրահեղ սամադուր, և կստանաք ասիացի աղայի տիպը: Աղան պետք է լինի մի կուռք, միայն խոսուն, և պետք է խոսի՝ ինչպես կխոսեր կուռքի մեջ խորամանկ և իր գործին շատ հմուտ մի քուրմ, առանձին ձայնով և վոճով: Բոլոր ներկա յեղողները միայն խունկ պետք է ծխեն և գանազան վսեմաբանություններ անեն ձեռները սրտին դրած: Պետք է նայեն նրա աչք և ունքին, ունքերի պռստելու հետ պետք է խոր տխրության մեջ ընկնեն, և նրա ժպտելու հետ՝ պետք է քա՛ղքա՛ղ խնդան բարձրաձայն, և այլն, և այլն, և այլն: Նա մի անմատչելի և անադորուն բունակալ է և իր տան մեջ. ո՛վ կարող է նրա կամքի դեմ վոչ թե մի բան ասել, այլ անգամ մտածել: Ախալցխացոց աղայապաշտությունը մինչև անգամ վայրենության եր հասնում: Առաջին քարը չես ձգեցի այդ հոտած լճի մեջ, լճեն սկսեց ալիքներ բարձրացնել և փոքր ինչ հովհարվել: Այս բանը պատահեց այսպես:

Մեկ անգամ լինճ մոտիկ մի մարդ հարցրեց.

— Պարոն Աղայանց, ի՞նչպես եք դոնում մեր ուռումնարանը:

— Շա՛տ վատ,— պատասխանեցի կտրականն:

— Ի՞նչպես թե «շա՛տ վատ», այդ ի՞նչ եք ասում:

— Այո, չատ և չատ վատ, մի կատարյալ խոզանոց է:

— Իսկ մեր վարժապետնե՞րը:

— Խոզեր են:

Իմ այս ասածը մի դունդ թիթիմոր եր: Դրանից չաղախեցին մի ահագին խմոր, վորից թխեցին գանազան կարկանդակներ և ուտեցրին ժողովրդին: Ցետ չես մեկն եյի ասել, լսողներն ավելացրել եյին հարյուրը, բոլորն եյ իմ անունից: Այս բանը այնպես մեծացավ, ինչպես գլորվող ձնագունդը, վորից ահագին վնաս չինելով՝ վերջումը մի հրեշի կերպարանք են տալիս՝ վրան պոչ ու գլուխներ ավելացնելով:

Հոգաբարձուները տակն ու վրա յեղան լսանց նախազահի հետ, կանչեցին տեսչին, վոր անհապաղ մի ժողով կազմե և ըստ սիրե լինճ, վոր յես իմ ասածներս յետ առնեմ և ներողություն խնդրեմ:

Ժողովը կազմվեց. ներկա եյին բոլոր ուսուցիչները, ամենքն եյ միաձայն և մխիթարհուրդ, բացի մեկից, վոր իմ կողմն եր: Դա մի հայ-կաթոլիկ յերիտասարդ եր, բայց մտավորապես ավելի լուսավորչական եր, քան բուն լուսավորչական վարժապետները: Մի հառաչաբանով տեսուչը հայտնեց ժողովի նպատակը:— Ժողովուրդը հուզված է,— ասաց,— վորովհետև դպրոցի վարկը վայր են ձգել նրա աչքումը: Տարաբաղդաբար մեզանից մեկն է արել այդ, և հատկապես պ. Աղայանցը: Հոգաբարձությունը ցանկանում է, վոր պ. Աղայանցը յետ առնե իր ասածները, յեթե իրավ ինքն է ասել, իսկ յեթե վոչ՝ արդարացնա, ցույց տա, վոր ինքն այդպես բան ասած չէ, վոր այդ բոլորը զրպարտություն է: Հիմա խոսքը ձերն է, պ. Աղայանց:

— Շատ ուշ եք խոսք տալիս լինճ, պ. Արովյանց: Ցեթե նախքան այս ժողովը՝ կանչած լինեյիք լինճ առանձին, յես ձեզ խորհուրդ կտայի, վոր ժողով չհազմեք, քանի վոր ամբողջ տարին վոչ մի ժողով կազմած չեք: Դուք դիտեք, վոր քննություններն սկսում ենք և արդեն մեկ շաբաթից կվերջանա: Քննություններից հետո՝ սուս ու փուս լինճ կհեռացնեյիք իբրև մի խռովարար մարդու, և ձեր դործը կչարունակեք ձեր ասածի պես: Իսկ հիմա ի՞նչ ասեմ: Ինչ վոր դուք լսել եք, յես եյ եմ լսել: Այնպես բաներ են ասում, վոր յես նոր եմ իմանում և ինքըս չդիտեմ նրանց սուտն ու ճշմարիտը, բայց այդ հրդեհն յես ինքս եմ դցել, յես եմ վառել:

— Ուրեմն պետք է յետ առնեք ձեր խոսքը, ձեր ասածը, վորովհետև դուք անպատվել եք բոլոր վարժապետներին, վայր եք դցել սրանց վարկը ժողովրդի աչքում, պետք է այս պատրոնններից ներողություն խնդրեք:

Ցեվ վարժապետներն սկսեցին դանգատվել, թե ինչ և ինչ եմ ասել իրանց, վորին վորպիսի մականուն եմ տվել...

— Այո՛, այո՛, ասել եմ,— ասացի,— և պատրաստ եմ ասածներս մի առ մի ապացուցանել, վորովհետև, ձեր յերևակ-

եմ ասում, չես ձեզ վարժապետ չեմ համարում, այլ վորին ապուշ և վորին դահիճ:

Ձեզ ակսեցի մեկ-մեկ նկարագրել ամենքին էլ: Յերբ հերթը հասավ Ֆրանսերենի ուսուցչին, նրան այնպես վոգոդեցի, վոր ամենքն էլ մուացան իրանց ասացած հարվածները: Մինչդեռ ամենքն էլ չափից դուրս բարկանում էլին, յերբ նկարագրում էլի, բողոքում էլին, թե սուտ է, բոլորը պրպարատիյան է, սա միայն բերանն էր ղնճռատում և իրրև մի թքաման լուս ու մունջ սեղավորում էր իր գլխին ածած բոլոր թուքը ու մաշճա:

— Դուք ասացեք, պարոննե՛ր,— չարունակեցի չես,— սա մա՞րդ է, ունի՞ արդյոք մարդկային պատվի նշան, յեթե ունի, թող վեր կենա և ապտակ զարկե ինձ, թող գնե բողոքե, բայց սա մի վատահոտ միջատ է, մի բզկիճ, մի ճիճու ամենավատթար տեսակից... կարո՞ղ եք ասել, վոր սուտ է ասածս: Ձեր հանցանքն այն է միայն, վոր չափից դուրս տգետ եք և բմտիտ, չգիտեք, թե ինչ է ուսումը, ուր մնաց վոր իմանաք, թե ինչ է ուսուցումը. իսկ այս թշվառ արարածը յեղել է Պալիպյան ուսումնարանում, այնտեղ վորպես թե ավարտել է իր ուսումը և նրա անունով էլ մտել այստեղ, վոր բարոյապես տգիտանե մեր ուսումնարանը: Սրանից կարող եք դուշակել, թե վո՞րպիսի հրեշներ և տվել մեզ Պալիպյան ուսումնարանը:

Տեսչին չնկարագրեցի, բայց նա ստիպեց, վոր իր մասին էլ հայտնեմ իմ կարծիքս, գիտեր, վոր իր մասին չես վատ կարծիք չունեմ, մինչև անգամ մի առանձին սեր եմ տածում դեպի ինքը և պատիվ իր անմահ հոր:

— Դուք ինձ էլ չեք հավանել, ասել եք, վոր չես տեսչության անհարմար եմ: Յեթե այդպես է, հապա ինչո՞ւ չեն ավել ինձ այս վիճակականները, նայեցեք, և քանիսն են, տեսե՛ք:— Այս ասելով վիճակականները վռեց սեղանի վրա, վորոնցից չացան վարժապետները և այնպիսի մի դիրք ցույց տվին, վոր յերևում էր, թե իրր անհնարին էր դրանց դեմ մի բան ասել:

— Ինչո՞ւ չես ձեզ թողած՝ ձեր թղթերին պահք և նայեմ, քանի դրոշով կանեմ յեւ այդ թղթերը: Ամենահեռին առաջնորդչի դրանից չաս վիճականներ ունի: Այդ թղթերը կարո՞ղ են արդյոք տեսչություն անել: Թվե՞մ արդյոք ձեր պակասությունը իրրև տեսչի, և իրրև ուսուցչի: Ահա ձեր տեսչության պատուհները՝ սրանք չե՞ն արդյոք ձեր վարժապետները: Յերբ

վոր սրանց հավանում և պաշտպանում եք, մնացածն ինքնըստինքյան հասկանալի չե: Դուք բարի յեք չափից դուրս, բայց անհոդ եք վերին աստիճանի: Ձեր սրտումը կրակ չկա, զուրկ եք ձեր հոր յեռանդից, այնուամենայնիվ, չես կցանկացի, վոր հայոց ազգը վոչ թե ձեզ մանուկներ տար կրթելու, այլ թոշակ տար և վերահսկություն մի վորևե դպրոցում: Ձեր բարի վարքն ու բարքով դուք կարող եք բարի օրինակ լինել աշակերտաց համար, իսկ կառավարիչ լինել և այն՝ վերանորոգող, բարեկարգող կառավարիչ, դուք չեք կարող: Յեթե իմ մեջ այրող կրակից պեթ մի կայծ լիներ ձեր սրտում, դուք յերկու ձեռքով կըպրկեիք ինձ, խոհուն կնկատեիք իմ ձգտումը և կաջակցեիք ինձ: Դուք հաշտվում եք յեղածի հետ, թեկուզ վատ լինի, իսկ չես յեթե հաշտվելի յեղածի հետ՝ այսօր վարժապետ չեմի լինել և այսպիսի վարժապետներին անպետք չեմի համարել: Դուք ձեզ խոհեմ եք համարում, իսկ ինձ՝ անխոհեմ, ձեզ խաղաղասեր եք համարում, իսկ ինձ՝ խռովարար: Յես այդ ընդունում եմ, բայց ընդունում եմ վոչ վորպես հանցանք կամ թերություն, այլ մեծ արժանավորություն: Մեր ուսումնարանը ախոռ է, ինչո՞ւ, վորովհետև վարժապետներն իրանց դործին համաստ չեն, դասատիրակի կոչում չունեն, տեսուչն անընդունակ է, հոպարապմունք հոդեբարձ են, իսկ այդ կարող է այդպես չլինել, կարող է անհամեմատ լավ լինել, վորովհետև նյութական պատասխանություն չկա, հարկավոր է միայն, վոր ժողովուրդն իմանա յեղածի վատությունը և լավագույնն ունենալու ցանկություն հայտնե: Յեթե ժողովուրդը հավատացել է իմ ասածին և պահանջում է, վոր ուսումնարանը բարեկարգվի, վատը և պարծանք նրան, այդ դպրոցները ոտքի: Յես խռովարար չեմ, այլ ժողովրդի բարեկամ, մանուկ սերունդի կրթության պաշտպան, և հանուն այդ սուրբ դաղափարին յես բողոքում եմ իմ դեմ կազմած քո այս ժողովի դեմ:

Այս ասելուց հետո յես դուրս յելա ժողովից...

Մյուս օրը ժողովրդի իրարանցումը սաստկացավ: Լսել եյին թե ինչ և ինչ եմ ասել ժողովում և մեկը ասաը չեներով՝ հաղորդել էլին միմյանց: Այդ ժամանակ քաղաքումն եր և Հովակիմ Գեղամյանցը: Ժողովրդի մեջ սա ինձ եր պաշտպանում և ուրիշ կերպ էլ կարելի չեր: Սա գրում եր զանազան չարաղրություններ և բերում մոտս, վոր յես քննադատեմ և մի ուղղություն տամ իրան: Յերբ մի վորևե դրածի չեյի համաձայն,

նորից դրում եր ահագին տետրակներ և բերում իմ ուղածից համեմատ դրնած: Շտկելով իր դրածները միևնույն ժամանակ աշխատում էլի վարակել իմ դաղափարներով և դիտումներով և իր մեջ ինքնագործունեության և հառաջ դնալու վստահություն էլի զարթեցնում: Սա էլ նր չեղել Ալիպյան ուսումնարանումը, բայց արտաքսվել եր իրրև ըմբոստ աշակերտ: Այս փաքսը նրան բավթրացրեց իմ աչքումը և վոչ թե ատորացրեց: Ըմբոստ լինել Ալիպյան ուսումնարանում ինչանակից հակված լինել դեպի լավը: Բայց վորքան լավ կլիներ, վոր նա այդ ուսումնարանում յերբեք յեղած չլիներ: Այսոր դա իր թերի կողմերի համար Ալիպյան ուսումնարանին և պարտական:

Հարցաքննություններն սկսեցին: Յես խնդրեցի տեսչին, վոր իմ առարկաները առաջ դցի, վոր չուտ հեռանամ և աղմուկներից ազատվեմ: Նա հոժարություն ցույց տվավ և իմ դեմ չեղոք դիրք բռնեց: Բայց վատահամբավ ուսուցիչները իրանց բոլոր ազգականներով, խնամիներով և քավորներով միացան, վոր քննության ժամանակ չհլիեցնեն աշակերտներին, աշխատեն բանը այնպես բերել, վոր յերևա թե յես ամենևին վոչինչ չեմ սովորեցրել, վոր յես մի չաուշտան եմ յեղել, և ուրիշներին վայր դցելով ինձ եմ ուզել բարձրացնել, իմ թերությունները եմ ուզել ծածկել: Այս բանը նրանց համար կյանքի և մահու խընդիր եր, հացից պիտի զրկվեյին, յեթե չկարողանային իմ վարկը ժողովրդի աչքում դցել: Սրանք, ժողովրդի հոգսը քաշելով, բանի տեղ չեյին դրել աշակերտներին, վորոնք իմ քաջամարտիկ և անվեհեր զինվորներս եյին: Դրանցում կային վոչ մեկն չատ ընդունակ, այլ բավական խոշոր և ուժեղ տղայք: Սրանք յերբ վոր իմացան, թե իրանց վրա մի արշավանք պիտի լինի, մի ասպատակություն, թե այդ բանին հոժար են նույն իսկ տեսուչը և հաջորդը, յերբ տեսան վերջապես իմ հուղված և վրդովված լինելս, յեկան ինձ միամտացրին, ասելով՝

— Վարժապետ, դուք բոլորովին անհոգ յեղեք, քնավ չվրդովվիք, մենք ձեր դասերն այնպես դիտենք, վոր մեզ չեն կարող չփոթել, մանավանդ, վոր այդ դահեկիները ձեր վոչ մի առարկայի հոտն անգամ առած չունեն, ի՞նչ դիտեն վոր ինչ հարցնեն: Բայց մենք դրանց ավելի լավ կպատժենք, իրանց դասերի հարցաքննության ժամանակ կարող ենք ասել՝ ինչ ենք սովորել, վոր ինչ պատասխան տանք· «Հնչ բան մ'ալ չիյտենք»···

— Վոչ,— ասացի,— այդպես բան չպետք է անեք, դուք չպետք է հետևիք դրանց չարությանը:

Այս հառաջադեմ աշակերտներից եր Տահփան Մալխասյանցը: Յերբ վոր ամեն կողմից հարձակվեցին սրա վրա, դեռ մեկին չպատասխանած մյուսն եր հարցնում, մյուս կողմից յերբորդը, չորրորդը, սա իրան չկորցրեց և մի այնպիսի պաշտպանողական դիրք բռնեց, ինչպես մարդ բռնում է մեջքը մի պատի դեմ տալով, յերբ վրան հարձակվում են մի խումբ կծոտողներ:

— Սպասեցեք, պարոններ,— ասաց,— յես ձեզ ամենքիդ էլ պետք է պատասխան տամ, վոր չասեք, թե չկարաց պատասխանել· միայն թույլ տվեք, վոր նախ մեկին պատասխան տամ, հետո մյուսին:

— Այո՛, այո՛,— գոչեց ժողովուրդը,— ձեզ ո՞վ է հարցաքննիչ նշանակել, ինչո՞ւ չեք թույլ տալիս, վոր ինքը վարժապետը հարցաքննե:

Յես, տեսնելով, վոր ավելորդ եմ, իրրև հարցաքննող, վեր կացա տեղից և դնացի հարցաքննվող աշակերտների վերջին նստարանի վրա նստեցի, ասելով ժողովրդին՝—ահա յես և մանկունք իմ, քննեցեք, ինչպես դիտեք:

Հակառակորդներս իրանք դլորվեցին ինձ համար փորած հորի մեջ, խայտառակվելով, թե՛ ժողովրդի և թե՛ աշակերտների առջև:

Վրդովմունք բարձրացավ քաղաքացոց մեջ, վորոնք կարծես մի առիթի եյին սպասում: Հավաքվեցին ս. Պատուհյանցի տանը, ինձ էլ հրավիրեցին այնտեղ, չնորհակալություն հայտնեցին, և խնդրեցին վոր յես չհեռանամ:

— Մենք կարծակենք,— ասացին,— բոլոր վարժապետներին էլ, հոգաբարձուներին էլ, տեսչին և հաջորդին էլ: Դուք կազմեցեք ձեր ուզած խումբը և բարեկարգեցեք մեր զպրոցները:

— Շնորհակալ եմ,— ասացի,— ձեր համակրության համար, բայց ընդունել ձեր առաջարկությունը՝ չեմ կարող: Այստեղ կա մի զորեղ ուժ, վորի տակ ընկճված եք դուք, և թեև այսոր վոտքի յեք կանգնել, բայց վաղը դարձյալ կընկճվիք:

Իմ հոգսը դուք մի քաշեք. ես հենց այսօր հեռագիր ստացա Ալեքսանդրապոլից, ուր հրավիրում են ինձ ուսուցչության:

Յուշց տվի Ամեթիքիցս (Բաբայանց) ստացած հեռագիրը, վրից ավելի հուզվեցին և հորդորեցին ինձ մնալ, բայց չես մըտնալ չեյի կարող, վորովհետև այդ կնշանակեր կյանքս ու պատիվս վտանգի տակ դնել:

Այստեղ միջանկյալ ասեմ, վոր այս դեպքից տասը տարի անցած՝ ես կրկին դնացի Ախալցխա, և այս անգամ վոչ իբրև հասարակ ուսուցիչ, այլ իբրև թեմական վերատեսուչ: Տասը տարվա մեջ դպրոցները մասամբ բարեկարգվել եյին, բայց ժողովուրդը դարձյալ զոհ չեր վոչ հոգաբարձուներից և վոչ ուսուցչական խմբից: Մի բողոքալիր տվին ինձ խնամն բաղմութեյամբ: Հիշեցնում եյին չաո տարի առաջ իմ արած պահանջները, և հիմա իրանք եյին պահանջում, վոր ի կատար ածեմ նույնը: Ես խոպոպացրի դրսոված խնդրատուներին, ասելով.

— Այն ժամանակ ես միայն քանդում եյի, իմ հոգսը չեր թե ով պետք է չինե, բայց վորովհետև այժմ ես պետք է լինեմ չինողը, ուստի խնդրում եմ ինձ ժամանակ տաք, վոր տեսնեմ ինչ կա չինելու:

Յեվ ես չինեցի, ինչքան հնարավոր եր. բայց մի տարի միայն անցած Հ. Խորեն Սահեանեն նշանակվեց հաջորդ՝ միանգամայն նաև տեսուչ ուսումնարաններին, թեմական տեղից անկախ, և նա վտնեց, վոտիսնեց ամեն ինչ:

Ախալցխայից հեռացա ես 1871 թվականի ամառը: Դուրս գալիս բոլոր աշակերտները յեռանդոտ յերգելով ուղեկցեցին ընկան յերկելով մինչև յերկար: Հաջորդի տան մոտով անցնելիս ես ադեղին աղմուկ բարձրացրին և ցուցցեր արին, վոր իմ կամքիցս դուրս եր: Պատահմամբ այդտեղ գտնվեց և Ալեքսանդրապոլի դպրոցների հոգաբարձու Զիթողցնց Պետրոս աղան, վոր ախալցխացոց բարկացնելու համար ասել եր. «Ձեզի համար դեռ վաղ և լավ վարժապետներ ունենալը, դա մեզի կվայելի»:

Հիրավի Ախալցխայի աղաները սովոր եյին հին խայֆաների, վորոնք պետք է լինելին իրանց չերուխչին, զահվեչին, մխիթար, չոդոքորթը, լրտեսն ու կավատը: Իրանց չնորհքը պետք է ցույց տային իրանց տերերի համար ուղեբաններ դրելով, իսկ նրանց հակառակորդների վրա պարսավանք և յերկիծանք: Խալֆաների այս տիպը չարունակում է գոյություն ունենալ այժմ մեր դրականության մեջ:

Ընկմիածնի և Ախալցխայի անցքերից հետո ինձ այլևս վոչ մի տեղ չեյին ընդունիլ՝ համարելով խռովարար, բայց իմ բախտից Ալեքսանդրապոլ հրավիրողը Ամեթիք Բաբայանցն եր, վոր շատ լավ եր իմանում, թե ինչ է իմ ուղածը: Այս հանգամանքն արժանի է ուշադրության, և ես ուզում եմ հետևյալ գլուխը նվիրել այս խնդրի պարզաբանության:

VI

Մեր մտավոր վերածնության առաջին կարապետները Դարպասի համալսարանի հայ ուսանողներն եյին: Սրանց հաջորդեցին Պետերբուրգի հայ ուսանողները: Պետերբուրգի մտավոր հեղափոխության շրջանում զարգացած հայ ուսանողության մի սուլար մասը հայրենիք վերադառնալով՝ անկախ դիրք բռնեց և հասարակական գործունեության նվիրվեց: Մարտիրոս Սիմոնյանցը մտավ Ներսիսյան դպրոց, այնտեղից էլ ճեմարան. Ռոբերտն Զալալյանցը դնաց Ազուլիս ուսուցչության, հետո յեկավ Թիֆլիս հյուրանոց բաց արավ, վոր մի տեսակ կլուբ դարձավ ժամանակակից յերևոսաորության համար. Զաքարյա Գրիգորյանցը դրախտանոթ բաց արավ և միևնույն ժամանակ Գայանյան ուսումնարանի հիմնադիրներից և ուսուցիչներից մեկը դարձավ. Գևորգ Յեվանդուլյանցն ձգտում եր ամենքի մենատրը դառնալ. Սենեքերիմ Արծրունին «Մեղու»-ի վերանորոգողներից մեկը դարձավ և Գրիգոր Արծրունու ախոյանը հանդիսացավ. Գ. Արծրունին «Մշակ»-ը հիմնեց և Մեղվական խմբի դեմ պատրաստեց իր զրոշակը: Գավառներում գրվածներն էլ իրանց շրջանում հասարակական գործունեության նվիրվեցին: Սրանցից մեկն եր ահա և Ամեթիք Բաբայանցը, վոր Ալեքսանդրապոլի դպրոցական գործի գլուխն անցավ:

Սույն այս խոսքը դեռ ևս Պետերբուրգումն ուներ իր ապագա գործունեության ձգտումը: Այնտեղ գաղտագրքեր պատրաստելու հոգսի եյին քաշում, հորինում և թարգմանում եյին. հետևում եյին կրթական գործին, ուխտում եյին ծառայել ապագի մտավոր և բարոյական զարգացմանը փոխադարձ ձեռնտվության: Ա. Բաբայանցը դեռ ուսանող ժամանակ ձգտումն ու-

ված բանի պետությունը: Պիսարևն և նմանիք՝ այդ բանը չեյին ընդունում, յես ել հավատում եյի: Բյոքլը չեր ընդունում հատուկ ժառանգականությունը, յես ել ինձ իրավունք չեյի համարում չհավատալ, բայց հետո այդ խնդիրը շատ արծարծվեց և պարզվեց այնպես, վոր յեթե Բյոքլը վողջ մնար, կխոստովաներ իր սխալը: Սրա պատճառն այն եր, վոր բնական դիտողությունները դեռ նոր եյին ծլում և ծաղկում: Համալսարանի բնական պատմության բաժնի ուսանողները վոչ մի մտավոր անուղղ չեյին ստանում, այժմյան պետությունը չկար: Դարվին, Ցոխտ, Հելմհոլց և ուրիշ շատերը նոր եյին ծանոթացվում ռուսաց գրականության մեջ և այն ել վոչ ամբողջապես, այլ քաղվածքով միայն կամ կտոր-կտոր, իսկ այդ կտորները կուլ եյինք տալիս հում-հում: Մեր մտավոր պաչարը ճոխանում եր գրականության հետ ձեռք ձեռքի տված: Մանկավարժությունն ևս դեռ մի մշակված սիստեմ չուներ: Ամեն վոք ինքը պետք ե չիներ մի ամբողջություն, ցրված նյութերից մի չենք չինելով: Բայց մեկի չինած չենքը մյուսի համար պիտանի չեր: Վորևե սիստեմի կուրսերն հեռևողները սովորաբար ղուրկ են լինում ինքնուրույն մտավոր գործունեությունից, վորովհետև սիստեմի տակ ընկած մանկավարժությունը մասնավոր աղանդի կերպարանք և ստանում, քարանում ե և աճելությունից զրկվում: Մանկավարժական ասպարեզում ինձ վիճակվեց յերկու իրարից տարբեր ուղղության դեմ պատերազմել – մի կողմից խալիֆայականի և մյուս կողմից կապկարար հետևողների և թարգմանողների: Այս ակնարկությունս կպարզվի հետևյալ ղլուխներում. այժմ թողնենք այս և յերթանք Ա-լեքսանդրապոլ:

VII

1871 թվականի ամառն եր: Ալեսիք Բարայանցը Թիֆլիսում սպասում եր ինձ: Այստեղից Փուրդոն նստեցինք ճանապարհ ընկանք դեպի Ալեքսանդրապոլ Դոլորի ճանապարհով: Մանրլիս վոր հասանք, դնացինք այցելության Գ. Արծրունուն, վոր յեկել եր այդտեղ ամարանոց: Արծրունին «Մշակ»-ի հրատարակության թույլտվությունն ստացել եր արդեն և այդտեղ հոդվածներ եր պատրաստում: Շատ ուրախացավ և ասաց.—

Ներ դառնալ բժիշկ-մանկավարժ: Նա իր ազատ ժամերի մի մասը նվիրել եր դաստիարակչական դրվածքների ուսումնասիրության: Բայց հետո այս բաժինն իր ամուսնուն հատկացրեց, ապագով նրան ամենալավ կրթություն, վորից հետո նա դարձավ մեր մեջ մանկական անդրանիկ պարտիզպանուհին, վոր իր լայն նախագիծը չկարողացավ ի կատար ածել իրանից անկախ պատճառով:

Յես ևս՝ դեռ Պետերբուրգում՝ սեր ձգեցի մանկավարժության վրա ու մասնավորապես այդ նորածիլ ու թարմ դրականությանը նվիրվելի: Այդ դրականությունը իմ հայացքների մեջ տհաճելի հեղափոխություն ձգեց, ամեն բանի վրա յես սկսեցի նայել բարոյակրթական տեսակետից, վորով իմ վիսլական դըրածները անդամ ստացան այդ դրոշմը: Նոր եյին դուրս գալիս մեկ մեկի յետևից Ֆրեոբելի, Պեստալոցցու, Դիստերվեգի, Ֆեհքի թարգմանությունները և ոուս մանկավարժների ինքնուրույն դրածները: «Ուչիտել» (ուսուցիչ) պարբերական թերթը կարդում եյինք ամենայն սիրով և հետաքրքրությամբ, մանավանդ նրա մորճնական դասերը զանազան առարկաներից: Սվեթլովի թարգմանում եր Մեծ-պատի թվաբանությունը ամենափոքր մանուկների համար, և այդ մի լավ առիթ եր, վոր փոքրերի մտածողության աշխարհը լավ ուսումնասիրենք: Ցավ ինչքա՜ն նորանոր հոդեբանական դյուտեր եյինք անում, վորոնք սակայն շատ հնուց գոնված եյին լինում, ինչպես ստուգում եյինք հետո: Բայց սրանով մեր դյուտի արժանավորությունը չեր պակասում, ընդհակառակը՝ ավելի ևս բարձրանում եր, յերբ տեսնում եյինք, վոր նույն նկատողություն արել են ավելի նշանավոր հեղինակներ: Պետք ե դիտենալ սակայն, վոր այլ ե մբռնածելը և այլ՝ ձևակերպել և մարմնացնել մտածածը: Մենք կարող ենք նույն իսկ Դյոթեյի և Շեքսպիրի պես մտածել, այսքինքն նրանց հայացքներն ունենալ, բայց չկարողանալ մեր մբռնածները, մեր զգացածները, մեր ստացած տպավորությունները նրանց պես ձևակերպել, պատկերացնել, հեղինակել, վիպասանել, բանաստեղծել, մի նկարչական հորինվածք չինել: Ամենայն հորինվածք պահանջում և հայտնի չափով տաղանդ: Կյանքի պատկերներն ամենքս ենք տեսնում, բայց միայն տաղանդավոր նկարիչն ե կարողանում նույնը պատատի վրա պատկերացնել:

Յերկար ժամանակ յես չեյի խոստովանում տաղանդ ա-

Լավ եր, վոր ինքներդ չեկաք, չես նամակ պլոսի դրեյլ չերկուսիդ էլ, վոր աշխատակցեք «Մշակ»-ին: Իսկ ձեզ վրա, պարոն Ազայանց, առանձին հույս ունեմ: «Մշակ»-ի վիպական բաժնի համար ձեզանից հարմարագույնը չունեմ ի նկատի:

— Ամենայն ուրախությամբ,— ասացի,— կաշխատեմ աղատ ժամերս «Մշակ»-իդ նվիրել:

Ալեքսանդրապոլ վոր հասանք, իջանք Ավետիքենց տունը. այնպես թվաց ինձ, թե մեր տանն եմ: Հայրը հորս նման, մայրըն էլ մորըս նման, ի հարկե բնավորությամբ և վոչ դեմքով: Կեր ու խումը չեր դադարում վոչ մի րոպե և ավելի լայն ծավալ ուներ և ավելի ճոխ, քան թե մեր տանը: Չեմ ավելորդ եմ համարում այս տան նկարագրությունն անել, քանի վոր այդ արել է արդեն նույն տան դուստր իմ պատվական աշակերտուհու՝ տիկին Տիրուհի Կոստանյանցը, վոր այդ ժամանակ հազիվ հինգ կամ վեց տարեկան կլիներ:

Ալեքսանդրապոլն այդ ժամանակ մի աստիճան բարձր եր կանդնած Ախալցխայից, թե մտավորապես և թե նյութապես: Հին դպրոցները նորոգելու և բարեկարգելու հարմար առիթներ միմյանց վրա չեկան: Իշխան Ղահրաման Չերկայնաբազուկ Արղությանցը քաղաքուն հազար մանեթ կտակեց, վորով և հիմնվեց իր անունը կրող նույն տեղի որիորդաց դպրոցը: Հաջորդը նշանակվեց հայր Ազաթիրյանցը, վոր համալսարան եր տեսել, դիպլոմյան հոտ առել եր և լեզուների ճաշակ: Տեսչության պաշտոնով հրավիրվել եր Սարգիս Բեզնազարյանցը, վոր մեր հողում առաջին անգամ վոտք դնող մասնագետ մանկավարժն եր: Բժիշկ Գաբրիել Հովհաննիսյանի (Քաջբերունու) ծառայությունը վոխադրվել եր Ալեքսանդրապոլ: Կային և ուրիշ ինտելիգենտ մարդիկ, թե տեղացի և թե ոտարական: Սակայն այդ բոլորը միասին առած՝ վոչինչ չեյինք կարող անել առանց Ավետիք Բաբայանցի աջակցության: Ասեմ ահա թե ինչու համար: Աղայությունն այստեղ էլ, ինչպես և Ախալցխայում, իշխում եր ժողովրդի վրա: Դրանց ձեռքումն եյին գտնվում թե չեկեղեցիքը և թե դպրոցները իրանց արդյունքներով, վորոնք կուլ եյին գնում մի անհատակ լճի մեջ: Աղաներին կարողացել եր ձեռքն առնել Տեր-Հովսեփ Կոստանյանցը և դառնալ մի անհաշիվ և անսահման իշխան: Սրա դիկտատորության ժամանակ վարժապետներն էլ մինուճար խալիֆաներն եյին, ինչ վոր Ախալցխայում. բոլորն էլ իր տան սպասավորներն եյին: Սրանք

Ղ. ԱՂԱՅԱՆ. 1875 թ

աղաների վորդոցը քիչ թե շատ հայերեն էլին սովրեցնում և յերես տալիս, իսկ ժողովրդի զավակներին անխնա պատժելով՝ վռնդում ուսումնարանից: Յերեխանցը ներս էլին անում, զսմանման մի մութ չենքի մեջ և մինչև յերեկո պահում առանց դասամիջոցի: Այսպես եր ուսումնարանի վիճակը մինչև Բեզնազարյանցի գնալը: Հին դպրոցն այս վիճակից հանելու և նոր կերպարանք տալու համար հարկավոր եր Տեր-Հովսեփի ուժին գերակշռող և նրան սիրելի և հարգելի մի նոր ուժ: Այս բախտին արժանացավ ահա Ա. Բաբայանցը, իբրև աղայի վորդի, բայց բարոյապես և մտավոր զարգացմամբ ժողովրդական:

Դեռ ուսումը չսկսած՝ Ավետիքը մի ժողով կազմեց հոգաբարձուներից և այն միտքը հայտնեց, թե Բեզնազարյանցին և Աղայանցին պետք է մեմյանցից անկախ կացուցանենք, պետք է աղայոց դպրոցը հանձնել Բեզնազարյանցին, իսկ որիորդացը՝ Աղայանցին: Այսպես էլ արին: Դպրոցների անջուրթյունը իրարից բաժանելով՝ ուսուցչական ժողովները չբաժանեցինք: Ժողովները խառն էլին լինում և յերբեմն շատ աղմկալից: Վիճում էլինք միայն յես և Բեզնազարյանցը, մյուսները միայն ականջ էլին դնում, և յերբ հարկ եր լինում ձայն հավաքել, դուրս եր գալիս մի կատակերգուրթյուն, վորովհետև ձայն ավող վարժապետները կամ ինձ էլին ուզում հաճոյանալ կամ Բեզնազարյանցին, չէլին ըմբռնում խնդրի էությունը: Այս միայն սկզբումն եր, յերբ ուզում էլինք հին խալիֆաներից նորակերպ ուսուցիչներ չինել, բայց հետզհետե ուսուցչական կազմուրթյունը լավացավ և մեր մեջ սիրեց կատարյալ ներդաշնակուրթյուն: Նոր ուսուցիչներն էլին Հայրապետ Դուխասյանց, վոր տասը տարուց ավելի ծառայեց Ալեքսանդրապոլի յերկու սեռի դպրոցներին ամենայն առկոնուրթյամբ, թիֆլիզ Գաբրիել Հովհաննիսյանց, վոր հետո տեսուչ էլ յեղավ, Ավետիք Յեղիկյանց, Հայկ Մատակյանց և այլք: Յերկու լամբի հարաբերուրթյունը այնքան սերտացավ, վոր միացյալ ուժով բաց արինք էլի մեկ նոր ուսումնարան որիորդաց համար Սահականուշյան անունով, ուր ձրի էլինք դասախոսում ամենքս էլ: Ամբողջ Կովկասում վոչ մի դպրոց չկար, վոր Ալեքսանդրապոլի դպրոցների բարեկարգուրթյունն ունենար: Մանկավարժական ամեն տեսակ խնդիրներ այդտեղ սկսեցին մշակվել, ամեն տեսակ հոդվածներ այդտեղ սկսեցին դրվել, մանկավարժական ամեն մի խնդրի պահանջ,

Դ. ԱՂԱՅԱՆ ԻՐ ՄԻ ԽՈՒՄԲ ԱՇԱԿԵՐՏՈՒՀԻՆԵՐԻ ՀԵՏ ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼ 1875 Թ.

վոր մխայն պրքերումն եյին, այստեղ իրադրծութիյուն ելին ստանում:

Մասնավորապես դալով ինձ, պետք է առեմ, վոր իմ գործունեյութիյունը՝ թե գրական և թե ուսուցչական՝ այստեղ իմ սպասածից ավելի բեղմնավոր յեղան: Լինելով ըստ ամենայնի անկախ, գործում եյի ուզածի պես և ուրիշներին եյ վարակում իմ որինակով: Այստեղ սկսեցի մշակել իմ նորագույն մեթոդը, թե ինչպես պետք է ուսուցանել մայրենի լեզուն: Նախ ցույց ավի գործով՝ դասավանդութիյամբ, և հետո՝ խմբի ցանկութիյամբ՝ գրեցի և հրահանգը, թե ինչպես պետք է ուսուցանել, հետո եյ կազմեցի դասագիրքը: Առաջին անգամ մեր գրերը յես լուծեցի արմատական տարրերի և գրել տվի տակտով: Այստեղ առաջին անգամ յես դաս տվի մի ծխական դպրոցում «Բացատրութիյուն բնութիյան յերևույթների» և «Տարրական ֆիզիկա ըստ կրյուգերի»: Այս յերկու աշխատութիյունները եյ յես թարգմանեցի, վորոնցից մեկը տպվեց «Արարատ»-ում, վորից արտատպվեց հոգուտ Սահականուշյան ուսումնարանի, մյուսը՝ «Ֆիզիկա» տպագրվեց Պետերբուրգի հայ ուսանողների հաշվով: Այստեղ գրեցի բազմաթիվ հոդվածներ, թե մանկավարժական և թե քննադատական: Այստեղ գրեցի և հայկական հնչյունների մասին, վորով Այվազովսկուն դրդռեցի իմ դեմ, ինչպես և Պալասանյանին՝ սրա «Մայրենի լեզվի քերականութիյուն»-ը քննադատելուս համար: Այստեղ գրեցի և իմ «Ցերկու քույր»-ը, վորի մասին պետք է մի քանի խոսք ասել այստեղ և մեկ մուխ մնացած խնդիր պարզել ժամանակակից նոր սերնդի համար, վոր յերբեմն միայն ձայնն է լսում, բայց չգիտե վո՞րտեղից է փչվում:

Ինչ առաջ ասացի, թե Գ. Արծրունին խնդրեց, վոր աշխատակցեմ «Մշակ»-ին, և յես եյ խոսք տվի: Նույն տարվա վերջերին մի նամակ եյ Պալասանյանից ստացա, վոր գրել եր խմբագրութիյան կողմից և հրավիրում եր իմ խոստումս: Այս նամակը վոր ստացա, յես շատ զբաղված եյի և պատրաստի եյ վոչինչ չունեյի: Ջեռաց մի առակ գրեցի դարաբաղի բարբառով, խոստանալով՝ վոր շուտով մի վեպ կուղարկեմ իրանց: Առակը տպվեց «Մշակ»-ի սկզբի՝ կարծեմ յոթներորդ համարում Փրեյդոն ստորագրութիյամբ: Առակը մի արջի պատմութիյուն է: Պատված ուղում է արջին մարդ չինել, միայն Դիդակեցի, բայց արջը չի համաձայնվում, ասում է.— Ցեթե այդպես ես ուղում, յես ավելի լավ կհամարեմ արջ մնալ: Սրանից հետո ահա յես անմիջապես գրեցի «Ցերկու քույր»-ը մի չաբաթվա մեջ և ուղարկեցի պ. Սիմիոնյանցին, խնդրելով, վոր սրբագրութիյունը նա տեսնե: Ցես չգիտեյի, վոր «Մշակ»-ի նախորոշած խմբի մեջ յերկպատակութիյուն ե ընկել և Պետերբուրգի ուսանողները Արծրունուց զատվելով՝ խմբվել են Պ. Սիմեոնյանցի չուրջը, վոր վերանորոգեն հոգնած և մեռած «Մեղու»-ն: Ցերկու չաբաթ անցած՝ յես մի նամակ ստացա տիկին Սբրուհի Ցերիցյանի և որ. Գայանե Հովհաննիսյանի ստորագրութիյամբ, վորով ինձ չնորհակալութիյուն են հայտնում այն քաղցր տպավորութիյան համար, վոր ստացել են իմ նոր վեպի ընթերցումից և բանց գրական յերեկոյում: Սրանից հետո դուրս յեկավ «Մեղու»-ն մի հայտարարութիյամբ, թե «Մեղու»-ի բաժանորդները իրանց չստացած համարների փոխարեն կստանան Աղայանցի «Ցերկու քույր» վեպը, վոր արդեն մամուլի տակ է: Սրանից յերևաց, վոր մեր լրթիքը մեղվական դառնալով՝ ինձ եյ ձդել են իրենց կարդը. մի քանի համարներից հետո նկատեցի, վոր «Մեղու»-ի խոսքը բավական անչնորհք է և իմ դավանած ուղղութիյունը չունի: Բայց այլևս ուշ եր, Արծրունին ինձ համարեց մեղվական, այսինքն նրանց համակիր, նրանց վոգին և ուղղութիյուն ունեցող: Իհարկե յես մեղվական չեյի, բայց վոչ եյ համակիր եյի Արծրունու բնավորութիյան մի քանի գծերին: Հաջող դիպվածի եյի սպասում, վոր աղատվեմ «Մեղու»-ից առանց կպչելու Արծրունուն, և այդ դեպքը չուտով վրա հասավ: Պրոֆ. Հովհաննիսյանն սկսեց «Փորձ»-ը և ինձ իրան ողնական հրավիրելով՝ ձդեց փորձանքի մեջ: «Փորձ»-ի ապագա խմբագիրը, յերբ յես տեսա առաջին անգամ, չափից դուրս լավ տպավորութիյուն գործեց վրաս, գուցե նրա համար, վոր «ժպիտը բերնից ցած չեր դալիս, անմեղութիյան եր նըշան»: Ցեվ հիրավի, թեև նրա այդ ժպիտը ստացական և չինովի յեր, բայց ինքը դեռ ևս բավական անմեղ եր և անփորձ, բայց փորձի ու փորձանքի մեջ ընկնելու պատրաստակամ: Դրա փիլիսոփայութիյունը դեռևս փորձի ու փորձանքների չորս կողմն եր պտտվում: Ցեթե ապած փորձը հաջող եր դուրս դալիս, ասում եր «լավ պրծանք», իսկ յեթե անհաջող, ասում եր՝ «լավ խրվեցանք»: Այսպես չարունակ մի փորձից պրծնում և մյուսի մեջ եր խրվում և ինքն իրան միխիթարում, ասելով՝ «Մախլա՛ս»...

Հաստատվոր «Փորձ»–ի առաջին հատորը նոր դուրս էկած ժամանակ, երբ իմ ընկեր Հայրապետ Ղուկասյանցը խնդրեց ինձ, որ միասին գնանք «Մշակ»–ի խմբագրատունը և մի հայտարարություն տանք Ալեքսանդրապոլի համար նոր ուսուցիչներ հրավիրելու, Արծրունին ինձ ընդունեց շատ սառը և մեր խնդիրը թողած, սկսեց ուշգակի «Փորձ»–ի վրա հարձակվել, մանավանդ նրա լեզվի, որ ինձ խայթի։— Ինչի մասին ուզում եք խոսեցեք,— ասացի,— բայց լեզվի մասին մի խոսեք, որովհետև «Մշակ»–ի ամենաթերի կողմը հենց նրա լեզուն է։ Սրա վրա Արծրունին բարկացավ, հուզվեց, սկսեց հակաճառել։ Ցես նույնպես բարկացա և հարձակողական դիրք բռնեցի, երբից սառակի վախեցավ Արծրունին և սկսեց դրասեղանի սրկիզը բաց ու խուփ անել, հասկացնելով ինձ, որ այնտեղ անելիքեր ունի, որ չէթե չես խփելու լինեմ իրան, ինքն էլ ուներ գնանք։ Վերջապես մի կերպ դուրս էկա սառնց մնաս բարեի և «Փորձ»–ի փորձանքից ազատվեցի։ Սրա վրա յերկու որ չանցած՝ «Մշակ»–ը դուրս էկավ մի առաջնորդող հոդվածով՝ «Ո՞վ է Աղայանցը» վերնագրով։ Այս հոդվածի մեջ իր բոլոր մաղձը թափում է վրաս և, լեզվի մեջ իմ տգիտությունը ցույց տալու համար՝ այն փառան է բերում, թե Սպայանցն այնքան ուժեա է, որ փոխանակ դրելու՝ «չե գնում», գրում է՝ «չի դնում»։ Այստեղից ահա սկսվեց մեր հռչակավոր բանակռիվը, թե ինչպես պետք է դրել հայանի տեղերում՝ չե՞ թե չի՞։

Մինչև այդ ժամանակ ցես յերբեք չեյի մտածել, թե ինչպես պետք է դրել՝ չե թե՞ չի, և հարկ էլ չունեյի մտածելու, քանի որ ցես մտածում և գրում եմ իմ մայրենի լեզվով. Թող տարակուսի նա, ով որ հայերեն չի մտածում և կապկաբար հետևում է սրան կամ նրան։ Յեվ ո՞ր խելքը գլխին մարդը այսպիսի հիմար բանի վրա ուշադրություն կդարձնե։ Յեթե յերկուսն էլ գործածական են ժողովրդի մեջ, թեկուզ մեկը շատ և մյուսը քիչ, յեթե գրողը պետանա չե, կարող է անխոտոր գործ դնել յերկուսն էլ։ Բայց այսպես չեր մտածում Գ. Արծրունին։ Ցերբ իմ պատասխանիս պատասխանելիք չունեցավ, յերբ տեսավ որ ինքն է սխալվում և ոչ ցես, փոխանակ իր սխալը շտկելու, (որովհետև ասել եր, թե Ռ. Աբովյանցը, որ գործ եր ածում չի, նա էս ունի չե, որի համար բերել եր և մի սուտ որինակ), սկսեց հայհոյել անլուր հայհոյանքով։ Վերջերումս ինձ հասկացրեց, որ այդ ծայրահեղությունը իր արածը չեր, որ իր բարկությունից ոգուտ եր քաղել իր մերձավորներից մեկը։ Ժամանակի ընթացքում, յերբ Արծրունուց հեռացան կեղծավոր կատուները և մոտեցան ավելի աղնիվ մարդիկ, յերբ «Մեղու»–ի ճանապով սկսեցին դեպ–նալ «Նոր–Դար» և «Արձագանք»–ը և մի քայլ ուժով սկսեցին հարձակվել վրաս, խակ Արծրունին ինձ պաշտպանեց, ցես էլ այդ բարության փոխարեն ինչ որ կարողացա անել նրա համար՝ արի, յերբ ինձ համար անկախ և ազատ ասպարեզ ունեյի «Աղբյուր»–ում և «Տարազ»–ում։ Այսուամենայնիվ լեզվի խնդրում մենք մինչև վերջ մնացինք անհաչտ, թեև այնքան միայն զիջողություն արավ ինձ, որ իմ գրվածները իմ ուղղագրությամբ տպեց «Մշակ»–ումը։

VIII

Խոսելով մեր գործունեության մասին Ալեքսանդրապոլում, պետք է մի քանի խոսք էլ նվիրել Ս. Բեղնազարյանցին, որ անմոռանալի ջանք եր գործ դրել Ալեքսանդրապոլի դպրոցների բարեկարգության մասին։

Բեղնազարյանցն ինձ անծանոթ մի անձն չեր։ Ցերբ ցես դեռևս ճուլարանումն եյի, որ գանվում եր Հավլաբարում, ամեն կիրակի առավոտ գնում եյի Ռոշկինսկի յեկեղեցին դպրություն անելու։ Այդտեղ դասումը կանոնած եր լինում իմ հասակակից մի տղա, մինչևույն հաղուստով ինչ որ ցես ունեյի, բայց չատ ոխուր և ընկճված դեմքով։ Ցերբ որ ցես յերգում եյի, նա էլ ձայն եր պահում։ Ցես սկսեցի հետը խոսել և խոսեցնել, և բանից յերևաց, որ ուսում առնելու մեծ ցանկություն ունի, բայց նյութական հնար չունի. սրա վրա ավելացնում է և հասակի մեծությունը (մոտ քսան տարեկան եր արդեն), որից խրտնում են չատերը և չեն ընդունում, խակ իր վիրտը վոչ մի ուրիշ բանի չի կպչում, ուսման սերը մի տեսակ ցավ է դառել իր համար և դիշեր ցերեկ հալում, մաշում է իրան։

— Մի՛ հուսահատվիր,— ասացի ցես,— ասացված վողորմած է։ Նա որ այդ ցավը ձգել է քո մեջ, դրանով արդեն գործի հաջողության հիմքը դրել է. աստուծո ձգած սերմը անպատուղ չի մնալ։

— Ա՛խ, ինչքա՜ն չնորհակալ եմ քեզանից, քո այդ քաղցր խոսքերի համար,— պատասխանեց Սարգիսը, և նրա աչքերը լըցրակալվեցին:

Մեր Սարգիսը շատ խեղճ եր խոսում, մի տեսակ աղիողորմ կերպով, գլուխը ծռմռելով՝ կարծես ուզում եր լաց լինել մորը կորցրած յերեխայի նման: Սա այս իլան մեկ հատուկ չարժումնքովը վերջերում շատերի ուշքը շարժեց:

Այսպես ամեն կիրակի պատահում եյի Սարգսին (այն ժամանակ Բեզնազարյան աղգանուն ունենալը չը գիտեյի) և մեր ծանոթությունը քանի գնում՝ բարեկամական եր դառնում: Բայց շուտով մենք Հավլաբարից տեղափոխվեցինք քաղաք, ուր բացվեց տպարանը և մի առ ժամանակ յես այլ ևս չտեսա իմ Սարգսին: Յերկու թե յերեք ամիս անցած՝ մեկ որ պատահեց ինձ Մ.յդանումը: Ինքը մոտեցավ ինձ և պատմեց ավելի ևս տխուր յեղանակով, թե ինչպես իրան հաջողվեց մտնել փափագյան վարդապետի մոտ իբրև փոքրավոր-աշակերտ, քիչումիչ բան սովորեց, բայց վարդապետը գնաց Ղարաբաղ և իրան թողեց դարձյալ անճարացած:

— Սարգիս,— ասացի,— կուզե՞ս յեկ ինձ մոտ տպարան, այնտեղ յես կաշխատեմ, որ դու համ արհեստ սովորես, համ եչ ուսում առնես:

— Ա՛խ, այդ ի՜նչ լավ կլինի, ո՛ւր եր թե այդպես մի լավություն անելիր,— ասաց Սարգիսս ուրախանալով:

Մյուս որը մեր Սարգիսը յեկավ տպարան, բայց չդիտեմ յերկու թե յերեք որ մնաց միայն: Խեղճի վոտները ուռան, և այն գնալն եր որ գնաց, ել չերևաց:

Սրա վրա անցավ մոտ վեց տարի: Ցես Պետերբուրգումն եյի և բնակում եյի յեկեղեցու դավթումը: Մեկ որ դռնապանը յեկավ ինձ իմաց տվավ, թե մեկ մարդ ե յեկել, ձեզ ե հարցնում: Ցես գնացի և դեմս յեկավ մի յերիտասարդ, թուխ մորուքով, արտասահմանի նորատարազ հագուստով և ասաց.

— Բարո՛վ, պարոն Աղայանց, յեկել եմ ձեզ մոտ հյուր:

— Շատ ուրախ եմ,— ասացի,— համեցեք յերթանք:

— Ցերևում ե, որ չճանաչեցիք ինձ,— ասաց:

— Այո՛,— ասացի,— ներեցեք, որ ծանոթա չեք գալիս: Սրա վրա պարոնը բղավեց.

— Ցես Բեզնազարյանցն եմ, ե՛... Սարգիս Բեզնազարյանցը, ի՞նչպես չեք ճանաչում:

— Համեցի՛ք, համեցեք,— ասացի,— դեռ կգնանք սենյակը, այնտեղ կճանաչեմ, գլխի չեմ ընկնում:

Ցերբվոր տարա սենյակ, բարև ու բուրկը տեղավորեցի, հետո մոտեցա իրան և յերեսին խոր նայելով՝ ասացի.— Դեհ հիմա ասացեք տեսնեմ, դուք վո՞ր Բեզնազարյանցն եք, մենք յեթրբ ենք իրար տեսել և ճանաչել, վոր հիմա չեմ կարողանում միտս բերել:

Բեզնազարյանցը ծիծաղեց և ելի բղավեց զազախեցու յեղանակով.

— Բա միտդ չի՞, յես են Սարգիսն եմ, վոր դու տարար տըպարան, վոր քո արհեստը սովորեցնես, բայց վոտներս ուռավ, ել չկարացի դրաշար դառնամ:

— Հա՛... հիմա լսացա... բայց ախր են Սարգիսն ու ես Սարգիսը իսկի իրար նման չեք. ի՞նչպես ելավ, վոր ես փոխվեցիր:

Այստեղ Բեզնազարյանցն սկսեց պատմել իր գլխով անցած վերջին դեպքերը, թե ինչպես մի բարերարուհի յե գտել և նրա ծախքով մտել Ներսիսյան դպրոց, ուր նրան ընդունել են նախապատրաստականում, բայց ինքը իր չանասիրությամբը յուրաքանչյուր տարի յերկու դասարան վոխելով՝ չորս տարում ավարտել է դպրոցի ամբողջ դասընթացը և ուսացել վարժավոր վկայական, վորի շնորհիվ գտել է մի այլ բարերար, վոր նրան ուղարկել է Մոսկվա, ուր սկսել և պատրաստվել, վոր մտնե համալսարան, բայց այնտեղի կլիմային չդիմանալով, բժիշկների խորհրդով և իր բարերարի հրամանով դնացել է Գերմանիա, բայց այդ ժամանակ բարերարը վախճանվել է, ժառանգներն ընդհատել են ոժանդակությունը: Այժմ Գերմանիայից է դալիս և մոտիվը է հայրենիք գնալ, միայն ճանապի ծախք չունի:

— Շատ լավ,— ասացի,— չատ ուրախ եմ: Այստեղ ճանապի ծախք կգտնենք, բայց ավելի լավ կլիներ, վոր մի նոր բարերար գտնվեր և քեզ կրկին ուղարկեր Գերմանիա՝ հատկապես մանկավարժություն սովորելու:

Ցես այս ասացի իրրև մի ցանկություն միայն, հետևելով ժամանակակից մոդային: Նա ինձ մոտ մնաց մեկ թե յերկու շաբաթ միայն, և մեկ որ ել յեկավ և ավետեց ինձ, ասելով.— պիտո՛ս, իմ Գերմանիա գնալը հաջողում է: Այստեղի ուսանողներն ուզում են իրանց հաշվով ուղարկվել, վոր յերթամ մանկավարժություն սովորեմ, միայն ցանկանում են, վոր

Մոսկվայի հայ ուսանողներն էլ մասնակցեն, և արդեն դրել են նրանց:

Մոսկվայի ուսանողները վոչ միայն չոչնեցին, այլև վատաբանեցին Բեդնաղարյանցին և կատաղ ձղեցին Պետերբուրգի ուսանողների մեջ էլ: Զարահոդությունն աչկարա էր: Բեդնաղարյանցը դնաց Մոսկվա, ամոթահար արավ իր չարախոսներին և վերադարձավ Պետերբուրգ իր վարկը վերականգնած: Ցեղյանցը միջնորդեց մի քանի վաճառականների և Սանասարյանցին, ինքն էլ նրանց հետ միանալով՝ հավաքական ուժանդակությամբ Բեդնաղարյանցին ուղարկեցին Զվիցերիա Ֆյուռնախի ուսուցչական սեմինարիան: Ցեղյանցը առանձին հրճվանք ուներ նրա ուսման հառաջադիմության վրա, քանզի կողմից եր դպրոցի տեսչի հետ և միշտ լավ կողմից եր տալիս տեղեկություն: Ահա այստեղ իր մանկավարժական ուսումն ավարտեց Բեդնաղարյանցը և դիպլոմով վերադարձավ Պետերբուրգ 1870 թվականին: Այստեղ էլ ցանկություն ուներ մտնել համալսարան, բայց այս բանը դուր չեկավ Ցեղյանցին և նրան ուղարկեցին Ալեքսանդրապոլ, Ա. Բարայանցի առաջարկությամբ:

Բեդնաղարյանցը մի առանձին տաղանդ չուներ, բայց վոր ե՝ իր անխոնջ աշխատությանն ե պարտական: Դպրոցները նրան մի միայն պատսպարել են, իսկ ուսումն ինքն ե ձեռք բերել իր ժրաջան ինքնուսուցությամբը: Ալեքսանդրապոլից հետո, նա մի առժամանակ դնաց Ոդեսա, մոտ տաս տարի տնօրենություն արավ Ցերևանի թեմական դպրանոցում, հետո Ներսիսյան դպրոցում, յեղավ թե ուսուցիչ և թե տեսուչ: Իբրև ուսուցիչ, պատկառելի և մերթ նաև յերկյուղալի յեր աշակերտաց համար: Ներքին սերը դրսի հասա կեղևից բղխել չեր կարողանում: Ուսուցանում եր վորպես արվեստ, կամ ինչպես կասեն՝ արվեստի բոլոր կանոնների համեմատ, բայց վոչ իբրև Մեսրոպ, վոր «Ոչ իբրև զարեստ ուսուցաներ, այլ որպէս զհոգի առաքելաբար աշակերտացն տայր»:

IX

Հինգ տարու չափ մնացի յես Ալեքսանդրապոլում և շատ դոհ եյի վիճակիցս, սիրված, հարգված և միխիթարված եյի ամեն կողմից: Բայց ամեն ինչ թե բնության և թե կյանքի մեջ պարբերական է: Լավն ու վատը, դառն ու քաղցրը, ուրախությունն ու տխրությունը, հաջողությունն ու անհաջողությունը չարունակ հաջորդում են միմյանց, ինչպես տարվա չորս յեղանակները և դիշերն ու ցերեկը:

Սրա վրա շատ չանցավ յերկուքին դավակներս մեռան–Սոնան և Հայկ: Սարսափելի բան և առաջին կսկիծը վորդեկորույս ծնողի համար: Մոր վիշտը շատ և շատ խոր եր, բայց սիրտն եր ղոում և հալվում, մաշվում, իսկ յես դոռում եյի դազանի պես, վոր դուրս մղեմ սրտիս կսկիծը: Յես հետո թեթևանում եյի, իսկ նա ծանրանում եր:

Յես սկսեցի նիհարել, ձայնս կտրվեց: Ամուսինս ավելի վատ վիճակի մեջ ընկավ թե ֆիզիքապես և թե հոդեպես: Ներքան չուտ ուղարկեցի Թիֆլիս, իսկ յես հրավիրեցի տր. Անդրեյանին որիորդաց դպրոցի համար. սրա հետ ամուսնացավ իմ բարեկամ Ա. Ցեղեկյանցը: Սրանից հետո յես հեռացա Ալեքսանդրապոլից: Բեդնաղարյանցն արդեն հեռացել եր ինձանից մի տարի առաջ: Մենք հեռացանք, բայց դպրոցները բարեկարգ վիճակի մեջ և բարեխիղճ ուսուցիչների ձեռքում թողեցինք:

Ալեքսանդրապոլից յես գնացի Թիֆլիս նորից վերադառնալու հույսով, բայց թե իմ և թե ամուսնուս ախտաբությունը պահանջում եր Թիֆլիս մնալ: Այս ժամանակ ահա Աբգար Հովհաննիսյանը հրավիրեց ինձ ողնելու իր «Փորձ»–ին, վոր դեռ նոր պիտի սկսեր: Մոտ տարի ու կես մնացի յես «Փորձ»–ի խմբագրատանը, բայց վոչ մի բան չգրեցի յես «Փորձ»–ի համար, բացի մի թարգմանությունից «Ողնական–ուսուցիչ» վերնագրով: Զգրեցի, վորովհետև գրածս գրաքննիչը–մենսուր Ցեվանդուլյանցն եր, վորի սիրած ուղղությամբ յես բան գրել կարող չեյի, ինչպես գրա փորձն արի մի քանի գրածներ ցույց տալով: Կարծելով, վոր սրբագրությունն ինձ չատ և գրաղեցնում, Աբգարը մի ողնական եյ ավել ինձ, բայց այդ փորձն ևս անհաջող յեղավ, յես գարձյալ վոչինչ չկարողացա գրել: «Փորձ»–ում վոչինչ չգրելով, պատահում եր սակայն, վոր ինքս ինձ համար մի բան գրում և պահում եյի: Վորքան սիրելի յեր ինձ համար Աբգարը, վոր ամենայն հոգվով աշխատում եր ինձ սիրաչահած պահել, վոչինչ չեր խնայում, վոչ փող և վոչ պատիվ, բայց այդ չորքանն ինձ համար տանելի և անտանելի յեր, մանավանդ աշխատակից–

Ներից մի քանիսը, որոնք տպագրվել պետք ծծում էին Աբգարին և միևնույն ժամանակ չարունակ իմ տակը փորում: Երբանք մի կողմից քծնում էին Աբգարին, մյուս կողմից Արծրունուն ու տանող բերողի պաշտոն էին կատարում: Ես չեմ կարող յերկար մնալ այս անտանելի վիճակում: Ինքս խնդրեցի Աբգարին, որ ինձ ազատ կացուցանե.— իմ խղճմտանքս տանջվում է,— ասացի,— փող եմ առանում, բայց վոչինչ չեմ չինում. փոխանակ ինձ ուղի հարյուր մանեթ տալու, մի ուրիշին կարող եք չորս հարյուր մանեթով պահել իմ տեղս: Աբգարն ինքն ղազաց, վոր սոխակը վանդակի մեջ կարող չե յերգել, տեսավ վործով, վոր յես պատվերով բան չեմ կարող գրել, վոր յես ել իմ կապրիզներն ունեմ, վոր ինձ հարկավոր է անպայմանի ազատություն և անկախություն և ապատեց ինձ իր «Փորձ»-ից: Այս բանը պատահեց 1878 թվի սեպտեմբերին, յերբ չեմ սխալվում:

Այդ տարին յես դնացի Յերևան ուսուցչության, իսկ Րաֆֆին Սպուլիս՝ նույնպես ուսուցչության: Յերևանի թեմական դպրոցի տեսուչը Բեդնազարյանցն էր, Ռուբեն Զալալյանցն ել հոգաբարձու յեր: Յերկու մտերիմ բարեկամներս ինձ ընդունեցին լրլու ղերության ազատվածի և սկսեցին սիրել և մխիթարել:

Գեորգ կաթողիկոսն իմանալով իմ Յերևան գալս, Մանկունու նամակով կանչեց մոտը և առաջարկեց, վոր կրկին հանձն առնեմ իմ առաջվա պաշտոնս, այն է՝ «Արարատ»-ի խմբագրության: Այս բանն ինձ համար բոլորովին անսպասելի յեր: Արդեն ճեմարան կար, ուսուցիչներ կային և տեսուչն ել Այվազովսկին էր: Իմ պետքն ինչո՞ւ պիտի զդացվեր այլևս:

— Ինչ անցք վոր անցել է ձեր յերկուսիդ (իմ և Մանկունու) մեջ,— ասաց,— պետք է մոռացության տաք: Այն ժամանակ յերկուքդ ել տղաք էյիք, իսկ հիմա հասունացել եք: Այս գործի համար քեզնից հարմարագույնը չունեմ այս ատեն մեջ:

Մանկունին մոտս կանգնած էր, յերբ հետ խոսում էր վեհափառը, և հենց իր թելադրության համեմ ել պետք է հրավիրված լինելի, թեպետ ինքն այդ չասաց, այլ թե՝ «Իշդե՛, ճարդս քեզի կուղե»:

Մանկունու վրա մատնացույց լինելով՝ չարունակեց վեհափառը.

— Սա պիտի յերթա... մեծ մարդ կհամարեն գինքը... թող յերթա, հոդ չե...

Այստեղ չատ բան ասեց վեհափառը՝ ցաված սրտից բղխնած:

— Ես պատրաստ եմ,— ասացի,— վեհափառ տեր, Ձեր հրամանը կատարելու: Թե յես և թե հոգաբարձուք ձեր ծառաներն ենք, կհրամայեք, նրանք իմ տեղ մի ուրիշին կհրավիրեն և ինձ կարձակեն:

— Շատ սպրես, տղաս... Վարձատրության համար հոգ չընես. որինավոր ռոճիկ կունենաս և ամենայն հարմարություն: Ես գեռ կաչխատեմ, վոր սա չերթա, իսկ յերթե գնալու յեղավ, քեղ իմաց կուտանք:

Այս մի նախապատրաստություն եր, վոր վեհափառն անում եր, վոր յերբ Մանկունուն հեռացնեն, ինձ հրավիրե, բայց բանն այնպես յեկավ, վոր Մանկունին մնաց իր տեղը: Այսուամենայնիվ այս ինքնըստինքյան չնչին դեպքը ինձ համար գործնական և բարոյական ոգուտ ունեցավ: Իմ վարկը բարձրացավ հոգևորականության առջև, մանավանդ միաբանության և առաջնորդների, իսկ այս մեծ նշանակություն ուներ իմ ապագա գործունեության համար:

Ներսես յեպիսկոպոս Աշտարակեցյանը մեծ ճաշկերույթ տվեց Գայանեյի վանքում ի պատիվ իր նախկին բարեկամի, վոր և մի համակրական ցույց եր առ նորին վեհափառության քաղցր տրամադրությունը դեպի ինձ: Ինչ պետք է անես, այսպես և աշխարհս կենցաղավարությունը: Կան դեպքեր և վիճակներ, ուր մարդիկ չեն կարողանում սեր ցույց տալ իրանց սիրածին և ատելություն՝ իրանց ատածին: Այս տողերը գրելիս ինքս այսպիսի մի անյելանելի վիճակի մեջ եմ գտնվում, վորի մասին կգրվի մի ուրիշ անգամ:

Յերևան հասնելուցս քիչ հետո Աբգարը յեկավ Սանահասարյանցի հետ: Սանահասարյանցը յեկել եր քրոջն այցելության, իսկ Աբգարը Բարեգործական ընկերության կողմից ուղարկված եր գերևարված ալաշկերտցիներին նյութական նպաստ տալու համար: Ես չատ ուրախացա, թե մեկի և թե մյուսի գալստյան համար: Աբգարն ինձ վեր առավ հետը ու միասին գնացինք այցելության գաղթականներին, վորոնք ցրված եյին Յերևանի զանազան գյուղերում: Մի յերեկո հասանք Գառվարս և իջանք վոստիկ Իլևանոսը: Իլևանի պահողը Ծերունի Ամիր-

խանչանն եր, վոր մի կոպեկ և դյուզ խոսող մարդ եր: Ցնորք կարդացել եր Աբգարի ուղեգիրը ու պլան ծանոթ բժշկապետ Հովհաննեսյանի վորդին եր, յեկավ ուղղակի յերեւլին կանդնեց և մի դյուզ հարցմունք արավ, վորից Աբգարս սաստիկ վիրավորվեց և հրամայից, վոր կառքը լծել ուս:

— Հեռանանք,— ասաց լինճ,— այս հիմար տեղից, յես այստեղ չեմ կարող պիչերել:

— Բայց արդեն ժամի լինն է,— ասացի,— և համիեքր վառանդավոր: Ցեթե չես վախենալ, դնանք Բաշնորաշեն, մեր բարեկամ բժիշկ Բաջրեբունուն հյուր:

— Գնանք,— ասաց,— յես չեմ վախենում. «յես հավատում եմ իմ աստղին»:

Ճշմարիտ վոր Աբգարի աստղն այդ ժամանակ վայրում եր Թիֆլիսի հորիզոնի վրա այնպես վատ, լինչպես վոչ վոքինը: Վոչ մեկս դնդք չունեյինք, Սանասարյանի բեմբուկներն եյինք վերցրել հետներս: Շատ եր մութն եր: Մտա կես պիչերին մի ամայի անապատի մեջ եյինք, ուր և հանդիպեցինք մի խումբ Թուրք ճիամորներով, վորոնք ճանփից դուրս գալով հետից կանչեցին մեր կառապանին, թե ասքեր ենք մենք:

— Գնացեք ձեր ճանապարհր,— պատասխանից կառապանը,— սրանք ձեր ուղած մարդկանցից չեն:

— Ի՞նչ են ասում,— հարցրեց Աբգարը:

— Վոչինչ,— ասացի,— պահապաններ են, մեր ապահովության հոգս են քաշում:

Կառապանը թոցրեց մեզ և յերբ հասանք Բաշնորաշեն,— ասացի. «յավ պրծանք» ավազակներից ձեռից, հիմա համառում եմ քո աստղին:

Գիշերվա ժամի մեկին լինք Բաջրեբունու մոտ: Աբգարն անճամբ ծանոթ չեր բժշկին, նոր ծանոթացավ իր ատյանպատմության հետ և մի թեթև ընդրկրից հետո խոսքն գնաց: Մենք չգնացինք մինչև լույս և չիմացանք էլ, թե լինչպես անցավ գիշերը, այնքան շատ եր մեր վոխադարձ հարցրելիքը: Վորքան տարբերություն կա բնական և չինովի մարդկանց մեջ, վորքան տարբերություն և նրանց վիճակի մեջ: Բաջրեբունու պես մարդիկ ծածկված են մնում անհայտ բնության պուդերում, իսկ չինովի անշնարհքները մեծ քաղաքներում լրանք իրանց ժողովրդի դեկավարող են հանդիսանում: Փոքն ու

դերքը ապրելի կերպով հավիտյանում և հանճարների պաշտոնը ու ժողովրդին ղեկում հարատատ դեկավարներից:

— Ի՞նչպես մարդ և քո Աբգարը,— հարցրեց Գաբրիելը:

— Ի՞նչ ասեմ, դեռ իսկական մարդ չէ, ուզում է մարդ դառնալ, մարդ բնական և լինքնուրույն. բայց ամեն տողի վրա տանն անգամ հորանջում է, բան չի դուրս գալիս գլխից: Ցեզ վորովհետև դրել ուզում է մխայն փայլելու համար և վոչ թե իր զգացմունքների ծանրությունից թեթևանալու, վոր չունի, այս պատճառով վայլուն ֆրազներ և հավաքում դանազան տեղերից, դիմում է նաև կոմնակի միջոցների. դրել և տալիս ուրիշներին այնպես, վոր կարծվի թե լինքն է դրել և տպագրում և անսոտրազիր:

— Այն ուսանողների նման, վորոնց փոխանակ ուրիշներն են քննություն տալիս...

— Ուղիղ այդպես...

— Ի՞նչ է նպատակը, ձգտումը:

— Ձեռք բերել բարձր դիրք, խելք մարդու համարվ և հեղինակություն, վոր չատերի համար ակնածելի լինի, չատերը կարող լինեն իր լանամակալության և հովանավորության, ապրելին ամեն տեսակ դործ և դործիչ իր ձեռքումն ունենա, վոր ում ուզենա՝ ներս թողնի, ում չուզենա՝ դուրս մղե:

— Ուրեմն չատ վատնդավոր մարդ է դա: Սա մի բոլորովին նոր տիպ է մեր մեջ:

— Այո՛, նոր, բայց դեռ լավ չի կատմակերպված: Սա կարող է պատնեշ մի տեսակ՝ դիկտատոր, յեթե խելքը պլիճն պահի, մի քիչ համեստ և հեռատես լինի: Սակայն սրա մեջ սոված լինչ ատ յեղես է, մինչև ղատարկ է, վուչ է:

Աբգարից հետո անցանք այլ ատյարկների և անցքերի, վորոնք մեր ուշերն ավելի մոտիկ եյին: Խոսեցինք այնպիսի բաների վրա, վորոնց մասին խոսում են, բայց չեն դրում: Մոտ յերեք տարի յեր անցել, լինչ վոր չեյինք տեսել միմյանց, բայց չատ ու չատ բաներ եյին անցել յերկուսիս գլխովն և պետք եր միմյանց հավիտ տայինք յերես առ յերես:

Մյուս որը յես դառանք դեպի Յերևան և ճանապարհին՝ թե գնալիս և՝ թե վերադարձին՝ մեր խոսակցության նյութը վլխավորապես դանազան անձնավորություններ եյին, վորոնց պատահանում կամ վատաբանում եյինք: Մեր վատաբանությանն ամենից չատ յենթարկվում եր Պետրոսը (Սիմեոնյանցը), վո-

քին հեռացնելը Ներսիսյան դպրոցից մի անհրաժեշտ բարեգործություն էլինք համարում: Աբգարը պատմում եր ուրիշի պատմածները նրա մասին, իսկ ես պատմում եյի իմ տեսածը և դիտածը: Ցես վատաբանում եյի և Աբգարի բարեկամներին՝ Ցեմանգուլյանցին, Պալասանյանին, Բարխուդարյանցին, պատմում եյի, թե ինչպիսի վիշեր եյին դրանք լինճ համար «Փորձ»-ի խմբագրատան մեջ: Աբգարն էլ համակարծիք եր լինճ հետ: Բայց Աբգարը տարեց տարի նորանոր փորձեր սկսեց անել, իր «Փորձ»-ն «Արճադանք» չինեց և նրան էլ յենթարկեց դանազան փորձերի՝ մինը քան զյուսն անհաջող: Տարեց տարի փոխվեց և ինքը, և ամենայն բանի վրա սկսեց նայել այնպես, ինչպես որ ավարտում և աւարկան աչքում, այսինքն թարս: Սկսեց զղվել և պաշտպանել իր առածներին, պահարակել ու հալածել իր սիրածներին: Շրջապատելով իրան պնդերես ու անիրեն մարդկանցով, հացկատակ պարասիտներով, դրանով իր թերին ուզեց հետաքրքրական կացուցանել, կարդացողների թերին դրավել, բայց ընդհակառակն այդ՝ ճանապով նա հասավ մինչև «Նոր-Դար»-ի առորոտը: Փոխանակ դնալու դարիվեր, դլորվեց դարվեվայր:

Ցերևանում յես մնացի ութ ամիս: Այդ տարին պատահեց Ճեմարանի առաջին խռովությունը, որից հետո վեհափառը ատոցրեց իր հարաբերությունը Ալեքսանդրոպոլի հետ, թեպետ մեղավորը մինչև նա չեր, որ Թիֆլիսում առաջնորդություն և Ճեմարանում տեսչություն եր անում մեկտեղ, այլ ևս վեհարանը, որ ամեն ինչ: Այդ միջոցին յես և Բեգնազարյանցը դնացինք եջմիածին, ուր Բեգնազարյանցը մնաց, որ մասնակցե անցքի քննությանը, իսկ յես Մալխասյանցին միխիթարելով՝ վերադարձա Ցերևան: Այդ նախկին ընդունակ աշակերտից, վերադարձա Ցերևան: Այդ տարին Մատթեոս Յեսայեսյանը յեկավ կաթողիկոսի մոտ կարևոր դործով, բայց թուրքահայերության հանդիսեցավ՝ յեու դարձավ ձեռնունայն: Սմեն իշխանավոր դրավչության մի չոկ տաքսիկա ունի: Գեորդ կաթողիկոսի տաքսիկան թուրքահայերությունն եր, որով խոհեմ և խելոք մարդուս անուն եր վաստակում: Իզմիրլյանցին այցելեցինք յես ու Բեգնազարյանցը և մեղ վրա խելահաս և ծանրախոհ մարդու տպավորություն թողեց:

Դպրանոցում յես դասեր եյի վերցրել նախակրթարանում և մեկ ել վերջին դասատանը: Սմեն տեղ այսպես եյի անում յես, դպրոցի յերկու ծայրերն եյի վերցնում,— ներս մանողներին ընդունում եյի և ուղևորում դեպի մյուս դասասրանները, դուրս յեկողներին ել ճանապարհ ձգում, դեպի կյանք՝ ինքնակրթության վրդի ներշնչելով նրանց մեջ: Նախակրթարանում յես ունեյի ուրախունաչափ աշակերտ, և այդքան հոգին սովորում եյին իրրև մի հոգի՝ տաքտով ու խմբով: Ցերևանի յերեխեքը փիլիքսասես թույլ լինելով՝ ավելի զրաղեցնում եյի նրանց մարմնամարդությամբ, վոր չատ լավ եր ներդործում նրանց մտավոր պարապմանքի վրա, մանավանդ խմբովին և տափաոով աշխատելու վրա: Սմբողջ դասատունը դործում եր իրրև մի լարած ժամացույց: Գրել կարդալում այնքան վարժվեցին, վոր սմեն թելադրություն գրում եյին անսխալ, գրում եյին և փոքրիկ շարադրություններ, մեծ մասամբ իրանց դիտցած հեքիաթներից: Շատերն եյին ցույց տալիս տաղանդի նշան: Այդ տեղ յես իմ դասատվության բոլոր թերի և պակաս կողմերը լրացրի, և կարող եյի, յեթե տեղը ներեր, մոչ թե ութսուն հոգու, այլ և հարյուրավորի հետ պարապել իրրև մի անհատի հետ ու առ առավելն յերեք ամսում սովրեցնել որինավոր գրել-կարդալ: Շատերը յենթադրում եյին, վոր տված արդյունքի մեջ մի անբացատրելի ձեռնածություն կա, թե դա ավելի մարդմունքի և մեքենականության արդյունք է: Ընդհակառակը իմ դործի հաջողության մեկ գաղտնիքը այն եր, վոր բոց եյի անում յերեխայոց առջև գրել կարդալու գաղտնիքը, նրա բուն եությունը զննելի և չոշափելի կացուցանում: Իմ ոգնությամբ յերեխեքն իրանք եյին անում գրերի դյուրը, նախ գլխում և ապա կարդում եյին. յերկուսի մեջ ել գլխավորը գիտակցությունն եր, դիտեյին, թե ինչ են անում և ինչու՛ համար: Ինչպես սմեն մի չոշափելի առարկա զննելի յենք կացուցանում, ցույց ենք տալիս նրա ձևը, մեծությունը, գործը, զանազան մասերը, այսպես զննելի եյինք կացուցանում գրի ու նրա կարդալու եությունը: Ցերեխեքս գիտեյին այնպիսի գաղտնիքներ, վորոնք անհայտ են շատ վարժապետների: Այսպես պատրաստված յերեխան, թեկուզ մի տարուց հետո դուրս դա դպրոցից, անկարող և չէարունակել իր ինքնուսուցումը:

Լինելով մի փոքրիկ Մեսրոպ, հասակի հետ կամք ներա դրագիտությունը: Այս մասին յես դրել եմ «Վարժարան» ամսագրի մեջ՝ ընդեմ Մանդինյանցի իմ կարծիքով թերացուցիչ մեթոդի:

Ցերեան յես ընկա անակնկալ կերպով: Մոքսա դրել եյի «փորձ»-ից հեռանալ և անպործ չմնալ. դրեցի Բեղնազարյանցին իմ մտադրությունը և խնդրեցի, որ ինձ համար տեղ պահե մինչև ինձանից բացատրություն չստանա, թեկուզ ուշ լինի այդ բացատրությունը: Ուրիշները բավական ծիծաղել եր իմ այս պայմանի վրա և ասել եր. «Ինչ անենք, մեր Ղազարն է, պետք և ազատենք, տեսնենք յերբ և բարեհաճում պալ»: Այսպիսի արտոնություն միայն ինձ կարող եր տալ խստապահանջ տեսուչ Բեղնազարյանցը, պիտենալով, որ յես թեկուզ տարվա կիսին դընեմ, եյի մի տարվա պործ կչինեմ: Բայց յես պնացի պպրոցական տարվա սկզբին և վերջումն եյ բոլորովին դոհ մնացի վճակից, այլևս մտոք չունեյինք հեռանալ Ցերևանից, բայց մի անակնկալ հրամեր անհրաժեշտ դարձրեց իմ հեռանալը: Արևտակես վարդապետ Սեդրակյանը, որ կառավարիչ եր Ղազարդաղի թեմի, անձամբ խոսեց ինձ ու Բեղնազարյանցի հետ, շատ բաներ հաղորդեց և ցույց տվեց իմ Ղարաբաղ պնալու կարևորությունը: Յես ու Բեղնազարյանցը այդ մասին յերկար մտածելուց հետո, տեսանք, որ հայր սուրբի մտադրությունը կատարյալ անհրաժեշտ և ընդհանուր դործի համար: Մեղ պետք են ամեն նահատակություն հանձն առնող պպրոցական աստաքյաներ: Ալեքսանդրապոլում մեր ձգած հիմքը չպրունակում եր հանստատուն մնալ չնորհիվ Հայրապետ Կուկասյանցի տոկուն աչխատության, Ցերևանն եյ արդեն կապվեց նրա հետ մի ուղղությամբ, պետք եր Ղարաբաղն եյ միացնել նրանց հետ, որ ամեն տեղ մի ուղղություն, մի հոդի լինի, մի նպատակի դիմվի՝ ու միևնույն ծրագիրն ունենա, որ մշակել եյինք արդեն Ալեքսանդրապոլում: Ահա այս նպատակով յես թողեցի Ցերևանը և պնացի Շուշի:

X

Մի պարմանալի դեպք եր իմ Շուշի պնալս: Եչմիածնի տպատրանք բարեկարդեցինք յես ու իմ Միքայելը, Ղարաբաղի պպրոցական դործի բարեկարդություն ևս մեր ուղնությամբը կատարվեց: Միքայելը՝ քահանա լինելով՝ ամբողջ վիճակի ընդհանուր դործակալն եր, Սեդրակյանի մտերիմը և նրա ազնեքը: Շուտով Հովհաննես Տեր Գրիգորյանցն եյ թեմական տեսուչ յեղավ իմ հորդորանքով, վարժապետներից եյ գաղափարի տեր մարդիկը միացան մեղ հետ և այսպիսով կազմվեց մի բավական դորեղ խումբ: Մեղ հարկավոր եր մեծ ուժ, վորովհետև Բաբաջանյանի խումբը ամեն ինչ տակնուվրա յեր արել, քաղաքը խռովության մեջ դցել և հավատացրել, որ իրանից հետո այլևս քարր քարի վրա չպիտի կանգնի, դպրոցը պիտի փակվի: Հենց այս մտքով եյ իրանց դործերից վոչ մի հետք չեյին թողել, ամեն ինչ տարել եյին հետները, նույնիսկ հասարակ ցուցակները: Այս վիճակում Շուշվա դպրոցը նմանում եր թալանված Ալաչկերտին: Պետք եր ուրեմն վերականգնել մի քարուքանդ չենք, և չարունակ ու անընդհատ բծախորած մի ամենամաքուր պատիվ: Մեծ եր հայր Սեդրակյանի դործ դրած ջանքը. ամեն մի առաջարկություն դպրոցի վերաբերությամբ խնդրո իրաշործում եր կարծես մի դյուրթական պավադանով: Յես տեսուչ չեյի, այլ տեսչապետ, յերեք խորթ չեր թվում այսպես ասել, վորովհետև ինքս եյի նշանակում տեսուչներ և արձակում, դպրոցների դեկը, թե որիորդաց և թե տղայոց իմ ձեռին եր: Ուսումն որ սկսեցինք, մի քանի հոդի յեկան միայն, բայց ամիս չանցած վրա թափվեցան այնքան, որ եյ տեղ չունեյինք ընդունելու և հարկադրված՝ յերկու նոր դասարան ևս ավելցրինք: Գործը կարդի ընկավ և առաջ դնաց հնկայական քայլերով, որից ամոթահար յեղան դպրոցի թշնամիները և մեղա յեկան, իսկ բարեկամները ճակատները լայն բաց արին:

Շատ եր դժվար Շուշի քաղաքում մի բարոյական նախապիծ իրագործելը: Այդ քաղաքում չկար ձգտումն դեպի աղնիվն ու վսեմը: Ինչ որ չեր համրվել, չեր կշռվել, չեր չափվել, չեր դնահատվել դրամի հայտնի քանակությամբ, դրանց համար դոյություն չուներ: Աչակերտների մեջ յերևում եր ծնողաց նյութապաչտական հատկությունը, ինչպես և նրանց փիլիսական առողջությունը: Փիլիսապես առողջ լինելով, ուժեղ եյին և մտքով, թե տղայք և թե աղջիկք: Բայց շատ դժվար եր դրանցից իդեալիստ չինել: Ամբողջ քաղաքում աչքի չեր ընկնում վոչ մի ապուշ, վոչ մի խելագար, վոչ մի սովորական կար-

դերն արհամարհող հարբեցող: Մի հատ ցնորված մարդ. կար միայն, բայց նա էլ մարդամեջ չէր դուրս գալիս, տղնվում էր տանը և աշակերտներ էլ էր կարդացնում: Շուշեցիք դրա անունը դրել էին բանաստեղծ: Այս այսպես լինելուց հետո, ուրեմն դիժ պետք է լիներ մի շուշեցի, որ բանաստեղծ լիներ: Հակումն ցույց տար, չէ՞ որ նրան էլ կձգնեին «բանաստեղծի» կարգը...

Շուշի քաղաքը վաճառաշահ չլինելով՝ ամենայն տարի խախտվում, խարբարվում է. սաղերն ու առուղները դուրս են գնում, քաղաքում մնում են փուչն ու տականքի մանրուքը: Ցես գործ ունեցել փուչերի հետ, և սրա համար էլ նահատակվում էի չարաչար: Դավաճարությունը թե ներսից և թե դրսից էր, և այնպես բարդ էր, որ դրանց բոլորն առաջքն առնելու համար պետք էր մի առանձին խորհրդարան: Այս պատճառով յես այնքան զբաղված էի, որ ինչպես կասեն՝ քիթ սրբելու ժամանակ չունեի, և վոչինչ չդրեցի, բացի մի «Անահիտ»-ից և մի «Թեմական տեսուչ»-ից, որ «Մեղու»-ի մեջ տպվեց կիսատ-պռատ:

Ղարաբաղում յես իրրև ուսուցիչ՝ նման եի ձագեր պահող թուխբսկան հավի, որ սովորաբար դուրդուրում է իր ձագերին, ինչ տեղից ասես մի բան գտնում, ուտեցնում, և միևնույն ժամանակ դյուրագրգիռ և կատաղի լինելով՝ հարձակվում է շների և կատուների վրա և փախցնում բաղեի սուլերից: Բոլոր կռիվներս հառաջ եկին գալիս իմ հավատան սիրուց, որ տածում եի դեպի իմ անուցած ձագերը: Ոչ վոր վարժապետի գործում է ունեցել և սիրտ, նա կզլա, թե ինչ եմ ուզում ասել, կիմանա, թե վորպիսի սեր եմ ունեցել յես դեպի իմ գործը, դեպի իմ հոգեղավակները: Մի բանով միայն յես մխիթարված եմ, վոր յերախտամոռ աշակերտ ունեցած չեմ: Չեմ տեսած վոչ մի ուսուցիչ, վոր այս կողմանե ինձ չափ բախտավոր լինի յեղած: Ցես հոգվով չափ չնորհակալ եմ իմ աշակերտներից:

Շուշու դպրոցում իմ առաջարկությամբ հաջորդաբար տեսչություն արին Ջամատ-բեգ Իշխանյանց, թժիշկ Բախչի-բեգ Աղասարյանց, մատնադետ մանկավարժ Սեդրակ Մանդինյանց և Համբարձում Առաքելյանց:

Սրանցից առաջին յերկուսը ձրի կատարեցին իրանց պաշտոնը, իսկ Մանդինյանցին հրավիրեցինք վարձով: Սրան ահա կուղեմ մի քանի տող նվիրել ամենայն անաչառությամբ և աղնվությամբ, չնայած իմ ատելությանս, վոր ներկայումս տածում եմ դեպի այդ անձնավորությունը:

Սկսած 67 թվականի վերջերից յես Մանդինյանցի ամենամտերիմ բարեկամն եմ յեղել: Իմ բարեկամության հոգեբանական աղբյուրը հետևյալ դեպքն եր: 67 թվականի ամառը Մանդինյանցը մի քանի շաբաթ վարեց «Մեղու»-ի խմբագրությունը և այդ ժամանակ դրեց նա մի քննադատություն իմ «Աբրոլթյուն և Մանվել» վեպի մասին, վոր նոր եր դուրս յեկել: Կարելի բան և արդյոք, վոր մի նոր դրող չսիրե իր այն կրիտիկոսին, վոր նրան մի նոր յերևույթ և համարում, տաղանդավոր անվանում և այնքան հափշտակվում, վոր բոլոր վիպագրողներից բարձր և դասում, թեկուզ այդ բոլորը մի ուրիշ կաբինետով՝ չափազանցություն լինի և ասա: Բայց այդ ժամանակ մեր Մանդինյանցը սուտ ասել չեր կարող, ստության արվեստը դեռ չեր սովորել: Նա մեր տաղանդավոր ու աշխույժ դերասաններից մեկն եր, իր ուսումը կարծեմ Լազարյան ճեմարանումը ավարտած: Այս հոդվածը յես կարդացի դեռ Պետերբուրգումը և լինճ ու լինճ ասացի. «Այս ի՞նչ լավ տղա յե յեղել Մանդինյանցը, ի՞նչ լավ և հասկացել կոկել կենդանի դրողին մեռածից, բնականը՝ կեղծից»: Նույն տարվա վերջին յես յեկա Թիֆլիս, հետո անձամբ ծանոթացա, նվիրեա յեղա իր խաղերին և չատ հավանեցի: Այսպիսով ահա մենք բարեկամացանք, յես դարձա նրա միակ տաղանդավոր վիպասանը, իսկ նա իմ միակ տաղանդավոր դերասանը և կրիտիկոսը:

Վերջը նա գնաց Պետերբուրգ, վոր մի քիչ լրագրաբանություն սովորի և մանավանդ փաստաբանի իրավունք ձեռք բերե: Այդտեղ ընկավ հայ ուսանողների չրջանը, վարակվեց նրանց ձգտումով, վոր եր ծառայել ազգային դաստիարակության, ինքն էլ արդեն վարժապետություն արած եր Ներսիսյան դպրոցում, թեև չեր ղգացել, վոր այդ պաշտոնի կոչումը չունի. վերջապես, ոգուտ քաղելով Սանասարյանի ձեռնտվությունից, գնաց Գերմանիա մանկավարժություն սովորելու, այն պայմանով տակաին, վոր իր ծառայությունն իր բերեարի ապագա նպատակներին նվիրե: Այս բոլորի մասին նա

պրոսմ եր թե ինձ և թե Գեորգ Զմշկյանին. յերեքս էլ սերտ բարեկամ էյինք իրար հետ:

Վերջը յերբ վոր վերադարձավ Գերմանիայից արդեն մանկավարժ դարձած, գերմանական փիլիսոփայի դիրք ու վոճ հագած, արտաքին ձևերը փոխած, այսուամենայնիվ ինձ հետ սերտ բարեկամ մնաց, և վորովհետև այդ ժամանակ յես էլ արդեն ուսուցչության առպարեզումն էյի, նա հետամուտ եր լինում իմ գործունեությանը, մանավանդ դրավորին, և ամեն պատահած ժամանակ՝ դուխտանք եր դրում իմ մասին, ասելով, յեթե կա մեղանում մանուկների սիրտն ու լեզուն լավ հասկացող՝ այդ Ազատանցն է միայն: Ցես էլ մտքումս ասում էյի. «Սա վոր այսքանը հասկանում է, պետք է վոր լավ մանկավարժ լինի»: Սրա համար էլ յերբ վոր մի բան էյի դրում մանկավարժական, ասում. էյի մոռը կարդում, խորհուրդ հարցնում և միշտ էլ միայն հավանություն էյի ստանում:

Այստեղ ի դեպ ասեմ, վոր հետո, յերբ Բահաթրյանցը յեկավ և այս յերկուսի մեջ գժտություն ընկավ, այդ ժամանակ ինձ համար պարզվեցին յերկուսի էլ թերի կողմերը: Բահաթրյանցը ինձ շատ մտաբեցավ և առաջարկեց, վոր միացյալ ուժով դատապրքեր կազմենք: Ցես համաձայնեցի և սկսեցի նյութեր պատրաստել, բայց յերբ ուղեցանք իմ ու նրա նյութերը միացնել, այստեղ մենք չհաշտվեցանք իրար հետ և՛ ամբողջ ծրագրի վերաբերմամբ և սկզբնական ուսուցման:— Չե՛,— ասացի—, լավն այն է, վոր դու քու եչը քչես, յես իմը, յես չեմ կարող յերեխային ասել. «այս խաղն ո՞ւն է, այս՝ հավի հօն»: Սրա համար խոսք տվինք իրար նյութից ոգուտ չքաղել. նա իր տպածի վրա ավելացրեց. «արտատպությունը արգելված է». յես էլ իմի վրա նույնը ավելցրի: Վոչ վոք չհմացավ թե այդ ինչ եր նշանակում: Մանդինյանցը քննադատեց յերկուսին էլ, իմը գովեց, իսկ Բահաթրյանցինը պախարակեց, բայց Բահաթրյանցն էլ նրան վողողեց:

Մանդինյանցն իր մանկավարժական գործունեությունն սկսեց մի չատ սխալ քայլով: Նա իր բարեբարի հետ ունեցած պայմանը մերժեց, ուխտադրից յեղավ և մինչև անգամ նրա տպագրած գործունեության վրա մի սև տավիղ ձգեց: Սրա համար Սահատարյանցն էլ նրան աչքից ձգեց, յերեսը տեսնել չուզեց:

Ինձ համար այս խնդիրը մութն եր, և յես հակված էյի ա-

ղելի Մանդինյանցին արդարացնել, չենթադրելով՝ վոր իմ սխրած մարդու վրա կարող է վրդև բիծ լինել: Ցեվ հենց սրա համար էլ, յերբ դուրս յեկավ Ներսիսյան դպրանոցից, գնաց Վան և վերադարձավ հուսահատված, մնաց առանց պաշտոնի, ընկավ պարտքի տակ, թշվառացավ: Այդ ժամանակ յես խնդրեցի հոգաբարձությանը, վոր Մանդինյանցին հրավիրեն: Խնդիրս չմերժեցին, և Մանդինյանցը յեկավ Շուշի և ինձ մոտ մնաց, մինչև ընտանիքի դալը: Շատ եր փոխվել Սեդրակս և ընկճվել: Իրրև բարեկամ, սփոփեցի և մխիթարեցի իրան և ամենայն ջանք գործ դրի, վոր քաշաքի մեջ անուն և հեղինակություն առնա, բայց գուր յեղավ իմ ջանքը: Դեռ նոր յեկած, այստեղ կրկնեց իր գաղափարությունը, վոր արել եր Թիֆլիսումը իր կատարած ճանապարհորդության մասին: Ունկնդիրները հիասթափվեցին և վոմանք էլ ասացին ինձ.

— Պարոն Ազատանց, թե վոր բերած մարդիդ չնորհքն այս է, ուրեմն դու հենց մեզ զարհարագրու տեղ ես դրել, կարծում ես թե մենք լավն ու վատը չենք իմանալ...

— Դուք սխալվում եք,— ասացի,— այս մարդը ժողովրդի կյանքին անծանոթ լինելով՝ տեսածովը զարմացել է: Յեթե իմանար, վոր այդ կյանքը ձեզ ավելի յե ծանոթ, էլ չեր գաղափոխել: Բայց սրան ձեզ գաղափոխելու համար հոմ չենք բերել: Սա մանկավարժ է և վոչ թե հատարակ վարժապետ, դիտե՞ք ինչ է մանկավարժությունը, այդպես բան մեր վոչ մի դպրոցում չկա. մենք դեռ չունենք մանկավարժներ, այս մի հատն է վոր կա:

— Շատ լավ, ասել կմնանք, նվ էլ կտեսնենք, բայց դրանից խելի մեր խելքը բան չի կտրում...

Ուղիղն ասած՝ իմ խելքն էլ բան չեր կտրում, իմ նպատակը եր վոր մեկ յես էլ տեսնեմ, թե ինչ բան է արդյոք Մանդինյանցի ձեռքով ավանդված հերբարտական մանկավարժությունը:

Բարձր գաղափարը, ուր բավական խոշոր տպավ կային, հատկացրինք այդ նոր վարդապետությանը: Տղայքը պիտի և՛ սովորեին և՛ սովորեցնեին: Շինել եր և մի նոր այբբենարան, իր ասելով՝ Ոթոյի մեթոդով, վորով պիտի դրել կարդալ սովորեցնեին մանուկներին: Ցես իմ այբբենարանը հանեցի, վոր աչքովս տեսնեմ Ոթոյի տված արդյունքը: Ներկա էյի լինում թե իր դասախոսությանը և թե աշակերտների և տեսնում էյի,

վոր մարսված բան չե վոչ մեկը և վոչ մյուսը։ Ձերը ինքն եր դասախոսում, դիրքն առնում եր պնում, մի քառորդ ժամ յերեսին նայում լուռ ու մունջ, իսկ այդ ժամանակ աշակերտները հրանչում եյին և սպասում, թե ինչ պետք ե ասի, և յերբ վոր թարգմանում եր կարդացածը կամ յես պատմում իր խոսքերով, աշակերտները դրում եյին բառացի, և հետո բերան անում մի անմիտ բառաշարուքյուն։ Իսկ դործնական դասերը յերբ վոր վերջանում եյին, ցույց եյին տալիս ամանդած դասն լավ ու վատ կողմերը և արձանագրում։ Բայց սրանով մանուկների վերքը չեր սաղանում. նրանք ապուշ ապուշ նայում եյին, չդիտեյին, թե ի՞նչ են ուզում իրանցից, ի՞նչ են ուզում հասկացած լինել։

Ձես իմ ապավորուքյունը չեյի թաքցնում Սեդրակից և առանձին ասում եյի իրան, վոր ձեռք վերցնե իր Ոթաոյից, վոր նրանից բան չի դուրս դալ, բայց նա միտյանակ համոզվելու, ինքն եր աշխատում ինձ համոզել, վոր յես չշտապեմ, վոր տարվա վերջին արդյունքը հրապարակի կլինի։ Հասանք տարվա վերջին և արդյունքը յեղավ վոչ թե ղերո, ինչպես յես եյի կարծում, այլ մինուս. յերեքը սովորել եյին աստ կարդալ և աստ դրել, որինակ՝ դրում եյին վորևե տառի պես մի բան և կարդում վորևե բառ. դրում եյին ամ և կարդում ննդղուկ...

Մանդինյանցն ինքն իր աչքով տեսնելով իր ամած բացասական արդյունքը, վոր նույն իսկ խալֆաները չեն անում, եյի պնդում եր, թե այդ և միակ ուղիղ ճանապարհը։

— Վոչ,— ասացի,— այդ ճանապարհը վոչ դու դիտես և վոչ ես Ոթաոն։ Մյուս տարին յես կսկսեմ, և դու կտեսնես, թե այդ մինուսն յերեխեքը ինչպես են թե առած թռչում։

Այս խոսքի վրա Մանդինյանցը աչքերը չռեց վրաս։— Ի՞նչ ե,— ասաց,— քո միտքը, ուզում ես իմ հեղինակությունը վա՞յր դցել։

— Դու՛ հեղինակություն չունես,— ասացի,— վոր վայր դցեմ, քո հեղինակը Ոթաոն ե։ Մեկ ինձ ել տես, դուցե ինձ ավելի յես հավանում քան թե Ոթաոյին։

— Ձես քեզ հավանում եմ, բայց վոչ քո հեղինակությունը։ Դու ամեն մեթոդով ել կարող ես արդյունք ցույց տալ, նույն իսկ Ոթաոյի մեթոդով ել, բայց Ոթաոն ի՞նչ մեղավոր ե, վոր դաս տվողներն անչնորհք լինեն։

—Եթե այդպես ե, ուրեմն ամեն մեթոդ միևնույն ե, ել ի՞նչ

հարկ կա Ոթաոյի պոչից բռնել։ Բայց դու չատ ես սխալվում։ Տուր ինձ միևնույն խամ ուսուցիչները, և յես նրանցով ցույց տամ, թե ինչ առավելություն ունի իմ սովրեցնելու յեղանակը։

— Ձես համաձայն չեմ։

— Դու համաձայն չես, յես ել չեմ համաձայն։ Ձես կառաջարկեմ մրցություն, յեկող տարի նախակրթարաններից մեկը դու վերցրու, մյուսը յես։

— Ո՛... այդ խոմ առավել վատ...

— Լավ ե թե վատ, բայց այլևս վոչ մի զիջողություն չեմ անիլ քեզ։

Այս ժամից սկսած՝ իմ ամեն բանը Մանդինյանցի աչքումը ծուռ եկավ։ Ձես կարծում եյի, թե ինչպես յես եմ վերաբերվում դեպի ինքը, նույն վերաբերությունը կունենա և ինքը դեպի ինձ. բայց տեսա, վոր սա իր փիլիսոփայությունը փոխել ե, ուզում ե, վոր ամեն վոք իրան ծառայե, իսկ ինքը՝ վոչ վոքի։ Մյուս որը կարդացի իմ «Անահիտ»-ը, վոր նոր եյի դրել, վոր տեսնեմ ինչ կարծիք կհայտնե իմ նախկին կրիտիկոսը, և նա հայտնեց իր կարծիքը.

— Շատ հիմար բան ես դրել,— ասաց,— խորհուրդ չեմ տալ, վոր տպես։

— Դեռ այդպես հիմար բան չեյիր ասած քո որումը,— պատասխանեցի յես,— ինչպես յերևում ե խելքդ կորցրել ես... և սկսեցինք կռվել, խոսքով ե հարկե։

Մանդինյանցը կողմնակի դրդումներով մինք հղացավ իջնել ինձ վրա կամ դուրս մղել։ Մտքումը դրավ, վոր ուսուցչական խումբն արձակե և նոր ընտրություն անե։ Այս առաջարկությունն արավ հոդաբարձությանը։ Հոդաբարձությունը պատասխանել եր, թե չատ լավ, այդ բանը կարող ենք անել, միայն մեկ պայմանով. նախ՝ Աղայանցին չպետք ե մյուսների հետ ազատ համարեք, և յերկրորդ՝ ընտրությունը պետք ե անեք միասին։ Սրա վրա Մանդինյանցը առ յերես համաձայնում ե, բայց սիրտը դաղվում ե, տեսնելով՝ վոր իմ դիրքն ավելի ամուր ե, քան թե իրանը։

Ձերը վարժապետներին ազատություն եր տվել արդեն և չատերն ել կարծում եյին, թե իմ խորհրդով ե յեղել, հանկարծ նամակ ստացավ Արշակ Նահապետյանից, վոր նրան թիֆլիս եր հրավիրում։ Այս բանը չմտցրեց ինձանից, բայց բավանդակությունը չասաց։ Ձես ասացի.— Սեդրակ, Արշակը քեզ հրավիրում ե, վոր տանե ընկճածին, ուզում ե ոգովել քո տխո-

դոսից, բայց լավ կանես, վոր պայմանազանց չլինես ու չերթաս, մանավանդ վոր վարժապետներին էլ արձակել ես, իմ պործը չատ սիսկի դժվարանա:

— Չե՛,— ասաց,— այդպես բան չկա, դու միամիտ յեղիր, յես կերթամ ու ելի կդամ չուտով:

Սեդրակս դնաց ու դնաց: Այս այն ժամանակին եր, յերբ մեր մանկավարժները մի արդունավորղնելի արշավանք էին սկսեցին դնալ եջմիածին վոսկեղեմն ձեռք բերելու համար, և ձեռք բերին՝ վորը հինդ և վորը չորս հազար մանեթ տարեկան: Ցեվ ի՞նչ չլինելին այդ աստսպելական վարձատացության վոխարեն—ամենևին վոչինչ, այլ միայն չահախնդրության ձգտումն սիրեցին ամենայն տեղ և սեվ քար ձղնցին աստաքելական կոչումն ունեցող իդեալիստ ուսուցիչների վրա, մի սեվ քող՝ բոլոր դպրոցների վրա, վորոնց տարեկան ծախքի հաշիվը յոթ հազարից չեր անցնում, վորում սիսկի պահվելին 15–20 ուսուցիչներ: Մայր դպրոցի և նրա ճյուղերի մեջ յեղած նյութական հավասարակշռության կործանումն յեղավ: Մանղինյանը լավ իմանալով, վոր վոչ վոք ինձ պես չի թափանցել նրա հոգու և մտքի մեջ, վոչ վոք ինձ պես չի ուսումնասիրել նրան; ինձ համարեց իր միակ վտանգավոր թշնամին, և այնքան կուրացավ այդ սիսկից, վոր մի չբջարերականով արդելեց իմ դասապրքերի դործածությունը աղգային դպրոցների մեջ, արդելեց իմ աննգաստ կերակուրը, վոր հարկադրվելին իր ովածը ուտել: Սրանից հետո՝ ել ինչ ասել կուդի, վոր նրա անունը խոպան ընկնեցի իմ բարեկամների ցուցակից և դասեցի ընդ չարս և ուրացողս...

Հայր Սեդրակյանը Ղարաբաղից դնաց եջմիածին, վոր նորանոր արտոնություններ ձեռք բերե իր դործունեյությունն ավելի ևս ընդարձակելու համար, բայց նրան այլևս յետ չդարձրին, այլ յեպիսկոպոս ձեռնադրելով՝ ուղարկեցին Թիֆլիս առաջնորդության: Վերջին յերկու տարին յես դուրկ մնալով Սեդրակյանի պես մի լուրջ, դործունյա և բարձր պաշտպանից, չափից դուրս շատ նեղություններ քաշեցի: Նրանից հետո յեկավ կարապետ վարդապետ Այվազյանը: Այս անձի վրա ավելացավ և բուն իսկ առաջնորդ Անդրեաս յեպիսկոպոսը և յերկուքը միասին իրանց չնորհքները միացնելով՝ միմյանց արժանավորություն յուրային միմյանց պահատուբյամբ, վոր կատարվի այն ասածը թե՝ «Ցաթոռն Մովսիսի նստան պսիրքն»: Դպրանոցի

յեկամուտը, վոր Սեդրակյանը հասցրել եր մինչև տասնյոթը հազարի, իրանից հետո այդ քանակությունը իջավ հինդ հազարի, վոր ասել է 18 ուսուցիչ մի վասին պետք է տաճայինն այնքան, ինչքան ճեմարանում ստանում եր մի հոդի, թեև չատ սև:

Ցեկամուտի աղբյուրները կրկին բաց անելու համար՝ վերջին տարին յես հանձն առա տեսչական պաշտոն, վորովհետև այլևս տեսչապետություն անել չեյի կարող՝ դրկված լինելով բարձր պաշտպանությունից, բայց մարդիկ չուտ դլխի ընկան, վոր իրանց հացը պիտի կտրվի, աշխատեցին բանն այնպես լեցնել, վոր իրանց հացը պիտի կտրվի, աշխատեցին բանն այնպես լեցնել, վոր յես բարկանամ և հրաժարվիմ: Ցես ել բարկացա և դնել, վոր յես բարկանամ և հրաժարվիմ: Ցես ել բարկացա և հրաժարական տվի, թողելով՝ վոր մեռելները թաղեն իրանց մեռելներին:

Հետանալիս միտս ընկավ այն, ինչ վոր լսել եյի Վեհափառ տյան Գեվորդ յեպիսկոպոսի մասին: Այդ մարդը, վոր ահագին ջանք եր դործ դրել և բաղդասար միտրապոլիտից հետո կորած կալվածները կրկին ձեռք բերել, վերջը դառն ապերախտության հանդիպելով՝ հեռացել եր և հետանալիս յետ չեր մտիկ տվել, ասելով՝ «Ախտ՛ս են աչքերս»... Մեր բոլոր քաղաքների մեջ չկա վոչ մեկը, վոր Շուշու չափ ապերախտ լինի, չնորհիվ նրա մթության և տականքի, վոր զուրկ լինելով վոդուց, զուրկ և սրտից և խղճից: Շատ անդամ ասում եյին ինձ դրսից յեկողները. «Դուրսը մենք չատ առատաձեռն ենք և լավ. վերադառնալիս կառապաններին ամեն մի իջևանում քսան և յերեսուն կոպեկ ենք ընծայում, բայց հենց վոր հասնում ենք Ակյարան, մեր Ղալի ստորոտը, այդտեղ մեր ձեռքը չորանում է, ել տասը կոպեկից ավելի չենք տալիս»: Ուրեմն հենց վոր իրանց քաղաքը յերևում է, չորանում են, իսկ քաղաք մտնելուն պես՝ քարանում: Այս յեկողները պարմանում եյին իմ տոկունության վրա և ասում եյին. «Դեռ քեզ չափ վոչ վոք չէ դիմացել մեր քաղաքում. Շանչյանցի պես մարդուն, վոր այնքան յերախտիք ցույց տվավ մեր ուսումնարանին, այնքան արտոնություն ձեռք բերեց, մենք նրա ուսուցիչներին ծեծեցինք, իրան ել դուրս արինք, բայց դու վոր այդքան չարչարվում և դիմանում ես, յերևի նրանից ես, վոր մեզանից ես, դիտես մեր բնությունը, մեր լեզուն, մեզ հետ վարվելու յեղանակը»: Այո՛, դիտեյի, բայց դաղձյալ հեռացա՝ առանց յետ մտիկ տալու Ղովտի նման, վոր չուչեցոց պես չքարանամ...

XI

Ղարաբաղից վերադարձա Թիֆլիս այնպես ջարդված և հոգնած, որ մտածեցի խոպան հեռանալ ուժուշչական ասպարեզից և քաշվել գյուղ: Բայց բանն այնպես չկիավ, որ կես վրկան մի մութ գյուղ ընկնելու, ընկա մի բանաստեղծական աշխարհ, մի յերկնային դրախտ, ուր ինձ վայելում եյին անմեղ հրեշտակները և ղլուխս զարդարում անթառամ ծաղիկներով: Այդ յերանելյաց աշխարհը տիկին Սոֆիա Բարայանցի մանկական դրախտն եր:

— Դու շատ ես հոգնած,— ասաց Ավետիքս,— քեզ հարկավոր է հանգստանալ. և յես կհանգստացնեմ քեզ: Սոֆիային հարկավոր ես դու, որ ազգային-ժողովրդական տարր մտցնես նրա պարտկղի մեջ, ազգային ծաղիկներ բուսցնես: Նրա մոտ դու բոլորովին ազատ կլինես թե՛ նյութապես և թե՛ բարոյապես...

Զարմանալի առաղի տակ եմ ծնված յես: Ինձ պես մարդը կամա-ակամա կենթարկվի մխսիթեզմի: Ասենք այդ ցավը յես միշտ էլ ունեցել եմ, թեև ուշ չեմ դարձրել շատ անգամ և ազատ եմ համարել ինձ ամեն տեսակ նախապաշարմունքից: Դու լավություն արա Մարկոսին, յեթե նա չիմանա՝ Մարտիրոսը կիմանա և կվարձատրե քեզ: Թող մեկ քաղաքում քեզ հալածեն քո արած բարության համար, մի ուրիշ քաղաք քեզ կհասկանա և կընդունի: Այս խակ եր մեր վրկվի էլ տալը իր աշակերտներին՝ թե չեք հատեցնիլ Իսրայելի քաղաքները— յերբ մեկում կհալածեն, դնացեք մյուսը: Այս կողմանե, ինչքան էլ դանգատվիմ, ինձ պես բախտավոր մարդ քիչ եմ տեսել, բախտավոր՝ վոչ թե նյութական հարստության ձեռք բերելում, այլ բարոյական ու մտավոր:

Ընկա մանկական պարտեզ, ուր յերեխեքը անմեղ հրեշտակների եյին նման, ուրախ, զվարթ, ինչպես անհոգ թռչնիկները, վորոնք անընդհատ վոստոստում, թռչկոտում և յերգում եյին իրանց մայրիկի՝ Սոֆիայի չորս կողմում, և յես չդիտեյի, թե վորի՞ց եմ ավելի հիացած, կրթողի՞ց, թե կրթվողներից,— այնքա՞ն բնական եր, այնքա՞ն սիրալիր դրանց բարոյական և մտավոր աճումն ու զարդացումը:

Իմ պարապմունքն այդտեղ որական յերկու ժամ եր, պետք է դրպիտություն սովրեցնելի: Առաջին դասից հետո՝ նախաճաշիկս պատրաստ եր լինում, յերկրորդից հետո՝ ազատ եյի,

բայց շատ անգամ մնում եյի յերեխանց մոտ, վոր ուսումնասիրեմ նրանց պարապմունքները: Այստեղ ահա, ըստ ամենայնի առողջապես չրջանում կազդուրվեցի յես թե հոգեպես և թե ֆիզիքապես, և ազատ ժամերս նվիրեցի մանկական դրականության, մանկական բանաստեղծության:

Գրում եյի մանկական յերգեր և տալիս տիկին Սոֆիային, վոր այնպես եր ուրախանում, ինչպես մի նոր պյուտ արած: Ինձանից ծածուկ եր սովորեցնում յերեխաներին և պատվիրում եր, վոր ինձ չասեն մինչև լավ չպատրաստվին: Յերբ վոր լավ պատրաստված եյին լինում, հավաքվում եյին դահլիճում դաշնամուրի մոտ, հրավիրում եյին ինձ, բայց չեյին կարողանում համբերել մինչև սկսելը, իրար գլխով եյին անցնում, ծափահարում և հատկացնել ուզում, վոր մի անակնկալ ընծա պիտի անեն ինձ: Սկսվում եր մի ներկայացումն, դուրս եր գալիս մի հրաշալի պատկեր, և յես չեյի հավատում, վոր այդ պատկերն իմ նկարածն է, այնքա՞ն զեղեցկացրած եր լինում տիկինը և կենդանացրած: Այսրվանից հետո ահա յես դիմովին նվիրվեցի մանկական դրականության, վորոնք տպագրվեցին «Աղբյուր»-ում մի քանի տարի չարունակ: Այդ ժամանակ կազմեցի յես իմ «Ուսումն մայրենի լեզվի» յերկրորդ և յերրորդ դասագրքերը:

Մանկական պարտեզում մնացի յես մի դպրոցական տարի և դուրս բերի մի անջնջելի խորին յերախտագիտական զգացմունք առ հառնստատիայլ տիկին Սոֆիա Բարայանց:

Յես դեռ մանկական պարտեզում եյի, վոր Սեդրակյան արքեպանը յկիավ Թիֆլիս իբրև Թեմի առաջնորդ: Հենց նույն ամառն էլ նա ինձ հրավիրեց հանձն առնել Թեմական տեսչի պաշտոն, թեև նույն ամառվա առաջին պահը իմ նախորդն սատնար, իսկ յես վոչինչ: Այս պաշտոնը յես չեյի կարող մերժել հեղամտությամբ, վորովհետև առաջարկողը պիտեր, թե ում և առաջարկում: Նա ինձ փորձել եր գործի և պաշտոնի մեջ. շատ լավ եր ճանաչում. կարիք չկար վոր մի ուրիշն առաջարկեր, կամ յես խնդրեյի: Սրանով նա ուզեց Ղարաբաղում իմ կրած տանջանքի փոխարինը վարձատրել և նույն խակ արդյունք տեսնել:

Իբրև Թեմական տեսուչ՝ յես մի իշխանավոր չեյի վարժապետների համար, այլ իբրև ուսուցիչ և ընկեր ուսուցչի: Ամեն

տեղ՝ ուր վոր գնում եյի, ուսուցիչ և ուսանող միակերպ ուրախանում եյին: Շատ տեղ իրանք վարժապետներն ու վարժուհիները եյին խնդրում, վոր մի քանի որ մնամ, վորպեսզի դասեր տամ թե աշակերտներին և թե իրանց, և յես կատարում եյի ամենայն ուրախությամբ: Առանձին ուշադրություն եյի դարձնում ծաղկոցների վրա, մանավանդ վրացախոս տեղերում, և գործս գնում եր շատ հաջող և դեղեցիկ: Բայց հանկարծ մի տխուր վարագույր քաշվեց այդ բոլորի վրա և յես քաշվեցի իմ հայրենի գյուղը, վոր այնտեղ վողբամ թե ընդհանուր և թե մասնավոր աղետներիս վրա:

Մեռավ Վիգենս, մի հատիկ արու զավակս, ծաղիկ հասակում. նրան հետևեց մայրը, թողնելով յերեք մատղաշ զավակներս վորբ և զուրկ մայրական խնամքից: Այս հանկարծական հարվածները լինճ ձղեցին մի տարորինակ հոգեմաշության մեջ: Ցես գառա մի վոչինչ և ամենայն ինչ աչքումս վոչնչացավ: Մի ամբողջ տարի ձեռքս գրիչ չբռնեց, մի հատարակ նամակ անգամ չկարողացա գրել: Թուլանալով հոգեպես, թուլացա և ֆիզիքապես: Տեսնելով, վոր եվ վոչ մի բանի պետք չեմ, մտածեցի մի վանք քաշվել և այնտեղ մշնացնել իմ վերջին. տխուր որերը: Այս մասին մի խնդիր տվի, բայց խնդիրս մերժեցին՝ լինճ համարելով հակառակ կուսակցության մարդ: Գրեցի և Սուքիաս արքազանին, վոր լինճ իր մոտ տանե, վոր յես կուվելու, վորևե կուսակցության պատկանելու սիրտ չունեմ այլևս, բայց ոսո պատասխանելու անգամ արժան չհամարեց: Գրեցի ուրիշներին եվ, բայց բոլորն եվ զուր անցավ. ասուված չկամեցավ:

Շատ անգամ ե պատահել, վոր յես ուզեցել եմ մի անխոթհուրդ և անմիտ բան բռնել, մի հիմարություն անել, բայց ասուված ազատել ե լինճ այդ վորճաքնից: Սիրող սրտի համար սիրազուրկ լինելը մի վորոնելի կորուստ ե: Հառաջացած վընաստահարությունը վոչ այլ ինչ ե, յեթե վոչ սիրո վորոնումն: Այդ ցավն առողջանալ կարող ե միմիայն դարձյալ սիրով: Ցեվ վորքան անճնատուր եյի լինում տխրության, այնքան սաստկանում եր վիշտս, քնհատությունն եր գալիս վրաս և սրտի թրթռոց: Պատահում եյին և խստերիքական այլ յերևույթներ, և յես յերկյուղ եյի կրում խելացնոր լինելուց: Մտածեցի, վոր լավ բան չե արածս, զավակներս կարող են մնալ խնպատ անխնամ: Մեկ լավ ձի առա և սկսեցի պտտվել ամեն կողմ, քեֆի ու զվարճության յետևից ընկա, և յերբ զգացի դրա լավ հետևանքը, սկսեցի չարունակել այդ կյանքը: Ցես առողջացա, վրաս

յեկավ կորցրած ֆիզիքական ուժս: Ինճ պակասում եր միայն մի սիրող սիրտ, նրան եվ աստված հասցրեց: Ցես նորոգվեցի հոգվով և մարմնով, և սրա արդյունքն յեղավ իմ «Արեգնազան»-ը, «Տորգ»-ը և սրանց հաջորդող գրածները: Լուսինը դուրս յեկավ կրկին ամպի տակից, չնեղն սկսեցին լուսնահաչ տալ.

«Բայց լուսինը բակ բոլորած՝ չարունակում եր իր ճանապան,
«Համարելով թե չի լսում, վոր իր վրա հաչողներ կան»...

1893

ՄԻ ՅԵՐԵՍ ՄԵՐ ՆՈՐԱՏՈՒՅՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

(Իմ հիշատակարանից)

...

Ընկվեց սարկությունն ամբողջ Ռուսաստանում:

Գրականության յերեսին քաշած խավար վարագույրը յետ քաշվեց, և մարդիկ սկսեցին նրա մեջ տեսնել իրանց թշվառությունը, տվլուությունը, մեկ խոսքով իրանց սեփական պատկերը բոլոր այլանդակ գծերով:

Ինչպես մի զաժան ձմրան հաջորդե մի զեղեցիկ գարուն, և ամենայն ինչ սկսե արագ արագ աճիլ ու զարդանալ, այսպիսի մի փոփոխություն յեղավ ահագին պետության մեջ:

Սակավ սարուկները չկային և հայերից, վորոնք վրացոց հետ խառն կենում եյին Վրաստանի զանազան խորշերում, թեև վոչ վոք մեզանից հետաքրքիր չեղավ իմանալու, թե վորչափ եր նրանց թիվը և վորպիսի վիճակում եյին գտնվում:

Կարևկցության վողին վերառավ և այն տեղից, ուր թշվառությունն ընդհանուր և լինում: Այդպիսի դեպքերում բանական մարդիկը յերկու գասակարգի եյին բաժանվում— զաղաններվ և անասուններվ, ճնշողներվ և ճնշվածներվ: Տիրապետող վողին լինում է Յերկյուղը: ճնշողը յերկյուղից՝ սոսկված՝ միշտ ճընշած և պահում, ճնշվածը զարձյալ յերկյուղից սոսկված՝ միշտ ճնշված և մնում...

Սարսափելի՛ վիճակ... Վորքա՜ն քամնելի տեսարաններ կան սարկական կյանքի մեջ:

Յեթե քաղաքակրթության ազատ մի ազգի մեջ ժողովուրդը կարող է սարուկ լինել, մարդ կարող է իր զլխի տերը չլինել, հայրը կարող է իր վորդու տերը չլինել, մարդն իր կնոջ, մայրն իր աղջկա, հովիվն իր վոչխարի, յերկրագործն իր արտի ու ամբարի, ի՞նչ կլինի ուրեմն և այն ազգի վիճակը, վոր վոչ թե սարուկ, այլ զերի յե համարվում մի այլակրոն և այլացեղ ազգի ձեռքի տակ, մի ազգի, վոր վոչ միայն քրիստոնեչին է ասում, այլ նույն իսկ Քրիստոսին էլ:

Սարկությունը թեև մարմնու վրա յեր տարածվում և այն

էլ ժողովրդի մի մասի վրա, բայց նրա վոգին, սարկության վոգին տարածվում եր առանց բացառության ամենքի վրա, և այդ սարկության վոգին, իբրև մի ժառանգական ցավ, դեռ չարունակում է զոյություն ունենալ:

Սարկության վոգին իշխում եր ընտանիքի մեջ: Ընտանիքի հայրը տարուկ լինելով մի բանավորի ձեռքում, ինքն էլ հանդիսանում եր իբրև մի բանավոր ընտանիքի մեջ, կինը և զավակները ընտանիքի հոր տարուկներն եյին: Միևնույն վոգին տարածվում եր և տարբաղդյալ տարուկների մեջ, ամեն վոք՝ մեծի տարուկն եր, ամեն թուլլ՝ զորեղի տարուկն եր, թեկուզ այդ տարբերությունը լիներ միևնույն ընտանիքի անդամների մեջ: Այսպես ահա սարկության վոգին իշխում եր ընկերության մեջ, հասարակության մեջ, զրականության մեջ, մտածմունքի և խոսքի մեջ, վարք ու բարքի և նիստ ու կացի մեջ, մեկ խոսքով տարածված եր բոլոր զասակարգերի և անհատների վրա, ամեն տեղ և հատկի վրա:

Հասարակական կյանքը նման և մի սրդանիզմի, մի ամբողջ կազմվածքի. յեթե սրդանիզմի մի անդամը ցավագար և, նա իր ցավը պիտի տարածե և մյուս անդամների վրա, վորովհետև նրանց հետ կապված և այլ և այլ ջղերով և նյարդերով:

Հայերը կովկասում միևնույն պետության մի վոգրիկ մասը կազմելով բնական և պատմական որենքներով պիտի քարշ զային իրանցից մեծ մարմնի չուրջը և նրա անմիջական ազդեցության տակը զտնվեյին: Յեվ այդպես եր հենց: Լույս ծագեց մեծ պետության մեջ, այդ լուսով լուսավորվեցին և հայերը, թեև այս բանը զգալի չեղավ այն անձինքների համար, վորոնք պետք եր զգային և բարեհաջող հանգամանքից ոգուտ քաղեյին զիտակցորեն:

Այս բարեփոխությունը, վոր այժմ համարյա մոռացված է, մի մեծ դաս եր, պատմական մեծ դաս, վոր ժամանակը կարգաց մեր աչքի առջև: Այս դասը պետք և սերտե ամեն վոք, պետք և ուսումնասիրե ամեն մի հայ, մանավանդ նրանք, վորոնք ձգտում ունեն Տաճկահայաստանում լուսավորություն տարածելու: Թո՛ղ ամեն վոք հարցնե ինքն իրան, թե հնարավո՞ր և արդյոք զժոխքի մեջ յեղեմական տունկեր բացնել, հնարավո՞ր և արդյոք բռնակալի մեջ զութ ու խնամք գտնել ու զտնել, հնարավո՞ր և արդյոք, սարկական վիճակի մեջ զտնել քաղաքակրթության և լուսավորության հետքն ու արդյունքը: Իսկ մենք զառնանք և մի հարևանցի ակնարկ ձգենք, թե վորպիսի

փոփոխություններ յեղան մեզանում ընդհանրապես և Թիֆլիս քաղաքում՝ մասնավորապես ամենակարճ ժամանակամիջոցում, ընդամենը մի տասը–տասնհինգ տարվա մեջ։

Մեռավ Ներսեսը և նրա տեղ անցավ Մատթեոսը։ Սա թեպետ իր նախորդի սրութիւնն ու կենդանութիւնը չուներ, բայց բարեհաջող ժամանակի չնորհիվ հիշատակելի անուն թողեց։ Ժողովուրդը ժամանակի կենդանութիւն տվող վոգուց ազդված դարավոր թմրութիւնից սթափված չարժման մեջ եր ընկել։ Մատթեոսը այդ չարժման հակառակ չկացավ, այլ պաշտպան և իրախուսող հանդիսացավ։ «Ապե իմ, աչք իմ» կրկնում եր նա, և ինչ վոր ուզում եր ազգը, նա տալիս եր անխնա։ Նա իր այդ ընթացքովը չատ բան կտար ժողովրդին և թեպետ դրանով կալակատեր հոգևորների իշխանութիւնը, բայց ազգը միայն վաստակ կունենար և վոչ վնաս։ Դպրոցների կառավարութիւնը նա հանձնեց աշխարհականներին, վորոնցից հոգաբարձուները հաստատեց, ընդ աղդեցութիւնամբ տաճկահայոց սահմանադրութեան։ Վանական չատ կալվածների յեկամուտները և յեկեղեցական արդյունքներ հատկացրեց ուսումնարաններին և հոգաբարձուների հսկողութեան տակ ձգեց այդ յեկամուտները։ Այս մի մեծ վողորմութիւն եր և մի տեսակ ազատութիւն, վոր նա աղատեց յեկեղեցիքը սորկական վիճակից և հանձնեց հասարակութեանը։ Նա տվավ Ներսիսյան դպրոցին ավելի լայն ծավալ թե ուսումնական և թե տնտեսական մասին։ Այս դպրոցը, վոր նույնպես սորուկ եր մի քանի մարդոց իշխանութեան տակ ընկած, նա չինեց ազգային–ժողովրդական։ Նա մեծամեծ կալվածներ տվավ և Ղարաբաղի թեմական դպրոցին հաստատելով անմահ Շանշյանցի ծրագրած կանոնադրութիւնը։ Նրա հաստատած հոգաբարձուները բարեկարգեցին արդեն յեղած դպրոցները և ուրիշ նորանոր ուսումնարաններ բացուրին։ Նա չուներ իր նախորդի եվմիածնական նախանձոտութիւնը և վոչ իր հաջորդի տաճկական վատամոլութիւնը։ Նա մի բարի հայ և բարի քրիստոնյա յեր։ Նա լինքը չեր մտածում կամ վնտրում մի նոր բան, վորով ուղենար իր անունն անմահացնել, այլ միայն կատարող և հաստատող եր հանդիսանում ամեն մի բարի առաջարկութեան։ Ժողովուրդը գիմում եր նրան իր խնդիրքով իբրև դիտատար հոր, և նրանից բան խնդրողը դատարկ չեր վերադառնում։ Նրա որով Պոլիսը մոտեցավ Թիֆլիսին, և յերկու կողմի հայերի մտքերի փոխանակութեան համար հեչտ ճանապարհ բացվեց։ Այդ բարոյական և մտավոր կա-

պի կծիկն եր, յեթե կարելի յե այսպես ասել, Մարկոս Աղաբեդյանը իր յերիտասարդութեան վաղվանն և աչխույժ ժամանակ։ Նա վոչ այնքան իր ամատգրովը, վորքան կենդանի խոսքովը և գործունեյութեամբը նորագույն մտավոր չարժման նահապետն յեղավ։ Այդ ժամանակ Պոլսում գործող անձինքը, Սահմանադրութեան հիմնադիրները այժմյան հոսոսներից չեյին, այլ դաղափարի, դիտութեան և բնավորութեան տեր մարդիկ եյին, և կարժեր, վոր դրանց մտքերը Պոլսից ցոլանային Թիֆլիսի վրա...

Մեկը մյուսի յետևից լուս տեսան հայերեն ամսագրեր և լրագրեր, ինչպես Մասյաց Աղավնի, Հյուսիսափայլ, Ճռաքաղ, Մեղու և Կռունկ։ Հայկական թեատրը բուսավ ճնծաղիկի պես ճյունաբաց տեղերում։ Միակերպ մտածելու ձևը փոխվեցավ, մարդիկ իրավունք ղգացին իրանց սեփական կարծիքն ունենալու, վորովհետև խոսքն ազատվել եր սորկութիւնից, և սկսեցին քննադատել և դատափետել միմյանց գաղափար և հասկացողութիւն։

Նոր դյուտերից լուսանկարչութիւն, հեռագիր, վերջը նաև յերկաթուղի միմյանց յետևից դալով՝ ժողովրդի աչքերը չորս բաց անել տվին։

Կյանքի մեջ վո՛ր կողմը նայում եյիր, մի նոր փոփոխութիւն եյիր նշմարում։

Մարդկանց հարաբերութիւնն սկսեց մեղմանալ միմյանց հետ։ Ճաշակները քնքշացան, և ամենայն ինչ վոր կոպիտ եր, վերանալ սկսեց, ինչպես որինակ՝ մուչտեկովիը, դուքանների դատարքը, մեծ մեծ բուխարի դղակները, թեվքավոր կաբքը, լայն չալվարները, խարազի լսուչքը, և այլն։

Նոր ձևի և այն ել խոշոր տներ չինվեցին, նորանոր փողոցներ բացվեցին, և մի մեծ այգի ել իբրև զբոսատեղի հասարակութեան համար։ Իգական սեռը վոտքը դուրս դրավ գրավոր թագստարանից և սկսեց պտտվել հասարակաց այգիում և դլխավոր փողոցների մայթերի վրա, իբրև ազատ ոգ չնչելու համար։ Այս զբոսանքը տեղիք տվավ հագուստների փոփոխութեան, ասիականից դեպի յեվրոպականը, և տարի չքաշեց՝ սպիտակ դաթիթաքը հանկարծ վերացան նուչնիկ աղքատների վրայից։

Տները զարդարեցին յեվրոպական կահ–կարասիքով, և իրանց նիստ ու կացը այդ նոր կահավորութեանը հարմարեցրին։

Այս բոլորի հետ ներս մտավ և ծխապահութեան թուլու-

թյուն: Պատը չատ թեթևացավ և չատ տներից բոլորովին դուրս վռնդվեցավ իբրև հնուց մնացած մի տրիկական լուծ: Դրա հետ միասին վերացավ և կրոնական ջերմեռանդությունը թե աշխարհականներից և թե հոգևորականներից:

Ցերիտասարդները, համաչխարհային մոդայի հետևությամբ, սկսեցին մորուք թողնել, որով չատ վշտացրին ծերերին: Մորուքը մինչև այդ ժամանակ սուրբ ևր համարվում մեզանում, միայն հոգևոր անձինք եյին կրում և ծերունի աշխարհականներ. այդ պատկառանքի նշանը կորցրեց իր հարգը՝ բաղմելով ամեն տղայի կզակի վրա:

Սոհասարակ մի մեծ դժտություն ընկավ ծերերի և յերիտասարդների մեջ և սկսեցին հարձակվել միմյանց վրա թե խոսքով և թե գրով: Մեղուն, Զամուրջու Ցերեմյակը և Մատյոս Աղաթոնն մի ուղղությամբ պաշտպանում եյին հինն ու խոխոտը, փտածն ու անպետքը, իսկ Հյուսիսափայլը և Սմբաջյանք Մեղուն՝ նորագույնը և ոգտակարը: Հնադավանները վրդովան ավելի եյին հարձակվում Հյուսիսափայլի վրա, որքան ավելի եյին ցույց տալիս իրանց տիմարությունը, այնքան ավելի յեր բարձրանում Հյուսիսափայլի նշանակությունը նորագույն կյանքի զարգացման համար: Նրա հակառակորդների փքուն ճառամաբանությունները, մինչնաղարյան հայհոյանքները ընդհանուր լուսավորության հոսանքի առաջն ընկնելով՝ աղբի պես սրբվեցին և ընկան ցնորքների աշխարհը իրանց պաշտած դևերի նման:

«Կռունկն» եր, որ ազատ եր յերկու ծայրերից, նա միջնի ճանապարհ բռնած, «Հայոց աշխարհի իրարնակ և տարաբնակ վրդոց մեջ տարածում եր Սղոգային-բարոյական լուսավորության պահանջն ու կարիքը»: Հյուսիսափայլը ձգտում եր վերանորոգել հայերին վոտից ցլլուկ Ալեքսարանի լուսով, և սրանով եր ավելի, որ իր դեմ եր բարձրացնում բոլոր հայ հոգևորականությունը:

Կրոնական վեճերի այս թունդ ժամանակը Վարպետ լեռնիցից լիալ Ներսյանը, իբրև մի հինգերորդ դարու Մեսրոպ այցելեց Վրաստանը վոչ նոր դիր տալու նրան, այլ նոր ձայն հնչեցնելու հայերի ականջին և նոր հոգի փչելու նրանց սրտերի մեջ:

Ինչ վոր ժողովրդի համար չկար, իսկ լանսաերների համար մի ցնորք եր և հեքիաթ, հայ մարդասերի համար մի չոչափելի իրողություն եր, նա ցույց եր տալիս, վոր հայությունը մի մեծ ժառանգություն ունի ստանալու, բայց վոր չի ստանում, այդ միայն նրանից է, վոր ինքն իրան ապորինի զավակ

է համարում և վոչ որինավոր ժառանգ: Պահանջեցեք ձեր ժառանգությունը, և կստանաք. բայց սիրուն պահանջեք և վոչ խնդրեք, սիրուն պահանջեք հրով ու սրով, դի «Արքայությունն յերկնից բռնաբարվի, և բռնող հավիտյանեն ղնա»: Աստված վոր աստված է, առանց նահատակության մեզ արքայություն չի տալիս: Նույնիսկ աստուծո վորդին առանց խաչվելու չվրկեց մարդկությունը, ամենայն հայ, վոր ապորինի զավակ չի համարում իրան, պետք է իր արյունով դնե իր նախնյաց ժառանգությունը, և վո՞ր ապնիվ զավակը կփախչի իր մոր ազատելուց դարավոր դերությունից:

Հայրիկը սոսկ խրատ և հրահանգ չեր տալիս, նա առանց առակի վոչինչ չեր խոսում. նա վոչինչ չեր ասում, վորի ապացույց մի կենդանի պատկեր և որինակ չտար: Մերթ Վարդանին և Վահանին եր նկարագրում, մերթ Մուշեղին և Սմբատին: Հայոց բոլոր դյուցազունք Հայկ ու Արամից սկսած նրա քարտի կենդանի պատկերներն եյին:

Շուտով Թոնդրին նրան դեպի իր բունը՝ Վարագ, բայց նրա ցանած սերմերը Կովկասի հայերի մեջ խոր արմատ բռնեցին և ժամանակին սիրուն ծաղկեյին և պտուղ տային:

Զարմանալի բան է, իրավի, վոր մի քանի տարի առաջ առասպելական քաղաքի պես քարացած եյինք, և հանկարծ կենդանացանք. վորքա՜ն փոփոխություն, վորքա՜ն կարճ ժամանակում: Արևելյան և հյուսիսային պատերազմների պատճառով վաճառականների դործը չատ հաջող եր: Կարողություն կար ժողովրդի մեջ և նորածիլ ու անկեղծ աղդասիրություն: Հունձ չատ կար և մշակ սակավ: Կարդալու փափագ կար, բայց կարդալու վոչինչ չկար: Շատերը մի թերթ լրագիր չեյին կարողանում լցնել մարդավարի նյութով, գրողներ չկային, ուսումնատան պահելու նյութական կարողության պակասություն չկար, բայց վարժապետներն էլ կատարելի դասագրքեր չունեյին... Վորքա՜ն խեղճություն... Բայց այսուամենայնիվ առաջադիմությունը ամենայն տեղ և ամենայն բանի մեջ այնքան դդալի յեր, վոր չատերը լավ նշան չեյին համարում և վատ ապագա եյին գուշակում:

Մեղանում այսպիսի մի նախապաշարմունք կա.—յեթե մի հոդեմարդ հիվանդ, վերջին չունչն ընկած՝ հանկարծ նոր ուժ և առանում և առողջանում, այդ համարվում և վատ նշան և վտանգավոր նույն դերդաստանի համար, վորովհետև յեթե նա ազատվեց մեռնելուց, ուրեմն ուրիշները պիտի մեռնեն նրա վո-

խաբեն: Այս նախապաշարմունքին հավատացողները կարծում են, վոր մահը կարելի չե մեկի տեղ մյուսին տալ: Սա իր հիմքն ունի անչուշտ ժողովրդի նախնական կյանքումը, և այսոր էլ շատ մայրեր իրանց սիրելի վորդուն մեքենական տեսնելով, պըտտում են նրա դլխովը, վորով ուզում են նրա մահն իրանց վրա առնել: Յեթե շատ տեղ չեն պատում այլևս, բայց հին ասացվածները դեռևս չարունակում են ասել, ինչպես— ցավըդ տանեմ.— չարըդ տանեմ.— զադեդ առնեմ.— դլխովըդ պտիտ դամ... Այսպես մեր ժողովրդի մեջ կարդե դուրս լավ դեպքը, լավ պատահմունքը տխրություն և առաջ բերում և վատնդի կասկած: Յեղավ վոր մեկի արտը սովորականից բեղմնավոր յեղավ, այդ կնշանակե նրա տերը նուշն տարին պիտի մեռնի, վորովհետև լավը դլխակեր է, տիրոջ դլուխը կուտե. լավ զավակը չի ապրիլ, լավ աղջիկը փորձանքի առիթ կդառնա, լավ ձին՝ տիրոջ սպանության: «Լավ բանն աչքով կուտան»: «Լավից լավ բան չի կարելի սպասել»... Յեվ արդարև՛, այդպես է յեղել միշտ, թշվառ ժողովուրդը լավը վայելել չի կարողացել. խեղճ մարդն ինչ իրավունք ունի սիրուն կին ունենալ, գյահլան ձի, պարտքի տեղ— հարստություն, ցնցոտիների տեղ— զարդարանք... Նրա վախախը մեծ պիտի լինի, վորովհետև դլխին խլելու յեն միշտ. չոր ժամանակին էլ նա մուչտակ պիտի հագնի, վորովհետև տարվա ամեն յեղանակին էլ նրան մարտակելու յեն: Հին դլիները իրանց հպարտությով ժողովրդի սարկական վիճակն էլին ներկայացնում, հին դեմոնական տները՝ նրանց խախուտ և վտխոխական վիճակը: Ժողովրդի նկատ ու կատի և խոսք ու զրույցի մեջ ամբողջ դարերի պատմություն կա ամփոփված:

Սարկական վիճակից նոր ազատված ժողովուրդը մի կողմից ուրախ եր, մյուս կողմից տխուր. ուրախ էլին անվորձները, և տխուր՝ վորձառուները լինչպես 16-րդ հոդվածը չահելներին ուրախացնում եր, իսկ ծերերին տխրեցնում. «Այդ հոդվածը մեր ազդի աղետքը չատացնելու յե» ասում էլին ծերերը: Այսպես էլին մտածում և սարկությունից նոր ազատված ծերերը և նրանք չէլին հավատում իրանց աչքերին և վատ ապագա էլին դուշակում[1]): Իրրև մի որինակ, մեջ ենք բերում այստեղ նրանց խոսակցությունը այդ առիթով:

— Յուրի Ֆեոդրիչ, մենք ուրախանում ենք, վոր մեր ժողուրդը հսկայական վոստյաններ ե անում, բայց ինչ ես կարծում այս լավ ե, թե վատ:

— Զդիտեմ, ճշմարիտ, ինչ ասեմ: Մի հանկարծական հաստանք ե, հեղեղի պես առաջ ե գնում, կամ լինքն իրանից մի ծով կդառնա, կամ կերթա մի ուրիշ ծովի մեջ կթափվի և կանհետանա:

— Ինքն իրանից ծով դառնալու համար պետք ե հարմար տեղաշրջություն ունենա. քանի վոր այդ չկա, ավելի հավանական ե, վոր ուրիշ ծովի մեջ թափվի: Յեթե մեր վախճանն այս պիտի լինի, կես ավելի լավ կհամարեմ քրդանալ, քան լուսավորյալ յեվրոպացի դառնալ:

— Քուրդ դառնալով չես կարող ազատվել ճակատագրի բերմունքից. չկրթվողը, չլուսավորվողը, ժամանակակից լուսավորության պահանջներից վախուտա տվողը ավելի շուտ կկորչի: Սղղերի կյանքի տևողությունը նրանց կյանքի կերպիցն է կախված: Յեթե մեր ազդն ավելի կե ապրել քան թե իր ըրացիներից շատերը, նա դրա համար պարտական եր իր կյանքի կերպին, իր ողտակարությանը: Ինչպես կենդանիների մեջ պահվում, պահպանվում են միայն ողտակարները, իսկ վնասակարները հետզհետե ջնջում, ուղիղ այսպիսի մի յերևույթ ենք տեսնում և մարդկային զանազան ցեղերի վերաբերությամբ, յերբ դրանք դալիս, շփվում են իրար հետ: Յես սովորություն ունեմ ամեն մի մշեցու պատահելիս՝ կանչել, խոսեցնել, հարց ու փորձ անել իրանց կեցության մասին: Մեկ անգամ մի մշեցի լինճ մի այնպիսի բան ասաց, վոր յես կյանքումս առաջին անգամ լսեցի և վորից շատ բան սովորեցի: Ասացի, քրդերը ձեզ չա՞տ են նեղացնում: Նա պատասխանեց, թե՝ քրդերը մեզ վրա այնպես են նայում, ինչպես իրանց վոչխարների վրա. մեզ կըթում են, խուզում են, և այս պատճառով էլ մեզ համարում են իրանց համար ողտակար կենդանի և այս պատճառով էլ նրանք շատ անգամ մեզ պահպանում են, ոգնում են: Շատ անգամ է պատահել, վոր մեր առիթով քրդերի յերկու ցեղեր իրար դեմ են դուրս յեկել, կռվել և ջարդել իրար: Մի ցեղն ուզեցել է մեզ վրա հարձակում գործել և կողոպտել, մյուսը կարել է նրա առաջը և պաշտպանել, ասելով, մեզ պահողը հայերն են, մեր հացը նրանք են տալիս, յեթե նրանք չլինեն, մենք կարող ենք սովամահ լինել: Յեթե հայերի արտերը վոտնատակ տանք, խուրձերն այրենք, հետո, մենք ինչ կուտենք այնուհետև:

1 Այստեղ միտս ե գալիս մեր ուսուցչական ընդհանուր ժողովը, վոր իրավի աչքով կերան Սարուխը լավ բան ունենալու իրավունք չունի:

— Ուրեմն այդ քյուրդերը այնքան էլ հիմար և վայրենի չեն, ինչքան մենք կարծում ենք:

— Վո՞ր կենդանին չդիտե, թե իր անունդը վորտեղից է ստանում: Հայերը աննդարար ժողովուրդ են, մեղմ և հերամի հատկություն ունին: Ամենաբարբարոս աղգերն էլ, յեթե հայերին տիրել են, չեն ուրացել հայ ժողովրդի ոգտակարությունը, յեթե խմբերով դերի յեն տարել, գարձյալ նրանցից ոգտվելու համար: Բանի քանի պետություններ հայերի ոգտակարությունը ճանաչելով՝ զանազան արտոնություններ տալով՝ հրավիրել են իրանց յերկիրը: Դեռ պատահած չեմ, վոր հայ աղգը հալածված լինի մի վորևիցե յերկրում, ինչպես հալածվում է որինակ հրեան վոչ միայն քրիստոնյա աշխարհներում, այլև մահմեդական: Պատճառն այն է, վոր, հայն աշխատհաչեն, յերկրաչեն է, հողագործ է, մշակ է, արհեստավոր է: Հայն աղվ և նշանավոր աղգ, պատվական և աղնիվ աղգ, ամեն աղգերի համակրությանը և սիրուն արժանի, հայը մարդկության ամենատպատվական անդամներից մեկն է, թշնամի լինել հային, կը նշանակե թշնամի լինել մարդկությանը:

— Դուք այդպես կասք, և հարկե, իբրև աղգասեր, բայց պետք է մի քիչ էլ քննական հայացք ձգել հայի թերությունների վրա: Այսօր նա չվիժում է յեվրոպական աղգերի հետ, գերմանացու, ֆրանսիացու, անգլիացու, և մենք մեր աչքով տեսնում ենք, վոր հայն սկսում է չլանալ, դլխովին անճնատուր է լինում լուսավորյալ աղգերին, չի հասկանում, վոր լուսավորությունը աղգի համար է, և վոչ թե աղգը՝ լուսավորության. նա վոխանակ ուրիշից մի բան առնելու և ավելցնելու իրանի վրա, իրանը կորցնում է, ուրիշինը վերցնում... Ո՞րը կտանի մեզ այս ընթացքը, յեթե վոչ դարձյալ դեպի կորուստ:

— Յեթե դու այդպես ես մտածում, դրանով արդեն ապացուցանում ես, վոր այդպես մտածողներ շատ կան: Այդպես մտածող ժողովրդին վոչ մի վտանգ սպառնալ չի կարող: Այնտեղ է յերկյուղը, վորտեղ յերկյուղ չկա, այսինքն՝ մի ժողովուրդ, վոր յերկյուղ ունի, նա կարող է և դյուրս լինել: Յես ինքս էլ եմ մտածել այդ մասին և մեղ ամեն վտանգից ապատ պահելու միակ հնար դտել եմ հայ կինը, վորի վրա պետք է դարձնենք մեր բոլոր ուշադրությունը:

— Ի՞նչ կարող են անել կանայք:

— Աղգային կյանք ասածդ մայրերի ձեռին է. սերունդ կըթող և մեծացնողը նրանք են. նրանք են տան հոգին, ներդաստանի հոգին: Յեթե բոլոր մայրերը այնքան հայրենասեր և աղգասեր լինեն, վոր իրանց զավակների հետ մայրենի լեզվով խոսեն, նրանց սրտի մեջ աղգային պատվասիրություն ձգեն, հայրենիքի սեր, էլ այնուհետև ի՞նչ մահ կարող է սպառնալ մեզ:

— Բայց ո՞ր է. մենք չունինք այդ տեսակ մայրեր:

— Մենք շատ բան չունինք, բայց ինչ վոր չունինք կարիքը կատեղծե: Գլխավորը մեր տրամադրությունն է, վոր ունինք: Բանի վոր տրամադրությունը կա, մնացածն իր կարգին կգինի: Մենք չենք կարող, որինակ՝ մոդայից ազատվել, թեև ըստ ինքյան դա մի հիմար բան է թվում, բայց վոր թուրքը մոդայի չի յենթարկվում, այդ էլ չի նշանակում, թե ուրեմն մեզանից խելոք է: Բանն այստեղ յենթարկվելն է, ճկվելն է, առաջ դընալն է: Յենթարկվելով մոդային, յենթարկվում ենք և լավագույն բաներին, մինչդեռ մոդային չենթարկվողը զուրկ է մշտնում լուսավորության նաև ոգտակար կողմերից: Մենք մեր աչքով տեսնում ենք, թե հայերենն ու վրացերենը ինչպես են դուրս մղվում մեր տղետ կանանց բերաններից, մեր տներից: Այսքանը բավական է, վոր մեր մեջ նախանձ դարթի, պատվասիրության և աղգասիրության զգացումն և սկսենք դրա առաջքն առնել աղջկանց դպրոցներ բանալով, թատրոն հիմնելով, դրամատնություն ճոխացնելով, վերջապես ուրիշ աղգերին մեզ որինակ առնելով, նրանց վարմունքը մեզ համար խոսակցության նյութ չդնելով: Պետք է հետաքրքրվենք և իմանանք, թե վորպիսի՞ ճանապարհ ունեն բռնած մեր վիճակումն յեղող յեվրոպական աղգերը, այն աղգերը, վորոնք մեռած տեղից գլուխ են բարձրացրել և աղգայնապես ապրելու իրավունք են հայտնում: Նրանք այսօր առաջ են գնում վոչ մեզ նման կուլտուրեն, այլ գիտակցաբար, մի նախամտածված և նախագծված ուղղությամբ, և շատ չի քաշել այդ աղգերը կանգնեն առաջնակարգ դրրեղ աղգերի կարգը իրանց գարգացումով և դիրքով:

— Դրա համար մեզ հարկավոր է մեծ զոհաբերություն. յեղածը շատ քիչ է: Ինչ զոհաբերություն վոր անում ենք բոլոր հայերս միասին, մի հուն, մի խոտլացի, մի սերբ, մի մալյան, մի ռումինացի, վերջապես մի զարադաղցի և բուլղար դրա տասնապատիկն է անում:

— Առավել լավ, այդ մեր բախտիցն է, վոր դրանք այդքան աղգասեր են և հայրենասեր: Իրան աղնիվ հայ համարողը կարող չե դրանցից հետ մնալ, հարկավոր է միայն, վոր նա իմա-

նա, թե այդպէս մարդիկ կան աշխարհիս յերեսին և այդպիսի ազգեր...

— Բայց չատ բան մենք չենք կարող անել, չատ վոր ուզենանք: Մեր ազգի բարոյական ու մտաւոր դարդացման ղեկը մեր հոգևորականութեան ձեռին է, իսկ մեր հոգևորականութիւնը չունի մի Յեղիշե, վոր ասե, «բոլոր աշխարհիս միութ են կառավար» դրանք վոչ միութ են ճանաչում և վոչ աշխարհ, դեռ միջնադարյան խաւարի մեջ են խորխաւում և հնացած ցնորքներ պաշտպանում:

— Հոգևորականութիւնը այդ վիճակումը մնալ յերկար չի կարող, նա ուշ թե վաղ ազգի կարծիքը կճանաչէ և նրա հետ կմխանա սերտ սիրով: Բեզ որինակ Մըխայան Հայրիկը, վոր իր նմանը չունի նույնիսկ աշխարհականների մեջ: Բահանան աշխարհականի պաշտոնյան է, նյութապես նրանից կախում ունեցող, նա ըստ ամենայնի պետք է հարմարվի իր ծուխի հոգացողութեանը, յեթե վոչ՝ հացից կզրկվի: Յեպիսկոպոսը պիտի համապատասխանե ազգի պահանջներին, յեթե ձգտումն ունի առաջնորդութեան, պատրիարքութեան և կաթողիկոսութեան, և վո՞րը չունի այդ ձգտումը: Ուրեմն դրանք ուզեն չուզեն՝ ազգի պահանջի հայտարար պիտի հանդիսանան: Ազգի պահանջը, կարիքը ամենին իր դերը կհատկացնե, և ինքն իրան կլինի, առանց մեր միջամտութեան...

— Յերանի ձեզ, վոր այդչափ լայնասիրտ եք. յես չատ նեղ սիրտ եմ, և չատ անգամ քիչ է մնում հուսահատվեմ...

Այս խոսողները թեև հասակով ծեր, բայց մտքով զարդացած և թարմ սրտի տեր տղամարդիկ եյին և ճշմարիտ հայրենասեր: Սրանցից մեկը Հախվերդյանն եր, ինչո՞ւ թագցնեմ այդ հանճարավոր հայի անունը: Սրա դռները բաց եյին բոլոր նորահաս յերիտասարդների համար, վորոնք միշտ նրա խորհրդին եյին դիմում, յերբ ուզում եյին մի նոր բան սկսել, մի նոր միութ իրագործել: Յեվ նա ուրախանում եր չատ, յերբ տեսնում եր նոր յերիտասարդների մեջ մի անկեղծ վոգևորութիւն և անսահման յեռանդ: Մարդ եր բառիս բուն նշանակութեամբ, մարդ կատարյալ, աղնիվ սրտի ու մտքի տեր, և չկար մի այլ վոք վոր նրա չափ ասովածային զորութիւն տպչեր իր խոսակցի վրա: Տղերիս դրողը բոլորովին դիպվածաբար և բախտի բերմամբ միայն արժանացել է յենթարկվելու այդ վեհագույն մարդու ընդունելութեանը. նմանին պատահած չեմ կյանքումս վո՛չ առաջ և վոչ հետո: Նա դեներալ եր, իսկ յես ձուլարանի

աշակերտ. չգիտեմ ինչ եր ասել իմ մասին նրան պ. Հ. Ենֆիաճյանցը և նա վաղուց եր հայտնել տեսնել ձուլարանի տարրընական աշակերտին: Յեվ յես գնացի: Յերբ մտա վտառվոր դահլիճը, իրրև մի վայրենի չգիտեյի վոր կողմ ուղղեմ քայլերս, վերջապես մի բարի տիկին ինձ առաջնորդեց դեպի առանձնասենյակը, ուր մեծ մեծ և չքանչաններով զարդարված հյուրեր կային նստած. յես ավելի չվհլվեցա... բայց նա ինձ չուտով պաշտպանեց և ձեռքիցս բռնելով հայրական գթութեամբ նստեցրեց իր կողքին դիվանի վրա: Այնուհետև յես ինձ ազատով ղգացի գտնվելով մի յերկնային հովահանդարտութեան տակ: Բայց տեսնելու բան եր, ինչպիսի՛ պատկառանքով եյին վերաբերվում իմ դիմաց հեռու նստած խոշոր մարդիկը դեպի այն անձը, վորի կողքին միայն յես եյի արժանացել նստելու, չնայած, վոր այդ ժամանակ դեռ ստրուկներն ազատված չեյին Ռուսաստանում: Այսքանը բավական է կարծեմ իմանալու համար, թե ուրեմն վորպիսի մարդ կլիներ Հախվերդյանը: Յերբ հեռացա այդ մարդու մոտից, մի ամբողջ չաբաթ յես դժվածի պես եյի, յես գտնվում եյի մի բոլորովին յերևակայական աշխարհում: Այնուհետև իմ մտավոր զարդացման ընթացքը այլ ուղղութիւն ստացավ, դեպի վսեմը և բարձրը, այնուհետև յես խեղդվում եյի ստոր վարուց տեր մարդկանց մթնոլորտում, պահանջում եյի, վոր ամենքն էլ մի մի Հախվերդյան լինեին, բայց հետևանքն այն եր լինում, վոր յես դառնում եյի մարդկանց աչքում մի ինքնահավան և կոպիտ արարած: Յեվ հասկացրու դրանց, վոր կոպտութիւն չե իմ վարմունքս, այլ մի այն մի պահանջ, վոր դուք, ով պատվական պարոններ, մի վոքր ազնիվ լինիք, անկեղծ լինիք և մարդու վայել մարդամարտութիւն ունենաք:

Ժամանակի բարի վոչին արևի պես մի բան է. նա յերբ վոր ղարթում է, արեգակի պես է ծագում, իր լուսը սփռում է ամենի վրա. ամենքն էլ տաքանում են. վորը քիչ, վորը չատ, նայած թե վորն է արևադեմ գտնվում, և վորը ծմակում. աճում է աճելու ընդունակը, և չորանում՝ չորանալուն:

Միևնույն միտքը, միևնույն դաղափարը միաժամանակ արծարծվում են իրարից չատ հեռու յեղած տեղերում: Այս է պատճառը, վոր ժամանակակից մարդիկ բոլորն էլ միևնույն բանն են ասում, միայն այլ ձևերով և բառերով: Միտքը թըռչելու հատկութիւն է ունեցել միշտ, բայց մեր դարում մարդկային միտքը էլեկտրականութեան վրա հենած, մարմին առած

թռչում է աչկարա և մի ակնթարթում աչխարհս բոլոր մասերը իրար հետ կապում: Ինչ վոր մեր մտքովը չի անցել, կանցնի մի ուրիշի մտքով, և լույսի պես կտարածվի ամենի վրա: Ինչ վոր այսոր անհնարին է, վաղը հնարավոր է դառնում, վորովհետև այդ հնարքը յեթե մի աչխարհում չի դանվում, դանվում է մի այլ աչխարհում և դառնում ամենի սեփականություն: Սպ առածդ, մանավանդ յեթե մեզ պես մի խեղճ ազգ է, բոլոր հույսը յեթե իր վրա դնե, կարող է հուսահատվիլ խոկույն, բայց իր հույսը վոչ միայն իր, այլև մարդկության վրա դնելով կարող է հուսալ, վոր նրա վրա տարածված բարիքից ինքն անմասն չի մնալ: Յեթե մարդկության յերջանկությունը պահանջում է ազատություն և այդ ձգտումն ունի ամեն մի անհատ, ապա ուրեմն հայի համար բացառություն լինել չի կարող, ուղի չուղի նա էլ կունենա այդ ձգտումը իբրև մարդկության մի հյուլեն: Ամենայն ինչ, վոր ընդհանուր մարդկային է, նույնն ունենալ ամեն մարդու իրավունքն է: Հայը կարող չէ պետությունից դուրկ մնալ, իսկ պետությունն արդեն ինքնըստինքյան ազատության մի դուռն է. ամենայն բռնություն, ամենայն ուժ, սեռք և պետության ուժ առջև դլուխ խոնարհե: Կկորչեն, կանհետանան միայն այն ազդերը, վորոնք պետությունից և նրա պահանջներից կվախենան: Աղատ, բռշայություն, խաչադողություն, բաշիբոզուկություն, դրանք բոլորը կջնջվին, կվերանան, և տիրող կհանդիսանա միմիայն պետությունը, վոր բոլոր մեռքը սրբում, մաքրում է անասնական հատկություններից և մարդկանց միացնում է միակերպ մտածությամբ. նույնիսկ միևնույն ազգի զանազան անդամները, կրոնով և աղանդով բաժանվածները միմիայն պետությամբ կարող են միանալ իրար հետ, վորովհետև աղանդը բաժանող է, իսկ պետությունը միացնող, վորովհետև մեկի աղանդը մյուսի համար սուտ է, իսկ սուտ և ճշմարիտ պետություն չկա, այլ մեկ և այն բացարձակ ճշմարիտ: Վո՞ր պետական կաթոլիկը կասե, վոր ինքը Փռանգ է և վոչ հայ, կամ վո՞ր ազետ հայի հայ անվանելուն կարելի յե նշանակություն տալ, քանի վոր նա հայ ասելով լուսավորչական է ուզում ասել:

Հայոց դպրոցներում, ուր էլ վոր կային, պետություն չեր ավանդվում, այլ միայն կրոն և հայոց լեզու: Պետության տարրերը կարելի յեր ձեռք բերել միմիայն դիմնազիաներում: Բայց դիմնազ էլ մեկ հատ կար և այն էլ միայն Թիֆլիսում: Մյուս տեղերում կային միայն «դավառական» ամլած դպրոցներ, վո-

ուեղից զուրս եյին գալիս հասարակ դրագիրներ: Մեր դպրոցները տալիս եյին մոնթեր և տիրացուներ, իսկ պետության դպրոցները՝ դրագիրներ: Տղետության մեջ այդ կարգի դրագետները միմյանցից հետ չեյին մնում, իսկ անբարոյականության կողմից դրագիրները գերազանցում եյին տիրացուներին, վորովհետև ժողովրդի աղանձն եյին նրանք, նրանցից եյին լինում թարգմաններ, և գանազան ատենյանի վոստիկաններ, մինչև մաղրումները անգամ, վորոնք զարհուրելի բաներ եյին: Հասկար եր մեր աչխարհքը, բացարձակ խավար: Հինական թվականներին Թիֆլիսի կլասիկական գիմնազը հետզհետե լավ աչակերտներ տվավ, և մեր հիշած ժամանակը այդ աչակերտներից կազմվեցավ մի լավ խումբ: Այդ խումբն ինքն իրան անվանել եր «սիրազումար» ժողով և սկզբումը մեծ յեռանդով մասնակցեց թե դրականության և թե ուսուցչության: Գրականության մեջ զրում եյին նույնիսկ աստղաբաչխության վրա (Ա. Յերիցյան), կատաղի կերպով հարձակվում եյին ազգային նախապաչարմունքների վրա (Գ. Տեր-Աղեքսանդրյան): Այս յերկուքը ամբողջ խմբի մեջ ամենից նչանավորն եյին, որանք կազմեցին և հայերեն ընթերցարան, հնչական մեթոդ մտցրին և սկսեցին մյուս ընկերների հետ ձրի դասատվություն անել ծխական դպրոցներում: Սրանց խումբն եր առաջ մղում և Ներսիսյան դպրոցի ոաներին դնալի դրականություն և դնալի թատրոն: Այս միջոցին նույն ոաներից յերևելի հանդիսացան Գ. Մուրացյան և Պ. Պռոչյանց, յերկուսն էլ տաղանդավոր և չնորհալի քաջ հայկարան և մոլեռանդ ազգասեր: Յես այդ ժամանակ մոռիկ եյի ամենքին էլ. ամենքն էլ, չըիտեմ ինչու, մի առանձին սեր ունեյին դեպի ինձ. և յես հայտնի եյի դրանցում, վորպես «մեր Ղափլրը»: Յես սիրում եյի ավելի «սիրազումար ժողովի» անդամներին: Նրանցից չատերը իրանց անունը Թողած՝ առանձին տեղ եյին ապրում ընկերությամբ, իբր իրանց պատրաստելու համար ապագա ուսանողական կյանքին, թեև քչերը դնացին համալսարան: Դրանց չրջանում յես ամեն անգամ մի նոր բան եյի սովորում, նոր բան եյի լսում, և հետզհետե իմ մեջ սաստկանում եր ուսումնասիրության վարիագը: Դրանցից մոմանք թեպետ դրականության չեյին մասնակցում, բայց իրենց ուսումնասիրած պատանիք չատ չնորհալի եյին և ինձ համար մեկ մեկ փրկիչներ: «Ախ, յե՞րբ կլինի, ասում եյի, վոր յես էլ սրանց չափ բան գիտենամ»... Թե նրանք չատ հետամուտ եյին

ժողովրդի կյանքին, դիտելն հետազոտել, ուսումնասիրել, դրա ապացույցն այն է, որ դրանցից մեկը (Մ. Քոչարյանց) առաջինը հավաքեց հայկական առածները և տպեց «Կռունկի» մեջ, Գ. Տեր-Աղեքսանդրյանի Թիֆլիսի մտավոր կյանքը, Ցերլյանի հնագետ դառնալը, և այլն: Ցավ թե այն ժամանակը ինչպես է- յին նայում ժողովրդի կյանքի վրա, այստեղ բերենք նրանց խոսակցությունից մի կտոր, որին յես ունկնդիր եյի:

Մայիսին եր, 186... թվականի: Ցերկու պատանի, դիմնազիական հագուստով նստել եյին Թամամշեվի քարվանսարի յերորդ հարկի պատշգամբում և նայելով հրապարակումն անց ու դարձ անող մարդկանց վրա, իրանց հասկացողությունով վրոշում եյին. թե ով ինչ մարդ կլինի:

— Նայիր այն փորը հաստ մարդու վրա, այնքան չաղացել է, վոր հազիվ և կարողանում ման գալ: Դա յերևի շատ և հարբուստացել:

— Ցերևի շատ փող ունի, վոր այդ ահագին փորը լցնում է... բայց գիտե՞ս, հիմա հաստ փոր ունենալը մոդա յե վաճառականների համար: Դրանք Մոսկվայում հաստափոր վաճառականների հանդիպելով, այն յեղրակացությանն են յեկել, վոր ում փորը հաստ չե, նա կարող չե հարուստ լինել: Շատերը վալասներով սիրաթափում են փորները, վոր հաստ յերևվան, վոր իրանց հավատացող և ապրանք ու փող տվող շատ լինին: Շատերն ուրիշ փողերումն են հաստացնում փորները, հետո սուտ սնանկանում: Նայիր ահա այն մյուս հաստափորին... Ասում են տասնհինգ միլիոն մանեթ փող ունի, բայց ազգային վորևե հաստատության համար տասնըհինգ դռուշ չի տալիս, այնքան խոզ է...

— Հենց խոզի նման ել է. վրին նայիր, չի կարողանում այս ու այն կողմը թեքել. խոզի նման ամբողջ մարմնով է շուռ ու մուռ գալիս: Բայց տեսնո՞ւմ ես այն բարձրահասակ մարդուն, վոր գլխին շլյապա ունի. յերևի դա մի ուսումնական մարդ է և գուցե նոր է յեկել Ռուսաստանից կամ արտասահմանից:

— Ի՞նչ ուսումնական, դա մի խոհարար է... Հիմա ով չի շլյապա դնում. այդ առաջ եր, վոր շլյապա միայն ուսումնականի գլխին եր բազմում... Նայիր այն խմբով անց կենող կանանցը. ո՞վ գիտե հենց այսոր են իրանց ղաթիրեքը վերցրել, հիմա տալմով են ման գալիս:

— Այդ լավ միտս ղցեցիր: Գիտե՞ս, յես ինչ եմ նկատում: Նայիր ահա այն մարդին, տես գլխում ֆուրաշկա ունի, բայց մյուս բոլոր հագուստը առաջվանն է— միևնույն կաբան, միևնույն արխալուխը, միևնույն խարազի լափչիքը: Հիմա մտիկ տուր այն կնկանը, տես գլուխը կապած է քաղքցնակ, իսկ վոտներին կիսակոշիկներ ունի: Այս իմ դյուտն է. յես նկատել եմ, վոր տղամարդիկ դլխից են սկսում փոխվել, իսկ կանայք վոտքից:

— Այդ լավ դյուտ ես արե՛լ... Ել ուրիշ ի՞նչ ես նկատել, կամ կարո՞ղ ես բացատրել դրա պատճառը:

— Կանայք խորամանկ են, շատ խորամանկ, ոճի ու աստառի խելք ունին, բայց տղամարդիկն այնքան հիմար են և ախմախ, վոր դրանց անխելք և միամիտ են համարում: Կանայք առհասարակ ներքևից վերև են գնում, և տակից դեպի յերեսը: Իսկ տղամարդիկ վերևից ներքև են գնում և յերեսից դեպի տակը: Դրանք գլխարկից հետո պալտո յեն հագնում կոքի վրայով, հետո կաբին տալիս են մի տեսակ սերթուկի ձև և այսպես քիչ քիչ հասնում են վոտներին, չալվարների նեղացնելուն: Սոսնձած չալիկները ամենից հետո յեն հագնում, այն ել կանանց ստիպմամբ: Իսկ կանայք, կոշիկից հետո սպիտակեղեն են փոխում, ամենից հետո զաթիրան, իսկ պլուխները մընում է անփոփոխ: Գլխները չեն փոխում նրա համար, վոր յերկար ժամանակ ճակատակալով պահած գլուխը չատ ազատ է լինում: Ցեթե մի զոկ կամ զարթաղլի կնիկա տեսնես գլխաբաց կսարսափես: Նրանց գլխի վարթաթոցները իրանց ծածկված յերեսի մասերը զրկում են աճելուց և բոլորովին մաշում: Նայում ես այսերին կարծում ես մի մի վարդ են բաց ելած, իսկ մյուս մասերը— թառամած, ճմշկած: Քաղաքի կանանցն ել ճակատն է մաշվում և զրկվում աճելուց:

— Բայց կարծեմ կանայք դիտակցությամբ չեն անում, ինչ վոր անում են, թեկուզ խորամանկությամբ լինին անելիս, այլ թառած գնում են դեպի վոր կողմ տանում է ընդհանուր հոսանքը, ժամանակակից մոդան, թեկուզ այդ մոդան մի հրեշական բան լինի, ինչպես որինակ այժմյան կրինոլինը:

— Դրան խոսք չկա, բայց բանը նրանց արագ փոխվելումն է: Մինչև տղամարդը իր գդակը կփոխի, կինն արդեն ամենայն բան փոխած և լինում: Տղամարդը նայում է իր վիճակին, արհեստին, հասարակական դիրքին, կարողությանը, համքարին,

իսկ կինը չունի վորևե հասարակական դիրք. նա թեև մարդու ընկերուհին է, բայց աղատ է մարդու ընկերավարական նախապաշարմունքներից. կանայք վոչ մի իրավունք չունենալով, վոչ մի պարտականություն էլ չեն զգում. խարազի կինը կարող է միևնույն հազուստը հագնել, ինչ վոր քաղաքացիի կինը. նրանք իբրև կանայք հավասար իրավունքի տեր են, այսինքն՝ քաղաքացիական իրավունքի առնչե բոլոր կարգի կանայք միմյանց հավասար են, ինչո՞ւ ուրեմն հավասար էլ չհաղնվին: Կանայք իրանք դողեդող փոխվելով իրանց պավակներին փոխում են աչկարա. նրանց վերջին մոդայի հագուստուին են պահում և մի բոլորովին փոխված նոր տարազով նոր սերունդ պատրաստում:

— Բայց նկատե՞լ ես, վոր դրանք միայն հագուստով չեն բավականանում, փոխում են և իրանց նիստ ու կացը, իրանց վարք ու բարքը...

— Ո՛... ինչպե՜ս չէ, ինչպե՜ս չէ... Թող վոր ասեմ, և դու ականջ դիր. այդ իմ մասնագիտությունն է: Մեր կանայք հիմա էլ առաջվանը չեն: Հին տանտիկնությունը դրանք հնազարան են ձգել: կարծես խոսք մեկ արած լինեին, վոր իրանց վզից թոթափեն տղամարդկանց լուծը: Տղամարդու բոլոր կարողությունը այժմ կինն է հավիշտակում և նրան պարտքի տակ դցում: Անձնատուր են յեղել լոտոյի, թղթախաղի, հավաքվում են սրա նրա մոտ և ամբողջ գիշերներ անց կացնում: Ամենքն էլ զանգատվում են իրանց մարդկերանցից և ծիծաղում են այն կանանց վրա, վորոնք պաշտպանում են իրանց մարդկերանցը: Վարքի ազատության կողմանե ուղում են գերազանցած լինել իրանց մարդկանցը: Լինելով անուս և տգետ, լրբությունը լուսավորություն են համարում:

— Այդ շատ ցավալի բան է. մեր ընտանեկան կյանքը կարող է քայքայվել, յեթե այսպես չարունակվի:

— Դրա համար յերկար ժամանակի կարոտություն չկա: Տղամարդիկ փոխվում են տարիներով, իսկ կանայք— որերով: Իրանք շուտ են հասունանում ինչպես մարմնով, նույնպես և մտքով: Տասնչորս տարեկան աղջիկն արդեն մայրություն է անում, մինչդեռ 14 տարեկան տղան դեռ մի անպետք ապուշ է: Կանայք ավելի խոսում են քան թե մտածում. դրանք խոսելացավ ունին: Իրանց զավակների հետ մոդնի լեզվով են խոսում: Թե՛ վորտեղ և ինչպես են ուսվորում մի ոտար լեզու, մարդ չի

նկատում: Դրանք չեն սովորում այլ ուղղակի խոսում են: Սկսել են խոսում թե ուղիղ, այդ նրանց հույը չե, այդ ժամանակը կչտակե... Հիմա ինչ վոր սկսել են հայերեն ներկայացումներ տալ, այդ բանը բավական մեծ ազդեցություն է արել կանանց լեզվի վրա: Այդ փոփոխությունը դեռ այնքան քիչ է, վոր խուզն աչքի յե ընկնում: Որինակ, ել չեն ասում— կուլի, կոսե— սկսել են դործ անել— բայց, վորովհետև, կարելի յե, ժամանակ, ինչպես, եսպես, ենպես... Ել չեն ասում՝ յիս, այլ՝ յես, ասում են՝ մեզ, ձեզ, և վոչ՝ միզ, ձիզ...

— Բայց պիտե՞ս, կանանց այդ հատկությունից կարելի յեր մեծ ոդուտ քաղել...

— Ի՞նչպես:

— Այդ դյուրաթեքությունը, այդ դյուրազդեցությունը, այդ սրամտությունը, այդ ճարպկությունը վոր դրանցում կա, աղամարդիկը չունին: Այն աղդեցությունը վոր մայրերն ունին նոր սերունդ կրթելում, այն աղդեցությունը վոր որիորդներն ունին յերիտասարդների վրա, մի մեծ բարոյական ուժ է, ահադին ուժ. այդ ուժը ինչպես վնաս, նույնպես և ոդուտ կարող է բերել: Հարկավոր է միայն, վոր այդ ուժի վրա առանձին ուշադրություն դարձնենք և մեր ոդտին ծառայեցնենք: Մի նոր և ոդտակար միտք, մի նոր գաղափար, չարժուն, դրանք ավելի չուտ կտարածեն և կմտցնեն կյանքի մեջ, քան թե տղամարդիկ, վորոնք մեծ մասամբ գաղափարական և իդեալական աշխարհից հեռու յեն, մինչդեռ կանայք չարունակ այդ աշխարհումն են սլաստվում: Ցավ այս կլինի, յեթե դրանք բարեկիրթ հայ ծնողի, հայ վարժուհու և դաստիարակչուհու պաշտոն կատարեն: Վորովհետև, ինչպես ասած է «կաթի հետ մտածը հոդու հետ դուրս կգա», մայրեր պետք են մեզ, վոր կաթի հետ ան այն, ինչ վոր մեզ հարկավոր է:

— Դրա համար ուսումնարաններ են պետք իդեական սեռի, մինչև հիմա դպրոցներ, վոր մենք չունինք: Ցավ այս ինչ տխրելնակ բան է, ճշմարիտ, վոչ մի հատ աղջկանց դպրոց չունենք: Խեղճ Թադյադյանը չարունակ կանչում է— կրթություն կանանց, դաստիարակություն որիորդաց,— բայց նրան լսող չկա: Մինչդեռ մեր աչքով տեսնում ենք ահա, վոր մեր աղջկերքը հակադդային կրթություն ստանալով ոտարանում են բոլորովին և մի նոր և ոտար սերունդ պատրաստում:

— Իրավ վոր զարմանալի յե. տեղից վեր կենողը տղայոց

պլորոց է բաց անում, իսկ աղջկանց վրա ուշադրություն դարձնող չկա: Պետք է այս միտքն արծարծել և հոդ տանել այս մասին: Ճեկ այսօրվան մեր ժողովը այս խնդրին նվիրենք...

Մինչդեռ գիմնազիստները կյանքի յերևույթների վրա եյին ուշադրություն դարձնում և նրանց մասին խորհում, խոսում, սեմենարիստները ավելի կրոնի վրա եյին դարձնում ուշադրություն: Նրանց դրավում եյին ավելի կրոնական վեճերը, և Հյուսիսատյալի քարոզած կրոնական վերանորոգությունը մի տեսակ վերանորոգություն եր ձգել դպրոցական աշակերտների կրոնական հայացքների մեջ:

Հին վանական կրթությունն ևս մի տեսակ սորվական լուծ եր, պետք եր նրանից նույնպես ազատվել: Կյանք և դպրոց մի ուղղությամբ չեյին ընթանում, դպրոցում լսվածը հերքվում եր կյանքի մեջ: Մինչդեռ վարժապետները շարունակ կռիվ եյին մղում Հյուսիսատյալի հայտնած ազատ մտքերի դեմ, նույն վարժապետների աշակերտները անհագ սիրով Հյուսիսատյալ եյին կարդում և նրա քարոզած հոգովը տոգորվում: Միչտ այսպես ե. յերկու թերթից ազատությունն և ընտրում նոր սերունդը. արգելքը միայն ավելի յե քաղցրացնում նրա բովանդակությունը: Իմ հիշած ժամանակ Ներսիսյան դպրոցի նորավարտ աշակերտները բոլորն էլ Հյուսիսատյալին եյին համակրում և սրտատրոփ սպասում Կոմս Եմմանուելի դրվածներին:

Մինչև Հյուսիսատյալի լույս տեսնելը մեզանում կրոնը անձեռնմխելի յեր, քննադատության տակ ընկնել չեր կարող: Այդ տեսակ խնդիր բարձրացնելը ինքն ըստ ինքյան ուներ մեծ նշանակություն: Կրոնը քննադատության առարկա չինելով վոչ վոք իր կրոնը չի փոխել. բայց նրա կաշկանդված միտքը կարձակվի. ծեսը, սովորությունը, ավանդությունը, իրավաբանությունը և դավանաբանությունը միմյանցից կազատե, կորոշե, և շատ ավելորդ նախապաշարմունքից կազատվի:

— Ճեթե այդ մարդը ճշմարիտ աղատասեր մարդ ե, ինչո՞ւ յե լութերականություն քարոզում,— հարցնում եր մի դպրոցական մյուսին Նազարյանցի մասին:

— Նրա քարոզածը լութերականություն չե, այլ վերանորոգություն Ավետարանի լույսով, առաքելական պարզ և մաքուր կրոն, վորպեսզի նա բարոյապես աղդել կարողանա կրթվող սերընդի վրա: Ճշմարիտ աղդասիրությունն էլ հենց այս ե իմ կարծիքով: Նա տեսնում ե, վոր մեր հոդևորականությունը կորցրել ե իր հեղինակությունը, յեկեղեցական շատ ծեսեր կորցրել են իրանց սրբությունը, ժողովրդի մի մասը սառել ե իր յեկեղեցուց, դրա համար էլ նա առաջարկում ե յեղեկեցուն տալ այնպիսի կազմակերպություն, վոր պատկառելի լինի ամեն կարդի հայերի համար և դեպի իրան քարչե նրանից հեռացած պալակներին:

— Բայց ժողովուրդը դեռ այնքան հասունացած չե, վոր կարիք զգար վերանորոգության: Այդ բանը կարող ե ավելի մեծ դժտություն հարուցանել և ավելի կատր կատր անել ժողովրդին:

— Ուրեմն յերե ժողովուրդը դեռ քնած ե, պետք չե՞ նրան զարթեցնել, այլ որորել, վոր ավելի խո՞ր քնի: Մեր յեկեղեցին դարերի ընթացքում շարունակ փոխվելով և մոտենալով ավելի զորեղ կրոններին մի մազ ե մնացել, վոր նրանց հետ միանյանա և կուլ դնա նրանց մեջ: Ինչո՞ւ վաղորոք աչք չբանալ և ապագա վտանգի առաջքն առնելու համար չհասցնել այդ նրբացած անկրպետը: Ճեվ այդ կարելի յե միայն սրբելով մեր յեկեղեցին հակառակաքելական և հակալուսավորչական նորամուծություններից: Իմ կարծիքով Նազարյանցի առաջարկությունը խոր մտածված և մեծ հեռատեսության արդյունք ե: Մի՞թե լավ բան ե անկրոնությունը, մի՞թե լավ բան ե իր յեկեղեցուց չբաժանվածը: Ինչո՞ւ յենք ծիծաղում մենք մեր կրոնասույցի վրա, ինչո՞ւ չենք հավատում նրա ասածներին:

— Ինչպե՞ս չծիծաղենք նրա քարոզած հայամավուրքական առասպելների վրա:

— Տեսնո՞ւմ ես, ուրեմն վոր մեր կրոնասույցը կրոնն առասպելից զատել չգիտե, կրոնի բարոյական ակդությունը չգիտե վանաղանել նրա արտաքին ձևից: Իսկ սրա հետևանքն այն ե լինում, վոր մեր դպրոցներից դուրս են գալիս անկրոն մարդիկ, անկրոն քահանաներ: Ճեթե քահանան իր պաշտոնի սրբությունը չի հավատում, ել կարո՞ղ ես պահանջել, վոր նա լինի ջերմեռանդ քրիստոնեյի և աղնիվ ու առաքինի մարդու կենդանի որինակ իր ժողովրդի համար: Կարո՞ղ ես հիմա մեր մեջ մի առաքինի քահանա դտնել: Բայց չե՞ վոր անբարոյականությունը ինքն ըստ ինքյան մի թոքախտ ե և ազգասպան: Անբարոյական

աղջերը, անկոն աղջերը յերկար կյանք ունենալ կարող չեն։ Վոչ թե ամեն մարդ պարտական է հավատալ և սիրել իր յեկեղեցին ինչ հատկություն էլ վոր ունենա նա, այլ ամեն յեկեղեցի պիտի այնպիսի հատկություն ունենա, վոր չվերնել անկարելի լինի։ Ցես ինչպե՞ս հարգեմ, պատվեմ, որինակ կենճոլին, Գագորդինին, Բազի-Բուտինին, քանի վոր դրանք իմ արհամարհանքից անդամ ստոր են։ Վոչ թե յես պարտական եմ քահանային հարգելու, այլ քահանան այնպիսի անձնավորություն պիտի լինի, վոր ուզեմ չուզեմ, հարգեմ նրան։ Ասված է «Շատ քաջ վասն մարդո արարալ, և վոչ մարդ վասն չարաթիու»։ Այսոր ամեն ինչ մեղանում դլխիվայր է դրված։ Հոդևորականությունը ազգի և յեկեղեցու պաշտոնյան լինելով՝ սեր. և հանդիսանում ազգի և յեկեղեցու։ Ժամանակ չէ՞ մերթե մեր յեկեղեցին իր նախկին ժողովրդականության վերածել, նախկին ոգմանադրությունը տալ նրան։ Բայց վոր նա այսոր դառել է ավազակաց այր, ո՞վ չի տեսնում այդ։ Ինչո՞վ է ուրեմն մեղավոր Նազարյանցը։ Նա յերթե լութերականություն քարոզեր, առաջինն ինքը կդառնար լութերական։ Մի՞թե մենք էլ մխիթարության չենք մտածում, ինչո՞ւ ուրեմն լութերական չենք դառնում։ Նրա համար անչուչա, վոր մեր նպատակն է մեր տունը չինել, վերանորոգել, պայծառացնել, և վոչ թե մեր տանիցը խոտվել և յերթալ ուրիչի խրճիթ մտնել։ Մենք իրրև ժողովուրդ, իրրև յեկեղեցու տեր, պարտական ենք մեր յեկեղեցին ազատել բյուզանդավորների ձեռքից...

Այս կարգի մտածող դպրոցականները իրանց կարծիքը չեյին թաղցնում ժողովրդից, և ինչպես վոր մտածում էյին առանձին, նույնը հայտնում էյին և հրապարակավ։ Գիմնազիստները այնքան չեյին հարձակվում հոգևորականության վրա, վորքան հոգևոր դպրոցից ավարտածները։ Ցեվ այս շատ բնական է։ Ցերը վոր մեկն սկսում է իր ստացած հին դաղափարները դուրս մղել դլխից, նորերին տեղ տալու համար, նրանում առաջ է դալիս մի տեսակ հեղափոխական չարժումն։ Սրբանց թիվը բավական շատ եր. և իրրև Շանչյանի աշակերտներ, ամենքն էլ հալածանքի էյին յենթարկվում հոգևորականների կողմից, մինչդեռ խեղճ Շանչյանցը վոչինչ մասնակցություն չուներ այս դործում, և ժամանակի վրկարար վոդին եր ավել նրանց այդ ուղղությունը։

Սիրելի յե ինձ հիշել միշտ այդ ժամանակը։ Կյանքը, բարոյական կյանքը յեռում եր։ Անընդհատ ճաչեր, ընթրիքներ, աղջային կենացներ, ճառեր... Մեր մտավոր չարժման անմեղության և մանկության չրջանն եր։ Ցեթե մեկը խաչապող լիներ կամ ժուլիկ, կարող եր այդ անմեղ մարդիկներին ձեռք առնել և խաղալիք չինել իր ծածուկ նպատակների համար։ Զար վոդին յերթե կարողանում է նույնիսկ դրախտի մեջ սողալ, աչխարքս նրա համար բաց է ու բաց։ Այդ չրջանն ազատ չմնաց չար վոդիներից, և մեկն ամենից յերևելի հանդիսացավ իբրև կեղծավոր և հավատող աղվես։ Այդ աղվեսը դեռ դոյություն ունի և դեռ դեր է խաղում։ Բայց սրա մասին մի այլ անգամ։

Մեկ մանենք հնության պաշտպանների չրջանը և տեսնենք, նրանք ինչ են խոսում։

— Հայր սրբազան, ձեր մասին բողոք են դրել կաթողիկոսին, ձեզ ամբաստանում են, ձեզ համարում են...

— Այո, ինձ համարում են թունավորող։ Իմ ստորվոդի թչնամիքս դրպարտության ծայրահեղն են ընտրել։ Ցես դիտեմ ի հարկե, թե վոյք են այդ բանի հնարողները և ինչ նպատակով, բայց դու հո դիտես, Ալեքսանդր Ջան, վոր այդ մի սև դրպարտություն է։ Առանց դրպարտության էլ յես այսուհետև պետք է տեղի տամ իմ հակառակորդներին։ Ցես առաջուց էլ դիտեյի, վոր Ներսեսից հետո, վոր իմ միակ պաշտպանն եր, եվմիածնեցիք ինձ իրանց մխարանակից չհամարելով պիտի հալածեն։ Շեկ ոձը պիտի դուրս սողա իր բնից և դա իմ տեղս նստի։ Նրա աղվեսն այստեղ արդեն պատրաստում է նրա ճանապարհը։

— Ի՞նչ պետք է անել. վոչ ամոթ դիտեն, վոչ պատկառանք...

— Գիտե՞ս ինչ, Ալեքսանդր, չունը վոր չուն է, իր տիրոջ հացն ուտում է, նրա դոռանը հաչում։ Մենք պետք է չանից էլ վատթար լինենք, վոր մեր յեկեղեցու հացն ուտենք, և նրան չպաշտպանենք դողերի հարձակմունքներից։ Ի՞նչ է իմ հանցանքը. այն միայն, վոր յես իմ յեկեղեցին և նրա դավիթը՝ դպրոցը՝ պաշտպանում եմ, և չեմ թողնում ավազակների ձեռքը ընկնի։ Թող կաթողիկոսը լսե դրանց, թող վոխե. յես դարձյալ չեմ դադարիլ սաղմոսերդվի հետ ասելու. «Ոստուցից անօրինաց դըճանապարհս քո և ամբարիշտք առ քեզ դարձցին»։

— Ձեր բանը հեչտ է, սրբազան հայր, բայց մեզ ավելի յեն ուզում խայտառակել: Հաչիվ են պահանջում մեղնից. ուզում են վռնդել դպրոցից. նոր հոգեբարձուներ են ուզում ընտրել, նոր վանահոգրություն են չինում:

— Թող անեն, ինչ ուզում են: Ժամանակս վոխվել է: Ձե՞ս տեսնում, ի՞նչ մարդիկ են հրապարակ դուրս յկել: Ո՞վ է իմացել, ո՞վ է լսել, վոր աշխարհական մարդը ինքն իրան վարդապետ անվանե: Յեթե այսուհետև աշխարհականները պիտի վարդապետություն անեն, նոր վարդապետություն քարոզեն, էլ մենք ինչի՞ յենք պետք...

— Շատ ճշմարիտ եք ասում, սրբազան հայր: Ժամանակս վոխվել է. յերևի աշխարհքիս վերջը մոտեցել է. Նեռի գալու ժամանակն է: Ցերեկ ինձ այնպիսի մի բան ասայ Գ. Իվանիչը, վոր մազերս փշաքաղվեց: Ասում է. լոթռանդները Սոլոլակում մի ուռանձին սենյակ են վարձել, իրանց համար աղոթատուն չինել: Շաբաթը մեկ անգամ հավաքվում են այնտեղ, մեկ մեկ սպիտակ չարսավ դցում իրանց վրա, աղոթք անում: Խաչ, Ս. վետարան էլ չունեն, այլ մի աղաքար ունեն դրած առաջներին, նրան են պաշտում: Այդ ի՞նչ բան է, ասացի, մի՞թե աղապաշտության կրոն կա աշխարհիս յերեսին: Նա թե՝ ինչպես չկա. հապա ինչո՞ւ յեն ասում աղանդ: Սրբազան հայր, մի՞թե աղանդն աղապաշտ է նշանակում:

— Աղանդ՝ նշանակում է մոլորություն, սուտ կրոն: Ցերեկվե լսել է թե նրանք աղանդապաշտ են, կարծել է թե աղապաշտ են:

— Դուք շատ ուղիղ նկատեցիք, սրբազան հայր, Գ. Իվանիչը բառերի ուղիղ նշանակությունը չի հասկանում, բայց շատ է սիրում դրաբառ բառեր դործածել, վոր լսողը կարծե, թե նա մի ուսումնական և կարդացած մարդ է: Մնացյալ որն ինձ ասում է. դիտես, Միրզոյանները սաստիկ հարստահարվել են, բայց ուզում է ասել չափից դուրս հարստացել են, այնպես և յերևակայել, վոր հարստահարվել այդ կընշանակե: Դա շատ հմարություններ է անում: Մեր հակառակորդների վրա սուտ սուտ լուրեր է տարածում, նրանք էլ կարծում են, թե մենք ինք նրան այդպես թելադրել, և ավելի յեն կատաղում: Գետք է իմ կարծիքով զգուշ կենալ այդ տեսակ բարեկամից: Նրանք այդ պատուղը չեն, վոր մարսեն, դրա դլխին վատ ոյին կխաղան:

Այս խոսակցության մեջ հիշված Գ. Իվանիչը, ճշմարիտ

վոր, ամեն տեղ տարածում եր, վոր աղապաշտության մի նոր աղանդ կա, և մասնացույց եր լինում մտավոր չարժման գլուխ անցած բոլոր յերիտասարդների վրա: Այս բանը չուտով հասավ յերիտասարդների ականջը, և մեկ որ նրանք մեկ լավ ոյին խաղացին Գ. Իվանիչի վրա: Մեկը նրանցից մի վաուհուն և աշխուժ պատանի Ցերիցուկ անունով, հնության կատաղի թշնամի— իր ընկերներից մի քանիսին կանդնեցրեց քաղաքի գանձան անկյուններում, վորտեղ վոր սովորություն ուներ անցնելու Գ. Իվանիչը իր տնային միաձի կառքով, և պատվիրեց ամենին, վոր Գ. Իվանիչն անցնելիս ամենքն էլ ասեն, վոր այդ մարդը գնացել է փարիզ, այնտեղ հավատը փոխել և նոր հավատով յեկել, թե նա լոթռանդ է դառել...

Սրա վրա շատ չանցավ, Գ. Իվանիչը վորտեղով վոր անցնում եր, յետևից բղավում եյին խանութպանները. «Եկա՛վ... դալիս է լոթռանդը»... Իսկ մրզավաճառները և բղավում եյին և գանգահարում ամենքը միասին: Այսպես քիչ քիչ և ամեն որ բղավելով չբավականացան, այլ ինչ վոր փուսած մրզեղեն ունեյին— խնձոր, սեխ, ձմերուկ բոլորն էլ Գ. Իվանիչի գլխին թափեցին: Զնայած վոր կառապանը սրարշավ անցնում եր, վոր իր աղային ազատե խայտառակ հարձակումներից, նրան չըջապատեցին Հավլաբարի մեյդանումը և ուզում եյին քարկոծել: Այստեղ վոստիկանությունը վրա հասնելով ազատեց Գ. Իվանիչին և տուն հասցրեց, բայց ամբոխն այնպես դրգռված եր, վոր ուզում եր տունը կործանել: Վերջը առաջնորդը կանչեց բոլոր համքարության ներկայացուցիչներին, հասկացրեց նրանց, վոր Գ. Իվանիչը մի չատ ջերմեռանդ և բարեպաշտ հայ քրիստոնյա յե, թե թշնամի մարդիկ են նրա վրա այդ բանը տարածել և խաբել ժողովրդին...

Սրանով ազատվեց Գ. Իվանիչը և ազատ անց ու դարձ ւկսեց: Այս հանդամանքն այն լավ հետևանքն ունեցավ, վոր այնուհետև դաղարեցին ում և թե լոթռանդ անվանելու, այլ տիտղոսի մոդան անցավ:

Հնությունը հեչտությամբ և առանց կռվի տեղի չի տալիս նորությանը, մանավանդ յեթե այդ հնությունը մի հաստատություն է և հների ճանկերում ամրոխված: Ներսես կաթողիկոսը

մի ինքնակալ եր, վոչ ձայն և վոչ մի իրավունք չեր տալիս վոչ ժողովրդին և վոչ հոգևորականությանը: Ամենայն բանում խա-
ուընվում եր և ամենայն պաշտոնեյի ինքն եր նշանակում: Ինքն եր դործակալները նշանակում նույնիսկ աշխարհականներից և ա-
մենայն բողոք նրանց դեմ թողնում եր անկատար, վորովհետև նա անպայման հավատում եր իր նշանակած մարդկանցը, և յե-
թե նրանք չատ եյին հարստահարում ժողովրդին, սարկուքյան ժամանակ այդ աչքի չեր ընկնում, մի սովորական բան եր, ինքն էլ ուներ հոգային սարուկներ, և այսոր էլ նույն դյուղե-
րը իր աղդականների ձեռին են: Ուսումնարանը իրանն եր, հոգաբարձուք էլ ինքն եր հրավիրում իր ուզած մարդկանցը, իսկ նրա նշանակած մարդիկը ցկյանս եյին վարում իրանց պաշտոնը: Պատմությունը Ներսեսին չատ և բարձրացնում, յե-
րևի իր հայորդների ջղրուս: Թե նա ազգասեր մարդ եր և ժիր, այս մասին վոչ վոք կասկած ունենալ կարող չե, բայց նա իր բարձր անվան հավատար ոդուտ չունի տված: Նրա անունն ի-
րանից բարձր է: Նա յեթե մի կողմ դներ իր միապետականու-
թյան ձևը, սերտ սիրով կապեր իր հետ հոգևորականությանը և ժողովրդին, ավելի չատ բան կարող եր անել: Նա հեռացնում եր իրանից ազնիվ և խելոք մարդկանց և մոտ քաշում շողո-
քորթներին և հիմարներին: Ժամանակակից ուսումնականներից վոչ մեկը նրանից պոհ չի յեղել, և ամենքն էլ դժդոհությամբ են հեռացել նրանից: Նա ուսումնասեր մարդ չեր, այլ իշխանա-
սեր. սիրում եր իշխել, տիրել, և այսքան միայն: Նրա մեջ իշ-
խում եր իր ժամանակի թավալների վոգին, իշխանների վոգին, նրանցից մի մասի չափ բարձր չեր: Նրա դպրոցը որինավոր կարգի տակ ընկավ միայն նրա մեռնելուց հետո, իսկ նրա ժա-
մանակ մի կատարյալ ավազականոց եր, մի հակակրթության տեղի, վորտեղից կարող եյին միայն վչացած մարդիկ դուրս դալ և վոչ յերբեք բարեկրթված: Վորքան աշխատեց խնդ Շանչյանցը, վոր դպրոցին տա բարեպատշաճ դիրք և ծավալ, ներքին բարեկարգություն, բայց Ներսեսը Շանչյանցի առաջար-
կությունները ըմբռնելու չափ կրթական հասկացողություն չու-
ներ. նա առում եր ուսումնականներին և առավել ևս, յեթե ու-
սումնականը մի վարդապետ եր: «Վարդապետը յեթե ուսումնա-
կան լինի, ասել և չատ անգամ, լերը կլինի»: Այս խսկ պատճա-
ռով նա եչմիածնի Գառանդավորաց դպրոցի վրա վոչ մի ու-
շադրություն չեր դարձնում. ուսումնավախություն ուներ: եչ-

միածնի հին յեպիսկոպոսներից լսել եմ այսպիսի մի բան. «Ա-
ռաջարկում եյինք, վոր մեր դպրոցը բարեկարգե, որինավոր ու-
սուցիչներ հրավիրե», նա պատասխանում եր. «Իմ կամ իմ վարդապետը կարողանա դրել, թե՝ «Վերի խլու կատեսան, ինձ համար մի լեդր հաղող ուղարկիր»: Ասում եյին նաև այսպիսի բան, թե՝ Յեփրեմ կաթողիկոսն ասում եր. «Մեր Ներսեսը չատ խելոք է, այնքան խելոք է, վոր չներին դուրս է անում, դայլերին ներս է անում...»

Վերևում արդեն տեսանք, վոր յերբ ժողովուրդն ուզեց ու-
սումնարաններ ունենալ, վոչ վարժապետ եր ճարվում և վոչ դասագրքեր: Ի՞նչ եր չինել ուրեմն նախընթաց տարիներում Ներսեսը: Ներսեսը իր ժամանակից բարձր չեր վոչ մի բանով, իսկ բարձր մարդկանցից նա ոգուտ քաղել չուզեցավ. Ալամդա-
րյան, Թաղիադյան, Աբովյան, Շանչյան, և այլ արժանավոր անձինք բոլորն էլ դժդոհ եյին նրանից: Ազգասեր հայրապետը պետք է իր չուրջը խմբեր բոլոր ազգասեր ուսումնականներին և նրանց մշակութիյանը հանձներ ազգային խոպանացած դաշ-
տը: Մեր ներկա մտավոր զարգացումը սկսվում է Ներսեսի մահվան հետ ի միասին: Կարծես նա լիներ պատճառը, վոր հայերը մնացել եյին մտավորապես կաշկանդված: Յեվ այդ մասամբ հավանական է: Ազգի մտավոր զարգացման դեմը Ներ-
սեսի ձեռքին եր, նա պիտի դրսից մարդիկ հրավիրեր, բայց նա վոչ միայն չեր հրավիրում, այլ կամովին իրանց անձը ա-
ռաջարկողներին էլ մերժում եր: Յեվամ Մատթեոսը և ամե-
նայն սիրով իր դիրքին առավ Ներսեսից հալածված Նալբանդյա-
նին և նրա նմաններին, և ժողովրդի ձայնի իրավունքի պաշտ-
պան հանդիսացավ ընդդեմ խարեբաների և նման դանձապետնե-
րի, վորոնք Ներսեսի նորահնար ստեղծագործություններն ե-
յին...

Ո՞վ կարող է ազգից բարձր լինել,— և վոչ վոք: Ով վոր իրան ազգից բարձր է համարում և իշխում նրա վրա, այնպի-
սին մի կուռք է, վորին պետք է կործանել, այլ վոչ պաշտել: Նա եչմիածնին թողել է մի լիճ և մի անասուն, բայց իր ազգա-
կաններին տասնապատիկ ավելի յե թողել...

Յերիտասարդությունն որեցոր ավելի ուժեղացավ: Ժողո-
վրդի մտավոր չարժման անիվը հաղող ընթացք ստացավ և ա-

բոլոր պահպանվել թերությունները և մեռելային անդրծությունը: Այդ մարդը տասնչորս տարի առաջնորդությունը արավ մի ընդարձակ թեմում և ամենայն տեղ տարածեց իր ամլության սիրտը չնորհքը առանց մի վորևե հիշատակության արժանի բան թողնելու: Դա վնասակար եր իրրև ի ղուր յերկիր խափանող մի անպտուղ ծառ: Վոչինչ չեր քանդում, վոչհետև այդ ևս մի բան անել ինչանակեր, ինչպես և չեր չինում վոչինչ: Բայց վոչ չինողներին և վոչ քանդողներին արղելք չեր լինում: Նա ինքն ասում եր շատ անգամ հետևյալ ճառը. «Ցես մի վանական մարդ եմ, աշխարհք չտեսած, աշխարհին անծանոթ, աշխարհին, վոր լիքն և հոտար ու մեկ փորձանքներով: Ցեվ աշխատում եմ վոչ թե մի վորևե ողուտ տալ, վոր իմ կարողությունից վեր է, այլ ամենայն ջանք գործ եմ դնում, վոր յերթե հնար է՝ վնաս չտամ: Ուտի ողուտ ինձանից մի սպասեք, այլ բավականացեք չտված վնասով: Ցես նոր բան տալ չեմ կարող, այլ դոհ կլինիմ, յերթե կարողանամ յեղածը պահել: Վառնորս աղոթեցեք աստուծո վառն իմ, զի տացե ինձ զկարողություն պահպանելու զձեզ անվտանգ ամենայն փորձությենե աշխարհիս. Ամեն»:

Սրբազանի այս ճառը, վոր թե ուղիղ կլուսած և նախամտածած խոսքեր եյին և թե ճշմարիտ, նրա պաշտպան աղվեսները սրբազանի համեստությանն եյին վերագրում, վոր սխալ եր բոլորովին: Նա ինքը թեև չուներ զարգացած խելք, բառիս բարոյական նշանակությամբ, բայց իրրև փորձառու հայր տիպար իր բնական խելքովը շատ բարձր եր իր աղվեսներից և գիտեր նրանցից ողուտ քաղել առանց վնասվելու: Նա շատ լավ եր նմանում, վոր վոչինչ չչինելը, գործունյա մարդու, ուսումնասերի, բարերարի և հայրենասերի համբավ չստանալը, թե ներկայումս և թե ապագայում իրան համար շատ ողտակար է: Նա այս լավ գիտեր, վոր ասել է նա հետևում եր մի այնպիսի քաղաքագիտության, վորին անծանոթ եյին նրա աղվեսները: Սակայն նա այս քաղաքագիտությանը զուտալ և ակամա չեր հետևում: Նա ինքը ի բնե և ըստ սովորության ծանրաչարժ մարդ եր, ինչպես իր տեսած բոլոր հին հսկա և հաստատուր յեկեղոպտոսները իրանց արամադրական չարժմունքներով և քրմապետական ձևերով.— ի բնե ժլատ, նկատեց միայն, վոր այդ հատկությունները իր վիճակի համար ձեռնտու պայմաններ են, ավելի ևս հանդարտվեց և հաստատվեց նրանում: Մնացածը ինքըն իրան պիտի լիներ ժողովրդի ձայնի խելոքած ժամանակ...

ռաջ գնաց աննշան խոչնդոտների միայն հանդիպելով: Կարոտություն եր զգացվում միայն մի նոր ժողովրդական առաջնորդի: Ցեղած առաջնորդի և յերիտասարդության մեջ համերաշխություն չկար: Ցեղած առաջնորդը Ներսեսի չավղովն եր ուզում գնալ, նրա պես միապետական դիրք եր բռնել, ժողովրդին իբրավունք ու ձայն չեր տալիս պլորոցական գործում: Իսկ ժողովուրդը, վոր Ներսեսին արդեն սրբացրել եր սրբազան տարիներում, այժմ նրա տեղը վոչ վոքի չեր գտնիլ, ուր մնաց վոր ժողովրդին հավատացրել եյին, վոր Ներսեսին թունավորել է նրա տեղը բռնել ուզեցողը: Թե սա մի զրպարտություն եր, այն ժամանակ այդ ասել վոչ վոք չեր կարող· յերբ վոր կրքերը յեռում են, այնտեղ արդար և մեղավոր հարցնող չի լինում այլևս: Բավական է, վոր բամբասվեցար, զրպարտվեցար, պետք է մի կողմ քաշվես, մինչև պատմությունը դա քեզ արդարացնելու: Առաջնորդը մի մոլեռանդ մարդ եր, հնադավան հայ· այս եր նրա բոլոր մեղավորությունը· նա չատերին հալածում եր իրրև քողոքական հոգվով տոդորվածների, մինչև անգամ հայտնում եր ուր պետք է, վոր հսկողության տակ ունենան այդ մարդկանցը: Բայց նա այդ բոլորն անում եր կրոնական մոլեռանդությունից, նա այդ համարում եր ճշմարիտ ազգասիրություն: Նա յեղած յեպիսկոպոսներից ամենից ազգասեր եր, ամենից ուսումնասեր, ամենից գործունյա, ամենից դիմոտ և ջառատաձեռն: Բայց և ամենքի աչքումն ատելի յեր նա, վորովհետև կարողացել եր կաթողիկոսին դրսվել և նրա միակ մտերիմը հանդիսանալ: Կաթողիկոսի մահից հետո զրկվելով նրա պաշտպանությունից, մնաց յերկու կրակի մեջ— ժողովրդի և մխթարանության, և նա հեռացավ գնաց, քաշվեց իր վազեմի վանքը— Սանահին, ուր պետք է ասել ավելի մեծ գործեր ուներ կատարած իր վարդապետ յեղած ժամանակ իբրև ուսուցիչ: Նա բազմաթիվ հայկազան և կրոնասեր քահանաներ տվավ Գուգարաց աշխարհին, վորպիսիք չեն դուրս յեկած Ներսեսյան դպրոցից:

Հին առաջնորդը գնաց և նրա տեղ յեկավ նորը: Լավ առաջնորդի սով լինելով յեկողն ամենից լավ եր համարվում: Հիրավի նա թեև մի ուժետ, թուլ, դանդաղ, անգործունյա, արծաթասեր և խավարամիտ մարդ եր, բայց բնականաբար իր նախորդի թշնամիների— այն է ղորեղ յերիտասարդության կողմն անցնելով՝ նրանց պաշտպանության տակ պատսպարվեցան նրա

ՎԵՐՋԱԲԱՆ

Մեռնիլ կա, ապրիլ կա, ասացի, յեկ մեր մտավոր չարժման սկզբի տարիներին ստացած տպավորութիւնս դրի առնեմ իբրև ականատես և մասամբ նաև իբրև դեր խաղացած այդ կյանքումը, յեթե վոչ դրով, դեթ խոսքով և գործով: Յեվ ահա պըտըտեցի, վոր մեր ներկա սերունդը չմոռանա պատկառանքով հիշել իր նախորդներին, մտավոր չարժման կտրապետներին, վորոնց անուններն արդեն հայոնի յեն գրականութիւնի մեջ:

Հինդերորդ դարում մի քանիսի և այն էլ մի քանի տարում արած թարգմանութիւններն ու չարադրութիւնները մի քանի դարերի համար կենատու պաչար դարձան: Ակա մի պատմական օրենք է: Մի ազգի քաղաքական ընդմիջումները, ընդհատումները կարող չեն մահացու լինել, յեթե նա անցյալից ստացած մի աննդարար բարոյական և մտավոր պաչար ունի: Հատնում է այդ պաչարը կամ կորցնում իր աննդարար հատկութիւնը, և ահա բարոյական մահը մոտենում է իր դաժան կերպարանքով: Ցերևակայեցեք ձեզ մի լողորդ: Դեսը կամ ծովի ալիքները քըշած տանում են նրան. նա հոգնել է, թուլացել է, էլ չի կարողանում մաքառել կատաղի ալիքների դեմ, և ջրասույզ լինելն անխուսափելի յե: Ցեվ ահա վորտեղից վորտեղ մի թուփ, մի ժայռ է հանդիպում, մի բաց յերես վեմ է պատահում, կամ մի անմարդաբնակ կղզի, նա բռնում է մեկից կամ դուրս է դալիս մյուսի վրա, հագստանում է, նոր ուժ է ստանում և նոր է նորը մաքառելու կարողութիւն:

Մեջ ընդ մեջ քաղաքական վերակենդանութիւնը նոր ուժ է տալիս մաքառելու մինչև վոր դարձյալ կարող լինի մի անգամ ևս վերակենդանանալ: Բայց պետք է հույս ունենալ, պետք է համառ ունենալ. և ի՞նչն է, վոր տալիս է այդ հույսն ու համառը, յեթե վոչ Անցյալի հիշատակը, վորի պահողը անցելուց մնացած գրականութիւնն է, վոր դաստիարակում է մի բարոյական և մտավոր աննդարար պաչար նոր կյանք ստանալու համար:

Աննդարար գրականութիւնը մեզ պես մի ազգ պետք է ամեն բանից զերադասե, այս պատճառով, վերջացնելով խոսքս, չեմ կարող առանց հիշատակութեան թողնել Թադևոսյանցին, Աբովյանցին, Նազարյանցին, Նալբանդյանցին, Ալպաբեկյանին և մեր բանաստեղծներին— Պատկանյանին և Շահազիզյանին, վորոնց բռնած ուղղութեան և հայտնած մտքերի ազդեցութեան

տակ աճում և զարգանում եր նույն ժամանակվա նոր սերունդը, վորից բողբոջելով ծլեցին և ծաղկեցին նշանավոր բանաստերները, վիպասանները, թարգմանիչները և խմբագիր-հրատարակիչները: Այդ չրջանը նույնքան վտանավոր է, ինչքան և առաջինը, բայց այդ մասին դրելը թողնում եմ հետնորդներին:

1890

«Հանդես գրականական և պատմականի»
Զորրորդ գիրք. 1890 թ.

«ՄԻ ԹԵԹԵՎ ՀՐԱՀԱՆԳ ՄԵՐ ԼԵԶՎԻ ՈՒՂՂԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀՈԴՎԱԾԻՑ «ԱՂԲՅՈՒՐԻ» ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ԳԵՐԱԶՆԻՎ ՄԱՐԿՈՍ ԱՂԱԲԵԿՅԱՆԻՆ

Խորին հարգանոք

ՆՎԻՐՈՒՄ Ե ԻՐ ԳՐԱՇԱՐ ՂԱԶԱՐԻԿԸ

«Աղբյուրի» ներկա՝ համարում մեծ. պ. Ե. Ալեխսյանը, իբրև դրաչար պատվել է ինձ մի զողարիկ վտանավորով: Ցես եղ իմ այս փոքրիկ աշխատութիւնը, որ թեպետ բանաստեղծութիւն չէ, բայց գարձյալ մի լցված և ջերմ սրտի փղձուկ է, նվիրում եմ այն Գերաղնիվ Հայ Հեղինակին, որի դրաչարը լինելու բախտ ու պատիվն ունեցել եմ յես մեղանից քսանհինը տարի առաջ:

Ի հարկե այն որից սկսած մինչև այսոր յես միշտ դրաչար չեմ մնացել, այլ յեղել եմ տպարանապետ, ոգնական-խմբագիր, անոգնական խմբագիր, ուսուցիչ, տեսուչ, թեմական վերատեսուչ, հեղինակ, թարգմանիչ, և այլն, բայց այս ամենը ծնունդ են առել իմ դրաչարութիւնից, և այս՝ չնորհիվ պ. Մարկոս Աղաբեկյանի, այն Աղնիվ հայի, որ հայրենասիրական հոգի յե փչել իմ մեջ և թև տալով թռցրել է մինչև Մոսկվա և Պետերբուրգ: Այս մեծ քաղաքներում յես իմ դրաչարութեանս բարերարութեամբ և ոժանդակութեամբ չարունակել եմ ուսումս, ձեռք եմ բերել մտավոր զարգացում վոչ սոսկ ինքնակրթութեամբ, այլ և ոգնութեամբ մի ամբողջ խումբի (ռուս ուսանողների)— Գուրևիչի (Փիլոլոգ), Սիմոնովիչի (քնագետ), Սոկուլսկու (մաթեմատիկ), Մասալովի (բժիշկ) և

ուրիշների[1]): Սրանից չատ հետո յեր, վոր մի փառավոր յերեկո Գերաղնիվ պ. Կ. Յեղյանի տանը, պ. Հուբեն Ջալալյանը կարդաց մի այսպիսի արձանագրութիւն՝

«Պարոն Ղազարոս Աղայանցը միաձայն ընտրվեցավ անդամ հայ ուսանողական ժողովի»:

Յեվ այս յեղավ առանց իմ դիտութեան, և այս արին դեռևս իմ մեջ վոչ մի բան չտեսած: Ներկա եյին ժամանակակից բոլոր ուսանողները— Արծրունիք Դրիգոր, Անդրեաս և Սեներքերիմ, Բարայան Ալեխիք, Մարգարյան Ջհան, Գրիգորյան Զաքարիա, Մարտիրոսյան Սիմեոն, Քալանթարյան Նիկողայոս, Յեվանգուլյան Գեվորգ և չատ ուրիշներ: Այս դեպքից յերկու չաբաթ անցած յես կարդացի նույն ժողովում իմ «Արութիւն և Մանվելի» առաջին դլխները: Տե՛ր Աստված, ի՛նչ աղմուկ, ի՛նչ դղրդոց բարձրացրին մեր ուսանողները, ի՛նչ ծափահարութիւն... (Պարոննե՛ր, ո՞ւր է այսոր ձեր այն ժամանակվա հոգին, սիրտը, դաղափարը, սերը: Հավատացեք, վոր յես ելի մինուճարն եմ, և ավելի ևս, մխայն դուք եք փոխվել, բացի մի յերկուսից):

Այս դեպքից հետո յես նոր հոգի ստացա, նոր թև առա: Ինձ ընտրեցին ուսանողական յերկերի լեզվի մշակող: Յես սկսեցի մի սիստեմի տակ ձգել իմ ինքնակրթութեան ազատ պարապմունքը, վոր մտնեմ համալսարան, բայց հակառակ իրը ուրիչ կերպ անորինեց, դուցե ավելի լավ: Դիպլոմը մոդայից ընկել եր. յես ևս յենթարկվելով ժամանակի հոսանքին, իրավունքին վոչինչ նշանակութիւն չտվի, այլ դործին մխայն, և սկսեցի դործել... առանց իրավունքի...

Ձկա դիտութիւն առանց դիտութեան: Յեթե մեկ մարդ մի բան ուղիղ դիտե, յեթե դիտե, թե ինչ դիտե և ինչ չդիտե, այս ապացույց է, վոր նա դիտութիւն ունի: Այս ապացույցի առջև ամենայն դիպլոմ հավասար է դրոյի: Այս հասարակ և պարզ ճշմարտութիւնը մերոնք կամովին ուրացան: Նրանք Աղայանցի դլխարկը ըստ առածին ալրոտ տեսան, և կարծեցին, թե ջաղացպան է: Տեսան վոր դիպլոմ չունի, կարծեցին, թե ուսում և դիտութիւն ել չունի:

---

[1] Վորպեսզի մեծապատիվ պ. բժիշկ Ջհան Մարգարյանը ինձ ապերախտ չհամարեն, պարտք եմ համարում շնորհակալությամբ հայտնել, վոր ալգեբրայից մի քանի դաս ել նրանից եմ առել

Այսպես հավատացրին և ուրիշներին, այսպես տրամադրեցին դեպի ինձ իմ ընթերցողներին և աշխատեցին իմ հեղինակությունը վայր ձգել:

Յեվ վո՞ր դիպլոմավոր բթամիտը կուզի, վոր մի անդիպլոմ մարդ իրանից ավելի մեծ հռչակ ունենա: Բայց ո՞վ կարող է ավելի ուսում ունենալ,— ադյոք նա՞, վոր միանգամ առել պրծել է, թե նա՞, վոր չարունակ առնում է և տալիս, քչից՝ քչէ՝ չատից՝ չատ. վոր չարունակ ուսանում է և ուսուցանում. վորի մտքի աճումն ու զարգացումը կանգ առնել չունի, չի նեխում, չի փտում, այլ որեցոր ավելի յե բեղմնավորվում, նորնոր ծաղիկներ և տալիս և նորնոր պտուղներ:

Մարդում միտքը մի զարմանալի բան է: «Մի միտք ճիշտ ըմբռնելու համար— ասում է մի հոդերան— հարկավոր է նույն մտքի վրա առաջուց մտածած լինել»: Շատ յերկասյրի է ասված, բայց սայրերից մեկը շատ սուր է: Այս մի անհերքելի ճշմարտություն է: Յեթե մեկը Շեքսպիրի վատ թարգմանությունից չի կարող ոգտվել, նա կարող չէ ոգտվել, յեթե բուն իսկ անգլիացի լինի և բուն բնագիրը ձեռքին: Յեվ արդեն հայտնի յե, թե բուն իսկ անգլիացիք վորքան ուշ հասկացան Շեքսպիրի դինը: Հասկացողը մի թեվից էլ կհասկանա, իսկ չհասկացողի համար թեկուզ մի ահագին կոնցերտ սարքիր: Այսպես վոր չլիներ, միևնույն դիրքը, դիտությունը, վարձը, հանգամանքը ամենից վրա միատես կազդեր, ամենքն էլ միատես կոպտավեյին: Յեթե այսպես չլիներ, ամեն մարդ էլ մի ինձորի ընկնելուց Նյուտոնի պես յերկրից ձգողության դյուտը կաներ, կոլումբի հացը կկտրեր, Գալիլեյի պատիվն ու փառքը կկլեր: Բարձրը և վսեմը բարձրին և վսեմին է ըմբռնելի, իսկ ստորին մտքի տեր յեղողի ականջին պետք է դուռնա տչես, վոր պարելու աչխույժ ստանա, հորթի պես արտինդ տա. և սրա համար էլ քեզ կչինե Շեքսպիր. չե՞ վոր իշի սոխակն աքաղաղն է: Պիտի աքաղաղ լինես, վոր քեզ սոխակ անվանեն:

Ինչո՞ւ յեն հայհոյում Աղայանցին Պոլսից մինչև Թիֆլիս: Փոքր մարդ չե ուրեմն Աղայանցն իր դործումը, յեթե այսչատ խոշոր ընդդիմախոսներ ունե, յեթե նույնիսկ բեվեռագետ Տերվիչյան հայրիկին յերկար վայրաբանելու նյութ է տալիս: Յեվ ո՞վ է տվել Աղայանցին այս ուժը, այս զորությունը, յեթե վոչ դիտությունը, յեթե վոչ դրական կրթությունը, վոր միայն կարող է մարդուն ինքնաճանաչության բերել, ցույց տալ, թե ինչ դենքեր ունի ինքը, ինչ ընդունակություն, և ապա ուրեմն ինչ կարող է ասել կամ չասել դրական պատկառելի ասպարիզում:

Գիտությա՞ն ադյոք, թե իմաստակության, բանաքաղության և բանադողության դրոշմ են կրում նույնիսկ այս ասածներս: Յես մեղավոր չեմ, յեթե իմ ասածները տասնհինդ տարի անցնելուց հետո յեն ըմբռնում և կրկնում թուխթակի պես, իսկ անելուս լոպեչին— ըմբռնելու կարողություն չեն ունենում և մինչև անգամ դլխիվայր և թյուր են ըմբռնում, ինչպես մեր Պերճի մասին դրածս, բանաստեղծ Հովհաննիսյանի մասին դրածս: Յեվ ինչո՞ւ. վորովհետև վոչ յես եմ իրանց հանդի մտածում և վոչ նրանք՝ իմ. վորովհետև նրանց մտածելու յեղանակը փիլիսոփայական չե, տրամաբանական չե, այլ փաստաբանական, այսինքն նոր ձևի սխոլաստիքական, վոր վատթարադույն ևս է քան դիհինն:

Յեվ, «զարմանք մի մեծ այս են» (ուշադրության դարձնեք խնդրեմ), ինձ հայհոյում և հալածում են նաև այն պարոնները, վորոնք իմ խեղկատակ կապիկներն են, վորոնք ինձանից են բան ու վոճ սովորում, ինձանից են սովորում դասագիրք կազմելը, իմ հեղինակություններն են դողանում, տպում, վող աչխատում, հարստանում և ինձ հարստահարում:

Բռանե՛ր և բրեանե՛ր, մեղրս ծծում եք, դոնե մի փոքր յերախտապարտություն զդացեք: Իսկ դուք նմանում եք առակի խոզին, վոր կաղինը լափում եր և կաղնու արմատները վորվեղրում: Խոզեր, մի կոխատեք մարգարիտներս, մի վորվրեք արմատներս, թողեք պտուղ տամ, վոր ելնի դուք զարհրմար անեք: Ահա թե ինչ կարող է ասել ձեղ դրաչարը, վորի մատներից՝ չատ տատ սրելուց ու չարելուց՝ այնքան է արյուն հոսել, ինչքան ձեր սև յերեսից քրտինք չի թափվել, և վորի կրթությունը՝ իր ճուլած տառերի նման հրաչեկ բովով է անցել, և վոչ թե չատերի նման պիրոժնի ուսելով թափառել և յեվրոպական վողոցներում և հայրական վողով դնած դիպլոմով վերադարձել: Կեղծավոր վարխեցեք, յեթե ինձ վոչ հավատայք, սակայն դործոցն հավատացեք:

Աղնվադույն Հայ, պ. Աղաբեգյան. ի՞նչ դիտեն այս մարդիկը, թե տատն ի՞նչ է և տատի զորությունն ինչ: Ի՞նչ դիտեն, թե ինչ կնշանակե տատ ճուլել, տատ սրել, տատ չարել, մանավանդ իմ ժամանակ, յերբ ամեն ինչ ճեռքով եր չինվում, նո-

բանոր մեքենաները չկային: Ի՞նչ դիտեն, թե ի՞նչ կնշանակե որ ու դիշեր վոտքի վրա կանգնած լինել, անքնությունից աչքերն արնով լցնել, շատ կանգնելուց վոտքերը ջրով: Պարոն Ռափայել Պատկանյանը վկա յե այսպիսի մի դեպքի: Մի քանի որ անքնությունից աչքերս արյունով լցվեցան, յես վայր ընկա ինչպես մեռած: Դործն շատպով եր, պատրաստվում եր թադժառանգին ընծայելու համար: Յերբոր յես վայր ընկա աչքերս արյունով լցված, մեր Ռափայելը շատ ափսոսաց, մի կողմից իմ աչքերի՝ մյուս կողմից դործի ուշանալու համար: Շատ բան ունիմ ասելու և Նաղարյանցի և Այվազովսկու մասին, բայց ավատ՞ս, վոր մեռած են... Պարոններ, լավ և մի՛ կաթիլ ազնվություն, քան թե մի կարաս լիքը քանքար և խմասուրթյուն: Ի՞նչ դիտեն, պ. Աղաբեկյան, մեր ժամանակի դրչակները, թե ինչ դրության մեջ եյին մեր տպարանները, յերբ վոր յերկու պատանի— Միքայել Բաղայանց և Ղ. Աղայանց, դյուցազնական սիրով չաղկապված, ճանապարհ ընկան համարյա վոտքով և վեց ամսում հազիվ հասան մինչև Մոսկվա: Ամենաղարհուրելի և քամնելի, հեքյաթներում անդամ չլսված տանջանքներով մենք վերջապես հասանք մեր նպատակին— կատարելադործեցինք մեր արհեստը: Գևորգ կաթողիկոսը դնահատեց մեր դառն աշխատությունը, հրամիրեց ԵՀմիածին, վորի հնադարյան քայքայված տպարանը վերանորոգեցինք, յես դարձա տպարանապետ և խմբադիր «Արարատ» ամսադրի, իսկ Միքայելը դլխավոր վարպետ ձուլարանի, վոր քաջհմուտ եր այդ դործին: Լավ աշակերտներ հասցրինք և տպարանին այն կերպարանքն ու ընթացքը տվինք, վորի մեջ դտնվում և նա այսոր: Հարցրեք այդտեղ սրբազան Մանկունուն, վորի մեջ դտնվում և նա այսոր: Հարցրեք այդտեղ սրբազան Մանկունուն, և նա կպատմե ձեզ ավելի մանրամասն: Բայց յե՞րբ, վո՞ր դարում և պատահել, վոր հայ ազգը դնահատե և վարձատրե իր անձնվեր մշակներին, իր հարազատ զավակներին: Այն Միքայելը, վոր ԵՀմիածնին տպարան տվավ, այսոր Ղարաբաղում իր հայրենի մի յետ ընկած դյուղի մեջ վերջին չքավորության և աղքատության մեջ և դտնվում. չկիա Գևորգ կաթողիկոս, վոր ողնության ձեռք մեկներ, վոր ողներ իմ սրտիս հատորին, իմ աննման, իմ ապնիվ Միքայելին, վոր ինձանից տասնապատիկ ավելի յե տանջ-

վել, լինելով միշտ ձուլարանում, վորից թռնավորվեց...[1]):

Ի՞նչ բան և արհեստը մեզանում, քանի վոր չարչիության հոդին ապականել և նաև այն մարդկանց սիրտը, վորոնք պիտի պաշտպան հանդիսանային 19-րդ դարու Մատթեոս Ծարեցուն և Ղուկաս Վանանդեցուն: Վողբա՛մ դքեզ, Հայոց աշխարհ, ով դու խաղալիք Մեհրուժանների և Վասակների ձեռքում: Կհասկանաք այժմ, աղնվագույն հայ, թե ինչու այսքան զայրացած եմ դրում այս տողերը: Թարեր պիտի աղաղակեյին, յերկինքը պիտի դղրդար այսպիսի անիրավ անտարբերության դեմ... Միայն մեր չարչիական աշխարհում կարելի յե դրաչարությունը արհամարհական տիտղոս չինել և մարսել: Լասպալի աշխարհում կարող չեյին մարսել: Յեթե դրաչարությունից Աղայանց դառնալը հեշտ լիներ, ամեն հայ դրաչար՝ Աղայանց կդառնար և ամեն ամերիկացի դրաչար՝ Ֆրանկլին: Բայց նույնիսկ ամենահեռին դրաչարն անգամ բարոյապես շատ ու շատ վեր և մեր էլեդրաչար դրչակներից, վորոնցից վոչ մի դրաչար բան չէ կարող սովորել, այլ կըշարե միայն, ցավելով հեղինակի մտավոր թշվառության վրա: Այո՛, լավ հեղինակի առաջին դնահատողը դրաչարն է[2]):

Յես յես հնար պիտի տամ այս մեղավորներին, վոր ապաշխարեն: Յես հնար պիտի տամ պ. Արդար Հովհաննիսյանին, վորի դեմ և ուղղած բոլոր իմ զայրույթը և վոչ մի ուրիշի, վոր նա ցեխը ցեխով չլվանա, այլ մաքուր և վճիտ ջրով:

Յեվ իմ արևը չպիտի մայր մտնի, մինչև չտեսնեմ արդարությունը վերականդնած եր լուսավայլ ճառագայթներով, մինչև չտեսնեմ յերադլխյան ոչտիը ջախջախված, քարացած քաղաքը չունչ առած...[3]):

---

1 Այս հանգամանքի վրա դարձնում ենք դերապատիվ Ներսես յեպիսկոպոսի ուշադրությունը: Դուք, սրբազան, վոր ամենից լավ եք ճանաչում Միքայելի գործը՝ աշակերտած լինելով նրան ձուլարանում, Ն. Վեհափառության ուշադրությունը դարձրեք մեր ազգային նահատակի վրա և մի թեթև թոշակ նշանակել տվեք:

2 Գիտեք արդյոք, վոր յեթե Աղայանցը դրաչար յեղած չլիներ, արհեստի սիրահար չլիներ, «Անահիտ» չեր գրիլ:

3 Առաջիկա տարին «Աղբյուրի» համարներից մեկում մենք կտպագրենք պ. Աղաբեգյանի պատկերը, իր համառոտ կենսագրությամբ, վոր մեր ժամանակակից թզուկներն իմանան, վոր իրանցից առաջ հսկաներ եյին ապրում մեր գրականության մեջ:

Ծ. Խ.

ՎԵՐՋԱԲԱՆ

1.

Մեր դրական լեզուն դեռևս մի մանուկ է, ուրեմն ավելի ևս կարոտ խնամատարության: Ազնաք է բարձրթողի անել մեր մանուկ լեզվի կրթության հոգսը, բայց վոչ եվ պետք է՝ ըստ քմայ՝ նորելուկներով զարդարել նրան և քաղցրեղեններով կերակրել: Վո՛չ, այլ պետք է ուսումնասիրել նրա բնավորությունը, նրա ներքին հոգեկան նրբությունները, նրա տարբերությունը մի ոտար լեզվի համեմատությամբ, վերջապես նրա կատարելիք դերը թե ներկայի և թե ապագայի վերաբերությամբ և այլ այս տեսակ շատ բաներ: Այս ամենի ցույց տալը վոչ մեկ հոդու դործ է և վոչ մեկ ժամանակվա: Այս անգամ չես խոսելի ամենատարրական ուղղագրության վրա: Մեծ բաներին ձեռք տալը իմ ուժից շատ և շատ վեր է: Թող մեծ բաների մասին եվ մեծ մարդիկը դրեն, և մենք ամենայն սիրով կոգնենք նրանց մեր անձնական փորձառությամբ և կատարածենք նրանց հայտնած ճշմարտությունը, իսկ սխալի դեմ կբողոքենք և կկռվենք, վորովհետև շատ անգամ մեծ մարդկանց արած սխալն եվ է մեծ լինում, ուրեմն և ավելի վնասակար, մանավանդ վոր մեծի անունն ու հռչակը նրա սուտն եվ ճշմարտի տեղ է ընդունել տալիս և ճնշում է դործում փոքրերի հայտնած ճշմարտության վրա:

2.

Մի ազգի դրականությանը կարող են բաներ տալ նույն ազգի բոլոր բարբառները, և մինչև անգամ ոտար լեզուներն ևս, բայց նրա էրականությունը— բոլոր բարբառներից միայն մեկը կարող է տալ, վանդի ամեն մի բարբառ ունի իր առանձին քերականությունը, և այն շատ ճիշտ և կանոնավոր: Վորպես-

զի դրական լեզուն ևս վորևե բարբառի չափ ճիշտ լինի և կանոնավոր, յեղած բարբառներից նա պետք է միայն մեկի քերականությանը հպատակի:

Յեթե մի անգամ ընդմիշտ միայն մեկ (և վոչ մի քանի) բարբառի քերականություն ունենանք մեզ առաջնորդ, այնուհետև ամեն դժվարություն կվերանա մեջտեղից և մենք կունենանք մեր դրական լեզվի համար կենդանի և ժողովրդական քերականություն, բոլորովին կանոնավոր, ուրեմն և ուսանելու համար շատ դյուրին:

Մի պարզ որինակ բերենք՝ մեր այս ասածն ավելի նկատելի կացուցանելու համար:

Մեր դլխավոր բարբառներից վոչ մեկում, բացի Ալարատյան բարբառից, չկա բացառականի Ից վերջավորություն: Թիֆլիսի բարբառում բացառականի վերջավորությունն է՝ է, մէն, էմէն. Ղարաբաղի բարբառում՝ ա, ան, աննայ. Տաճկաստանի բարբառներում՝ է, էն, մէն. նույն տեղի դրական լեզվի մեջ՝ է, էն, մէն. դրոց լեզվում, է, նէ, էն, մէ, մէն. յեթե կա դրոց լեզվում ից, ոց, ոց, ունց, պրանք հոդնակի յեն: Յեվ չնայած մի կողմում յեղած այս ահագին բազմությանը, մեր դրական լեզվի մեջ հաստատուն դիրք է բռնել Ալարատյան բարբառի ից վերջավորությունը: Մեր մեջ չատերը ջանք արին, և առավելապես տպագնավոր Բամատ-Բաթիկան, վոր ից-ը վերացնեն և նրա տեղ դործածական չինեն է-ն, բայց հնար չեղավ: Յեվ ինչո՞ւ, ի՞նչն է սրա պատճառը: Պատճառը՝ մահկանացվի լեզվով ասենք՝ այն է, վոր չի սազ գալիս: Ընդունում ենք Ալարատյան բարբառի բոլոր հոլովները, և ուղում ենք՝ ըստ քմայ փոխել նրա մեկ հոլովի կեսը:

Թե ինչո՞ւ մեր դրական լեզվի քերականությունը Ալարատյան բարբառն է տվել, իր վո՞ր արժանավորության համար և ի՞նչ հանդամանքների չնորհիվ, սրա համար հարկավոր է պատմական և լեզվաբանական հետազոտություն, վորին մենք ձեռք չենք տալ այստեղ, թեև շատ վատներ ունինք այս առիթով ժողոված: Առայժմ ընդունենք մի իրողություն, վոր արդեն կատարված է և կատարվել է վոչ թե վնաս, այլ հոդուտ մեր մատաղ դրականության: Մեզ հարկավոր է միայն ոգուտ քաղել արդեն կատարված իրողությունից:

Հիրավի, ինչքո՞ն նման կլինի մեր դրական լեզուն, յեթե նրա բառերն այնպես խոնարհենք, ինչպես խոնարհում են Թիֆլիսի-

քարբառում, անուններն այնպես հոլովենք, ինչպես հոլովվում են Արարատյան բարբառում, վորոշ և անորոշ հոդերը վանեցու նման դործածենք, լեզվի ճարտասանությունը դերմաներենից վոխ առնենք, տրամաբանությունը՝ ռուսերենից: Ցեվ մեզանում այսոր՝ առանց չափազանցության ասած՝ ճիշտ այսպես են վարվում: Առավել ևս վատ, վորովհետև նույնիսկ բայի մի ժամանակը մի բարբառից են վերցնում, մյուսը մյուս, և գործ չեն դնում մեր բայերի բոլոր այն ձևերը, վորոնք ռուսաց լեզվումը չկան, ինչպես և չեն դործ ածում մեր այն դերանունները, վորոնք նույնպես ռուսաց լեզվումը չկան. առհասարակ մեր բուն աղգային վոճերը մնում են անդործադրելի[1]): Արդյոք այսպե՞ս

---

[1] Առաջարկում ենք մեր այն լեզվագետներին, վորոնք հավասարապես լավ գիտեն թե հայերեն և թե ռուսերեն, ինչպես պ. Սարգիս Սարգսյանը և այլը, վոր ցույց տան մեզ հիշյալ յերկու լեզվի մեջ յեղած գլխավոր և աչքի ընկնող տարբերությունը և սրանից առաջ յեկած մեր սխալները: Որինակ մեր լեզվում կան՝ սա, դա, այս, այդ, այն, սույն, դույն, նույն, իսկ ռուսաց մեջ կան сей, վոր այնքան գործածական չե և մեկ этот, վոր չգիտեմ անդեմ ասեմ, թե յեռադեմ: Մեր լեզվի մեջ կան այսպես, այդպես, այնպես, սույնպես, դույնպես, նույնպես, նմանապես, դմանապես, նմանապես, իսկ ռուսաց մեջ միայն մեկ так, վոր թե անդեմ ե, թե յեռադեմ և թե մինչև անգամ անոժանդակ մի բայ Մեր լեզվի մեջ կան լինել և եմ, ես, է, իսկ ռուսաց մեջ միայն быть և был և նրանք ել անդեմ և յեռադեմ (ասում եմ անդեմ, վորովհետև ռուսաց մեջ չկան մեր վորոշ հոդերը ս, դ, ն կամ ը. և յեռադեմ նրա համար, վոր դեմքի համար ել ձևում են իրանց ձևի մեջ անփոփոխ. ասում են я, ты, он был): Մենք մի քանի հատ անցյալ ունենք և մի քանի անցյալ ապառնի, իսկ ռուսները յերկու անցյալ միայն, այն ել անդեմ կամ յեռադեմ: Իհարկե ռուսաց լեզվի մեջ ել շատ բաներ կան, վոր մենք չունենք, բայց բանն այս ե, վոր մենք չենք կարող նրանց լեզվին միայն հատուկ նրբություններն ու ձևերը, նրանց քերականական սեռը մեր մեջ մտցնել, բայց մեր ունեցածիցն ել չպետք ե զրկվենք միայն նրա համար, վոր ռուսները մեզ պես չեն ասում: Ցեթե ռուսները մեզ պես չեն ասում, այլ բուն ռուսերեն, ինչու մենք ել բուն հայերեն չասենք, այլ ռուսերենի նման: Այս տարբերության հետազոտությունը մեծապես կնպաստե մեր լեզվի ուղղությանը, ինքնուրույնությանը և վոր առավելն ե նրա ճոխությանը և նրբությանը: Ցեվ վորքան շուտ լինի, այնքան լավ ե, վորովհետև հաստատված սխալը դժվար կլինի դուրս մղել և մինչև անգամ՝ անկարելի Ասած ե՝ «գիժը մի քար գցեց ծովը, հազար խելոք չկարացին հանել»: Բավական չե ազգասեր և հայրենասեր լինելը, պետք ե մի քիչ ել լեզվասեր լինել, պետք ե սիրել, պաշտել, գգվել հարազատ մոր հարազատ լեզուն. այս սերը միայն կբռնա մեր առջև լեզվի անհատնում ճոխությունը, նրա նրբությունը և քաղցրությունը: Մենք մեր աշխարհիկ լեզվի համար բառարանները

են վարվում և Գերմանիայում կամ մի ուրիշ աշխարհում, յես չգիտեմ, բայց դիտեմ հաստատ, վոր նրանք խելոք մարդիկ են և անկարելի յե, վոր մեղ նման խելագարություն անեն:

3.

Մի ժամանակ, յերբ մեր աշխարհիկ լեզուն ընդհանուր դրական լեզու դառնալու հավակնություն եր ստանում, դրաբառյանք մեծ ընդդիմություն եյին ցույց տալիս: Քանի վոր վիճը միայն նրա վրա յեր, թե ալ՞ոտք և աշխարհաբառը պաշտպանել ընդդեմ դրաբարի, եվ ուրիշ բանի վրա ուշադրություն դարձնել կարող չեյին: Թե աշխարհաբարի քերականությունը վո՞ր բարբառից պետք ե վերցնեն և ի՞նչպես,— այս խնդիրը դեռ հասունացած չեր, այս մասին դեռ ևս մի վորոշ և դիտակցական պաղպաղար չունեյին և չունին մինչև այսոր ել: Թեպետև այսուամենայնիվ մենք Արարատյան բարբառի քերականությանն ենք հետևել և ըստ արտասանության նրա ուղղադրությանը, բայց այս արել ենք բնազդմամբ և վոչ դիտակցաբար: Ցեր վոր Պերճ Պռոշյանցը դրում եր իր Սոս և Վարդիթերը, նրա մտքովն անդամ չեր կարող անց կենալ, թե ի՛նչ փառավոր և անմահ արձան ե կանգնեցնում մեր դրականության ապագա չենքի համար և վոչ նույնիսկ Աբովյանը կարող եր իր անմահ աշխատության համար այս բանը դուշակել: Մարդարեք իրանց ասածի տերը չեն. նրանց բերանով աստված ե խոսում: Այսոր իսկ մեր բանաստեղծներին զգալի չե այս վոսկեղեն մատյանների արժեքը լեզվի տեսակետից, այլապես մեր առաջարկությունը Պռոշյանցի հոբելյանը կատարելու մասին թյուր մեկնության և սառն ընդունելության չեր արժանանալ, այլ ահագին աղմուկ

չունենք: Առայժմ մեր մեջ ամեն մի բանաստեղծ ինքը պիտի լինի մի կենդանի բառարան, իսկ լինել կարող չե նա, յեթե հմուտ չե մեր գլխավոր բարբառներին Արարատյան բարբառին ծանոթ լինելը պարտավորական պիտի լինի ամեն մի բարեխիղճ գրական մշակի: Ցեթե մենք ծիծաղում ենք Պոլսո գրականության վրա և մանավանդ այն հայաստանցոց, վորոնք Պոլիս գնալով յենթարկվում են տեղական խեղեչացած բարբառին, փոխանակ իրանց բուն հայկական, կենդանի և առողջ բարբառն այնտեղ տիրապետող շինելու, վորքան առավել ծիծաղելի յեն մեր այն գավառացիք,—դարաբաղցիք, յերևանցիք, վորոնք իրենց սրբազան և կենդանի բարբառը թողած Թիֆլիսի անհնչացած, անգույն և անհոտ բարբառի քերականությանն են յենթարկվում:

և ուրախության աղաղակ կբարձրացներ մեր բոլոր դավառներում, յեթե վոչ Թիֆլիսում, ամենքն էլ կչտապեյին պսակել մեր տաղանդավոր վիպասանի ալևոր և չնորհալի դլուխը, յեթե վոչ ուրիշ բանի, դեթ իր դեմս Արարատյան բարբառի: Հարց կբարձրանար նաև մի վառավոր արձան կանդնեցնելու մեր հավերժացած Դանոեյի հիշատակին, այն ն՝ հանճարավոր Աբովյանի: Մեր նոր սերնդի այս անտարբերության պատճառը մեր նոր դրականության սխալ ընթացքն ե,— այն բանասերների, վորոնք հուլունքն աղամանդի տեղ են ընդունում և աղամանդը հուլունքի, վորոնք հանճարներին բանճար և բանճարներին հանճար են չինում: Այսպես ե կարդում և լսում նոր սերունդը նորագույն ղեներով պինավորված ահագին բանակների դեմ: Սթափեցե՛ք, սթափեցե՛ք, պարոննե՛ր, ձեր ցանած սերմերի պտուղները հասել են արդեն. ճաշակեցե՛ք և տեսե՛ք՝ քա՛ղցր են արդյոք թե՞ դա՛ռն:

4.

Այսօր յեթե մեր դրական լեզուն մի պերազանցություն ունի արևմտյան դրական լեզվից, այս այն ե միայն, վոր մեր լեզուն ունի իր համար մի կենդանի բարբառ, կենդանի քերականություն, վոր ե Արարատյան բարբառը իր հիանալի քերականությամբ, իր ուղիղ արտասանությամբ, իր լայնատարած նուրբ դարձվածներով: Վոչ մի այլ բարբառ բոլանդակությունչի տալիս Մեսրոպյան հնչյունների թիվն ու արտասանությունը, այլ միայն Արարատյան բարբառին: Ոչնինը վոչ մի հընչյուն կարոտություն չունի, քան վոր տվել և իր ծոցում հանդըստացած հանճարավոր Սուրբը[1]):

1 Մեզանում ասում են «հյուսիսափայլի լեզուն» «հայկական աշխարհի լեզուն» «մշակի լեզուն», Այս անգիտակցաբար տված տիտղոսները ցույց են տալիս աշխարհ, վոր այս լեզուներն իրանց վրա կրել են և կրում են անհատական դրոշմ և վոչ ազգային-ժողովրդական: Ասում են նմանապես, թե «Մեղունն», «Արարատը», «Փորձը» և «Արձագանքը» «լեզու չունեն», Այս ել ցույց է տալիս, վոր հիշյալ հրատարակությունների մեջ լեզվի կողմից միակերպություն չի յեղել, այլ գրել ե՝ ով ինչպես ուզեցել և Առաջինք ձեռք են գարկել լեզվի մշակությանը՝ բայց սխալ մեթոդով, իսկ վերջինք ձեռք չեն տվել այդ բանին, բայց և տեղիք են ավել բազմատեսակության, վոր ասել ե առաջինների թերության առաջքը չառնելով՝ մի քանի թերություններ ել նրանք են ավելացրել, վորով և տեղիք տվել առաջինների հաստատ մնալուն իրանց բռնած ընթացքում»

Կարդացեք ահա մեր քանքարավոր բանաստեղծի հետևյալ յերկտողիկը.

Դու տեսել ես յերկինքումը պայծառ լուսին ծագելիս.
Կամ թե կանաչ տերևի մեջ կարմիր ծիրան փայլելիս...

Ահա բուն պատկերը Արարատյան բարբառի, նրա քերականության: Վորքա՜ն կենդանություն, վորքան նրբություն և խորություն կա այս յերկու տողի մեջ:

Կամ ահա այս տողերը մեր նորագույն բանաստեղծի՝ պ. Հովհաննիսյանի.

Թե աստված ինձ պիտի մահ տա, թող մոտ գամ
Վղովղ ընկնեմ, քեզ համբուրեմ մի անգամ,
Թող արբեշում մատերովդ ինձ կախ տամ,
Հետո մի կյանք ել չի հասնիլ այս մահին:

-Զարմանալի չե ուրեմն, վոր բոլոր մյուս բարբառները իբրև աղախիններ, դլուխ են խոնարհեցնում Արարատյան չքնաղ և անթերևան թագուհու առջև:

Տաճկաստանի դրագետները կարող եյին ուղուտ քաղել Տարոնի բարբառի քերականությունից, բայց նրանք դեռևս յերկնքից ցած չեն իջել, դեռևս ի վերին Յերուսաղեմումն են թափառում: Ասում են՝ ժողովուրդն ե լեզվի, քերականության հորինողը, բայց չեն հետևում իրանց ասածին, այլ ամեն վոք իր համար մի առանձին քերականություն ե չինում, վոր չա՜տ չատ՝ տևում ե մի քանի ամիս միայն: Նրանցից են վարակվել և մեր ել անհատական քերականություն չինողները, վորոնց դործը՝ բախտավորաբես՝ նույնպես առաջ չի դնում: Մի մեծ թերություն միայն, վոր նկատվում ե մեր ու նրանց կողմից, այս այն ե, վոր նրանք չափից դուրս շատ են հակված դեպի դրաբարը, իսկ մերոնք չափից դուրս հեռացած: Մերոնք մեր դրաբարը թողած՝ ոտարի գրաբարից են վոխառություն անում: Մեր ունեցածը չքնաղ և անգործ թողնենք, բայց ինչ

Որինակ՝ «Արձագանքը» (Արձագանք գրելը աննկերելի սխալ ե) դատողություն ե տալիս լեզվի մասին, և վոչ միայն իր դատողությունն ե տալիս սխալ լեզվով, այլև ինքը վարվում ե իր տված դատողության բոլորովին հակառակ: Սրա պատճառն այն ե, վոր անլեզու թերթերը լինում են և անգույն, կամ մի տեսակ քամելիոն, վոր ամեն գույն ել կարող ե ցույց տալ:

Այսպես են լինում բոլոր ընավորություններից զուրկ, չինովի, կեղծ և գիմակավոր մարդիկը: Նրանք հավատ չունեն դեպի իրանց անձը, իրանց

վոր չունինք վոչ մեր բարբառներում և վոչ մեր դրոց լեզվում, բայց վոր անհրաժեշտ պետք է մեզ, միայն այն ժամանակ կարող ենք վոխ առնել ուտարից:

Վերջացնում եմ խոսքս, բերելով բարեկամիս նամակից հետևյալ կտորը, վոր դարձավ մեր նյութին և վերաբերում:

«Մեր լեզուն (դրական) պետք է ճանաչէ իր հարազատ մորը, սիրե՛, պաշտե՛ նրան, և նրա կաթով սնանի և զարդանա, չեթե չի ուղում դառնալ մի ոսկ պահած ու խնամած ճուտ: «Մեր դրական լեզվի հարազատ մայրը Աբարատյան հարազատ բարբառն է, այն է՝ Աշտարակա, Թանաքեռի, Ոշականա, և վոչ Ցերևան քաղաքի կամ Վաղարշապատ դյուղաքաղաքի բարբառը: Այն բարբառն է հարազատը, վոր ունի արդեն յերկու սրբազան և վոսկեղենիկ մատյաններ:

«Գրաբարը մեր դրականության մեծ մայրն է, նրա սվսման պատասխ տատիկը, այն բարեգութ և բարեսիրտ հանին, ղամ ըստ մեզ՝ նանին, վոր իր թոռան արած բոլոր չարություններին համբերում է և մինչև անդամ ժպտում, դուրդուրում է նրանց և ինչ՞ր ասես, վոր իր աննատակ ծոցիցը չի հանում ատելցնում:

«Ղարաբաղի բարբառը մեր դրականության մոր յերեց քույրն է, հեռու տեղ մարդու դնացած, նրանից սարերով անջատված, մութ աչխարհ ընկած, սակայն իմանում է, թե ինչ մեծ փառքի մեջ է իր վոքրիկ քույրը և ուրախանում է, առանց նախանձելու, և տալիս է չատ ոգտակար խորհուրդները, և վոր առավելն էլ, խրախուսում է նրան և թև ու թիկունք տալիս, հաստատում է նրա հեղինակությունը, նրա կանոնավոր և ուղիղ լինելը:

«Մեր կողմի բոլոր մյուս բարբառները այս յերկու քրոջ սրտախնդերն են, նրանք իրավունք չունին ձայն ու ծպտուն հանելու ընդհանուր դրական ասպարիզում, ուր մնաց վոր խառնվին ընդհանուր դրականության կազմության մեջ: Գրականությունը կենդանիների ցուցահանդես չէ, և վոչ մի ժամ, ուր սրտեն մարդ իրավունք ունենար կապել իր կենդանին, այլ մի աստվածային ճեռակերտ, բնական, կանոնավոր և վոչ կարկատուն և վոչ խառնուրդ ամեն տեսակ ճարտարության կամ մի բաբելոնական խառնակություն»:

Լեզվաղետ բարեկամիս անունը տալու իրավունք չեմ ստացած, բայց հարկավոր եմ համարում խոստովանել հրապարակավ, վոր պարոնի ցուցմունքներից չատ ոգուտ քաղեցի այս հոդվածը դրելիս, վորո համար և՝ հայտնում եմ իրան իմ խորին չնորհակալությունը: Մեր ընթերցողների մեջ Աբարատյան բարբառի ճաչակը վերանորոգելու համար բերենք ահա և նույն բարբառից մի կտոր մեր Դանտեյի դրվածներից:

Ղ. ԱՂԱՅԱՆՑ

«Ենքան բաները լսեցիր՝ սիրելի կարդացող՝ բան ի՞նչպես չէ սիրտդ վառվել, վոր դու են աղդի վորդին ես, վոր եսքան տանջանքը քեզ համար քաչեց, լինքը նահատակվեց, քո կաթող ու արյունդ ուրիչ աղդի հետ չխառնեց: Ենպես կարծո՞ւմ ես, քիչ բան ա, հաղար տարով ես որը քաչիլ, ելի աղդ պահիլ, վորդի մեծացնիլ, անուն, լեզու, հավատ ունենալ: Ախ՝ ես մխոք անողը՝ ել ի՞նչ սիրտ պետք է ունենա, վոր իր լեզուն, իր աղդը չսիրի: Ասենք բլբյուլի լեզուն քաղցր ա, վերու հավկին (խոխոբին), սիրամարդին աստված դեղեցիկ դույն, սիրուն թեվեր ու բմբուլ ա տվել: Ասենք վարդը չատ դովելի ա, բաս ինչի՞ չի մանիչակը իր ոանդը, իր հոտը նրան տալիս: Միթե վարդին տեսնողը մանիչակին չի՞ սիրիլ: Սարի անհոտ ծաղիկն ել իրան տեղը իրան վրաքը վարդի հետ չի փոխիլ: Միթե բլբյուլի լսողը՝ կանարեյկին ել չի՞ պետք է պահի: Ամեն բանն իր դինն ունի, չաքարեղենը քաղցր ա, ամա հացի տեղը յե՞րբ կբռնի: Շամպանակի դինին անուշ ա, ամա ի՞նչ անես վոր մեզ

դործը, զգում են իրանց ներքին դադարկությունը՝ Դրանց նպատակը բարվույն և ճշմարտին ծառայելը չե և վոչ ընդհանուրի ոգտին նվիրվիլը: Տեսնում ես որինակ՝ մեկը, չգիտես ինչից գրգռված, մի չատ քե քեչ ուղիղ բան և գրել, քեև գողունի ֆրազներով և բթությունների լիքը, ասում ես ուրեմն սա ել և գրող, բայց դուրս և գալիս, վոր վոչ քե գրող, այլ «գրողի տարածներից» և, վորովհետև մի ուրիշ անգամ, յերբ մեջտեղ չկա կիրք, գրգռմունք, անձնական մի ջաս կամ ոգուտ, նույն մարդի ամուլ գլխից չես կարողանում աջցանով անդամ մի բան, մի միտք դուրս քաշել: Ցավ ինչքան կան այսպիսի գրողներ մեր մեջ, վոր պարբերաբար յերևում են հեղեղից հառաչացած վտակների նման: Դադարում և հեղեղը՝ կիրքը, և նրանք ցամաքում են խոկույս: Վերցրեք մեր գրականությունից կենդանական (և վոչ բանականի) ինքնասիրությունը, նյութական շահն ու ջնասը, գրական չարչիության վոգին—և մեր գրականությունը կցամաքի խկույն, ինչպես հեղեղներից լճացած մի ճահիճ պայծառ արևի տակ: Ահա իմ այս խոսքերից, կտեսնեք, քե քանի քմծածներ գլուխ կբարձրացնեն և կսրեն իմ դեմ իրանց ժանգոտ ու բութ գրիչը կամ լեզուն:

յերկրումը չի դուրս գալիս, մեզ թանկ է նստում: Աշենք ջավահիրը, ալմաղը շատ ջուհար ունի շատ մեծ դին, ինչ անես, որ նրանով տուն չինիլ չի կարելի, ամեն մարդի ձեռք չի ընկնում: Աշենք հարևանդ հարուստ ա, որը ուզած տեսակ կերակուր ա ուտում, ձեռդ որ չի հասնի՝ պնաք է քո հացն ել դեն դցես:

Ախ՝ լեզուն, լեզուն, լեզուն որ չըլի, մարդ ընչի՞ նման կըլի: Մեկ աղդի պահողը, իրար հետ մխայնողը լեզուն ա ու հավատը: Լեզուդ փոխիր, հավատդ ուրացիր, ել ընչո՞վ կիրես ասիլ, թե մո՛ր աղդիցն ես: Ինչ քաղցր, պատմական կերպարկուր ել տատ յերեխեն, ելի իր մոր կաթը նրա համար չաքարից ել ա անուշ, մեղրից ել: Մեր կաթն ել որ ծախենք, առնող չի ըլիլ: Մեր աչքը որ հանենք ուրըչին տանք, ուրիշը կարելի՞ ա դնել տեղը: Մեր որորոցի վրա մեր լեզվով մեզ նանիկ ասեցին. են ելա՝ մեր միտքը չի՞ պետք է ընկնի: Աշենք նոր ապրանք շատ ես առել, հինը պետք է դե՞ն ածած: Են վայրենի աղդերն ել իրանց սուրբ լեզուն աչխարքի հետ չե՞ն փոխիլ: Հո չես ել շատ անգամ մուդիկի ձեն՝ ասա՛, քո սաղն ու բայաթին ա քեզ դիր գալի՞ս, թե՞ են: Ենպես մարդ կա տատը տատներհինդ լեզու դիտի, ամա նա իր լեզուն միշտ ամենիցը լավ աչի, իր աղդի հետ խոսելիս, ամոթ ա համարում, կամ ուրիչ լեզվով իր միտքն ասի, կամ ուրիչ բառ հետը խառնի: Ինառնիր քո սիրեկան իշչի հետ ձուկը, չաքար, կանֆետ (չաքարեղեն), չամիչ, էիր, խոդվուլա, տես ի՛նչ համ կունենա:

Ախր վոր ասում եմ՝ փրոքուլիմաթա արի, ադուչնա եմ, ոխիժաթյա եղա, փրոշենի տվի, ստնյաթիե շատ ունիմ, դլուխըս քրիժթյա եկավ, փեղչեվտնի մարդ ա, բաղնիջնիք ա, յափեճնիք ոքմին ես, դնանք քուփաթյա ըլինք, սուկրանիեմեն եմ դալիս, փրիոդրաթյա արին, ճամփին ֆսեթքի ուխտիու ա, շատ խնարոթ ալուչինա չի՛ ըլում և այլն. աչքի լիս, մի մտածիր թե լսողն ինչ կասի[1]): Իսկ գիտուն, լուսավորյալ մարդը նա չե,

1 Հանգուցյալ Այվազովսկին այս կտորի մեջ յեղած ռուսաց բառերի տառադարձությունն իրեն համար փաստ եր չինել, վոր իբր թե Աբաթայան բարբառում ռուսաց ճ, ր ձ, հնչվում են իբրև փ. ք, թ: Ճես արդեն հերքել եմ Սրբազանի այս կարծիքը իմ «Հայկական հնչյուններուն» մեջ, բայց այստեղ ևս ավելորդ չեմ համարում ասել, վոր Աբովյանը այս բառերը ռուսաց տառերի իսկական հնչմամբ չի գրել, այլ այնպես, ինչպես վոր խոսում են Հաշտարխանցիք և Նոր Նախիջևանցիք և այս ծագրը նրանց ե վերաբերում:

վոր ամեն լեզու քանի կարա, իստակ խոսա: Դու քո լեզուն վոր իստակ խոսաս, ինչ վնաս ունի, հենց պիտո՞մ ես, խելքըդ ձեռքիցդ կառնեն, թե սովորած իմաստությունդ ջուրը կըթափվի, կամ թե չե տերության սիրտն ես ուզում չահիլ: Բանբեխնամ տերությունը յի՞րբ կուզի՝ վոր մարդ իրան լեզուն կարի, իր աղդիցը հեռանա: Բաս ել ո՞ւր են եսքան վարժատուն չինում, վարժապետ պահում, աստիճան, պատիվ տալիս: Ֆրանցուզ, Նեմեց, Ինգլիզ վոր քո լեզուն սիրում, պռովում են, քանի պատիկ դու ել պետք է սիրես ու պռվես: Քեզանից չեմ նեղանում՝ աչքի լույս, մեր բախտիցը ժամանակին ենպես ծռվել եր մինչև հիմա, վոր մարդ իր դլուխը չեր կարում պահիլ, ուր մնա լեզվի հոդս քաչիլ: Ես ա պատճառը վոր մեր նոր լեզվի կեսը Թուրքի ու Պարսից բառ ա: Բայց սրա դեղն ել հեչա ա, քիչ քիչ կարելի ա խնդակել, յերբ վոր աղդը ուսումն առնի ու իր լեզվի բառերը քիչ քիչ հասկենա: Ես ել հերիք ա, վոր Թուրքի լեզուն, վոր իրանք Թուրքերը չեն դրում, մխմխայն խոսում են ու մեղանից վորքան բուռ չեն ու կոպիտ, բայց ելի են՝ քան ա նրանց լեզվի համն ընկել մեր աղդի բերանը, վոր խաղ հեքիաթ, առակ Թուրքերեն են ասում, իրանց լեզուն Թողում, պատճառ, չունքի սովորություն ա ընկել: Աղդին անհավատ են կանչում, լեզուն սիրում. զարմանալու չի՞: Ախր՝ ո՞վ ա լսել Թե ծծմոր կաթը՝ մոր կաթիցը լավ ըլի: Եսքան խառը լեզվի հետ դու ել վոր քո փրոքուլիմաթյան, մրոքուլիմաթյան ես խառնում, ախր դրանից ի՞նչ համ դուրս կըդա: Ել ավետարան, դիրք, ժամասացություն ի՞նչ կհաւկանաս:

Ձեղ եմ ասում՝ ձե՛ղ, հայոց նորահաս յերիտասարդք՝ ձեր անումին մեռնիմ, ձեր արևին ղուրբան, սասը լիդու սովորեցե՛ք, ձեր լեզուն, ձեր հավատը ղայիմ բռնեցե՛ք: Մեկ դարտակ լեզուն ի՞նչ ա, վոր մարդ չկարենա սովորի: Բաս չե՞ք ուզիլ վոր դուք ել դրքեր գրեք, աղդի միջումն անուն թողաք, ձեր դրքերն ել տասր աղդեր թարդմանեն, ձեր անունը հավիտյանս հավիտենից մնա անմահ: Ինչ կուզի Ֆրանցուզերեն, Նեմեցերեն դիտենանք, մենք չենք կարող ենպես բան դրիլ, վոր նրանց միջումն անուն ունենա, չունքի նրանց միտքը, նրանց սիրտն ուրիշ ա, մերն՝ ուրիշ. մեկ ել վոր նրանց միջումն ենքան դրող կա, վոր վո՛չ թիվ կա, վո՛չ հեսաբ: Ռուսաց լեզուն մեր տեղ տուիլ ա, պետք է մյուսներից առավել հաճարենք, հետո մեր լեզուն ձեռք բերենք: Բաս ձեր սիրտը չի՞ ուղիլ վոր դուք

եւ վատանավոր դրեք, ձեր մխաքը, ձեր խարհուրդը հայտնեք, վոր այլ ազգք իմանան՝ թե մեր միչտան եւ ա եղել յերեվելի դրող ու մեր լեզուն դհա ավելի սիրեն: Աստված կյանք տա են ծնողացը՝ վորի վորդիքը լինճ մոտ են: Նրանց առաջին խնդիրքը միչտ են ա եղել, վոր նրանց վորդիքը հայերեն լավ դիտենան: Գերեզմանն եվ վոր մըտնիմ, նրանց ես սուրբ խոսքը մոքիցս չի՛ դնալ:

Ղ. ԱԲՈՎՅԱՆ»

1888

«Աղբյուր» 1888 թ. № 12

ՄԻ ԿՏՈՐ

ԻՄ ԻՆՔՆԱՊԱՏՈՒՄ ԿԵՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆԻՑ

... Լսելով «Արճագանք»-ի խմբագրին պատահած ընտանեկան ախտը դեպքը, դրեցի պ. Արծրունուն, վոր չտպե իմ «Յերբորդ կամավոր պատասխանը» թեև առանց իմ դրելու եվ, ինչպես հետո իմացա, նա տպելու չեր, չափազանց խիստ գտնելով: Բայց «Արճագանք»-ը ի չարը դործ դրավ իմ լռությունը, չարչունակեց հայհոյել, պարսավել և՝ ամենից վատթարագույնն և՝ դրպարտել: Ցեվ վորպես թե բոլոր աշխատակիցները բավական չլինելին, թեև բոլորն եվ դիմակավոր, սկսեցին հաշերի և ընթերցողների եվ ոդնության կանչել իրենց: Մ՛յ դիտի ժամանակ... Ցես այդ ժամանակ իմ մեջ այնքան ուժ եյի զդում, ինչպես Թղուկների աչխարհք յեկած մի հսկա, եվ չեմ ատում՝ դեբանը ձեռքին մի Տորք, կամ Ղըր-Աթի վրա նստած մի Ջյոռ-Ողլի՝ «Արևելքից մինչև Արևմուտք իմա ե» յերդեվիս... Վորքան ինքնապաչտություն...

Ծաղկափթիթ մանկունք սիրելիք, վորպիսյայդ և արքայության յերկնից, «Ցեկեք չուրջ Նահապետիս» և տեսեք ի՞նչ եմ առում ձեր անարատ և քնքուչ ականջին:— Ցե՞րբ եք ձեզանից դոհ լինում և ուրախ ու զվարթ.— Անչուչտ այն ժամանակ, յերբ առողջ եք լինում հոգով և մարմնով, յերբ ձեր դասերը լավ եք լինում պատրաստած, յերբ ձեր ծնողք դոհ են լինում ձեզանից, յերբ ձեր դաստիարակների սիրելին եք լինում, յերբ ձեր ընկերները ձեզ պատվում են և հարդում: Իսկ յեթե որա հակառակը լինի, ի՞նչ ասել կուզի, վոր դուք ձեզանից դոհ չեք լինիլ, այլ չատ դժդոհ: Մարդ կարող է զվել երանից և դմայլվել երանով, նայած թե երբ զվելի, թե դմայլելի յե: Ցերբ վոր մեկը կեզտոտ լինի, այդ կեզտի հոտը ամենից առաջ ինքը կզգա և կզզվի. յեթե մի դարչահոտ խոց ունենա վրան, վոչ միայն նրա ցավը միայն ինքը կզգա, այլ և նրա դարչահոտը-

թյունից ամենից շատ լինքը կղզվի: Այսպես են և հոգեկան կեղտոտությունը, հոգեկան խոցերը: Մոլի մարդիկը իրանց անձը սիրել կարող չեն. կուզին ինչպե՞ս կարող է դադ լինել իր կուրությունից, խուզն՝ իր խլությունից, տգետն՝ իր տգիտությունից, դողն՝ իր դողությունից, ստախոսն՝ իր ստախոսությունից: Զհավատաք, այդպես բան չկա աշխարհիս յերեսին: Մոլի, վատասահոգի, բարոյապես կեղտոտ մարդը կենդանվույն դժոխքի մեջ է, նա միշտ տանջվում է, միշտ զղվում ինքն իրանից: Սրա հակառակ առաքինի մարդը կենդանվույն արքայության մեջ է: Կյանքի տատասկները նրա համար վարդեր են, խարույկի վրա նա այնպես է պաղում, ինչպես ամենաափափուկ անկողնու մեջ: Սուրբերի տանջանքը մեղավորներին և զարհուրելի թվում, իսկ տանջանք կրողների համար մի յերկնային հարսանիք է, վորի պսակադիրն ինքը Քրիստոսն է: Մեղավոր մարդիկ չեն կարող յերևակայել այն հոգեկան զվարճությունը, վորն ղդում են սուրբերը ամենադարհուրելի տանջանքների մեջ, իսկ նրանք վորոնց սիրտը սուրբ է, վորոնք ճշմարիտ առաքինի անձինք են՝ կարդալով սրբերի չարչարանքը՝ վոչ թե սոսկում, զարհուրում են, այլ զմայլվում են և ցանկանում, վոր իրանք լինեյին նրանց տեղ, իրանք ել արժանան նույն յերկնային հարսանիքին: Քրիստոսի առաքյալները՝ առաջին անգամ վոր ծեծ կերան, նրանք վոչ թե նեղացան, վոչ թե տխրեցան, այլ ուրախությունից չգիտեյին թե ինչ անեն, վորովհետև դիտեյին, վոր իրանց արածը մի սուրբ գործ է: Մեղավոր և մոլի մարդիկը վոչ մի այն զգացումն ունենալ կարող չեն, այլև վոչ յերևակայել կարող են և վոչ հավատալ, վոր մարդս ֆիզիկական տանջանքի մեջ կարող է ուրախ լինել, կարող և ցնծալ, զմայնալ: Բայց դուք, վոր դեռևս անմեղ եք և արդար, կարող եք հեշտությամբ հավատալ և յերևակայել, վոր արդարև յերեք այսպես չլիներ, ո՞վ հանճն կառներ չարչարանք և տանջանք, մանավանդ վոր նրանց մյուս կողմից խոստանում եյին մեծամեծ պարգևներ—փառք, պատիվ, իշխանություն, մեծություն, միայն թե նրանք յետ կենային իրանց հավատից, իրանց քարոզից, իրանց գաղափարից: Կարդացեք մեր թագուհիները— Սանդուխտի և Շուշանիկի նահատակությունը և կտեսնեք, վոր հիրավի մեծ և առաքինության ուժը, նա մի յերկնային զորություն է, վորին կարող չեն հավասարվիլ վոչ մի աշխարհային, վոչ մի ֆիզիկական ուժ:

Ցեվ հիմա յերևակայեցեք ձեզ, թե առաքինի անձինք արյուք իրանցից ղղվելի՞ս կլինեյին, թե իրանցով զմայլվելիս, իրանց սիրելի՞ս կլինեյին, թե՞ ատելիս:

Ցերանի՛, հազա՛ր յերանի այն մարդկանց, վորոնք իրանց անձնավորությունից չեն ղղվում, այլ ղղում են իրանց մեջ աստվածային զորություն, նախախնամության հովանավորություն, գոհ են իրանց գործից, արարմունքից, խաղաղ և հանգիստ խիղճ ունին, կարող են դիմակ ո՛չնչել իրանց յերեսին ղրական ասպարիզում, այլ կպտտուն համարձակ և ճակատաքաց, իրավունք կունենան կշտամբելու իրանց հակառակորդներին, իրավունք կունենան ուսուցանելու «վորպես իշխանություն ամբ, և վոչ վորպես դպիրքն»:

Իմ հակառակորդները ծայրահեղ ստեպ լինելով (մոլի մարդիկ ճշմարիտ դիտնական լինել կարող չեն, այլ միայն կլինին թուքակ գիտություն), ինձ այնպիսի հատկություններ եյին տալիս, վոր իսկապես մոլություն չեյին, այլ առաքինություն, բայց իրանք մոլի լինելով նույն առաքինության հոտն ու համը չեյին ղղացած: Ցեվ այսպես են լինում միշտ անհավատներն ու մոլորյալները, մոլության մեջ ապականվածները, նրանց դործ դրած սուրը միշտ դառնում է դեպի իրանց, վորովհետև ամենայն ինչ ներանց ուղեղի վրա հակառակ դիրքով տպավորվելով՝ այնպես ել մնում է, նրանց ուղեղի մեջ չկա հակաշրջող և մարսող զորություն: Այսպիսիք ավելի անբան են քան բաղատմու եշը, վորը տեսավ հրեշտակին իր առջև կանգնած սուրը ձեռին և ասաց իր տիրոջը. չե՞ս տեսնում, տիրոջ հրեշտակն է առջևդ կանգնած: Վորքա՛ն մեծ բարոյական միտք կա այս լեգենդայի մեջ:

Ցեվ Բաղաամը Իսրայելին անիծելու փոխանակ որհնում է...

Հիմա յես ձեղ մի առակ պատմեմ, դուք իմացեք նրա մեջի բարոյականը. յեթե չեք իմանա՝ յես ձեղ կոդնեմ.

Լինում է չի լինում մի ահագին գամփռ շուն, շատ ուժեղ և հավատարիմ, շատ արյունը և դայլեր խեղդած, շատ վոչխարի հոտեր գայլերից ազատած: Բայց ինչպես ամեն կենդանի, մեր գամփռ Բողարն ել է ծերանում: Տերն այլևս չի մտիկ տալիս նրա ըռնին, քաղցած է թողնում, բայց նա չի հեռանում նրա դռնից, դարձյալ չարունակում է իր ուժի չափ ծառայել իր

ափլոջը, նրա հավերն՝ աղատել չաղալների հափշտակությունից, դող յեկած ժամանակ հաչել:

Լինում է չէ լինում մեր գամփռին ժամանակակից մի պայլ, վոր գամփռի ուժեղ ժամանակ սատկիկ վախենում և յեղել նըրանից, բայց յերբ լսում է, վոր նա քաղցած՝ ուժից ընկած է, վազում է դեպի գյուղ հափշտակության, գողության, վորովհետև մյուս շներից յերկյուղ չի ունենում: Գնում է գյուղ, մյուս շները ծակ՞ու ծուկ են մտնում, իսկ մեր գամփռը՝ չնայած իր քաղցածությանը, դուրս է գալիս կատաղի և գող գայլի դեմ. կռվում են և այդ կռվի մեջ մեր գամփռին խեղդում, և գայլը:

Բարոյականը շատ պարզ է. գայլը մնում, և գայլ, շունը մնում է շուն. մինն իբրև անձնազոհության չափ հավատարիմ իր տիրոջը, մյուսն իբրև գայլ հափշտակող. մինն իբրև առաքինության ներկայացուցիչ, մյուսն մոլության:

Այս առակը տըված է «Արձագանք»-ումը: Սրա հեղինակը ուզեցել է ծաղրել առաքինությունը և մրցանակը մոլությանը տալ: Շատն այստեղ յես եմ, իսկ գայլը՝ հեղինակն ինքը: Յեվ ինչո՞ւ յես հակառակորդիս սուրն այսպես հակաչըչված: Մեր նոր բաղաամը ինչո՞ւ չե իսրայելին անիծելու փոխանակ՝ որհնում: Նրա համար, վոր առաքինության պաշպանն է, հրեղեն սուրը ձեռին կանդնած և առաքինության դահլճների առջև:

Առաքինությունը, սիրելի մանուկներ, այնպիսի մի բան է, վոր յերբե կրակը ձգես չի հալվի, այլ ավելի կզոդվի. յերե ջուրը ձգես, չի լուծվի, այլ ավելի կմաքրվի. յերբե ցեխի մեջ ձգես, չի ապականվիլ, այլ ավելի կփայլի: Այս մասին կարող չեն հասկացողություն ունենալ այն մարդիկը, վորոնք առաքինի յեղած չեն: Առաքինությունը ցածրից սկսում է դեպի վեր բարձրանալ, մինչև հասնում է յերկինք: Իսկ մոլությունը նույնպես ցածրից է սկսում, այսինքն յերկրի յերեսից, բայց դեպի վեր չի բարձրանում, այլ ղլորվում է դեպի ցած և ցած, մինչև հասնում է դժոխքի հատակը: Կարդացեք նշանավոր յեղեռնագործների կյանքը, և կտեսնեք, թե ինչպես նրանք առաջին փոքրիկ չարագործությունը ավելի մեծ չարագործությունով են ուզում ծածկել, այն էլ նրանից մեծով, և այսպես հետզհետե ավելի խոշոր և խոշոր չարագործություն են անում, մինչև հասնում են չարագործության անդունդը: Իսկ առաքինին փոքրիկ բարեգործությունից սկսում է, հետզհետե ավելի մեծ բարեգործություն է անում, մինչև վերջապես իր բարեգործության գագաթը հասցնում է մինչև յերկինք:

Յանկալի յե, վոր մեր կյանքի մեջ, հասարակական կյանքի մեջ, մոլիների թիվը սակասեր և առաքինի անձանց թիվը շատանար, բայց այս սպասել կարելի չե, մինչև մոլությունը, անաղնվությունը, խաբեությունը, անամոթությունը և այլն, չվերանար մեր գրականությունից: Ցեծե գրականությունը դառնա մի մխիթարանոց, ինչ կզառնա իսկական մխիթարանոց: Յեվ այսոր թերթեր կան թե հայերեն և թե ռուսերեն, վոր ուրիշ բան չեն, յերե վոչ մխիթարանոցայից եվ ստոր մի գառապիղ: Յեվ վոչինչ, մեր մեջ անց և կենում և դեռ վատատաղ ընթերցողներ և ունենում:

1889

Ղ. ՍՂԱՑԱՆՑ

«Ազբյուր» 1889 № 1

ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ
ԳՐԱԿԱՆ-ՔՆՆԱԴԱՏԱԿԱՆ
ՀՈԴՎԱԾՆԵՐ



«ՀԱԶԱՐ ՅԵՎ ՄԻ ԱՌԱԿԱՎՈՐ ԲԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՅԵՎ ՈՏԱՐԻ»[1]

Գաբրիել յեպիսկ[ոպոսի Այվազյան
Պոլիս 1875

Մեր աչխարհաբար լեզուն իր հաղթության դրոչակը ցցելով դրաբարյանների հնացած դաշտի վերա՝ որեցոր աճում ու զարգանում է ավելի և ավելի: Գրաբարի փլատակներից դլուխ են բարձրացնում դանազան բարբառներ և նորանոր նյութեր են ուսյա լեզվասեր պիանականների քննության, հավաքվում են ազգային առածները, յերգերը, առակները, հեքիաթներն ու նախապաշարմունքները: Այս հանդամանքը չեր կարող յերևալ դրաբարի ժամանակ, վասն զի նա կյանքից հեռու յեր վիախչում, նա չեր կամենում ժողովրդին ուսուցանել նորա ունեցածովը, նորան ըմբռնելի լեզվով: Գրաբարի ի՞նչ հոգն եր իմանալ արդյոք գյուղացին կամ մշեցին ինչ լեզվով են խոսում: Բայց այդ չի կարող ասել աչխարհաբարը, դա վորպես ներկայացուցիչ այլ և այլ բարբառների, մինչո կարուս և նոցա ոժանդակության, նոցանով պետք է յուր պակասորդը լրացնի, յուր կենդանության ուժն ավելացնի, նոցանով պետք և ձգտի նա ավելի և ավելի մատչելի դառնալ ժողովրդին, փոքր ինչ ինքը ցածրանալով բարձրից և փոքր ինչ նորանց բարձրացնելով ցածրից ուսումնարանների և դրականության ոգնությամբ և յուր

---

1 Այս գրախոսականը՝ Աղայանի անտիպ մնացած հոդվածներից է, ըստ յերևույթին գրված Գ. յե. Այվազյանի «Հազար ու մի առակավոր բանքի», հրատարակության տարում (1875 թ.)։ Հեռագրի առաջին էջի վերևի անկյունում կան, բանասեր Յերվ. Շահազիզի հետևյալ նշումները.

Այս համառոտ քննադատական հոդվածը հանգուցյալ Ղազարոսը նվիրել է ինձ «ի հիշատակ Նոր Նախիջևանում յուր աքսորի օրերում»։

«Աղայանը պատմում եր, վոր յուր ժամանակ դրաքննական պայմանների շնորհիվ անհնարին է յեղել տպագրել այս քննադատականը»։

Մանուք. Կազմողի

այս ընթացքը անընդհատաբար չպտտնակել, վասն զի լեզուն— կենդանի լեզուն— չի կարելի մի այնպիսի շրջանակի մեջ դնել, որ նա սահմանափակ և ան[փո]փոխ մնա դարուց ի դարս, այլ պետք է աճի ու զարգանա, որպես կենդանական, զորեղ մարմին:

Սակայն մեր մեջ կան շատ բարբառած ուղեղի տեր մարդիկ, որոնք անընդունակ են բնության մեջ անընդհատ չարժում տեսնել, այլ ինչ որ տեսնում են, կարծում են թե դա հավիտենից այդպես է եղել և այդպես էլ պիտի չարունակվի հավիտյանս[1]), իսկ տպիտության մեջ ավելի կատարելագործված-ները կարծում են, թե ներկան անցյալի աղճատումնքը կամ խանգարմունքն է:

Հետադիմության այս հերոսները մարդկության վոսպնաձև անդամներն են, որոնց մեջ ամենայն ինչ հակառակ դիրքով է անդրադառնում: Դոքա ինչու վերա որ խոսում և դատում են, միշտ իսկականի հակառակ հատկություններ են տալիս նրանց. որինակ՝ ինչ որ ոգտավետ է, այն վնասակար է դոցա դատողությամբ, և ինչ որ վնասակար՝ այն ոգտավետ. լավը վատ է ,վատը՝ լավ. դեղեցիկը տգեղ, տգեղը՝ դեղեցիկ, յեղածը չեղած է, չեղածը՝ յեղած. մեկ խոսքով ասել՝ սուտը ճշմարիտ է, իսկ ճշմարիտը՝ սուտ.....

Ահա այս բացատրական դիտողականներից մեկը հանկարծ դուրս է գալիս դրական ասպարեզ, և լրագիր, ամսագիր և կամ մի գիրք ե հրատարակում: Որպես զի ժողովուրդն այդ հրատարակությունը վաղով գնե և կարդա, հեղինակն ստիպված է աշխարհաբար գրել: Բայց ի՜նչպիսի աշխարհաբար... անմիտ բառաշարություն, աղճատումնք, աշխարհաբարի և գրաբարի մի անճոռնի և այլանդակ խառնուրդ, բայց շատ հարմար այլանդակ մտքեր հայտնելու և ճաշակաղուրկ վոտանավորները գրելու համար: Դոցա կարծիքով աշխարհաբարը մի անպիտան լեզու յե, և ամենայն ինչ որ դարանով գրվի, ներելի յե. վոր նա էս անպիտան լինի, բայց բանիմաց մարդիկ շատ լավ գիտեն, թե անպիտանությունը կչեռքի վո՞ր թաթումն է...

Մենք ահա մեր ընթերցողին կամենում ենք ծանոթացնել մի աշխատության հետ, որով վերնագրեցինք մեր հոդվածը: Ինչ

1 «Իսկ տպիտության...» բառերից մինչև պարբերության վերջը տարբեր թանաքով գրված հետագա ավելացում է։ Ծան. կազմ.

աշխատություն է այդ «Հազար և մի առակավոր բանք» անվանյալ գրքույկը: Սա յե հազար և մի չորս տողանի վոտանավոր: Սոքա առակներ չեն, ըստ վորում առակները մի տնանկ կամ չորս տողանի չեն լինում. առածներ էլ չեն, ըստ վորում առածները սովորաբար ավելի համառոտ և ազդու յեն լինում, և վորովհետև վոչ առակներ են և վոչ առածներ, այդ պատճառով դոքա առաջել են մի նոր անուն, այն է «առակավոր բանք». այսինքն առակի նման բաներ: Դոցա չափերի մեջ մենք տեսնում ենք մեր պատմական առածները, միայն աղճատած, անչքացրած, տաղտկացրած, ճապաղեցրած, համն ու հոտը կորցրած, և այդ բոլորը նորա համար, վոր դոքա անպատճառ չորս տողանի մի վոտանավոր դառնան: Որինակի համար դեղեցնենք այստեղ մեր հիշած ազգային առածներից մի քանիսը և նոցա մոտ [սրբագրան Ա.յվազյանինը][1])՝ նոր հեղինակինը.

Ազգային

Շունը չանից, յերկունը մի տանից:

[Գ. Ա.յվազյան][1]) Նոր հեղինակին

Վա՛յ թե վորքան նման են,
Ցերկու մարմին միև ճան են,
Գիտեմ են չուն են չանեն,
Ցերկունքն էլ են միև տանեն:

Հազար ու մեկ առակավոր բանքից մեկն այս է: Ինչպես տեսնում ենք մեր սխեմից կամեցել են լաբլաբու չինել, բայց լրի յե դառել: Այս վոտանավորի մեջ ի՞նչ կնչանակե ճան: Ճան հայերեն կնչանակե վեզ, կոճ, վորով յերեխայք խաղում են: Իսկ թուրքերեն պղչինչ չի նչանակվել, ըստ վորում թուրքերը ճ տառ չունեն, այլ ունին ջիմ, ուրեմն պետք է դրել ջան և վոչ ճան: Բայց և ինչո՞ւ դրել ջան, քանի վոր դրողն ինքն էլ դիտե, վոր դա հայերեն չե՛: Մի՞թե ինչ վոր դրաբարի մեջ դրծ ածել ներելի՛ չե՛, նույնը ներելի՞ յե աշխարհաբարում.

1 Բառակուսի փակագծերում յեղածները՝ բնագրում ջնջված են, մենք վերականգնեցինք։ Կազմող։

[Բանի դա բարբառ չէ, այլ հետի լսողաց մաքուր պրակտիկա։ Բայց այլ առակ լվարուք...]

Ազգային

Հայի խելքը գլխումն է։

[Գ. յե. Այվազյան] Նոր հեղինակ

Հայու խելքը գլխումն է,
Խոյեցումը վոտքումն է,
Բրդինը վո՞ր տեղումն է։

Այստեղ, ինչպես տեսնում ենք, վերջին յերկու տողը՝ ելեք տող լրացնելու համար և պրծած, չնայելով, վոր տրամաբանության ընդդեմ մի բան է դուրս գալիս, վոնց պի խոսքն այս–ինչ, և այն–ինչ տեղացու վերա չի, այլ այս և այն տղի վերա է։ Հայի համար արդեն ասած է վոր նորա խելքը գլխումն է. ի՞նչ տեղից է մեջ ընկնում այդ խոյեցին. յեթե դա հայ է, ուրեմն պետք է, վոր դրա խելքն էլ գլխումը լինի, և վոչ թե վոտներումը, իսկ յեթե հայ չէ՝ պետք է դրա ազգության տեղը տալ, այդ էլ այն ժամանակ, յերբ վոր այդպես մի բան ասած լիներ։ Իսկ ասել՝ թե «բրդինը ի՞նչ տեղումն է», այդ էլ մի վոնց կարկատան է, վոր չի կպչում ազգային կենդանի ասածին։ [Յես ի՞նչ իմանամ վորտեղումն է, յեթե լսել եք, կարող եք ասել... դես լսեցեք։]

Ազգային

Եշը պատի, ձին ուտի։

[Գ. յե. Այվազյան] Նոր հեղինակ

Կդատի խեղճ իշուկը,
Կը պարծի մեր պիժուկը,
Պիժուկը ձի չէ, Մկիա՛ր,
Դու տես իշուն խշխշուկը։

Վորքա՞ն համառոտ և ազդու առաջինը և վորքա՞ն ճռպոտ ու անալի յերկրորդը։ Ի դեպ, այս վոտանավորի մեջ հիշված Մկիարի անունը շատ տեղ և հիշվում, բայց չգիտենք ինչու։ Աշղները սովորություն ունեն իրանց խաղի և առածի մեջ հիշել իրանց անունը։ Գիտենք այժմ, թե այս առածը Մկիարն է ասել, թե [սրբազանն] հեղինակն է նորան խրատ տալիս, սակայն չենք կարծում վոր Մկիար խմաստունը այդպիսի հիմար բան լինի ասած։

Ազգային

Ջորին հաչ դնալով հաչի չի դառնալ։

[Գ. յե. Այվազյան] Հեղինակն

Ջորին հաչի չի լինիը,
Թե հազար հեղ յերթա Մեքքեն,
Ձին դերվիշ չի լինիը,
Թե հազար ջուր կրե Թեքքեն։

Ա՛ղջ սրամաբանություն.... մենք գիտենք, վոր Մեքքա դնացողները հաջի՝ յեն դառնում, իսկ յեթե դնացողը Ջորի յե, հարկավ նա չի կարող հաջի դառնալ, բայց ո՞վ է լսել, վոր ջուր կրողը դերվիշ լինի դառնալիս, թեև եչ չլինի դա, այլ մի գիտնական մալլա։ Այս էլ մի ևս նուն կարկատանից է, ինչ վոր խոյեցին ու քուրդը։

Ազգային

Սևին սապոն՝ խևին խրատն ի՞նչ անի։

[Գ. յե. Այվազյան] Հեղինակն

Հերիք դատես, ո՛վ մարդիկ,
Սևին սապոն ի՞նչ անե,
Հերիք խոսեցուր, Հարի՛կ,
Խևին խրատն ի՞նչ անե։

Այս մասին եւ դուք դատեցե՛ք, սիրելի ընթերցողք, վոր մեր խոսքը շատ չերկարանա: Այսպես ահա մեր ազգային պատվական առածների բնական սրտությունը [սրբազան Ալվազյանին] մեր նոր հեղինակին դուր չըգալով, կամեցել է դոցա մի նոր լավից անցնելով, մխել ու սրել, բայց թե վորքան՝ բթացրել է, այսքան որինակից էս կարող եք դուշակել, յեթե չեք կամենալ բուն դրքին մի մանեթ վճարելով, ավելի խոշոր սղճատումներ տեսնել: Ահա թե ինչո՛ւ համար եմ ասում, թե դոցա համար լավը վատ է, և վատը՝ լավ:

Ընդհակառակ, վոր այդ դրքի մեջ հազար ու մի այդպիսի բաներ կան, թեև չգիտենք, ինչո՞ւ անպատճառ հազար և մի պիտի լիներ և վոչ վորքր ինչ ավելի կամ պակաս, բայց [սրբազանը] հեղինակը այդ հազար և մի ազգային և ոտար առածների վերա մեկին ել ինքն է ավելացրել, վոր շատ սուր բռվանդակություն ունի— ահավասիկ այն ել՝

[Գ. յեր. Ալվազյան]

Այր բեն գիմ դա
Յո ֆյուն, վյուր, քե,
Այսքան առակ սիրով կարդա՛,
Հազար ու մեկը հերիք է (?!!!)

Իսկ մեք առաջարք՝

Այր ժե ճե ռա բեն լինի մեն սե,
Հազար և մի առակն այս է՝
Գիմ լյուն հի վեվ դա խե նու տյուն,
Ինենդ ու խելար հիմարություն:

[Մանուել]*)

[1875]

ՂԱԶԱՐՈՍ ԱՂԱՅԱՆ

*) Այս դրախոսականը տպագրվում է առաջին անգամ: Ե.Կ.

ՄԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

«ՇԵՔՍՊԻՐ

ՅԵՎ ՅՈՒՐ

ՀԱՄԼԵՏ ՎՈՂԲԵՐԳՈՒԹՅԱՆ ԱՂԲՅՈՒՐՆ ՈՒ ԴՆՆԱԴԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ»

ԱՇԽԱՏԱՍԻՐԵՑ

ՊԵՏՐՈՍ Հ. ԱԴԱՄՅԱՆ

Մեր ամենասիրելի Աղամյանը մինչև այսօր հայտնի յեր մեզ իբրև հանճարավոր դերասան, տաղանդավոր բանաստեղծ և չնորհալի նկարիչ, իսկ այսօր վերնագրյալ դրքով հանդիսանում է մեր առջև իբրև հոգեբան-փիլիսոփա: Այս ամենը մի հայ մարդու մեջ... լավ նշան չե: կարզե դուրս չնորհալի յերեխայի կյանքը մի մաղից է կախված: կխնդրենք աստծուց, վոր շար աչքից ու վորձանքից ազատ պահե մեր Աղամյանին, իսկ մենք այսու ամենայնիվ, վոչ իբրև չարաղուչակ ագռավ, այլ իբրև վախան մայր կասենք, վոր Աղամյանը մի վաղահասակ մանուկ է մեր կյանքի համար: Հայկական դեղարվեստի ներկա խոպան անդաստանի վրա այդպիսի մի քնքուշ վարդ փթթել և աճել կարող չե. նա կթառամի վաղաժամ... Քանի վոր զուռնան ու դհոլ-զուռնան դեռ բավականություն են տալիս մեր ճաշակին, ապա ուրեմն մեզ համար դեռ միևնույն է՝ սոխակն է յերգել, թե աքաղաղը կանչել: Մի բան, վորը մենք կխնդրենք պ. Աղամյանից, այդ այն է, վոր նա քանի կենդանի յե, քանի վոր չունչ ունի բերանումը, դրե և շատ դրե Շեքսպիրի և այլոց թատերական դրվածքների մասին: Իր անմոռանալի խաղի միայն հիշատակը կմնա, իսկ դրվածքը մասամբ դրողի տեղը կբռնե և մեծ ծառայություն կանե հայ թատրոնի աղքատիկ պատմությանը:

Ներկա դրվածքը ըստ ամենայնի լրացնում է հարցասերի հետաքրքրությունը: Նյութը դրավիչ, բացատրությունը պարզ և լեզուն կանոնավոր: Շեքսպիրի մասին սառն և փիլիսոփայորեն խոսիլը հեշտ չե, մանավանդ Աղամյանի պես մի դյուրազգաց և վոգևորության յենթակա մարդու համար: Բայց Ա-

դամյանը հոգեբան-փիլիսոփայի դերումն ևս մի կատարյալ արտիստ է: Ճշմարիտ է, իրանից համեմատաբար քիչ բան է տալ, և այն էլ ամենայն ղժուշությամբ, բայց մի դրողի հատկացողության և ճաշակի զարգացման աստիճանը վրքան վոր իր ինքնուրույն գրվածից է յերևում, նույնքան յերևում է և նրա ընտրությունից, հյուսվածքից: Մի՛թե քիչ հետաքրքրիներ կան, վորոնք թանգարան մանելով՝ ըստ առակին՝ ահագին փղից չեն նչմարում: Առակ կա զարձյալ, թե դյուղացին քաղաք գնաց և բազմատեսակ մրգեղենների միջից իր անտառի թթու ղևեն ընտրեց: Ամենքս էլ տեսնում ենք միևնույն բանը, կարդում ենք միևնույն գիրքը, լինում ենք միևնույն վիճակի մեջ, և այլն, և այսուամենայնիվ բանից դուրս ե գալիս, վոր մարդիկ ևս՝ բոլոր փիլիսական մարմինների պես՝ յերկու տեսակ են՝ թափանցիկ և անթափանցիկ, լավ հաղորդող և վատ հաղորդող: Պարոն Սդամյանը թափանցիկ է, վորպես հայելի և հաղորդող, վորպես վոսկի: Նա մի մագնիտ է յերկաթի փչրանքների համար, վորոնցից կազմում է դեղեցիկ փունջեր: Յեթե Սդամյանն այսպես, վորքա՜ն առավել Շեքսպիրը: Յես, ինչպես չատերը, Շեքսպիրը կարդում էլի հիանալու, զմայլելու, այլ և սովորելու, զարգանալու համար: Յեվ այնուհետև ամեն մի ուրիշ գիրք կարդալուց հետո ասում ելի ինքս ինձ. «Փոխանակ ուրիշ տասը գիրք կարդալու, ավելի լավ է տասն անգամ կարդալ Շեքսպիրը», վորովհետև նրա կարդալուց վոչ դղվում եմ մարդ, վոչ կշտանում, և վոր առավելն է, ամեն անգամ նորանոր մրցքերի և զգացմունքների չե հանդիպում: Կարդալիս ել այնպես հափշտակվում էլի, վոր մոռանում էլի, վոր յես իմ սենյակումն եմ նստած, իմ սեղանի վրա, իմ ճրագի առջև, վոր առաջիս գիրք է, և յես կարդում եմ և վոչ թե տեսնում. մեկ ել հանկարծ՝ կարծես քնած տեղից զարթած՝ չորս կողմից յիղած առարկաները ինձ ծանոթ են թվում, նոր հիշում եմ, թե վորտեղ եմ գտնվում: Ինչևիցե, դլխավոր բանն այն է, վոր յես կարծում էլի, թե Շեքսպիրի ընթերցումը մի հոգեկան և մրտավոր զարգացում է տալիս միայն, բայց բանից դուրս է գալիս, վոր նա է՛ միևնույն ժամանակ և մի նշանավոր և աղդու դեղ: Այս գյուտն իմս չե և դուցե չատ չատերին լինի հայտնի, միայն յես այս բանն իմացա մոտիկ ժամանակներումս իմ ամենամերձ մի բարեկամից: Ահա թե ինչ և դրում նա ինձ մի դավառական մութ անկյունից:

... «Շնորհակալ եմ, վոր ուղարկեցիր ինձ Շեքսպիրը. դա ինձ ազատեց խելագարությունից: Քեզ հայտնի յե արդեն իմ ներկա վիճակը, դիտես, թե վորքան նման է նգդար Գլոստերի վիճակին: Յես զգում ելի ախաչկարա, վոր խելքս թռցնում եմ, և ինքս ինձ մի կերպ պահպանում ելի թափառելով և ստեպստեպ սառը ջրի ոգնությամբ դիմելով, ինքս ինձ սիրտ տալով, վրեժխնդրությունն ինձ ոգնության կանչելով, և հանկարծ ատանում եմ Շեքսպիրը: Բաղդի բերմամբ ամենից առաջ կարդացի Արքա Լիրը, և, ի՞նչ ես կարծում, այս մարդու թչվառությունն այնքան մեծ տպավորություն արավ վերաս, վոր յես իմ սեփականս մոռացա, իսկ և իսկ նգդարի նման, յերբ նա հանդիպում է Լիր թագավորին. այո՛, մոռացա իմ անիրավ յեղբարցս ապերախտությունը և ստոր դավադրությունը: Սրտիս թուխռացը կտրվեց, ջղային դրգռմունքս հանդարտվեց»...

Ահա ձեզ ուրեմն մի վսեմ հեղինակություն, վոր միևնույն ժամանակ՝ և մի պատմական ախտարան, մի մխիթարիչ վոդի: Յես չդիտեմ՝ ինչ կասեն այս մասին հոգեբան բժիշկները, բայց յես ինքս անձամբ մեծ և չատ մեծ սփոփանք եմ զգում Շեքսպիրը կարդալիս և նոր եմ հասկանում, վոր առաջ ել այդ սփոփանքն զգալիս եմ յեղել:

Յեվ զարմանալի չե. Շեքսպիրը հանճարների մեջ մի պրոմեթեոս է. նա յե հափշտակել աստվածային կրակը և ուրիշներըր նրանից են վառել իրանց ճրագները, ինչպես Գյոթե և Շիլլեր...

Կարդացեք նրա Համլետը: Ի՞մարդկային հոգու վո՛ր բարձրագույն հուզմունքն ու կիրքն ասես, վոր նրանում չլինի պատկերացրած իր ամենանուրբ գծերով— այնտեղ սեր, մտերմություն, ատելություն, վրեժխնդրություն, յեղեռնագործություն, չարության դեմ բողոքող վոգի, փառասիրություն, խստասրտություն, թեթևամտություն, խորագիտություն, խորամանկություն, դեղագիտություն, փիլիսոփայություն, ունայնություն աչխարհի, ապրելու չարժանիքի, հուսահատություն, և այլն և այլն... Ինչ զարմանք ուրեմն, վոր մարդկային հոգու այս ովկիանոսի ահեղ հորձանքների մեջ անհետանան մեզ պես մանր մարդկանց կիրք ասված չնչին կոհակները:

Յեվ պարոն Սդամյանը դրել և ահավասիկ Շեքսպիրի և նրա Համլետի մասին: Յեվ այս նյութի մասին առաջին անգամն է խոսվում մեր դրականության մեջ քան առարկային մոտիկ

ծանոթ մարդու ձեռքով: Վորքան չնորհակալության և խրախուսանքի արժանի չե ուրեմն պ. Աղամյանը:

Այժմ յերկու նկատողություն: Առողներ կան, թե պ. Աղամյանը Համլետի «լինե՞լ, թե չլինել» մենախոսության ժամանակ սուր չպիտի ունենա ձեռին: Մեզ հավանելի չե պ. Աղամյանի վարմունքը, բայց վոչ յուր տված մեկնությունը: Սուրը ձեռին Համլետի բնավորությունն ավելի ևս պարզվում է, թե նա վոր աստիճան յերևակայող, մտածող, յերկմտող, տատրակուսող և տատանվող է: Ինքն անձնասպանության տրամադրվելը, սուրը ձեռին պատրաստ, բայց այսուամենայնիվ ինքնասպանություն չի գործում, այլ դեռ մտածում է, թե ինչ է կյանքը, մահը և այլն: Համլետը մետաֆիզիկ է Նեմնիեբի մետաֆիզիկի նման, միայն դրամատիկական վիճակում դրված: Նա յուր հոգյեբորն սպանել ուզելիս ել, յերբ արդեն սուր ունի ձեռին և հարձակվում ել է, բայց ելի նոր մեկանց սկսում է յուր մետաֆիզիկան: Ուստի պ. Աղամյանի վարմունքի մեջ վոչինչ հոգեբանական սխալ չկա, այլ ընդհակառակն տեխնիկական տեսակետից ևս սքանչելի չե, վորովհետև այսպիսի սուրը հանդիսականների ուշադրությունն ավելի ևս լարում է:

Վեճ կա և Համլետի կազմվածքի մասին, թե նա նիհա՞ր եր արդյոք, թե դեր: Гербел-ի հրատարակած Համլետի մեջ մոր դործ դրած գեր բառը դուրս և ձգած յերևի նրա համար, վոր դուցե քննադատներն ապացուցել են, վոր այդ բառը Համլետին ուղղակի չի վերաբերում, այլ դուցե Բեորքեջ դերասանին, վոր Համլետի դերը խաղացող մի հանճարավոր, բայց դեր դերասան է յեղել: Այս չատ հավանական է: Հուզմունքների այն ահեղ ալիքները, վորոնց մեջ ծփում է Համլետը և այն բնավորությունը, վոր նա ունի, կարող եյին մի որումն ևս մաշել նրան, յեթե դեր ել յեղած լիներ մի ժամանակ: Նա ինքն ասում է մի տեղ. «յես տկար եմ և թախծության յենթակա, իսկ նա ուժեղ է».. Բայց Գյոթեն ասել է, վոր նա դեր ե՛ր: Ընդունում ենք, թեև դա մի յենթադրություն լինի, բայց դրա հետ պետք է ընդունենք Գյոթեյի ավելի նշանավոր խոսքը, թե՝ «Ով վոր ուզում է բանաստեղծին հասկանալ, պետք է մտնի նրա աշխարհը», վոր ասել է՝ բանաստեղծին հասկանալ ուզեցողը ինքը

բանաստեղծ պետք է լինի: Այսպե՞ս է արդյոք: Ցերեկ ավյպես չէ, լավ է վոր այսպես լինի, վորպեսզի ամեն վոք գլխապատառ, կոչիկները հագին, չհանդգնի Շեքսպիրի աստվածային աշխարհը մտնել և կամ հարձակվել պ. Աղամյանի վրա առանց նրա տաղանդի նշույլն ունենալու: Համեստությունը և պատկառանքը վատ հատկություններ չեն:

1887

«Աղբյուր», 1887 թ. № 56

ՀԱՏՎԱԾ «ԼԵԶՈՒ»

ՈՒՍՈՒՄՆԱԹԵՐԹԻ «ԼԵԶՎԻ ՄԱՍԻՆ» ՀՈԴՎԱԾԻՑ

Այս տարի հայոց ամսագրության թիվը յերկուսով ավելացավ. Վիեննայում սկսվեց հրատարակվիլ «Հանդես ամսորյա» և Պոլսում «Լեզու» ուսումնաթերթ: Ցերկուսն ել ուշադրության արժանի և պատկառելի աշխատություններ են: Առաջինը խոսում է պետության ամեն ճյուղի վերաբերյալ ժամանակակից խնդիրների մասին, մյուսը խոսում է գլխավորապես լեզվի մասին:

Լեզու ուսումնաթերթը յուր ընդհանուր լեզվաբանական տեսության հետ ունի և մի գործադրական բաժին: Այդ բաժնի մեջ լեզվագետ խմբագիրը, վոր և հայտնի Հ. Տերվիէյանը, առաջ է բերում յուր կարծիքով սխալ գործածվող բառեր ու վոճեր և ցույց է տալիս նրանց ուղիղ գործածությունը:

... Այստեղ թույլ ենք տալիս մեզ նեղանալ Հայր Տերվիէյանից, վոր նա առհասարակ լեզվի վրա խոսելիս մեզ արևելցոցս հայի տեղ չէ դնում, այլապես նա վոչ մեկին այդպիսի խոշոր սխալներ չեր անել, այլև կուրախանար բոլոր այն վոճերի և բառերի վերաբերությամբ, վորոնք մտնում են արևմտյան դրական լեզվի մեջ մեր արևելյան դրականության ազդեցության: Նա ասում է՝ «ժողովուրդն է ազգային լեզվին անսխալ հորինիչն», և այս ասելով մեկ անգամից յերկու խոշոր սխալ է անում: Առաջին սխալն այն է, վոր «ժողովուրդ» ասելով նա մի մխիթարյան բնիկ պոլսեցուց է ակնարկում. ուրիշ վոչ մի դպրատարեզու— Վանի, Ջեյհունի, Մշու, Աբարատյան, Արցախու, Գուգարաց աշխարհի, և այլն, չունի ի նկատի, և լեզվա-

դետ լինելով հանդերձ չեր յերևում, վոր ծանոթ լինի այդ բարբառներին. և յերկրորդ ու ավելի խոշոր սխալն էլ այն է, վոր ժողովրդին ազգային դրական լեզվի անսխալ հորինիչ է համարում: Այս սխալն ավելի խոշոր է նրա համար, վոր նա չի տարբերում, զանազանություն չի տեսնում դրական լեզվի և մի վորևիցե բարբառի մեջ: Գիավառալեզվի, բարբառի հորինիչը արդարև ժողովուրդն է, և նա հորինում է անսխալ, կանոնավոր, ներդաշնակ. նա յուր աղճատումներն էս բառերի վերաբերությամբ կանոնավոր է անում, յուր հնչյուններն էս տառերի վերաբերությամբ կանոնավոր և ներդաշնակ է վոխում. նրա տառադարձության մեջ էս խիստ կանոնավորություն կա: Բայց այսու ամենայնիվ նա չէ դրական լեզու:— Գրական լեզվի հորինիչը ժողովուրդը չէ, այլ դրագետներն են, վորոնց աշխատությամբ բոլոր բարբառախոս ժողովուրդներին միակերպ, մոտավորապես հասկանալի մի ավելի մշակված, ավելի վսեմ և ճոխ լեզու յե հորինվում հետզհետե: Բարբառը հորինվում է բնազդմամբ, մինչդեռ դրական լեզվի հորինման մեջ դիտակցություն կա, և այդ դիտակցությունը յերբեմն հասնում է մինչև սոպռ և խորին տպիտություն: Այդ տպիտության մեջ ընկղմվում են բոլոր այն դիտնականները, վորոնք իրանց լեզվաբանության վրա հույս դրած՝ ազգային լեզվի վոգուն խորթ և ոտար վոճեր ու բառեր են գործ դնում, վորով հորինում են մի... այլանդակ հրեշ: Թերթեցեք հընթացս յերեսուն տարվան մեր ազգային դրականությունը և կտեսնեք, թե ոլ ասես, վոր լիր սաիրիչությունը նրա դեմին չլինի վորձած. ինչ վեճեր, ինչ բանակռիվներ... Այդ վեճերին, այդ կռիվներին ժողովուրդը բնավ յերբեք մասնակցած չէ, և մենք այսոր՝ լավ թե վատ, աղքատ թե հարուստ յերկիցյուղ դրական լեզու ունինք, շատ լավ հասկանում ենք միմյանց ասածը և մինչև անգամ դիտենք վորոշել լավը վատից և զանազանել առողջ ու տկար ուղեղների արտադրությունները միմյանցից:

... Ժողովուրդը լեզվի հորինիչ է, բայց վո՞րպիսի լեզվի և վո՞րպիսի հորինիչ է: «Փոքր» բառի տեղ զանազան դավառական լեզուներում գործ են ածվում— կուճուր, պուճուր, պիծի, ծիկլը, պսակ, պզակ, պըտակ, պիծիկ, պըտ, (պըտ-ոյդի), վոքրիկ հարս): «Վողջ» և «բոլոր» բառերի տեղ՝ դիվի, լոխ (սրա սեռական և յոխչու և վոչ յոխի) քոմմա, չիմ, (սեռական և չիմնի) համեն, զմեն, սաղ, բուրթուն, բիթավի, բիրադի, թա-

մամ, և այլն: Կլինի բառը— կուվի, կըվի—կըվնի, կըվա, կըվա, կեղնի: Այժմ բառը— հիմի, հիմա, հիմակ, հըմի, մըհեկ, հըմեդ, համան, մըկա, ըսկել (յերևի խակուն): Նորա— նրա, ընդրա, ընդուր, ընոր, ենոր, նրվոր, անոր... այսպես և մյուս դերանունները: Այս տեսակ անթիվ բառեր կարելի յե մեջ բերել և հարցնել այնուհետև, թե այդ բառերից վորի՞ն պետք է նախապատվություն տալ և պատասխանել, թե ի հարկե, և վոչ մեկին: Այն բառը, վոր զանազան տեղ զանազան ձևով է գործ ածվում, պետք է վերցնել նրա չխանգարվածը, ճիշտը, ուղիղը: Յես այս տեսակետով կարծեմ, վերացավ տաճկաստանցոց կոր մտանիկը. ինչու ուրեմն մըն էս չչինել մի, ըլլան՝ լինել, ընելը՝ անել, լսելը՝ ասել, կընալը՝ կարենալ, և այլն:

Որինակ առնենք անցյալից.

Շատ ժամանակ չե, վոր ծնունդ առան մեր դրականության յերկոքին ճյուղերն էս: Սկզբումը աչխարհիկ լեզվով դրողների նպատակը շատ պարզ եր. տեսան, վոր ժողովուրդը դրաբառ դրածները չի հասկանում, խելացի, ժողովրդասեր, նրանց հետ լ մխասին և շահասեր, կրոնի վոլսորդներ, սկսեցին ժողովրդի լեզվով դրել: Դուրս յեկան մինչև անգամ հայատառ և թուրքալեզու դրքեր, ըստ բովանդակության մինչև անգամ կըրոնական և հայ յեկեղեցականների ձեռքով դրած: Շատ չանցավ, հանկարծ այդ աչխարհիկ և ռամկական լեզուն ընդհանուր դրական լեզու դառնալու հավակնություն ստացավ: Հավաքվեցան բոլոր բանասերները, վոր «հնչը ցեխիցը հանեն»: Մեծ վեճ բացվեցավ բանասերների մեջ. յերկու ահագին բանակների բաժանվեցան— հակառակ և պաշտպան նոր դրական լեզվի: Հակառակ բանակը դրոց լեզուն եր պաշտպանում, աչխարհիկը նրա խանդարմունքը համարելով: Ներանք այն ել եյին ասում, վոր յեթե դրաբառը մերժեն, վորովհետև պետք է ունենալ վոչ մեկ, այլ յերկնյուղ դրական լեզու, այն է՝ արևելյան և արևմտյան, իսկ այդ համարում եյին ազգամնաս մի բան: Այս ընդհանուր վեճի մեջ Ռուսաստանի հայերը հաղթող հանդիսացան, և այդ վոչ թե նրա համար, վոր ավելի դիտուն եյին քան թե տաճկաստանցիք, այլ նրա համար միայն, վոր նրանց աչքի առջև եր կատարվում ռուսաց աչխարհիկ լեզվի ծնունդն ու բարդավաճումը: Ռուսաստանի հայ բանասերները այլ կերպ մտածել չեյին կարող, քան վոր մտածում եյին իրանց ժամանակից ռուս բանասերները: Հանկարծ դուրս և դալիս մի Ա-

քովյանց և հնօրյա կաղնին կացնով ե կտրում: Խորտակելով դրաբառի չղթաները, ճարտար վաստաբան և հանդիսանում ռամկի լեզվի: Այդ, ի հարկե, մի ծայրահեղություն եր, թեև բոլորովին բնական: Պատրաստի դրական աշխարհիկ լեզու չը-կար, դրաբառը մատչելի չեր ժողովրդին, հանճարի սիրտն այրվում, խորովվում ե, և նա վեր ե առնում ժողովրդի դարերով կազմակերպված լեզուն: Ամենից առաջ նա հասկացավ և հաս-կացրեց, վոր դրական լեզու և բարբառ տարբեր-տարբեր բա-ներ են, թե դրական լեզուն կարող ե բարբառները, ինչպես և դրոց լեզուն, աղբյուրներ համարել իր բարեզարդման համար, վոր սկզբում կարող ե լինել աղքատ և ռամիկ, բայց հետզհե-տե կհարստանա և կազնվանա: Ցեվ այդպես ել սկսեցին վար-վիլ, սկսեցին հոգ տանել նրա հարստության, ազնվության վրա: Ահա այս ճոխացնելը, այս ազնվացնելը՝ ե հոբինումն լեզվի. իսկ այս մեծ գործի կատարողը անշուշտ ժողովուրդը չե, այլ ժողովրդի դաստիարակիչները են: Այս ճոխացնելն ու ազնվաց-նելն ունի և աշն մեծ հետևանքը, վոր մեր դրական լեզվի յեր-կոքին ճղները յերկու հակառակ ծայրերից չեն հեռանում մի-մյանցից, այլ գնում են իրարու հանդեպ, և ուշ թե վաղ՝ պի-տի հանդիպին միմյանց և գրկեն ղիրար:

Այս վոխադարձ մոտենալուն յերթե հակառակ չեն Մխի-թարյան հարք (թե վիեննայեցիք և թե վենետիկցիք), բայց բնավ յերբեք մշակակից և աշխատակից չեն այդ բանին և չեն ել կարող լինել: Արևմտյան դրականությունը մինչև այսոր չի ազատվել Մխիթարյանց ճնշող և ստրկացնող ազդեցությունից: Մխիթարյանք մոլորություն ունին կարծելու, վոր ինչպես դը-րաբառի մշակության մեջ առաջնորդող հանդիսացան, նույն ա-ռաջնորդությունը կարող են իրանց վրա առնել և նոր դրա-կան լեզվի վերաբերությամբ: Բայց այդ մի ինքնախաբեյու-թյուն ե:

Ով վոր գիտե, թե ինչ ասել ե ազգային-ժողովրդական դը-րականություն, նա վոչ մի րոպե չի կասկածիլ, վոր այդ բանը վոչ Մխիթարյաններից սպասելի յե և վոչ ել պարտական են նը-րանք ծառայելու այդ բանին: Նոր լեզուն պահանջում ե նոր կյանք, կյանք ժամանակակից, ազգային, ժողովրդական, յուր բոլոր դիմական և հրեշտակային կողմերով:

Աշխարհային կյանքի համար չեն հոգևորականները: Այդ-պիսի մի բան սպասել հոգևորականներից, մեզ՝ աշխարհական-ներիս՝ ներելի չե:

Այդպես վոր չլիներ, մեր սիրելի Հայրիկը մի հանճարավոր վիպասան կլիներ այսոր: Ինչ չեր լինել հայր Ալիշանը. բայց նա կամա ակամա, յուր բնական կոչման հակառակ իրան նվի-րում ե վոչ ստեղծագործության, այլ հյուսման. յեղած պարա-գաներից նա չինում ե մի Սիսվան, վոր ինչքան և վոգևից-ինչքան և հոյակապ, չե ստեղծագործություն, չե ազգային ժողովրդական դրականության մի չենք, չե նոր լեզվի և գրա-կանության հարստության համար մի չտեմարան: Նրա բանաս-տեղծություններն իսկ վերացական սիրտ արդասիք են. մարդկություն չկա նրանց. մեջ. և այդ բոլորը··· ակամա, վեզարի պատճառով, իրանց ստացած կրթության, իրանց ունեցած ուղղության պատճառով: Ձեն կարող ծիծաղել, ուրախանալ, զվարճանալ, խնդալ, սիրել, «Ջան ասել-Ջան լսել, այլ վողբալ. լալ, հառաչել» սլանալ դեպի յերկինք··· Անտանելի վիճակ, բայց և աններելի ինք-նասպանություն: Արարիչը տվել ե հայոց ազգին մի հատիկ Ալիշան և նա ել՝ Հոնանու պես իրան ծովն ե նե-տել··· Ափսոս վկա, իմ սիրտս կտրատվում ե, յերբ մի առ մի հիշում եմ, թե վորքա՛ն վնասներ ե տվել մեր դրականու-թյանը, մեր ազգային կյանքին կեղծ-կրոնական ուղղությունը: Գանի՛ քանի տաղանդավոր վարդապետներ ենք ունեցել, վորոնք թողել են մեզ կմախքներ միայն, առանց մսմնի և հոգու:

Ինչ արած, պետք ե հաշտվել իրողության բնական ընթաց-քի հետ և հիմարաբար տատասկից թուղ և վշենուց խաղող չը-պահանջել: Բայց և մեր սուրբ հայրերը գոնե այնքան բարեխիղճ լինին, վոր ուր վոր իրանք մտնել չեն կարող, չարգելեն մըտ-նողներին, չնախապաշարեն, չկաշկանդեն նրանց, ինչպես վոր այդ անում են Հայր Մխիթարյանք, վորոնք ճգտում ունին ի-րանց բռնած սխալ ճանապարհով քաշ տալու և ուրիշներին:

«Ուրեմն մի բանի, մի ինչ և ուրիշ ասոնց նմաններն իրրև յեկամուտ գործածություններ իրավամբ մերժելի յեն, յերբ պետք մըն ալ չունինք ասոնց»··· Այսպես և խորհուրդ տալիս Հ. Տերվիչյանը:

Այս առիթով ավելորդ չենք համարում մեր կարծիքը հայտ-նել ոտար բառերի և պարճվածների գործածության մասին:

Լեզուն բառերից ե կազմած, վորոնք ըստ քերականների բաժանվում են «մի քանի» մասերի: Լեզվագետներին ենք թող-

նում ուսումնասիրելու, թե բառերի վո՞ր դասակարգի մեջ կան ոտար, գաղթական բառեր, վո՞րն ե ավելի կամ պակաս վտանգի ենթարկվում, իսկ յես վեր կառնեմ այժմ, իմ ասելիքս ապացուցանելու համար այն բառերը, որոնք նյութական առարկայի անուն են: Ցեղ նախ և առաջ պետք ե հարցնեմ, թե վո՞րն ե նախադուն, առարկա՞ն, թե՞ իր անունը: Անշուշտ առարկան նախադուն ե, թեև արժանահիշատակ Մխիթարյանք գաղափարը՝ ըստ Պղատոնի՝ առարկայից նախադուն եին համարում: Գուցե այդպես ել լինի, յեթե գաղեերս լինենք վերլիսուիայաբար, այսինքն յեթե այնպես խոսելու լինինք, որ մենք ել չհասկանանք մեր ասածը. բայց մարդկորեն խոսելով՝ նախ առարկան ե և ապա նրա անունը, ըստ որում չբծընված յերեխան ավելի շուտ կարող ե անուն ունենալ, քան չեղած առարկան, որովհետև յերեխայի համար դեռ կարելի յե գուշակել, որ պիտի ծնի և այս ինչ անունը պիտի ստանա, բայց հինգերորդ դարում, թեկուզ վոսկեղեն չլիներ նա, այլ աղամանդից, չեյին կարող ասել՝ չոգենավ, հեռագիր, լուսանկար, յերկաթուղի, ոդագնաց: Հայտնի յե, որ այս բառերը մեր ժամանակումն են չինվել, վորովհետև առարկաներն իրանք մեր ժամանակի գյուտեր են: Այդ բառերն այսօր ոտարամուտ չեն համարվում, վորովհետև հայացրած են, թեև դրանք չեն վոչ հին դրոց և վոչ ներկա ժողովրդական: Բայց քանի-քանի բառեր կան, որոնք ոտար յերկրից են գաղթել մեր մեջ և չեն ընդունել վոչ մեր կրոնը և վոչ մեր լեզուն: Որինակ ձեզ՝ «չայ», կուզես՝ ասա թեյ, այդ միևնույն է, կաֆե, շաքար, կարտոֆիլ (կուզես ասա փոթաթես, կամ գետնախնձոր, վոր բոլորովին ուրիշ բան ե), թամբաքո, կուզես ասա թութուն, միայն վոչ ծխախոտ, վոր հայի պատկեր չունի, բայց ինչո՞ւ յերկարացնեմ. դուք ինքներդ հիշեցեք, թե ի՞նչ կերակուրների անուն գիտեք, ի՞նչ հագնելիքի, ի՞նչ կահ-կարասիքի, ի՞նչ դեղ ու ճարի, ի՞նչ ցավերի, և կտեսնեք, թե վորքան անթիվ են դրանք. բայց գիտեմ վորն ե ծիծաղելին. այն, վոր մաքրասեր հայադետները մինչ օրս խախտած են տալիս այդ տեսակ բառեր գործածելուց: Որինակ՝ նրանց համար կան միայն կերակուր և խորտիկ բառերը, բայց չկան փլավ, տոլմա, բողրաչ, քուդլամա, չխրթմա, բորշ, սուպ, բուլյոն և այլն, բայց ուտել սիրում են, մանավանդ փլավը, թեև վոչ նրա անունն ե հայերեն և վոչ ինքն ե հայի կերակուր:

Հարկաստի վերաբերությամբ ևս մաքրասերները վախս են տալիս նրանց իսկական անունը տալուց. որինակ՝ նրանք գործ են ածում մի գլխարկ բառ, թեկուզ այդ գլխարկը լինի ֆես, վալափախ, քուլլահ, թասակ, արաբչին, քալպակ, չապո, չալիկա, և այլն: Դրանք գործ են ածում վերարկու բառը, թեկուզ նա լինի յաղնջկի, քրդի աբա, մուժիկի արմյակ, ուսի չինել կամ պալտո: Ցեղ ի՞նչ ոգուտ ունինք փախուստ տալուց, քանի վոր ժողովրդի լեզուն հեղեղված և և հեղեղվում է ոտար բառերով, վորոնք հայանալու տրամադրություն չունին:

Քաղաքակրթությունը փոխում է մեր նիստ ու կացը, մեր սովորությունները, մեր հագուստը, մեր կերած խմածը: Գիտո՞ք ինչքան խմելիքներ կան մեր ժամանակում, և մինչև ամենին ել կարելի՞ յե ասել ողի, դինի կամ չաքարողի... ինչ և ի-ցե... վերջապես քաղաքակրթությունը փոխում է և մեր մտածելու յեղանակը, խոսելու ձևը: Հին հայերը հոգնակի ձևով չեյին խոսում, թեև յերբորդ դեմքով խոսելու սովորություն ունեյին... չեյին ասում ցտեսություն, չեյին պաչում միմյանց, այլ համբուրում եյին միմյանց, այսինքն իրարից հոտ եյին առնում, ինչպես բուն ինքը ցույց և տալիս, համ-բուրել, վոր կնշանակե հոտ քաշել իրարից: Բայց և այդ ժամանակին ևս նրանք անխըտիր գործ եյին ածում ոտար բառեր (թե խոսակցության և թե գրականության մեջ), վորոնք մի ժամանակ մեր հայկաբանների թվում եյին գուտ հայերեն և մեկնում ել եյին— կանդեղ, վոր է՝ կա-անդ-եղ, յեկեղեցի— յեկ-եղեցի, բազե՝ վոր և վազե...

Հարկ չհամարելով հինգերորդ վոսկեղենիկ դարու մատենագրությունից անթիվ ոտար բառեր մեջ բերելու, վորովհետև վստահ եմ, վոր վոչ վոք այդ մասին կասկած չունի, յես այսքան կասեմ միայն, վոր յեթե մենք խորշելու լինինք ոտար բառերից, թե հնից և թե նորից, և սկսենք մեր գրականությունից դուրս մղել բոլոր ոտար բառերը, այնուհետև ել այնքան բան չի մնալ, վոր կարողանանք «լեզու» հանդես հրատարակել:

Ծայրահեղ մաքրասիրությունը ծայրահեղ ոտարամոլության չափ արհամարհելի յե: Մեզ առաջնորդ պետք և ունենանք մեր առողջ դատողությունը, վոր մեզ թելադրում է, թե ինչ դեպքում ինչպես պետք և վարվիլ: Պետք չե մժոլուկները քամել և ուղտեր կուլ տալ: «Լեզու» հանդեսի լեզուն հայկական մա-

քուր բառեր ունենալով հանդերձ, քնավ յերբեք հայերեն չեն: Լեզուն ամեն բանից առաջ պետք է հոգի ունենա, կենսունակ լինի, բայց վորովհետև Միխիթարյանների տեսությամբ լեզուն իբրև մի դրծարանական մարմին չի նկատվում, մենք կնմանեցնենք լեզուն մի բազմաթել քնարի: Յեթե չեք ընդունում, վոր նա պետք է հոգի ունենա, ընդունեցեք գոնե, վոր նա պետք է քնարի թելերի ներդաշնակություն ունենա: «Լեզու» հանդեսի նույնիսկ բանաստեղծական բաժնի մեջ վոչ մի հոգի չկա, այլ և վոչ իսկ ներդաշնակություն կա:

Ղ. ԱՂԱՑԱՆՑ

1887

«Աղբյուր» № 5–6

ԻՄ ՍՏԱՑԱԾ ՏՊԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ
Գ. ՐԱՖՖՈՒ «ԿԱՑԾԵՐԻ» ՅԵՐԿՐՈՐԴ ՀԱՏՈՐԻՑ

1.

«Կայծերի» յերկրորդ հատորը կարդացվում է մեծ սիրով:

Յերբվոր մի դիրք կարդացողի հետաքրքրությունը չարժում է և հետզհետե առաջ և տանում, առաջ և մղում, այդ դրավչությունը դրքի արժանավորություններից մեկն է և պատիվ է բերում գրողի թեթև, սահուն և աշխուժ դրչին: Այս տեսակ դրքերից ժողովուրդը կարող է ընթերցասիրություն առանալ, վարժ կարդալ սովորել, իսկ նորահաս գրողները՝ թեթև գրելու ձև ու վոճ: Կմնա վոր այս սահուն վոճով գրվածքն նյութին էլ լինի բարոյակրթական, զարգացուցիչ, դյուրամարս և սննդարար, մի կարևոր և ամեն մարդու անհրաժեշտ դիտենալու բան: Կայծերն ունի և այս յերկրորդ արժանավորությունը, վասնզի նրա բովանդակությունն է ըստ մեծի մասին Հայրենիքի կենդանագրությունը, վոր այնքան դեղեցիկ և քնքուշ ներկերով է նկարված: Ընթերցողը կարծես աչքովը տեսնում է յուր Հայրենիքի զմայլելի վայրերը և հիանում, սքանչանում, հետևապես նաև սիրում, և այցելելու միտք ու բաղձանք հղանում...

Հիրավի, ինչքան ցանկալի բան է, վոր ամեն վոք ծանոթ լինի յուր Հայրենիքին, գիտենա, թե նրա վո՛ր անկյունում ի՛նչ կա, ի՛նչ սար, ի՛նչ ձոր, ի՛նչ դաշտ, ի՛նչ գետ, ի՛նչ ոդ, ի՛նչ բերք, ինչ հնություն կամ նորություն, ինչպե՛ս են ապրում յուր հայրենակիցները, ի՛նչ գործ յեն, ի՛նչ վիճակի մեջ...

Ամբողջ դիրքը մի ուղևորություն է, մի ուղևորություն ուխտագնացության պես կամ սար գնալու նման: Յեթե ընթերցողը՝ կամ ասել ուղևորը, մի քնքուշ եյակ է, կարող է չվախենա մի այսպիսի ճանապարհորդությունից, մանավանդ վոր ճանապարհորդությունն ամառն է կատարվում: Վոչ բուք, վոչ ձյուն, վոչ վորոտմունք, վոչ կայծակ ու կարկուտ. Թեպետ վատ չեր լինել, յեթե սրանք ամենն էլ լինեյին, վատ չեր լինել, յեթե Հայաստանի լեռները իրանց արձագանք տալու ահեղ ուժը ցույց տային, ձորերն իրանց հորդահոս հեղեղը, սարերն իրանց բուքն ու բորանը, և այլն. վոչ, այստեսակ և վոչ մի բան չկա. ընդհակառակն ամենքն էլ ուրախ են, ամենքն էլ զբաղվարք, վորովհետև հունձի ու կալի ժամանակ է, գյուղացին ժողովում է յուր տարեկան աշխատանքի պտուղը, բոլոր այդ-ները ծփում են նորահաս և գթարմ մրգերով— խաղող, դեղձ, թուզ, անուշահոտ և չաքարահամ տանձ ու խնձոր... Բոստաններն լիքն են սեխով ու ձմերուկով: Մեկ խոսքով՝ ինչ սիրտ ուզի, ամեն բան կճարես. չոգելու լինիս, մոտդ մի սուվերախտ ուռենի կգտնես. ծարավելու լինիս, մի զովարար աղբյուր, և այսպիսով ամառվան մի քանի ամիսներում կարող ես քեզ Յեղեմական դրախտում յերևակայել. չե վոր հենց դրախտն ինքը մեր Հայրենիքն է յեղել մի ժամանակ, վոր հետո յուր տեղը բուն հայրենիքին տալով՝ ինքը վերացել է ի վերին Յերուսաղեմ...

Այս յեղեմական տպավորություններն ստանալուցս հետո՝ սրտիցս ակամա դուրս փղձկացին սլ. Ամիրճանյանի սրտաշարժ յերգի հետևյալ տողերը.

Թող, ախպեր, թող, վոր իմ սիրտ
Կրակ ու բոց վառված ելնի.
Թո՛ղ իմ աչք կլկլացող
Պղտոր, պղտոր ախպյուր ելնի.
Թե ոյուն ել արտասունք ունիս,
Սրե ծիկ հետ ու լաց արա.
Մեր արտասունք թող ամպ կարի,
Հայոց դաշտեր անձրեվ ելնի.
Սրե, չան ախպեր արե,

Սիրտդ մաներ քյարի նման,
Թե կըսիրես քեռ քրխատոս,
Քեռ պապերու սուրբ դերեզման,
Ու ըմեն դարիը—կուրպաթ.
Հայու տղեք հաստօրական,
Ցեղեք տանք մեր քրտինքներ,
Մեր ցավ ու դարդ կամի պերան,
Հիսապենք, վայ մեզ, ապենք,
Մեր սիրտք վիրին, աչք կլկլան,
Մեր արտասուենք ամպ թող դառնան,
Հայոց դաշտին վերեն կաղան...
Թող, ախպեր, թող, վոր իմ սիրտ
Կրակ ու բոց վառված ելնի,
Թող իմ աչք կլկլացող
Պղտոր պղտոր ակռյուր ելնի...

2.

Կայծերի մեջ տեղադրական նկարագրություններն այնքան դեղեցիկ են, վոր չեն թվեցնում մեզ, թե մի բան պակաս է: Ցեվ պակաս է ժողովրդի բուն կենդանագրությունը յուր բոլոր տառապանքներով: Այս մասը շատ աղոտ վրձինով է նկարած և այս բոլորովին ներելի յե հեղինակին՝ մեզ շատ ու շատ հասկանալի պատճառով:

Բայց բնավ ներելի չեն այն թերությունները, վորոնք վերաբերում են կայծերի հերոսներին —Սալանին, Կարոյին, Մուրադին և քավոր Պետոսին: Վերջին յերկուսը խաչադողներ են, իսկ առաջին յերկուսը՝ խմաստակներ, յեթե չասենք չարլատաններ: Հեղինակի աչքին չեն յերեվում վոչ նրանց խաչադողությունը և վոչ նրանց չարլատանությունը. ընդհակառակն՝ նա ճգնում է ապացուցանել, վոր նրանք մեկ-մեկ իդեալ են: Այս թերությունը հեղինակի կողմից առաջ է յեկել նրանից, վոր նա ամեն տեղ և ամեն բանի մեջ խաչադողություն է տեսնում, և այն մարդիկներին է գործող անձն չինում, վորոնք, ըստ կայծերի, «խաչագողի նման հարուստ ընդունակություններ ունին»: Ահա թե ինչ են ասում նրա խոսող անձինքը, կայծերի 457 յերեսում:

«Ցես տեսնում եյի,— ասում է Ֆարհատը քավոր Պետոսին

առլթով – վոր գարշելի խաչագողն անգամ կարող է ուղղվել, կարող է մաքրվել իր հին կեղտերից և ծառայել մի բարի գործի: «Ովքեր եյինք մենք»— ասում է վոդեվից Մուրադը: —«Մենք մի հասարակություն եյինք: Մեր մեջ կերպարանագործված եր մի ամբողջ ժողովուրդ իր անբարոյական ախտերով»... Դրանք խորհրդավոր, շատ խորհրդավոր խոսքեր եյին: Մի՞թե սարմասացին կամ սարեցին է միայն խաչագողը: Խաչագող կարող է լինել և մի քահանա, և մի արհեստավոր, և մի վաճառական, և մի վարժապետ, և մի աստիճանավոր. մի խոսքով ամեն մարդ, վոր խաչագողի հատկություններ ունի:— Խաչագող կարող է լինել և մի ամբողջ ազգ, վորը «խաչագողի նման հարուստ ընդունակություններ ունի», բայց յուր ընդունակությունները գործ է դնում դեպի վատը, դեպի անաղնիվը և դեպի անբարոյականը...

Մենք չենք վերաբերվում այս կողմնակի հայհոյանքից, վոր ուղղված է հայհոյողը, վոր է Ֆարհատը, մի լմաստակ է, վոր դեռևս վոչ մի հասկացողություն չունի վոչ «ընդունակություն» և վոչ «սրբություն» բառերի գաղափարի մասին: Բայց վոր հարկավի հեղինակը ճգնում է ապացուցանել Ֆարհատի ասածը՝ սրբացնելով քավոր Պետոսին, տեսնենք վորքան է հասել նա յուր այս նպատակին: Ի՞նչ գործ ի՛ն, կամ ի՞նչ է չինում քավոր Պետոսը կայծերում:— Նա այժմ ըստ ձևուն քրդացել է, դառել է քրդի ճգնավոր: Ներանց համար դուշակություններ է անում և սրա համար էլ քրդերը նրան պաշտում են: Վոր նրա այս գործը մի սուրբ գործ է, այդ ապացուցանում են քավոր Պետոսի սանիկ մյուս խաչագող – Մուրադը և հերոսների գլխավորը՝ Սալանը՝ հետևյալ խոսակցությամբ.

— Մուրադ, սիրելի՛ դավակս,— խոսեց Ծերունին (խաչագող քավոր Պետոսը), դու դարձյալ գտնում ես ինձ մի պատահարակելի դերի մեջ և իրավունք ունիս մատածելու, վոր հին խաչագողը, հին չարագործը տակավին չե ուղղվել... Ա՛խ, յեթե դիտենայիր, թե ինչ հանգամանքներ հարկադրեցին ինձ այդ (այս) ամոթալի խարդավանքը հանձն առնել, դու կներեյիր ինձ, դու բարի յես, Մուրադ, դու կներեյիր ինձ...

— Ցեվ կսիրեր ձեզ, ավելացրեց Սալանը:

— Այո՛, կսիրեյի ձեզ... և սիրում եմ... (ասում է մյուս խաչագող Մուրադը): Ցես այժմ հասկանում եմ բոլորը... ամեն ինչ պարզ է ինձ համար... Վոչինչ բարեգործություն չեր

վարող մոռանալ տալ քո տխուր անցյալը... Վոչինչ ապաշխարություն չեր կարող քավել քո հին մեղքերը... Իսկ այժմ քո լորը պետք է սրբած համարել... Այդ անձնազոհությունը, որ դու հանձն ես առել մի մեծ նպատակի համար, կմաքրե քո հին հանցանքները...»

Այսպես ահա հարդելի հեղինակը ամենայն տեսակ խարդախության մեջ նեխած ու փտած քավոր Պետրոսին ազատել և աքսորանքից և կայծերի մեջ մի նոր տեսակ խարդախության մեջ դրել և դրանով արբել նրա անցյալ, ներկա և ապագա մեղքերը:

Ճեվ այս՝ կայծերի խոսքով, կինչանակե «... Մերկանալ հին մարդը և, լրիվ նոր մարդ, նոր հոգով և նոր յեռանդով պատճել դեպի ազնիվը և դեպի լավը»...

Ի՞նչ մարդ է կարոն, և ինչո՞վ է բարձր քավոր Պետրոսից: Կարոն մի իդեալ է, և այն վարժապետի իդեալ: Նա մի ուժեղ հոգի յե, քաջ զինվոր է, նշանավոր մարդիկ է, յերևելի լողվոդ է, հմուտ յերկրագործ է, ժիր տնտեսապետ է, բժշկություն էլ է անում, անասնաբուժ էլ է. նա բոլոր այս բաներով պարապում է և սովորեցնում է, վոչ թե մի դյուղում, այլ մի քանի դյուղերում միանգամայն: Ծառայում է անվարձ. մահճակալ ունի, վրան չի պառկում. մահիճ ունի, գործ չի ածում. պառկում է մերկ հատակի վրա, առանց անկողնի. շատ անգամ կողքերի տակին մանր խիճեր է ածում, վոր ավելի ցավացնե: Ձմեռը վառարանը չի վառում, պատուհանները չի փակում: Իսկ այնտեղ ձմեռը շատ խիստ է: Շատ անգամ մի քանի որով քաղցած է մնում, միայն ծխում է, բայց յերբեք ուժից չի ընկնում: Իսկ յերբ սկսում է ուտել, հինգ մարդու չափ ուտում է, միևնույն հում է ուտում, կաթի պես վոչխարի արյունն է խմում: Այս բոլորի պատճառները բացատրված են և կիմանաք, յեթե կարդաք կայծերի 536 յերեսից սկսած «Գյուղական վարժապետը»: Գյուղացիք նրա արևուն են յերդվում, առանց նրան հաց չեն ուտում: Մանավանդ տերտերն ու ռեսը նրան շատ են սիրում: Նրա չնորհիվ այն գյուղերը, ուր նա վարժապետ է, դառել են մի-մի կատարյալ դրախտ: Կարդացեք և կտեսնեք, թե ինչպես է յեղել այդ: Ըստ ամենայնի կատարյալ կարոն յերկու բիծ ունի միայն: Բիծերից մեկն այն է, վոր կարոն սպանել է յուր մտերիմ ընկերներից մեկին՝ Ռափայելին, բոլոր հերոսների մեջ միակ պատվական մարդուն: Ճերկրորդ

բիծն էլ այն է, վոր այդ դատախարակի վրեժը կարոյի միակ պատվակը՝ Հյուբրին թափառում է անբարոյական վհուկների և պնչուների մեջ, նրա բարոյականության վրա վոչինչ հող չի առանում: Կարոյի նկարիչը, Պ. Բաֆֆին՝ պետք եր խորից մարդ չինել, և չինել է, բայց յեթե մեր Գրիգորը Տրդատի միայն մի ականջը թողեց իորի, պ. Բաֆֆին կարոյի յերկու ականջը մի-մասին է թողել, վորով յուր քաշած պատկերի յերկու աչքը մի-անպամիջ է կուրացրել: Ստեղծողը պիտի միայն պատժել բոլոր այն ստեղծածներին, վորոնք կարելի դուրս բան են ուզում ներկայացնել—ուզում են այնպիսի մարդ ստեղծել, վորպիսին արարիչն ինքն ստեղծած չե:

Մեր ժամանակում, յերբ մի բժիշկ ամեն յափի պեղ է անում, նրան բոլոր չափարով մարդիկը անվանում են անբարեխիղճ բժիշկ, իսկ ամենի խիստ պահանջող մարդիկ, գործին քաջահմուտ մարդիկը այդպիսի բժիշկներին անվանում են «չառլատան»: Այսպես են և այն փոստատարանները, վորոնք պաշտպանում են ամենայն տեսակ գործ, և այն վարժապետները, վորոնք ամանդում են մի բարձր դպրոցում կրթության բոլոր առարկաները: Այժմ ի՞նչ անուն պետք է տանք կարոյին, յեթե վոչ «խաչադողի հարուստ ընդունակություն ունեցող» մի դաստիարակ, վորին ի նկատի առած, Ֆարհատը կարող է ասել. «Քաչադող կարող է լինել և մի վարժապետ, վոր կարոյի նման մի-անդամից ամեն բան է, բայց իսկապես և վոչ մի բան չե...»

Դուրս Ալաչեն է մի որինավոր մարդ: Ալաչեն ամենից շատ ունի «խաչադողի հարուստ ընդունակություններից»: Նա ամենից ծածկամիտն է, ամենից խորամանկը, ամենից խորհրդավորը: Ալաչեն իսկապես տիպն է այն տեսակ մարդու, վոր մի անհչան տեղեկություն հաղորդելիս յուր դեմքին դանդաղ ծամածռություններ է տալիս,— ձայնը ցածրացնում, աչքերը չըռում, դլուխը թեքում դեպի լսողի ականջը և դանդաղ կիսատ պռատ բացատրությամբ ու ստորատությամբ ուղում է հասկացրած լինել, վոր յուր ասածի մեջ մի խորհրդավոր միտք կա, մի վտանգավոր գաղտնիք կա թաղնված, թե հարկավոր է անպայման հավատալ նրան, վորովհետև թեպետ ապացույցներ շատ ունի, բայց կարող չե ասել... Ո՛վ և արդելում արդյոք Ալաչենին, վոր յուր ուզածի չափ թափառե ուր կամենում է, վոր յուր նկատողությունները դրի առնե, յուր դատողությունը հայտնե. նամակ դրե և ստանա առանց Հյուբրիի ոճագրություն դամ-

զանի ոգնությանը դիմելու, առանց ծպտելու, և այլն: Այն վոդերը, վոր այնքան առատ առատ ծախսում է Ալանը, «խաչադրի հարուստ ընդունակությամբ» ձեռք բերված վոդերը են, իբր այն մտքով, վոր մի մեծ բան պիտի չինի յուր հայրենիքում, բայց վոչինչ չի չինում և ինչ վոր չինում է, այդ մի ճանապարհորդություն է և այն շատ հասարակ և անմեղ ճանապարհորդություն, վոր արդեյած չե անել վոչ վոքն, իսկ այն տեղեկությունները վոր նա հավաքում է և յուր դիտեցածով լուսաբանում, այդ կարող է անել ներկից հաղարապատիկ լավ Բաֆֆու նման մի գրող յուր սենյակումը նստած, վորովհետև ուրիշ կերպ կարելի եյ չե. մարդ պետք է շրջապատած լինի իրեն տեղագրական և պատմական գրքերով, վոր կարողանա ճիշտ թվերով և տեղով ասել այն, ինչ վոր ասում է Ալանը, և այս պատճառով եյ, պ. Բաֆֆին ավելի քիչ ծախքով, մի սոսկ տպագրության ծախքով միայն կարող եր այդ բոլորը Ալանից լավ ամփոփել մի գրքի մեջ: Այն խորհրդավորությունը, վոր հեղինակը տվել է Ալանին, դա մի խնդկատակություն է և ուրիշ վոչինչ: Ալանով վերջնում է կայծերի առաջին հատորը, նույն Ալանով վերջանում է և կայծերի յերկրորդ հատորը: Առաջինի վերջում նա գնում է Վան, յերկրորդի վերջում՝ Հնդկաստան: Բարի՛ ճանապարհ:

Կայծերի վերջին գլխում «Համբ» անունով մի գիտնական մարդ կա, ի հարկե շատ խորհրդավոր: Պետք է կարդալ միայն և տեսնել: «Նա լավ բնագետ է և մաթեմատիկոս»: Նա միևնույն ժամանակ բանաստեղծ–վիպասան է: Այս գիտնական անձը, այս բնագետ–մաթեմատիկոս և բանաստեղծ–վիպասանը այնպիսի անհեթեթ և պուտ ու սխալ դատողություն է տալիս թե գիտության և թե բանաստեղծության մասին, վոր կամա ակամա գալիս ես այն յեզրակացության, վոր նա մի կատարյալ իմաստակ է: Բայց թողնենք, վոր կայծերի հերոսները խոսին:

— Առաջ նա ինչո՞վ եր պարապվում (պարապում), հարցնում է Ալանին Ֆարհատը Համբի մասին:

— Նա պարապվում եր (պարապում եր) գիտությամբ,— պատասխանում է Ալանը:— Նա լավ բնագետ է և մաթեմատիկոս: Բայց հետո թողեց գիտությունը:

— Ինչո՞ւ թողեց:

— Նրա կարծիքով, մենք, հայերս այնքան վոգի թվով պատրաստ մարդիկ ունինք, վոր մենք պետք է խնայենք մեր ուժերը ավելի կարևոր պահանջների համար: Ցեվրոպայում հազարավոր մարդիկ զբաղված են գիտությունով, նոր հետազոտություններ են անում, նոր գյուտեր են անում, և յուրաքանչյուր գիտությունը հարստանում է բազմաթիվ նոր հրատարակություններով: Մենք կարող ենք նրանց պատրաստած գրքերը թարգմանել կամ փոխադրել մեր լեզվով: Գիտությունը ամեն ազգի համար նույն է անում: Բայց կա մի բան, վոր Ցեվրոպան չե կարող մեզ տալ, վորը մենք ինքներս պետք է ստեղծենք:

— Ի՞նչ բան է այդ, հարցրի յես (Ֆարհատը հետաքրքրությամբ):

— Ազգային բանաստեղծությունը, վոր ամեն ազգ ինքը պետք է ստեղծե... Համբը թողեց գիտությունը և սկսեց բանաստեղծությամբ պարապվել (պարապել): Նա բնական տաղանդ ուներ և թեթև սահուն լեզու: Գրում եր վոտանավորներ, գրում եր զանազան պատկերներ, գրում եր և վեպեր: Նրա աշխատություններից մի քանիսը տպվեցան և կարդացվում եյին մեծ ախորժանքով, բայց շատերը անտիպ մնացին... Մենք զրկվեցանք մի բանաստեղծ–վիպասանի ամենագեղեցիկ վաստակներից...»:

Ուրեմն ամեն վոք, յեթե ուզենա, կարող է բանաստեղծ–վիպասան դառնալ, կարժե միայն գիտությունից հրաժարվել: Եվ ո՞ւր ենք գիտությունը կրքուքյան, մտավոր զարգացման առարկա չինում դաստիարակության գործում: Եվ ինչո՞ւ յենք մեղադրում այս և այն բանաստերին, վոր բնության հատարակ յերևույթները ծուռ և բացատրում, կամ բնավ չի հասկանում: Եվ ինչո՞ւ պիտի պահանջություն համարենք, յեթե Ալանին պետք բժիշկ ճանապարհորդը չի հետաքրքրվում Հայաստանի բազմազան ծաղիկներով, բույսերով, հանքերով և այլն, այլ ամբողջ բնությունը նրա համար մի մութ աշխարհ է, մինչդեռ ամենահասարակ մի կին անգամ պիտի չարժեր նրա հետաքրքրությունը: Ֆարհատը այդ տեսակ մենտորի առաջնորդությամբ միայն իմաստակ կարող է դառնալ:

Մեկ տեսնենք բժշկապետ Ալանն ինքը վորպիսի հայացք ունի գիտության և բանաստեղծության վրա:

— Իրավ է, (ասում է բժշկապետ Ալանը) բանաստեղծությունը և առհասարակ բոլոր գեղարվեստական գրվածները ազգի մեջ վոգևորողը և մեծ «ղեկավարողը» պետք է լինեն: Գիտությունը չոր ու ցամաք անունդ է տալիս մարդկանց մտքերին,

բայց բանաստեղծությունը կենդանացուցիչ սիրտ է տալիս նրանց սրտերին, հոգուն, յիրեվակայությանը: Բանաստեղծը ստեղծում է ժողովրդի համար իդեալները,— բարձր, հանրամարդկային իդեալները: Յեթե ներկայի մեջ չի գտնում յուր իդեալների տիպարները, նա մտնում է պատմության խորքը, և ժամանակների հնությունից դուրս է կոչում յուր ցանկացած հերոսներին և նրանց պատկերները, իրանց վսեմ գործերի նկարագրերով՝ դնում է ներկա սերնդի առջև, որ նրանցից որինակ առնեն և նրանց նման լինեն: Նա ստեղծում է և ապագայում պիտի հայտնվեցին: Նրա սուր աչքերը տեսնում են ներկայի մեջ այդ չծնված տիպարների՝ ամենալուսավոր նշմարները միայն: Նա մարդարեի հոգով նախատեսում է, թե տարիներից, դարերից հետո՝ որոնց այդ նշմարները իրանց ազգնական դրությունից կամեն, կդարպանան, կիերարանագործվեն և կատարյալ ձև ու կազմություն կստանան,— և նրանց պատկերները կանխապես նկարում է և դնում յուր ժամանակի հասարակության առջև: Ճշմարիտ բանաստեղծը դիտե անցյալը, դիտե ներկան, դիտե և ապագան: Ժամանակները նրա ձեռքումն են: Յուր հերոսներից մեկի թերությունները նա լրացնում է մյուսից առած հատկություններով, և ներկայացնում է իբրև կատարելագործված տիպարներ»...

Յես չեմ կարծում, որ մի թժչկապետ մարդ, ինչպիսին Ասլանն է, որ յուր ուսումը գործնական Ամերիկայումն է ավարտել, բանաստեղծությունը և բանաստեղծներին այսչափ բարձրացներ, թեկուզ այդ բանաստեղծը լինեը մի Շեքսպիր: Բժիշկները շատ լավ գիտեն, որ բանաստեղծները, մանավանդ դրչակոչ բանաստեղծները մեծ մասամբ խելագար են լինում: Ասլանի այս հայացքը նոր չե, դա հազար անգամ կրկնված խելապարի մի վառանցանք է:

Այս մասին կարելի չե խոսել, շատ խելոք ընդդիմախոսել, բայց այս կինչանակը դիտության և դեղարվեստի այբուբենը սովորեցնել պ. Բաֆֆուն, որ անշուշտ լինքն էլ գիտե, որ չափազանցություն և յուր ասածը, դերբիչի կարծիք է, ուրեմն և ներելի...

Այս է ահա իմ ուսացած տպավորությունը Կայծերի յերկրորդ հատորից: Յեվ վորովհետև իմ այս տպավորությունը տպվում է «Աղբյուրի» դաստիարակների բաժնում, հարկավոր եմ համարում մի քանի դաստիարակական նկատմունքներ ևս անել, ի հարկե, վոչ պ. Բաֆֆուն խրատելու համար:

3.

Ամեն բանին պետք է յուր իսկական անունը տալ:

Ամեն թերություն խաչապողություն չե:

Շատ մարդիկ կարող են յոթը մահացու մեղքերի տեր լինել, բայց խաչապող չլինել:

Ինչպես կան տեղական հիվանդություններ, նույնպես կան և տեղական մոլություններ և ուսուքինություններ: Մի ախտ կարող է Սամսոնումը տեղական լինել և ուրիշ տեղերում չերևալած: Յեթե գարաբաղին խաչապողություն անե, իսկույն կբռնվի, ինչպես Մակար վարդապետը յուր «Գարաբաղի գաղտնիք»-ով: Վոչ վոք կարող չե տալ ուրիշին յուր չունեցածը, բայց և պետք չե ամեն մեկին չլինելին վերաբերել յուր ունեցածը: Անասունն և անասունի նման, իսկ մարդիկ իրարից չատ տարբեր են: Իմաստակն ազատ և յուր գլխով մի իմաստունի խելք վերլուծել, նրան խոսեցնել, բայց հետևանքն այն կլինի, վոր իմաստունն ևս դուրս կգա դրողի պես մի իմաստակ:

Ասոված, «վոր ամենայն ինչ հոչնչէ արար», լուկ խոսքով մի այն, մարդու ստեղծելու վրա բավական ժամանակ և աչխատանք գործ դրավ, այս պատճառով էլ մարդը դուրս չկավ մի շատ բաղադրյալ արարած: Մենն ի մարդաբան Մովսես լավ երիմանում, վոր մարդ ասածդ լուկ խոսքով ստեղծելու պատմալ չե: Նա կարծես սրանով որինակ տվավ բոլոր ստեղծածներին, վոր դժուշ վարվին դեպի մարդիկ և նրանց գործակցուցիչ մասնագետները—նրանց մարմինը, նրանց միտքն ու հոգին լավ ուսումնասիրեն, լավ ծանոթանան մարդու մտքի ու հոգու արտադրության հետ, վորպեսզի յերբ խոսելու լինին անանձնավորության, կրքոտության, դիտության, ուսման, ճարտարության, դեղարվեստի, կրոնի, դիվանագիտության և այլ այս աեսակ բարձր բաներին մասին, լավ իմանան նրանց եյության:

Պետք է հարգել դեղարվեստի ամենատարրական օրենքները, վոր են հետևյալ ճշմարտին, դեղեցկին և բարվույն: Վերջին յերկուսին անծանոթը պետք է դոնե առաջինին հետևի, այն

և՝ ճշմարտին: Շատ դրողներ կան, որոնք վոչ հանճար են և վոչ դիտնական, այլ միայն ճշմարտին հետևող, իրանց հասատատ դիտցածը դրում են չնորհքով, և դուրս և գալիս մի պեղեցիկ բան: Այս և պատճառը, վոր շատ անգամ չափավոր կըրթութիւն ստացած մարդիկ հիանալի բաներ են ստեղծում, իսկ նրանք, վորոնք ձգտում ունին իրանց ուժից վեր մի բան ստեղծելու, այնպիսիների գործը կործանվում և անկանդնելի կերպով:

Տաղանդը մաչելու հատկութիւն ունի: Բանաստեղծ հասակի այլևայլ շրջանում այլևայլ ձև և ստանում նրա դրվածքը: Ամեն վոստանավոր բանաստեղծութիւն չե և վոչ ամեն վեպ անուն կրող՝ վիպասանութիւն: Տաղանդի դրվածքը չի նմանիլ «ուռկանի ափակերոյ ի ծով և ամենայն ազգաց ժողովելոյ», վոր ընթերցողը հարկադրված լինի ընտրել գաղրին և ի բաց ընկենուլ ղիտուտանն: Վոչ, նա կնմանի գործարանական ամբողջութեան, մի նկարչական ամբողջութեան, վորից չեթե մի բան կտրես, արյունաքամ կլինի ամբողջը և կմեռնի, կամ կերևի խիստ, վոր նա մի վիրավոր հսկա չե: Մեծ թերութիւն և գրողի համար, երբ նա մի բան գրելիս աշխատում և յուր բոլոր դիտեցածն ու չդիտեցածը նրա մեջ տեղավորել և սարդի ճարտարութեամբ մի վոստայն հյուսել: Սարդը չպետք և որինակ լինի բանասերին, այլ չերամն ու մեղուն...

Ինքնամանկութիւնը թուլլի, սորվի, գոյի և մանավանդ խնաչազդի հատկութիւն է: Ինքնամանկութիւնը հարուստ ընդունակութիւն չե, այլ աղքատ, դրական ընդունակութիւն չե, այլ բացասական. նա առողջ հոգու վիճակ չե, այլ հիվանդ. այդ ընդունակութիւնը գործ և գրվում միշտ ի վնաս ընկերներին և վոչ հոգուտ, այդ ընդունակութեամբ յերբեք սուրբ գործ գործել կարելի չե, այլ միշտ պիղծ: Բարոյապես ուժեղ մարդիկը, ճշմարիտ առաքյալները, անկեղծ հայրենասերները խոտրամանկ չեն լինում. նրանք գնում են աղնիվ ճանապարհով, անվեհերութեամբ, գնում են անձնազոհութեամբ, քաջի պես, բայց վոչ խելագարի: Քաջութիւն, խոհականութիւն, անձնանվիրութիւն— ահա այս հատկութիւններն ունեցող հերոսներն են, վորոնց դյուցազնաց կարդն և ձգում ժողովուրդը և պաշտում:

Մենք մի առած ունինք, վոր ասում և «կաթի հետ մտածը հոգու հետ դուրս կգա»: Ժառանգական ախտերն անքուժելի յեն քան մեծի մասին: Բայց և այնպես ցեխը ցեխով չեն լվանալ, այլ ջրով:

1887

«Աղբյուր» 1887 № 8–9

ԱՒ Պ. ՐԱՖՖԻ

Բարեկամ, «Արձագանք» չաւուիթաթերթի 39-րդ №-ի մեջ կարդացի ձեր իմ դեմ գրած ասիական հայհոյանքով բողոքը, և խնդուն պրեցի նրա հերքումը, ինչպես ձեզ ել բերանացի հայտնեցի, վոր դուք շատ բառերը իրար հետ չփոթում եք, ինչպես մաղալ բառը համարում եք մարդու հատուկ անուն, նվերը՝ ներբողյան, և այլն: «Արձագանքի» խմբագիրն իմ հերքումը չտպեց, բայց դուք, վոր արդեն հասկացել եք ձեր սխալը, կարող եք յերկու տողով չտիել, իբրև աղնիվ մարդ: Ձեր հիշած վոստանավորը տպագրված և «Աղբյուրի» 1884 թվականի յերկրորդ տետրում «Սառնամանիք» վերնագրով. ընթերցողները կարող են ստուգել, թե կամ արդյոք նրանում ներբողյանի հետք դնպի ձեզ և ձեր աշխատութիւնը:

Ղ. ԱՂԱՅԱՆՑ

1887

«Աղբյուր» 1887 թ. № 11

ՄԱՏԵՆԱԳՈՍՈՒԹՅՈՒՆ

«ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ» ՀՈՎՀԱՆՆԵՍ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ

(Մոսկվա 1887. տպարան Ո. Ի. Հերբեկի, գինն է 60 կ.)

Մի ժամանակ կոմս-եմմանուել և Գամառ-Քաթիպա, իբրև բանաստեղծներ, մրցում եյին իրար հետ, և ընթերցող հա-

աբրակութիւնը չէիտեր վորին աստ առաջնութիւն, վորովհետև, ինչպես նկատած կլինիք, հայ դէմոմը յերկու դործիչ մի-ասին հաշտ կերպով չեն տեղավորվում.— յերբ բարձրացնում են մեկին՝ ցածրացնում են մյուսին, յերբ սիրում են մեկին, ատում են մյուսին:

Մեռավ Կոմս–Եմմանուելը, լուց Գամառ–Քաթիպան: Լուրթիւնն ընդհանուր եր: Այս այն ժամանակն եր, յերբ դուրս յեկավ պ. Շահազիզյանի «Լևոնի վիշտը» և սուն ընդունելութիւն հանդիպեցավ ուրանոզութիւն կողմից: Գամառ–Քաթիպան, վոր դիտեր միշտ ժամանակի հետ յերթալ, յուր փնարը պատից կախեց, զրիչ առավ ձեռքը և սկսեց բառարան չինել, լրագիր հրատարակել: Լուց այնուհետև պ. Շահազիզյանն ևս, և յերկար ժամանակ մենք մի նոր բանաստեղծ չունեցանք: Վերջին ժամանակներս Գամառ–Քաթիպան նորից ձեռք առավ յուր քերնարը, բայց նրա թևերն այլևս Սրաքսի ալիքների պես «զարիվ զարիվ չեյին խփում լալագին», այլ կարծես բարկացած զազում եյին անդադուն ջրապցի նման, իրար յերես կրծում և յերկաթ ծամում:

Բայց ի՞նչ եր այս լուրթյան պատճառը. մի՞թե մենք այլևս ուաղանդներ չունեյինք, վոր դրանք բարձրացնեյին. կամ յեղած-ներս դեռ չծագկած՝ արդեն թառամեցան, մաչվեցան: Վոչ այս և վոչ այն: Ռուսաց գրականութիւնն այդ ժամանակ յուր դարավոր կապանքներից ազատված՝ մի անսահման անձարձակութիւն ստացավ, և սկսեց գարերով սրբացած բաները վոտնատակ տալ,— ուաղանդը չինեցին կապամբ, հանճարը՝ բանջար, և մոդայից ընկան Պուշկին, Լերմոնտով, Ժուկովսկի և այլք: Ուսանողութիւնն այլևս բանաստեղծութիւն չեր կարդում և վոտանավորները գրողների վրա ծիծաղում եր: Գիտնական գրքերով հեղեղվեցավ ուուսաց թարգմանական գրականութիւնը և ընթերցող հասարակութիւնը սուլ սեւածի նման սկսեց լափել այդ գրքերը և վոխանակ մարսել կարողանալու, հարբեցավ: Ամեն մի խմասակ ձգտում եր Բոքլ և Դարվին դառնալ, ամեն մի համրակ՝ Ոգյուստ Կոնտ և Սպենսեր: Ահագին ազմուկ և վեճ բարձրացավ ռեալական և իդեալական ուղղութիւնից վրա, խելոքները չկարողացան բան հասկացնել, խենթերն ուսյ անցան և կործանեցին գեղարվեստի բոլոր հրաշալիքները... փետուրե մուրճերով... Եվ չեմ ասում, թե այդ ուղղութիւնից վորևիցե տիպեր ծնունդ առան... բայց բանը մինչև այնտեղ հասցրին,

վոր ճակատները պատին դիպավ և սկսեցին փոքր ի շատե խելքները գլուխները հավաքել... Միևնույն ժամանակ կրթութեյան խնդիրն առաջնակարգ տեղը բռնեց և բոլոր բանիմաց դասախոսականները վոչ միայն պաշտպան հանդիսացան բանաստեղծութեյանը, այլև քիչ առաջ մոռացված բանաստեղծներին վերակենդանութիւն տվին նրանց համար հոբելյաններ կատարելով և արձաններ կանդնեցնելով:

Մեր գրականութիւնն էլ, վոր ուուսաց գրականութեյան ամենահլու հպատակն և, նրա մատների արքանյակը, ըստ ամենայնի յենթարկվեցավ նրա ազդեցութեյանը:

Այսոր ահա մեր բանաստեղծութիւնն ևս վերակենդանանում և ի ձեռն պ. Հովհաննես Հովհաննիսյանի, և այն ուսանողութիւնը, վոր մի ժամանակ սուն ընդունելութեյան ցույց տված վարժապետին, այսոր ուշադրությամբ և ընդունում նրա աշակերտին: Արդարև պ. Հովհաննիսյանը պ. Շահազիզյանի հարազատ աշակերտն և, և վոչ և ասավել քան զվարդապետս յուր: Այսոր պ. Հովհաննիսյանի մեջ յուր վարժապետի թերութեյանները ավելի չեն աչքի ընկնում, քան նրա արժանիքը, վոր դեռ պետք և վաստակել: Թերութեյուններն են— բառերի դասավորութեյան խրթնաճանութիւնը, դրութեյան բուն վոճը, «և»-երի անտեղի և հաճախ գործածութիւնը, և բարոյական մեծամտութիւնը, վոր պ. Շահազիզյանի ժամանակակից բանաստեղծներին եր հատուկ:

Որինակներ—

Ինչպես գրգիռը արյան պատանու,
Ամբոխիկ ժպիտն արևի աչնան

Այսինքն՝ ինչպես պատանու արյան գրգիռը, աչնան արևի ամբոխիկ ժպիտը:

Ցեվ հերաթափ սիրով վգիս
Փարե, մեղմիկ փաղաքշե:

Այսինքն՝ — Ցեվ հերաթափ փարե վգիս,
Սիրով, մեղմիկ փաղաքշե:

Բանաստեղծական դրվածքին խրթնաձևությամբ վսեմությունն տալն արհեստական է. ասացվածն ինքը պետք է վսեմ լինի յուր ամենամերկ պարզության մեջ, ինչպես Հերքուլեսի մերկ անդրիանդը: Ճշմարիտ բանաստեղծությունը չպարանքի ճշնամի չե, նա սիրում է պարզը, բնականը:

«Ցեվ» պատրաստ եմ քեզ հավիտյան
Լինել անկեղծ կարեկից,
«Ցեվ» թող բեռը քո տխրության
Ձը հեռանա իմ սրտից:

Ամեն մի բանաստեր յուր սիրած բառերն ունի, և մենք շատ անգամ նույնիսկ այդ բառերից լսանում ենք, թե ում դրված է: Այսպես է՝ որինակի համար՝ ս. Րաֆֆու «առեց»-ը, վոր նրան, իրրև սարմաստեցու, շատ հարմար և դալիս ասելու. կամ ս. Արծրունու ասելը՝ «ինչ անենք նրա հետ». բայց ինչի՞ նման կլիներ, յեթե ամենքն էլ սկսեյին այս անհատական սխալ վոճն իրանց սեփականել: Ցերևի հաճախակի գործածությունը մի անհատական հատկություն է ս. Շահազիզյանի համար, և այնքան խորթ չի թվում մեզ նրա դրվածքում, բայց յերբ դրբանք փոխանցվել են այսոր ս. Հովհաննիսյանի բանաստեղծությունների մեջ, շատ խորթ են հնչում մեր ականջին, մանավանդ վոր դրանք վոչ դեղարվեստական և վոչ բնությանական միտք ունին:

Իսկ բանաստեղծը յուր լեզվով, յուր վոճով, յուր յերեվակայությամբ մի ամբողջ ժողովուրդ է: Ճշմարիտ բանաստեղծի դրվածքը կմնա դարերով և կպատկերացնե անցած գնացած ժողովրդի հոգեկան և մտավոր աշխարհը: Պետք չե հավատալ, թե «ժամանակները բանաստեղծի ձեռքին են», թե «նա դիտե անցյալը, դիտե ներկան, դիտե և ապագան»: Վո՛չ: Բանաստեղծը մի չատ համեստ մարդ է, նա յուր ժամանակի «խալխի նոքարն է», նրա թերությունների պախարակողը, նրա արժանավորությունների գովողը, նրա ցավին ցավակիցը— ուրախությանն ուրախակիցը: Բանաստեղծի ցավը, վիշտը ժողովրդինն է, ինչպես և ժողովրդինը՝ նրանը: Նա ունի նույն հավատը, վոր ունի ժողովուրդը անցյալի վերաբերությամբ, նույն սերը, վոր ունի ներկայում և նույն հույսը, վոր ունի ապագայի վերաբերությամբ: Բանաստեղծը ժողովրդի լեզուն է, նրա սրտի հայտարարն ու թարգմանը: Վերջապես բանաստեղծը ժողովրդի ծնունդն է և վոչ ժողովուրդը բանաստեղծի:

Բանաստեղծության վրա այս տեսակետից նայած՝ ս. Հովհաննիսյանի վոտանավորները ճշմարիտ բանաստեղծության դրոշմ են կրում իրանց վրա: Այս կա միայն, վոր ոտար հողի վրա, ուր «աղջիկն էլ է ոտար, հավատն էլ, ոտար և լեզուն» բուն ազգային բանաստեղծություն աճել և պարպանալ կարող չե, այլ կվերջանա մի քանի թախծալից հառաչանքով և ավաղով, վորով կհեսաքրքրվի միայն «Ոտարուհին» և կհարցնե՝ «Հե՞ր ես լալիս»: Այլ բան կլինի, յեթե ս. Հովհաննիսյանը կընտրե յուր նկարագրած «Ցերկու ճանապարհներից» դժվարագույնը: Ահա թե ինչ է ասում ինքը բանաստեղծը այդ ճանապարհների մասին և վորպիսի դրության մեջ է զգում ինքն իրան:

Նայում եմ առաջ— յերկու ճանապարհ
Բաց է իմ դիմաց. մեկը ոտնում է
Շքեղ, բաղդավոր, նվիրական աչխարհ
Ինքուչ ղազմունքի, ուր միշտ ծաղկում է
Գարունը սիրո յերկնքից որհնած:
Այնտեղ անթառամ վարդի պսակներ,
Ցերջանիկ որեր սիրով զարդարված
Ցեվ վայելչության անճկալի ժամեր
Աչխատավորի վաստակած դլխին
Պիտի պարգևեն հանդիստ խնդագին:

Մյուսն անապատ ինձ դուրս է հանում,
Վոր կարոտում է մշակող բազկի:
Այստեղ պերճափառ վարդ չե բուսանում,—
Միայն տատասկը և փուշը վայրի·
Ցեվ կյանքը մեռած և ոգը խեղդող,
Սրտացավ խնամք, յեթե այդ լիներ,
Միշտ յերախտամոռ հոգուց վոտնակոխ·
Չե ժպտում արև, սեվաթուխը ամպեր
Գոռ փոթորիկ են յերկրին դուշակում:—
Ցեվ յես կանգնած եմ և խորհրդածում,
Ո՞ւր իմ անհաստատ քայլերս ուղղեմ,
Արդյոք յերկուսից յես վո՞րը ընտրեմ:

Այնտեղ, ըղձում եմ, վարքիս, յերջանիկ
Գըլորվելու յեն իմ կյանքի ոլոր.
Աչալեղ կույսը հայացք չքնաղիկ
Պարզևում է ինձ, և սըրբանվեր
Նոճիների տակ սիրտ պըղուկս հանդչի
Նորա մարմարիոն կուրծքին նավելի,
Յեվ սիրտ պտնեմ այն վառ աչերում
Յեվ պրախատավայել մի վայելչություն...

Այստեղ ականջս վայելելու չե
Կանաչ պուրակում թռչնոց մկկոցին,
Վոչ պիտի տեսնեմ արևոց թագիշե
Յես անուշաբույր ծաղկոտ մարգերին:
Վո՛չ. արյուն—արցունք, լըցյալ հառաչանք,
Սնոտի ամբոխի անվերջ ոռոգոցք,
Սրտիս քրտինքով մշակած դեռին
Ավարի վատոնած— ահա՛ իմ բաժին:

Բայց այնտեղ կյանքը չունի նպատակ
Բացի անձնական բարօրությունից,
Իսկ այստեղ գործի ասպարեզ արձակ,
Աղնիվ և վսեմ, թեև վըշտալից:—
Յեվ յես կանդնած եմ և խոր մտածում...
Կյանք, ինձ յերկուսից վո՞րն ես պատրաստում:

Պատասխան: Կյանքն արդեն պատրաստել և յերկուսն էլ, մեզ հարկավոր և միևյն ընտրել, իսկ այդ ընտրությունը կախումն ունի մեր բնական կոչումից: Բնական կոչումն այնպիսի մի բան է, վորից վախուստ տալը դժվարին է, յեթե չասենք անհնարին: Հոնանը փախավ, մինչև անգամ ծովը նետվեցավ, յերեք որ և յերեք գիշեր ձկան փորումը մնաց, բայց դարձյալ չկարողացավ փախչել այնտեղից, ուր նրան հրամայված եր գնալ: Վիշապը չկարողացավ մարսել Եհովայի մարգարեին, և նրան դուրս ժայթքեց ցամաք...

Յերբ վոր Հերքուլեսին յուր հայրը դուրս եր արել տանից, և նա սար ու ձոր ընկած թափառում եր, վերջը կանգ առավ մի «յերկճյուղ» ճանապարհի վրա, և մինչդեռ մտածում եր, թե վոր ճանապարհն ընտրեր, նրա առջև դուրս յեկան յերկու դեմ-

յուհք— մինն «աչալեղ մի կույս չքնաղ հայացքով» սիրախոսո յերիտասարդին հաճելի և դրավիչ չարժմունքով, իսկ մյուսը՝ տուրը և պատկառելի դեմքով, վեհ և վսեմ չարժմունքով: Աչալեղ կույսը մոտեցավ Հերքուլեսին և ասաց. «Յես իմ յեսևից, յես քեզ կտանեմ դեպի վայելչություն, փափկություն, վա՛ռք, պատիվ, մեծություն, և դու կլինես ամենաբախտավորը բոլոր հողեղենների մեջ»: Իսկ դու ո՞ւր կըտանես ինձ, ասաց Հերքուլեսը, դառնալով դեպի պատկառելի աստվածուհին: Նա պատասխանեց. «Յես չեմ կարող խոստանալ քեզ աշխարհային վայելչություն, մեծություն, փափկություն: Յես քեզ կտանեմ դեպի ներքություն, ստուգություն, դու կենթարկվես հաղար ու մեկ վտանգների, բայց քո վարձը կլինի այն, վոր դու կընկնես դյուցազանց կարգը և կանմահանաս»...

— Տա՛ր ինձ քո յեսևից, բացականչեց Հերքուլեսը և դնաց քաջության և առաքինության ճանապարհով: Ինչուչտ Հերքուլեսն այս ճանապարհը չեր ընտրել, յեթե նա Սրամտության վորդին չլիներ, այսինքն՝ յեթե նա այդ կոչումը չունենար: Այսպես ընտրեց և Նոյն Հերքուլես դիտչն ամենասիրելիչ, յերբ վորձիչը խոստանում եր նրան աշխարհիս բոլոր վայելչությունը: «Երթ յո՛ւս իմ, ասաստա՛ասաց աստծո վորդին, դի «Նե՛ղ և դուռն և անձուկ ճանապարհ, վոր տանե՛ ի կյանս»...

Մեր հեքիաթներում յերեք են այն ճանապարհները, վորոնց հանդիպում են յերեք յեղբայրներ մի դժվարագյուտ բան ձեռք բերելու դնալիս: Այնտեղ դրած է լինում մի քարի վրա, թե ազ դնացողը կդնա և յետ կգա, մյուսին ճանապարհով դնացողը կամ յետ կգա կամ չէ, իսկ ձախով դնացողն էլ յետ չի դալ: Մեծ յեղբայրն ընտրում է հեշտը, միջակը՝ կատակածավորը, կրտսերը՝ վտանգավորը: Յեվ հաղթություն էլ կրտսերն է տանում: Գեղեցիկ որինակ: Կան մարդիկ, վոր փառք ու պատվի մեջ են, և առանց աշխատանքի ապրում են ուրիշի հաշվով, կան վոր իրանք աշխատում են և իրանք ուտում, և կան էլ վոր աշխատում են ուրիշներին ապրեցնելու համար: Այդպես լինչ վոր չի աշխատում ձեռք բերել առաջին սերունդը, յերկրորդը վորձում է և ձեռք բերել, բայց անհաջող, և յերրորդը կարողանում է ձեռք բերել:

Պ. Հովհաննիսյանը իրրև մեր բանաստեղծներից կրտսերագույնը պարտական է դժվարագույն ճանապարհն ընտրել, վորպեսզի կարողանա ձեռք բերել այն, վորին նախորդները հասնել

չկարողացան: Թող Մասյաց Մուսաները զորավիդն լինին նրան և թև տան՝ թռցնեն մինչև հայկական Պառնասի գագաթը և մի ընդարձակ հորիզոն բաց անեն նրա բանաստեղծական հանճարի համար: Շնորհավորում ենք առ ի սրտե մատաղ բանաստեղծի առաջին գրական փորձերը և ցանկանում ենք ամենայն հաջողություն:

1887

«Աղբյուր» № 10

ՊԱՐՈՆ Գ. ՑՆ.–ԻՆ.

Կարդացի Ձեր դրվածքը «Արձագանք» չաբաթաթերթի 45–րդ համարի մեջ: Ցեթե քննադատողը յուր քննադատած ամեն մի գրքի հեղինակի կամ նրա պաշտպանների և յերկրպագուների հետ սկսե բանակռվել, նա ել ժամանակ չի ունենալ յուր սկսած ավելի ոգտակար գործը շարունակելու: Դուք կարդացած կլինեք «Բրուտի չունը» «Արձագանքի» մեջ, դուցե և Հ. Տերվիշյանի պատասխանը, վոր իմ քննադատության մեջ անկրոնություն և տեսնում. իսկ դուք ել կրոնականություն եք տեսնում և անարժան ու հանդուգն եք համարում: Այսպես է մեր մեջ քննադատողի վիճակը, թեև այդ քննադատողը ձեր ասելով մի դուզ մարդ լինի և դուզ խոսող: Ցես ասել եմ, վոր բանաստեղծը յուր ժողովրդի և ժամանակի ծնունդ է: Իմ ասածը մի բացարձակ և հավիտենական ճշմարտություն է: Սորա մեջ են ամփոփված թե Հոմերոս, թե Շեքսպիր, թե Լուտեր և թե բոլոր ձեր հիշած մարդիկը: Բայց վոր դուք իմ ասածի մեջ տկլոր ռեալիզմ եք գտնում և վոչ չքեղազարդ իդեալիզմ, այդ նրանից է, վոր դուք մոռացել եք ձեր միտը բերել, վոր աշխարհիս յերեսին առանց իդեալի ժողովուրդ չկա, և ազգ ազգից, հասարակություն հասարակությունից և դասակարգ դասակարգից տարբերվում է յուր իդեալով:

Պարոն Հովհաննիսյանի բանաստեղծությունների մասին յես ուրիշ վոճով և ուրիշ մտքով եմ դրել, վոր դուք չեք ուզեցել հասկանալ և խծբծել ու աղավաղել եք իմ ասածները, թե դիտությամբ և թե անգիտությամբ: Հայհոյանքը վոչինչ ասելիք

չունենալու նշան է, իսկ հակառակորդի ասածներն աղավաղելը— անխղճության: Պարոն Հովհաննիսյանի բանաստեղծությունների մասին ավելի ընդարձակ քննադատություն ունի ըստացած խմբագրությունը պ. Սեդրակ Մանդինյանից և կտպագրե առաջիկա հունվարի ամսաւերում: Իսկ Պետերբուրգի հրատարակությունների մասին. իմ ասելիքս դեռ վերջացած չէ. յերբ վոր կտպվի, այնուհետև խելացի մարդիկ կտեսնեն, թե վորի ասածներն են անարժան և հանդուգն...

1887

«Աղբյուր» 1887 թ. № 12

ՄԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

1) «Ուրիշի գերեզմանի վրա առանց արտասուքի եկ լաց լինում»:

2) «Բուլղար ավազակապետ»: 3) «Նեդա»:

Ս. Պետերբուրգ. 1887. տպարան Սկորոխոդովի.
(յուրաքանչյուրի գինը 5 կ.)

«Աղբյուրի» խմբագրության մեջ բավականաչափ նորանոր գրքեր կան ստացված: Վորպեսզի սոսկ չնորհակալությամբ չվարձատրեցինք մեր մատաղ գրականության ժրաջան մեղուներին, ուղեցանք փոքր ինչ ընդարձակել «Աղբյուրի» Մատենախոսական բաժինը:

Վերը բերված գրքույկները իրանց ծավալով ու գնով մի կերպ մատչելի յեն թե ժողովրդին և թե մանուկներին և կարող են հազարավոր որինակներով տարածվիլ, ուստի հարկավոր է այդ տեսակ գրքերի բովանդակության վրա ավելի լուրջ ուշադրություն դարձնել:

Առաջին գրքույկը (Ուրիշի գերեզմանի վրա առանց արտա-

աուքի չեն լաց լինում) հայտնի չէ, թե մի հեղինակություն և արդյոք, թե մի թարգմանություն կամ վոխադրություն: Հավանական է, վոր վոխադրություն լինի, բայց շատ անհամ վոխադրություն է, վորովհետև վորոշ կերպով չի պահպանվում, թե ինչ կյանքից և առնված, արդյոք բուլղարակա՞ն, թե՞ հայկական, թե՞ յերկուսից մի՞անդամայն:

Մի քաղաքում ապրում և յեղել Տանչո անունով մի մարդ: Նա մի կին և ունեցել Դոնա անունով և հինգ զավակ, վորոնցից մեծը՝ Զլատոն մի նորահաս, առաքինի և պեղեցիկ աղջիկ և յեղել: Տանչոն թեև աշխատասեր և առաքինի, բայց շատ աղքատ և յեղել: Ցերեխաքն որերով քաղցած են յեղել մնում, հարուստները չեն յեղել ողնում նրանց, և այս առիթով անհայտ հեղինակն ասում է—

«Մեր (մեզ) մոտ ոսկորաբար ահա թե ինչ է նկատվում: Ամեն մի հայ քանի վոր նա պեռ ապքատ է, կամ քանի վոր վոչ մի պեռական պաշտոնի մեջ չի գտնվում— նա բարեկամին, նա յուր բարեկամին, յուր հայրենակցին կարոտության մեջ թողնուլ չէ, նրա դուռը միշտ բաց է խնդրողի առաջ և նա միշտ պատրաստ է բաժանել յուր չոր հացի պատառը, յուր աղի պանրի կտորը չունեցողի հետ. բայց հենց վոր մի քիչ հարստացավ, նա բոլորովին փոխվում է, ուրիշ մարդ է դառնում:— Հայ քաղաքացի եֆենդին այդ մի տեսակ ապրած է, վորի ամբողջ կյանքը լցված է աղահության և արծաթասիրության, անգթության և արհամարհանքով դեպի յուր հեղբայրները, դեպի յուր ապքատ հայրենակիցները: Մինչդեռ դյուղերում, վորտեղ հայը անծանոթ է այդ տեսակ եֆենդիների հետ, նա ավելի խաղաղ և յերջանիկ է ապրում. այդտեղ նորա կյանքը, հոգին շատ հաղիվ անդամ է վարակվում մարդկային աղտոտություններով»:

Նախ հայտնի չէ, թե հայր անունը վորտեղից թռավ ընկավ Դոնայի, Տանչոյի և Զլատոյի անունների մոտ, և յերկրորդ՝ այս ինչ փիլիսոփայություն է, վոր անում է հեղինակը հայ եֆենդու և դյուղացու վերաբերությամբ:

Վորովհետև մեր մեջ շատ շատերը կան, վոր այս հայացքն ունինք, այս պատճառով հարկավոր ենք համարում մի ավելի վորոշ կարծիք հայտնել այս մասին, և մի դյուրական հայեցակետ առալ մեր նորահաս և անփորձ դրողներին:

Ճշմարիտ է, վոր հայ եֆենդին, հայ վաճառականը կամ քաղաքացին, հայ հարուստը հարստահարում են չքավորին, ծառային, դյուղացուն, բայց ճշմարիտ չէ, թե հայը, քանի վոր նա դեռ աղքատ է, կամ քանի վոր վոչ մի պեռական պաշտոնի մեջ չի գտնվում, նա բարի չէ, նա յուր բարեկամին, յուր հայրենակցին կարոտության մեջ թողնող չէ, նրա դուռը միշտ բաց է խնդրողի առաջ, և նա միշտ պատրաստ է բաժանել յուր չոր հացի պատառը, յուր աղի պանրի կտորը չունեցողի հետ: Վո՛չ, յեթե այդ լիներ, ել վոչ հարստահարություն կլիներ, վոչ չքավորություն և վոչ մի այլ տեսակ թշվառություն:

Մեր ժողովրդի մեջ, ինչպես և ամեն մի բարբարոս ժողովրդի մեջ, ամենքն են ճնշված և ամենքն են ճնշող,— հզորը տկարին, ունևորը չունևորին, խելոքն անխելքին, և յուրաքանչյուրը յուր չափով, ով ինչքան վոր կարող է, ով ում վոր կարող է: Մարդին դուրսը ծեծում են լրանից զորեղները, նա ել գնում է յուր կնկանն է ծեծում, կնիկն յուր վրեժը յուր վորդուցն է հանում, վորդին ել յուր փոքրիկ քրոջն է ծեծում, քույրն ել կատվի կամ հավի ճագին է ծեծում, կամ յուր տիկնիկին: Տերտերն յուր մոնթերին է ծեծում, մոնթերը մի՞մյանց, ով ում կարող է:

Ցեթե այսպես չլիներ, բուն մարդամայել հատաբերությունը առաքինության չարքը չէր ընկնիլ, ինչպես են որինակ՝ յեղբայրասիրություն, պատվասիրություն, վողորմածություն, պինդություն և այլ այսպիսիք, վորոնք բարբարոս յերկրներում կարդե դուրս բաներ են համարվում և մեծ առաքինություն: Այն հասարակ մարդամայել վարվելագողությունը, վոր մի լուսավորյալ յերկրի հետևի ռամիկն ունի ըստ սովորության ճեռք բերած, բարբարոս յերկրի ամենից խելացի համարվածը չունի և կարող չե ունենալ:

Ինչ վոր ասացինք ծեծելու և ծեծվելու մասին, նույն և մի յերևույթը նույնատեսակ վերաբերում է և հարստահարության: Հայրը հարստահարում է յուր զավակներին. հայրական ուժ ու խնամք չունի նրանց վրա. նրանց կրթության, դաստիարակության վրա հոգ չի տանում: Հոր համար մայրը մի դրամատվություն է, իսկ զավակները՝ նրա տոկոսները, հայրը կուլ է տալիս յերկուսին ել: Մայրը հոր աղախինն է, իսկ վորդիքը՝ նրա յերկուսին ել: Մայրը՝ հոր քածն է, իսկ վորդիքը նրա լակոտները: Հենց այս աղտեղի բառերն ել գործ են ածում ամեն մի

բարբարոս ընտանիքի մեջ: Հորն ել հարստահարում է կալվածատերը, կամ նա, ումից վոր կախումն ունի անմիջապես: Նրան հարստահարում է և վաշխառուն, և տանուտերը, և զբաղերը, և յուր դրացին, և յուր յեղբայրը: Բեղին ել հարստահարում է իրանից մեծը, այդ մեծին ել իրանից մեծը, մինչև ծայրը հասնում է ամենամեծին, վոր նույնպես աղատ չե հարըստահարվելուց:

Ել հարկավոր չեմ համարում չարունակել: Միանգամ դուք ձեր տեսածը, (յեթե միայն տեսած եք մի բարբարոս աշխարհ, մի բարբարոս գյուղ, մի բարբարոս ընտանիք), ներկայացրեք ձեզ ճշտությամբ, և այնուհետև ամեն ինչ խոսք մանրամասնությամբ կպատկերանա ձեր առաջ և դուք կտեսնեք, վոր այդ բարբարոսության մեջ ևս մի կանոն, մի որենք, մի ներդաշնակություն կա, ինչպես մի խժական լեզու, վոր այստ ամենայնիվ յուր մաթեմատիկական ճիշտ կանոններն ունի: Զուտնան սլիանոն չե, բայց նա ել յուր ներդաշնակությունն ունի դնդլբաղի հետ: Ընտանիքի մեջ ծեծ, ուտումնարանում վալախա, դատարանում քթատել և ընչատել... մեկը մյուսին կալժե, մեկը մյուսին չատ հարմար ե, մեկը մյուսից կախումն ունի, մեկը մյուսի հետևանքն ե և իրար հետ կցված ու բարբարոսական ներդաշնակություն են կազմում...

Այս ընդհանուր ներդաշնակությունը խանգարվում է միայն այն ժամանակ, յերբ ժողովուրդը մի վիճակից ուզում է անցնել դեպի առավել լավը: Այս ձգտումը կարող է լինել ներքին և բնական, կարող է լինել և արտաքին, արհեստական: Ներքին ձգտմամբ ավելի արագ է փոխվում ժողովուրդը, քան թե արտաքին, բայց յերկոքին դեպքում էլ այդ անցողական վիճակի մեջ խանգարվում է վերոհիշյալ ներդաշնակությունը: Այդ անցողական վիճակը նմանում է քնարի լարելուն, վոր մի ճնճղճնկոց է, մի փորձ և ներդաշնակություն ձգելու թելերի մեջ մի նոր յեղանակ ածելու համար: Այդ ճնճղնկոցի մեջ անհներդաշնակությունը կատարյալ է. թելերից մեկը թույլ է, մյուսը կտրվում է, յերրորդը հարկավոր ձայն չի հանում. թելերի մեջ թվի կողմանե պակասություն է նշմարվում, ածել ուղեցողը քաջահմուտ չե յուր գործին, և այլն, և այլն:

Մի այսպիսի վիճակի մեջ ենք այսոր: Ուզում ենք դրսից մի նոր յեղանակ ածել, բայց թելերի մեջ ներդաշնակություն ձգել չենք կարողանում և վոչ ել դիտենք, թե ինչ յեղանակ ալի-

տի ածենք, վոր ժողովուրդը մեզ լսե և ըստ այնմ պատրաստ լինի: Մեր այս ջանքը մասամբ նման է Կուլտուրտրեգերությանը»: Ասում եմ մասամբ, վորովհետև մենք նրա յերաժիշտներին չատ անպետք չենք, և առանձին առանձին ասած՝ շատ պետական ենք, միայն միասին գործելու վոչ սովորություն և վոչ ձգտում ունինք: Միակ բանը, վոր մեզ գործողներիս, առաջնորդողներիս, դաստիարակներիս պակաս է, վոր չկա նաև ժողովրդի մեջ, այդ համայնական վոգին է, այդ ընկերական վոգին է, հասարակական վոգին է:

Համբուրվին ապրելը դեռ համայնականության նշան չե, ինչպես վոր հայրենիքում ծառը պես քաշ մնալը, դաշտի պես վորջ մտած լինելը, վտիտից, տրեխից չզրկվելը հայրենասիրության և կրոնասիրության նշան չե: Համբուրվին և անխոփոխ մրնում են նաև մեր թաղաքցիմանները, մեր սիրելի յեղբայրք վրացիքը, նույն իսկ քրդերը, բոշաները և չատ անասուններ, գազաններ և մրջյուններ: Դրանք համբուրվին ապրելով հանդերձ, իրար մլիս են ուտում, իրար ջնջում են: Դրանց մեջ չկա փոխադարձ ոգնություն, փոխադարձ պահպանություն, փոխադարձ սեր, միություն, մի խոսքով չունին ընկերական, համայնական վոգի:

Իսկ մենք՝ հայերս մասնավոր առմամբ կարող ենք չհամայնակության մի կատարյալ տիպար համարվիլ: Մեր դրացի ազգերի մեջ չհամայնականությունը մանկական է, անդիտակցաբար է, անմեղ է, կուսական է, իսկ մեր մեջ՝ դիտակցաբար է, դիվական է. մեզնից ամեն մեկը մի առանձին հակումն ունի, մի առանձին ձգտումն ունի չհամայնական լինելու: Մեր արյունը վարակված է այդ դաղրեի և թունավոր ախտով: Վոչ միայն մեր քաղաքներում և գյուղերում չկա համայնական— ընկերական վոգի, այլ և վոչ իսկ մեր յեկեղեցու մեջ, մեր վանական ուխտի մեջ, մեր միաբանության մեջ, մեր նվիրապետության մեջ, մեր չատ թե քիչ լուսավորյալ «ընկերության» մեջ:

Այս է ահա մեր ամենամեծ ցավը, այս է մեր ժառանգական ախտը: Ցավ մեր բոլոր թշվառությունը այս միակ ախտի հետևանքն է և վոչ տգիտության, բայց բժշկել կարելի չե միայն դիտությամբ, մանավանդ հիմնավոր տնտեսական դիտությամբ և կրոնական կրթությամբ: Այն՝ վոր կիսագրագետ և կոպիտ դերմանացու համար արդեն մի քնավորություն է, այն՝ վոր անուշ

մալականի համար մի ընտելմունք է, այն՝ վոր մի պրապիտուԹյան Թշնամի դուխտրուի համար մի ունակություն է,— այդ քնավորուԹյունը, այդ ընտելմունքը, այդ ունակուԹյունը հային կարող ենք տալ միայն մեծ ջանքով և խնամքով, վերամկրտելով նրան խելացի կրԹուԹյան ջրով, սովորեցնելով մարդավարի ապրելու այբուբենը, վոր նա ղջա, տեսնի, չոշափե և համոզվի, Թե վերջապես էրար տուն քանդելով՝ վոչ մնկի տունը կանգուն չի կարող մնալ, Թե հարկավոր է միմյանց տուն չինել, վոր ամենքի տներն էլ կանգուն մնան: Հեչտ չե այսպիսի մի հատկուԹյուն տալը մեր ժողովրդին, վանդի այլ է յեղած հատկուԹյունը զարգացնելը և այլ մի նոր քնավորուԹյուն, մի նոր հոգեկան հատկուԹյուն տալը. բայց ուրիշ յելք չկա, հիվանդին պետք է բժշկել, Թեև դիտենաս, վոր նրա ցավըն անբուժելի յե... Բայց չատ յերկարացրի... խնդրում եմ հաղար ներողուԹյուն...

Շարունակենք Թշվառ Տանչոյի արկածները:

Տանչոն ի վերջո դիմում է հարուստ Ասլրո եֆենդուն, վոր վարձում է նրան ամառվան հարյուր ղուրուշով և ուղարկել նրան գյուղերը վոչխար դնելու: Բայց վորովհետև Տանչոյին պետք էր բացակայած ժամանակ յուր գերդաստանի կեցուԹյունն ապահովել, խնդրում է աղայից, վոր նրան մի ամսականը կանխիկ վճարե: Խստասիրտ Ասլրոն յերկար ընդդիմանալուց հետո վերջը տալիս է նրան վաԹսունհինգ ղուրուշ, բայց հարյուր ղուրուշի մուրհակ է առնում... Ճանապարհ ընկնելիս հարկահան Նիկոն կորում է Տանչոյի առաջը և պահանջում, և նրանից յերկու տարվան ապառիկ մնացած հարկը— յերկու հարյուր ղուրուշ: Աղաչանք, պաղատանք չատ է անում Տանչոն, բայց չի կարողանում ազատվել Նիկոյի ձեռքից: Տանչոյի ձին գրավ են վերցնում:

Այս տեսարանը նկարագրված և հետևյալ կերպով—

> Ձիուն (ձին) վերցրին և տարին յուր բեռնովը միասին, վորի մեջ փաթաթված եր ղեռ չսառած հացը, պաները և Տանչոյի մխակ չալիկը:
>
> — կորա՛, բոլորովին կորա՛, աղաղակեց Տանչոն. այժմ Ասլրոն էլ յուր փողերը յես կպահանջե... ի՞նչ պետք է անեմ, տեր աստված, ինչ պետք է անեմ... ինչով եմ յես մեղավոր, ինչո՞ւմն է իմ հանցանքս: Ես անաղնիվ չեմ, յես վոչ վոքի չարիք չեմ հասցրել, բայց

> ահա չարչարվում եմ, ահա տանջանքը տիրապետել է ինձ...: Իսկ մենք— մենք մեռնում ենք սովից ու կարոտուԹյունից: Ո՛վ նախնիք, ո՛վ հայրենիքի սուրբ պաշտպաններ, դուք դնացիք և այժմ չկա մեկը, վոր փրկե մեզ անորեն բռնուԹյուններից, վոր աղատե մեզ պալանային անգԹուԹյուններից: Ո՛վ սրբազան ժողովրդական կամք, քեզ մոռացել է, քեզ չե ճանաչում բռնակալների և չարագործների իշխանուԹյան տակ ստրկացած ժողովուրդը... Մայրե՛ր, ինչո՞ւ համար եք յերկնել և ծնել մեզ, և դո՛ւ, Թշվա՛ռ յերկիր, ինչո՞ւ չես խորտակվում մեր խայտառակուԹյան և ստրկուԹյան ծանրուԹյան տակ... վո՛ւհ ամուսին... վո՛ւհ սիրելի վորդյակներ... Այս խոսքերը արտասանելով Տանչոն մի այնպիսի կատաղի ձայն արձակեց, վոր բոլոր շրջապատողները սարսռացին. նա չեր լալիս, այլ միայն տենդային ցնցումներով կոտրատում եր ձեռները և բռունցքները սիմում:

Այս պատկերի մեջ Տանչոն մի կատարյալ էինդյանա յե. կարծես հարկ պահանջելը մի յեղեւնադործուԹյուն լինի, այն էլ մի քսամնելի յեղեռնադործուԹյուն: Կարծես այն պատերը, վորոնց կանչում է, ավելի շատ հարկ չլինեին առած, ավելի չըլինեին կեղեքած, ստրկացրած իրանց բարբարոսուԹյան չնորհիվ...

Վերջը Տանչոյին, ինչպես ապաւելի յերը, գցում են բանտ, վորովհետև Ասլրոն էլ յուր հարյուր ղուրուշը պահանջեց:

Հեղինակը յեԹե միջոք ինչ չնորհք ունենար, Տանչոյի բանտ ձգելը գայմագամի և Նիկոյի կոլմից մի նախամտածած նախագիծ կհամարեր, իրանց չար նպատակին հասնելու համար, վորովհետև գայմագամ Խալիլ եֆենդին Տանչոյի բանտ ընկնելուց հետո, աչք է ձգում նրա աղջիկ Զլատոյի վրա պատահարար, վորով բավական Թեթևանում է նրա յեղեռնադործուԹյունը:

Մի դործողուԹյուն յեղեռնադործուԹյուն համարելու համար պետք է աչքից չվախցնել դործողի հասկացողուԹյունը և դործելու յեղանակը: Խալիլը իբրև Թուրք գայմագամ, Զլատոյին տեսնելուց հետո, ուղում է նրան յուր կին առնել, բայց վոչ առանց համաձայնուԹյան Տանչոյի, (գործյալ անչնորհքուԹյուն հեղինակի կողմից): Հարկահան Նիկոն, վոր մի բարբարոս հայ է և գայմագամի կույր արբանյակը, աշխատում է հա-

մոլել Տանչոյին, ասելով, վոր յեթե եֆենդու ուզածը կատարե, կալատաքի և բանակից և աքսորից, իսկ յեթե վոչ, կմնա բանտումը և յուր ընտանիքը սովամահ կլինի:— «Ես քո լավը եմ ցանկանում, այդ պատճառով եմ խորհուրդ տալիս», չարունակում է Նիկոն:

— Եհ, Նիկո ախպար, պատասխանում է Տանչոն, «ՈՏԱՐԻ ԳԵՐԵԶՄԱՆԻ ՎՐԱ ԱՌԱՆՑ ԱՐՏԱՍՈՒՔԻ ՅԵՆ ԼԱՅ ԼԻՆՈՒՄ» (այսպես խոշոր գրելով էլ տալված է այս խոսքը)...

Վերջը Տանչոն խոսքով համաձայնում է յուր աղջիկը տալ Մալիլին, այն հույսով, վոր այս խոստումից հետո ինքը կապահովի կերթա տուն և կսպանե Զլատոյին, վոր անօրենն ձեռքը չդցե: Բայց Մալիլը այդպես շուտ չի արձակում նրան, այլ կրկին բանտ է ուղարկում, մինչև ամեն բան վերջացնում է, հետո յե արձակում նրան:

Բանտից դուրս գալուց հետո, յերբ վոր Տանչոն լսանում է, վոր Զլատոն արդեն գայմագամի հարեմումն է, սպանում է Նիկոյին, իսկ գայմագամին բանտարկյալների ազնվությամբ (վորոնց արձակում է ինքը շատ հեշտությամբ) կապտոում են և տանում...

Այստեղ բաժանվեցա և դրված, հայտնի չէ, թե ուր են տանում Մալիլին: Տեսարանը վոխվում է. ռուսները պատերազմում են թուրքերի հետ, հաղթում են նրանց, Տանչոն մտնում է հիլյալ գործողությունը կատարած քաղաքը ռուսների հետ միասին, «վորոնք իրանց հետևից քաշ էլին տալիս չղթայակապ Մալիլին, ինչպես մի բռնված գազանի»: Սրանից հետո տեսարանը դարձյալ վոխվում է: Ռուսները խաղաղության դաշն են կապում և յետ քաշվում: Թուրքերը նորից սկսում են նույն քաղաքին և հեղինակը ասելով— «Սկսեցին հազարավոր ու միլիոնավոր բռնաբարություններ, առաջվանից հազար անգամ խիստ, ավելի անողոք...»:

«Տանչոն վախչում է և պատսպարվում է այն լեռների մեջ, վորտեղ ապաստանում են բոլոր ապստամբության սկզբողները»: Այսպես և վերջանում գրքույկը և մի անորոշ վիճակի մեջ գրնում ընթերցողին, վոր ակամա հարցնում է ինքն իրան, թե այս ի՞նչ բան է արդյոք, և ի՞նչ նպատակի յե ծառայում, քանի վոր վոչ դեղարվեստական տեսակետից, վոչ պատմական, վոչ յուր անիմանալի տենդենցիայով, վոչ յուր չենք ու չնորհքով

մի բանի նման չե, թեև այստ. ամենայնիվ 5 կոպեկ արժե, վորովհետև սրանից ավելի անչնորհք գրվածներ շատ կան մեր մեջ, վորոնք ավելի թանգ արժեն...

Յերկրորդ գրքույկն է «Բուլղար ավազակապետ»: Ահա մի դեղեցիկ վեպիկ, վոր դեղարվեստական տեսակետից կարող և որինակելի լինել մեր բոլոր անճաշակ վիպագրողների համար: Զարմանում ենք մտածելով, թե այս քանքարասիրտ գրչի հասցեն պատուղին ընտրելու չափ ճաշակ ունեցող մարդիկը ի՞նչպես են ընտրել նախընթաց գրքույկը, վոր մի խակամտության արդասիք է: Շատ դեղեցիկ է «Բուլղար ավազակապետը» իրրև մի դեղարվեստական չենք, բայց այստ. ամենայնիվ մենք անհամակիր ենք մեր ուսանողների գործունեության այս ընթացքին: Դոն-Քիշոտը չէր կարող անցած դնացած ասպետությունը վերակենդանացնել. նրա վորձը տհաճ ուղեղի տեր մարդիկ կանեն, անմտաբար ընկնելով սարդերի վոտտացնած վորոգայթի մեջ: Այս մասին յեկող անգամ. հիմա տեղ չկա այլևս:

1887

«Ազդյուր» 1887 թ. № 10

ՊԵՐՃ ՊՈՈՇՅԱՆՑ

ՅԵՎ ԻՐ

ՍՈՍ ՅԵՎ ՎԱՐԴԻԹԵՐԸ.

1.

Հին ժամանակներից սկսած մինչև դարուս 40-ական թվականները մեր կրթվող սերունդը Սաղմոս ու Նարեկ եր կարդում ամեն որ, և մենք ինքներս տեսանք չատերին, վորոնք բերան դիտեին այդ գրքերը և մրմնջում եյին չարունակ, դիշեր թե ցերեկ:

Այս մի կրոնասիրական շրջան եր. թե աշխարհական և թե հոգևորական միահերթ կրոնականի խստակյաց կյանք եյին վարում:

40-ական թվականներից սկսած նոր սերնդի կրթությունը մի նոր շրջանի մեջ է մտնում. կրոնասիրության վրա ավելանում է հայրենասիրությունը: Թաղիադյան, Սրմյան Հայրիկ և Ալիշանյան իրանց բազմաթիվ աշակերտներով ու համախոհներով կրթվող սերնդին տալիս են այս ուղղությունը: Բոլոր մատաղ բանաստեղծացուները և վիպասանացուները Նահապետի չուրջն եյին պատվում, նրա յերգերը յերգում և նրա բանաստեղծություններն արտադրում իրանց ծաղկաքաղ տետրակների մեջ ղեղանկար ղրչության: Սրդարե՛վ Նահապետ, Նահապե՛տ մի քանի սերնդի: Վորքա՛ն մեծ և մեծ բանաստեղծի ներգործությունը կրթվող սերնդի վրա: Պռոշյանի՝ «Աղբյուրի» ներկա համարում տալված վոտանավորը, վոր նա գրել է մեղանից յերեսուն տարի առաջ, Նահապետի ներգործության արդյունքն է:

2.

Այդ շրջանի գլուխ հայրենասիրական ուղղությունը մի պակաս կողմն ուներ միայն, վոր գուրկ եր բուն ժողովրդական, բուն աշխարհիկ տարրից: Կրթվող սերունդը մի վերացականությունից ընկել եր մյուս վերացականության մեջ: Ցերինջից լինելով՝ չեր կանդնել իր ժամանակի և իր գետնի վրա, այլ հին ժամանակի և հին գետնի: Այդ ուղղության դեմ է, վոր բողոքում է Գամառ-Քաթիպան, ասելով՝ «Հայկ ու Լեվոնին մոռանանք, յեղբայրք, թալ տանք մեղանից վոչին հնության»... Բայց այդ հնության վոչին առաջին անգամ թալ տվողը յեղավ Խաչատուր Աբովյանցը. նա չընտրեց վոչ Հայկին և վոչ Հայկանուշին, այլ Աղասուն ու Նաղլուին:

Ինչպես յերկար չողերից ու յերաշտից հետո հանկարծ բարձրանում է մի անճրևահասն վոտթորիկ, և ամեն հին ու մին, փտած ու խախուտ բան, աղը ու ղիբիլ սրբում, մաքրում է, ճիշտ այդպիսի մի վոտթորիկ եր Աբովյանցի գրությունը, վոր ամեն հին ու մին սրբելով մշակության մի նոր անդաստան բացարավ, ղործունեության նոր ասպարեզ տվավ նոր սերնդին, և այսպիսով ժամանակակից վիպադրության հայր դարձավ:

Աբովյանցը վոչ միայն նորագույն ղրականության ճանա-

պարհը հարթեց մեզ համար, վոչ միայն քաղաքացիության արտոնություն տվավ աշխարհիկ լեզվին, վոր մինչև այն ժամանակ կիսադրաբարի տարուկն եր, այլև, վոր ամենից մեծն եր, նա մի հզոր հաղթանակ տարավ աշխարհականության կողմից հոգևորականության վրա: Վոչ մի հոգևորական, թեկուզ լիներ ավելի հանճարեղ քան թե Աբովյանցը, կարող չեր այդպիսի մի բան անել: Վո՞ր ուխտատակ և ավանդատակ հոգևորականը վեր կկենար և ջարդ ու փշուր անելով դրաբառի շղթաները ցույց կտար, վոր նույնիսկ Քանաքեռի պես մի աննշան գյուղի ռամիկ լեզուն ավելի ուժ ու կենդանություն ունի, ավելի հարմարավոր և և սեռքական ղրական լեզու լինելու համար, քան վոսկի դարու դրաբառը: Վո՞ր լավ և տպավորավոր հոգևորականը կհամարձակեր այնպիսի մի հանդուգն արշավանք մղել ընդդեմ դրաբառի, ընդդեմ Նարեկացու լեզվի, ինչպես Աբովյանցն է անում Զանգուի նկարագրության մեջ, ուր իր կոպիտ բարբառով մանում է Նարեկացու բարբառի մեջ՝ կարծես դիտությամբ, վոր ցույց տա ռամկական լեզվի հավասար ուժ ունենալը նրա հետ: Վո՛չ, հոգևորականը չեր անիլ. նա աշխարհային սիրո յերգիչ չե, այլ աստվածային: Աշխարհիկ լեզվով ղրողհոգևորականներից չատերը միայն աղճատում են այդ լեզուն և ազամաղում, այդ անում են դիտությամբ, ցույց տալու համար, թե հնարավոր չե առանց դրաբարի աշխարհաբար գրել, պետք են դրաբարի նախդիրները, հոլովմունքը, խոնարհմունքը, և այլն: Անչահ մոլեռանդությո՛ւն...

3.

Ֆիղիկական աշխարհում մեծ մարմինները այնքան մեծ ձգողական ուժ ունին, վոր դեպի իրանց են քաշում ավելի փոքր մարմիններին, վորոնք կամ կպչում են նրան և կամ պատվում նրա չորս կողմով: Այս միևնույն որենքը տեսնում ենք և բարոյական աշխարհում: Բոլոր մեծ մարդիկը, մեծ հանճարները կրթվող սերունդի սիրտն ու հոգին դեպի իրանց քաշելու սաստիկ մեծ ուժ ունին: Այդ ուժը մեծ և մանավանդ մեծ բանաստեղծների և վիպասանների մեջ: Զարմանալի չե ուրեմն, վոր յերկու ղրելի հանճարները՝ Հ. Ղ. Ալիշանյան և Խ. Աբովյան դեռևս պատանի Պռոշյանցին փոփոխակի քաշելին դեպի իրանց: Նախքան Աբովյանցի ղրության ղուրս գալը՝ Պռոշյանցը պատվում

ել Նահապետի չուրջը, բայց դեռ կես ճանապարհն՝ նրան հա-
վիշտակում է Աբովյանցի Աղասին, հավիտակում է Թիֆլիսու-
մը Մ. Սարգսի նման, ու մի ակթարթում դնում է Աչտարակ
դյուղումը: Մեղանից ո՞ւմ խելք ու միտք, ո՞ւմ սիրտ չէ հա-
փշտակել Աբովյանցի դրուքյունը, բայց Պռոշյանցի հավիտակ-
վիլը բոլորովին այլ է: Ամեն մարդ հիպնոտիզմի յենթարկվելու
հատկուքյուն չունի. ելեկտրականուքյունն ամեն մարմնի մի՛նչ
հեշտուքյամբ չէ անցնում, կան լավ և վատ հաղորդողներ:
1859-ին Պռոշյանցն Աչտարակ դյուղից գալիս է Թիֆլիս ու-
սուցչական պարապմունք դտնելու. ապրում է որևէ հին
կոպեկով, անտուն, անտեղ: Մի որ դուրսն ունձրևից մաստիկ
քրջված վազում է իր համագյուղացու Հովհաննես Տեր Հով-
սեփյանցի բնակարանը: Հովհաննեսը նեղս է տանում թամբուկ-
ված Պերճին, վոտից գլուխ վոխում է հագուստը, իր ավելորդ-
ները հագցնում, նստեցնում է առանձնասենյակում, դնում է
նրա առջև մի նորատիպ գիրք և ասում է՝ «Դու այս գրքով
ղբաղվիր, մինչև յես գասերս վերջացնեմ»: Պռոշյանցը բաց է
անում այդ գիրքը և կարդում է... Աբովյանցի գրուքյունը և
կարդում է այդ ահագին գիրքը յերկու թե յերեք ժամվան մեջ
այնպիսի հավիշտակուքյամբ, վոր յերբ Հովհաննեսը վերադառ-
նում է գասից, Պռոշյանցին վերացած է տեսնում, խոսելով չի
կարողանում նրան ուշքի բերել, քաշում և կոնեերից, կմատում
է, բայց մեր Պռոշյանցը ուշքի յե գալիս միայն այն ժամանակ,
յերբ գիրքը բոլորովին վերջացնում է. նոր պարծենում և նա լինչ-
պես խոր քնից: Նույն յերեկոյին Պռոշյանցը կրկնում է կար-
դալը ծայրե ի ծայր, և մյուս որն սկսում է իր Սոս և Վար-
դիթերը:

Գուցե վոմանք չափազանցուքյուն համարեն այս դեպքը,
այս պատճառով յես հարկավոր եմ համարում Պռոշյանցի մի
բացառիկ ղարմանալի հատկուքյան վրա դարձնել ընթերցողնե-
րի ուշադրուքյունը: Պռոշյանցը վոչ միայն կարդում, այլև
դրում է չափազանց արագ. նրա դրիչն այնքան արագ է շարժ-
վում, ինչպես մի ելեկտրական դործիք: Ճես ինքս վրա հասա
Սոս և Վարդիթերը դրելիս, մոտը կանգնած եյլ լինում մինչ,
յերբ նա պրում եր նաև Խրիմյան Հայրիկի Թիֆլիսի յեկեղեցի-
ներում տված քարոզները, տեսել եմ նրան և ասատիկ ջերմու-
քյան մեջ դրելիս այնպիսի արագուքյամբ, վոր մի քանի րոպե-
ի մեջ ամբողջ թերթեր եր լցնում, բայց ի հարկե անկատ և

անմիտ բաներ: Պռոշյանցը դրելացավ ունի, և այս կողմանե նա
արժանի յե հոդեբան թժիշկների ուշադրուքյանը: Նրա վոչ մի
դրվածքը այնքան ել չի յեղել, ինչքան վոր տպվել է, այլ ան-
համեմատ շատ: Սոս և Վարդիթերը, յեթե Մ. Աղաբեկյանի
անձնահարելը չլիներ, Պռոշյանցը շուտ չեր վերջացնիլ և քանի
դլխներ դուրս են ձգված: Նրա կռվածաղիկը նույնպես ահագին
մի բան եր, բայց շատ դլխներ դուրս ձգվեցան, վորովհետև
անհարմար եյին տպագրվելու «Փորձի» մեջ: Ցեվ ամեն անդամ,
յերբ անդամատում են նրա դրածները, նա հարկադրվում է ամ-
բողջուքյունը վերականդնելու համար՝ շատ բան փոխել ու նո-
րանոր դլուխներ ավելացնել: Ցեվ այդ բոլորը նա շատ հեշ-
տուքյամբ և կատարում իր արագ մտածուքյան և արտահայտ-
դրչի չնորհիվ: Հավիշտակվող դրողը մի ավելի սատնարյուն
խորհրդակից պիտի ունենա, վոր անդադար նրա փեշից քաշե:
Այսպիսի խորհրդակցի կարոտ եր առաջ մեր Պռոշյանցը վոչ
միայն դրելու ժամանակ, այլ և իր կենցաղավարուքյան մեջ[1]):

---

[1]) Այդ ժամանակ Պռոշյանցը թեև դպրոցից նոր եր դուրս յեկել, բայց
դպրոցական քաշվող և ամոթխած բնավորուքյուն չուներ, այլ չափից դուրս
յերեսբաց և համարձակ եր: Նոր սերունդը կյանքի նորոգուքյուն եր պահան-
ջում: Նորոգուքյան առաքյալ լինելու համար ամոթխածուքյունը ձեռնտու
հատկուքյուն չեր, պետք եր քաջուքյուն, վստահուքյուն, համարձակուքյուն
և մինչև անդամ հանդգնուքյուն և ստահակուքյուն: Պռոշյանցն այդ բոլոր
գենքերով զրահավորված եր հնուքյան դեմ պատերազմ մղելու համար: Թատ-
րոն են ուզում բանալ, բայց վոչ վոք չի համարձակվում դերասան կամ
դերասանուհի լինել, այդ գործը հանձն են առնում կատարել յերեսբացները,
չքաշվողները և չամաչողները: Աղջկանց դպրոց են բաց անում, ամոթխած
մայրերը չեն հուժարում իրենց աղջկանը ուսումնարան ուղարկել, այլ այն
մայրերն են ուղարկում, վորոնք չամաչելու չափ աբելուքյուն ունեին: Ինչ-
քան լավ բաներ կան, վորոնք մարդիկ չեն անում, վորովհետև ամաչում են,
քաշվում են հասարակական կարծիքից: Զարմանալի չե ուրեմն, վոր մարդ-
կուքյունը իր բարեկործուքյունների մեծ մասի համար պարտական լինի
հանդուգն մարդկանց, բացերես կանանց, ստահակ և խմաստակ պատանիների:
Ասածս շատ կոշտ է, բայց գուտ ճշմարտուքյուն է: Ցեվոք մարդիկը միշտ խե-
լոք չեն, այլ շատ անդամ վերջին ծայր հիմար և անմիտ գործ անի քանի քաներ
կան, վոր այդ խմաստուններից ծածկվում է և միայն տղաներին է հայտ-
նվում: Այն տղաները, վորոնց դրանք թերուս, անուս, խմաստակ, գրաշար,
խանութպան, լուսանկարչ, ուշտար, և այլն այսպիսի ածականներով հայտ-
յում են, ավելի մեծ գործ են կատարում հոդուստ հառաջադիմուքյան և լու-
սավորուքյան, քան թե իրանք, վոր միայն արգելք են դառնում գործի հա-
ռաջադիմուքյանը և վոչ ոդնող և խրախուսող գործողներին: Ջեմ ասում, թ

Մոտ ժամանակներս մի նկատողություն արի Պռոշյանցին, թե՝ Աշտարակումը մի քիթ չկան Աստվածաշնչի անուններ, որի-նակ՝ Մովսես, Դավիթ, Սողոմոն, Մարկոս, Ղուկաս, և այլն, այլ բոլորն էլ հին հայկական են— ինչպես՝ Արշավիր՝ Փափակ, Պաճուճ, Պարետ, Վան, Վահե, Թորդոմ, Ասքանազ և այլն: Վաստերի անուններն էլ դրել ես Սուրմակ, Պապ, Տիլան, Մեհրուժան և այլն (Սոս և Վարդիթերի մեջ):

— Խելո՛ք, պատասխանեց մեր Պերճը, դրելիս կշտիս չեյիր, ինչի չեյիր են վախտն ասում եղ...

Սրա վրա յերկուսս էլ ծիծաղեցանք: Ճշմարիտ վոր՝ այն ժամանակ կարծում եյինք, վոր այդպես է հարկավոր. ազգասիրությունը թույլ չէր տալիս սուտ պատում լինել:

Տեր աստված, վորքան անմեղություն կար անցյալում և վորքան սատանայացել են մեր այժմյան դրողները: Պռոշյանցը, ինչպես ասացինք, հավիտանվան եր Աբովյանցի վեպով, բայց նա՛ չեր կարող հասկանալ նրա դրական արժեքը, նրա վոգին, հեղինակի բարձրության չափը, ինչպես և վոչինը մեկանից, քանի վոր չունեյինք վոչինչ դրական կրթություն, ինքնաճանաչության չեյինք յեկած, կրիտիկական հայացք չունեյինք, հոգեբանական որենքներ չկային մեզ համար: Այդպես եր մոտավորապես Պռոշյանցը, յերբ դրեց նա իր Սոս և Վարդիթերը: Ներկայացրեք Ներսիսյան դպրոցից նոր դուրս յեկած փիլիսոփայեսո տակար մի պատանի, վոր դեռ չի ազատված դրաբարի ճնշող ճանկերից, ժամանակակից անճոռնի աշխարհիկ լեզվի աղքատությունից, այդ լեզվով դրած անճոռնի ճոռոմաբանություններից, սխոլաստիկական վոտած դաղափարներից, և հանկարծ ձեռք զարկում դրել մի ամբողջ ժողովրդի կյանք ամենայն մանրամասնությամբ և այն էլ վիպական դրավիչ ձևով և աչքուժ դրչով: Այս պատճառով ահա այժմ, մոտ յերեսուն տարի հետո, յերբ կարդում ենք Սոս և Վարդիթերի յերկրորդ անխոխոտ տպագրությունը, հիշում ենք այդ խավար անցյալը, մեզ վոչ միայն չեն զարմացնում դրքի թերությունները, այլ առավել

հարկե, վոր այդ արգելքները միշտ ջնասակար են: Անվակալը շատ պետք և, յերբ սայլը դարվայր է գնում, բայց մեր խելոքները սայլի անիվները կապում եյին նաև այն ժամանակ, յերբ նա դարվիներ եր գնում և գլորվելու յերկյուղ չկար ամենևին: Այդ անվակալը պետք եր ջախջախել, և ջախջախում եր Պռոշյանցը իր ընկերներով հերոսական հանդգնությամբ և այսպիսով ապագա գործողների համար մի հարթուղի յեր բաց անում:

գլխավորում են նրա բազմազանուկ արժանավորությունները, վոր արտադրել է պատանի վիպասանի տաղանդը ավելի քնազդմամբ քան դիտակցությամբ: Սոս և Վարդիթերի մեջ սուտը ու անսուտը, վիպականն ու առասպելականը այնպես հաշտ և սիրով կցորդված են միմյանց հետ, վոր մեկի բարձր արժանավորության տակ ծածկվում է բոլորովին մյուսի թերությունը: Այսպես՝ որինակ՝ վեպի «դյուցազնը», ինչպես հեղինակն է անվանում, և «դյուցազնուհին» իրոք դյուցազն են. և դյուցազնուհի, այսինքն՝ դյուցազնական անձնավորություններ են և վոչ հասարակ մահկանացուներ: Հեղինակը դրանց բացառիկ վիճակի մեջ է պահում ինչպես յերկնքից իջածների, իսկ բոլոր մյուսներին նկարագրում է բոլորովին այնպես, ինչպես սովորություն ունի նկարագրելու իր ֆոտոգրաֆիայով, այսինքն՝ իրականից ավելի վատ: Բացառություն կազմում է միայն հերոսի վոգեորմախսկերը՝ Գարեգինը, վոր վոչ միայն ամեն բան դիտե, ինչպես ասում է հեղինակը, այլ մի հրաշագործ նկարիչ է: Նրա քաշած պատուղներն անուշահոտություն են բուրում, իսկ քաշած կենդանիք՝ չարժում են ինչպես կենդանի: Ինքն այնքան արագ չի գրում, ինչքան Գարեգինը արագ նկարում է (յերես 60, 61, 62):

Դիցուհի Վարդիթերը մի յերևույթ չէ, դեռ չկա տասներեք տարեկան, բայց իրրև դիցուհի իր հասակից վեր բաներ է անում, և խոսում է վոչ յերեխայի նման, այլ իրրև դիցուհի, իր խոսակցության մեջ մինչեվ անգամ թուրքական առածներ և ձևում՝ «Ջառ դաղըլ զարպայր բիլուր» ասելով: Դիցուհու մոր աչքից չի վրիպչում այս հանդամանքը, նա մինչև անգամ մի տեղ ասում է.

— Հո դժվել չե՛ս, աղջի... հենց ես խոսում, կասես, մաղերդ սպիտակած, դերեզմանի դուռը հասած պառավ ըլես»... Դյուցազնը մի հասուն յերիտասարդ է, մոտ քսանհինգ տարեկան և իրրև դյուցազն իրար հակասող դերմարդկային հատկություններ ունի: Նա մի շատ հիանալի յերգիչ է, Շերինից էլ լավ խաղեր է հանում. ձայնն այնքան քաղցր է, վոր բյուլբուլը նրան լսելիս լռում է և նրանից դաս առնում. ճիարշամում և ըմբշամարտում չունի իր նմանը, նա հաղթում է ամենքին: Ծիր բանվոր է: Բայց նա միևնույն ժամանակ և մի ճգնավոր է. ունի իր սեփական ճգնատեղին, ուր գնում է ծածկաբար

աղոթք անում և ապաչխարում իր չարած մեղքերը: Կարդում է այնտեղ Ավետարան, Սաղմոս, Նարեկ և Եվրեմ խորի: Բայց տխրացու չէ. առօրյա կյանքում չի յերեվում, վոր նա կարդալ իմանա, կամ ճղնելու հնարք ունենա: Ճղնաւանդից ցած իջնելով՝ խոհույն ղրում և Ղարաբաղի բայաթին, ոար ու քոլ նրան են թամաշա անում, հալա ու աղջիկ հավաքվում են այդ անուշ ձենի վրա, ղիցուհին էլ է դալիս և նրա ձայնը լսելով՝ բացականչում և մարդաբեաբար.

— Ա՛խ, վաուքիդ մեռնեմ, ասում, թե վոր մեռնեմ, դիտեմ, վոր ըստուց հետո դերևոմանիս ոխսը թիվ մանիչակ դուրս կդա:

Վերջը՝ դվիներըդ լինչ ցավացնեմ, դյուցաղնի սիրահարությանը չափ չկա. առաջին անդամ վոր տեսնում է ղիցուհուն, իսկույն... այսոր ես մեռել թե եղուց... Ջոռով կենդանացնում են նրան և տանում տուն: Այնքան դյուրագդաց է Սոսը՝ մեր անհաղթ ըմբիշը և այնքան դյուրագրգիռ, վոր ամեն անհյան դեպքում լաց և վինում: Սակայն սրանց նշանվիլը ղլուխ չի դալիս. դյուցաղնի հողեղեն վիճան՝ չար Տիլսանը՝ քան մանեթի համար քանդում և համարյա չվինած բանը և խեղճերին անմուրազ անում: Այսպիսով խեղճ Պոռչյանցի լաղաղ նահապետական հովվերդությունն էլ վողբերդության և վոխվում: Սոսը դժվում է, ճիեռ ժամանակ մի քանի որ Արագածի ճնկում թախտուլուց հետո խելքը ղլուխն է հավաքում, ղալիս է տուն, բայց այդտեղ լսում է, վոր իր ղիցուհին մեռել և կաթվածահար, ինքն էլ իսկույն հոդին վիչում է: Ահա այս ամենը, թեև անբնական, բայց ընթերցողներից մեծերին զվարճացնում է, իսկ վոքրերին լացացնում: Այս է ահա Սոս՝ և Վարդիթերի ռոմանը, բայց դա չէ ամենևին զրքի դվխավոր նպատակը, զրքի դվխավոր բովանդակությունը: Գրքի դվխավոր բովանդակությունը, նրա առուդապատում մասն է աշտարակցոց կյանքը. նրանց բառբառը, նիստ ու կացը, պարապմունքը տարվա չորս յեղանակում, ազգային սովորությունները, յեկեղեցական ծեսերը, վորոնցից վոչ մի բան չի բաց թողած, բացի մկրտությունից, և այդ շատ ափսոսալի յե: Այնքան թանդ են մեզ համար այդ սովորությունները և այնքան կենդանի կերպով են նկարագրված, վոր վոչ միայն չենք ճանճրանում կարդալիս, այլև ափսոսում ենք, թե ինչու ավելի յերկար չե գրված, և ինչու բաց և թողված այս ու այն բանը, որինակ՝ Աշտարակի քաղցրիկ «Վե-լեն», վորը

մասին չատ տեղ և հիշում հեղինակը, բայց վոչ յերբեք և մեջ բերում և վոչ խաղը նկարագրում:

Խորենացու մեջ յերբ վոր կարդում ենք «Յերկներ յերկիր և յերկիր» կամ «Տեղ վոսկի տեղայր» և ուրիշ այսպիսի կտորներ, կարծես անապատի մեջ զարար հովսի յենք հանդիպում, թեև չենք հասկանում այդ յերկերի ներքին բովանդակությունը: Բայց և ինչքան բարկանում ենք, թե ինչու չատ տեղ դանցառության և տալիս և այդպիսի բաներ չատ քիչ և տալիս մեզ, վոխանակ չնորհակալ լինելու, վոր այդքանն էլ մեզ և հասցրել խեղճ Յերունին իրրև մի նմուշ: Վորքան ուրեմն չնորհակալ պետք և լինել մեր ապագա սերունդները ալ. Պոռչյանից, վոր հենց այդ աղդային յերկերին և սովորություններին և նվիրել իր աշխատությունը: Այդ սովորությունները նույնքան հին են, ինչքան եվ Խորենացունը: Հիրավի, տ՛ել և հասկանում մեզանում, թե ինչ բան և «Հավկուրի» յերգն ու արարողությունը, վո՛ր ժամանակից և ինչ տեղից և մտել հայերի մեջ այդ սովորությունը, յե՛րբ և ինչպե՞ս և աճեվափոխվել: Ահավասիկ այդ կտորը:

Վիճակախաղից հետո պատավ Խանումն սկսում և «Հավկուրը չուռ տալ:» Ջեռքն և առնում տեփուրը և չուռ տալով ասում.

Սկլա սկլա պատին տուր, հավկիրը չուռ տուր,
Վախենում եմ քնիմ, քունս տանի, չարսաբա տանիլ տամ:

Մին էլ չուռ տվեց տեփուրն ու ասեց.

Սկլա սկլա պատին տուր, հավկիրը չուռ տուր,
Վախենում եմ քնիմ, քունս տանի, չարս տանիլ տամ:

Ամեն մի հետ տեփուրը չուռ տալովը մի հետ սկալա յերթասում, ու պվխաչորիցը բռնած ընչանք մաշիկները մի մին տանել տալի. վերջին էլ ասեց.

Սկլա սկլա պատին տուր, հավկիրը չուռ տուր,
Վախենում եմ քնիմ, քունս տանի, մաշիկներս տանիլ տամ:

Հետո մի քաղցր ձենով աղջկերքն էլ հետը ձեն ձենի տված ասեցին.

Համբարձում, յայլա, (վինա,) յայլա Ջան յայլա,
Համբարձումն յեկել ա, մեր բաշին կաննել,
Լաչակ ա քցել մեկ մեկի վրա,
Մինը տակեվանց մինը վերևվանց.
Քա խաթուն Գյուլազ, հունարդ յերեվաց.
Համբարձում յայլա, յայլա Ջան և այլն:

Ինչ կասկած, վոր «Համբարձումն» առաջ մի ուրիշ բան և յեղել և դուրս և մղվել քրիստոնեության ժամանակ: Ինչ բան և սկզա, վոչ վոք չգիտե: Այդ բոլոր բացատրությունն սպասվում և մեր ապագա սերնդից. հներն ասել գնացել են, իսկ նորերս չգիտենք: Շատ տարի չի անցնիլ, մեր միջից վերացած կլինին բոլոր այդ ազգային սովորությունները ու յերգերը: Ամոթած տա, քանի վոր ուշ չե, Ռուշյանցը որինակին հետեվին մեր նորահաս դրողները, նկարագրեն իրանց ծննդարանը, իրանց հայրենի գավառը, նրանց ներքին կյանքը, սովորությունները, յերգերը, ավանդություններ, նրանց սիրո ևատելության, ուրախության ու տրտմության առիթները: Այդպիսի ներին ապագայում սպասվում և անմահ անուն, մեծ վարձ ու պատիվ: Ապագան մեզ պես անլրավ, մեզ պես ապերախտ և մեզ պես միամիտ չի լինիլ: Այն Ռուշյանցը, վոր մեզանից յերեսուն տարի առաջ տվել և մեզ իր պատանեկական հասակի թարմ մտքի արդասիքը, դրանով վերջ չի տվել իր դրական գործունեության: Նա հետո ավելի հասուն և փորձառու ժամանակ տվավ մեզ Կուվածադիկ, Հացի խնդիր, Շահեն և զանազան թատրոնական դրվածքներ: Այժմ ել ունի լավական կիսատ անտիպ դրվածներ, բայց նյութական հնար չունի բացառապես դրականության նվիրվիլ. նա, տկարությանը չնայած, իր բազմաթիվ գերդաստանը պահելու համար հարկադրված և ներսիսյան դպրանոցում վարժապետության պաշտոն կատարել, վորպեսզի չտապեցնե մեր ամենից չգանկալի մահը: Մեզանից ավելի խելացի մի ժողովուրդ կասկահոմեր նրան մի թեթեվ կենսաթոշակով, վորպեսզի իր կյանքի մնացորդը բացառապես դրականության նվիրե, ճոխացնե մեր աղքատիկ դրականությունը իր արագաշարժ և աշխուժ դրչով, թողնելով վարժապետության նրանց, վորոնք լավ վարժապետ լինել կարող են, առանց կարողանալու տալ մեզ մի յերես Ռուշյանցի դրվածից: Ռուշյանցը մեծ մարդ չե, նա հավասար չե վոչ Աբովյանցին և վոչ Ալիշանին, բայց այդ մարդիկը ավելի մեծ են, քան իրանց ժամանակը. Ռուշյանցը հավասար և իր ժամանակի մեծությանը, իր ժամանակի հարազատ ծնունդն և և այնքան շատ գործ և կատարել ազգային ասպարիզում, ազգային կրթության գործում, ինչքան վոչ վոք իր ժամանակակիցներից:

Պերճ Ռուշյանցը առաջին հիմնադիրն և Թիֆլիսում որիորդական դպրոցի: Դա յեր վոր բաց արավ մանավոր որիորդական դպրոց, ուր առաջին աշակերտուհի յե յեղել այժմ տիկին Եղիսաբեթ Ջմշկյանը: Այդ ուսումնարանի պատվավոր հոգաբարձուհին եր և կարելի յե ասել բարերարուհին Տ. Հովհաննիսյանը, պ. Աբգար Հովհաննիսյանի մայրը, վորի հրավիրանոք հոգաբարձուհի յեն դառնում տ. տ. Բևհբուդյան, Նադիրյան և Ջոջայան:

Ռուշյանցը մեզանում նոր սկսած առնին թատրոնը հասարակական թատրոնի վերածեց, ուր առաջին դերասանուհիների կարգն ընկավ և իր առաջին աշակերտուհի Եղիսաբեթը:

Այդ դեպքից հետո, յերբ պ. Շանշյանցին հրավիրեցին Ղարաբաղ, նա Ռուշյանցին ել հետը տարավ իբրև իրան ոգնական: Այնտեղ դարձյալ Ռուշյանցը հիմնեց առաջին որիորդական դպրոցը տ. և պ. Հախումյանների ոգնությամբ, վորոնք ձրի տվին իրանց տունը ուսումնարանի համար:

Տկարության պատճառով այդտեղից հեռանալով և բժիշկների խորհրդով ուսուցչական ասպարեզից ևս հեռանալով, նա ճանապարհորդում և իր փոտոգրաֆիայով և հասնում մինչև Վերին Ազուլիս: Ռուշյանցն այդտեղ 66 թվականին հորդորում և ուսումնարան բանալ տղայոց և աղջկանց միանգամայն. և հաջողվում և. հրավիրում և բարձր ուսում ստացած վարժապետներ և կազմում և մի լավ խումբ:

Ռուշյանցին մի չրջաբերականով խրդեցին վարժապետություն անել և հոգեվորականությունից հանելով, հարկատուների կարգը ձգեցին: Բայց շատ չտեվեց այս: Ասած և, ստի վոտները կարճ կլինին: Ռուշյանցը վոչ միայն արդարանում և, այլև ստանում և Ցերեվանի թեմի վերատեսչությունը և սկսում և բազմաթիվ ուսումնարաններ բաց անել: Այդ պաշտոնի մեջ ել մնում և նա մինչեվ նույն պաշտոնի վերանալը:

Հանդուցյալ կաթողիկոսը միտք ունենալով բողոքականու-

թյան առաջն առնել, ուղեցավ ավետարանը աշխարհաբարի վերածել և ժամն գնով տարածել ժողովրդի մեջ: Այդ դործը հանձնեց Պռոշյանցին: Պռոշյանցը լրան հատուկ ալարդությամբ թարգմանեց ամբողջ Ավետարանը և հանձնեց կաթողիկոսին: Այդ թարգմանությանն այնքան հավանեց կաթողիկոսը, վոր Պռոշյանցին չորս աստիճան տվավ և նրա հետ աստվածաբանության մագիստրոսի կոնդակ: Այժմ մեր մեջ մագիստրոս միակ Պռոշյանցն է:

Պռոշյանցի բոլոր աշխատությունները միայն իր վեպերը չեն, նա անանուն և կեղծ անունով անթիվ թղթակցություններ ունի ազգային բոլոր լրագրներում ցրված, վերջերումս նաև Աղբյուրի մեջ իր սեփական անունով: Մշակի խմբագիրը, յերբ նոր խումբ կազմեց և սկսեց իր հրատարակությունը, Պռոշյանցն էլ այդ խմբի մեջն եր և քիչ դործ չունի արած այնտեղ:

Ցեթե մեկ մարդուց հրաշք չենք պահանջում, կարծեմ այսքանն էլ բավական է, վոր ազգը դնահատե և պահպանե ժամանակից գլխավոր դործիչներից մեկին, վոչ միայն արդեն արածի համար, այլ և անելիքի: Կատարենք բազմաչխատ Պռոշյանցի յերեսնամյա հոդեվարքը և հնար տանք նրան շարունակելու իր գրական դործունեությունը, վորից մեծապես կշահվի ազգը: Ձե՞ վոր մենք շատ երիտասարդների ոգնում ենք, վոր յերթան ուսում առնեն և դան ալդին պետք դան: Հապա ով վոր պետք է յեկել, պետք է դալիս ու դեռ պիտի պետք դա, նրան ի՞նչ պետք է անել: Իհարկե «Զայս պարտ է առնել և զայն չը թողուլ»...:

5-ն ոդոստոսի 1888

Բոլնիս-Խաչեն գյուղ:

«Աղբյուր» 1888 թ. № 8-9

ՄԱՏԵՆԱԽՈՍՈՒԹԻՒՆ

Սամուել Սմայլս. «Ինավորություն». Թարգ. դերմաներեն-նից փիլիպպոս Վարդանյանի, 1888 Թիֆլիս. տպարան Հ. Մարտիրոսյանցի, գինը 1 ռ. 50 կ.

Նմանողությունը և հետևողությունը մարդուս բնավորության դլխավոր դիծն է: Մարդուս արարմունքի—նիստ ու կացի, խոսք ու գրույցի, ձգտումների, և այլն, 100-ից 99 նմանողության արդասիք է: Ինքնուրույնությունը, ուրիշի մտքով չանցած մի բան անելը, մի նոր բան հնարելը, մի նոր դյուտ անելը շատ քչերին է տված, բայց նույնիսկ այդ ինքնուրույն արած բաների դրդումն ու պատճառն էլ յեթե լավ վերլուծելու լինենք, կտեսնենք, վոր դրանք էլ մեծ մասամբ հետևողության և նմանողության արդասիք են:

Շատ անգամ մեկը չվարած, անճարացած կանդնած է լինում, մի վճռական քայլ անել չի կարողանում, և հանկարծ մի որինակ է տեսնում, նման վիճակում յեղած մի մարդու կյանք է կարդում կամ լսում, և ահա մի նոր լույս է ծագում նրա առջև, մի նոր ասող, վոր ցույց է տալիս, թե վորտեղ է նրա փրկությունը, և այնուհետև շարժման մեջ է ընկնում նրա բախտի կանդնած անիվը:

Որինակը վարակիչ է. դա մի մեծ ուժ է, վորով կարելի յե մարդկային կյանքի մեքենան շարունակ շարժման մեջ պահել, յեթե ծուռ լինի դնալիս, շտկել, ուղղել, յեթե կանդնած լինի, շարժման մեջ ձդել: Այս հատկությունը, վորքան էլ վնասակար կողմեր ունենա, վորքան էլ կապկության նման, վատ հատկություն չե, այլ շատ լավ և ոդտակար: Ցեվ ինչի նման կլիներ մարդը, յեթե ընկերի որինակին հետևելու չնորհք չունենար, յեթե ուրիշի արած փորձերից ոդուտ քաղել չդիտենար, յեթե, վերջապես, մի իդեալ չունենար համեմատ իր մտավոր զարդացման աստիճանին:

Գրագետի և անգրագետի մեջ հենց այն մեծ դանազանությունը կա, վոր մեկը հնար ունի անցած դարերի փորձերից ոդուտ քաղել, ժամանակով և տեղով իրանից շատ հեռու յեղած հանճարների խրատներին ականջ դնել, մինչդեռ անգրագետը պիտի բավականանա միայն նրանով, ինչ վոր տեսնում է իր չորս կողմում: Զարմանալի չե ուրեմն, վոր մի Թուլուխչի իր հետևից քաշե իր բոլոր համշարիներին և ամենին Թուլուխչի չինի, մի փունչի բոլոր իր դրացիներին փունչ չինի, հնոտիք ծախելով հարստացած մեկից վարակվին իր բոլոր յերկրացիք, այսպես վարվին և վորմնադիրներն ու հյուսները, բեռնակիրները ու աղբ դեն ածողները, բայց դրանց համշիրակ մեկը, դրագիտություն և ուսում ունենալով իր ինքնակրթության չնորհիվ փոխանակ աղբ դեն ածող կամ Թուլուխչի դառնալու, մի նշանավոր մարդ դառնա, անուն և փառք վաստակե:

Ինչքան վոր դժվար է, ինքնուրույն լինելը, նույնքան դըժվար է և հեռավորին նմանելը, վոր դարձյալ մի տեսակ ինքնուրույնություն կլիներ: Հայը հայից է որինակ առնում, թուրքը թուրքից, դրացին դրացուն է հետևում: Գերմանացին իր կարգին նիստ ու կացով, իր մարդավայել վարք ու բարքով անհատ է ռամիկ հայի ու թուրքի ճաշակին: Ռամիկը և ոգևտը իր դըրացու դժվար արած բանին ավելի յե հետևում, քան թե հեռավորի նույն բանը շատ հեշտությամբ արածին: Սակայն մի հատիկ որինակը այս դարավոր անշարժությունը կարծես մոգական զավազանով մի նոր շարժման մեջ է ձգում: Մեկ |ել տեսար վոխվեցան բոլոր ծանր դուբանները, ծանրաշարժ անիվները, հնձանները ու տաքարները, մոթալ վաճախները, սուլալ տրեխները, կանանց բերնի վաթաթանը, դեմնափոր տները և այլն և այլն:

Այսպես ահա դրացին դրացուն է նմանում, մի գյուղ մյուս գյուղին, մի քաղաք մյուս քաղաքին, մի ազգ մյուս ազգին:

Մարդկային հոգու այս նշանավոր գիծը, վոր շատերի համար մութն է, շատ լավ են իմացել վոչ միայն այն մարդիկը, վորոնք ոգուտ քաղելով այս հանգամանքից— նմանելու հատկությունից— նորելուկներով, նորաձև հագուստով զարդարում են մարդկանց մարմինը յերբ և ինչպես կամենում են, այլև այն մարդիկը, վորոնք նպատակ ունեն վոչ թե մարդկանց մարմինը զարդարել, այլ նրանց միտքն ու հոգին: Մեկոնք տալիս են գրավիչ հագուստով պատկերները, մյուսները գրավիչ հատկություններով զարդարված ստուգապատում կենսագրությունները, վորոնք դառնում են մեզ համար կենդանի որինակ և իդեալ: Առաջինների տվածը վաղանցուկ է, շահախնդրական է, խակ յերկրորդներինը մշտատև, հավիտենական: Առաջինը վնասակար է բոլոր այն մարդկանց համար, վորոնք զուրկ են յերկրորդից: Հոգու զարդարանքը միշտ կարող է ծածկել մարմնի մերկությունը, խակ մարմնի զարդարանքը յերբեք կարող չե ծածկել հոգու մերկությունը, այլ առավել ևս կմերկացնե նրան: Առաջինը հեշտությամբ տարածվող մի չարիք է, վորի առաջքն առնել անհնարին է, խակ յերկրորդը մի անհուն բարիք է, վոր սակայն հեշտությամբ չի տարածվում և կարող է առանձին խնամքի և ժանդակության:

Այս վերջին տեսակ բարեյակրթության և մտավոր զարգացման առաքյալներից մեկն է և անդլիացի Սամուել Սմայլսը, այն նշանավոր մարդը, վոր տվել է անոդնականներին «ինքնոգնություն» գիրքը, վորով անթիվ մարդկանց մեջ նոր ուժ և նոր յեռանդ է մտցրել և պլուտ մտցնե շարունակ: Այս նշանավոր հղելնակը ամենից լավ է հասկացել, վոր ժողովրդին բարեկըրթելու, նրա միտքն ու հոգին վեհամացնելու, նրան արիություն, քաջություն և անվեհերություն տալու համար ամենից հարմար րադուն են կենսական ստուգապատում որինակներ տալը: Սմայլսը՝ թեև անդլիացի և անդլիացոց համար դրող, բայց մի ինորճառու և դրավիչ վոճ ունեցող դաստիարակ է ընդհանուր մարդկության համար. նրա բոլոր դրածներն խիստ թարգմանվում են ամեն լեզուներով և ամեն աղգ միապես չհվում է նրանցից[1]): Ահա այս հռչակավոր մարդու աշխատությունն է և «ինավորություն» գիրքը, վոր գերմաներեն թարգմանությունից հայերենի է վերածել մեր հայտնի թարգմանիչ ալ. Փելիպպոս Վարդանյանը[2]):

Յեթե անդլիացոց նման մի բարեպաշտ և բարեկիրթ ժողովրդի համար հարկ է համարվել ինավորության լավագույն որինակներ տալ, յեթե գերմանացոց նման մի ավելի ևս բարեմարզված ժողովրդի համար հարկ են համարել թարգմանել խոսուն, վորքան առավել դա պետք է մեզ համար, մեզ, վոր

---

1 Սմայլսի «Ինքնայողությունը» մենք տեսանք թարգմանած հայերեն, բայց թե ուր մնաց, չդիտենք թարգմանել եր պ. Ստեփանոս Տեր-Սարգսյանը:

2 Մեր թարգմանողներից միայն պ.Փ. Վարդանյանն է հասկացել թե վորպիսի գրքեր պետք է տալ ժողովրդի ձեռքը, վոր թե գրավիչ լինեն և թե որինակելու նպատակին ծառայեն, Ռոբինզոն Կրուսո, Ռոբինզոնյան Շվեյցարիա, Լոռիսական, Լոդիսական, Ռոբինզոն Կրուսո, Լուքեր, «Մահմեդի կյանքը». պատրաստի ունի Սմայլսի «Ինքնոգնությունը», Գրուբեյի «Պատմական պատկերները», Կոըշի «Վոլթերի կյանքն ու գրվածները» Շիլլերի «Ավազակները» և մի շարք վեպեր «Արևելյան Վիպաշխարհ» և ելի ով գիտե ինչ պատվական ծաղիկներ պիտի ընտրե ընդհանուր գրականության հոտավետ բուրաստանից, բայց այժմ տվածներն էլ մի գեղեցիկ առոնին մատենադարան են: Ահա մի ժրաջան մեղու, վոր գիտե, թե ինչ ծաղիկներից պետք է մեղր շինել: Պարոն Վարդանյանը իր լեզվի մշակությունը, վերին աստիճանի կատարելագործության և հասցրել «ինավորության» լեզուն իր առաջին թարգմանություններից անհամեմատ պարզ է, սահուն և կուկ: Շնորհակալությամբ հանդերձ շնորհավորում ենք պարոնի արած հայրենական հառաջադիմության:

հին գնավորություններս խախտել ենք և նորը դեռ չենք կայ-
մակերպել:

Ժողովրդի մեջ ընդունված և տարածված մի հատիկ պատ-
վական դիրքը հրաշագործ դաստիարակիչ պաշտոն է կատարում,
նրա միջնորդությամբ բյուրավոր անհատներ ուրտ սիրով կապ-
վում են միմյանց հետ, միակերպ խորհում, միակերպ գործում,
միակերպ հառաջ ընթանում դեպի կատարելություն: Ուղիղ
այսպիսի մի դրքի տեղ կարող է բռնել Սմայլսի «Ինավորու-
թյունը» և ցանկալի չէ, որ այս դիրքը իր ձեռքումն ունենա
ամեն մի ծնող, ամեն մի դաստիարակ և ամեն մի ուսանող:
Այս իսկ պատճառով մենք կարևոր ենք համարում պնել այս-
տեղ նրա բովանդակությունը[1]), հուսալով, որ սրանով կչար-
ժենք մեր ընթերցողների հետաքրքրությունը և առիթ կտանք
որ առաջ ձեռք բերելու այս պատվական դիրքը:

Ղ. ԱՂԱՅԱՆՑ

1888

«Աղբյուր» 1888 թ. № 10

«ՏԱՌԱԴԱՐՁՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐ»— ՀՈՎՎԱԾԻՑ

Նվեր «Ամսօրյա հանդեսին»

Մեր ապագա ազգային դրականության պատմություն գրո-
ղին կտակում եմ ահա ինչ: Նախ քան իր գործի սկսելը մի
յերկար ներածություն ունենա, որի մեջ չմոռանա մանրամասն
գրել մեր մեջ դրամաճառության և դրական չարչիության

---

1 Հոդվածից հետո՝ ամբողջությամբ բերված է Ս. Սմայլսի «Ինա-
վորություն» գրքի «Նյութերի ցանկը» (բովանդակությունը), որը մենք
հարկ չհամարեցինք բերել այստեղ:

Ծան. կազմ.

պատմությունը: Թող իմանա պարոնը, որ մի ժամանակ մեր
տպարանները ժուրք էին, սուրբ մարդկանց ձեռի և սուրբ
դրքեր տպելու էին ծառայում: Ամեն մի տնչած դրքի վերջում
չեր մոռացվում մի հիշատակարան տպել, որի մեջ հիշված ե-
էին լինում տպագրողի յոթը պորտը, ծախքը հոգացողինը նույն-
պես, չէին մոռանում հիշել մի կամ երկու գրաշարին ու տպագրի-
չին ևս, այլ նույնիսկ մրաղարկին էլ: Ճես տեսա մանկությա-
նըս ժամանակ ծերունի վարպետներ, որոնք մի ժամանակ գը-
րաշար էին եղել ԵՂմիածնում և նրանք ասում էին. «Ճերբ
որ ուղում էինք մի սուրբ դիրք շարել, որինակ՝ Սաղմոս,
Մաշտոց, Նարեկ, Խորհրդատետր, առաջ խոստովանվում, հա-
ղորդվում էինք և շարելու ժամանակ ծում էինք պահում, ո-
րը մեկ անգամ էինք միայն հաց ուտում, այն էլ սաստուց կե-
սակուր»: Թիֆլիսում Ենֆիաճյաններից առաջ՝ բոլոր վաճա-
ռելի դրքերը մի մղղըսու վրա էին բալձված: Մղղըսին գը-
քերի մի մասը խոշտած, մյուսը՝ չալակին, ման եր ածում
փողոցե փողոց: Գրախանութ չկար: Պատմում են, որ Ենֆի-
աճյան յեղբայրներն ևս իրանց պրավաճառությունը նույն մըղ-
ղըսու ձևովն են սկսել, և ավելի ճարպիկ գտնվելով՝ կարողա-
ցել են մեծ խանութ բաց անել և Ստամբոլուց ու Վենետիկից
ահագին քանակությամբ դրքեր բերել տալ: Այս բանն ամենից
լավ կիմանա պ. Համբարձում Ենֆիաճյանցը, որ վոչ միայն
առաջին գրախանութ բաց անողն է Թիֆլիսում, այլև մանավոր
և մարդավարի հայ տպարան բաց անողը, որի վրա ահագին
ծախսեր է արել իմ ներկայությամբ:

Սկսած այն որից, յերբ մեր տպարանները դառնում են
մասնավոր անձանց սեփականություն, հիմնվում են չահախընդ-
րական նպատակով, սկսած այն որից, յերբ ազգի մեջ ընթեր-
ցասիրության ասատիկ պահանջ է հայտնվում, դուրս են գալիս
մասնավոր գրավաճառներ, աշխարհական հրատարակիչներ,
յերբ վանքերն անգամ սկսում են իրար դեմ մրցել, ինչպես
վիեննա, վենետիկ և Ճերուսաղեմ, այդ որից մեր գրականու-
թյունն սկսում է քանակությամբ աճել, բայց հատկությամբ՝
ընկնել: Սկսեցին խելոք բաների հետ և անմխա բաներ հրատա-
րակել, ոդուտ քաղելով ժողովրդի չհասկացողությունից: Ահա
այս խնդիրը, պատմության այս տնտեսական նյութական կողմը
պետք է բարեխղճաբար և մանրամասն ուսումնասիրել:

Պիտի ասեք, շատ լավ նկատողություն է, բայց այդ ինչ-

դիրն ի՞նչ հարաբերություն ունի ձեր դրած վերնագրի հետ։

Մեծ հարաբերություն, կպատասխանեմ։

Ո՞ւմ ձեռքին եր առաջ մեր դրականությունը, ո՞ւյք եյին մեր նախնյաց անմահ յերկերի հրատարակողները, նրանց լեզուն մշակողը, նրանց հետքով դնացողը, մեր դպրոցներին դասագրքեր տվողը— իհարկե՝ Մխիթարյանք։ Բայց ուսումնասիրեցեք Մեծ Մխիթարից սկսած մինչև մեր օրերը դրանց դրական գործունեության ընթացքը, ձևը, շահասիրական ձգտումները և կտեսնեք, որ ահագին տարբերություն կա անմահ Մխիթարի և նրա վերջին հետնորդների գործունեության մեջ։ Դրանք ամեն մի նորության դրականության մեջ, որ կարող եր նրանց դրավաճառության վնասել, մեծ ընդդիմություն են ցույց տալիս։ Ցեվ յերբ որ հաղթվում են, ոչ միայն չեն ընկճվում, այլ մեր իսկ ցույց տված ճանապարհի վրա մեր առաջն են անցնում։ Առաջ շատ ընդդիմացան աշխարհիկ լեզվի դեմ, բայց տեսան, որ մենք իրանց հեղինակությանը չենք յենթարկվում, մեր հոդը չե, թե նրանց պլպլալը ղրքերն ու դասագրքերը մնում են անվաճառ, սկսեցին մեր առաջն անցնել, և հոդուտ աշխարհիկ լեզվի վոչ վոք մերոնցից այնպիսի մի աշխատություն ցույց չտվավ, որպիսին ցույց տվավ Հ. Այտնյանը իր պատվական «Քննական քերականությամբ»։ Ցեվ ո՞վ կսպասեր, որ մի Մխիթարյան վեր կենա և դրաբարը մեռելոց կարգը ձգե։ Այսոր Տաճկաստանում տարածված ամենալավ դասագրքերը դրանց հորինածն ե, կոկ աշխարհիկ լեզվով։ Մնացել ե, որ ընդունեն մեր տառադարձությունը։ Այս բանին հակամետ են պոլսեցիք, իսկ Մխիթարյանք հակառակ, ճղնում են ապացուցանել, որ իրանց տառադարձությունը թե պատմական տեսակետից և թե գործնական ուղիղ ե։ Թող փորձեն պոլսեցիք չհետևել դրանց և հետևեն մեր տառադարձության, դուրս մղեն իրենց դպրոցներից Մխիթարյանց դասագրքերը, աշխարհաբարությունը, պատմությունը և այլն, որոնք սխալ տառադարձությամբ են տպված, ի՞նչ եք կարծում, ի՞նչ կանեն այնուհետև Մխիթարյանք. անշուշտ կապացուցանեն մեղանից ել լավ, որ մեր տառադարձությունն ուղիղ ե և դարձյալ կանչնեն պոլսեցոց առաջը, նրանցից լավ դասագրքեր տալով։ Այսպես են առհասարակ բոլոր չահադետները և պահպանողականները։ «Ամսորյա Հանդեսի» մեջ «Տառադարձության խնդրի» մասին դրողը, ընդհակառակն ենք, բարեմակրդմանն տեղեկությունները ե տալիս, ըստ յերևույթին ամենայն բարեխղճությամբ և ուսումնասիրում իր ստանձնած գործը, բայց, վայ ինձ, թող նեբե ինձ ասել, որ վոչ հիմքը հիմք ե և վոչ մեթոդը՝ մեթոդ։ Մի՞թե կարելի չե ապացուցանել, որ յերկիրս կանգնած ե և վո՞ր ոամիկը չի հավատալ, բայց բանը Գալիլեյին հավատացնելն ե։

Շատ ցավում ենք, որ Աբբա—Հայր Այտնյանը լեզվի խնդրում մնացել ե կես ճանապարհի վրա կանգնած, մինչդեռ միայն մեկ քայլ ե հարկավոր ավելացնել և այս մեկ քայլը հայրիկն ինքը չի վստահանում անել, բանը ձգել ե իր աշակերտների վրա, որոնք իրանց վարպետաի բարձրությանը հասնել յերբեք չեն կարող։ Ցեվ ո՞վն ե այս մեկ քայլը։ Ընդունել Տարոնի և քերականությունը և տառադարձությունը։ Տառադարձությունը բոլորովին մերն ե, իսկ քերականության տարբերությունը շատ չնչին։ Սակայն պետք և ապացուցանել, որ այսպես ել պետք և լինի, յեթե վոչ՝ ղևտո՞ք, կարող են ինձ հանդուգն անվանել, և դեռ մի քան ել ավելի։

Ակսոս վոր յերկար դրել չեմ սիրում, իսկ խնդիրն ել այնքան պարզ չե, վոր յերկու խոսքով հասկացնեմ։ Հասկացողին բավական ե միայն մեկ միտք տալ, և յես իմ «Հայկական հնչյունների մասին» դրվածովս միայն մեկ միտք տվի, բայց իմ միտքը վոչ միայն չհասկացան, այլև աղավաղեցին։ Այսոր յես հանդես եմ գալիս իմ վարքը վերականգնելու։

2.

Դպրություն և բարբառ փոխադարձաբար ազդում են միմյանց վրա։ Ցեթե Թիֆլիսի քահանաները մի ժամանակ ասում եյին «Հայրի մեր, վուր, հերկինես իս», այսոր նոր դպրության շնորհիվ այլևս այսպես ասող չկա։ Սրբազան Մանկունին պատմում եր, որ իր հայրենիքում քաղաքավարություն են համարում դրոց լեզվում Ի դերը Հ-ի դարձնել, և ասում են՝ «վոր հաչեցար»։ Ինչ ասել կուզի, որ այս հաչողնիրին միայն ուղիղ դպրությունը կարող ե խոսել սովորեցնել։

Նախ և առաջ պետք ե ժողովուրդ և բարբառ մի կողմ դնել և դպրության խնդիրը լուծել, թե՝ ի հնուց անտի, որ ժանքերում ինչպե՞ս են գիր տովարիցրել և վորտեղ ե ամենից առաջ խախտվել սովորեցնելու ձևը։ Այս խնդիրը կապ ունի և

«Աղբյուր»-ի նախընթաց համարում մենք ցույց տվինք, թե մեկ ազգ կարող է բարբառներ չատ ունենալ, բայց նրա գրոց լեզուն, նրա գրականությունը, հնչյունաբանությունը միայն մեկ բարբառի վրա կարող է հիմնվել և վոչ չատ: Միևնույնը պետք է ասենք այսոր և տառադարձության վերաբերությամբ: Պոլսեցիք և Մխիթարյան հարք, վոր ավելի յեն հակված դեպի գրաբարը, վորոնց լեզուն դեռևս կարելի չե աշխարհիկ անվանել, քանի վոր աշխարհիկ լեզվի քերականության չեն հետևում, իրանց չհասկանալու համար ավելի պետք է հետևեյին մեր նախնյաց տառադարձությանը, քան թե մենք, վոր աշխարհիկ լեզվի սերտահար լինելով՝ կարող եյինք գրոց լեզվի տառադարձություն ի նկատի չունենալ ամենևին: Ի՞նչ է պատճառն ուրեմն, վոր գրաբարյաճք գրաբարի հակառակ են վարվում, իսկ հակագրաբարյաճք՝ գրաբարի հետևյալ:

Մեր տառադարձության ուղիղ լինելը մեր խելք ու ընտրվելը չե, մեր գիտնականության հետևանքը չե, այլ մի պատմական բերմունք է, մի բախտ, վորին մենք արժանացել ենք ընտրվել այն հանգամանքի, վոր մեր նախնյաց դպրությունը Արտրատյան և Գուգարաց աշխարհի վանքերում անխախտ և անաղտ է մնացել, մինչդեռ դա խանգարվել է Կիլիկիայում[1]):

1889

«Աղբյուր» 1889 թ. № 1

ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹՅՈՒՆ

«ՄՈՒՐՃ» ԱՄՍԱԳՐԻ ԸՆԹԵՐՑՈՒՄԻՑ ՀԵՏՈ

1.

Մեզանից մոտ հազար չորս հարյուր տարի առաջ Հայոց աշխարհի մի մասին անկյունում մի իշխանի ջաղացում ջաղացպանություն եր անում մի ծերունի մարդ, վորին չեր ճանաչում իշխանը, թե ի՞նչ մարդ է և կամ վո՞ր գավառից, բայց հար-

1) Հոդվածի մնացած մասը զուտ լեզվաբանական բնույթ ունի, այդ ծան. կազմ. հնարավորությամբ բաց թողինք:

չաբաականների յեղանակի և ուրիշ չատ յեկեղեցական բաների հետ: Պոլսեցիք պնդում են, վոր չարաականների ճիշտ յեղանակը, նախնյաց յերգածը, Պոլիս է պահպանվել, իսկ Եջմիածնում խանգարվել է: Յեվ այս խնդիրը նրանք պրի ուժով իրանց կողմը վճռեցին, վորովհետև իշխանությունն իրանց ձեռքին եր, կաթողիկոսը պալատի յեր, իր յերգածը ճայնագրել տվավ իբրև ավելի ուղիղ: Յեթե հրամայեր, վոր այսուհետև էլ չասեն լինի, պիմ, դա, այլ, վեն, քիմ, թա, ի՞նչ կարող եյին անել վարժապետները, պետք է այդպես էլ դաս տային: Յեվ հենց այսպես էլ արել են մի ժամանակ Կիլիկիայում. և անողները յեղել են կաթոլիկ և լատին վարդապետները, հիմնվելով յերևի ժողովրդի արտասանության վրա, վորն անշուշտ խանգարված պիտի լիներ այդ ժամանակ և դրանից էլ չատ առաջ: Սրա համար է, վոր ասում եմ, պետք է բարբառը դպրությունից դատել: Հիրավի, յեթե մեր դպրությունը բարբառների վրա հիմնելու լինինք, բանն ո՞ւր կերթա. չե՞ վոր հարյուրավոր բարբառներ ունինք, վորոնց մեջ վոչ միայն մեսրովպյան հնչյուններն են աղավաղված, կամ հենց նրանից էլ չատ առաջ աղավաղ են յեղել, այլ կան բարբառներ, վորոնք վաթսունչ տոկո հնչյուն ունին, ինչպես և, որինակ՝ Ղարաբաղի բարբառը, վորն ունի յերկբորդական բաղաճայններ՝ յեղածից դուրս և յերկբորդական ճայնավորներ:

Ինքը Մեսրովպն ի՞նչպես արած, արդյոք մեկ բարբառի համաճայնեցրեց իր տառերը, թե՞ չատ: Ճանի վոր Մխիթարյանք այսոր այնքան հասունացած են, վոր բեվեռագրեր և նախամայր լեզուներ են հետազոտում, էլ չեմ պնդում, վոր հայր Աղամի լեզվով են խոսում,— դիտեն անշուշտ, վոր Մեսրովպի ժամանակ ևս հայոց մեջ շատ բարբառներ կային: Արդ, հարկավոր չե՞ մեզ դիտենալ, թե այդ չատ բարբառներից վորն ընտրեց Մեսրովպը, կամ ի՞նչ բան և վոստանիկ ասված. լեզուն, դա մի ժողովրդական բարբառ է, թե մի տեսակ դրոց լեզու՝ ժողովրդին անհասկանալի: Յենթադրենք մի րոպե, վոր այդ մասին վոչինչ չդիտենք, այլ այսպիսի մի հարց առաջարկենք մեզ, թե այժմյան շատ բարբառներից վո՞րն է ամենից մոտիկը դրոց լեզվին, թե իր բառակազմությամբ և թե իր հնչյունաբանությամբ: Յես պնդում եմ, վոր ամենից մոտիկը Արարատյանն է, կբերեմ և իմ ապացույցս:

դում և պատվում եր նրան, տեսնելով՝ վոր Ծերունին հասարակ մահկանացուների կարգից չե: Իշխանը հափշտակված եր մանավանդ նրա քաղցր ձայնից և հրաշալի յերգերից: Ասում են՝ Ծերունին սիրում է յեղել յերգել և յերգում է յեղել միշտ: (Ցերևի իր հայրենիքի Թշվառ վիճակին և յեղել վողբում): Պատահում է, վոր Գյուտ կաթողիկոսը հյուր է գնում նույն իշխանի մոտ: Իշխանը ցանկանալով ավելի պատված և մեծարած լինել կաթողիկոսին, հարմայում է ջաղացպանին, վոր ի պատիվ Հայրապետի մի յերգ յերգե: Ծերունին իսկույն չոքում է Գյուտ առջև և ամբ հավո յերգում է «Ընտրյալդ աստուծո» հրաշալի մեղեդին: Գյուտ կաթողիկոսը վայր է իջնում թախտից, դրկում է ջաղացպանին՝ բացականչելով—

— Մովսե՛ս, Մովսե՛ս... և արտասուքը խեղդում է նրան...

Ջաղացպանը մեր քերթողահայր Մովսես Խորենացին է լինում: Ցեվ Գյուտը գտնում է նրան, ճանաչում է, ով դիտե յերեսուն, թե քառասուն տարի չտեսնելուց հետո: Մեր քերթողահայրը ժամանակակից խավարասերներից հալածված՝ թափառում է յեղել իր հայրենիքի չեն ու ավերակ ջաղացներում: Այս ավանդության մեջ վոչինչ չափազանցություն չկա: Նայեցեք ձեր չորս կողմը և տեսեք ինչ մարդիկ են մեծարած և ինչ մարդիկ հալածված:

Մեր ժամանակ մի կարգ մարդիկ, դիտնականներ և ուսումնականներ նրանով են յերջանիկ, վոր ուղղակի իրանց աղդից կախում չունին: Գնահատում են ուսար յերկրում և ուսար աղգերին և իրանց գիտության արդյունքը մասամբ հասցնում են և իրանց աղդին: Ի՞նչ կլիներ այդ խեղճերի վիճակը, յեթե ուղղակի իրանց աղդից ունենային կախումն. ինչ ասել կուղե, վոր մահատյալ պիտի մի մի ջաղացպան դառնային: Ցեվ հիրավի, ինչ լավ ջաղացպան կլիներ Հ. Ղ. Ալիշանյանը...

Բայց ինչ կինչանակե առակս այս:

2.

Ցերբ վոր դուրս յեկան «Հյուսիսասիայլ»-ի առաջին համարները, խավարի լեգեոնը տակն ու վրա յեղավ, կարծեցին թե Նեռը ծնել է և արդեն աշխարհս վերջն է: Նեխած ճահճի բնակիչները վոչ միայն տպագրության եյին հայհոյում անվե-

քաստելի հիշոցներով, այլև ինչ վոր կարելի չեր տպել՝ անաստրագիր նամակներով եյին ուղարկում և խեղճ դյուրագրգիռ մարդուն ավելի ևս գրգռում: Ցեթե բարեբախտ տերության հանավոտությունը չլիներ, վոր իր բոլոր անմեղ հպատակներին պաշտպանում է հավասարապես, յեթե մերոնք իշխանություն ունենային Նազարյանցի անձի վրա, նրան Հունսի որը կձգեյին: Այսոր իսկ մեզանից չատերը յեթե գլխներն ուսերի վրա ունին, այդ ի շնորհս մեր բարեբախտ կառավարության է:

Նազարյանցին աթեիստ եյին համարում իր դիտնական դրվածքների համար, վորովհետև նա չեր ընդունում, վոր հերը Ադամա լեզվով են խոսում, չեր ընդունում, վոր աչքեր ու քաչքեր կան, ասում եր, վոր յերկիրս անհուն տարիներից առաջ եյ յեղել և... Ցեվ լուտերական եյին համարում նրա բոյական դրվածքների համար, ասում եյին՝ — ինչո՞ւ յե ասում հարկավոր է վերանորոգվել ավետարանի լուսով, ինչո՞ւ յե բարեկարգություն և բարենորոգություն քարոզում:

Ի հարկե նրա ասածները այժմ ամեն վոք կարող է ասել առանց հալածվելու, բայց հիմա ամեն վոք կարող է ասել, նաև վոր աշխարհիս յերեսին Ամերիկա կա, վոր աշխարհս պտտվում է, բայց չե՞ վոր դրանց եյ առաջին ասողներին ևժան չնստեց այդպես ասելը:

Մեր ժամանակի յերիտասարդները այնքան հեշտությամբ են խոսում Նազարյանցի մասին, վորքան մեր մանուկները յերկրիս պտույտի և Ամերիկայի մասին:

Ասում են, յերբ վոր Կոլումբը վերադարձավ Ամերիկայից, նրա ծանոթներից չատերը մեծ նշանակություն չեյին տալիս նրա դյուտին և ասում եյին— այդ ինչ բան է վոր... Մենք եյ նրա պես կարող ենք գտնել: Կոլումբը՝ նրանց ամաչացնելու համար՝ մեկ անգամ սեղանի վրա առաջարկում է նրանց, թե ով կարող է հավկիթը կանգնեցնել սեղանի վրա: Փորձում են, և վոչ վոք չի կարողանում: Ինքը վերցնում է մի հավկիթ, և սեղանի վրա դարկելով ծայրը ընկճում է և կանգնեցնում:— Բա՛, բացականչում են ամենքը,— այսպես խա մենք եյ կանեյինք:— Հապա ինչո՞ւ չարիք, պատասխանում է Կոլումբը:

Մեզանում այսոր կան մարդիկ, վորոնք հանդես են գալիս ժողովրդին լուսավորելու, բայց ինչո՞վ,— խավարով: Հանդես են գալիս բարոյական ցեխերը մաքրելու, բայց ինչո՞վ,— աւելի սև ցեխով: Ցեվ ինչո՞ւ,— վորովհետև հրով ու ջրով լու-

ամավորելու համար հարկավոր է ունենալ Նազարյանցի առաքինությունն ու քաջությունը, իսկ մեր ժամանակի բանաստեղծները վատ են և մոլի: Դրանք չարաչար հալածում են Նազարյանցի հետքով գնացողներին, այն մարդկանց, որոնց համար ամեստրանից դուրս չկա վոչ լույս և վոչ փրկություն, վոչ լուսավորություն և վոչ կրթություն:

Թող վոչ վոք չկարծե, թե մենք ավելի բախտավոր ժամանակում ենք ապրում, թե Նազարյանցի հետքով գնացողներն այսոր այլևս չեն հալածվում, թե այժմ հարգվում է գիտության վերջին խոսքը, թե այլևս չկա մլինդարյան խավարը, հավատաքննություն, մոլեռանդություն, թե Ամերիկան արդեն գըտնըվել է, տպագրության դյուտը յեղել, աշխարհս լուսավորվել, բարոյակրթվել, ամենայն խիղճ և մխիթ ազատ է, գառն ու գայլը միասին են ճարակում...

Հազար անգամ վոչ:

Ամենայն ցերեկ ունի իր գիշերը և դրանք հաջորդաբար շրջունակվում են անընդհատ: Կյանքի աճելությունն ու վոխվոխմունքը դադար չունի. մտավոր զարգացումը կանգ առնել չունի: Ժամանակի արագաշարժ անիվները անընդհատ գլորվելով՝ նորանոր շրջանների մեջ են ձգում մեզ, նորանոր չար ու բարու հանդիպեցնում: Մի կողմից մեռնում, մյուս կողմից ծնվում է նոր չարիք: Աղավնիները ենք թռուխա դնում և նրանից դուրս են դալիս ագռավի ձագեր: Բռնում ենք գավազանից և գավազանն ոձ է դառնում: Վորքան շատ գյուտեր են լինում, այնքան շատ է շոշափելի և դգալի դառնում մարդկանց տգիտությունը: Շտոխվում է նույն ինքը մեծ փիլիսոփան և խոստովանում է, վոր իր խելքը բան չի կորում, չգիտե վորտեղից է յեկել և ո՞ւր է գնում: Վորտե՞ղ պիտի փնտրենք այս առաստղեղական բավիղի յելքը:

3.

«Մանիր գքեզ» ասել են իմաստուն մարդիկ և ինքնածանոթությունը համարել են իմաստության վերին ծայրը: Ինչպես մարդկանց հայտնի յե, վոր աշխարհիս յերեսին չի գտնվիլ և վոչ մի հոգի, վոր ինքն իրան կատարելապես ճանաչե: «Մանիր գքեզ» առածը մի իդեալ է, վորին ամեն վոք պարտավոր է ձգտիլ, թեև հասնել կարող չե: Բավական է, վոր ինքնաճանաչության ճանապարհի վրա լինի կանգնած, այդ ուղիով լինի ընթանալիս, հետազբզրվի, իմանա բոլոր այն յերևույթների եությունը, վորոնց հետ չվիվում են նրա ներքին և արտաքին դգայարանքները: Իրականության ել միակ ճանքը պետք է լինի ուրեմն իր ընթերցողներին ինքնածանոթության ճանապարհի վրա կանգնեցնել, վոր նրանք իմանան իրանց շըրջապատող յերևույթների բացատրելը՝ վորոշել չարը բարուց, լույսը՝ խավարից, լավը՝ վատից, կենդանին՝ մեռածից, ոգուտկարը՝ վնասակարից, բարեկամը՝ թշնամուց, կյանքը՝ մահից և այլն: Այս պաշտոնը կատարել կարող չե այն գրագետը, վոր «թեպետ յերդ չատ գիտե, բայց ձայն չունի», թեպետ գիտե, թե վորն է սուտ ու վորը ճշմարիտ, բայց ասելու չափ քաջություն և առաքինություն չունի, իսկ ով վոր առաքինի չե, այլ վատ, նա վնասակար և անպիտան դինվոր է, նա կարող չե խավարի դեմ պատերազմել, այլ կդառնա նրա արքանյակը, լրտեսը, նրա սնունդ լիզողը, վոր մի կերպ պահպանե իր կաշին, իր վատ և ցած հոգին: Այսպիսիները ցեցեր են և վնասակար միջատներ գրականության անդաստանի համար:

4.

Հին ժամանակները, յերբ չկար տպագրություն կամ տպագրելու հնար, գրում եյին միայն գրելու չնորհք ունեցողները՝ իրենց ներքին դրդումից մղված, կամ այսինչ կաթողիկոսի և այսինչ իշխանի խնդրանոք: Հայրենիքին վրա հասած ամեն մի նոր աղետքից չարժվում եր քերթողի սիրտը, և նա գրիչ եր առնում ձեռքը և արտասվալից աչքերով գրոշմում մազաղաթի կամ թղթի վրա իր սրտի վիշտն ու մորմոքը, վորի մի նմուշը տպագրված կտեսնե ընթերցողը «Աղբյուրի» հետևյալ համարի հավելվածում:

Այնցան այդ ժամանակները «Վանդույժով» և «Հայդույժով»:

Մեր մտավոր վերածնության մոտիկ անցյալում դեռևս կար ավանդությամբ մնացած հայրենասիրական տխուր զգացմունք:

Մեր այն ժամանակվա գրողները լացով եյին գրում: Լաց եր լինում և կարդացողը: Այն ժամանակվա արտասվաթոր գըրվածները յեթե կարդա մեր այժմյան սերունդը նույնպես լաց կլինի և ավելի առատ արտասունքով, բայց վոչ չափազանց տխրելուց, այլ չափազանց ծիծաղելուց և խնդալուց: Ինչ վոր

այն ժամանակ տխրության արտասուք եր բերում, մխիթարությանն այսօր ծիծաղի արտասուք է բերում: Հին դերասանները կվճռեն, թե ինչ սուզ ու չիվան եր լինում թատրոնում «Շուշանիկի» առաջին ներկայացումներին: Մեզ հետ լայ եյին լինում և վրացիք, թեև չատ բան չեյին հասկանում: Այս մի լայլի ու սպիրջան եր, հայտնի նշան մանկության անմեղության: Լայ եյին լինում նաև քեֆի, ուրախության ժամանակ: Ցերբ վոր խըմճուլքներում մի քանի բաժակ ավելի եյինք խմում և ավելի ազդասեր դառնում, մեկ ել հանկարծ մի տխրության քող եր քաշվում ամենքիս յերեսին, և մեկն այստեղ, մյուսն այնտեղ սկսում եր հեկեկալ: Թե վոր մեկն ել լավ եր յերգում «Իմ հայրենիք պիս կկանչե» տխուր յերգը, այնուհետև պինդ սիրտ ունեցողներն ել եյին սկսում վողբալ և չնորհակալ եյինք լինում այն անձից, վոր մի վորևե զավեշտով փարատում եր մեր տխրությունը:

Այս վողբալից չրջանի սուգը, յերբ վոր խելացնոր պարսիկ դերվիշի զառանցության հասավ, դուրս մղվեց ծիծաղով ու ծաղրով: Նալբանդովհատը բժիշկներն եյին, վորոնք իրանց յերդիծաբանությամբ և զավեշտներով փրկեցին մեզ մի հոգեկան ցավից: Դուրս յեկան դրանց հետևողներ, գրեցին կատակերգություններ և հասարակությանը մի ծայրահեղությունից ձգեցին մյուս ծայրահեղության մեջ, թեպետ առանց այդ ել ընկնելու յեր: Հասարակությունը միշտ մանուկ չեր մնալու, այդ մանկությանը պիտի հաջորդեր առահասակ, լմաստակ և ըմբռոստ պատանեկությունը, մինչև կգա տրագեդիան և իր հետ կբերե հասուն յերիտասարդությունը: Ծաղրը կրթական ազդեցություն չունեցավ, այլ հակակրթող, անբարոյականացնող, լրբացնող: Տգետ հասարակությունը ծաղրի հարվածները մասխարություն համարեց, ավելի յերես առավ, այդ բանը նրա համար դարձավ մի սովորական և մոդայի պես բան: Նրա աչքում վայր ընկան և առաջվան վողբերգությունները, դրանք ևս նրա աչքում ընկան կատակների կարգը: Թատրոնը սովորեցրեց յեվրոպական սիրահարության ձևեր, կոկետություն, խաբեություն, մինչև բանիվ տգետ հասարակության չընքին կապեց այն բոլոր կեղտոտությունները, վորոնք ցույց եյին տրվում նրան բարի նպատակով՝ խրատելու և կրթելու համար: Այս բանի վրա ուշադրություն չդարձրեց կրիտիկան և չկար ել կրիտիկա: Ցեղածները կրկնում եյին թարգմանորեն ուրիշի առածները, ուրիշի խաղի վրա: Մյուս կողմից քաղցած դերասանները չարունակեցին

հասարակության ղրավել ավելի խայտառակ պիեսաներով, բալագանի բաներով և բալագաններում— բաղնրում: Թատրոնի պաշտպաններն իրանց վարք ու բարքով ավելի ևս կոտրեցին թատրոնի վարքը, նրա կրթական ազդեցությունը և այլն: Հիմա վոր մեկն ասեմ յես:

Թատրոնի բացասական ուղղությունը տիրապետեց և գլխականության մեջ: Ինչպես թատրոնում բամբասանքը կատակ համարվեց, նույնպես դրականության մեջ նույն և մի բամբասանքը համարվեց ֆելյետոն: Դուրս յեկան անպատկառ դրչակները, չափանդիր դրաչարչիներ, չինովի և սուտ բանասերներ: «Մեղու»-ի անպատկառությունը մինչև այնտեղ հասավ, վոր իր ժամանակի ամենամեծ և մեծարած մարդուն կոկոզպաս անվանեց, ամենասուրբ տեղը՝ Սաղմ և Գոմոր: Վոչինչ սրբություն չմնաց, վոր այդ նեխած լրագիրը վոտնատակ չտա, վորպեսզի չասեն, վոր «Մշակ»-ը առաջադեմ է, իսկ «Մեղուն»՝ հետադեմ: Խեղկատակ քաղքին պարկե-պղուկ ածող վրացի աչըղի նման հանդերով եր հայհոյում: «Արձագանք»-ը չուզեց յետ մնալ «Մեղու»-ից և նրանից էլ անցավ: Յեվ այս բոլորը առաջ եր գալիս իրանց մտավոր և բարոյական անանկությունից: Ուրիշ ասելու բան չունեյին: Այս Ավդիասի գոմերը դեռ չարունակում են դոյություն ունենալ, այն պանապանությամբ միայն, վոր ժեղվատունն իր տունն է մտել, իսկ «Արձագանք»-ը՝ իր հրատարակիչը:

Բանն այս դրության մեջ եր, վոր հանդես յեկավ «Մուրճ» անունով մի ամսագիր և իր առաջաբանն սկսեց նրանով, վոր հայտարարեց իր ընթերցողներին, թե հանդես է գալիս— «Հյուսիսափայլ»-ի և «Մշակի» բոլոր արժանավորություններն ունենալով, առանց նրանց թերությունն ունենալու: Բայց, ինչպես հոդվածից սկզբումն ակնարկեցի, պարոնը չի հասկացել «Հյուսիսափայլ»-ի վոչ եյությունը և վոչ ուղղությունը, հետևաբար և վոչ «Մշակինը», վորին համարում է արդեն իր դերը կատարած վերջացած: Այսպիսի հայացք են ունենում իրանց անցյալի վրա անապարձ ռազմագետները և հետևանքն էլ լինում է այն, վոր առաջին իսկ հակառամարտում գերի չեն ընկնում իրանց թույլ համարած հակառակորդի ձեռքը:

Շատ թույլ է ասածս: Ցեվ ձեզ եվ թույլ կթվի, ալնիվ ընթերցող, յեթե դիտենաք, վոր այս սնապարծությունն թվացող հատկությունը պոչի բալակ ծայրն է մի սոսկալի դաղանի, մի հրեշի, վոր յեթե բոլոր մարմնով յերևա, սարսուռ և զարդանդ կբերե ձեզ վրա: Այս հրեշի բուն հայրենիքը Գերմանիան է, իսկ իր անունն է Յես:

Մեր առաջնորդող դրականության, մեր մամուլի և դաստիարակության ղեկը Գերմանիայում ուսումն առածների ձեռքին է: Այդ մարդիկ, վոր Գերմանիայում կարող չեն համբակներից բարձր լինել, մեր մեջ մի մի պրոֆեսոր են, ծայրահեղ մեծամիտ և հանդուգն վոչ միայն դեպի ուրիշները առհասարակ, այլ առավել դեպի միմյանց: Դրանցից յերկուսը միասին կարող են տեղավորվել վոչ մի դպրոցում, ինչքան եվ ընդարձակ լինի դպրոցը, չեն կարող տեղավորվի մի խմբագրատան, ինչքան եվ բազմաթվքրե լինի նրա հրատարակությունը, չեն կարող միասին դործակից անդամ լինել մի ընկերության, վորովհետև դրանցից ամեն մեկն ուզում է ինքը լինել նախադահ և այդ պահանջում է նա ամենահանդուգն ձևով, ամեննևին չամաչելով, չքաշվելով, ամեն մեկն ուզում է ինքը լինել տեսուչը, խմբագիրը, պատդամավորը, մի խոսքով ամենայն տեղ պահանջում է առաջին աթոռը: Սրանք միշտ մաքառում են իրար դեմ թե խոսքով և թե դրչով, միշտ ընդում են իրար: Սրանք ամենքն եվ մի կաղապարով են ձուլված. կարելի չե լավ անվանել վոչ մեկին, բայց կարելի յե ասել՝ այս մեկը մյուսից մի քիչ լավ է: Ճըշմարիտ է, դերմանացիք յեսական են, բայց վոչ դեպի միմյանց, վոր ընդհակառակը չատ ընկերական, չատ համայնական, հասարակական և միաբան են. այլ նրանք ամենից միասին յեսականն են դեպի ոտարը: Իսկ մերոնք գերմանացոց բուն բնավորությունը հակաշրջած են բերում մեզ մոտ, գալիս են իբրև գերմանացի մի ոտար աշխարհ, և վոչ գերմանացու բնավորություն ստացած հայ, իրանց հայրենիքը: Այնպես չեն վերաբերվում միմյանց, ինչպես գերմանացին գերմանացուն և վերաբերվում, այլ այնպես, ինչպես գերմանացին վերաբերվում է դեպի դաղիացին: Սկզբում, նորեկ ժամանած՝ դլխներն այնպես ցից է լինում, ինչպես դատարկ հասկ, սրտերն այնպես ուռած՝ ու փքված, ինչպես փչած ռումբի: Սրանք վոչ միայն միմյանց չեն հպատակում, միմյանց հետ չեն ընկերանում, այլ ամեն մեկը

մի առանձին բանակ և կազմում մյուսի դեմ, հպատակեցնելով իրան իր յեսականությունից ազատ մարդկանց: Հպատակեցնելու և չհպատակելու ձգտումը այնքան սաստիկ է դրանց մեջ, վոր իրանց են հպատակեցնում վոչ միայն մարդկանց, այլև ընկերություններ և հասարակություններ: Բավական է, վոր դրանցից մեկը լինի հոգաբարձու, տեսուչ, յերեցփոխ, նախադահ մի վորևե ընկերության, դիտցած յեղեք, վոր ինքը նրանց չի ծառայելու, այլ նրանց է իր յեսին ծառայեցնելու: Ձեզ որինակ Աբդար Հովհաննիսյանը, վոր ձգտում ունի ամբողջ հայոց ազգը իրան հպատակեցնելու: Հպատակեցնելու ձգտումն այն աստիճանի յե հասնում, վոր դրանք ուզում են հպատակեցնել իրանց և բնական ու հոգեկան որենքները, փոխանակ իրանք հպատակելու այդ որենքներին: Որինակ՝ փոխանակ լելվի և կրթության որենքներն ուսումնասիրելու և նրանց հպատակելու, իրանք են լեզվի և կրթության որենք ստեղծում, և անմտաբար իրանց հըպատակեցնում: Ձեզ որինակ Մանդինյան և Բահաթրյան, վորոնք միմյանց ընդեցին «վարժարանի» մեջ: Այս յեսականությունը մի ախտ է, վորով մեր նոր սերունդը վարակվում և այս բարոյական հրեշների ձեռքով: Սրանք այն համոդմունքն ունին, վոր ամենայն ինչ իրանց յեսի համար եւ ստեղծված, իսկ իրանք վոչ մի բանի, այլ պետք է իշխեն ամենայն ձկանց ծովու և ամենայն թռչնոց յերկնից: Ցերևակայել պետք է, թե ինչ վոդի կունենա սրանց կրթած սերունդը, արդյոք ընկերակա՞ն, արդյոք համայնակա՞ն, հասարակակա՞ն. ամենևին վոչ: Ասված տա, վոր Գերմանիայից դեթ այսուհետև յեկածները դիտենան իրար հարդել, իրար աչակցել, փոխանակ միմյանց ընդելու և միմյանց հպատակեցնել ձգնելու:

Գանք հիմա և տեսնենք ինչպիսի նմուշ է «Մուրճ»-ի առաջին տետրը:

ՄԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՑՈՒՆ

«Մուրճ»— քաղաքական, հասարակական դրական ամսագիր· № 1 1889 թիվ (առաջին տարի)— խմբագիրը— հրատարակիչ Ալեքսիք Սրապիոնյանց:

«Մուրճ»-ի առաջին տետրը մեզ վրա լավ տպավորություն արավ, բացի խմբագրի առաջնորդողից, վորը նույնպես լավ տպավորություն կթողներ, յեթե ազատ լիներ տեղ-տեղ միա-

կողմանիությունից, տեղ-տեղ ղայրույթից, և տեղ-տեղ հայհոյանքից: Ասված է՝ բարկացեք, և մի մեղանչեք:

«Մշակ»-ի մասին խոսել պատմական վոճով, իբրև անցած դնացած մի որդանի մասին, վոր արդեն հնադարան է ընկել, այդ վոչ միայն աչկարա ղրպարտություն է, վոր ասել է հայհոյանք, այլև անխոհեմություն: Ասենք ընդդիմահարության որենքով մի առարկա կարող չէ մյուսի տեղը բռնել, մինչև նրան չհեռացնե իր տեղից, բայց «Մուրճ»-ի տեղն ու ճանապարհը բոլորովին այլ է, «Մշակ»-ինը՝ այլ: «Մուրճ»-ը կարող է «Մամուլի տեսության» մեջ խոսել «Մշակ»-ի մասին, յերբ վոր ունենա այդպիսի բաժին և վոչ թե ասել՝ «Մուրճ»-ը հանդես է դալիս «Մշակի» տեղը բռնելու, վոր արդեն հնադարան է ընկել: Այդ միևնույն է, ինչ վոր հոպոպի մեկը դրել եր «Արձագանք»-ում, թե Աղայանցը արդեն ծերացել է, և ինչ վոր ասելու ուներ, արդեն ասել պրծել է: Կարծում են, թե Ալայանցի դլուխը իրանց դդմագլուխն է, վոր արդեն դատարկված լինի: Ասել նման՝ նայես՝ թե «Նազարյանցը ծանոթ չեր քաղաքագիտության այբ ու բենի հետ», այդ կնշանակե, արդարև, բոլորովին անծանոթ լինել վոչ միայն քաղաքագիտության այբ ու բենին, այլ մինչև անգամ մոռացած լինել իր անունը, այն մարդու նման, վոր յերբ իր անունը տալով բարևել են, ասել են, ասել է՝ «Հաա՛... Ստեփա՛ն, Ստեփա՛ն»...

Առաջնորդող հոդվածը իր կիսապատմական հայացքը վերջացնում է հետևյալ նոր միտքը հայտնելով—

«Մենք բոլորովին տոգորված ենք այն մտով, վոր ամեն բեղմնավոր միտ հարստություն է՝ պահպանման և արդյունավորելու կարոտ: Բայց մեր աչքում վոչ միայն միտքն է մի հարստություն, այլև նրա ծնողը և արդյունավետ կացուցանողը... Մենք վոչ միայն մտերի հետից ենք ընկնելու, այլ և մարդկանց, վորոնք այդ մտերի կրողներն և ընորհի տերերն են»:

Հրաշալի միտք, բայց ի՞նչ եք կարծում ուրեմն, պ. Արծրունին էլ միտք կրող չնորհքի տեր մա՞րդ է, թե վոչ:

«Մաղթում ենք բարձրյալին,—շարունակում է—վոր աշխատակիցների շատությունը և հասարակության համակրությունը միջոցներ տա այս ամսագրին, վորպեսզի սա կարողանա կատարվող գործերից և կատարող անձերից այնհանին տեսնե և ճանաչե, թե բարին և թե չարը, վորհան պետք է վոր «Մուրճը» հայկական կյանքը բովանդակող որգան ճանաչվի»...

Այս պարբերությունը կարոտ է պարզաբանության, մեկնության, թարգմանության: Ես չեմ կարող վիզս առնել այս աշխատանքը, այսինքն պարզաբանելը՝ ուրիշի համար, բայց ինքս ինձ համար այնպես եմ դլխի ընկնում, վոր վերը հիշված չնորհքի տեր մարդիկը միայն նրանք են, վորոնք կաչխատակցեն «Մուրճին»: Ատված չնորհք տա խմբագրին դտնե պարզ դրելու, վոր ինձ պես անչնորհք մարդիկ իմանան, թե ի՞նչ չնորհալի միտք է պարունակված այս վերջաբանության մեջ:

Այս չնորհալի առաջնորդողից հետո տպված են յերկու վոտանավոր և ապա Պ. Պռոշյանցի «Ցեցեր»-ը, վորոնք առաջին տեսքում դեռևս ցեցեր չեն, բայց մյուս համարում ցեցեր կըդառնան անշուշտ:

«Ցեցեր»-ի մասին կխոսենք, յերբ կվերջանա:

«Բարեպաշտ մարդիկ» պ. Բարխուդարյանի յերդիծաբանության «Ներածությունը» (նախերդանք) մի լավ նմուշ է, վոր ցույց է տալիս, թե վրացի պարկի-պղուկ ածող թափառական աշըղներըը ինչ ձևով են յերդում այնպես ափ հափո և անընդհատ: Այդ նմուշը մյուս կողմանե մեր միտքն է բերում հանդուցյալ Քաղցու հանդավոր ֆելյետոնները: Այս մասին հեղինակը ինքը ներողություն է խնդրում, իհարկե ծաղրական նեղողություն, բայց մեկ էլ ինքն իրան սիրտ է տալիս ասելով՝

Բայց ինչի՞ ինձ այս բանն իզուր
Այսքան պիտ անհանդստացնի.
Մի՞թե առակս հազար ու բյուր
Մարդկանց ձեուը պիտի անցնի:
Հայտնի յե վոր առհասարակ
Հայ ազդը չե ընթերցասեր.
Կարծես իզուր բազմամաստակ
Սուրբ Մեսրովպը հնարեց տառեր:
Գուտտենբերգի դյուտից անմահ
Հայերը չեն քաղում չատ չահ...

Այս կարծիքը չատ սխալ է: Հայերը չեն կարդում վեմ հեղինակությունները, չեն կարդում հանճարավոր Շիլլերի աննման վիլհելմ Թելը, Հովհաննա Դարքը, Դոն—Կառլոսը և այլ այսպիսիք, բայց չատ սիրով կարդում են հիմար բաներ, անճոռնի և անճաշակ գրվածքներ: Ցերևի այս բանը նկատել է ինքը պ. Բարխուդարյանցը և խոր զգացել: Տեսնելով, վոր իր սիրած

ու վայելուչ հանճարներից ոչխուտ քաղելու չափ հասած չէ հայ ժողովրդի միտքը, տեսնելով, որ նրա ականջին դեռ չատ լսելի է հնչում յեվրոպական հանճարների սքանչելի մուզիկան, ճարահատյալ սկսել է հայի ականջին պարկի-սղոսկ ածել: Սրանից լավ ապտակ անճաշակ հայի յերեսին տալ կարող չեր պ. Բարխուդարյանց, թեև այս արել է մեր առածի հակառակ նպատակով: Պարոնը կարող է ապահով լինել, որ իր յերկի-ծաքանութիւնն անհամեմատ չատ ընթերցողներ կունենա, քան իր վորևե թարգմանութիւնը Շիլլերից: Ապացույց սրան այն ներդործութիւնը, վոր իր առակի ներածութիւնն արել է «Մուրճ»-ի խմբագրի վրա: «Մենք, ասում է խմբագիրը, կաշխատենք դործն այնպես տանել, վոր չենթարկվենք պ. Բարխուդարյանի ծաղրին»: Հրաշալի աղդեցութիւն. այսչափ չեր ապդի Շիլլերի նուինիսկ նրա սքանչելի «Զանդակը» թարգմանութիւն պ. Բարխուդարյանի: Իսկ յեթե պ. Բարխուդարյանը ցույց չտար իր յերդիծաբանութիւնը «Մուրճ»-ի խմբագրին, ինչ ասել կուզի, վոր նա իր դործը պիտի տաներ այնպես, վոր չենթարկվեր ծաղրի: Կեցցե պ. Բարխուդարյանը, վոր վաղրոք ազատել է պ. Արասխանյանին չատ սխալներից: Բայց յեթե այս ախտից չի ազատել խմբագրին, առաջնորդող հոդվածը պըրելիս, այս անչուշտ նրանից կլինի, վոր պ. Բարխուդարյանն այդ ժամանակ դեռ խմբագրութիւնը տված չեր լինի իր առակը: Ուրեմն եկ չմեղադրենք պ. Արասխանյանին, այլ պ. Բարխուդարյանին, վոր ուշացրել է իր ծաղրը և խեղճ խմբագրին մոլորութեան մեջ դցել:

«Եղուարդ եֆենդու պաղտնիքը» պ. Փիլոմյանցի՝ մի պատկեր է վաննեցոց կյանքից առած, վոր հեղինակը նկարել է իր ֆնած ժամանակ: Յեթե պ. Փիլոմյանցը պատկած ժամանակ այսքան սիրուն պատկերներ է նկարում և խորամանկութեան կողմից դերազանցում է նուինիսկ Եղուարդին, վորքան առաւել դեղեցիկ պատկերներ կգործեր, յեթե արթուն ժամանակ նկարեր և պարզ ի պարզո, յերես առ յերես: Մենք արդեն մեզ հաղեցած ենք համարում պարոն Փիլոմյանի պատկերներից, վորովհետև դրանք միմյանց վերաբերութեամբ «եկ մը դեն բանն են»: Սակայն մեծ ծառայութիւն կանե պ. Փիլոմյանցը մեր դրագետներին, յեթե մի լուրջ նկարագիր և տեսութիւն տա այն աշխարհի մասին, ուր վոր ինքը յեղել է և բազմատեսակ տպաւորութիւն է ստացել: Այդ մեծ ծառայութիւն կլինի, վորովհետև ինչպես

ջրան հայտնի յե՝ այդ աշխարհի մասին մեզ բավականին մոլար և ավիզ ցիներ դաղափար տվին մի խումբ իմաստակներ և այն՝ պիտութեամբ, խաբելու համար: Հարկավոր և անրապետող մոլար դաղափարը վոչը առ վոչը չհկել, վոր իրն այնպես տեսնենք, ինչպես վոր կա իրականի մեջ և վոչ պլխիվայր և պոռտլիկը դրված: Յեվ այս կարող է անել պ. Փիլոմյանցը, բայց յերևի չի վստահանում, չի ուզում տաք պլխներին սառը ջուր ածել և տաքացնողներին բաղնտպան անվանել:

«Հինդ որ» Լեոի: «Մուրճ»-ի մեջ այս մեկ հոդվածն է, վոր ուղիղ հայերեն է դրված: Մի նկարագիր է, չատ դեղեցիկ նկարագիր հանապարհորդութեան, վոր արել է մեր դեռահաս և հուսատու վիպասանը Շուշուց մինչև Դանճասար: Այս հոդվածը չարունակելի յե, ուրեմն մենք եկ վերջումը կխոսինք այս մասին, ինչպես և Լեոի ցայսոր պրկածների մասին: Լեոն աշխատակցում է և «Մշակ»-ին և «Աղբյուրին», իր որհնութիւնը հասցնում է և Մոսկվայի «Գրական հանդեսին» և «Մուրճ»-ին: Այս հանդամանքը ցույց է տալիս, վոր մեր յերիտասարդ բանասերի դրիչը բավական բեղմնավոր է և դերազանցում է իր ժամանակակից բոլոր դեռահաս դրողներին: Ուրեմն ժամանակ է, վոր դրան որհնենք, ուստայի իրավունք տանք մի լավ ապտակով, ինչպես սովոր են ապտակել մեր վարպետները որհնված աշակերտին: Վորպեսզի այդ ապտակին արժանանա, նրան հարկավոր է դալ Թիֆլիս, տեսնել, թե ով ինչպես է կարում կամ կարկատում: Բավական չէ միայն իմանալ, թե ինչ են դրում, պետք է դիտենալ, թե ինչ են մտածում: Շատ անգամ այն չեն դրում, ինչ վոր մտածում են: Զգրված մտքերի հետ ծանոթանալ կարելի յե մտքի տեր մարդկանց հետ չխվելով, նրանց չրջաններում պտտվելով: Հանդուցյալ Բաֆֆու համար «Մշակի» չրջանը դարձավ մի չհոլա, վոր նա չատ բան սովորեց և վիպագրեց այնտեղ իր լսածները: Ինչ ասել կուզի, վոր սովորելը ամեն մտքի դործ չէ, բայց Լեոի պես բեղմնավոր մտքի տերը կարող է ուրիշից ստացած քանքարը նույնութեամբ հետ չդարձնել, առանց մարսելու չարտաքիժել, այլ չահեցրած, և հյութավոր ծաղիկներից մեղր չինած: Այս պատճառով ցանկալի յե և չատ ցանկալի, վոր Լեոն Շուշի չմնա, թողնի ամեն ինչ և ընկնի Թիֆլիս: Այս պիտի ցանկա ամեն վոք, ում համար վոչ միայն միտքը, այլև մտքի ունեցող անձը նշանակութիւն ունի մեր մատաղ դրականութեան համար և ում համար վոր

ցանկալի է, որ մեր դրականությունը նորանոր հոտավետ ծաղիկներ բուսցնե:

«Պերճ Պռոշյանց և նրա վեպերը» — ուսումնասիրություն Ն. Քարամյանի: Այս մեծաքաշ գրքույկի տակ ևոչ մի ուսումնասիրություն չկա: Վերնագիրը կարծել է տալիս, որ հեղինակն ուսումնասիրել է Պ. Պռոշյանցի կյանքը և նրա վեպերը, բայց այսպիսի բանի հետն անգամ չկա, այլ մի համառոտ և տարօրինակ մահացուցակ է: Աստված գրողի հոգին լուսավորե:

«Գաբրիել Սունդուկյանց»— կենսագրական ուսումնասիրություն Գևորգ Զամչկյանի: Պ. Զամչկյանի հետ մենք առաջին անգամն է, որ ծանոթանում ենք պ. Սունդուկյանի կենսագրությանը: Ասենս որ նկարագրված չէ, որ բնավորությամբ ինչպիսի մարդ է պ. Սունդուկյանց: Ցես չգիտեմ ինչո՞ւ համար վախ են տալիս մեր կենսագիրները բնավորության նկարագրից, մինչդեռ կենսագրության աղն ու համեմը հենց այդ է: Ասենս որ ցես մոտիկ ծանոթ չեմ պ. Սունդուկյանին, որ լրացնեմ պ. Զամչկյանի բաց թողածը: Պատահել եմ շատ քիչ անգամ պ. Սունդուկյանին և այն տպավորությունն եմ ստացել, որ այդ մարդը սիրում է, որ իրան պատվեն և մեծարեն: Այս բանը պետք է առաջացած լինի այն պատվից, որ ավել են իրան բեմ կանչելով: Ցես ու իմ ասածը՝ մեր ժամանակ ևոչ միայն պ. Սունդուկյանց, այլ նույնիսկ անբարոյական վոդեվիլները գրողներն անգամ ավելի մեծ պատիվ ունին, քան բարոյակրթություն տարածող բանասերները: Հետևի դերասանին անգամ բեմ են կանչում կրկնակի և ծափահարությամբ ղրկեցնում թատրոնը, բայց գրական մշակներին միայն ապտակի չեն արժանացնում: Պոլիս, մի՞թե քիչ տաղանդավոր գրողներ են յեղել, վորոնց հիսունամյակն անգամ անցել է, բայց տոնվեցավ առաջին անգամ պ. Ադամյանի հոբելյանը: Պ. Ադամյանը մեր ամենասիրելին է թեև, բայց պետք է ասենք, որ մեր յերեսպաշտությունը Պոլիս էլ գնաց: Մենք էլ կատարեցինք պ. Գ. Զամչկյանի հոբելյանը, բայց Պռոշյանցինը ձգեցինք հնադարան: Ադամյանը հանճարավոր դերասան է, բայց փոքր հանճարի տերեր չեն և Աղաբեկյան, Մամուրյան, Յուրթուչյան և այլք, վորոնք ամբողջ տաճկահայոց մտավոր զարգացման ծանր լուծը միշտ իրանց ուսերի վրա յեն կրում ժրաջան յեզների նման: Ա՛խ և այսպես մեր դրականության մեջ պ. Շանչյանցի անունը տալիս, այն

մարդու, վոր հայոց աղջին ավել է Պռոշյաններ, Մուրատյաններ, Բահաթրյաններ, Ամբիկյաններ և բազմաթիվ հայրետ և բարեկիրթ քահանաներ: Ժամանակ չէ՞ մի թե ազատվել կապկական վոտայուններից:

Ինչևիցե, պ. Սունդուկյանց մեր դրականության բեմի համար մի գտնված մարդ է և այս գյուտի համար մենք պարտական ենք հանդուցյալ Ամբիկյանին և պ. Զամչկյանին: Առանց այս պարոնների մենք Սունդուկյանց չեյինք ունենալ: Ուրեմն պ. Սունդուկյանցը մի ինքնաբուխ ծաղիկ չէ, այլ պատվաստ և շատ հաջող:

Մի տարակույս, վոր յես մի քա ունեյի, այժմ նրա կենսագրությունը կարգալուց հետո բոլորովին լուծվեցավ: Ցես այն կարծիքի յեմ, (թեկուզ չատերի համար մի մոլորություն համարվի), վոր Թիֆլիսի բնակիչը չորրորդ սերնդում բարոյական և մտավոր չորհքից զուրկ է լինում: Զարմանում եյի, թե պարոն Սունդուկյանցը ինչո՞ւ յե բացառություն կազմում այս ընդհանուր կանոնից: Այժմ բանը պարզվում է: Շահան Զրպետը մանուկ Գաբրիելի սրտի մեջ ձգել է այնպիսի սերմեր, վորոնք իրբև մանանեխի հատիկներ՝ ժամանակին պիտի ծլեյին և ծաղկեյին. հարկավոր է միայն հմուտ պարտիզպաններ, վորոնք այդ ծաղիկներից ոգուտ քաղել դիտենային. այս բախտին էլ արժանանում են պ. պ. Ամբիկյան և Զամչկյան: Պ. Սունդուկյանցի չատ դերերը հենց այս պարոնների վրա յե չափած ու ձևված: Ցունի այնպիսի դեր, վոր կարող լինի նշանավոր դերասանի խաղալուն. նրա դործող անձանց դերերի մեջ կարող են մտնել ավելի աննշան դերասանները, քան նշանավոր, վորոնք պահանջում են դրել սրտի ու մտքի տեր անձինք: Այս բանում մեղավոր չէ, ի հարկե պ. Սունդուկյանցը, քանի վոր այդ է ավել Թիֆլիսի բարոյական և մտավոր անհանգստություն ունեցող կյանքը: Պ. Սունդուկյանցը մեղավոր է նրանով, վոր Գեվորգ Տեր Աղեքսանդրյանցի նման հավիտակված և Թիֆլիսի մտավոր հարստությամբ, այդ հարստության աղքատությունը և անհանգստությունը նշմարելի չէ դրանց, ինչպես նշմարելի չէ պ. Բաֆֆուն իր հերոսների խաչադողի բնավորություն ունենալը: Ասած է, ագռավին իր ճուտը դուր կգա, ոճինն՝ իրը: Ամեն գրողի համար իր ծննդարանն է քաղցր, ինչպես Պռոշի համար իր Աչտարակը, վոր կենում է կենում, եյի գնում Աչտարակ, այն վաղվա տերտերի նման, վոր միայն մի չարականն է յեղել իմանա-

ւիա— թե «Գնամ Սամսոն, դամ Տլսալիզոն»: Այս է պատճառը, որ ինչպես Պռոչյանցի վեպերը կարող են շատ հաշտ կերպով իրար մեջ պարունակվել, նույնպես պ. Սունդուկյանցի պիեսները: Ամեն մի վիպական կամ թատերական դրության հարկավոր է միշտ ոգեշնչության յերթալ, ինարկե վոչ կոմու կամ Իտալիա, վոչ, այլ հարկավոր է միշտ իր տեղն ու ժամանակը վոխել: Անդադար միևնույն ժամանակի և միևնույն անձանց վրա դրելը դրությունն անհնարինացնում է և ընթերցողին ձանձրացնում: Մեծ, շատ մեծ չրջան պետք է, ինչպես Փարիզ, Լոնդոն և այլն, վոր դրողն առանց իր տեղից և ժամանակից հեռանալու միևը քան զմյուս նշանավոր բան արտադրե: Թիֆլիսը շատ շատ չորս տիպ կարող է տալ և վոչ ավելի, վոր չլինին չնչին արարածներ...

«Մուրճ»-ի այս համարում կա և յերեք լանդշաֆտեղծություն «Նավակ»— Լեվոն Մանվելյանցի, «Ծովը»— Ալեքյանի և «Յերզիի ուխտը» — Սրծիվյանի: Յերեքն էլ լավ յերգեր են, բայց հին յերգեր են և գարնան գոլեսաի նման նոր ի նորույն կրկնված: Բանաստեղծների վրա բան գրելը շատ գժվար է: Հին գրքերի խրատներում ասված է, մինչև անգամ, թե «Բանաստեղծ մարդուց պատրաստ կաց», այսինքն զգուշ կաց: Յես էլ զգուշ կկենամ, որանց մասին բան չեմ գրի: Բայց սրանց առիթով պետք է ասեմ, վոր բանաստեղծներ շատ ունինք, իսկ բան ստեղծողներ հազվագյուտ են մեր մեջ: Յերեք մեկը մի նոր դյուտ է անում, առանց իմանալու, վոր այդ դյուտն արդեն արված և կատարելագործված է, այսուամենայնիվ պատիվ և բերում գանողին, ցույց է տալիս գտնողի մտքի բեղմնավորությունը: Շատ վոր մեղադրենք, պիտի ասենք, չգիտեի, վոր այդ դյուտն արդեն յեղած է: Ուրիշի արածն ու ասածը չգիտենալը վոչ մեղք է և վոչ մեծ պակասություն, բայց մեծ հանցանք է, յերբ մեկը ուրիշի ասածը չնչին վոխոխությամբ իրան է սեփականում: Այս մի ձրիակերություն է, և մեր նոր սերունդը պետք է շատ ու շատ զգուշանա այս բանից: Ձմյարիա բանաստեղծը, բան ստեղծողը անպատասխանություն չի համարի իր համար ասելու, նմանություն այսինչ բանաստեղծի, վոխադրություն կամ թարգմանություն այսինչից: Մի մեծ պակասություն, վոր Գամառ-Քաթիայան ունի, հենց այն է, վոր սովորություն չունի իր թարգմանությունների աղբյուրը հիշելու և այս հանգամանքը ստիպեր է ձգում նրա իսկական գրվածների վրա էլ. ինչպե՞ս

իմանանք, թե վորն է սեփականություն և վորը թարգմանություն: Բայց նա ասում է. «Հացը համով ըլի, թխողը թեկուզ չհուզ ըլի»: Ինչու՞, ավելի լավ չի՞, վոր համ հացը համով ըլի, համ թխողը հայտնի, վոր իմանանք, թե ում թխածն է: Նալբանդյանցը նույնպես սովորություն չուներ հեղինակին հիշելու, ինչպես և Նազարյանցը: Այս սովորությունը հներն ունեին և անում էլին այն նպատակով, վոր ընթերցողները կարդան իրրև հեղինակություն: Այս արարմունքը դպրություն չեյին համարում, ինչպես գիրք գողանալը գողություն չեյին համարում: Ազաթ եր, այս պատճառով նրանց գող անվանելը ավելի քան անմտություն եր: Թաղիադյանցի «Վարդգեսը» բառացի թարգմանություն է, միայն հատուկ անունները փոխած, բայց յերկար առաջաբան ունի, վոր նրա նյութն առել է Խորենացու պատմությունից: «Հատված դնացյալ Վարդգես Մանուկ» և այլն: Բնագրից ռուսերեն թարգմանություն էլ կա, վորի մեջ յես ինքս համեմատել եմ հիշյալ վեպը: Այս բանն անում էլին վասն ազգասիրության: Բայց ժամանակ է, վոր էլ այս տեսակ ազգասիրություն չարվի, վոր այլևս Մակար վարդապետներ, կեղծ պատմություն չհնողներ դուրս չգան:...

«Աղեքսանդր 2-րդ կայսեր վերանորոգությունները»— Կ. Յաղուբյանի: Պարոն Յաղուբյանի բեղմնավոր գրիչը ապագա ունի և վառավոր ապագա, ասված տա միայն, վոր վայլուն պաշտոնները նրան չհափշտակեն մեր գրականությունից: Պարոն Յաղուբյանին և և քաղաքական տեսությունը: Խորհուրդ ենք տալիս «Մուրճ»-ի ընթերցողներին ուշադրությամբ կարդալ պ. Յաղուբյանի գրվածքները. նա պատարկաբան չե չաստերի նման: Ինքն իրավաբանության կանդիտատ, դիպլոմը ծոցին, բայց գրականության մեջ նա վոչ վաստաբան է և վոչ դատախազ, այլ ճշմարիտ բանասեր: Սրա գրվածներից միշտ կարելի յե մի բան սովորել: Յես սրա գրածից անջատ վոր հատկացա, թե ի՞նչ գործ է Բիսմարկը, մինչդեռ կարծում էլի, թե ուղիղ և ասում «Արձագանք»-ի հոդվածը, թե նա արդեն ծերացել է, և ինչ վոր ասելու կամ անելու ուներ, արդեն ասել և արել պըրծել է, բանից դուրս է գալիս, վոր այդ յերկաթե անվանված մարդը դեռ ամբողջ Յեվրոպան իր մատի վրա է խաղացնում: Մեզ հարկավոր է ազգային դատախազություն, հարկավոր է և քաղաքական կրթություն: Մենք մի աննշան մարմին ենք և պատվում ենք մեզանից անհամեմատ մեծ մարմինների չուրջը,

թեև մեզ զգալի չե այս, ինչպես վոր զգալի չե, վոր մենք մեր յերկրի հետ պատվում ենք աշեղակի շուրջը: Այս անգիտակցականն պատւյտը զգալի չե նույնիսկ «Մուրճ»-ի խմբագրին: Վորպեսզի այս հանդամանքը ի նկատի ունենանք, թող մյուս անգամ յերը գրելու կլինի մեր մտավոր հեղաշրջումների մասին, «Հյուսիսափայլին», «Մշակի», «Արարատի» և այլն, ուշադրությունից չվրիպեն, թեկուզ չհիշե ել, թե այդ ժամանակները ինչ քամի յեր փչում Յեվրոպայից, ինչ վիճակի մեջ ել Ռուսաստանը, ինչ եյին գրում և պահանջում նրա մտածող և առաջնորդող մարդիկը, ինչո՞ւ «Հյուսիսափայլ»-ը մի քանի տարով առաջ չդուրս յեկավ, մի՞թե կարելի բան ե, վոր մի լրագիր կամ ամսագիր աղդեցություն գործե մի ժողովրդի վրա, մինչև նույն ժողովուրդը տրամադրված չլինի նրա խմբագրի պես մտածելու, և այլ այս տեսակ՝ շատ բաներ. յես հիմա վո՞ր մեկն ասեմ: Ինչ վոր ե պ. Կ. Յաղուբյանը մի շատ պատվական ուժ և «Մուրճ»-ի մեջ, յեթե մեկն պ. խմբագիրն նմանա ոգուտ քաղել իր ամենաճարտար չաքուջ խոհրդից:

«Գրախոսություն»: Այս մի նոր բառ ե «Մուրճ»-ի խըմբագրի՝ հորինած, ինչպես ուսվածը, դիջանել, բացել (բանալ բառի փոխանակ): Ինչ վոր ե, այս նոր անվան տակ խոսվում ե նորատիպ գրքերի մասին այնպես վայրի վերո և կցկտուր, վոր կարծես ակամա յե խոսում, վոր մի բան ասած լինի իր առացած գրքերի մասին:

«Մուրճ»-ը չունի կրիտիկա և կրիտիկոս: Գրականությունն առանց կրիտիկայի միևնույն ե թե ուսումնարանն առանց վերահսկող տեսչի, ինչպես վոր այսոր մեր ծխական ուսումնարաններն են: Ուրեմն, հապա այն յերիտասարդները, վորոնց համար առաջաբանի աւելով, մեր գրական աշխարհը շատ նեղ եր, չեր կարողանում նրանում տեղավորվել, հարկավոր եր «մուրճ», վորով ներանք կարողանային կռել կոփել զդուռն Յերվանդա արքային... Ինչ կուզեք ասացեք, այս թերությունը մեծ և շատ մեծ թերություն ե: Առողջամիտ, անաչառ, աղնիվ և հանրագետ մի կրիտիկոս ե հարկավոր «Մուրճ»-ին: Այսպիսի կրիտիկոսը կազդե և նույնիսկ «Մուրճ»-ի վրա ավելի, քան պ. Բարխուդարյանի վորևե յերգիծաբանություն: Կրիտիկայի չլինելը տգիտության և հիվանդության նշան ե. այդ հիվանդությունը կարող ե բուժել միայն իր գործին հմուտ, անկախ և ինքնուրույն քննադատող կրիտիկոսը: Հարկավոր ե այսուհետև անպատճառ մեր պրականությունը անխնա, թեև չատերը վայ վույ բարձրացնեն: Հարկավոր ե մեր պրականությունը սրբել, մաքրել ֆիլոքսերայից, չանտաժիստներից, ցեցերից, դրագողներից և բանաղողներից, պրական չարչիներից, սրբատաճառներից: Հարկավոր ե սրբել, մաքրել, Ավգիասի գոմերը: Յեթե «Մուրճ»-ը կոչված չե սրա համար, թող ուրեմն հայտարարե, վոր այս ինչ տեղ մի նոր գոմ ե բացվել, ուր ամեն մարդ կարող ե իր եշն ու ձին կապել: Վո՛չ, «Մուրճ»-ից մենք այս հույսը չունինք, այլ շատ բան ենք սպասում և իրավունքով: Ամենայն ծառ, վոր վոչ առնե զպտուղ բարի, հատանե և ի հուր արկանի: Ահավասիկ տապար առ արմին ծառուն կա: Ինչպես վոր ե պ. Յաղուբյանը քաղաքական տեսության համար, մի այդպիսի անձն, չենք ասում ավելի, հարկավոր և կրիտիկական բաժնի համար, վոր նույնչափ կարևոր ե, վորքան և քաղաքական բաժինը, յեթե չասենք՝ ավելին: Պետք չե խաթրապահ լինել, այլ ճշմարտասահ: Խաթրապահությունը կհասցնե խնամության, վորից արդեն զզվել ենք ցվերջին աստիճան:

«Ներքին տեսություն»: Այս բաժինը դատարկ ե, մինչդեռ ամեն բաժնից ճոխագույնը պետք ե լիներ: Այս ել մի նոր ապացույց, վոր «Մուրճ»-ը դժգոհ, անբավական և հարուստ մտքի տեր աշխատակիցներ չունի: Այս բանի մեջ մի քանի անհնչան լուրեր կան, վորոնք վերաբերում են իրան «Մուրճի» ներքինին, թե նրա խմբագիրն ինչ ու ինչ կարգադրություն ե արել, թե ինչպիսի առակներով և ուղում կերակրել իր սոխակներին, վերջապես ինչպիսի ուղղագրության և հետևում:

Քիչ առաջ մենք ասացինք գրագողության մասին: «Մուրճի» առաջին յերեսները հին ուղղագրությամբ սրբագրված և տպագրելու պատրաստ եյին, վոր դուրս յեկավ մեր առաջարկած ուղղագրության հրահանգը՝ «Աղբյուրի» աշխատակիցների համար: Գարոնը կարդալուն պես առանց յերկար մտածելու՝ իսկույն կարգադրում ե, վոր Ո-երը հանեն: Շատ լավ, չնորհակալ ենք, վոր այդպես չուտ ըմբռնել եք կանոնադրությունը, բայց ի՞նչ աստուծո, ինչո՞ւ մեկ բերան չխոստովանել, թե ո՞ւմ արտն ե հնձել: Թվացել ե, վոր իմ արածը մի մեծ բան չե, դրանից ել հեչտ բան ինչ կա վոր, ուրեմն կարժե՞ մի թեթե վոր ասենք, մենք ընդունեցինք պ. Աղայանցի մշակած ուղղագրությունը: Յեթե հեչտ ե, ապա ինչո՞ւ չեն ընդունում չատերը, նույնիսկ Գուշչյանցը: Յեթե ընդունելն անգամ դժվար ե, վորքան ղըժ-

վար է ուրեմն առաջին գիտակցական քայլ անելը, ինքն իրան տար համոզելը, յերկմտելը, քննադատելը, ուրիշին համոզելը: Ձե՞ վոր դա տարրների և վոչ բոլեյի արդյունք է:

Բայց տեսեք մեր բարեպաշտ խմբապետն ինչ է ասում: Ա-սում է՝ Ո-ն կպահենք այն բառերում, վորոնց մեջ այդ տառը արմատի մեջն է, ինչպես՝ անուն, անուան և վոչ անւան, լեզու լեզուի, լեզուում և վոչ լեզուի, լեզուում լեզուաբանական: Սրա դեմ կասենք՝ ըմբոստ աշակերտին կարելի յե մի թունդ ապտակով կողմ նկարդի բերել, դժվարը՝ բթամատին բան հասկացնելն է: Ձկա աշխարհիս յերեսին վոչ մի քերական, վոր չլինի ընդունելիս լեզվի հոլովական վոխոխումները, սղումները—կորուստները: Ամեն լեզվում ուղղականը ուղղականի պես է գրվում, սեռականը՝ սեռականի. այսպես և մյուս հոլովները: Այսպես ասում և գրում ենք հայր, հօր, և վոչ հայրի, տուն, տան և վոչ տունի. նա, նրա և վոչ նաի. յես, իմ և վոչ յեսի, սուր, սրի և վոչ սուրի. դիրք, դրքի և վոչ դիրքի. աստուած, աստուծոյ և վոչ աստուածի: Ահա այս համաչխարհային և հանրամարդկային որենքով պետք է գրել այնպես, ինչպես վոր ասում ենք՝ լեզու լեզվի, և վոչ լեզուի, անուն, անունի կամ անվան, և վոչ անու-ան: Ինչո՞ւ համար կդրենք նվեր, զվարթ, հոգված, հատված, բայց չենք դրի աստված. արդյո՞ք բարեպաշտության համար. բայց չե՞ վոր ճշմարիտ բարեպաշտությունը պահանջում է աստուծո անունը ավելի սրբությամբ և մաքրությամբ արտասանել, քան վորևե հոգված կամ հատված, և չե՞ վոր մեր մամիճկին սինոկները, վորոնք հայերեն կարդում են իրենց ոտար լեզվով գրած տառերով, կարդում են աս-տու-ած, Ac-туац-ն և վոչ աստ-ւած: Բավակա՞ն է մինչև այստեղ, թե՞ ելի կուզեք:

«Մուրճ»-ի այս անհամ «Ներքին տեսությունից» մեր դառնացած բերանը քաղցրացրեց կարա-Մուրզայի «Ցերեկույթը» հայանի հոդվածը: Մեր դրականությունը այս տարի յերկու ամենասիրելի դրչիներով հարստացավ, մինը տաղանդավոր վրձինի տեր,— պ. Բաշինջաղյան, մյուսը տաղանդավոր յերգարան.— կարա-Մուրզան: Մեր դրականության մեջ յերրեք յերգարան կամ վեպ գրողի տեսակը չի մնում, մինչև նրան ոգնության չհասնեն դեղարվեստի ղեկավոր տարրերը— նկարչությունը և մուղիկան: Մեր ժողովուրդը նոր ճաչակի պահանջություն ունի, դեղեցկի և վսեմի ըմբռնելու տակարություն ունի: Այս յավին գործան անել կարող են միայն մուղիկան և նկարչությունը: Վայրենի և կոպիտ ճաչակ ունեցողի ականջը, վոր սովոր է միակերպ գոռոցի ու ծվծվոցի, միայն մի անկարգ աղմուկ և լսում ամենաքանչելի համերգությունի մեջ, նրան նչմարելի չե այն յերկնային ներդաշնակությունը, վորից խենթության չափ հափշտակվում է նրա լեզուն հասկացողը: Մի ժողովուրդ, վորի զգացումները դեռ այսչափ կոպիտ, անկիրթ և վայրենի յեն, անկարելի յե, վոր նրա մյուս զգացումները ևս նույն վոգորմելի վիճակի մեջ չլինի, թեև մեղ նչմարելի չլինի: Վոչ միայն ամեն վոք կարող չե Մոցարտ դառնալ, այլև ամեն ազգից և հասարակությունից կարող և Մոցարտ ծնվիլ: Մի չարք տաղանդավոր մանուկ մուղիկայի սիրահար Մոցարտ լինելու բոլոր ձիրքերով ոժտված, յեթե ծնվել և սնվել են գուռնայի ազգեցության տակ, նա կդառնա տաղանդավոր և մինչև անգամ հանճարավոր գուռնաչի...

Մեկ անգամ, հեռու աշխարհում ևս վոչ մեր, մի ընտանիքի մեջ մայրը ածում եր դաշնամուրի վրա և նրա 4 տարեկան մանուկը մոտը կանգնած նայում եր: Մայրը վեր կացավ և ուրիշ գործ սկսեց, իսկ մանուկը նստեց և սկսեց կրկնել մոր նվագածը: Կյանքիս մեջ առաջին անգամն եյի տեսնում աչքովը այսպիսի բան: Սիրտս լցվեց, չկարողացա ինձ զսպել և յես լաց յեղա... Ցերեկույթյունս թռավ յեկավ մեր կոպիտ աշխարհը: Մի՞թե մեր մանուկներն ել սրա չափ չնորհալի չեյին. լինիլ, ասում եյի մտքումս, յեթե մեր ընտանիքներն ել այսպիսի ընտանիքներ լինեյին, յեթե մեր տներումն ել գործածական լիներ այս հրաշալի յերգեհոնը, յեթե նա գործածական լիներ նույնիսկ մեր յեկեղեցու մեջ, և զարմանալի չե հիրավի, վոր մեր յեկեղեցում թույլ և տրվում քահանա բղավոց ու զըռռոց, բայց թույլ չի տրվում յերկնային ներդաշնակություն ունեցող յերգեհոնի նվագելը: Վո՛չ, մենք դեռ ավելի չենք ճաչակի զարդացման կողմից, քան ոխտը հաց ուտող մականվանված գուռնաչի Աստուրը: Մտեք մեր յեկեղեցիքը, մանավանդ գյուղերում և տեսեք, թե ինչ հրեշներ կան քաչած նրանց խաչկալների վրա իբրև նկար: Ինչ բանի հետևանք է սա, յեթե վոչ գուռնաչության: Զարմանալի ժողովուրդ ենք ճշմարիտ և ուզում ենք կրթվել և չենք ուզում. վոչինչ նյութական չանք չենք խնայում մեր կրթության, լուսավորության համար, բայց և վոչինչ չանք չենք խնայում և ամեն հնար գործ ենք դնում, վոր

մեր արած բոլոր ջանքը զուր անցնի, մեր արած բոլոր ծախքը ջուրը թափվի: Առում են մեր ունեցածը պետք և պահենք: Անմիտները, ո՞վ չի ուզում, վոր պահենք, ո՞վ և առում, թե հարկավոր չե պահել, ո՞վ և առում, վոր հարկավոր և դեն ձգել, յե՞րբ և ո՞ւմից լսեցիք այդպիսի բան: Բայց ինչպե՞ս պահել, արդյոք թաղել գետնի մե՞ջ, մումիա՞ չինել, թե՞ չահեցնել, աճեցնել, կաստրելագործել, բարվոքել, բարեկարգել: Ուրեմն ել առաջ չգնա՞նք, մնանք անշա՞րժ, կանգնա՞ծ, քարացա՞ծ, վայտացա՞ծ: Ինչի՞ մեջ և կայանում ուրեմն ձեր քարոզած հառաջադիմությունը, չի՞ լինիլ արդյոք վոր մեկ անգամ հականն անվանեն հվչեք, թե ձեր քարոզածն ի՞նչ և, ի՞նչն եք ուզում պահել, արդյոք դողությո՞ւնը, կաշառակերությո՞ւնը, հափըշտակությո՞ւնը, անհաչվեռվությո՞ւնը, կոպտությո՞ւնը, անկարգությո՞ւնը, անբարոյականությո՞ւնը: Ասացեք մեկ անգամ, տեսնենք, վո՞րն և ձեր քարոզած բարեկրթությունը, բարեկարգությունը:

Ղ. ԱՂԱՑԱՆՑ

1889

«Աղբյուր» 1889 թ. № 2

ԿՆՈՋ ԿՈՉՈՒՄԸ

Ա

Կնոջ կոչումն է լինել մայր: Կինը մայրական սիրտ պիտի ունենա վոչ միայն դեպի իր զավակները, այլև դեպի ամեն մարդ: Ամեն գործում, ամեն քայլափոխում պիտի յերևա, վոր նա մի դթասիրտ, մի բարի և առաքինի մայր է: Ինչ վոր վատ է, կոշտ է, ուշեղ է, անիրավ է, անգութ է, բնավ յերբեք հարմար չե և վոչ վայելուչ կին սեռին: Կանայք ի բնե այսպես են, և ինչպես վոր մի առանձին հակումն ունին դեպի սրսուաքին զարդարանքները, նույն հակումն ունին և դեպի այն ամենը, ինչ վոր գովելի յե, սիրելի յե, հարգելի յե, այսինքն դեպի հոգեկան զարդարանքները: Ի հարկե, այս ամենը լինում է ժամանակի հասկացողության համեմատ, բայց ինչ ժամանակ ել վոր լինի, կինը միշտ բարվո և դեղեցկի կողմն է հակվում ավելի շուտ, քան թե տղամարդը, վոր յեթե մի բարի բան և անում, այդ ել լինում է դարձյալ կնոջ չնորհիվ: Այս ամենը հայտնի յեն ամենքին, բայց մի բան կա, վոր մենք իբրև նոր

քան պիտի հաղորդենք մեր աչխարհի փափկասուն տիկիններին:

Կինը ինչպես վոր սիրում է իր զավակին, նույն մայրական սերը պետք է տարածե և իր ամուսնու վրա: Այս եւ բնականապես այսպես է լինում, բայց վոչ դիտակցաբար: Շատ քիչ այր և կին ամուսիններ կզտնվին, վոր իմանան, թե այր ամուսինը նույնպես մի մանուկ է կնոջ սիրուն և գթությանը կարոտ: Շատ հազիվ կպատահի, և գուցե յերբեք ել չպատահի, վոր այր ամուսինը չսիրե իր կնոջը, յեթե վերջինս մտերիմ լինի իր մայրական սիրտ մեջ դեպի ամուսինը: Մենք տեսնում ենք շատ անգամ, վոր նորահարս ամուսինը ինքն է ձևանում յերեխա և ցանկանում է, վոր նորափեսան նրան փայփայած պահե: Այս մեծ սխալ է և աններելի: Այդ մարդը յերբեք մայրություն անել կարող չե, այդ հատկությունը կնոջն է հատկացրել բնությունը: Զավակի բարոյական կրթության պատասխանատուն մայրն է. յեթե բարոյակիրթ է զավակը, փառք և պարծանք նրա մորը, իսկ յեթե չարակիրթ է,— սուգ և տրտմություն մորը: Այսպես ել ճիշտ— եթե մեկ մարդ ամուսնանալուց հետո աղնվանում է, փառք և պարծանք նրա կնոջը, իսկ եթե անազնվանում է, անբարոյականանում—ամոթ և նախատինք նրա կնոջը: Թող ամեն կին փորձե մայրական սեր և հոգս տածել դեպի իր ամուսինը և կտեսնե իր արարքի հրաչալի ներգործությունը: Բայց ավելի լավ է, վոր այս բանը նախ քան ամուսնանալը գիտենա, գիտենա, թե վորպիսի վոք է իր բարոյական կրթության առարկան, կամ զգում է արդյոք իր մեջ բացի կնոջ կենդանական սիրուց, այլև մայրական սուրբ սեր: Վոր կնոջ մեջ վոր չկա այս սերը, թշվառ կլինի ինքը, թշվառ կլինի և նրա ամուսինը, թշվառ կլինի և ամբողջ գերդաստանը: Կինը պետք է լինի մայր, ինչպես իր զավակի համար, նույնպես և իր ամուսնու:

Կնիկ կամ կին կյանք ասել է: Գոնե հայոց լեզվում այսպես է: Աղամը Եվային տեսնելով ասում է Մայր Մաշտոցի լեզվով՝ «Սա եղիցի ինձ ի կեանս», վոր կնշանակե սա ինձ համար կլինի կյանք: Եթե այս այսպես է միայն հայոց լեզվի մեջ, ուրեմն փառք և պատիվ մեր պապերին, վոր կնոջը կՅԱՆՔ են համարել, վոր և հարմար է գալիս կնոջ բնական կոչմանը:

Հարազատ մոր հատկությունը միայն այն սիրալիր վայելչությունը չե, վոր տարածում է ամբողջ գերդաստանի վրա, այլև նրա տանտիկնությունը, ժրությունը, տնտեսությունը,

չափավորությունը, խնայողությունը, և վոր մեծն է ամենից, աշխատասիրությունը: Ինչ ծնող վոր պարապություն և ավելի սիրում, քան աշխատելը, այնպիսին թող չհուսա, վոր կամ լավ զավակ կունենա կամ լավ ամուսին: Դատարկաչքիկ և խաղամոլ կինը մի ցեց է թե իր տան և թե հասարակության համար: Թող ունենա միլիոն կարողություն, եթե նա պարապություն և սիրում, փախչում է ձեռքի ու մտքի աշխատանքից և դատարկաբանության ու պճնասիրության մատնում իրան, այնպիսին յերբեք յերջանկություն ճաշակել չի կարող: Մարդկային սևոի յերջանկությունը նրա յերեսի քրտինքի մեջն է: Ցերեսի քրտինքով կերած նույնիսկ ցամաք հացը յերկնային մանանայի համ ունի: Շատ վող ունեցիր, ոլ և ձեռքիդ խլում, բայց դրանով յերջանկություն չես կարող դնել, հնարք և ճիրք չես կարող դնել, դիտություն և արվեստ չես կարող դնել,— դրանք այնպիսի բաներ են, վոր ինքդ անձամբ, քո յերեսիդ քրտինքովը միայն կարող ես ձեռք բերել:

Վերջապես սիրո աղբյուրը կնոջ մեջն է և վոչ տղամարդի: Տղամարդը կարող է ծարավիլ, փափաքիլ այդ աղբյուրին և գտնալ, ինչպես մի մանուկ, վոր կարոտում է իր մայրական կաթին, բայց տղամարդն ինքը ինչպես վոր կաթ տալու ծծեր չունի, նույնպես չունի և սիրո աղբյուր: Ուրեմն տան մեջ թագավորող սերը բղխում է մորից, այլ վոչ հորից, հայրը նույն սիրո մեջ լողացողներից մեկն է: Սրանցից կարող եք դուշակել, թե վորքան մեծ է կնոջ կոչումը, բայց և վորքան դյուրին է, վորովհետև ինչ վոր բնական է, նա և դյուրին է: Սիրալիր մայր լինելը կնոջ բնական կոչումն է: Սիրալիր մայր չեղողը սիրալիր ամուսին լինել չի կարող:

1890

«Տարազ» 1890 թ. № 2

ՀԱԳՈՒՍՏԻ ԲԱՐՈՅԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ա.

Վայրենությունից դուրս գալու առաջին նշանը զգեստավորվելն է, վորովհետև մարդը վայրենի վիճակի մեջ մերկ է: Մտքի չնորհազարդվելու հետ ի միասին առաջ է գնում և արտաքին չնորհազարդությունը և այնուհետև ներքին և արտաքին զեղեցկությունները փոխադարձաբար ազդում են միմյանց վրա: Մի քնքուշ և զեղեցիկ իրի հետ, լինի այն կահ ու կարասիք, զարդ, պործիք, շատ զգուշ ենք վարվում: Նոր և զեղեցիկ հագուստի մեջ ևս ամեն վարմունք մեզ թույլ չենք տալիս, այլ ինքներս էլ նրա հետ քնքշանում և մեղմանում ենք: Մանուկը մի նոր հագուստի մեջ առաջին որը մի տեսակ ուրախության ամոթխածություն է զգում: Նա, ինչպես ասում են մեզանում, մի թիզ բարձրանում է: Ցավ ճշմարիտ վոր բարձրանում է, վոչ միայն փիլիսկապես, այլև բարոյապես: Վատ հագնվածը լավ հագնվածի մոտ իրան ճնշված է զգում: Փորձեցեք քաղաքիս փողոցներում աղբ գեն ածող մշեցու աղբանման հագուստը փոխել և նորն ու լավը հագցնել, նա իսկույն կխառնվի լավ հագնվածների մեջ և կչքվի նրանց հետ վոչ ըստ յուր սովորության կորագլուխ:

Կոչտ և կեղտոտ հագուստը ամեն անգամ աղքատության նշան չէ, ինչպես վոր մաքուր և զեղեցիկ հագուստը միշտ հարստության նշան չէ, այլ թե մեկը և թե մյուսը սովորություն է միայն: Հոգով և մտքով ընկճվածները փիլիսկապես էլ ընկճված են լինում, և ընդ հակադարձն:

Աղգերի պատմական կյանքում հագուստը միշտ նշանավոր դեր է կատարել և՝ այս րոպեիս էլ կատարում է: Շատ յերկար կլինի, յեթե սկսենք մի պատմական տեսություն գրել հագուստի մասին, բայց ժամանակ առ ժամանակ մենք կդառնանք այդ խնդրին: Առայժմ մեր նպատակն է ցույց տալ, վոր լավ հագնելը, մաքուր հագնելը մեր բարոյական զարգացման անհրաժեշտ տարերքներից մեկը պետք է համարենք: Հայոց մեջ առած կա, թե ինչ աշխարհք վոր գնաս, այնտեղի զգակը ծածկիր: Ցավ այսպես էլ անում են հայերը: Ուր վոր գնում են իրանց հագուստի մեջ ամենից առաջ զգակն են փոխում: Հայոց հակառակ թուրքն ամեն ինչ փոխում է, բայց վոչ գլխարկը: Քրիստոնյան գլուխ վերցնելը խոնարհության և քաղաքավարության նշան է համարում, իսկ թուրքն այդպիսի դեպքերում յերկու ձեռքով գլուխն ավելի խոր է քաշում գլուխը: Բանից յերևում է, վոր ինչպես կան արգելված ուտելիք և խմելիք կրոնական տեսակետից, նույնպես կան և արգելված հագուստներ և հագուստի ընդունված անփոփոխ ձևեր: Այլ է հոգևորականի հագուստը և այլ աշխարհականինը, այլ է պինվորականինը և այլ քաղաքացունը, այլ է հոգևորականի տնայինն զգեստը և այլ

յեկեղեցականը: Մեզանում նորահարսի և նորափեսայի հագուստը որինվում է: Նորապսակները ինչ վիճակից եկ վոր լինին, պետք է նոր հագուստ հագնեն, վոտից ցգլուխ: Սրա համար է, վոր ասում են, «Մառն ամեն տարի յե ծաղկում, իսկ մարդը միայն մեկ անգամ իր կյանքում»: Ճեվ ճշմարիտ, մեր գյուղական կյանքում միայն մեկ անգամ են զարդարվում և այդ զարդարանքը յերկար ժամանակ պահում բոխչումը, վոր ամեն տոն որ հագնեն: Սրա համար հագուստի կողմից ասում են. «Ինու ինձ պահիր բոխչամիջի, յես քեզ պահեմ մարդամիջի»: Ուրեմն մարդկանց մեջ ընկնելու համար հարկավոր է նոր և մաքուր հագուստ: Ճեվ ճշմարիտ, հասարակությունը հագուստին մեծ նշանակություն է տալիս, վատ հագածները ամեն լավ չընդունելուց դրկվում են, թեկուզ կրթված մարդիկ լինին: Ասած է. «Բարեկամը բարեկամի յերեսին է նայում, իսկ չարակամը կամ անծանոթը մարդու վոտ ու գլխին»: Լավ է թե վատ այդ յերևույթը, այդ ակլ խնդիր է, բայց այսպես է, և այս հանգամանքը մեծ ներգործություն ունի անհատի հայողության և անհայողության վրա կյանքի ասպարիզում: Ասած է. «Հագուստին նայած ընդունում են, իսկ խելքին նայելով ճանապարհ գնում»: Բայց մի՞չտ է այսպես լինում արդյոք: Ընդհակառակն, ընդունելն ու չընդունելը նախ և առաջ հագուստից է կախված, և իզուր չի ասել մեր տաղանդավոր Գամառ-Քաթիպան.

Թե աղի մոտ լավ չորերով
Կուգաս, տանը/ կու դժնիս,
Վայ թե չուխեդ հնացած է,
Լավն է տուն չըմտնիս.
Թե սալոպով աղջիկ-պարուն
Կուգա՝ թող ներս հյսամայի,
Թե ղաթիրով պառավ ճալոն
Հարցնե, կոխն տանը չե:

1890

«Տարազ» 1890 թ. № 3

ՀԱՅՈՑ ԱՑԹՄՑԱՆ ԲԱՆԱՎՈՐ ՑԵՐԳԵՐԸ

Հոդված առաջին

Հայոց այժմյան բանավոր յերգերի տեսությունն անելուց առաջ կուզենք դեռևս մի ճաշակ տալ այդ յերգերի ամեն տեսակից:

Այդ յերգերից ամենից դլխավորը և ընդհանրացածը բայաթին է: Կան յերգեր, վոր միայն աչուղները դիտեն, կան վոր դիտեն և ասում են նաև աշըղ չեղողները, բայց բայաթին ամենքը դիտեն և սեծերը, և փոքրերը, և կանայք, և տղամարդիկ: Բայաթով են հայտնում իրանց վիշտը— դառը վիճակը, կսկիծը, հոգսը. բայաթով են հայտնում իրանց սերը, փափագը, կարոտը. բայաթով են հայտնում իրանց բողոքը, տրտունջը, անբավականությունը. բայաթով սգում են իրանց մեռելի վրա, և վերջապես բայաթով արտահայտում են ամեն տեսակ միտք և ղգացմունք:

Բայաթու վոտանավորը միչտ չորս վոտն է ունենում: Գլխավոր միտքն ու ասելիքը վերջին յերկու վոտքումն է լինում պարունակվածֆ, իսկ առաջին յերկու վոտքի միտք չի լինում, դրանք ծառայում են չորրորդ վոտքին իրրև ոժանդակ հանգի համար և ընկնում են ձայնարկությունների կարգը: Առաջին, յերկրորդ և չորրորդ տողերը միևնույն բառումն են վերջանում: Այդ բառը առաջին տողում անորոշ է լինում, իսկ յերկրորդ և չորրորդ տողերում ջոկ-ջոկ նշանակություն է ստանում: Այս է պատճառը, վոր բայաթին սովորաբար թուրքերեն են ասում, վորովհետև թուրքերենում շատ են այն բառերը, վորոնք յերկու և ավելի նշանակություն ունին, իսկ հայերենում այնքան չկան: Բայց շատ անգամ եկ այս կանոնին չեն հետևում և բայաթին հորինում են վիճակի յերգի ձևով: Որինակի համար բերենք մի քանի բայաթի, վոր մենք թարգմանել ենք, վորը վոխադրել և վորը նմանությամբ և հետևողությամբ դրել:

1. Իմ սիրելին ջուր ածեց,
Ամանումը ջուր ածեց.
Սրտիս յեղ քսելու տեղ
Գլխիս սառը ջուր ածեց:

2· Կանչում եմ, ա՛խ, վեր կալավ,
Վեր չըդրավ, վեր կալավ·
Ցես թզենի բուսցըվ,
Բայց նա տատասկ վեր կալավ:

3· Ա՛խ, թաղն ընկավ իմ ձեռը,
Տան թաղն ընկավ իմ ձեռը·
Շամամն ուզեցի բռնել,
Բայց թաղն ընկավ իմ ձեռը:

Այս բայաթու մեջ շամամն աղջիկն է, իսկ թաղը, վոր է արմատը, աղջկա մայրն է. մութն է յեղել, չի վորոշել, և շամամի տեղ թաղն է ընկել ձեռը:

4· Ցես կանչում եմ այն այլին
Այն առավոտն այն այլին·
Ուր վոչ վարդ կա, վոչ բյուլբյուլ,
Թող չոլ դառնա այն այլին:

Այս բայաթին ասել է մի պատրոն իր հալսի (տղայի կնոջ) վերաբերությամբ, վոր անզավակ է յեղել, նրան նմանեցնելով այնպիսի մի այգու, ուր վոչ վարդն է փթթում և վոչ սոխակը յերգում: Հարսը նրան պատասխանում է հետևյալ բայաթով, վորով անզավակության մեղն իրանից հեռացնում է.

5· կանչում եմ՝ ձոր են ուղում,
Դաշտ թողած ձոր են ուղում·
Ջուր չի-ընկած ծառիցը
Տանձ ու խնձոր են ուղում:

6· Պապլիկն եմ յես այս քարից,
Այս պատակից՝ այս քարից·
Վոչ հայր ունիմ և վոչ մայր,
Ծնունդ առա այս քարից:

Այս բայաթին մի հայ սուրբի համար է ասված, վորի թուրքերենն է.

Լալայամ ման բու դաշտան,
Բու դայադան՝ բու դաշտան·
Նա աթամ վար, նա անամ,
Հյուղյուր որղըմ բու դաշտան:

7· Մի թռչուն ելավ ծովից,
Չարցումն արավ աշխարհից·
Ցևթե մեռնելու լիմ,
Ել ինչո՞ւ ծնա մորից:

Այս բայաթին ղրված է Թիֆլիսի Խոջի վանքի գերեզմանոցանը մի գամբարանի վրա թուրքերեն բառերով այսպես.

Բիր ղուշ չիտի դարյադան,
Խնարար ալըլ դունյադան·
Ջունքի եոլաջաղիլըմ,
Նիա՞ դողըլըմ անադան:

8· Աչըղ եմ, յարըդ, ներսից,
Այրվեց ջիգյարս ներսից·
Աչքս դառնը մնաց,
Դուրս չեկավ յարս ներսից:

9· Ցես աչըղ եմ՝ քարն այրվի,
Անտառն այրվի, քարն այրվի·
Ուղո՞ւմ ես մի ա՛խ քաշեմ
Ջուրը ցամաքի, քարն այրվի:

Բավական է: Այս նմուշներից յերևում է որդեն, վոր բայաթու առաջին յերկու տողերը միշտ կազում են իրանց միամտությամբ. ամբողջությունն էլ մնում է անալի, բայց ասողները դանազան ձայնարկություններով բավականին համոզացնում են առանց այդ էլ իրանց համար շատ անուշ յերգը: Վերջ-

Նենք, որ ինակի համար, դրանցից մեկը և կասմենք այն միշտ-կյալ ձայնարկություններով, որոնք ասելիս գործ են ունում:

Աչըղ եմ, յարս, ներսից,

Ա՛յ յա՛ր, ա՛յ դա՛ր, ա՛յ յա՛ր...
Այրվում եմ, մեռնում եմ, քեզ մատաղ...
Աչքիս լույս, իմ անուշ, մեռնում եմ, հե՛յ...

Այրվեց Լիդյարս ներսից.

Ա՛յ յա՛ր, ա՛յ յա՛ր, ա՛յ յա՛ր...
Ա՛յ տնաքանդ, ա՛յ անգութ,—
Ա՛յ աման, այ հոգիս, մեռնում եմ, հե՛յ...

Աչքս դռանը մնաց,
Դուրս չեկավ յարս ներսից:

Ծաղիկ Ջան, չամամ Ջան, վարդիկ Ջան,
Ա՛յ յա՛ր, ա՛յ յա՛ր, ա՛յ յա՛ր,
Ջարդդ տանեմ, մեռնում եմ, հե՛յ...

Բայաթու վերջին յերկու տողը կրկնում և ասողը ավելի վոգևորված և նորանոր ձայնարկու բառեր ավելացնելով. ասում և այրվելով, ծռմռվելով, դլուխը պատելով, բայց իր յերեսի արտահայտությունը չի համապատասխանում յերդի բովանդակությանը: Լսողների ել ուրախության չափ չկա: Ցեթե սուրբի վրա յեն, ամենքը միաբերան բղավում են—

— Հա ջա՛ն, հա ջա՛ն, ձայնիդ մատաղ, քե՛փ, քե՛փ... հե՛յ... հուռռա՛:

Գլխավորն ուրեմն ասվածը չե, այլ ինչպես ասելը, մարդկանց ճաշակն ու մտադրությունը, յերդի յեղանակը, ձայնի բովանդակությունը:

Մյուս յերդերի մասին յեկող անգամ:

1890

«Տարազ» 1890 թ. № 1.

Ղ. ԱՂԱՅԱՆՑ

ՀԱՅՈՑ ԱՅԾՄՅԱՆ ԲԱՆԱՎՈՐ ՅԵՐԳԵՐԸ

Հոդված յերկրորդ

1.

Քանի վոր մեր խոսքը բանավոր յերգերի մասին է, պետք է ազգային ժողովրդական համարել այն յերգերն ու յերգախառն վեպերը, վորոնք թեև հայերեն չեն, բայց հայ աչըղների հորինածներն են կամ նրանց սովորածը և ժողովրդի մեջ տարածածը:

Մեծ սխալ ենք գործում, յերբ մի աչըղի հայերեն խաղերը հավաքում, տպում ենք, իսկ նրա թուրքերեն խաղերը զանցառությամբ տալիս: Այս միևնույն է, թե Պոլսի «Մասիսը» — հայկական լրագիր համարենք, իսկ «Մանզումեն» վոչ, միայն նրա համար, վոր Մասիսի լեզուն հայերեն է, իսկ Մանզումեինը՝ թուրքերեն: Մենք այսոր Սայաթ-Նովայի, Շերվնի և ուրիշ շատերի հայերեն ասածները հավաքել տպել ենք, իսկ նրանց վրացերեն և թուրքերեն ասածները զանցառությամբ տվել, մինչդեռ Սայաթ-Նովայի ավելի լավ խաղերը վրացերեն են ասված ու Շերվնի ել լավագույն խաղերը՝ թուրքերեն: Մենք ուներել ենք հաշակավոր Քեչիչ-Ողլի, վոր հայերեն յերգած չե, բայց մինչև այսոր ել բոլոր նշանավոր աչըղները նրա յերգերովն են սնունդ տալիս ժողովրդի ճաշակին:

Մեր աչըղները հայերեն յերգախառն վեպեր չունին, այլ միայն թուրքերեն:

Այդ վեպերից մի քանիսն այնքան յերկար են, վորոնք,— ինչպես ասում են— յոթն որ յոթն գիշեր ասելով չեն վերջանում: Թե այդ անդրագետ աչըղները վորքան նյութ են ամբարում իրանց հիշողության մեջ, դրի ոգնությամբ ապրող մարդկիկը չեն կարող իրանց ներկայացնել: Աչըղ լինել և այն դաղա աչըղ, քանքարավոր տվողի չնորհքի տեր, ինչանակե կարգե դուրս հարուստ հիշողություն ունենալ: Հիշողություն եմ ասում, վոր ամիսներով ու տարիներով դուրս տա մտքի մեջ ամբարածը և հատնելու հնար չլինի: Լավ աչըղը պետք է դիտենա իր ժամանակի բոլոր աչըղական վեպերը, բոլոր անցած-գնացած նշանավոր աչըղների նշանավոր խաղերը, պետք է ամբողջ Աստվածաշունչը բերան դիտենա: Իրավի, յեթե մի կույր աչըղ դիտե

ամբողջապես «Ֆյարամ ու Ալվին», «Ալբաստն ու Գյուլիսարը», «Խուրշուդն ու Մեհրին», «Շահմար Ալվին», «Շահ-Իսմայիլը» ու «Ալբար Ղըլին», «Բուրդ-ողլին», «Աչըղ Ղարիբը», «Քյոր-ողլին», «Դուդի Ղուչի» առակները և այլ բազմաթիվ ընդարձակ վեպեր, որոնց անուններն այս չեմ հիշում, բայց լսել եմ ականջովս, և լսել եմ միևնույն աչըղից, որանից կարելի չե յեզրակացնել թե վորքան զարգացած և ղրանց հիշողությունը:

2.

Ինչ վոր ներելի չե և բնական զարգացած մարդուն, նույնը բնական պետք է համարել և ոամիկին: Զարգացած մարդը սիրում է ոպերա, թեև կատարվելը իր չհասկացած լեզվով: Ոամիկն էլ սիրում է իր աչըղի մարտքյան, թեև լինեը իր չհասկացած լեզվով: Մարտքյան սարքող աչըղի վոկևորությունն ավելի բնական է, քան դերասանի: Մեր ժողովուրդը այս և այն ոտար յերկիրը պաղթելով նույն յերկրի դռակին է դրել իր ղլխին, ապրել է նույն յերկրի քաղաքական և մտավոր կյանքովը: Վրաստան պաղթողը վրացերեն է յերգել, Պարսկաստան՝ պարսկերեն, Տաճկաստան՝ տաճկերեն, Լեհաստան՝ լեհերեն: Թուրքերեն խոզ ասելու պատճառը կրոնական չե, այլ քաղաքական: Կրոնի կնիքը յերկուսի վրա էլ դրոշմված է, ինչպես հայերենի, նույնպես և թուրքերենի վրա, և դեռ կարելի չե ասել թուրքերենի վրա ավելի, քան թե հայերենի: Նշանավոր աչըղները սրբակրոն և ճգնավորյաց մարդիկ են յեղել, քաջահմուտ ս. գրքին և հայոց դավանությանը: Նրանց ասած խոր ու խրթին խաղերը թեև թուրքերեն, բայց բարձր աստվածաբանական բովանդակություն ունին: Դրանցում կան այնպիսիք, վոր կարելի չե հավասարել մեծ աստվածաբանների գրածներին և մեր ամենալավ չարականների բովանդակության հետ: Այսպիսի մի հիանալի բանաստեղծություն և աչըղ Ալլահվերդու ղոչումն ու դավանությունը, վոր ասել և ալի հատիո Քեչիչ ողլու առջևը չոքած: Այս խաղի սկիզբն է «Աման Ալլահ»: Շերլինն էլ ունի բարձր կրոնական խաղեր, վորոնց մեջ նշանավոր է նրա խաչելության վրա ասածը, վորը սկսվում է այսպես—

«Եյ Ջումա, սաննան նեչա սըղլար Նումայան Եթոիլար»:

Հայ աչըղները վոչ միայն հայ ժողովրդի համար են յեղել մի ուեսակ քարոզիչ հալածանքների ժամանակ, վոչ միայն ավելի քան հոգևորականությունը վառ են պահել ժողովրդի սրտում քրիստոնեական կրոնի սերը, վոչ միայն ժողովրդի մեակ դաստիարակն են յեղել իրանց խրատական և սիրուղղ խաղերով, այլև նույնիսկ բարբարոս խանների առջև ազատ յել ու մուտք են ունեցել, իրանց խաղերով մեղմացրել են նրանց դաժանությունը, հիշեցրել նրանց աչխարհիս ունայնությունը, փառքի և իշխանության անցողական լինելը, ամբարտավանության և չարության հետևանքը: Յեվ այդ բոլորը ղեղեցիկ որինակներով, առակներով, խաղերով և վեպերով:

Ուրևմն մեր աչըղները վոչ թե չեն ուղեցել սիրտ յերգիչ հանդիսանալ հայոց լեզվով, այլ ստիպված են յեղել մեծամեծներին ղվարճացնել նրանց լեզվով: Թող այդ մեծամեծները լինեին բուն հայեր. բայց ղրանք իրանց մեծությունը ումնից կլինելին ստացած, յեթե վոչ թաթարներից կամ թուրքերից, և ինչ իրավունք կարող եյին ունենալ նրանք առանց տիրող մեծերի մասնակցության: Այստեղ էլ ահա հարկավոր ե յեղել ղվարճացնել ոտարին նրա լեզվով: Շատ հավանական է, վոր այսպես լինին յեղած մեր աչըղները նույնիսկ հին պարսից տիրապետության ժամանակ: Այդ ժամանակ էլ մեր աչըղները իրանց վեպերը կհորինեյին պարսից լեզվով: Ցեվ ով գիտե թե պարսից հին վեպերի մեծ մասը Գողթան յերգիչների հորինածները չեն: Հայոց բարբառները իրանց քերականությամբ նման են թուրքերենին և յերկուքն էլ յենթարկված են պարսկական տիրող լեզվի: Հայ ժողովրդի համար և առավել ևս նրա յերգիչների, վոչինչ դժվարություն չի յեղել թուրքերենին հմտանալ և խոսել այն լեզվով: Նույնիսկ այս րոպեիս շատ գյուղեր կան, վորոնք շատ հեռու չեն թուրքերից, բայց շատ լավ խոսում են թուրքերեն: Այդ լեզուն կարծես հայի համար ոտար չէինի: Այդպես չե ռուսերենը, վոր բավական ջարդ ու փշուր և լինում անդրադարձ ժողովրդի բերանում: Ասելս այն է, վոր թուրքերեն յերգելու մի պատճառն էլ այդ լեզվի հեշտությունն է հայի համար, քանի վոր յերկու լեզվի մեջ էլ մոտածելու ձև ու յեղանակը միևնույն է:

Պետք չե ուրևմն մոտացության տալ մեր ժողովրդի մեջ յեղած բանավոր յերգերն ու վեպերը միայն նրա համար, վոր թուրքերեն են ասված: Ցերազի պես միտս է, վոր մանկությանս ժամանակ Աչըղ-Բանդին մի յերկար նաղլ եր ասում բազմաթիվ յերգերով չարունակ յերեք գիշեր: Այդ նաղլը շատ նման

եր վրացոց «Վեպխիս Տղատոսանի» վեպին: Նրա եւ հերոսը Տարսիելի նման ծով ու ցամաք ման եր գալիս կորցրած սիրուհու հետևից և վերջը գտնում եր նրան քաջերի աշխարհում: Ցեթե այս վեպերը հավաքվելին վաղորոք, որովհետև յեվրոպական լուսավորության հոսանքը արդեն դրանց կորցնելու վրա յե, ով գիտե, ի՞նչ հին հիշատակների հետքեր պիտի գտնվին դրանց մեջ: Մի՞թե վատ կլիներ մեզ համար, յեթե այսոր ձեռքի տակ ունենայինք մեր նախնյաց հին մատենագրությունը, այն մատենագրությունը, որ հայերեն դրերից առաջ գրվում եր ոտար դրերով և ոտար լեզվով, պարսկերեն և ասորերեն: Սրա համար մենք մեղադրում ենք մեր նախնյաց անհոգությունը և թուլամտությունը, բայց ահավասիկ մենք ել նրանց պես ենք վարվում, բանի տեղ չդնելով մեր ժողովրդի մեջ յեղած այն վեպերը, որոնք հայոց լեզվով չեն ասած...

Ուրիշ անգամ կխոսենք աշըղական խաղերի արվեստի, նրանց կազմ ու ձևի մասին:

Ղ. ԱՂԱՑԱՆՑ

1893

«Տարազ» 1893 թ. № 9

ՀԱՅՐ ՂԵՎՈՆԴ ԱԼԻՇԱՆ

Հայր Ղեվոնդ Ալիշանը դարուս հայկական հանճարի ներկայացուցիչն է: Իբրև բանաստեղծ, բոլոր բանաստեղծների Նահապետն է, իբրև յեկեղեցական մի Շնորհալի յե, իբրև գիտնական, մի հանրագետ է: Նա կաթոլիկ և միայն ամիկների աշքում, իսկ գիտնականների համար նա մի բաղմահմուտ հայ գիտնական է: Միայն կրոնը չէ, որ մի ազգի բոլոր անդամներին մի ավազանում մկրտելով յեղբայրացնում և ամենքին և վորդեգրում մի հոր յերկնավորի, այլ կա մի այլ ավազան ևս, որից մկրտվածները նույնպես յեղբայրանում են: Այս յերկրորդ ավազանը գիտությունն է, որ ազգային ինքնաճանաչություն և տալիս և յեղբայրացնում ամենքիս: Մարդկանց մեջ պատվում և պաշտում ենք նրանց կատարած ոգուտակար և սուրբ գործը, այլ վոչ նրանց ներքին համոզմունքը, նրանց պաշտոնյությունը կամ կրոնը: Մեսրոպին մենք պաշտում ենք վոչ իբրև հայի կամ յեկեղեցականի, այլ նրա համար, վոր գիր տվավ մեզ: Խորենացուն պաշտում ենք, վորովհետև նա պատմություն տվավ մեզ: Անձնավորությունը մեռնում է, մնայն գործն է մընում կենդանի. թե գործը պատվական է, պատվում ենք նրա գործողին: Ցեթե հայր Ղեվոնդը կաթոլիկ չլիներ, այլ բողոքական, մենք դարձյալ կպաշտեյինք նրան իր կատարած գործի համար: Բայց վորքան մեզ հայտնի յե, թե հայ-լատինականությունը և թե հայ-բողոքականությունը թշնամի յե գիտության, գեղարվեստի, ճարտարապետության, բանաստեղծության: Ավետարանի ասելը, թե «գեղերուք կատարեալք, վորպես Հայրն ձեր յերկնավոր կատարյալ է» նրանց համար ըմբռնելի չէ: Ցերկնավոր ստեղծագործությունը, նրա տիեզերական որենքները խավար վարագուրով պատած է նրանց համար: Չունին գիտություն, չունին աղգային հառաջադիմություն: Այսպես չեն յեղել Մխիթարյան հարք սկսած Մխիթար Սբրա հորից: Ներանք այնքան են աշխատել հայ ազգի և նրա գրականության համար, վորքան չեն աշխատել Հայոց բոլոր վանքերը մի կողմն առած: Հայր Ղեվոնդը այս գործունեության ամենախոշոր ներկայացուցիչն է: Ցեվ այսոր մխիթարության պաշտելին է և նրա փառքն ու պարծանքը: Ուր եր թե սրանց պես արժանավոր մխիթարանակցին պատվել գիտենային և մեր վանքերում: Մուրբ Ղազարու վանքի մխիթարությունը առաջիկա մայիսի 13-ին պիտի տոնի Հայր Ղեվոնդի քահանայության հիսնամյակը: Մենք հույս ունինք, վոր այս մեծ տոնին կմասնակցի ամենայն մարդ, վոր ինքն իրան հայ է ճանաչում, թե աշխարհական և թե հոգևորական, թե նյութական և թե բարոյական ցույցերով: Պատվենք պատվի արժանիներին, վոր իրավունք ունենանք անպատվելու անարժաններին: Չկա իրավունք առանց պարտքի:

Ղ. Ա.

1890

«Տարազ» 1890 թ. № 4

ՄԻ ԿԻՍԱՊԱՏԱՍԽԱՆ

«ՄՈՒՐՃ» ԱՄՍԱԳՐԻՆ

Հեքիաթները վոչ միայն վնասակար չեն, այլ շատ ոգտակար, յերբ նրանք կրում են հեքիաթի առասպելական և հնության դրոշմը, յերբ նրանք խոկ և խոկ հեքիաթ են: Վնասակար են միայն այն հեքիաթները, վորոնք վոչ հեքիաթ են, վոչ վեպ, վոչ պատմություն և վոչ դիտություն, այլ ամենից մի խառնուրդ, վորոնց նպատակն է, իբր թե, հեքիաթի ձևով դիտություն ուսուցանել, բայց խանդարում և աղավաղում են թե հեքիաթը և թե դիտությունը:

Վնասակար են մանավանդ թերահաս մտքի արտադրությունները, յերբ նրանք տպագրվում են «Մուրճ»-ի մեջ և տարածվում լուրջ հոգվածների տեղ, հավատացնելով ընթերցողներին, թե Աղայանցի հեքիաթները հակամանկավարժական են և վնասակար, վորովհետև սարսափելի, չնչած և սուտ բաներ են պատմվում նրանցում, «վորոնց, անշուշտ, Աղայանցը չի հավատում»... Մի՞թե... Այդ յերևելի դյուտն ի՞նչպես կարացիք անել...

Իմ նպատակն է յեղել և է՛ հեքիաթով հեքիաթական աշխարհը մոցնել յերեխային և այդ աշխարհում կրավորական դեր չտալ նրան, այլ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ, վոր յերեխան իր ՅԵՐԵՎԱԿԱՅՈՒԹՅԱՄԲ մտնե հերոսի դերի մեջ, այն աճե, ինչ վոր հերոսն է աճում, նրա պես խոջասիրտ լինի, նրա պես անվնաս հեր, նրա պես հնարագետ, նրա պես վեհանձն և ազնիվ:

Յեթե յես չեմ կարողացել հասնել իմ նպատակին, այդտեղ վոչ իմ ձգտումն է մեղավոր և վոչ հեքիաթը, այլ դուցե իմ ընդունակության թուլությունը և նվազությունը: Իսկ յեթե իմ ընթերցող մանուկը խոկ և խոկ իմ ցանկացած արդյունքն է ստանում— ինչպես հավատացած եմ և փորձով վերահաստատ յեղած— ապա ուրեմն «Մուրճ» ամսագրի կարծիքը իմ հեքիաթների կըրթական արժեքի մասին, պետք է համարել թյուրիմացություն, յեթե ուրիշ բան չասենք:

Հեքիաթական աշխարհը իրական աշխարհի ամենաճշդիվ պատկերն է: Իրական աշխարհի դեպքերը, վիշտները, սատանիքն ու քաջքերը ավելի ևս սարսափելի յեն, վորովհետև դրանք մեծ մասամբ մնում են անընկճելի, մինչդեռ հեքիաթներինը ընկճվում և վոչնչացվում են:

Իմ հեքիաթների մեջ մեծ մասամբ աստառն և միայն ժողովրդական, իսկ նախշերը իմ սեփականն են: Այդ նախշերի մեջ մի տեսակ ճգտում ե յերևում նախնականին մոտենալու, և այդ բնազդմամբ և վոչ գիտակցաբար:

Իմ աչքում հեքիաթը բարոյական և մտավոր զարգացման համար շատ և շատ նման է մայրական կաթին: Այդ կաթի սիրահար մանուկը մի ժամանակ կտրվում է ծծից և այնուհետև դղվում է այն կաթից, վոր մի ժամանակ այնքան սիրում եր, բայց ոչ կարող է ուրանալ և չասել, վոր նրա ֆիզիկական կազմվածքը մայրական կաթի բաղկացուցիչն է: Կաթը կորչում է, բայց նրա արդյունքը չի կորչում: Հեքիաթը մեր յերևակայության, մեր տաղանդի ու հանճարի կաթին է: Այդ կաթը ինչպես սննդարար է յեղել մեզանից քառասուն դար առաջ, նույնքան սննդարար կլինի և քառասուն դար մեզանից հետո:

Մարդուս հանճարի և տաղանդի սպրիները պետք է նրա լքսած հեքիաթնեյուսը փնտրել:

Յեթե յես դիտենայի, թե վորպիսի հեքիաթների լսելով և պարպացել Շեքսպիրի, Սերվանտեսի, Գյոթեյի, Շիլլերի, Կոլումբի և սրանց նմանների յերևակայությունը, յես նույն հեքիաթները կտայի և իմ ընթերցող սիրելի մանուկներին, թեկուզ նրանց լսած հեքիաթները լինեյին ավելի ևս ահռելի և պարհուրելի:

Եվ ի՞նչ Հերքուլեսս, յեթե նրա սպանած վիշապը պետք է մի հասարակ ոճ լինի և վոչ մի հիդրա բազմագլուխ, վոր յերբ մի գլուխը կտրեն, մյուսը տեղը բռնի: Յեթե այդ վիշապը զարհուրելի յե, վորքան առավել հիանալի յե Հերքուլեսի սիրտը, նրա անվեհերությունը, նրա քաջությունը, նրա հնարագիտությունը: Եվ ի՞նչ Հերքուլեսս, յեթե նա եվ այնպես պիտի մեռներ, ինչպես հասարակ մահկանացուք, և վոչ այնպիսի տանջանքներով, վոր մարդուս յերևակայած բոլոր տանջանքներից վեր լիներ: Ուրեմն վոչ ամենայն ինչ, վոր սարսափելի յե թվում, նա և վնասակար է: Ընդհակառակն՝ չսարսափելու համար պետք է լսած լինել ամենասարսափելի որինակներ: Ցանկալի յե, վոր մեր նոր սերունդը ամուր նյարդեր ունենար և վոչ թուլ, դյուրագրգիռ, խստերիքական և ախտավոր, ինչպիսիք յերևում են մեր ժամանակում:

Մանուկները չեն վախենում, երբ իրանց ծնողաց մոտն են կամ յերեք ունին վորևե պաշտպան, թեկուզ մեկ չուն: Հեքիաթներում մանուկները դոնվում են հերոսների պաշտպանության տակ: Յերեք մեկը ճանապարհորդում և հերքուլեսի հետ, ել ինչ վիշապից կամ հրեշից կարող և վախենալ· յերեք մեկը նըստած և պեգասի վրա, ել ինչ յերկյուղ կարող և ունենալ վորևե յեռագլխյան ֆիմեեից:

Առ այժմ, իբրև առ ձեռն և չտապով պատասխանած՝ այսքանը բավական ենք համարում, խորհուրդ տալով, վոչ վոչ մի՛ այն փոքրերը կարդան իմ հեքիաթները, այլև մեծերը, վորոնք, հուսով եմ, չատ չնորհակալ կմնան ինձանից:

1890

«Աղբյուր» 1890 թ· № 4

ԳՐԱԲԱՌ ՅԵՎ ԱՇԽԱՐՀԻԿ ԼԵԶՈՒՆԵՐԻ

ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ

«Մշակի» լեզվի առիթով

Ներկայումս մեր գրական լեզուն յերկու ճյուղի յե բաժանված— արևմտյան և արևելյան: Այս յերկու լեզվի մեջ յեղած տարբերությունը մեծ չե, բայց մեծ և դրանց մշակելու մեթոդի տարբերությունը: Արևմտյան լեզուն ձգտում է դեպի գրաբառը և արվեստականը, արևելյանը՝ դեպի աշխարհիկը և բնականը: Առաջինը խճողում և իրան գրաբառի արվեստական քերականության խորթ ու մուխ ձևերով և իրրինացնում, իսկ յերկրորդը հեռևում և ժողովրդի բերանում կենդանի մնացած պարզ և բնական քերականության որենքներին: Առաջինը գրաբառն և ընդունում իբրև մայր և հեղինակ, յերկրորդը՝ կենդանի բարբառները:

Պոլսեցոց համար գրական լեզուն մի արտասովոր և մեքենայական չենք է, մի ձեռակերտ է, վորի հատկությունը կախված է չինողի, քերթողի ճարտարամտությունից, իսկ մեզ համար լեզուն մի գործարանավոր մարմին է, վոր ունի իր բնական աճելությունն ու զարգացումը տարիների ու դարերի ընթացքում: Մեզանում «Մշակ» լրագիրն է, վոր առաջ և տանում լեզվի մշակությունը բնական յեղանակով, վորքան վոր ոգնում է իրան իր ունեցած կենդանի լեզվի պաշարը: Փոքր է նրա ունեցած պաշարը, բայց նա իր ունեցած փոքր պաշարից ավելի մեծ ոգուտ է քաղում, ավելի չնորհքով և գործ դնում նրան, քան թե այն մարդիկը, վորոնք մեծ պաշար ունին:

Արվեստավոր լեզվի մշակության առաջնորդողներն են Մխիթարյան հարք, վորոնցից վարակվում են և պոլսեցիք: Դրանց գործը վորքան առաջ է դնում, այնքան անճոռնիանում է: Շատ չունակ յեւ ու առաջ են խաղում, բայց դլուխ բերել իրանց բաբելոնյան աշտարակը չեն կարողանում, վորովհետև ընդհեմ են գնում բնության կարգին, վորին մխայն և վերապահված կյանքի ստեղծագործությունը: Այդ դալրոցի սխալը ուրիշ կերպ կարելի չե զգալի անել, այլ միայն ցույց տալով մեր նախնյաց չենած յեգիպտական բուրգի նշանակությունը, թե նա մի ուռն չեր մարդկանց բնակության համար, այլ մի հաստատուն դամբարան, վորի մեջ պիտի պահպանվեր ս· դրքի թարգմանության: Ահա այս խնդրին և նվիրված այս հոդվածը:

Ա·

Նոր ճշմարտություն հայտնողի վկան իր առողջ դատողությունն է:

Հովվի հետ իր պարապմունքի մասին խոսելիս, նրան հասկանալի կլինի քո բոլոր ասածդ, բայց յերթե ուզես ֆիլիսոփայություն անել, բարձր բաների վրա խոսել, նա բերանը բաց մոխիկ կտա քեզ, առանց մի բան հասկանալու: Զկա աշխարհիս յերեսին վոչ մի գրականություն, վոր ամբողջապես մատչելի լինի ամեն կոչումի և հասակի մարդկանց հավասարապես, վորովհետև ամեն մի նյութ, ամեն մի ուսմունք, ամեն մի արվեստ և պարապմունք իրան միայն հատուկ բառերն ու դարձվածներն ունի: Սրանով է, վոր գրականության լեզուն տարբերվում է վորևե կենդանի բարբառից: Բարբառը մի մասնավոր, մի գավառի միայն սեփական լեզու յե, իսկ գրականը ընդհանուր ազգի: Այսոր մեր գրական լեզուն մի վորևե բարբառ չե· գրաբառն էս կարող չեր լինել վորևե բարբառ: Բայց այս յերկու գրավոր լեզուները— գրաբառն ու աշխարհիկը— այն տար-

քերությունն ունին միմյանցից, վոր նոր լեզվի քերականությունը, (թեև դեռևս չմշակված, դեռևս չկանոնավորված), կենդանի բարբառների քերականությունն ունի, նրանց վոճին ու դարձվածներին է հետևում, նրանցով է կենդանություն տալիս իր կազմվածքին, մինչդեռ դրաբառի քերականությունը լաբառներից ոտար ե և արվեստավոր:

Գրաբառ և աշխարհիկ լեզուների պաշտպաններն ու հակառակորդները մինչև այսոր իրանց անվերջ վեճով վոչ մեկ անդամ նեղություն չկրեցին ցույց տալու, թե իսկապես ի՞նչ տարբերություն կա այդ յերկու լեզուների մեջ և վո՞րն է այդ յերկուսից ավելի ուղիղն ու հնագույնը:

Գրաբառը մեռած անվանել կարելի չե, վորովհետև այդ լեզվում վոչ մեկ բուն հայերեն բառ չկա, վոր այս րոպեիս էլ կենդանի չլինի այս ու այն գավառաբեղուներում. կենդանի անվանել նույնպես կարելի չե, վորովհետև ամբողջ Հայաստանում այսոր վոչ մի բարբառ չկա և չի էլ յեղած յերբեք, վոր գրաբառի քերականությունն ունենար:

Ուրեմն ի՞նչ է դա, յեթե՝ վոչ մեռած և և վոչ կենդանի:

Գրաբառի բառերը հայերեն լինելով այդ բառերի ձևավոխությունը— հոլովմունքը, խոնարհմունքը, համաձայնությունը,— մեկ խոսքով քերականությունը հայկական չե, այլ ոտար և արվեստավոր, ուրեմն և՝ բարբառների համեմատությամբ՝ նորամուտ մի լեզու յե: Քերականության արվեստավոր լինելը մի անհրաժեշտ պայման եր համարվում սուրբ գիրքը ճիշտ և անախալ թարգմանելու համար: Այսպես եյին վարվում այն ժամանակ ձեռնարկած գործին հմուտ թարգմանիչները: Սուրբ գիրքը ոտար լեզվից թարգմանելով սրբազան պարտականություն եր համարվում բնագրի քերականության և նրա համաձայնության որենքները պահպանել, ինչպես և պահպանեցին ՅԵ մեր լեզվով թարգմանելիս և ՅԵ վրաց, վորոնց խուցուրի ասվածը նույնպես արվեստավոր և, ինչպես և մեր գրաբառը:

Այս հանգամանքը վոչ միայն խորթ չգիտե համարենք, այլ առավել պիտի զարմանանք, վոր այդքանն էլ արել են, այսինքն համաձարկել են թարգմանել սուրբ գիրքը, ՅԵԿՈՒՂ բնագրի քերականությունով, վոր հետո դառել և սրբազան լեզու: Ս. գրքի թարգմանությանը վոչ միայն ընդդեմ պետք և լինելին ՅԵ ասորիք և ՅԵ հույնք, այլ նույնպես հայերն էլ պիտի ոխով համարեյին, յեթե ավելի կրոնական լինեյին, քան ՅԵ եյին,

ինչպես մեզք եր համարում լատինական յեկեղեցին ս. գիրքը թարգմանել յեվրոպական լեզուներով, ինչպես ներկայումս Ս՝ԸխԹարյանք և ԵՂմիածնեցիք մեզք են համարում դրաբառից աշխարհաբառի վերածել ս. գիրքը: Եթե բանն այսպես չլիներ, եվ ինչ մեծություն և բարձրություն կունենային Սահակն ու Մեսրոպը, եվ ինչ մեծություն կունենար նրանց գործը: Դրանք այնպիսի մի գործ են կատարել, վոր ամբողջ Ասիան անհուն դարերի ընթացքում կատարած չե: Այսպիսի մի մեծ գործ կատարելու համար կարելի յեր և հանճարավոր չլինել, այլ միայն ուսյալ, պարզ և աղատ ամեն տեսակ կրոնական մոլեռանդությունից, և հենց այսպես էլ եյին: Բայց մենք այդ հատկությունների հետ այդ մեծ մարդկանց մեջ միացած ենք տեսնում և խորին հեռատեսություն և բարձրագույն հանճար: Այս յերևում է նրանց տված պատիժ, նրանց աշակերտներից, վորոնցից դլխավորը, Խորենացին, իր մեծ վարժապետի համար ասում է. «Վոչ վորպես արվեստ ուսուցաներ, այլ իբրև դհոպի առաքելաբար աշակերտացն տայր»: Այսպես կարող է լինել միայն բնածին, պարզ և հանճարի տեր մարդը:

(Այստեղ փակագծի մեջ պարտ ենք համարում կտակել մեր ժամանակակիցներին և հետնորդներին, թե մեծ մարդկանց պետք է պատվենք, պաշտենք, բայց չստրկանանք, այլ ձգտենք նրանց բարձրությանը հասնելու, աշխատենք նույնը անել մեր ժամանակի վերաբերությամբ, ինչ վոր նրանք արել են իրանց ժամանակ և կանեյին մեր ժամանակ էս, յեթե մեր տեղը լինեյին: «Տիրացու» կարելի յե անվանել բոլոր այն գործողներին, վորոնք փոխասաց մոնքի պես շարունակ կրկնում են իրենց պապերի ավանդածը, և իրանք մի նոր բան չեն ստեղծում և չեն ավանդում իրանց հետնորդներին վոչ մի ոգտակար բան):

Հեշտ ձեռնարկություն չե ս. գրքի թարգմանությունը և վոչ հասարակ մահկանացուների գործ: Թարգմանել ոտար լեզվից կարելի յեր մեկ այնպես, ինչպես վոր հայը կասեր նույնը, մեկ էլ այնպես, վոր հայն էլ այնպես ասեր, ինչպես բնագրումն է ասած, և միևնույն ժամանակ հասկանալի լիներ նրան և չատ էլ խորթ չթվար: Ինչ ասել կուզի, վոր այս յերկրորդ ձեռնարկը չատ դժվար եր և պահանջում եր մեծ հմտություն: Մեր թարգմանիչները այս յերկրորդ և դժվար յեղանակն ընտրեցին ս. գիրքը թարգմանելիս: Եվ հենց այս դժվարության եր պատճառը, վոր յերկու անդամ (առաջ ասորերենից և հետո հունա-

ըեն ընտիր բնագրից) թարգմանելուց հետո էլ գործը շատ պակասավոր դտնվեցավ: Այս մասին Խորենացին ասում է բացակայող խոսքերով. «Բայց քանզի անդետք եյին մերում արվեստի, ի բազում մասանց թերացյալ գործն գտանյուր»:

Այս ինչ արվեստ եր, որին անգիտէ եյին Սահակն ու Մեսրոպը և նրանց անդրանիկ հելլենասեր աշակերտները, որոնք մասնակցել եյին «ի բազում մասանց թերացյալ» յերկրորդ թարգմանությանը:

Այս խնդիրը նույնպես պարզաբանում է Խորենացին, նույն ասածի վրա ավելացնելով՝ «Վասն որո առյալ մեծին Իսահակա և Մեսրոպա զմեզ (Խորենացուն և իր ընկերներին) առաքեցին յԱղեքսանդրիա, ի լեզու պանծալի, ի ստուգ յոդանալ ճեմարանին ՎԵՐԱԲԱՆՈՒԹԵԱՆ»: (Այսինքն ի ստուգ հոդանալ վերաբերությանը, որ ի ճեմարանին):

Այստեղից պարզ յերևում է, որ վերաբաձությունը մի արվեստ եր, որով պիտի հմտանային թարգմանելու գործին, պիտի սովորեյին վերաբաձել,— թարգմանել, պարզաբանել, համեմատել, վերլուծել, վերածել, նմանակերտել: Թե ուղղակի լեզվի ուսումնասիրությանը վերաբերող այսպիսի մի արվեստ կար Աղեքսանդրիայի ճեմարանում, այդ արդեն հայտնի յե գիտնականներին և թե այս արվեստն եր, որին անդետք եյին Սահակն ու Մեսրոպը, այս մասին վոչ վոք տարակուսելու տեղիք չունի, քանի որ քերթողահոր ասածի մեջ վոչ մի մթություն չկա:

Բ.

Վերաբանության աշակերտների համար լեզուն մի արվեստ եր, այդ արվեստով նրանք լեզուն քերթում եյին, կերտում եյին, որի մեջ հմտագույնը անվանվում եր քերթող: Այդ վարպետներից ամենագործունը Խորենացին և և այս պատճառով էլ նա անվանվեց Քերթողահայր: Խորենացու լեզուն արվեստավոր է, բայց վոչ չափազանց խորթ հայի ականջի համար, իսկ նրա ընկերներինը, ինչպես Դավթինը, խորթություն շատ ունի: Ամբողջ լեզուն միատեսակ չե, նա ավելի սրբագրված և յերևում, քան յերրորդ անգամ նորից թարգմանած: Ներանում յերևում եր, որ առաջին թարգմանությունը ժողովրդի լեզվին շատ մոտիկ է յեղել: Եթե ուրիշ կերպ էլ չեր կարելի սպասել

Մեսրոպի և Սահակի նման ժողովրդասեր մարդկանցից, որոնք նպատակ չունեյին մի արվեստավոր լեզու ստեղծել, այլ թարգմանել յեկեղեցու արարողությունները և ս. գիրքը ժողովրդին հասկանալի լեզվով, որ այլևս թարգմանի կարոտ չլինի: Բայց նրանց աշակերտները, հավշտակված հելլենական լեզվի քերականությամբ, խրթնացրին և խորթացրին դրոց լեզուն իրենց արվեստի շնորհիվ:

Մխիթարյանք չեն ուրանում, որ դրաբառը մի արվեստավոր լեզու յե, և այդ արվեստավորությունը նրանց աչքում— նույնիսկ Հ. Այդնյանի— մի թերություն չե, այլ արժանավորություն, և վոխանակ այդ արվեստականությունը անբնական, կեղծ, չինծու, քմահաճո, անկանոն, աններդաշնակ, հակազգային և հակամարդկային համարելու, անվանում են սքանչելավեստ, ճարտարարվեստ, հրաշակերտ:

Արվեստի պաշտպանները և արվեստավոր աշխարհիկ լեզվով դրողները խոսքով միայն սքանչելի համարելով դրաբառի արվեստը և ճգտում ունենալով մեկ-մեկ քերթողահայր հանդիսանալու, ամեն մեկն իր համար մի ջոկ արվեստ է ստեղծում և ինքը միայն հիանում իր կարած բոխչայով, իր չինած աղվեսի բնով և մկան բավիղով: Այս տեսակ իմաստակներով լիքն է մանավանդ Պոլիսը, ուր ամեն մի համբակ լեզվակերտության դործում Հ. Տերվիչյանին դերազանցել է ուզում:

Զարմանալին այն է, որ այդ արվեստագետներից վոչ մեկը դուրս չեկավ և ցույց չտվավ մեզ, թե ինչ արվեստ կա դրաբառի մեջ: Նախամայր լեզվի հետազոտողի համար ավելի դյուրին եր իրանից մոտիկը հետազոտել, քան թե իրանից մինչև Հնդկաստան հեռու յեղածը, և առաջարկեցինք նրան, բայց նա փախավ սկսավ մեր առաջարկությունից, ասելով, «Ձես ինչ գիտնամ, դնա իրենց հարցուր»:

Գ.

Մեր լեզվագետներն այն կարծիքն են հայտնել մինչև սրա, որ մեր դրաբառը հինգերորդ դարում պոյության ունեցող բարբառների մեջ ամենից կատարյալն եր, դա մի մեհենական և դիվանական մշակված լեզու յեր. այդ լեզվով խոսում եյին քաղաքակրթված անձինք, հոգևորականներն ու աղնվականները; նա դրավոր լեզու լինելու այն աստիճան հարմար եր, որ կա-

ըողացան կարճ ժամանակում թարգմանել վոչ միայն ս. գիրքը, այլև հունական փիլիսոփայությունն անգամ:

Այս յենթադրությունները ճառեր են միայն առանց հետազոտության, առանց փաստի, այնպիսի ճառեր, վորոնք մարդկանց մեջ հավատ են ներշնչում և մոլորեցնում, բայց մնում են զուրկ պատմական և բնական ստուգությունից:

Սկսած պարթևական լշխանությունից կարող չենք ասել, թե հայերն ունեցել են մի մշակված պալատական հայերեն: Ընդհակառակն՝ պալատի լեզուն և դրականությունը ուտար եր մինչև Մեսրոպի ժամանակն էս: Ինքը Մեսրոպն էս իբրև պալատի քարտուղար՝ դրականությունը վարում եր պարսկերենով: Եթե պալատում հարգված լիներ հայոց աղգային լեզուն, վաղուց հնար կմտածեին հայերեն գիր և դրականություն ունենալ: Միևնույնը կարող ենք ասել և մեհենական դպրության մասին, նորանում էլ տիրապետող լեզուն ասորականն եր և հունականը: Ինչպեն մարմնավոր, նույնպես և հոգևոր լշխանությունը ուտար եր հայի համար: Վոչինչ ապացույց չունենք, վոր Գրիգոր Լուսավորիչն անգամ հայերեն լմանալիս լիներ, բայց գիտեր դուցե հունարեն և ասորերեն, քանի վոր դրանք ենին արևելյան յեղեկեցու լեզուները: Խորենացին սուր հանդամանքների վրա զանգատելով ասում է վերջը.— Այլ ինձ թվի, վորպես այժմ և առ հինն Հայաստանեայց լլյալ անսիրելություն խմաստության և յերգարանաց բանավորաց, վասնորս ասվելորդ ե մեզ և այլ հաղագս անբանից արանց թուլամտաց վայրենյաց ճառել:

Մեր գիտնականներն իրանց ճառերը հիմնում են այն ահագին տարբերության վրա, վոր տեսնում են գրաբառի և բարբառների քերականության մեջ, և դրանից գալիս են այն յեզրակացության, վոր կենդանի բարբառները պնչալի փոխված են: Բայց թե բարբառն ե փոխված արդյոք, թե գրաբառը, այս հարցն անբնական են համարում իրանց տալ: Այս ամենասարսուռ խնդիրը մեզանում գլխիվայր ե լմբռնված: Ո՞վ արդյոք հետազոտեց գրաբառը ջոկ, բարբառը ջոկ և ցտաք, վոր փոխվածը բարբառն ե, այլ վոչ գրաբառը: Այս ախալը հառաջ ե գալիս և նրանից, վոր մերոնք մեր կյանքի մեջ պարզ աչքով վոչինչ չեն տեսնում, վոչինչ չեն նշմարում, մինչև չեն գրահավորվում յեվրոպական ակնոցով: Մոռծում են թարգմանաբար, խոսում են թարգմանաբար: Ինչ վոր Յեվրոպայի լեզվագետներն ասում են իրանց լեզուների մասին, մերոնք էլ նույնը ավելի էլ կիսատ-պռատ կրկնում են մեր լեզվի մասին, մոռանալով, վոր նման հանգամանքները կարող են նման հետևանքներ առաջ բերել, և վոչ չնման:

Յեվրոպայում փոփոխություն շատ ե յեղել, ճշմարիտ ե, բայց այդ չի նշանակիլ, վոր Ջինաստանումն էլ միևնույն ժամանակամիջոցում նույնքան փոփոխություն ե յեղել, կամ պետք ե վոր յեղած լինի: Ասիան էլ Ասիա չեր լինիլ, յեթե ամեն կողմով Յեվրոպայի նման լիներ: Քաքաղաքակիրթ Հունաց և Յեղիպտացոց ժամանակակից Աֆրիկայի վայրենիները մինչև այսօր չարունակում են իրանց վայրենությունը: Միևնույնը կարող ենք ասել և Ասիայի չվայրենի ժողովուրդների մասին, վորոնք մտավոր զարգացման մի հայտնի աստիճանի վրա քարացել մնացել են անշարժ: Ինչ համեմատություն ներկա գերմանացու և նրա նախահոր՝ մեր դրացի ոսերի փոփոխության հետ: Հայերին բարբարոս եյին համարում հունները դեռ հինգերորդ դարում: Յեթե այսօր Խորենացին սեղից վեր կենար, կարող եր բառացի կերպով կրկնել— անսիրելություն իմաստության և յերգարանաց բանավորաց: Այդ բանավոր յերգերն իր ժամանակին էլ կային, բայց ինքը ծերության պատճառով ժամանակ չուներ դրանց հավաքելու: Իրանից հետո էլ այդ յերգերը յերկար ժամանակ ասում եյին, բայց ո՞վ հավաքեց: Մի՞թե այսօր իսկ քիչ բան կա բանավոր, բայց ո՞վ ե հոգ տանողը. նույն անսիրելությունը իմաստության և յերգարանաց բանավորաց...:

Հայն ասիացի յե ասիացու բոլոր հատկություններով, իր բոլոր սարք ու կարգով, իր ավանդություններով, իր ծեսերով ու հավատալիքներով, իր դանդաղ և անշարժ բնավորությամբ: Ինչքան վոր թիֆլիսի ժողովուրդը փոխվել և այսօր վերջին յերեսուն տարվան մեջ, ամբողջ նահանգներ Հայաստանում այդչափ փոխված չեն հիսուն դարում: Յեվ ինչո՞ւ պիտի փոխվեր հայն իր անմատչելի ձորերում, լեռներում, ինչ պատճառով, ինչո՞ւ համար պիտի փոխվեր: Փոխվեցան նրանք միայն, վորոնք իրանց տեղից դիվեցան, իրանց հայրենի հողից, ջրից հեռացան: Բայց նրանք, վորոնք ներկայումս էլ առասպելական Ցիկլոպների պես քարայրերում են բնակում, ինչ առիթ ունեյին փոխվելու: Թե ինչով և ինչպես ե փոխված— հայոնի ժամանակից սկսած մինչև մեր որերը, դեռևս վոչվոք հետազոտած և ցույց տված չե, իսկ լոկ յենթադրության գալով յենթադրե-

թուքյունը ավելի չփոխված լինելու կողմն է և ունի իր հիմնավոր պատճառները:

Մեսրոպի ժամանակից մինչև մեր օրերը պիտենք թե ինչ անցքեր են անցել մեր ազգի դեմքով, վորպիսի լեզուների աղդեցության տակ են գտնվել, վոր նահանգն է յեղել խառն ոտարների հետ, վո՛րը դրացի յեղել, վորը հևուռ մնացել և անարատ: Գիտենք, վոր շատ տեղեր բոլորովին կորցրել են իրանց լեզուն, վոմանք լեզվի հետ նաև կրոնը: Գիտենք, վոր ինչքան հայն եր խորշում մահմեդականից, նույնքան և մահմեդականն եր խորշում քրիստոնյա հայից, և սրանից առաջ եր դալիս յերկու մարմինների մեջ կենտրոնախույս չարժում և արդելք լինում նրանց միացման: Գիտենք, վոր յեթե պարսիկը, արաբը, թաթարը, և թուրքը հային հավատակից լինեյին, այլևս հայ լեզու չեր լինել աշխարհիս յերեսին, կամ, սրա հակառակ հայախոսների թիվը տասնապատիկ շատ կլիներ: Լեզվի տեսակետից՝ բարոյապես և մտավորապես ուժեղը կուլ կտար ֆիզիկապես ուժեղին: Քանի վոր մեջտեղ աղդային խնդիր չկար, այլ միայն կրոնական, թուրք և թաթար ընդունելով հայոց կրոնը կընդունեյին և նրա լեզուն: Բայց հայք չունեյին այդչափ բարոյական ուժ, չունեյին կենդանի կրոնական լեզու, չունեյին կենդանի դրականություն, և այս անկենդանությունը, այս մեռելությունը կյանք տալ ուրիշներին կարող չեր, յեթե չմեռցներ նույն իսկ իրան ել, ինչպես և մեռցրեց:

Այս պատմական հաջող ու անհաջող հանդամանքի վրա պետք է ավելացնել և իշխողի ու իշխվողի ասիական անշարժությունը: Իշխողները զուրկ եյին բարոյական և մտավոր ուժից, իշխում եյին միայն թրով, այլ վոչ քաղաքակրթությամբ, լուսավորությամբ, վոր ավելի կլանող ե, քան սուրը և թուրը, վորոնք ժամանակավոր, այլ վոչ չարունակ ազդող հնարներ են: Հալածանքը հային փախցնում եր, թաղցնում եր, մինչդեռ քաղաքակրթությունը նրան կկրթեր, կդրավեր և կուլ կտար չաս սկզբով: Հալածանքը առաջ բերավ հայի մեջ ամանդապահություն, խոհականություն և ջերմ հայրենասիրություն: Նա չկորցրեց վոչ իր հույսը և վոչ իր հավատը, վոր ուներ աստծո վոլորմության վրա, և չեր մոռանում կրկնել իր «Արի աստվածդ» և «Շնորհյա մեզ տեր ի դիշերին»: Այսպիսով հայն ազատեց իր ընտանեկան լեզուն, ընտանեկան սովորություններն ու յերդերը— վիճակի յերդերը, մանկական հեքիաթները, բայց վոչ բա-

ղավոր յերգարանը, վոր իսպառ ոտալացավ: Հայ-աշուղները իրանց լեզուն, հորինվածները, ավանդությամբ իրանց հասած քանավոր վեպերն սկսեցին թուրքերեն յերդել, վորովհետև իրրև վարձկաններ, հարկադրված եյին այնպես անել իրանց ոդուտի համար. խաների, բեղերի և նույնիսկ չահերի առջև յերդելու և վարձատրվելու համար պետք ե թուրքացնեյին այդ վեպերի անցքերը, անունները, հերոսների կրոնը, այլապես դուրս չեյին դալ ոտարներին: Փոխնեյին և բանաստեղծություն հորինելու հին ձևը: Պաղերի մեջ նոր արվեստ մտցրին, վոր իր իրթևությամբ մրցում եր դրաբառի հետ իրրև նրա միմոսը:

Բանավոր յերգարանի ոտարանալը անչուշտ մեծ կորուստ եր լեզվի համար. բարբառները դրանց ազդեցությունից կարող չեյին ազատ մնալ, բայց յեթե դրանք մնացած ել լինեյին, կմնային վոչ անփոփոխ, այլ իրրև ճյուղական մի խառնուրդ բառերի և դարձվածների կողմից: Մեր խնդրի վերաբերությամբ դրանց կորուստը, ոտարանալը և արած ազդեցությունը վոչ մի նշանակություն չունեին: Այդ խառնուրդը, այդ ազդեցությունը կարող ենք այնպես վորոշել և պոել լեզվից, ինչպես աղբը ջրից, վորովհետև ոտար լեզուների տարերքը մեր լեզվի հետ քիմիապես չեն միացված, այլ իրրև մի կարիատան, վոր ամեն մարդու աչքի յե ընկնում:

Ի նկատի առած այս բոլորը և սրա նման շատ ուրիշ հանդամանքներ, վորոնց մի առ մի թվելը մեզ հեռուն կտաներ, մենք դրաբառը կարող ենք համեմատել վոչ թե կիսամեռ, կերպարանափոխված և տեղափոխված բարբառների հետ, այլ այն բարբառների, վորոնք մնացել են վողջ առողջ և ազատ ոտար հուպանքից: Այսպիսի բարբառներ դոյություն ունին Գուգարքում, Արարատում, Տարոնում, Վասպուրականում, Սյունիքում և Բաղաց ընդարձակ աշխարհում:

Ով վոր ուզում ե հերքել կամ ստուգել իմ ասածները, թող նեղություն կրե ուսումնասիրելու այդ բարբառները. իսկ ազդեն ել, յեթե իրավ չունի անսիրելություն իմաստության և յերգարանց բանավորաց, թող հավաքե մեր բարբառները. թող հրավիրե գործին հմուտ մարդկանց և կազմել տա մի հարուստ բառարան կենդանի բարբառների, վորով միայն կենդանություն, ճոխություն և կանոնավորություն կստանա մեր ներկա գրական յեզուն: Այս գործի գլուխ կանգնելը ռուսահայերի պարտքն ե,

ֆանի վոր որինակ ունինք մեր աչքի առաջև այն մեծ ջանքը, վոր գործ է դնում ռուսաց սրգը իր նոր լեզվի զարգացման համար:

Վ.

Մեր գրերի հնարելու նպատակը գուտ կրոնական եր. աշխարհային վոչ մի ձգտում ու նպատակ չկար: Գրերը նրա համար չհնարեցին, վոր հայոց բարբառները գրի առնեն, հայ ժողովրդի յերգարանը ժողովեն և կորստից ազատեն, հայի ընտանեկան կյանքը նկարագրեն, ժողովեն նրա ավանդությունները, ծեսերը, ծոլորույթները, անցյալ պատմությունը, մինչև նական մատենագրությունը, դյուցաբանությունը, առասպելները, հեքիաթները և այլն: Նրա համար չհնարեցին գրերը, վոր աշխարհային և արտաքին բանասիրական, բանաստեղծական գրականություն առն ժողովրդին թե լինքնուրույն և թե թարգմանաբար: Նրանց պետքը չեր նույնիսկ դիվանական լեզուն, թե արդյոք վոր լեզվով լավ է, վոր վարվի, հայերեն, թե պարսկերեն: Այս և սրա նման շատ բաներ նրանց մտքովը չեր անցնում: Նրանք մի հատիկ նպատակ ունեցին միայն, վոր եր հային տալ հայերեն ժամասացություն, վորովհետև աստրերենը հայի համար խորթ եր, անհասկանալի յեր և անդուրեկան: Գուցե յերե հունարենը թուլլ տրված լիներ, այլևս այդ մասին չմտածեցին մեր հելլենասաները, հունասերները, վորոնք առելով առում եյին աստրինելին:

Քանի վոր գրեր կային, աշխարհիկ լեզվի անարվեստ գրականությունը կարող եր սկսվիլ նույնիսկ Մեսրոպի որով աշխատիականների ձեռոով: Բայց սրա համար հարկավոր եյին մի քանի դյուրություններ, վոր այն ժամանակ չկային: Տառերը յերկաթագիր եյին. գրանցով գրելու համար հարկավոր եր գրչության արվեստի հմտություն, վոր պահանջում եր առանձին ձիրք, ինչպես այդ պահանջում է նկարչությունը: Թուղթ չկար, գրվում եր մագաղաթի վրա, վորի պատրաստելը դյուրին գործ չեր: Այս գործը դարձավ վանքերի և վանականների սեփականություն: Աշխարհականներն անգրագետ եյին: Նույնիսկ հոգեվորականների մեծ մասը միայն կարդալ գիտեր, իսկ գրել վոչ: Յերբ վոր հնարվեցին բոլորագիրը և նոտրագիրը տառերը, յերբ վոր մտավ թղթի գործածությունը, աշխարհականներին մի այն ժամանակ բաժին հասավ գրագիտությունից, և նրանք սկսեցին գրել այնպես, ինչպես գրում են մեր կիսագրագետ վաճառականները ու տիրացուները, անկանոն և խառն լեզվով, վոր վոչ գյուղ եր և վոչ քրոց, վոչ արվեստական և վոչ բնական: Բնական եր, վոր այս տեսակ գրվածները հարդ չունենային և վոչ ել ուրեմն կպահպանվեյին, յեթե նույնիսկ բնական բարբառով լինեյին գրված:

Գրագիտությունը պատնում է հասարակաց միության տպագրության գյուտից հետո, յերբ աշխարհականներն որեցոր սկսեցին առաջ անցնել և իրանցից հետ թողնել հոգևորականներին, վանքերն ու խուցերը դադարում են ուսումնավայրեր լինելու, նրանց տեղ բացվում են քաղաքներում հոյակապ ճեմարաններ:

Ահա այս հանգամանքները սվելի ևս մանրամասնորեն պետք է ի նկատի ունենալ, յերբ խոսք և լինում մեր հին գրականության մասին խավար դարերում, յերբ չկար վոչ մտքի և վոչ ել ելեկտրական լուսավորություն:

Մեղանում «Հյուսիսափայլն» առաջինն սկսեց նոր լեզվի մշակությունը, բայց վերջումն սկսեց դեպի հետ յերթալ: Շատերը, նույնիսկ այսոր տարուբերվում են Նազարյանցի պես: Ունինք դրյավոր տաղանդ, վոր իր լեզվով հեղեղեր ամբողջ դրականությունը և բոլորին ել մի ավազանով մկրտեր, մեկ լեղու տար, այլևս մեկ ուղիղ ճանապարհով տաներ[1]): Մեզ համար այդ ճանապարհը դեպի Սրարատ գնալն է, իսկ տաճկահայոց ել խորհուրդ կտայինք դիմել դեպի Տարոն: Մենք այդ կետերում կմոտենանք միմյանց և իրար ձեռք կմեկնենք: Ասելը այս է, թե բանը բառերի մեջ չե, այլ քերականության[2]).

---

1) Մեր փոքր ի շատե տաղանդավոր գրողների լեզվի վրա ճնշումն են գործում մեր գազեթաչի աղաները, և շատ վատ են անում: Վիպասանի և բանաստեղծի լեզուն պետք է թողնել անփոփոխ. դրանք են ժողովրդի ներկայացուցիչը և լեզու կոան մեր գրականությանը. յեթե մտագրություն դարձնեն իրանց լեզվի վրա:

2) Մեր լեզուն ավելի տրամաբանական է, քան թե քերականական: Որինակ, յերբ վոր ասում ենք Մարկոսը գնաց քաղաք, Մարկոսն ընկավ ծովը. կովը գել կերավ. մուկը կատուն բռնեց և այլն, քերականական լեզվի սովոր ականջին խորթ են թվում այս տեսակ ասվածները և սկսում են մեկ նախդիր ավելացնել խնդրի վրա, վոր շփոթություն առաջ չգա: Բայց ինչպես է վոր ժողովուրդն այդպես ասում է և հասկանում է առանց շփոթվելու: Այդ նրանից է, վոր տրամաբանությունն ասում է՝ ծովը Մարկոսի մեջ չի կարող ընկնել, վոչ քաղաքը կարող է գնալ դեպի Մարկոսը. գայլը և կատուն

քարբառները չատ ունինք, բայց մեկի քերականության պիտի հետևինք, վոր մեր լեզուն կանոնավոր և ներդաշնակ լինի, կենդանի և հասկանալի լինի: Արդ՝ մեր կողմե բարբառներում Ա-բարատյանն ամենից ընտիրն է, իսկ տաճկահայոց համար— Տարոնինը:

ՀԱՎԵԼՎԱԾ

«Բագմավեպ» Հանդիսարանի մեջ մարտի ամսատեսրից սկսած մի հոդված է տպվում, վոր դեռևս չարունակելի չէ, նպատակ ունի լուծելու «աշխարհաբարը դրաբարի ձևով պարզացնելու և կանոնավորելու, և դրաբար լեզուն աշխարհաբարի մեջ կենդանացնելու խնդիրն»:

Հոդվածագիրը Հ. Բարսեղ Սարգիսյանն է, վոր ավելի ազգասեր է, քան թե իրանց արևմտյան դպրոցական-ների լեզվին և համակրում, նախապատվություն տալով «Մշակի» լեզվին, քան թե իրանց արևմտյան դպրոցական-ների լեզվին: Այս չերևի նրանից է, վոր ինքն արևելցի չէ, հմուտ է մեր լեզվին, բայց անտեղյակ է մեր բոլոր ընթացքին: Դրաբարի ձևերով վոչ կանոնավորել կարելի չէ մեր լեզուն և վոչ կենդանություն կարելի չէ տալ նրան, այլ բոլորովին դրա հակառակ նպատակի կհասցնես, այսինքն անկանոնություն կտա և մեռելություն: Հայր Սարգիսյանի դրդվածն ինքը այդ մեռելության պատկերն է ներկայացնում: Այսօր մենք առաջ ենք գնում չորեքթաթ սողոլ (հավիտենս), բայց վաղը վոտքի կկանգնենք և կքայլենք հսկայական քայլերով, մինչդեռ Հ. Սարգիսյանը մեզ խորհուրդ է տալիս դեպի չետ չորթալ, դեպի անցյալը, վոր այլևս վոչ ներկա և վոչ ապագա կարող է դառնալ: Հունաց ներկա լեզուն մեզ որինակ առնել կարող չենք, վորովհետև նրանց դասական լեզուն իրանցն է, ինչ մեր դասական լեզուն մերը չէ: Հունաց դասական լեզուն եր, վոր մեր հին լեզվի մահվան պատճառ չեղավ, մինչ թե խելացի բան կլինի մեր նոր լեզվի դլխին էլ հին խաղը խաղալ: Մենք արևելցիքս պատեպատ ընկնելու հարկ չենք դգում, լեզվի խնդիրը մեզ համար պարզ է և լուծված, իմ այս հոդվածը ա-

---

են ուսողները և վոչ մուկն ու կովը: Լեզվի համաձայնությունը քերականության և վոչ տրամաբանության գործ է. մեր լեզուն չունի վոչ քերականական սեռ և վոչ քերականական համաձայնություն, այլ միայն տրամաբանական:

ւավելապես արևմտյան դպրոցի հետևողների համար է գրված: Ալբարատն ու Տարոնը մեզանից ավելի մոտիկ են, քան թե Հունաստանը, վոր թե հեռու չե մեզանից և թե ոտար: Լեզվին կենդանություն տվողը ապի առորյա կյանքն է, իր առորյա պետություններով և պահանջներով: Կարդացեք «Տարազի» ներկա համարում «Մշակ աղան», այդ է ահա կենդանի լեզուն: Սովորել ժողովրդից և սովորեցնել նրան, առնել նրանից հում և տալ կոկած. հաղցնել նրան այդ կոկածը և այսպես մինչև չարունակել,— այս է լեզուն չարունակ կենդանի պահողը:

Ինչ վոր գրաբարի մեջ խմվում եր (գան ըմպել), ներկայումս ուսումում է (ծեծ ուտել): Ուրեմն առաջ ինչ վոր հեղուկ է չեղել և նոսր, այժմ թանձրացել և պնդացել է: Մենք գրաբարից կխմենք, ինչ վոր կխմվի, կուտենք, ինչ վոր կարելի չե ուտել և մարսել, բայց վոչ կուտենք և վոչ կխմենք անմարս բաները: Ճեվրոպական դրականությունը մեր ներկա լեզվի վրա այժմ ավելի ազդեցություն ունի, քան թե մեր հին լեզուն: Փախչել այդ ազդեցությունից թե անհնարին է և թե հիմարություն: Ճեվրոպան իր լուսավորությամբ հեղեղում է մեր կյանքը նորանոր նյութերով և գաղափարներով, վոր ասել է՝ նորանոր բառերով և դարձվածներով, վորոնք անծանոթ եյին հնումը: Ճեթե Խորենացին ուրիշ կերպ չեր կարող գրել, քան թե այնպես, ինչ գրում եյին իրանց ուսուցիչները, ի՞նչպես կարող է մեր ներկա ուսանողությունը ուրիշ կերպ խոսել ու գրել, քան թե խոսում և գրում են իրանց պրոֆեսորները: Ի՞նչ ձևով ու վոճով պետք է գրեն մեր ներկա վիպասանները, արդյոք Ճեղիչեի և Ղազարի՞ վոճով, թե Վիկտոր Հյուգոյի և այլ յեվրոպական վիպասանների վոճով, յերբ փորձը ցույց է տալիս, վոր այդ վոճով գրելն ավելի մատչելի չե ընթերցողին: Գրողն իր սեփական քեֆին հաճություն տալու համար չը պիտի գրե, այլ ընթերցողի հաճության ու քիմքի: Ծառայել լեզվի նպատակին, հասնել այդ նպատակին, այս է ուղիղ ընթացքը գրականության մեջ, վորից չատ և չատ հեռու չեն Մխիթարյանք և առաջնորդել մեզ այդ գործում կարող չեն, այլ միայն պիտի խանգարեն, պիտի մոլորեցնեն պարզամիտ գրողներին:

1890

«Տարազ» 1890 թ. № 5

ՀԱՏՎԱԾ «ՀԱՑՈՑ ԼԵԶՎԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ» ՀՈԴՎԱԾԻՑ

... Առհասարակ բարբառը յեթե հին է և անխառն, միշտ ավելի կանոնավոր է, քան թե դրավոր լեզուն, վոր իր ծագումն առնում է զանազան բարբառներից և վոչ մեկ: Դրանց լեզվով ուղիղ դրելու համար, պետք է լավ իմանալ մեր դլխավոր բարբառներից մեկնումեկը, ավելի՝ Ալաշկերտյանը և Ղարաբաղինը, վոր մայր բարբառներ են և ունին չատ ճղներ: Ղարաբաղի բարբառը լավ իմացողը վոչ մի տող սխալ չի դրիլ:

Բայց մեր բարբառները այլևս յերկար դոյություն ունենալ չեն կարող: Գրական լեզուն ուսումնարանների ոգնությամբ տարածվում է ժողովրդի մեջ և ամենքն սկսում են կամ մաքուր գրական լեզվով խոսել, կամ իրանց բարբառի հետ խառն մի անկանոն լեզվով: Թիֆլիսի բարբառը արդեն վերացել է համարյա թե: Թիֆլիսը լինելով մտավոր կենտրոն, դրավոր լեզուն այստեղ ամեն տեղից շուտ ընդհանրացավ: Բայց պետք է այս էլ ասել, վոր այս բարբառը ինքը կորչելով մեր գրական լեզվի մեջ, նրանում թողել է բավական անճոռնի հետքեր: Այն դրողները, վորոնք դրում են Թիֆլիսի բարբառի աղճատության տակ, կամ այդ տեսակ դրողներին հետևելով՝ նրանց լեզուն կանոնավոր չե: Յեթե դրա հետ էլ խառն է ուսսաց լեզվի աղճատությունը, այնուհետև դուրս է գալիս մի կատարյալ չխոթ և վոչ հայկական լեզու: Կրթվող սերնդի լեզուն խանգարում են մանավանդ հայերեն ուղիղ չխոսող վարժապետները և վարժուհիները և անճոռնի լեզվով թարգմանած դրքերը: Դրանք այնպիսի չարիք են, վորոնցից անկարելի յե աղատ մնալ: Մեր գրական լեզուն դեռ մի տհաս մանուկ է, նոր է ղարդանում, և անհնարին է, վոր ղարդանա առանց խոշոր սխալներ ունենալու: Սխալվիլն ամոթ չե, բայց սխալը համառությամբ պաշտպանելը մեծ ամոթ է: Շատերը դիտեն, վոր սխալ են դրում, բայց շարունակում են իրանց սխալը համառությամբ:

1890

«Աղբյուր» 1890 թ. № 7

ՄԻ ՆԿԱՏՈՂՈՒԹՅՈՒՆ

Ա.

Կան մարդիկ, վորոնք մեզ թվում են հատուտակիտ, մինչդեռ նրանք հատուտամիտ են, բթամիտ են և վոչ թե հատուտամիտ: Այսպես ոամիկ և անուս դասակարդը մեզ հատուտամիտ է յերևում, մինչդեռ նրա միտքն ընդարմացած է, անշարժ և քարացած:

Անհատ անհատից և ազգ ազգից տարբերվում է իր մտքի շարժունության աստիճանով: Մեր դրացի թուրքերի[1]) համեմատությամբ մենք հայերս ավելի շարժուն ենք: Թուրքերը ինչպես վոր յեղել են իրանց Իսմայիլ Նահապետի որերում, նույն վիճակի մեջ են գտնվում և այսոր. այնքան ընդարմացած և անշարժ է դրանց միտքը: Սակայն մենք հայերս էլ, վորքան էլ վոր մտավոր շարժունությամբ բարձր ենք կանգնած մեր ասիացի դրացիներից, այսու ամենայնիվ դարձյալ ասիացի յենք, ազատ չենք ասիական անշարժությունից: Այս հատկությունը մի տեսակ ժառանգություն է մեր պապերից մեր ուղեղի մեջ մնացած: Թուրքերեն ասված ասիական առածը, թե «Աղբը–ոթուր, բաթման դյալասան» (ծանր նստիր, վոր կչիռդ բաթմանի չափ լինի) վերաբերում է բոլոր ասիացի ազգերին, բոլոր ծալապատիկ նստող ազգերին: Ասիացին այնպես է նստում, վոր կարծես քառատուն բաթման քար կա կախված իրանից:

Այս անշարժությունը, այս ծանրությունը, դանդաղկոտությունը միայն ոամիկ դասակարդին չե հատուկ, այլ նույնիսկ ամենածայրահեղ համարված աղատամիտ հային: Հայն ինչքան վոր աղատամիտ լինի, ինչքան չարժուն և առաջադեմ, դարձյալ չի կարող բացարձակ աղատ լինել ասիական դանդաղկոտությունից: Մեր լուսավորյալները ուրիշ բան չեն, բայց թե լուսավորիչներ, չուչխունաներ, լուցկիներ: Դրանց մեկ տեսնում ես վառված, մեկ էլ՝ ածուխ դառած: Շարունակ առաջադիմելու, չքնաղ լույս տալու հատկություն չունին: Այսպես են մեր բոլոր հաստատությունները. վառվում են, հանդչում են աստղների պես: Շարունակ առաջադիմելու, չարունակ լույս տալու

---

1) Հեղինակը նկատի ունի օսմանյան թուրքերին կամ տաճիկներին: Կազմող

ուժ, յեռանդ, կյանք չունին: Այսպես են և մեր ուսանողությունը, մեր լրագրությունը, մեր դրականությունը, մեր թատրոնը:

Այս հանդամանքը ձեռնտու պայման չէ մեզ հայերիս համար ներկա 19-րդ դարի վերջում: Դանդաղկոտությունը թուլության նշան է. դա ակարություն է, ցավ և ուղեղի ցավ, ուղեղի թուլություն, կոշտություն, հաստություն, ամլություն: Ցեթե մի դրող յերկու տող դրած և յերրորդում հոգնում, այդ ուղղակի նշան է նրա ուղեղի մեռածության, ամլության, անբեղմնավորության: Ցեթե մեկ խմբագիր վոխասաց մոնթի պես տարիներով մլևնույն քաղվածքն է անում, չգոնակ ուրիշ ասածն է հերքում, կամ նույնը կրկնում, այդ հայտնի նշան է ուղեղի ցավագարության: Ցեթե մեկն ասում է, Գ. Արծրունու դրական գործունեության սկիզբը պետք է «Մշակի» սկսելու որից հաշվել, այդ ցույց է տալիս միայն, վոր նա ուշում է գործը մի քանի տարով ուշացնել, վոր իր աչքովը չտեսնի առաջադիմության հաղթությունը:

(Բայց անհոգ յեղեք, մեր կատարած հանդիսը մի հրավառություն եր: Մեկ ել ոլ դիտե յերբ կվառվի: Հայերս այնքան արագաշարժ չենք, վոր տարին մի քանի հարեվան կատարենք, վոր իրախուսենք մեր դանդաղաքայլ մշակներին, մի գարկ տանք մեր առաջադիմության քառանկյունի անիվներին):

Ցեթե սխալ չկա ասածիս մեջ, յեթե հայրը ճշմարիտ ասացի յե իր անշարժ և դանդաղ բնավորությամբ, պետք է յերեվակայել ուրեմն, թե վորքան հաստագլուխ պետք է լինին այն դրողները, վորոնք անշարժ հային անշարժություն են քարոզում, իսկ շարժուն և առաջադեմ դրողին փոփոխամիտ անվանում: Ահա այսպիսի մի տիպարս են հատկացրել ինձ անշարժության հերոսները:

Փոփոխամտություն... Ուրեմն շարժունությունը մեզանում փոփոխամտություն է համարվում: Ցեթե յես մի գաղափարք եմ հորինում և տարիների ընթացքում նորանոր հոդվածներով ճոխացնում, թուլները հանում և լավերը մացնում, հաստատ մնալով հիմնական գաղափարի վրա, իմ այս արարմունքը փոփոխություն է, ժամանակի հետ առաջ գնալ է, հաստատամտություն է և վոչ փոփոխամտություն: Ցեթե մենք իրրև բանասեր միևնույն միտքն ենք քարոզում, այսոր տաքին չենք փչում, վաղը հովին,— ահա այս պետք է ունենալ ի նկատի մարդու հաստատամտությունը վորոշելու համար, և վոչ այն, վոր այսոր այսինչ մարդու հետ եր բարեկամ, վաղը այն ինչ, այսոր այսինչ թերթումն եր գրում, վաղը այնինչ, այսոր այսինչ տեղ եր ուսուցիչ, վաղը այնինչ: Գնում ես մի քաղաք ուսուցչության. հենց վոր տեսնում են թե իրանց ուղած քարոզը չես տալիս, այլ ուրիշ, քեզ հալածում են: Այստեղ ի՞նչ պետք է անես: Կամ պետք է քո գաղափարդ, քո միտքդ փոխես և մնաս և կամ պետք է թողես նույն քաղաքը և գնաս մի այնպիսի տեղ, վորտեղ հակառակ չեն լինիլ քո գաղափարին: Մի ժամանակ, սրանից ուղիղ քսան տարի առաջ, բարեվոխություն առաջարկեցի Ախալցխայի ուսումնարանի համար, ասելով՝ ձեր ուսումնարանը ուսումնարան չէ, վորովհետև ձեր վարժապետները անպետք են, միևնույն դնով կարելի յե շատ լավ ուսուցիչներ հրավիրել: Սրա համար ժողով կազմեցին և առաջարկեցին ինձ, վոր կամ ասածս յետ վերցնեմ և կամ հրաժարական տամ:— Ցես հրաժարական կտամ, ասացի, ավելացնելով՝ վոր ձեր վարժապետները տգետ են: Ցես գնացա, բայց ասածներս դուր չգնացան: Ցեվ այնուհետև ել, ուր վոր յեղել եմ, յես չեմ ծառայել հոգաբարձության կամքին, այլ նրանց եմ ծառայեցրել իմ կամքին. պատահել է, վոր ամենազորավոր հոգաբարձուին դուրս եմ վռնդել պատատան միջից բոլոր աշակերտաց ներկայության: Առաջնորդ, սեսուչ, հոգաբարձու— ամենքն ել միչտ պատկառանքով են վերաբերվել դեպի ինձ, դեպի իմ գործունեությունը, տեսնելով, վոր ինձ համար նյութական աշխարհ չկա, այլ միայն գաղափար, վորին յես գոհել դիտեմ ամենայն ինչ: Այսպես կարող է լինել միայն համառ և հաստատուն կամքի տեր մարդը և վոչ թուլ կամքի տեր փոփոխամիտը: Գիտեմ, տասնյակ տարի պիտի չարժեն իմ հակառակորդների բարկությունը, պիտի ասեն, տեսեք վորքան ինքնահավան է, վորքան գրաղված և իրանով, վոր միչտ իր վրա յե խոսում: Իսկ բարեկամներս թող լսանան, վոր յես մեծ, շատ մեծ առիթ ունիմ ցույց տալու հրապարակով իմ բնավորության ամենագորեղ գիծը, վոր է իմ հաստատամտությունը:

Լսել են մի քանի հիմարներ, վոր յես յերբեմն բանակռիվ եմ ունեցել Գ. Արծրունու հետ: Ցեթե փոփոխամիտ չէ, ասում են, Աղայանցը, ինչո՞ւ յե բարեկամանում այժմ Գ. Արծրունուն: Իմ կռիվը յեղել է չէ և չի բացառականների մասին. և այսոր ել նա իրանն է չարունակում, յես իմս: Ահա այս լուն է, վոր այսքան մեծ ուղտ են չլինել իմ հակառակորդները:

Ասում են, Բաֆֆու դեմ դլոդը ինչպե՞ս կարող է պաղափա-
րակից լինել Գ. Արծրունուն: Տեսեք իմ հակառակորդների լը-
բությունը մինչև վոր աստիճանի չե հասնում, վոր իմ պարզ
դրածը ուղիղ ըմբռնելու հակամետ չեն, այլ դլխիվայր ըմբռ-
նում և դլխիվայր էլ քարոզում են սրան-նրան: Բաֆֆու վրա
հարձակվել եմ պաշտպանելով նրա իսկ գաղափարը, վոր և իմն
եմ համարել և ուրիշ չատերինը: Ցես այդ չատերի կողմից բո-
ղոքել եմ նրա այն արարմունքի դեմ, վոր մեր ամենից փայ-
փայած սուրբ դաղափարը, սուրբ գործը ձգել և սկզբ մարդ-
կանց ձեռք—չաուշատանների և խաչագողների, վորով մի ամ-
սակ և զարկել բոլոր այդ դաղափարներին նվիրվածներիս:

Բայց ե՞րբ պիտի բարվոքվի մեր դրաչեանների վարքն ու
բարքը, և այս ի՞նչ բարոյական թշվառություն է, վոր նկատ-
վում է մեր դրողների մեջ: Ե՞րբ պիտի աղատվինք ևս դրպար-
տիչների լեզվից:

Բ.

Գիտության համար առանց պատճառի ծառիլը տեսիլ չէ
վայր ընկնում: Մեր կյանքի բոլոր յերևույթները իրանց բնա-
կան և որինավոր պատճառներն ունեն: Ճշմարիտ դիտնականը
փոխանակ վրդովվելու այդ յերևույթներից, կհետազոտե և կը-
բացատրե այդ յերեվույթների պատճառները, և սրանով ավելի
ոգուտ կբերե մեր առաջադիմության դործին, քան թե վողբա-
լով և անիծելով, քան թե աղաչելով թե հայհոյելով: Սակայն
ինչ վոր կա, և ինչպես վոր նա կա, աղաչանք թե հայհոյանք,
ուրիշ կերպ լինել կարող չե. դրամում չկա վոչ անլնականու-
թյուն և վոչ կեղծիք: Մ'իթե տգիտությունը, չարությունը
խաբեբայությունը, աչքակապությունը և այլ տեսակ մոլու-
թյունները անբնական յերևույթներ են:

Ինչո՞ւ չեն կռվում մամուլի ներկայացուցիչները իրար հետ.
ինչո՞ւ ժողովրդի համար դա մի անսովոր յերևույթ չե, ընդ-
հակառակը՝ նա ցանկանում է, վոր ժողովուրդը սովորե փիզի-
կական և մտավոր ուժերի մրցությանը հանդիսատես լինելու:
Եվ ի՞նչ վահլեվան, յեթե չի թափառիլ դյուղե դյուղ և քաղաքե
քաղաք ու գետին դլորիլ չատ ուրիշ վահլեվանների: Եվ ինչ
դադա աչքդ, յեթե վահլեվանի պես բաս չի մտնիլ բոլոր մյուս
աչղների հետ և ամենքին հաղթելով սաղը չի խլիլ նրանց ձեռ-
քիցը:

Ցերբ ասպարեզ են մտնում յերկու դրող, մտքի, ճարտարու-
թյան, խելքի ներկայացուցիչները, ժողովուրդն անհամբեր սպա-
սում է, թե այդ յերկուսից վորը վորին կհաղթե, և հենց ժողո-
վուրդն է, վոր նրանց կռվեցնում է միմյանց հետ: Գրողները
թե դիտակցաբար և թե քնազդմամբ գտնվում են ժողովրդի այդ
տրամադրության աղդեցության տակ: Ժողովուրդը միշտ հաղ-
թողին է փառաբանում: Ցեթե ըմբռչը այնքան անգութ է գըտ-
նըվում, վոր իր հակառակորդին մեկ անգամ գետին գլորելով,
նրան անչնչացնում է, հանդիսատես ժողովուրդը այդ չի համա-
րում ցածություն և յեղեռնագործություն, այլ մեծ քաջու-
թյուն և հաղթողին մինչև յերկինք է բարձրացնում:

Այսոր մեր մամուլի ներկայացուցիչները սուր և դեհիկ
տրամադրության տակ իրար բերան են կրծում: Աչըղի պես բաս
են մտնում իրար հետ և ամեն մեկն ուզում է իրան մյուսից
խելոք հանդիսացնել և իրանց նպատակին հասնելու համար գործ
են դնում այնպիսի սուր, ցած, վհեղատ հնարներ, վոր վոչ
մի վահլեվան և վոչ մի աչըղ իրան թույլ չի տալ, ըստ վորում
նրանք սովորական վեհանձնությունը և մեծահոգությունը յեր-
բեք ձեռքից չեն թողնիլ, յեթե ընկնելուել լինին:

Զկա ժողովրդի մեջ մի դասակարդ, վորի անդամները իրար
հետ մի տեսակ ընկերավարական համերաշխություն չունենան,
մի տեսակ դաշնակցություն չունենան, մի տեսակ ուստաբա-
շի, մի քյահյա, մի բարեկարդիչ չունենան: Նույնիսկ կինտո-
ները իրար մեջ համերաշխություն ունին: Ամեն մի համքյար
մի տեղ և խմբված, մեկի խանութը մյուսի կողքին և. բախ-
կալների թաբախները իրար դիպչում են, ճաշելիս խանութիից-
ները միասին են ճաշում: Ուրեմն կարծել, թե հայերի մեջ չկա
ընկերակցություն, միաբանություն, սեր, այլ կա մի խռովա-
րար և անհաշտ վոդի,— այդպես կարծելը ծայրահեղ մոլորու-
թյուն է: Այդ խռովարար վոդին միայն դրողներն ունին, և
սուտ չի ասում ժողովրդի առածը, թե «կարդացողի յերեսին սա-
տանեն թքում է»: Այս անարդանք և ամոթ բերող հատկությու-
նը, վոր մեր դրողներն ունին, մի կատարյալ չարիք է, մի ազ-
դամփաս և ազդակործան չարիք, վորի առաջքն առնելու հնար
պետք է մտածել:

1890

«Աղբյուր» 1890 թ. № 5–6

ՀԱՑՈՑ ԳՐԻ ՄԱՍԻՆ

ՆԱԽԱԲԱՆ

Մոտ որերս լուս տեսավ պ. Խահակ Հարությունյանցի «Հայոց դլխը» վերնադրով աշխատությունը, որ պսակված և Սահակ-Մեսրոպյան մրցանակաբաշխության ամբողջ մրցանակով 1888 թվին:

Գլխքը բաղկացած է չորս հարյուր յերեսից մի քանի դլխքով և բաժանված յերկու մասի: Առաջին մասումը խոսում է նշանագրերի և տառերի ստեղծման մասին ընդհանուրն ի նկատի առած, յերկրորդ մասում իր ասելիքն ամփոփում հայոց դրերի վրա: Ջնայած նյութի դիտական բնավորության կարդացվում է ամենամեծ հետաքրքրությամբ ու սիրով և առաջ մղում ընթերցողին, առանց վորևե տաղտկություն պատճառելու: Գոնե յես մեկ որվա մեջ կարդացի այդ քրտնաջան և ստվար աշխատությունը և չիմացա, թե ինչպես վերջացավ: Պետք է ասեմ սակայն, վոր իմ բանն ուրիշ է: Յես այդ դրքի մի ծայրից մինչև մյուսը վազեցի, վոր հայոց դլխը դտնեմ, բայց վերջումն ստացա մի ահագին, հայկական քլեթ. սուս ու փուս տեղս նստեցի և սկսեցի այս հոդվածը դրել այդ տպավորության տակ:

1.

Պարոն Հարությունյանցը վերջ ի վերջո մեզ այս նորությունն է հայտնում, վոր Դանիելյան ասված դրերը Դանիելի հնարածը չեյին, այլ հին հայկական դրերի մնացորդ: Կռասպաշտ հայերը, ասում է, ունեցել են իրանց ազգային դլխին ու դրականությունը, բայց քրիստոնեության մուտք գործելովը այդ դրականությունը կրոնի հետ դուրս է մղվել, մոռացության տրվել և անհայտացել: Այդ հին դրերից են ա՛նա, վոր պատահմամբ Դանիելի ձեռքն է ընկել, և նա էլ տվել է հայերին: Այս բանն ապացուցանելու համար նա, բացի իր սեփական հայացքից և պատճառաբանություններից, բերում է հետևյալ վեց փաստերը:—

ա) Տասներկերորդ դարի Վարդան պատմաբան վարդապետն ասել է, թե Դանիելի մոտ յեղած դրերը 22 եյին և հնուց մնացած հայոց դրեր եյին: Դրանց վրա Մեսրոպն ավելացրեց 14 դլխ:

բ) Այդ դտնված դրերի մասին կորյունն ասել է. «մանավանդ դլխ և նշանադիրքն իսկ՝ հայոց դպրությանց թաղյալք և հարուցյալք ցլխեցան»: Եմինը կորյունի այս ասածը թարգմանել է այսպես՝ к тому же надобно прибавить, что эти письмена были забыты и найдены случайно, վոր թարգմանի՝ պետք է այս էլ ասել, վոր այդ դրերը մոռացվել եյին և դտնվել դլխվածաբար: Պր. Հարությունյանցը սխալ է համարում Եմինի այս թարգմանությունը, և ինքն ասում է՝ կորյունն ակնարկում է այն հանդամանքը, վոր հայոց հին այբուբենը մոռացվել եր՝ տեղի տալով այլոց դպրությանց, այսինքն այլոց դրերին և ապա կրկին հայտնվել: Պարոնի այս բացատրությունը փոքր ինչ կամայական է. կորյունն ասում է. «Մանավանդ վոր այդ նշանագրերը թաղվել եյին ուրիչ դպրություններից, մեկ էլ հարություն առել»: Այստեղ չկա վոչ հայոց հին այբուբենի, վոչ էլ ուրիչ դպրությունների և դրերի տեղի տալ: Ցեթե մեկնել հարկավոր է, պետք է այնպես մեկնել, ինչպես Վարդան պատմադիրն է ասել այդ միևնույնը իր խոսքերով. նա ասում է այդ նշանագրերի մասին... «վոր վասն վոչ պարզելուն դընդաճակություն լեզվիս, անհոդացյալ յեղեվ հասալնոցն»: Այս նշանակում է, թե այդ դրերը վոչ թե դուրս եյին մղվել ուրիչ դրերից և դպրություններից, այլ պակասավոր լինելով պետք չեյին յեկել վոչ մի դպրության համար և թաղվել եյին: Այս հեղինակների ասածի և պ. Հարությունյանցի մեկնության մեջ այն դանազանությունը կա, վոր վոչ կորյունը և վոչ ուրիչները չեն յենթադրում, վոր Դանիելյան նշանագրերով վորևե դրականություն լինի յեղած, իսկ պարոնը այնպես է բացատրում, վոր կարող լինի չեղած տեղից հին դրականություն հանել...

գ) Ագաթանգեղոսն ասում է, վոր թե՛ Գրիգորի և թե՛ կույսերի ասածները Տրդատի դպիրները նշանագրում եյին և թաքավորի առջև կարդում: Այստեղ էլ «նշանագիր» բառի համար վկայություն է բերում 20 տեղից, ուր այդ բառը դործ է ածված տառերի մասով, թեև կարող եր ավելի քան քառասուն տեղից էլ վկայություն բերել, վոր դա դործ է ածվել և վոչ-տառերի նշանակությամբ, այլ առհասարակ նշանների, լինին դաղափարագիր, բևեռագիր, թե յեդիպտական ու չինական դրեր: Բայց պարոնին պետք է, վոր անպատճառ դրանք տառեր լինին յեղած, վորպեսզի կարողանա ապացուցանել մի չեղած յերևույթ: Մի բան մեյն այստեղ դժվարացնում է հեղինա-

կին: Այդ նշանագրերը կարող էին տառեր լինել և վոչ թե ուրիշ բան, բայց ով կարող է ասել, թե դրանք հայերեն էին: Սրա համար խոսքն էլ թողում է հետևյալ փաստը—

դ) Տաներեքերորդ դարում անցյալը դուշակող Վարդան պատմագիրն ահա ինչ է ասում. «Թե հնումն իրավ հայերեն գրեր են յեղել, այդ բանը հաստատվեց Լեվոն Թագավորի ժամանակը, յերբ գտնվեցան հայ կռապաշտ թագավորների դրամներ հայերեն գրով գրոշմված: (Ինչ գրոշմված և ո՞ւմ անուն): Սրանից հետևեցնում է պ. Հարությունյանցը, թե սպա ուրեմն Տրդատի դպիրները հայ գրերով էին գրում: Իսկ Ագաթանգեղո՞սը, իսկ Գրիգոր լուսավորի՞չը, իսկ Տրդատն ի՞նքը, դրանք ինչ գրով էին գրում...

ե) Հայր Ինջիջյանը պատմում է, վոր ինքը անգլիական դեսպանի մոտ հարյուրավոր արծաթի դրամներ է տեսել, չատ հին հայկական գրերով (հ, տ, պ, կ, ճ, և այլն), բայց մեջբերումը ձախնավոր չգտնելով՝ չի կարողացել կարդալ: Հապա «այր ծա՞աստվածն» ինչպե՞ս եր կարողանում կարդալ հ. Ինջիջյանը:

Այս բոլոր փաստերը բավական ազդու և դորավոր առաջույցներ համարելով, վոր նույնիսկ Տրդատի ժամանակ հայերեն գիր ու գրականություն կար, սրանց ուժն առավել ևս սաստկացնելու համար բերում է հետևյալ վեցերորդ փաստը, վոր մի հրաշալի դյուտ է:

զ) Այդ դյուտն անողը Փլլիստրատոս անունով մի պատմաբան է, վոր ապրելիս է յեղել Տրդատից էլ չատ առաջ: Այս մարդը իր մի աշխատության մեջ ասել է— «պատմում են, վոր մեկ անգամ Պամֆյուլիայում բռնվել է մի հովազ, շլինքին մի վոսկի մանյակ կապված, իսկ այդ մանյակի վրա գրված է յեղել հայերեն տառերով հետևյալը— «Արշակ Թագավոր Նյուսյա ասածուն»: Այստեղ անվում է այդ հովազի պատմությունը, նրա հոտառությունը, Արշակի մոտ ընկնելը, նրանից փախչելը: Մարդ իմանա ո՞վ է կարողացել կարդալ այդ Ինջիջյանի համար անվերծանելի գիրը:

Սրանք են ահա հեղինակի այն հաստատուն պյուները, վորոնց վրա կառուցել է իր չորս հարյուր հարկանի աշխատությունը: Ինքը հիանում է իր բերած փաստերից և վոգևորվում, վոր ուղիղն ասած մեծ պատիվ է բերում իրան իբրև մի անմեղ և անկեղծ ազգասերի: Կարծես մտքումն ասում է.— Ձես

ձեղ ցույց կտամ, ով պերմանացի լինքնահավան պրոֆեսորներ, վոր իմ աղղը մեծ ազգ է, և մինչդեռ դուք չգիտեիք ձեր կալբան չինելը, մենք հայերս Սոկրատի և Արիստոտելի հետ եյինք գլուխ գլխի խփում: Պետք է այս էլ ասել, վոր յեթե գլուխ գլխի խփում: Պետք է այս էլ ասել, վոր յեթե դիրքն այս տենդենցիան չունենար, հեղինակը չեր էլ պատվիլ ամբողջ մրցանակով, վորովհետև այդ պատակադրության համար էլ կա հաս ու չհասի խնդիր:

2.

Հիմա պանք մերն ասենք, թեկուզ դրա համար մեր գլխին վիշե պատկ դնեն, վոր իմ կարծիքով ավելի վատաչոր է:

Այս տեսակ խնդիրները իսկապես չատ դյուրին կերպով լուծելու խնդիրներ են, միայն տարաբախտաբար մեզանում սովոր են պահանջելու իրական ապացույց, ականատես վկա, ինչպես այդ պահանջում են հաշտարար դատավորները: Կան խնդիրներ, վորոնց համար պետք չէ պահանջել վկաներ, այլ յեթե լինեին էլ, դրանք մերժելի կեն իբրև սուտ վկաներ մի սուտ և չեղած բան իբրև յեղած և կատարված բան հաստատելու համար կոչված: Յեթե մենք մեր հին կյանքի վրա նայելու լինինք մեր պատմաբանների տածած վրա հիմնվելով՝ առանց կանխապես այդ տածծները անաչառ կրիտիկայի բովից անց կացնելու, չատ անդամ բոլորովին կմոլորվինք և կսխալվինք: Վոչինչ հիմար բան չկա, քան չեղած բանի համար պատճառ փնտռելը, թե ինչո՞ւ չե յեղել և ինչ նպատակով: Քանի քանի այդպիսի բաներ կան մեր թե գրականության և թե կյանքի մեջ: Սուտն ու ճշմարիտը վորոշելու համար մեզ առաջնորդ պիտի ունենանք տիեզերական որենքը: Ինչ վոր համաձայն չե այդ որենքին, նա սուտ է, թեկուզ միլիոնավոր վկաներ լինին: Այս է ահա մեր տեսակետը և այս տեսակետով էլ պիտի մոտենանք մեր ձեռք առած խնդրին:

Սկսենք հեշտիցը և դեպի դժվարը դնանք:

Ի՞նչ եր Դանիելի գտածը, արդյոք մի մատյան հին հայերենով գրված, թե՞ մի այբուբեն՝ վորոշ թվով բաղկացած: Յեթե լիներ մի մատյան հայերեն, բայց ծանոթ տառերով գրված, որինակ պարսկական, ասորական կամ հունականը, այդ գրերին ծանոթ հայազետը ավելի դյուրությամբ կկարդար նույն մատյանը, իսկ յեթե գրված լիներ մոռացված, անհայտացած կամ վերջապես նոր հնարած գրերով, դա նույնիսկ հայի համար

կլիներ մի տեսակ անընթեռնելի ծածկագրություն, որի բանալին դեռ պիտի գտներ, որ ապա թե կարողանար կարդալ: Իսկ յեթե լիներ մի տեսակ այբուբեն, որ ոչ ոք կարող չէր ոչ բանալին գտնել և ոչ իմանալ, թե ի՞նչ լեզվի գրեր են գրանք, քանի որ գրանք պայմանական նշաններ են, բառ չեն, որ կարդալով իմանան, թե նա ինչերեն է: Այլ խնդիր է, յե- թե այդ այբուբենը իր հետ ունենար և բանալին, այսինքն մի ծանոթ լեզվով բացատրված լիներ, թե որ գիրը ինչ ձայնի նշան է: Բայց կարո՞ղ է արդյոք պատահել, որ գրականություն- ից ոչ մի հետք չմնա, թեկուզ մի կտոր, մի այլ գրքի կտ- ված, բայց մնա այդ մատենագրության այբուբենը, այն էլ մի հատ մեծ: Այս խնդիրն ահա այս կերպ արծարծելով մենք Մորենացու վկայությունը և մյուսներինն էլ գտնում ենք շատ բնական և ուղիղ, և այդ այն է, որ Դանիելը կամ ինքն իրանից, կամ մի հայի առաջարկությամբ աստրական գրերը ձևափոխելով՝ հատկացրել եր հայերին, ասելով՝ «յեթե կամե- նում եք ձեր սեփական գրերն ունենալ, համեցեք տարեք» բո- լորովին այնպես, ինչպես Մեսրոպն արավ վրացոց համար: Այս լուրը թագավորի ականջն է ընկնում, նա էլ իմաց է տալիս կաթողիկոսին և Մեսրոպին. ուղարկում են վահրիճ անունով մի ճարտարամիտ մարդ, որ Դանիելից սովորում է այդ գրե- րի ձայները և նրանց կապակցելու յեղանակը և բերում ու ս- վորեցնում է Մեսրոպին: Այդ որից սկսում են այդ գրերով բան գրել կամ թարգմանել, որ սկզբումը Մաշտոցը կլիներ ան- շուշտ, որի մեջ եր ամփոփված ծիսակատարությունը և ժա- մերգությունը, և նույն գիրքն էլ սկսում են ավանդել ուսում- նարաններում: Այդ ուսումնարաններում մենակ մանուկներ չե- յին կարդացնում, այլ արդեն աստրագետ տիրացուներին և քա- հանաներին, որոնց համար մի առանձին դժվարություն չկար ընդամենը մի գիրք սովորելու և նույնիսկ անգիր անելու գըլ- խե գլուխ:

Այս Դանիելյան շրջանի մասին մեր ականատես պատմիչները արհամարհանքով են խոսում, որոշ կերպով չեն ասում, թե որքան ժամանակ տևեց: Ձեն ուզում ուղղակի խոստովանել, որ այդ գրերը ինքը Դանիելն եր չինել: Այս հանգամանքներն այն են ցույց տալիս միայն, որ դրանց ժամանակ աստրիներն աստելի եյին դարձել հայերի աչքումը, չարունակ կռիվ ունեյին միմյանց հետ, հայերը նրանց դուրս եյին մղում իրանց յեկե-

ղեցիներից, հացի խնդիր կար մեջտեղը, նրանք էլ մատնություն- ներ եյին անում, հավշտակում եյին կաթողիկոսական գահը: Բավական է միայն հիշել Սուրմակի, Բրքիչոյի և Շմուելի վար- մունքը այդ ժամանակի մասին մի որոշ դաղափար կազմելու համար: Հայերը քաղաքականապես կախումն ունենալով պար- սիկներից, հոգևորապես և մտավորապես էլ ասորիներից ունե- յին կախումն: Հույս ունեյին, որ թե մեկից և թե մյուսից կաղատվին հույների տղնության: Այս պատճառով էլ յերեսնե- րը շրջեցին ասորիներից և հույներին դիմեցին. Թողին Ցեղեսի- ան, որ իրանց միակ ուսումնավայրն եր և գաշվեցին դեպի Ա- ղեքսանդրիա: Ասորա-հայական հարաբերության պես յեղավ և հայա-վրացական հարաբերությունը: Ինչ որ եյին ասորիները մեզ համար, նույնը յեղանք և մենք վրացոց համար: Ասորիներից ճնշվում եյինք, լուկ վրացիներին ճնշում, մեկի չիգրը մյու- սից եյինք հանում: Այսպես է կյանքի ոլորքը, ինչ պետք է ա- նես: Զարմանալի չէ ուրեմն, որ վրացիքն էլ Մեսրոպին չենն համարում իրանց գիր տվող, ասում են՝ մենք շատ վաղուց ու- նեցել ենք այդ գիրը և՝ իրանց այդ կարծիքը հիմնում են դար- ձյալ— իբր թե գտնված— հին գրամների վրա: Հայոց գրի հե- ղինակը վրացիներին չի ուղում արժանացնել այդ փառքին, բայց ուղում է, որ ականատես ասորիները մեզ իր ուղած փառքին արժանացնեն:

Այսպես ահա՝ բնական և քաղաքական հանգամանքները մը- տավորապես կշռելով, մենք գտնում ենք, որ Դանիելի գիր- տալը հայերին՝ անժխտելի յե, իսկ այդ գրերի հետ կապել կա- րելի չե մի չեղած և չլսված գրականություն:

3.

Գրականությունը մի ճրագ է, մի լույս, ուր որ նա վառ- վի, ճառագայթներ կարձակե յուր չորս կողմը: Հայերը, որ մի չտ հարաբերություն են ունեցել գրականություն ունեցող հեթանոս ազգերի հետ, յեթե գրականություն ունենային, առա- վել ևս կծաղկեցնեյին նրան, քան թե այդ յեղավ հինգերորդ դարում: Այնուհետև մեր միջից եյ դուրս կգային բանաստեղծ- ներ, ճարտասաններ և փիլիսոփաներ: Այն ի՞նչ գրականություն է, որ կյանքի մեջ ոչ մի հետք չի թողնում, այլ մերթ հո- վաղի վղեցն է կախվում, մերթ չեղած գրամների վրա գրոչմ-

ձում, առանց մարդոց վրից կախվելու և առանց կոթողների վրա դրոշմվելու:

Գրականություն կար, ասում են, բայց քուրմերն իրանց մեհյաններում ծածկած էլին պահում, լուս աշխարհ չէլին հանում, չէլին աղբայնացնում, ժողովրդականացնում:

Մենք չենք ունեցել վոչ քրմություն աղբային և վոչ կառավարություն ժողովրդական: Ցնթե հայ ազգը կառավարո լիներ, նրա մեջ կծագեր կառավարության արվեստը և առաջ կըբերեր մի տեսակ հեթանոսական ճարտարություն: Հայերը վոչխարապահ էլին, իսկ այդ վուլինները բնակվում էլին անտառներում, ջրերում, լեռներում և հովիտներում[1]): Հայերը նույն էլին հընոմը, ինչ վոր այսոր յեղիդի քուրդերը, սրանց պես պարզ, սրանց պես անմեղ բնության զավակներ: Հայի մեհյանն իր ոջախն էր, վոր միշտ վառ էր պահում կամ անթեղնում, վոր չըհանգչի: Ի հարկե այսպես չէր նա իր նախապատմական կյանքում, բայց այսպես էր այն ժամանակ, յերբ յենթադրվում է, թե նա դիր ու գրականություն ուներ: Այդ ժամանակ հատ ու կտոր յեղած մեհյանները իրանց դպրությամբ, յեթե ունէլին սեփական դպրություն, հայկական չէլին, այլ ոտար, նորատուտ, բերովի և ձեռնհաս միմիայն զաղթական դասակարգին, այն էլ մասամբ միայն:

Այնհատիկ, նույնպես և հասարակության և աղգի— վորովհետև դրանք էլ անհատներից են բաղկացած— վոդու զարդացման մեջ մի բնական ներդաշնակություն կա: Գարե գործիք ունենալը և յերկաթի գործածությունից զուրկ լինելը, կարող է մեր յերևակայության մեջ առաջ բերել մի ժողովուրդ, վորի վենցագավարությունը ներդաշնակ կլինի իր գործ դրած գործիքների հետ: Մի կոթող, մի արձան, մի աշտարակ կարող է մեզ համար չափ դառնալ նրանց չինողների քաղաքակրթության աստիճանը վորոշելու համար: Եթե չինած աշտարակը մի կարդե գուրս բան չէ, յեթե ի նկատի ունենանք իր ժողովրդի մտավոր զարգացման աստիճանը: Բաբելոնի կախյալ պարտեզները և աշտարակաշինությունը, ընդունելով իբրև կատարված փաստ, ցույց են տալիս չինողների մտավոր զարգացման մի այնպիսի աստիճան, վոր միայն այդ յերևույթի վրա հիմնվելով՝ կարող

[1]) Այսոր իսկ մեր ժողովրդի յերևակայության մեջ դատարկ տեղ չկա, զոլորը լցված է վոգիներով, այնպես վոր վոտք դնելու տեղ չունի:

ենք այդ մարդկանց վերագրել ուրիշ շատ հրաշալիքներ էլ: Կարող ենք ասել անկարելի բան է, վոր այդ ճարտարապետությանը հատած մի ժողովուրդ դիր և գրականություն չունենար:

Ցերբ վոր մի ժողովրդի մտավոր զարգացումը հասնում է գիտակցաբար չինելու և ստեղծելու աստիճանին, դուրս գալով բնազդմամբ ապրելու շրջանից, այնուհետև նա մենակ մի բան չի դտնում, այլ շատ բան, մի գյուտը հետևացնում է դտնել մի ուրիշ գյուտ, սա էլ մի ուրիշը: Ամեն վոք սկսում է կատարելագործել իր ունեցածը՝ յերկրագործն իր վար ու ցանքը, այգեգործն իր տունկն ու ծառը, արհեստավորն իր գործն ու գործիքը, վաճառականն իր առն ու տուրը, գրողն իր գիրն ու գրիչը, մի խոսքով յերկրի կուլտուրան աճում, զարգանում, քարեփոխվում և կատարելագործվում և իր մասերի մեջ ներդաշնակություն պահելով բնական կարգով: Պատահում է, այո՛, վոր յերբեմն նրա վոդու այս կամ այն հատկությունը գերակշիռ և հանդիսանում մյուս հատկություններին վրա, մի բան անհամեմատ ավելի յե ծաղկում, քան մյուս բան, բայց դա լինում է ժամանակավոր, առժամանակ. ներդաշնակության որենքը միշտ ձգտում է հավասարակշռություն ձգել խելքի և յերևակայության ու կամայականության վոստյունների ու թռիչքների մեջ: Ամող յերևույթն իսոսքն ու քայլը իրար հավասարակշռում են, հոդու և մարմնի շարժումները միմյանց հավասարազոր են: Այս յերևույթն ենք նկատում ահա ինքնուրույն զարգացող մի ժողովրդի մեջ:

4.

Այդ լինչ ունինք մեր աշխարհում, վորպիսի՞ հայկական ճարտարություն, վորոնց վրա նայելով՝ ասեյինք— «Այս բանն ունեցողը դիր չունենալ չէր կարող»: Սրա հակառակ շատ բան ենք դտնում ու չդտնում, և սրանի խորքից հառաչում, թե «Այս բան չունեցողը և ունեցողը դիր ունենալ չէր կարող»:

Ինձ կպատասխանեն, թե մեր հին աշխարհում դտնվում են բևեռագիր արձաններ: Շատ ուրախ եմ: Բայց լինչո՞ւ այդ արձանները բևեռագրով հայերը չըտառապրեցին և ուրիշ արձաններ: Ցեթե չկան տառագրած արձաններ, այդ վոչ միայն ցույց է տալիս, վոր հայերը յուրահնար տառեր չունէլին, այլ այն էլ և ապացուցանում, վոր բևեռագիր արձանները հայի ձեռքի դոր-

ծեր չեն, այլ կամ բոլորովին ոտար, կամ պատահերով չինած ո-
տարի ձեռքով: Հայերն արձանագործության և արձանագրու-
թյան այնքան անհմուտ եյին, այնքան դուրկ ամեն այդ տեսակ
ճարտարությունից, որ նույնիսկ մեր գրերը դտնվելուց հետո
եւ մենք յերկար ժամանակ չունեցանք վոչ արձանագործություն
և վոչ արձանագրություն: Ինքը Մեսրոպը գրչության արվեստին
հմուտ չեր: Լավ գրելու արհեստն եւ մի ջոկ բան եր, ինչ որ
գրեյին, պետք է արտագրել տային նույն իսկ չհայտնետ վար-
պետներին: Այս եր պատճառը, որ չատերը միմիայն կարդալ
դիտեյին առանց գրել իմանալու և չատերն եւ միայն գրել, ա-
ռանց կարդալ իմանալու: Գրելը նյութի— մատաղաթի— թան-
գության և սակավության պատճառով եւ դյուրամատչելի չեր
ամենին:

Միակ ճարտարապետական հնքը, որի վերաբերյալ այ-
սոր եւ յերևում են, այդ Տրդատի հովանոցն է: Ցետ ինքս նըշ-
մարել եմ նրա թաղթված քարերի վրա հունական գրերի
հետք, և հենց ինքը հնքն եւ դուն հունական դործ է և վոչ
հայի. հնված և պատվերով, հույն վարպետների ձեռքով: Յե-
թե Տրդատի գործերները այնքան ճարտար եյին հայագրության
մեջ, որ մարդկանց խոսակցությունը իսկույն գրի եյին առնում
ծածկաբար, որ թագավորին ցույց տան, ինչո՞ւ այդ մարդի-
կը երանց այդ հրաշալի հնորհքը չեյին ցույց տալիս և Տրդատի
հովանոցի վրա, մի յերկու բան գրել տալով նրա արբատաչ քա-
րերի վրա:

Այժեն ինչ, որ հայոց անմահյալ աշխարհումն է դտնվում,
այդ չի նշանակիլ, որ անպատճառ հենց հայինն եւ պետք և
լինի նա: Այդ այդպես կլիներ, յեթե Հայաստանը մի կուսական
յերկիր լիներ, հայն այդ հողի վրա լիներ առեղծված
և ապրած, առանց տեղի տալու ոտար հոսանքի: Նայ
ժամանակ, որ հենց այդպես եւ հավատում եյին մեր ա-
ռաջնակարգ գործերները, բայց այսոր մի յերկիր և աղգ ուսում-
նասիրելու համար կա բոլորովին այլ մեթոդ: Այսոր այդ յերկ-
րամբ շատ խոսք և բառեր կան, շատ աշխարհապրակական անուն-
ներ, որոնք իրանց կազմությամբ մատնում են իրանց և ցույց
տալիս, որ հայկական ծագումն չունեն, այլ մի դուրս մղված
կամ անցած գնացած և կամ հայի հետ լ մի ճուլված ազգի:
Ցեվ ինչ վնաս ունի, որ այսպես լինի: Մի՞թե դրանով մեր
հայրենասիրությունը կպակասի: Ցես կարծում եմ ընդհակա-

ռակը: Ցերբ յես մտածում եմ, որ իմ ազգը մի զտառմած և
իր գերը կատարած սրծած ազգ չե, այլ նոր, թարմ, ջահել,
յես ուրախանում եմ անսահման ուրախությամբ: Ով որ յերե-
վակայում և նրա անցյալը, յես յերևակայում եմ նրա ապագա
հսկայական քայլերը: Այո՛, մի որ պիտի ջախջախվին Աբրա-
վազդի զարավոր կապանքները և նրա ահեղ ձայնից պիտի թըն-
դան ու վորոտան Հայաստանի լեռներն ու ձորերը և նոր հոգի
ու նոր կյանք պիտի փչվի զարացած աշխարհի սրտում:

5.

Գիր և գրականություն ունենալու մի խոշոր պատճառա-
բանությունն եւ այն են բերում, թե՝ գրից լեզվի ծաղկիլը հին-
գերորդ դարում այնպիսի մի հսկայական գործ է, որ ինքն ի-
րան ցույց է տալիս, որ հայերն ունեցել են ազգային ճոխ
գրականություն, յեթե վոչ, ինչպե՞ս կարող եյին թարգմանել
Աստվածաշունչը, որ թաղուհի թարգմանությանց և համար-
վում, և դանազան փիլիսոփայական գրվածներ ևս: Այս կար-
ծիքի մարդիկը շատ վսեմ վոճով են խոսում, դանազան բարձր
ածականներ տալով առաջին շրջանի մատենագրությանը, վորով
և պինաթափ են անում ընթերցողին և նախապաշարում:

Մի ազգ կարող է շատ ճոխ լեզու ունենալ, առանց գիր ու-
նենալու, և ընդհակառակը գիր ունենալ, առանց ճոխ լեզվի:
Ցեթե վիսունիկեցիք, յեզիպտացիք և չինացիք գիր ունեյին,
իսկ հայերն ու պարսիկները վոչ, այդ դեռ սպացույց չե, որ
նրանց լեզուն ճոխ եր, իսկ հայերինն աղքատ: Անհատներ կան,
որ շատ ճոխ լեզու ունեն, իսկ խելք ասածիդդ և վոչ մի մըս-
խալ: Նշանավոր մաթեմատիկոսների լեզուն անհամեմատ աղ-
քատ է, քան թե նշանավոր բանաստեղծներինը: Կան ազգեր,
որ ավելի բանաստեղծ են, կան, որ ավելի մաթեմատիկոս,
հաշվող, կշռող, գործնական, սրամիտ, աչքաբաց, հնարող:
Ցերկիրը, կլիման, պարապմունքը, ցեղական հատկությունը
մեկին այլ հոգեկան հատկություններ և տալիս, մյուսին այլ:
Մեկին սուր լեզու յե տալիս, մյուսին սուր միտք:
Մեկին ավազակ և չինում, մյուսին տալիս և խաղաղ կյանք:
Մեկին սարեսար և ծռվեծուլ և ձգում, մյուսին տալիս նստա-
կյաց կյանք և այլն: Հայերը չունեյին գիր և գրականություն,
բայց ունեյին շատ ճարտար և ճոխ լեզու. ունեյին ամենահա-
րուստ բանավոր գրականություն: Վոչ մի քրիստոնյա ազգ չու-

նի վոչ մեր Շարականը և վոչ մեր Նարեկը, յերկու դուռ բանաստեղծական հրաշագործության և ճոխ լեզվի ու յերևակայության արդասիք: Այս դննենք կշռի մեկ նժարումը և դառնանք մյուս նժարին:

Սուրբ դրքի լեզուն մի ժողովրդական և սղքատության չափ մի պարզ լեզու յե: Քրիստոսի տված քարոզները ժողովրդին, իրանց պարզությամբն ե, վոր յերկնային են դառնում: Դավթի սաղմոսը դլխե ի դլուխ մի հովվերդություն ե: Նա իր թագավորական դահի վրա եվ իր հոր վոչխարներն արածացնող պարզ հովիվին ե: Այս պարզ նահապետական կյանքից հայերը շատ և շատ բարձր եյին կանգնած իրանց լեզվովը: Մեր բանավոր յերդերը հատուկտոր բաներ չեյին, այլ նրանցից սանն մեկը ամբողջ մի վեպ եր, և յոթն ու յոթը դիշեր եր տեվում դրանցից սանն մեկը ծայրե ի ծայր ասելու, պատմելու և յերդելու համար: Այդ մարդիկն ունեյին առասպելական հիշողություն, մեկ մեկ մատենադարան եր դրանց դլուխը, վորոնց մեջ ամբարված եյին պահվում աղդի ավանդությունները: Դրանք հատ ու կտոր մարդիկ չեյին, այլ այդ պարապմունքն ունեյին ամբողջ դյուղերով, վորոնց հետքերը դեռ մինչև այսոր եվ կան, թեև լեզուն փոխված: Ուրեմն ինչ դժվարություն կարող եր առաջ դալ սուրբ դրքին այսպիսի մի լեզվով թարդմանելու համար, մինչդեռ այսոր իսկ ավետարանի տարածողները վոչինչ դժվարության չեն հանդիպում ավետարանը թարդմանելիս կիսավայրենի և կիսակիրթ աղգերի լեզվով:

Այն դժվարությունը, վոր այս առիթով առաջ են բերում մեր պատմաբանները, և նույնիսկ Խորենացին, վոր ասում ե, «Քանդի անգետք եյին մերում արվեստի, ի բաղում մասանց թե-բացյալ դործն դտանյուր»· այս խոսքը մեզ համար այն և պարդում այսոր, վոր Մեսրոպն ու Սահակը արվեստավոր լեզվով չեյին թարդմանում, այլ բուն ժողովրդական, բուն հայերեն: Գրոց լեզվի արվեստավորությունը, այսինքն բուն հայերենից տարբերվող նրա քերականությունը կրտսեր աշակերտները մտցրին, բայց այդ արվեստավոր լեզուն չտեսան վոչ Սահակը և վոչ ել Մեսրոպը: Գրոց լեզուն այս արվեստովն ե, վոր չլացնում ե չատերի աչքը, վոր դառնում ե մի հսկայական բուրդ չատերի համար, և չեն կարողանում ըմբռնել, վոր այդ բուրդը կտիածո քարերի մի կույտ ե և դուրկ աղգային լեզվի բնական

կենդանությունից, վոր դա մեռած եր նույնիսկ իր ծնած ժամանակ:

Կրտսեր թարդմանիչների մեջ ամենից յերևելի հանդիսացողը, ամենից չատ աշխատողը և ամենից չատ ապրողը Մովսես Խորենացին ե: Շատերը և Զամչյանն ել կարծում են, վոր Մովսեսը սուրբ դրքի թարդմանությանը մասնակցած չե: Բայց դա խոշոր սխալ ե. ապա ո՞վ պիտի կատարելագործեր՝ իր ասելով՝ «ի բաղում մասանց թերացյալ դործը», քանի վոր հենց դրա համար ել ուղարկել եյին նրան Աղեքսանդրիա, «ի լեզուս պանծալի, ի ստույդ հոդանալ ճեմարանին վերաբանության»: Մեկ տեղ ել ինքը հիշեցնում ե Սահակ Բագրատունուն, թե ինքը այր մի յե ծերացյալ և թարդմանության պարապյալ»:

Յերևակայենք մեզ, վոր Մովսեսը՝ նախ քան բարձր ուսման դնալը՝ վոչ միայն քաջ հմուտ եր իր մայրենի լեզվին և իր վարդապետների բոլոր դիտությունը սեփականացած, այլև անհատապես ուժոված վառ յերևակայությամբ և բանաստեղծ բնության հատուկ ձիրքերով, վորով նա ամփոփած եր իր մեջ մանկությունից լսած ժողովրդի բանավոր պրականությունը: Այս մարդն ահա քաջ հմտանալով Աղեքսանդրիայի ճեմարանում այն ժամանակվա ճարտասանական և հռետորական արվեստին, հանդես յեկավ մեր նորածիլ դրականության մեջ մի բոլորովին նորաձև լեզվով, ստեղծեց մի բոլորովին նոր դպրոց, վորի աղեցությանը յենթարկեց թե ցայնժամ և թե այնուհետև յեղած դպրության լեզուն: Այս լեզվով վոչ վոք կարող չեր դրել, մինչև լավ չսովորեր այն արվեստը, վորով դրված եր, և այդ բավական չեր դեռևս, պետք ե գիտենար և նույնիսկ հունական լեզուն, վոր այնուհետև ըմբռներ նրա բառերի դասավորության յեղանակը և համաձայնությունը: Սրա համար ել այդ լեզուն մնաց միայն այդ մեկ դարումն ամփոփված, սրբանալով սուրբ դրքով և դառնալով յեկեղեցական լեզու: Այնուհետև վոչ վոք այլևս չկարողացավ այդ լեզվով դրել, բայց ինչ դրած ել վոր մոտավորապես չնմանեց դրան, նա կորավ իբրև անպետք բան, իբրև դռեհիկ և անարվեստ լեզվով դրված:

6.

«Հայոց դրի» հեղինակի մի պատճառաբանություն ել հին հայերի հարաբերություն ունենալն ե փյունիկեցոց հետ: Թեթև մի անգիր ազդ հարաբերություն ունենալով դիր ունեցող ալֆի հետ, վեր առներ նրա դիրը, ել աչխարհիս յերեսին վոչ մի ան-

պիր աղգ չեր լինել: Հին հայերի հարաբերությունը իրանցից լուսավոր աղգերի հետ նույնն եր, ինչ վոր այսոր ռուսի և չեր-քեզների հարաբերությունն է մեզ հետ. ինչպես սրանցից մեկը իր յուղն ու պանիրն է մեզ տալիս, մյուսը իր ձին ու յափնջին, նույնպես եր հայերը կարող էլին իրանց խաղողն ու դինին և նշին ու ջորին տանել ի վաճառ, բայց հայերը չունեյին Թանգադինի դորդեր և ծիրանի դործվածքներ:

Այս պատճառաբանությունն այնքան թույլ է, վոր սրա վրա յես չեմ ուղում կանդ առնել, վորովհետև չատ կերկարի, յեթե սկսեմ մի առ մի բացատրել աղգերի վոխադարձ հարաբերության դրական և բացասական կողմերը: Այսքան միայն կասեմ, թե ով վոր ծանոթ է միայն տեսակավոխության թեորիային, նրա տված վճիռները սխալ կլինեն, յեթե ծանոթ չե նաև տեսակապահության թեորիային: Մասնավոր դարդացման մի աստիճանից մյուսին անցնելը վոչ դյուրին է և վոչ կարճ ժամանակի գործ է և կախումն ունի ամենազորեղ ցնցումներից, ամենակենսական պահանջներից: Տաճիկն ու պարսիկն եր այսոր հարաբերություն ունին լուսավորյալ Յեվրոպայի հետ, բայց մնում են նույնը, ինչ վոր կան: Հինը չքայքայված նորը նրա տեղը բռնել կարող չե: Հին հայերը պիր ու դրականություն ունեյին և վոչ նախապատրաստություն: Նրանց վոչ պահանջ ունեյին և վոչ նախապատրաստություն: Այդ հայերի համար է, վոր Խորենացին ասում է— «Այլ ինձ թվի, վորպես այժմ՝ և առ հինան Հայաստանյայց լյալ անսիրելություն իմաստության և յերկրաբանաց բանավորաց, վանորա ավելորդ է մեզ և այլ հազգս անբանից նրանց թուլամտաց վայրենյայց ճառել»:

Յես կմնամ մեր հանճարավոր քերթողահոր համախոս ու համակարծիք ծառան ամենախոնարհ հպատակությամբ, մինչև ավելի համոզեցուցիչ վկաստերով չապացուցանեն, վոր հեթանոս հայերն ունեցել են իրանց ազգային պիրն ու դրականությունը: Իսկ իմ ընթերցողներից կխնդրեմ, վոր իմ այս դրվածքը քննադատություն չհամարեն: Յես չեմ քննադատել պ. Հարությունյանցի դիրքն ամբողջապես, այլ միայն նրա տենդենցիան, այսինքն այն ճգտումը, վորով նա ուղում է հաստատել, վոր հին հայերը պիր ու դրականություն են ունեցել:

1892

«Մուրճ» 1892 № 12

ՀՈՎՀ. ԹՈՒՄԱՆՅԱՆՑԻ «ԱՆՈՒՇ»-ԻՑ ՄԻ ՃԱՇԱԿ[1]

Վերջին ժամանակներս մեր գրականության նորատունկ բուլբաստանի մեջ մինը մյուսի յետևից դուրս յեկան նոր նոր ծաղիկներ. նորերումս վիթեց մի նոր ծաղիկ էլ, անուշահոտ և համեստ, ինչպես վճիտ աղբյուրների ափերում բուսած մանուշակը Գուդարաց աշխարհում—

«Այն ճոխ դավառում, ուր Ջաթինդպղի
Ուսերից պայծառ արևը ծագում,
Իրիկնապահին Ղարախաչ սարի
Ցետևն ե չիկնած յերեսը ծածկում,
Ուր վոր Քոչաքար, Լալվար ու Դըվալ,
Հսկա պահնորդներ իրանց չարքերով,
Բարձրացած խրոխտ և լայնածավալ,
Հսկում են յերկրին անքուն աչքերով,
Ուր ծեր Դեբեդը յուր վաակներով
Ամեն մի քարի մղտից անցնելիս՝
Վառված վաղեմի հիշատակներով
Մերթ զայրանում ե, մերթ փղձկում, լալիս...»

Ծննդավայրը մարդուս յերկրորդ ծնողն է: Ծնողները տալիս են իրանց հոգու և մարմնի հատկություններր, ծննդավայրն ել սնուցանում է նրան իր հոգովն ու մարմնովը: Ցերանի նրան, ով վոր Աղամի նման դրախտում և ծնվում: Ցեթե կա մեր յերկրումը մի դրախտ, այդ Գուդարաց աշխարհն է: Մեր բանաստեղծը— Հովհաննես Թումանյանը— մեզ «Անուշ» բանաստեղծություն տալու համար՝ ծնվել ու սնվել է այդ անուշ յերկրումը,—

«Այն սառն ու հստակ աղբյուրների մոտ,
Վոր ապառաժից հորդառատ բըղխում,
Ամպի վըրա կայտառ, ծիծաղկոտ
Ցերեխի նման կրկչում են, խաղում.

---

1) Հովհաննես Թումանյանց «բանաստեղծություններ» հատ. 2-րդ: Այս հատորի մեջ, վոր նոր է լույս տեսել, զետեղված են յերիտասարդ բանաստեղծի բազմաթիվ վոտանավորներ և յերեք պոեմ—«Անուշ», «Մերժած որենք» և «Մարու»:

Պարզ առուների ղալար ափերին,
Վոր սահանքավոր լինում են վրիվրած,
Ուր վոր կենսաչունչ հովը լռնային
Մերթ վազվզում է, մերթ դըզվում կամաց.
Ուր վոր համաւսկյուռ բուրմունքը ծաղկի
Ցեվ ծըծըմբային հոտը կայծակի
Խառնվում են իրար...»

Այստեղ ահա, այս անուշ հովիտներում, Սարոն, վոր մի հովիվ է, դեռևս պատանի, բայց ուժեղ և սրտոտ, սիրում է դեղեցիկ Անուշին.

Ցեվ մի հայացքով պատանի Սարոն
Գրկեց Անուշի պատկերը հոգով,
Այն ինչ դեղեցիկ Անուշը նըրան
Սիրեց կուսական առաջին կըրքով»:

Սիրո այս առաջին կայծը սկսում է բոցավառվել նրանց կուսական սրտերում և այնպիսի վիճակ է ստանում, վոր քանաստեղծը հրաժարվում է նկարագրելուց և վերջը բացականչում է.

Զե...
Ցես չեմ կամենում բառերով չնչին
Խոսել սիրավառ սրտի բույերից,
Անպատմելի յե սերը առաջին,
Նա վեր է մարդու բոլոր խոսքերից...

Սակայն չարության վոգին, վոր գիտե նենց սողալ նույնիսկ դրախտի մեջ, վոր մարդուն աստծո յերեսից ձգե, արդարին յեղեռնագործ չինե, այս չար վոգին իր պոչը խառնում է և Անուշի ու Սարոյի սուրբ սիրո մեջ և նրանց այդ կենսատու ղգացմունքը մահատու դարձնում: Մի հարսանիքում Սարոն և Անուշի յեղբայրը՝ Մոսին՝ կռիս են կենում, և վորովհետև—

Ընկերի մեջ որենք և չատ հին,
Վոր այսպիսի մեծ բաղմության մեջում
Զը պետք է գետնին զարկել ընկերին,
Այլ պետք է անել հարկավոր դիմում:
Մոռացավ Սարոն որենքն ու աչխարհք,

Ցերը կանանց միջին Անուշին տեսավ,
Սիրտըն ըսկսեց բաբախել արագ,
Աչքերը իսկույն արնով լցվեցավ.
Ցեվ այսպես՝ մինչդեռ անհոգ եր Մոսին,
Սարոն իր բոլոր ուժը հավաքեց,
Ուչեն քաչելով՝ հանկարծ ընկերին
Գետին տապալեց ու կրծքին չոքեց...
... Ցնծության ձայները, ծափերի զարկից
Շարժվում, դողում են ամորք ու պատեր,
Իսկ նորահարսի փարդի քամակից
Նայում, գովում են աղջըկերք, հարսներ...
... Ցեվ թագավորի թախտիցը Սարոն,
Պարգև ստացավ մի կարմիր խնձոր,
Իսկ Մոսին, ուրախ հարսանքատնից
Դուրս գնաց խիկույն, սաստիկ վիրավոր...

Այս պատճառով ահա, Սարոն այլևս չեր կարող սովորական կարգով նշանել Անուշին, Մոսին այլևս նրան աղջիկ չեր տալ: Ի՞նչ աներ խեղճ Սարոն, ի՞նչ աներ Անուշը, վոր վոչինչ մեղ չուներ: Այսպես անճարացած՝ Սարոն փախցնում է Անուշին և մի ամբողջ ամիս այնպիսի անմատչելի ձորերում է տանում, վոր ինչքան վնտրում են— չեն գտնում: Մի ամսից հետո, հին աղաթով Սարոն Անուշին ուղարկում. և հորանցը, վոր այնտեղից պատվով դուրս բերի նորից, ինչպես սովորաբար անում են այսպիսի դեպքերում: Գյուղացիք ուրախանում են, աղջիկը խոստովանում է տերտերին, ինքը սիրում է Սարոյին, վոր իր կամքովն է փախել նրա հետ, վորովհետև ուրիշ յելք չկար: Ամենքն էլ ժպտում են, մարդ են ուղարկում, վոր Սարոն գա, բայց Մոսին, վոր չի կարողանում տանել Սարոյի հասցրած այդ յերկրորդ անպատվությունը (քրոջ փախցնելը), դիմավորում է նրան և հրացանի մի դնդակով գետին տապալում Դեքեղի ափերում...

Ցեվ մի քանի ընկեր տղերք
Դերեզի ճոխ ափերին
Փոս վորեցին և սրտաբեկ
Ամփոփեցին հովվի դին:
Ծաղիկները այս հանդեսին

Բուրմունք տըվին դուրեկան,
Զորագետն եվ ահեղաձայն
Ցերգեց վսեմ չարական...

Այս աղեկտուր դեպքը չեր կարող տանել Անուշի սիրահար քնքուշ սիրտը, նա ցնորվում է և, (Ոֆելիայի նման) թափառելով դետափին, ծաղիկներ է քաղում անչուշտ և նրանցով զարդարում է իր սիրելու պերեղմանը: Անուշի յերգերին ձայնակցելով՝

Վըվըշում է դետը— վո՛ւշ, վո՛ւշ,
Հորձանքներ է տալիս հորդ
Ցեվ կանչում է— «Արի՛, Անուշ,
Արի տանեմ յարիդ մոտ...»:

1893
«Մուրճ» 1893 թ. № 3

ՄԵԾ ՄԱՐԴԿԱՆՑ ՄԱՍԻՆ

(Ե. Ղ. «Քննական հայացքի» առիթով)

Մեր այն նորահաս յերիտասարդները, վորոնց հոդեբանական աշխարհը դեռևս անկազմ և անպատրաստ է, վորճառութիւնը մանուկ, կարող չեն մեծ մարդկանց մասին ուղիղ պաղատիար կազմել: Այս գործում նրանց ոգնելու համար պիտի մատնացույց լինեմ մի որենքի վրա, վոր տիեզերական և և անսխալ: Կիրք ասածդ վոչ այլ ինչ է, յեթե վոչ հայտնի դրացումների շարժումն, իսկ շարժումը մեծի մեջ մեծ է, վոքրի մեջ վոքր:

Վորքան վոր մի անհատ ոժտված լինի բարձր ընդունակութիւններով, այնքան խոշոր կլինին և նրա կրքերը: Հոդով հըսկաները հսկայական կրքեր կունենան, իսկ թզուկները թզուկի: Այլ և առյուծի կատաղութեան մեծութիւնը և այլ կատվի: Փոքրիկ լիճը վորքան ել փոթորկվի, կարող չե ովկիանոսի լեռնաչափ ալիքները բարձրացնել: Մի անոթի այնքան հեղուկ կարող է բովանդակել իր մեջ, վորքան նրա ներքին ծավալն է: Մի հատիկ ավելի կաթիլը նրան կտրաքացնե: Մանր դերասան-

ները կարող չեն խոշոր մարդկանց խոշոր կրքերը իրանց մեջ տեղավորել, պատնաշ նրանց ուղիղ պատճենը: Մանր դրչակներ կարող չեն խոշոր անձնավորութիւններ ներկայացնել իրանց ստեղծագործութիւնների մեջ: Ստեղծողը մտավորապես իրանից մեծ բան ստեղծել կարող չե: Մանր կրիտիկոսները խոշոր աշխատութիւններ քննադատել կարող չեն: Շեքսպիրը նրանով և մեծ, վոր կարողացել է խոշոր մարդկանց խոշոր կրքերի ովկիանոսումը լողալ ամենայն դյուրութեամբ և հաջողութեամբ: Կոլումբը նրանով և մեծ, վոր կարողացել է ովկիանոսի կատաղի ալիքները վոտնատակ տալ և անցնել նրանց վրայով դեպի այն կետը, ուր մղում եյին նրան իր մեծ հոգու մեջ փոթորկվող ավելի խոշոր ալիքները:

Անհատի մեծութիւնը յերևում է նրա կրքերի խոշորութիւնից, վորոնցով կատարում է մեծամեծ գործեր: Այդ կրքերը կարող են լինել և առաքինական և մոլեկան: Պետք չե կարծել, թե մեծ մարդիկը լինում են միակողմանի աղնիվ, անարատ, սուրբ, լուսավոր, վոչ վատասեր, վոչ նախանձոտ, վոչ ամբարտավան, վոչ ինքնահավան և ինքնագոչո: Վոչ: Մեծ մարդիկ կարող են լինել և մեծ բարեգործ և մեծ չարագործ, նույնիսկ միաժամանակ: Մեծ մարդիկն ամենից առաջ իրանք են իրանց ճանաչում, իրանք են իրանց մեծութիւնն զգում, իրանք են իրանց հոգու մղումներին յենթարկվում, իրանք են գործիք դառնում իրանց կրքերի ձեռքին և խաղալիք. իրանք են հարթում իրանց վատքի ճանապարհը, իրանք են իրանց պաշտում, պատվում, կամ հանդիմանում, անարգում, հալածում, պատժում, իսկ ուրիշներից շատ անգամ արհամարհվում իբրև դիժ, աքսորվում իբրև վնասակար ու վերջապես բարձրանում կամ անարգ կախաղանի վրա և կամ փառավոր գահի...

Մեծ մարդ լինել և վատասեր չլինել անկարելի յե և անբնական: Ինչո՞ւ: Բացատրենք: Մեկը վոր ուսումնասեր լինի, ուսման սեր չունենա, ինչպես կարող է մեծ ուսումնական ու գիտնական դառնա: Այսպես ել ահա յեթե մեկը չսիրե վոչ վատք, վոչ պատիվ, ինչպես կարող է մեծ վատքի ու պատվի հասնել, կամ ինչպես կհոժարի մնալ նույն վատքի և պատվի մեջ, յեթե չլինի սիրելիս իր ունեցած վատքն ու պատիվը:

Միևնույն կիրքը կյանքի մեջ, գործադրութեան մեջ զանազան կերպարանք և ստանում, զանազան հետևանքներով և մեր աչքումը չոկ չոկ բան թվում: Սրանից է առաջ գալիս մեր գա-

զափարների չափությունը: Միևնույն փառասիրության կիրքը Աղեքսանդր Մակեդոնացուն հասցնում է մինչև Հնդկաստան, Կոլումբին մինչև Ամերիկա, Դիոգենեսին ձգում է տակառի մեջ, Սոկրատին և Պալլեյին ձգում է բանտը, Բուդդային քշում անապատ և ասկետ չինում: Պետք չէ զարմանալ: Ճղնավորներն ևս ունին և մեծ փառասիրություն և մեծ նախանձոտություն: Մի թագավորի վորդու ասում են. «Եթե մնաս ձեր տանը, դու կդառնաս թագավոր և կտիրես միայն քո յերկրին և քո ժողովրդին, իսկ յեթե ձեռք վերցնես թագից, գնաս անապատ, նոր ուսում, նոր կրոն քարոզես, դու կդառնաս Բուդդա, կնվաճես ամբողջ աշխարհը, դու կանմահանաս և կընկնես աստվածների կարգը»: Բուդդան ընտրում է յերկրու վատավոր բանից վատավորագույնը ու հասնում է իր նպատակին: Մինչև ևս բոլոր մեծամեծ հույները Աղեքսանդրին պատվելու համար խլմբվել եյին նրա չորս կողմը, Դիոգենեսը իր տեղիցը չշարժվեց, Աղեքսանդրն ինքն ստիպվեց գնալ նրան տեսություն և ասաց. «Արդյոք մի բան չե՞ս ուզիլ ինձանից»: «Այո՛, ասաց Դիոգենեսը, կինդրեմ, վոր արևիցս հեռու կենաս, չվաքդ հեռացնես ինձանից»: Այս մինչևույն է թե ասել՝ убирайся к чорту! Ուրեմն պակաս փառասեր և ինքնահավան չեր Դիոգենեսը, յեթե մեծ մարդ չլիներ, Աղեքսանդրը չեր ասիլ. «Եթե յես Աղեքսանդրը չլիների, կցանկանայի Դիոգենես լինել»:

Սխոլաստիկ դաղափարով մեծացած անձինք, վորոնք թագցընել դիտեն իրանց ներքին աշխարհը վարիսեցոց նման, խըրտնում են «փառասիրություն» բառից, այդ կիրքը համարելով մի մոլություն, մինչդեռ դրա մեջ պարունակված է առաջ մղող հսկայական ուժ: Եթե մեկը ձգտում չունի փառք ու պատիվ ձեռք բերելու, նրա աչքին թքիր, դեն արա, եվ ինչացո՞ւ յե: Վո՞ր ծնողը կուզենա հոգով մեռած զավակ ունենալ: Ինչքա՜ն բթամիտ պիտի լինի մի դաստիարակ, վոր իր սանների մեջ փառք ու պատվի ղգացմունք չզարթեցնե:

Փառասիրությունը մի հարազատ և անբաժան յեղբայր եվ ունի, վորի անունն է ևախանձ: Ահա մեկ բառ, վորից նույնպես խրտնում են շատերը, լավ չիմանալով նրա բուն եյությունն ու գործադրությունը: Պետք է մի անգամ ընդ միշտ իմանալ, վոր քնությունը մեր վոչ մարմնում և վոչ հոգու մեջ վոչ մի ավելորդ բան չի դրել: Մեր ամեն մի հյուլեն իր գործն և նշանակությունն ունի: Պետք չե նրանց գործելու առաջքն առնել, այլ՝

առաջնորդելու յե դեպի բարին: Միևնույն ձեռքով և բարիք են գործում և չարիք, միևնույն վոտքով և բարի ճանապարհով ենք գնում և չար: Մեր ներքին չարժումները վորքան եվ չար լինին, յեթե ղրկված լինին գործելու դենքից, նրանք կմնան լոկ ցանկություն, կամ լսկի ցանկություն եվ չի լինիլ այլևս: Եթե հույս չունենամ իմ ձեռքի ուժի վրա, վոր ազնիվ բանը կարող եմ կատարել, չեմ եվ ցանկանալ: Արտաքին և ներքին չարժումները այնպես սերտ կապակից են միմյանց հետ, վոր առանց վոխադարձ ոգնության կչեզոքանան: Կան մարդիկ, վոր իրանց ներքինացնում են: Արհեստական կերպով մարդ կարող է իրան ղրկել շատ և շատ կրքերից, բայց այնուհետև նա այլևս չի լինիլ և վոչ լսկ վոքը մարդ, ուր մնաց մեծ, վորի մեջ մարդկային բոլոր կրքերը պիտի վոխորկվեն ծոմի ալիքների նըման:

Փառասեր լինել և նախանձոտ չլինել անկարելի յե: Ինչո՞ւ: Նրա համար, վոր վոչ մի փառասեր մարդ իր փառքն ուրիշին չի տալ: Մեկն իր համար փառք է համարում իր ձեռքի տակ ունենալ Բիսմարկի պես մի մեծ մարդ: Գիտե, վոր Բիսմարկն ինչքան եվ վոր մեծ է, բայց ինքը նրանից ավելի մեծ է և նրա Հովանավորողն ու պաշտպանողն է: Մի ուրիշը միևնույն Բիսմարկին հեռացնում է իրանից, վորովհետև ղրում է, վոր ինքն ընկնում է նրա սուլերի տակ, իր փառքը չի ուղում նրան տալ:

Նախանձոտ լինելու համար մարմնական թերությունները անհրաժեշտ պայման չեն: Գլխավոր պայմանը փառասիրությունն է: Արտիստները, վորոնք սովորաբար ուժուված են լինում մարմնական բարեկազմությամբ, լինելով սաստիկ փառասեր, ծափահարության դերի, սաստիկ եվ նախանձոտ են լինում: Վոչ մի արտիստ չի ուղում, վոր մյուսն իրանից ավելի փառավորվի: Մեծ արտիստները իրանց չրջապատում են հասարակ դերասաններով, իրանց հավասարի հետ գործ ունենալ չեն կարող: Դրանք թափառում են սովորաբար միայնակ, ինչպես աստյծները Ամբրիկայի խորերում: Ասել ավելորդ է, վոր նախանձ տածել կարելի յե դեպի իր նմանակիցը, (մի դեղեցկուհի մյուս դեղեցկուհուն), արվեստակիցը, կոչումնակիցը, աստիճանակիցը: Ցորդող դրողին կնախանձի և վոչ դերասանին...

Վորքան մեծ է անհատի մեջ փառավորվելու հակումը, այնքան նա հակառակ կլինի, վոր մի այլ վոք իր չափ կամ իրա-

նից ավելին փառավորվի: Յերևակայեցեք մի չրջանի մեջ յերկու հավասար մեծութեյան փառասեր մարդկանց և կառնեք, վոր նախանձը նրանց մեջ մի այնպիսի հրեչի կերպ ունի, վոր ոճը նրա մոտ մի վողորմելի և լսելի արարած ե: Մի ջոկ մեծութեյան մարդկանց մեջ, ինչպես Շերվանզադեյի Դիմաքսյանի նախանձը կարող ե մի ոճ լինել, իսկ Բարաթեյանի մեջ մի սովսիաեր, բայց խաչոր մարդկանց մեջ նախանձը մի սոսկալի հիդրա յե բազմագլխանի: Միևնույն փառքին հասնելու համար յերկու զորեղ մրցողներ անխոնջ կատարում են ամենայն տեսակ յերևութեյան: Այդ մրցողները յեթե մորուքավոր են, մխյանց մորուք են քերծում:

Պատմութեյունը ցույց ե տալիս մեզ, վոր ամենամեծ մարդիկը զործում են և մեծամեծ խայտառակութեյուն և չարագործութեյուն: Մեծն Ալեքսանդրը իր փառքի կատարին հասնելով այնտեղից սկսեց բարոյապես ղլորվիլ դեպի ցած և ցած մինչև ինքն իրա դլուխը կերավ: Ինչ հիմարութեյուններ ասես վոր չարավ: Մեծ մարդիկը յեթե միևնույն ժամանակ և մի բռնակալ են, տեր վրիկե ազատ: Նրանց պետք է չդիմացել և ձդել մի մութ այրի մեջ, ինչպես այդ անում են մեր հեքիաթներումը, և հենց դուցե յեղած էլ բաներ են: Հունաց ահռելի, չանթատաք և ամպրոպային Աքամադդը չի ամաչում իր մեծութեյունից, ինչնում է յերկնքից, սաոր արարածների կերպարանք առնում և զանազան խայտառակութեյուններ զործում: Այս մի հեքիաթ է, բայց և մեծ մարդկանց ճիշտ պատկերն է: Իզուր չեյին մի ժամանակ աթենացիք և հռոմայեցիք իրանց խաչոր կլբերով խաչոր մարդկանցն աքսորում: Մեծ բռնակալները մեծանում են ժողովրդի զարգացման սաոր մակերևութեյի վրա և նրա հաչվով: Յերբ վոր բարձրանում է ժողովուրդը, էլ այդ տեսակ մեծեր չեն լինում, այլ լինում է «մեծ ժողովուրդ»: Մեծ ազգի զավակները վորքան էլ վոր մեծ լինեն, զլուխ են խոնարհում ժողովրդի առջև և իրանց գործունեութեյունը նրա առաջադիմութեյանը նվիրում: Մեր մեջ չա՞տ կան թոկից վիսած չաղլատաններ, վորոնք ժողովրդի վրա մեծութեյուն են ծախում, զառնում են նրա առաջնորդը դեպի խավարն արտաքին: Մեծ պետք է համարել այն անհատներին, վորոնք աշխատում են ժողովրդին ազատել այդ խավարի արբանյակներից և առաջնորդել նրան դեպի լույս և ճշմարտութեյուն, դեպի բարին և կատարյալն:

Այս առիթով չատ յերկար կարելի յե զրել, չատ մթին հասկացողութեյուններ պարզաբանել, բայց առայժմ այսչափ բավ և կրոնավորաց:

1894

Ղ. ԱՂԱՅԱՆՑ

«Տարազ» 1894 թ. № 11

ԸՆԴԴԻՄԱԽՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Սիրելիդ իմ Տիգրան

Յես ընդունեցի Մշակի խմբագրութեյան հրավերը, առաջուց դիտենալով, վոր դրա հետևանքը պիտի լինի Ալվեսի ու Կռունկի մխյանց ճաչի հրավիրելուն Կռիլովի առակներումն: Այն ճաչը, վոր վոչեցին իմ հյուրասիրողներս իրանց թևերթերում առատաչաղաչ նախատատասխաններով, միայն իրանք կարող են լիզել և մարսել: Այժմ յես պետք է մի կուռնկի խորտիկ պատրաստեմ Տարազումը ղրանց համար, վոր ուտել չկարողանան: Այստեղ հարկավոր եմ համարում մի բան ևս ավելացնել ի պատութեյուն Տարազի ընթերցողներին: Ընդունելով Մշակի հրավերը, չատ բարեմիտներս կարծիք ստան, վոր իբր թե յես համակիր դտնվեցի նրանց արհամարհանքին դեպի Տարազը: Թող պատենան, վոր այդպես բան չի յեղած, վոր յես քո հաճութեյունն առնելուց հետո ընդունեցի նրանց հրավերը, վորպեսզի առիթ չտանք նրանց փախչելու կամ ինձ վախչոտ համարելու:

Քո Ղ. ԱՂԱՅԱՆՑ

22 ապրիլի 97

ՄՇԱԿԻ ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ

Պարոններ, այն նախատինքը, վոր կարող են ինձ տալ մի այսպիսի անհարմար ժամանակ բանակռվելուս համար, թող թափվի ձեզ վրա, վորովհետև դուք եք ղրա միակ պատճառը, դուք եք, վոր մի քրզական արշավանք եք սկսել:

Դուք ասում եք. «Ազայանցը չի ընդունում ղրական տղնիվ

պոլեմիկա»... Այդպիսի մի բան ես երբեք չեմ ասած և մըտքովս էլ չի անցած: Ես զզված եմ մեկայն անազնիվ բանակռվից և կյանքումս չեմ տեսած իմ հակառակորդների բանակռվի մեջ ազնվության սովերն անգամ, սկսած Գ. Արծրունուց և վերջացած Բաֆֆիով, որոնց վրա ակնարկում եք դուք շատ անդեպ կերպով: Փաստեր բերել ավելորդ է, որովհետև փաստերը շատ են ղզվելի և այդ դիտեք դուք, պարոններ, ես շատ շատերի դեմ եմ բանակռվել, բայց կյանքումս աստան դրած չունիմ, վոչ վոքի «բրուտի չուն» չեմ չինել, վոչ վոքի ամենաստուրը ղազմունքները աղբանոց չեմ ձգել: Այս բոլորը դուք շատ լավ գիտեք, և եթե վոչ լեզվով կամ ղրչով, դոնե սրտով կխոստովանեք, վոր այդ բոլոր կռիվների մեջ ես եմ յեղել արդարը: Ցեվ բանից ի՞նչ է դուրս յեկել, ի՞նչ է յեղել սրա պատճառը, վոր յերբեք էլ չեն ասել:— Ինչո՞ւ, ասում են, մեր լրագրությունը չես դրում. մեր բանակիվն չես պատկանում: Ուրիշ խոսքով ինչո՞ւ մեր սորուկը չես, մեր դասն չունը, մեկ համար հաջողը չես: Լսո՞ւմ եք, պարոն դլոողներ, թե մեզ ինչի տեղ են դնում: Ամենալավ բանը վոր կարող են համարել մեզ,— այդ լիմոնն է ... Բայց այդ նյութի մասին ուրիշ անգամ:

Ցես չնորհակալ եմ, վոր դուք մեր բանակռվի մեջ իմ սովորական հակառակորդների աստիճանին չհասաք: Ցես ձեր բանակռիվը չեմ համարիլ անազնիվ, այլ մեկայն սուիեստական ֆաստաբանություն՝ չաղախված դիտությամբ սուտ ու սխալներով՝ մեղադրանքի տակից մի կերպ դուրս պրծնելու նպատակով: Ցես այդ սուտերից կընտրեմ առայժմ այն մեկայն, վոր իմ պաղատիարին է դիպչում, վոր խեղաթյուրելով իմ ասածը, այն մեկայն եք դուրս բերում, թե Ալայանցը վնասակար է համարում կուսակցությունների գոյությունը:

Ցես դեռ իմ պատանեկության ժամանակ Լիվուրդոսի կենսագրության մեջ կարդացել եմ նրա հետևյալ որենքը. «Ցերբ վոր հայրենիքը բաժանված լինի զանազան կուսակցությունների, ամեն մի քաղաքացի պարտավոր է պատկանել վորևե կուսակցության: Ցեթե մեկը չեզոք մնա, այնպիսին պետք է նույն պատժին յենթարկվի, ինչ վոր պատերազմից փախուստ տված զինվորը»: Ցեվ ահա որենքը խստությամբ կատարում եյին հույները դեռ այն հին ժամանակներում, յերբ դեռ ժամանակակից յեվրոպական լուսավորություն չկար:

Ահա որենքն ինձ վրա այն տպավորությունն է թողել, վոր ցես միշտ արհամարհել եմ չեզոք մնացողներին կուսակցական պայքարների ժամանակ: Արհամարհել և անազնիվ եմ համարել այն մարդկանց, վորոնք չեզոք մնալով, սպասողական դիրք են բռնել, վոր հետո հաղթող կուսակցության կողմն անցնեն և իրանց ներկայացնեն իբրև նույն կուսակցության չարքերում կըռված մի զինվոր: Ցես վատություն եմ համարել չպատկանել իմ ուզած կուսակցությանը և նրա հետ իմ խիտսին չպատերազմել մեր հակառակ կուսակցության դեմ, թեկուզ նա լիներ մեզանից անհամեմատ բալմաշիլ և ղորեղ: Ցես պատկանում եմ առաջադիմական կուսակցությանը, վոր նոր հոդի և չունչ է փչել մեր ազգի դարերով ընդարմացած կյանքի մեջ Մշակի յերևալուց դեռ շատ առաջ: Լինելով առաջադիմական, յերբեք չեմ յեղել մշակական կամ մի այլ թերթական: Մշակի ուղղությունը յեղածների մեջ ցես համարել եմ ավելի առաջադիմական, բայց սահմանափակ, նեղսիրտ, նախանձոտ և չեսական: Մշակը պաշտպանել է իր առաջադիմությունը, վոր դոյություն է ունեցել Մշակից շըրջանից դուրս: Մշակը իր առաջը կտրողի վոտքիցը կծել է միշտ: Այս մասին չատերից մի որինակ միայն: Վո՞րտեղ է տպված, յեթե վոչ Մշակում, թե Աղայանցը անպատիվ կերպով աղավաղելով մեր լեզվի ուղղագրությունը, հիմա էլ սկսել է դիվրատորություն անել, ասելով՝ թե մեր կոնսխատորները և մյուս ատենական տեղերը լավ չեն անում, վոր դրագրությունը պրպտած լեզվով են վարում, հարկավոր է աչխարհաբառ լեզվով հատարել:

Մի՞թե Մշակն իրավ հակառակ եր իմ առաջարկած մտքին. ի հարկե վոչ· բայց բողոքում եր, վորովհետև այդ միտքն իրանից չեր բղխում:

Բայց թողնենք նախկին Մշակը, վոր իր բոլոր թերություններով հանդերձ միակ առաջադիմական թերթն եր: Այնտեղ Գրիգոր Արծրունին ամփոփում եր իր սիրտը, իր բոլոր ղազյություններն ու դաղափարները, իր բոլոր լավ ու վատ կրքերը: Իսկ ներկա խմբագիրն ինչ ունի դնելու նրա մեջ, բացի մի լոկ անունից, այն էլ վերջումը միայն: Ի՞նչ է, իրավ, այսոր Մշակը, եթե վոչ մի սոսկ ավանդապահ անցած դնացածի, վորով իրան անչարժության է յենթարկել: Նույն տունը, նույն տպարանը, նույն ուղղագրությունն ու լեզուն, նույն մտքերի— արդեն հնացած— կրկնությունը: Ներկա Մշակի այս մոլեռանդ ավանդապահությունը վոչ միայն չի հերքիլ, այլ պարծանքով

հապացուցե, վոր ճշմարիտ է: Ուրեմն եվ ի՞նչպես կարող է Մշակը աստվածպիմական կուսակցության պրոչակակիրը լինել, քանի վոր նա այլևս աստված չի դնում: Ցեվ այս կանգ առած և դառամած թերթը իմ ասածների մեջ գանում է ծերության կընիք և զանազան թուրքական չառեր և բարդում ինձ վրա:

Մի հատիկ ճշմարիտ խոսքը, վոր ասում է Մշակն իմ մասին, այդ այն է, վոր յես երբեմն ընդդեմ եմ յեղել միևնույն վորևե թերթի «անանուն» համարելուն և ընդդեմ եմ այսոր եվ, և բացատրեմ ահա, թե ինչու համար:

«Անանուն» համարել մի թերթ, վոր մեր կյանքի խոշոր յերևույթներից մեկն է, և իբր արհամարհելով նրա դեմ այլևս վոչինչ չգրել, այդ կնշանակե իր վախուառը և անզորությունը ծածկել մի յերեխայական մահանայով: Ճշմարիտ աստվածպիմական թերթը անընդհատ պատերազմ պետք է մղե խավարի, սրդիտության, խաբեբայության և աչքակապության դեմ: Ցեթե մի թերթ վնասակար դաղափար և սարսափելի ժողովրդի մեջ, ինչպե՞ս կարելի յե լռել այդ խոշոր յերևույթի դեմ, և արդարացնել իբրև նրանով, թե այդ թերթը նա համարում է իբրև չնաշ: Կամ ո՞վ և ավելի մեղավոր, արդյոք թերթը, թե նրա խմբագիրը: Ցեթե մեղավորը խմբագիրն է, վոր այսոր կիրակոսն է, վաղը կարող է Մարկոսը լինել, ինչո՞ւ այդ խմբագիրը չե անանուն, այլ թերթը, վոր մի հասարակություն և բարի նպատակով հիմնված, վորին աշխատակցում են չատ ազնիվ բաժանորդներ, վոր կարդում է հայ ժողովուրդը: Պարզ խոսենք. յեթե Սպանդարյանը մեղավոր է, վոր թերթ է հիմնել, ինչո՞վ են մեղավոր այն մարդիկը, վորոնք հիմնադիր չեն: Ի՞նչ մեղք ուներ Տմբլաչի Խաչանը, վորի չնորհալի փելիետոններին անհամբեր սպասում են հազարավոր ընթերցողներ. Ի՞նչ մեղավոր են Մուրացանը, Ալպոյանը, Ծուղուրյանը, Նարդուկը և ուրիշ չքնորհալի դրողներ (վորոնց յես համարում եմ իմ դասակարգի մարդիկ և ամենայն ուրախությամբ կդաշնակցեմ դրանց հետ առանց մտավոր և բարոյական դավանանքի խորության: Այսոհետ դասակարգ և կուսակցություն չոկ չոկ բաներ են և չպետք է միմյանց հետ չփոթել: Մի դասակարգի մարդիկ կարող են պատկան կուսակցության պատկանել, և հակառակն): Մշակի կարծիքով մեծ մեղավորները հենց աշխատակիցներն են և բաժանորդները, վորովհետև դրանք պահպանում են մի թերթ, վորի գոյությունը Մշակին վնաս և հասցնում նյութապես:

Ցեթե Մշակը բանի վրա նայում է իր շահի տեսակետից, ինչո՞ւ միևնույն բանի վրա չպետք նայի և ամեն մի դրդող իր շահի տեսակետից: Մշակի համար, իբրև մի լրագրի, ոգուտ չե, վոր մի ուրիշ լրագիր գոյություն ունենա, իսկ դրդողների համար չատ ոգուտ է, վոր չատ լրագրեր գոյություն ունենան: Բնական է ուրեմն, վոր ինձ համար, իբրև դրդող և դրդող դաւակարգի շահի պաշտպանի, վոչ մի թերթ անանուն չլինի, իսկ Մշակի համար, իբրև լրագրի, բոլոր լրագրերի անունն եվ կըտըրվի: Դրդողներից եվ մեկն նրանք ապրեն, վորոնք Մշակումը կպրեն, իսկ մյուսները թեկուզ կոտորվին: Ահա թե վո՛րտեղ է գտնվում Մշակի խմբագրության նեղսրտությունը, յեսականությունը և մինչև անգամ ազանդավորությունը և ամենասև կղերականությունը:

Ցես ասել եմ. թերթը, վորը կուզի թող լինի, պետք է դրդողներիս համար լինի մի միջոց, մեր խորին համոզմունքը, մեր անկեղծ զգացմունքը հայտնելու համար, առանց գործիք դառնալու խմբագրի հետին մտքերին: Արանով պարզապես ուզեցել եմ ասել, վոր խմբագիրը, իբրև վաճառական, կունենա իր հակապրակտիկական միտումները, մրցության ստոր ձևերը. դրդողը, ազնիվ դրդողը չպետք է դառնա այդ նպատակների գործիքը:

Մենք այսոր չունինք վոչ մի թերթ, վոր կարելի չլինի և ամենաթուռդ արմատական մտքեր հայտնել և ամենասև կղերական: Ամեն մի դրդողի գոյությունը յերևում է իր հայտնած մտքից և վոչ այն թերթից, ուր նա դրել է կամ գրում է: Ցես ինքս ամեն թերթում եվ գրել եմ, նույնիսկ Արարատի խմբագիրը եմ յեղած, բայց վոչ մի տեղ իմ ոգեվական դույնը չեմ փոխած:

Պահպանելով Մշակին՝ յես չեմ դժգոհում մյուս լրագրերին, բայց մյուս լրագրերը իրանք իրանց վոչ ապատամիտ և վոչ առաջադեմ անվանելու հավակնություն չեն ունեցած: Ցես միայն ուզում եմ ցույց տալ, վոր ինքը Մշակը հաղիվ կես առաջադիմական է, իսկ մեզ հարկավոր է ճշմարիտ և լիակատար առաջադիմական մի թերթ, վոր համապատասխանե ժամանակակից առաջադիմական կուսակցության պահանջներին: Մշակն ուրախանում է, վոր այս կամ այն հրատարակությունը չատ սակավ բաժանորդներ ունի, որեցոր սպատում է նրա դաղարելուն: Ճշմարիտ առաջադիմական թերթը այսպիսի նեղսրտություն չի ունենալ, նա իր սրբազան պարտականությունը կհամարե խրա-

խուսել ամեն մի առաջադիմական յերևույթ և ազգի պաշտպանությունը կհրավիրե դեպի այդ յերևույթը: Մշակը միմոսական ծաղրի յե յենթարկում մեր միակ լուրջ և ճշմարիտ առաջադիմական ամսագիրը, Մուրճը, վոր անհամեմատ շատ ավելի բան և տալիս կարդալու, քան մի ամբողջ ընկերություն, վորի վարչության նախագահի ղրպարտությունն պաշտպան և հանդիսանում Մշակը և դեռ նորանոր ղրպարտություններ հնարում, վարչության վճարած պարտքը անվանելով կանխավճար: Բայց այս մասին հետո կխոսենք, և այն էլ պաշտոնապես:

1897

«Տարազ» 1897 թ. № 15

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ

ՆՈՐ ՆԱԽԻՋԵՎԱՆ, Հունիսի 10-ին

Բթամիտ, թե՞ չարամիտ: Այս հարցը Սեդրակ Մանդինյանցին և վերաբերում: Ամեն մարդ էլ հասարակ թշնամիներ շատ կունենա, բայց շատ քչերին կպատահի յերդվյալ թշնամի ունենալ: Սեդրակ Մանդինյանցը իմ յերդվյալ թշնամին լինելու պատիվն ունի: Սրա համար պատճառներ շատ կան, բայց գլխավորն այն է, վոր ամենից շատ յես եմ համոզված յեղել և միշտ էլ դրել եմ, վոր այդ մարդը չափից դուրս բթամիտ է, այնինքն այնքան է բթամիտ, վոր չի կարողանում հասկանալ իր բթամիտ լինելը: Ցավ տարաբախտաբար վորքան շատ է աշխատում ցույց տալ, վոր ինքը բթամիտ չէ, այնքան ավելի յե աշկարա կացուցանում իր բթամտությունը: Ամաչս հաստատելու համար յես կբերեմ մի նորագույն և ամենաթարմ ապացույց:

Ձերկ մի յան ձեռքս անցավ «Արարատ» ամսագրի չորրորդ թիվը, վորի մեջ Ս. Մանդինյանցը մի բավականին անմիտ հոդված ունի գետեղած: Այդ հոդվածի մեջ աչքովս ընկան մի քանի միջանկյալ տողեր, վոր հեղինակը դրել է բոլորովին անդեմ կերպով, բայց իսկապես նրա համար միայն, վոր հիշեցնե ընթերցողին, թե ինքն այն մարդն է, վոր բռնել է Աղայանցի արդիությունը հայերենի մեջ, և թե հետևաբար սուտ է Աղայանցի պնդելը, թե ինքը Մանդինյանց բթամիտ է:

Տեսեք ահա թե ինչ է ասում. «Սվիֆտի թարգմանիչ Ղ. Աղայանցն անդամ չկարողացավ մի կես յերեսի չափ (ինքն է ընդգծել) ատենական թուղթ թարգմանել, ուր վոր յերկար շարված մտքեր կային. իսկ յեթե մեր առաջնակարգ դրիչ պ. Աղայանցն այսպես է, հապա ի՞նչ հույս ունենանք յերկրորդականներից»:

Յեթե այս մի քանի տողը մանրամասն վերլուծելու լինենք հոդվածագրին, այն ժամանակ կհամոզենք, վոր մենք գործ ունենք մի հոգեպես հիվանդի հետ, բայց մենք կարճ կկտրենք մեր ասելիքը: Ս. Մանդինյանցի հիշած կես յերեսը մի ամբողջ դրքի հարյուրավոր յերեսներից մեկն կեսն է: Արդ ի՞նչպես է պատահել, վոր այդքան յերեսների՝ յեթե չասենք լավ՝ գոնե միջակ թարգմանողը չէ կարողացել նույն կես յերեսն էլ այնպես թարգմանել, վոր դուրս չգար այդ աստիճան անճոռնի մի չարադրություն: Կամ թե՝ ի՞նչպես է պատահել, վոր Հրատարակչական ընկերության՝ լեզվագետ անդամներից բաղկացած խմբագրական մասնաժողովը, վոր նախ քան տպագրելը թարգմանությունը համեմատել է բնագրի հետ, չէ կարողացել նկատել, վոր այդ յերեսը մի անճոռնի չարադրություն է: Ի հարկե՝ նկատել է, բայց ի՞նչպես կարող էր չհամականալ, վոր այդպես էլ պետք է լինի, քանի վոր հեղինակի նպատակը յեղել է՝ անճոռնի չարադրությամբ մի նմուշ ներկայացնել...

Բանը ավելի պարզեմ, վոր առավել ևս պարզվի իմ յերդվյալ թշնամու բթամտության որեցոր աճումը: Հանճարավոր յերդիծաբան Սվիֆտը լրտեմ լիլիպուտների ուղենալով ծաղրել իր ժամանակի անգլիական ատենաառեղծում ափրապետող անճոռնի լեզուն, իր հերոսի մեղադրության ճառը այդ պաշտոնական լեզվովն է հորինում: Այդտեղ կտեսնենք մինուճար դարձվածի առեղ կրկնություն՝ նախադասություններն ու պարբերությունները իրար խառնած, առանց միջակետի և վերջակետի: Մի խոսքով Սվիֆտը վարվել է այնպես, ինչպես վարվում են բոլոր ժամանակների և բոլոր ազգերի յերդիծաբանները: Իսկ յես իրրև թարգմանիչ ի՞նչպես պիտի վարվեյի այս դեպքում: Ի հարկե, ծաղրը թարգմանել իրրև ծաղր, ինչպես լուրջը թարգմանում ենք իրրև լուրջ: Սեդրակ Մանդինյանցը այսպես չի մտածում. նա մինչև անդամ հիշյալ անճոռնի չարադրությունը տալել է Թիֆլիսի հայոց մի լրագրում իրրև լուրջ չարադրության մի նմուշ, վոր հասկացնի համայն աշխարհին, թե տեսեք, վորքան անմիտ թարգմանիչ է Աղայանցը, իսկ յես

վորքան սրամիտ, վոր կարողացել եմ այս յերևելի պյուռն ա-նել: Ուրեմն սուտ է Աղայանցի ասածը, վոր յես բթամիտ եմ: «Արարատումն» էլ այսոր այդ մխենուչյուն է կրկնում, խոս-խոսավելով այն հանդամանքից, վոր Թիֆլիսի վերև հիշած լը-բաղբի մեջ ապածը իմ ձեռքը չանցնելով՝ մնացել է առանց պատասխանի:

Այժմ դուք դատեցեք, հարգելի ընթերցողներ, այս բոլորից հետո ի՞նչ անուն պետք է տալ իմ յերկվյալ թշնամուն: Թույ-լատրելի է՞ արդյոք խնդիրը վճռել այսպես.— յեթե Ս. Ման-դինյանցը չի կարողանում յերգիծաբանությունը լուրջ գրածից զանազանել, ապա ուրեմն նրա բթամտությունը առաջինից մի աստիճան էլ բարձրացել է, իսկ յեթե զանազանում է, բայց գո-ռությամբ և նենգությամբ է անում, ինչ վոր անում է, ապա ուրեմն նա չարամիտ է հանդիսանում այսոր, առանց սրբված լինելու բթամտությունից:

1898

Մշակ 1898 թ. № 109

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԵՄՈՒԱՐՆԵՐ

Էջ

Իմ կյանքի գլխավոր դեպքերը 11
Մի յերես մեր նորագույն պատմությունից 180
Հատված՝ «Մի թեթև հրահանգ մեր լեզվի ուղղագրության մասին» հոդվածից 210
Մի կտոր իմ ինքնակատում կենսագրությունից 227

ՀՐԱՊԱՐԱԿԱԽՈՍԱԿԱՆ ՅԵՎ ԳՐԱԿԱՆ-ՔՆՆԱԴԱՏԱԿԱՆ

«Հազար ու մի առակավոր բանք» 235
Մատենախոսություն.—Պետրոս Ադամյանի «Շեքսպիր և յուր վոզբեգրության աղբյուրն ու քննադատություններ» 241
Հատված «Լեզու» ուսումնաթերթի լեզվի մասին հոդվածից 245
Իմ ստացած տպավորությունները Գ. Բաֆֆու «Կայծերի» Բ. հատորից 252
Առ. պ. Բաֆֆի 263
Մատենախոսություն. «Բանաստեղծություններ» Հովհ. Հովհաննիսյանի 263
Պարոն Գ. Յե-ին 270
Մատենախոսություն.—1) «Ուրիշի գերեզմանի վրա առանց արցունքի յեն լաց լինում», 2) «Բուլղար ավազակապետ», 3) «Նեդա» . . 271
Պերճ Պռոշյանց և իր Սոս և Վարդիթերը 279
Մատենախոսություն.—Սամուել Սմայլս—«Ինավորություն» 291
Հատված «Տառադարձության խնդիրը» հոդվածից 294
Խորհրդածություն «Մուրճ» ամսագրի ընթերցումից հետո 299
Մատենախոսություն.—«Մուրճ»—քաղաքական հասարակական, գրական ամսագիր № 1. 1889 թ 307
Կնոջ կոչումը 320
Հազուստի բարոյական նշանակությունը 323
Հայոց այժմյան բանավոր յերգերը, հոդված առաջին 325
Հայոց այժմյան բանավոր յերգերը, հոդված յերկրորդ 329
Հայը Ղեվոնդ Ալիշան 332
Մի կիսապատասխան «Մուրճ» ամսագրին 334

Գրաքառ և աշխարհիկ լեզուների տարբերությունը 336
Հատված «Հայոց լեզվի ուսումնասիրության» հոդվածից 350
Մի նկատողություն 351
Հայոց գրի մասին 360
Հովհ. Թումանյանի «Անուշից» մի հատված 369
Մեծ մարդկանց մասին 372
Ընդհանրություն 377
Նամակ խմբագրության 382

ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ

Ներկա հատորի ծավալի անհրկալ կերպով մեծանալու պատճառով դուրս ձգային նախնական ծրագրով նախատեսված մի շարք նյութեր, որոնք Աղայանի լեզվագիտական և մանկավարժական հոդվածների հետ միասին կկազմեն հեղինակի «Ժերկերի» չորրորդ հատորը։

Պատ. խմբագիր Հ. Ս. Դռնճոյան

Վ/Ֆ. 3302, Պատվեր 604. Տիրաժ 3000. Տպագրական 24 մամ. Հեղինակային 21 մամ.

Ստորագրված է տպագրության 20/II 1941 թ.

Հայպետհրատի տպարան, Երևան, Լենինի 65

20521

ՀՀ Ազգային գրադարան
NL0321465

120